

ՀԱՅԿԱԿԱՆ  
ՃԱՐՏԱԿԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԿԵՄԻԱ  
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ  
ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ





# ԵՅՄԵՆ

ԿԵՅ  
ՀԱՏՈՐՈՎ

# ՀԱՐՏԱՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿՐԱԳՐԱԿՆԵՐԸ

ՀԱՏՈՐ  
ԱՌՆԱԳԻՆ

ИСТОРИЯ  
АРМЯНСКОЙ  
АРХИТЕКТУРЫ

HISTORY  
OF ARMENIAN  
ARCHITECTURE

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

Խ Մ Թ Ա Գ Բ Ա Կ Ա Ն Խ Ո Ր Հ Ո Ւ Բ Գ

Ք. Ն. Առաքելյան, Լ. Ա. Բարսեղյան, Վ. Մ. Հարությունյան,  
Մ. Մ. Հասրաթյան, Ս. Խ. Մնացականյան, Կ. Կ. Ղաֆաղարյան


Հատորի պատասխանատու խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր  
Գ. Ա. Տիրացյան

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝  
ակադեմիկոս Ք. Ն. Առաքելյանը  
և ճարտարապետության դոկտոր Ս. Խ. Մնացականյանը

- Հ. 53 Հայկական ճարտարապետության պատմություն: Վեց հատորով /ՀՀ ԳԱԱ արվեստի ին-տ, ՀՀ մշակույթի, երիտասարդության հար-ցերի և սպորտի նախարարության հուշարձանների հետազոտման կենտրոն, (խմբ. խորհուրդ՝ Ք. Ն. Առաքելյան և ուրիշ.), ՀՀ ԳԱԱ հրատ.:  
Հ. 1, (Պատ. խմբ.՝ Գ. Ա. Տիրացյան).—1996.—298 էջ, 48 թ. նկ.:

Հայկական ճարտարապետության պատմության վեց հատորյակի առաջին հա-տորն ընդգրկում է Հայկական լեռնաշխարհի ճարտարապետական մշակույթը՝ հնա-դույն ժամանակներից մինչև վաղ միջնադար: Հանգամանորեն ներկայացված են նախնադարյան համայնական հասարակարգի կառուցողական արվեստը, ուրախ-տական ճարտարապետությունը և անսովի շրջանի ճարտարապետական մշակույթը մինչև 111 դ. ներառյալ:

Հասցեագրվում է ընթերցող լայն շրջաններին:



## ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Հայ ժողովրդի բազմադարյան մշակույթի համակարգում նարտարապետությունը վերապահվում է բացառիկորեն մեծ ու կարևոր տեղ՝ պայմանավորված իր ազգային անկրկնելի ինֆևտիպությամբ, մեծահարուստ ավանդներով, միջազգային նաևաչում գտած գեղարվեստական բարձր մակարդակով:

Հայաստանի տարածքում մարդու շինարարական գործունեության առաջին նետերը վերաբերում են նոր ֆորմ դարին: Մ. թ. ա. IV—II հազարամյակներից մեզ են հասել բազմաթիվ բնակավայրեր, բերդչեններ, մեգալիթյան կառուցվածքներ: Այդ դարաշրջանում ձևավորվել են ֆաղաֆաշինական, սմրոցաշինական, բնակարանային նարտարապետության որոշակի սկզբունքներ, որոնք հարառանցիկ հայ նարտարապետության զարգացման ողջ ընթացքում:

Հայկական լեռնաշխարհում մ. թ. ա. IX դարում կազմավորվեց հին աշխարհի ստրկատիրական հզոր պետություններից մեկը՝ Արարատյան թագավորությունը (գրականության մեջ ավելի հայտնի Ուրարտու անունով): Նրա զարգացած ֆաղաֆաշինության և նարտարապետության մասին պատկերացում են տալիս Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող Էրեբունի, Թեյշեբախի, Արգիշտիխիևիի ֆաղաֆները: Էրեբունիում, որն ըստ սեպագիր արձանագրության հիմնադրվել է մ. թ. ա. 782 թ., կյանք գոյատևեց նաև Ուրարտական պետության անկումից հետո և նրա ժառանգորդը դարձավ Նեանը: Հելլենիստական մշակույթի ոլորտն ընդգրկված Հայաստանի արվեստի ու նարտարապետության բարձր մակարդակի վկայությունն են երկրի մայրաքաղաքների՝ Արմավիրի, Արտաշատի, և Գաննիի ամրոցի հուշարձանները:

Հայ նարտարապետության ազգային ինֆևտիպ կերպարը՝ ձևավորվեց և բյուրեղացավ վաղ միջնադարում՝ IV—VII դդ.:

Հայաստանն աշխարհի առաջին պետությունն էր, որ Տրդատ թագավորի շրջանում ֆրիստոնեությունն ընդունեց իբրև պետական կրոն (301 թ.) և ֆառոր դար միակ ֆրիստոնեական պետությունն էր աշխարհում: Քրիստոնեությունն ընդունելուց անմիջապես հետո երկրում ծայր առավ պաշտամունեային շենքերի տիպերի ինֆևտուրոյն մշակումը: Հայ նարտարապետությունը վաղ միջնադարում, հատկապես իր զարգացման ոսկեդարում (VII դ.), ստեղծեց և կենդանական շենքերի մի շարք ինֆևտիպ հորինվածքներ (Էյմիածին-Բագարանի, Մաստարայի, Ավան-Հոփսիսի, «գմբեթավոր դամբարանի» տիպի), որոնք մտան համաշխարհային արվեստի գանձարանը:

Հայ նարտարապետության դասական շրջանն ավարտվեց VII դարի վերջում, երբ արաբները նվաճեցին Հայաստանը: Բայց IX դարում արդեն հայկական պետականությունը վերածնվեց և սկիզբ առավ Հայաստանի նարտարապետության զարգացման նոր շրջափուլը: Դա պայմանավորվեց, առաջին հերթին, ֆաղաֆային մշակույթի (հատկապես երկրի մայրաքաղաք Անիի)

վերկրով, որի նետևանք էղավ պաշտամունեային և աշխարհիկ ճարտարապետության բուն զարգացումը:

Երկրի ֆեոդալական մասնավաճուրյունը IX—XI դարերում հանգեցրեց Անիի, Սյունիքի, Լաու, Վասպուրականի, իսկ XII—XIII դարերում Արցախի առանձին ճարտարապետական դպրոցների ստեղծմանը:

IX դարում ձևավորվեց հուշարձանի մի նոր տիպ՝ խաչաբար, եզակի երկվույր միջնադարյան գեղարվեստական բովանդակ մշակույթում:

IX—XIV դարերի ճարտարապետության մեջ կարևոր տեղ են զբաղեցրել վանական համալիրները, որոնց մեջ կառուցվում էին նաև աշխարհիկ բնույթի շենքեր: Այս շահում առանձնանում են գավիթներն ու ժամատները՝ յուրօրինակ շինություններ, որոնք սովորաբար ծառայում էին որպես տապանատուն և ժողովատեղի:

Կիլիկյան Հայաստանը XII—XIV դդ. աչքի էր ընկնում զարգացած ճարտարապետությամբ, հատկապես սմբոցաշինությամբ:

Քաղաքական և տնտեսական անբարենպաստ պայմանների հետևանքով XV—XVI դարերում շինարարությունը Հայաստանում գրեթե դադարեց: Այդ ժամանակաշրջանում հայ ճարտարապետությունը գոյատևում էր հայ գաղթօջախներում (Վրաստան, Իրան, Ռուսաստան, Լեհաստան, Ռումինիա և այլն): XVII դարի սկզբում միայն համեմատաբար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին երկրի վերականգնման ու շինարարական գործունեության համար:

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին (1828 թ.) բախտաբոշ նշանակություն ունեցավ ժողովրդի նյութական ու հոգևոր կյանքի բոլոր ուղղությունների, նաև ճարտարապետության համար: Այն իր պատմության միջնադարյան շրջանից բնակոխեց զարգացման մի նոր փուլ՝ ուրույն հատկանիշներով:

Առանձնապես նշանակալի և ծանրակշիռ է հայ ճարտարապետության զարգացման խորհրդային շրջանը՝ ոչ միայն շինարարության աննախադեպ մեծ ծավալով, այլև ճարտարապետական արվեստի աչքի ընկնող վարպետներով, մեծածեփ կորողներով, ազգային ավանդների նորովի կիրառմամբ, արդիական ճարտարապետության նկարագրի որոնումներով:

•  
•

Հայ ճարտարապետությունն անցյալ դարի 30-ական թվականներից դարձել է Եվրոպայի և ուսու գիտնականների սեռուն ուշադրության առարկան: Հայագիտության այդ նոր բնագավառի հիմքը դրեցին անվանի հնագետ ու ազգագրագետ շվեյցարացի Ֆրեդերիկ Դյուրուսը և Մոնպերեռն և ֆրանսիացի գիտնական Շառլ Տեֆսիեն՝ գրեթե միաժամանակ: Նրանց կատարած շարժառարությունները, գրչանկարները, առանձին հուշարձանների վերակազմության նախագծերը ներկայացրին Արևմուտքին հայ ճարտարապետության առավել նշանավոր կորողները: Իրենց որոշ կանխակալ և վիճելի տեսակետներով հանդերձ, դե Մոնպերեռն և Տեֆսիեն աշխատանքները նշանակալի դեր կատարեցին Եվրոպայում հայ ճարտարապետական արվեստի ուսումնասիրման գործում: Մինչև XIX դարի վերջը ընդհանուր բնույթի կամ Հայաստանի ու Վրաստանի ճարտարապետությանը նվիրված ուսումնասիրություններում արժանիքներ են հայ ճարտարապետության նետ կապված բազմաթիվ խնդիր-

ներ: Այս առումով ուշագրավ են ֆրանսիացի Մարի Բրոսսեի, գերմանացի Կարլ Շնաագբեի, անգլիացի Ջեյմս Ֆերգյուսոնի և հատկապես ականավոր գիտնական Օգյուստ Շուագիի (Ֆրանսիա) աշխատությունները: Համաշխարհային նարտարապետությունը նվիրված իր ծավալուն ուսումնասիրության մեջ նա առանձին տեղ է հատկացնում հայ նարտարապետությանը, նշելով նրա դերն ուրիշ երկրների շինարարական արվեստի առանձին ձևերի ստեղծման, ուսմանական ոճի կազմավորման մեջ:

Անցյալ դարում հայ նարտարապետությունը դառնում է նաև ուսու արվեստաբանների բնության առարկա (Ա. Մուրավյով, Գ. Գրիմ, Ն. Կոլեզուսով): Միսմամանակ Հայաստանի շատ հուշարձաններ, վանական համալիրներ և դրանց վիմագրությունը ներկայացվում են նաև հայ հեղինակների գործերում (Հ. Շահխարունյանց, Ս. Ջալալյանց, Ղ. Ալիշան, Ս. Էփրիկյան, Ե. Լալայան): Իսկ նույն դարի վերջին տասնամյակում սկսվում են միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անիի սիստեմատիկ պեղումները՝ խոշորագույն գիտնական և հայագետ ակադեմիկոս Նիկողայոս Մառի գլխավորությամբ: Իրանց շնորհիվ ձևավորվեց հայ միջնադարյան նարտարապետության հիմնավոր ուսումնասիրության դպրոցը: Այդ գործում կարևոր դեր խաղաց Անիի գիտարավար, որը 1917 թ. վերածվեց Կովկասի առաջին գիտահետազոտական ինստիտուտի: XX դարի սկզբում լույս տեսավ մեծածուծ արևելագետ ու հայագետ Հովսեփ Օրբելու աշխատությունների շարքը՝ նվիրված Հայաստանի նյութական մշակույթի տարբեր հարցերին: Բազմալստակ գիտնական, նարտարապետ Թորոս Թորամանյանը ծավալեց հայկական շինարարական արվեստի մասնագիտական խոր և բազմակողմանի ուսումնասիրության գործը և դարձավ Հայաստանի նարտարապետության գիտական ուսումնասիրության հիմնադիրն ու ռանվիրան:

XX դարի սկզբից համաշխարհային մասնագիտական գրականության մեջ հայ նարտարապետությունը գրավում է ավելի ու ավելի աչքի ընկնող տեղ: Հատկապես արժեքավոր են Շ. Գիլի, Վ. Բախմանի, Գ. Ռիվոյրայի, Խ. Լինչի, Յու. Բայրուշայթիսի եվրոպական տարբեր լեզուներով լույս տեսած ուսումնասիրությունները, որոնք մասամբ կամ ամբողջովին նվիրված են հայ նարտարապետությանը: Այս շարքում առանձնանում են ավստրիացի խոշոր գիտնական, արվեստաբան և արևելագետ Ի. Ստրիգովսկու ուսումնասիրությունները: Նա Հայաստանում հավաքած լույսայների, Թորոս Թորամանյանի տպագիր ու անոթի մեծաքանակ նյութերի հիման վրա գրեց և 1918 թ. Վիեննայում լույս ընծայեց երկհատոր «Հայերի նարտարապետությունը և եվրոպան» կոթողային մենագրությունը, որը մինչև օրս էլ չի կորցրել իր արժեքն ու կարևորությունը: Ստրիգովսկին եվրոպացի արվեստաբաններից առաջինն էր, որ բացահայտեց և հիմնավորեց հայ նարտարապետության միջազգային նշանակությունը և ազդեցությունը Արևմուտքի նարտարապետության զարգացման վրա:

1920-ական թվականներից սկսած հայ նարտարապետության ուսումնասիրության կենտրոնը դարձավ Խորհրդային Հայաստանը: Այս ժամանակաշրջանին է վերաբերում Թ. Թորամանյանի գիտական գործունեության առավել բեղմնավոր փուլը, այս տարիներին հանդես եկավ հայ և ռուս հետազոտողների մի ճյուղ սերունդ: Ազգային մշակույթի, ուստի նաև նարտարապետության ուսումնասիրությունը դարձավ պետականորեն ծրագրվող գործ: Հետազոտության առարկա դարձան հուշարձանների պատմությունը, վիմագրությունը,

ֆանդակն ու որմնակար, սկսվեցին սղեններու և բունգի ու վաղ երկաթի դարաշրջանի բնակատեղիները՝ Շենգավիթի (Ս. Սարգսյան), Լնաշենի (Շ. Մնացականյան), Մեծամորի ու Զրահովիտի (Է. Խանգաղյան), Մոխրաբլուրի, Շամիրամի (Գ. Արեշյան) ուսումնասիրությունները, ուրարտական ֆաղաֆների, Հին Հայաստանի մայրաքաղաքների (Դիլին, Արմավիր, Արտաշատ), ամրոցների (Արբերդ, Գառնի) պեղումները: Կարմիր բյուրում ու Արենբերդում Քեյշեբախների ու Էրեբունիի սիսանմատիկ պեղումների (Ռուբի Պիտուտպկի, Կոնստանտին Հովհաննիսյան), ապա Արգիշտիխիի (Արմավիրի պեղումների (Հարություն Մարտիրոսյան, Գևորգ Տիրացյան, Կորյուն Ղաֆաղարյան) արդյունքներն ու գիտական բարձր մակարդակով կատարված հետազոտությունները Հայաստանը դարձրին ուրարտագիտության նշանավոր կենտրոն:

Նեյլեհիստական Հայաստանի նյութական մշակույթն ու ճարտարապետությունն ուսումնասիրեցին Նիկողայոս Բունիսթյանը, Բարկեն Առաֆեյանը, Ալեքսանդր Մահինյանը, Գևորգ Տիրացյանը, որոնք և բացահայտեցին այդ ժամանակաշրջանի հայ արվեստի կարևոր նշանակությունը հայ դասական ճարտարապետության ծագման ու զարգացման ընթացքում: Հայագիտական աշխի ընկնող երևույթ էր Ք. Թորամանյանի գիտական վաստակն ընդգրկող երկու ծավալուն հատորների տպագրությունը:

Նետպատերազմյան տարիներին գիտնականները ձեռնամուխ եղան ընդհանրացնող բնույթի հետազոտությունների ստեղծմանը, առաջին անգամ գրվեց հայ միջնադարյան ճարտարապետության պատմությունը, որի հեղինակն էր աշխի ընկնող գիտնական Նիկոլայ Տոկարսկին: Նա խոշոր վաստակ ունեւ Հայաստանի ժայռափոր կառույցների, ամրոցների, վաղմիջնադարյան: մի շարք հուշարձանների (որոնք ինքն էր հայտնաբերել պեղումներով), Տայֆե ճարտարապետական դպրոցի գիտական և անաշառ հետազոտման գործում: Նորահայտ նյութերի հիման վրա կարևոր ընդհանրացնող աշխատություններ գրեցին Անատոլի Յակոբսոնը, Յուրի Յարայովը, Վարազդատ Հարությունյանը, Հովհաննես Խալիֆախյանը, Ալեքսանդր Մահինյանը, Ստեփան Մնացականյանը, Մուրադ Հասարթյանը: Հետազոտության առարկա դարձան հայկական ճարտարապետության առանձին հանգուցային խնդիրները՝ ֆաղաֆայինական մշակույթը (Վարազդատ Հարությունյան, Արմեն Զարյան), աշխարհիկ շենքերը (Վարազդատ Հարությունյան, Հովհաննես Խալիֆախյան), կառուցվածքների տիպերը (Ստեփան Մնացականյան, Տիրան Մարտիրոսյան, Վանազն Գրիգորյան), առանձին կարևոր հուշարձանները (Ալեքսանդրա Երեմյան, Ալեքսանդր Մահինյան, Գառնիկ Շախկյան), հարդարանքը (Շմավոն Ազատյան), ճարտարապետական դպրոցները (Ստեփան Մնացականյան), միջնադարյան ճարտարապետները (Սեդրակ Բարխուդարյան), ժողովրդական ճարտարապետությունը (Սողոմոն Վարդանյան, Էմին Հակոբյան, Նուբար Պապուխյան, Սարգիս Մաթևոսյան), վիմագրությունը (Հովսեփ Օրբելի, Գաբեգին Հովսեփյան, Կարո Ղաֆաղարյան, Սեդրակ Բարխուդարյան, Սուրեն Ավագյան, Պարույր Մուրադյան): Մեծ է Անատոլի Յակոբսոնի ավանդը հայ և հարևան երկրների (Վրաստան, Արբիա, Բյուզունդիա) ճարտարապետական առևտրությունների, վանական համալիրների, խաչարների հետազոտման բնագավառում: Հայ խորհրդային ճարտարապետության նվաճումների ուսումնասիրությունը նոր էջ բացեց հայ արվեստաբանության պատմության մեջ՝ մշակվեցին նաև տեսական հարցեր, ստեղծագործակունի հետ մեկտեղ նաև գործնական խրոհիրներ: Ուշագրավ էն Խորհրդային Հայաստանի ֆաղաֆայինությունը (Հրայր

Իսարեկյան), հայ խորհրդային ճարտարապետության անցած ուղին ամփոփող (Վարազդատ Հարությունյան, Կոնոսանտին Հովհաննիսյան, Առն Քաբայան, Արծվին Գրիգորյան, Մարտին Թովմասյան, Մուրադ Հասարայան, Լորետա Դոլոխանյան), նրա հիմնադիր Ալեքսանդր Թամանյանին նվիրված (Առն Զորյան), նրա ազգային առանձնահատկությունները բացահայտող (Յուրի Յարալով, Կարեն Թալյան) հետազոտությունները:

Հայ արվեստարանական մտքի, ճարտարապետության գիտության ձևավորմանն ու զարգացմանը մեծապես նպաստեց ՀՀ գիտությունների ակադեմիայի արվեստների պատմության և տեսության սեկտորի հիման վրա 1958 թ. ստեղծված արվեստի ինստիտուտը: Նրա ճարտարապետության բաժինը ուսումնասիրում է հայ ճարտարապետության անցած բազմադարյան ճանապարհը՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:

Ինստիտուտը համագործակցում է ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան հայագիտական կենտրոնների հետ: 1960-ական թթ. եվրոպական երկրներում վերստին ուժեղացավ հետաբերությունը Հայաստանի միջնադարյան արվեստի՝ մանրակարգչության, որմնակարչության, ֆանդազորժողովրդյան, հատկապես ճարտարապետության հանդեպ: Այդ շարժումը կյանքի կոչեցին իտալացիները: 1966-ին Հռոմի համալսարանին արճաբեք ստեղծվեց հայ ճարտարապետության ուսումնասիրման կենտրոն (ղեկավար՝ Պաոլո Կունեո), իսկ 1967-ին Միլանի պոլիտեխնիկական ինստիտուտում՝ Հայ մշակույթի ուսումնասիրման ու վավերագրման կենտրոն (ղեկավար՝ Ադրիանո Ալպագո Նովելո): Հռոմի կենտրոնի գործունեության արդյունք էր այլ հիմնական գրություն՝ նվիրված նորահայտ կամ էիչ ուսումնասիրված ճարտարապետական հուշարձաններին (Թովմաս Բրեչչա Ֆրատտոլոկի, Պաոլո Կունեո, Ֆրանչեսկո Գանդոլֆո, Մարիո դ'Մոնֆրեո): Պաոլո Կունեոյի գրքերին, գիտական հոդվածներին, միջազգային գիտաժողովների զեկուցումներին հաջորդեց նրա «Հայ ճարտարապետությունը» երկհատոր աշխատությունը (1988 թ.), որտեղ ընդգրկված են IV—XIX դարերի պատմական Հայաստանի տարածքի ճարտարապետական գրեթե բոլոր նշանավոր հուշարձանները՝ չափագրություններով, լուսանկարներով, սեղմ նկարագրությամբ ու հակիրճ գնահատականով մանրամասն մատենագիտությամբ: Հանրագիտարանի արժեք ներկայացնող այդ աշխատությունը դարձել է հայ ժողովրդի շինարարական արվեստով զբաղվող արևմտյան գիտնականների սեզանի գիրքը: Ավելի բազմազան է Միլանի կենտրոնի գործունեությունը: Ա. Նովելոյի ղեկավարած կենտրոնը կազմակերպել է շրջիկ ցուցահանդես՝ աշխարհի երկրներին ծանոթացնելով հայ ճարտարապետության արժեքներին, տարբեր լեզուներով լույս է բեծայել նրա կատալոգները, հիմնադրել «Վավերագրեր հայ ճարտարապետության» բարձրորակ մատենաշարը՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի համագործակցությամբ: (մինչև այժմ լույս է տեսել երկու տասնյակ գիրք): Միլանի կենտրոնը հրատարակում է նաև «Հայ ճարտարապետության հետազոտություններ» մատենաշարը, որից լույս է տեսել 25 պրակ:

Միլանի կենտրոնի և անձամբ Ա. Նովելոյի անմիջական մասնակցությամբ հրավիրվեցին հայ արվեստին նվիրված միջազգային գիտաժողովներ: 1975, 1978, 1981, 1985, 1988 թթ. Իտալիայում ու Հայաստանում կայացած գիտաժողովներին մասնակցել են աշխարհի տարբեր երկրների հարյուրավոր մասնագետներ, լավել են բազմաթիվ զեկուցումներ, սրճնք (ուպալրված առանձին գրքերով) մի նոր աստիճանի բարձրացրին հայ արվեստագիտությունը: Պետք

է հուսալ, որ Արվեստի ինստիտուտի և Միլանի կենտրոնի միջև կնքված պայմանագրով ճախտեալված հետագա գիտաժողովներն ավելի ևս կհարստացնեն միջնադարյան հայ արվեստի ուսումնասիրությունը:

Իտալիայից բացի, հայ նարտարապետության և արվեստի ուսումնասիրությանն օջախներ ստեղծվեցին Արևմտյան Գերմանիայում (Հարսմոտ Նոֆֆիխաւեր, Գունդոլֆ Բրոխհաուզ, Արմեն Հախնազարյան), ԱՄՆ-ում, (Ռիչարդ Մեքսյուս, Լյուսի Մանվէլյան), Յրանսիայում (Քիերի ամուսիններ, Պատրիկ Դոնաբէլյան): Ժան-Միշել Քիերին հրատարակեց Վասպուրականի, Կարսի մարզի հայկական հուշարձաններին նվիրված աշխատություններ: Պ. Դոնաբէլյանի մասնակցությամբ Ժ. Մ. Քիերին տպագրեց «Հայկական արվեստ» ծավալուն մենագրությունը՝ նվիրված Հայաստանի նարտարապետությանը, նկարչությանը, բանդակագործությանը և կիրառական արվեստին: Միջազգային գիտաժողովները նպաստեցին, որ հայ զեղարվեստական մշակույթը հետաճեց: Մասնավորապես առաջին դասնա նաև ուրիշ երկրների արվեստաբանների համար (Քուլդարիա, Հարավսլավիա, Հունաստան, Բելգիա, Դանիա, Իդալանդիա և այլն):

Հայ նարտարապետության պատմության ուսումնասիրության կարևորագույն օջախներ են հաւ երևանի նարտարապետաշինարարական ինստիտուտի նարտարապետության տեսության և պատմության ամբիոնը, Հայաստանի գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտը, որի աշխատանքները սերտորեն կապված են նարտարապետական հուշարձանների պեղումների հետ, և հատկապես Հուշարձանների հետազոտման կենտրոնը, որի ընդարձակ գործունեության մի կարևոր նյութը նարտարապետությանը վերաբերող գրքերի հրատարակությունն է: ԵՃՇԻ նարտարապետության տեսության և պատմության ամբիոնը մոտ կես դար առդեն ոչ միայն մասնագետների, այլ հաւ գիտական կադրերի պատրաստման կենտրոն է, այստեղ առաջին անգամ մշակվել է հայ նարտարապետության պատմության դասընթաց (Վ. Հարությունյան): Ի վերջո, նշենք նաև Հայկական հուշարձանների պահպանության ընկերության գնահատելի գործունեությունը, որի հրատարակած աշխատանքների մեջ առանձնապես ուշագրավ են Լեոնային Ղարաբաղի (Շ. Մկրտչյան) և Նախիջևանի (Ա. Ալվազյան) հուշարձաններին նվիրված գրքերը:

Տասնամյակների ընթացքում կուտակված փաստական հսկայական նյութը Արևմտյան Հայաստանի, Իրանի տարածքի, հայկական գաղթախոյնների, Վրաստանի և Ադրբեյջանի տարածքի հայկական հուշարձանների բազմաթիվ ուսումնասիրությունները, կատարված պեղումները, որոնց շնորհիվ ի հայտ եկան նորանոր նարտարապետական արժեքներ, հնարավոր դարձրին «Հայ նարտարապետության պատմության» ներկա վեցհատուրյակի ստեղծումը:

•  
•

Վեցհատուրյակի առաջին հատորն ընդգրկում է Հայկական լեոնաշխարհի, պատմական Հայաստանի տարածքի նարտարապետական մշակույթը հնագույն ժամանակներից մինչև մ. թ. III դարը, հաջորդ երկու հատորները՝ վաղ միջնադարի՝ IV—VII դարերի նարտարապետությունը (երկրորդը՝ քաղաքաշինությունը, աշխարհիկ նարտարապետությունը, բազիլիկ կառույցները, երրորդը՝ նույն ժամանակաշրջանի կենտրոնազմբէք շէնքերը, մեծորիակ հուշարձանները):

**ող, շինարարական տեխնիկան, արվեստների սինթեզը), շորտոդ հատուր՝ IX—XIV, հինգերորդը՝ XV—XIX դարերի, վեցերորդը՝ Խորհրդային Հայաստանի նարտարապետությունը:**

**Վեցնատուրյակն, այսպիսով, հայ նարտարապետական գիտության ավելի քան հարյուրհիսուն տարվա աշխատանքի հանրագումարն է և ամփոփումը՝ այդ գիտության այսօրվա հնարավորությունների մակարդակով: Հասարակության դատին հանձնելով իրենց աշխատանքի արդյունքը, հեղինակները հեռու են այն մտքից, որ վեցնատուրյակը ներկայացնում է հայ նարտարապետական արվեստի բազմադարյա պատմությունը համակողմանի և կատարելագրման, մի բան, որ հնարավոր է իրագործել հետագայում, երբ հայ նարտարապետության ուսումնասիրության ասպարեզում՝ իր վիթխարի ժամանակային և տարածային ընդգրկմամբ, այլևս չեն լինի սպիտակ կետեր, հետագաաված կլիման հայակառույց բոլոր հուշարձանները ոչ միայն ներկայիս Հայաստանի տարածքում, այլև ամենուրեք:**



**Մ Ր Ս Ա Ռ Շ Ի Ն**

**ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ  
ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ-ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԻ  
ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ  
ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ**

## Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

### ՃԱՐՏԱՐԱԿԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅՈՒՄ

Շինարարական գործի և ճարտարապետության ակունքները սերտորեն կապված են նախամարդու կողմից արհեստական միջավայրի ստեղծման առաջին փորձերի հետ: Վերջին տասնամյակներում կատարված հետազոտությունները բացահայտել են կարևորագույն մի քանի փաստեր, որոնք լուսաբանում են ճարտարապետության առաջացման հանդուցային խնդիրը: Ճարտարապետության պատմության և, ընդհանրապես, հնագիտության մեջ ենթադրվում էր, որ շինարարական գործն առաջացել է մարդկային մշակույթի աստիճանական կատարելագործման ընթացքում, հին քարեդարի (պալեոլիթի) զարգացած փուլերում: Սակայն Արևելյան Աֆրիկայում գտնվող Օլդովայ հնավայրում կատարված հայտնագործությունները ստիպում են արմատապես վերանայել այդ վարկածը: Պալեոլիթյան ամենավաղ մշակույթը ներկայացնող բարև տարատեսակ գործիքների հետ մեկտեղ այդտեղ բացվել է ձվածիր հատակաձևով քարերի շարվածք, որով ամբացված է եղել ճյուղերից ու խոտից շինված հուրիչի հիմքը: Շերտը, որի մեջ գտնվել է այդ շինությունը, 1,8—2 միլիոն տարեկան է՝ Փրանսիայի հարավում պեղված Տերրա-Ամատա հինքարեդարյան կայանում գտնվել են հնագույն հյուղակների հետքեր, որոնց պատերի հիմնակմախքը կազմել են ցցված ձողաններ, իսկ հատակները ծածկված են զլաբարով: Ոլդովայան ժամանակաշրջանին հաջորդող վաղ աշխիհ վերագրված ձվածիր հատակաձևով այդ շինությունները (մոտ 380—450 հազար տարի նախքան մեր օրերը) խոշոր շափի են եղել. երկարությունը՝ 7—15 մ, լայնությունը՝ 4—6 մ:

Ճարտարապետության առաջացման համար առանձնապես կարևոր էր քարայրաբնակության գործոնը: Ապաստանելով քարանձավում, անբարենպաստ կլիմայական պայմաններում, նախամարդը սկսում է օգտագործել և դիտել այն որպես բնակարան, որի ներքին տարածությունը յուրացված է և ենթակա է կիրառական ստորաբաժանման՝ սննդի մշակման, գործիքների արտադրության, օջախների տեղադրման, քնչեցեցյալների թաղման համար: Քարայրային բնակարանը հանդես էր գալիս իբրև կազմակերպված միկրոկոսմոս՝ ընդդեմ արտաքին աշխարհի քաոսի: Ուստի պատահական չէ, որ աշելյան մշակույթներում զոլույթուն ունեցած հնագույն շինությունները՝ պատերը և ճյուղակները, կառուցվել են ի լրացումն քարայրային բնակարանի, քարայրի ներսում կամ մուտքի մոտ: Լազարեթ քարայրի (Փրանսիա) ուշ աշելյան ժամանակաշրջանի շերտում հայտնաբերվել է 11 մ երկարությամբ և 5,5 մ լայնությամբ մի կառույց՝ ձողանային հիմնակմախքով, որը նախկինում ծածկված էր կենդանիների մորթիներով: Նրա ներքին մակերեսը, որը հավասար էր 53 մ<sup>2</sup>, բաժանվում էր միջնորմով: Կացարանի մուտքը ուղղված էր դեպի քարայրի ներսը, իսկ քարայրի բացվածքում քարաշեն մի փոքրիկ պատ է դրված եղել, որը ճյուղակը պաշտպանել է ձմռան ամիսներին ձովից փչող քամիներից<sup>3</sup>:

Քարայրաբնակությունը Հայկական լեռնաշխարհում արձանագրվում է առնվազն վաղ աշելյան (հին տերմինաբանությամբ՝ շելյան) ժամանակաշրջանից սկսած: Դրա վկայությունն է Լեռնային Ղարաբաղում գտնվող Աղոխի քարան-

ձավի 6-րդ շերտի մշակույթը, որը շուրջ 300—600 հազար տարեկան է: Այդ ժամանակաշրջանից սկսած քարայրները Հայկական լեռնաշխարհում պարբերաբար օգտագործվել են բնակութային համար մինչև մեր զարմ սկիզբը: Արդի տվյալներով լեռնաշխարհի քարանձավներում, բայցի հինքարեդարյան (պալեոլիթյան) մշակույթներին, հայտնաբերվել են միջին քարեդարյան (մեզոլիթյան), պղնձաքարեդարյան (էնեոլիթյան), վաղ և ուշ բրոնզեդարյան, վաղ երկաթեդարյան, պարզացած և ուշ միջնադարյան մշակութային շերտեր: Զի բացառվում, և նույնիսկ հավանական է թվում, քարայրների բնակեցումը նոր քարեդարում (նեոլիթում), ինչպես նաև առաջիմ չվկայված մյուս դարաշրջաններում, իսկ ուրարտական ժամանակաշրջանում և ավելի ուշ դարերում օգտագործվող բնական քարանձավների կողքին կերտվել են պաշտամունքային նշանակութային ժայռափոր հոյակապ կառույցներ:

Որոշ ուսումնասիրողներ ենթադրում են, որ նախամարդը բնակվել է Ադոխի քարայրում նույնիսկ վաղ-աշխարհային ժամանակաշրջանից առաջ՝ օլդովանյան դարաշրջանում, սակայն այդ վարկածը լրացուցիչ փաստարկման կարիք ունի: Հայաստանում կացարանների կառուցման հնագույն ձևերից մեկը վերաբերում է վաղ պալեոլիթի վերջին՝ մուստերյան դարաշրջանին: Երևան—1-ին քարայրի մուտքի մոտ, նրա ծածկից դուրս հայտնաբերվել են փայտե ձողաններից ու մորթիներից պատրաստված, տոփանված հատակով հյուղակի հետքեր: Ռադիոածխածնային անալիզի տվյալներով այդ հյուղակը գոյություն է ունեցել 48 հազար տարի առաջ:

Ուշ պալեոլիթում Մերձավոր արևելքի տարածքում բնակութային համար համատարած օգտագործվել են քարայրները: Նույն դարաշրջանում գոյություն են ունեցել նաև բացօթյա բազմաթիվ բնակավայրեր, որտեղ պետք է կառուցված լինեին թեթև շինություններ: Սակայն առ այսօր նրանց հետքերը չեն հայտնաբերվել: Բացօթյա արհեստական հնագույն շինությունը հայտնագործվել է Պաղեստինում, Տիրեբիաս լճի արևելյան ափին գտնվող Այն Գև 1-ին հնավայրում: Այստեղ բացվել է թեթև լանջի վրա փորված կլորավուն հատակածեղով փոս, որի մեջ անմշակ քարերից կիսակլոր հատակագծով հենապատ էր կառուցված: Շարվածքի բարձրությունը 0,4 մ էր, Այս կացարանը պատկանում է էպիպալեոլիթյան

կերպրյան հնագիտական մշակույթին և ուղիղաձիգաձևային անալիզի հիման վրա վերագրվում է մ.թ.ա. 15—13-րդ հազարամյակներին:

Այնուհանդերձ կերպրյան բնակութային հիմնական մասը դեռևս սպրկել է քարանձավներում: Քարայրային կյանքը շարունակել են նաև նրանց հետնորդները՝ նատոֆյան մշակույթի կրողները:

Ճարտարապետութային հնագույն փուլի ձևավորումը սերտորեն կապված է արտադրող երկրագործական-անտառապահական անտեսության առաջացման հետ: Մոտավորապես մ.թ.ա. X—IX հազարամյակներից սկսած Երկրագնդի վրա հաստատվում են բնակլիմայական այն պայմանները, որոնք բնորոշ են երկրաբանական նորագույն ենթաշրջանին՝ հողոցներին: Այնուհետև բնական միջավայրի փոփոխությունը ճակատագրական նշանակություն է ունեցել միայն առանձին հասարակությունների գոյության համար: Այդ փոփոխությունները միատեսակ չէին տարբեր երկրամասերում և իրենց նշանակությամբ չեն կարող համադրվել սառցապատման գործոնի հետ: Հին հողոցներում Առաջավոր Ասիայում տեղի է ունեցել մարդկության պատմության ընթացքի խոշորագույն հեղաշրջումներից մեկը՝ անցումը որսորդական-հավաքչական յուրացնող անտեսությունից երկրագործության և անասնապահության միջոցով սննդամթերքի արտադրությանը, որը «նեոլիթյան հեղափոխություն» անվանումն է ստացել: Արտադրող անտեսության ձևավորմանը Առաջավոր Ասիայում համընկնում են մշակութային մի շարք կարևորագույն հայտնագործություններ, որոնք մեծ թափ են հաղորդել համաշխարհային պատմական առաջընթացին: Սեոլիթում այստեղ տարածվում է արհեստական առաջին շինանյութի՝ հում աղյուսի արտադրությունը, կավը օգտագործվում է իբրև աղյուսե և բարև կառուցվածքների շարվածքի կապակցող նյութ, սկսվում է ճարտարապետության վերընթաց դարգացումը, առաջանում և դարգանում է խեցեգործությունը, մանածագործությունն ու ջուլահույթությունը, արմատական կատարելագործվում է փայտամշակման տեխնոլոգիան, մարդը սկսում է ծանոթանալ մետաղին: Նեոլիթից սկսած երկրագործությունը Առաջավոր Ասիայում և, մասնավորապես, Հայկական լեռնաշխարհում կապված էր ոռոգելի ջրի օգտագործման հետ, ուստի ոռոգման տեխնիկան նույնպես սկսվում է այդ դարաշրջանում: Այսպիսով նեոլիթյան հե-

յափոխութիւնը արտահայտում էր մարդկային գործունեութեան ամբողջ համակարգի որակական փոփոխութիւնը: Մարդկութեան պատմութեան բնթագրում առաջին անգամ Առաջավոր Ասիայում արտադրութեան միջոցով ստեղծվում է հասարակութեան գոյութեան արհեստական միջավայրը, որի հիմքում ընկած արտադրութեան պրոցեսում ստացված հումքի՝ երկրագործական և անասնապահական սննդամթերքների, քարի, փայտի ու կավի, արհեստական շինանյութերի, զործվածքների վերամշակումը: Նեոլիթյան հեղափոխութիւնը Առաջավոր Ասիայում ընդգրկել է շուրջ չորս հազարամյակ՝ մ.թ.ա. X—VII-ր ներառյալ, մի ժամանակահատված, որ շնչին էր մարդկութեան պատմութեան դրան նախորդող ամբողջ ժամանակաշրջանի համեմատութեամբ: Այդ պրոցեսի սկզբնավորումը արտացոլում են այս տարածքի էպիպալեոլիթի (հետհիսթորիկ) կամ մեզոլիթի (միջին քարեդար) հնագիտական մշակույթները, իսկ հնագիտական հաջորդ դարաշրջանի՝ նեոլիթի (նոր քարեդար) հուշարձանները արտահայտում են մերձավորարևելյան վաղ երկրագործական-անասնապահական մշակույթների բնորոշ հատկանիշների ձևավորումն ու զարգացումը:

Նեոլիթյան հեղափոխութեան և նրան հաջորդող զարգացած նեոլիթի ժամանակաշրջանում Առաջավոր Ասիայում ձևավորվում են ճարտարապետական տարրեր ավանդույթներ, որոնք հիմնականում արտահայտվել են այդ ընդարձակ տարածքի տարբեր շրջանների բնակարանաշինութեան մեջ:

Նեոլիթյան հեղափոխութեան սկզբնական շրջանում առաջացել են նոր տիպի բացօթյա բնակավայրեր: Այդ պրոցեսը ցայտուն կերպով բացահայտվում է նատուֆյան մշակույթի նյութերում: Մեզոլիթյան (կամ էպիպալեոլիթյան) այդ մշակույթը տարածված է եղել Ասորիքում և Պաղեստինում և մոտավոր կերպով թվագրվում է մ.թ.ա. 10000—8000 թթ.: Հարթեցնելով քարայրների առջևում գտնվող տարածութիւնը, նատուֆյցիները ստեղծել են օգտագործվող արհեստական հարթակներ, որոնց մեջ կիրառական նշանակութեան փոսեր են փորվել (էլ-Ուադ): Օգտագործելով քարի շոր շարվածքը, նրանք թեք լանջերի վրա փոքրիկ հենապատեր են կառուցել, ստեղծելով արհեստական դարավանդներ, որպիսիք օգտագործվել են թեթև նյութերից՝ յուլյակ-

ներ շինելու համար (Նահալ-Օրեն)<sup>7</sup>: Կացարանաշինութեան առաջին հաջողութիւնները պարզորոշ դրսևորվում են նատուֆյան մշակույթի բացօթյա բնակավայրերում: Այն-Մալլահայում (էյնան) կառուցված են եղել կլոր հատակաձևով 4-ից մինչև 9 մ տրամագծով կիսագետնափոր կացարաններ, որոնց ստորգետնյա մասի հողի պատերը ամրացվել են մինչև 1,20 մ երկարությամբ քարերի անշաղախ շարվածքով: Խոշոր կացարաններում բացվել են պատին զուգահեռ, օղակաձև դասավորութեամբ փայտե սյուների հետքեր, որոնք կարող էին կրել տանիքի զգալի ծանրութիւնը: Կացարանները կարմիր գույնով ներկված սալահատակներ են ունեցել: Միևնույնուների ներսում բացվել են բազմաթիվ պահեստահորեր: Այն-Մալլահայում միաժամանակ բնակեցված էր 25-ից 50 կացարան<sup>8</sup>: Մյուրեյբեթում (Եփրատի ասիին՝ Ասորիքում) նատուֆյան մշակույթին անմիջականորեն հաջորդող շերտում բացվել են ավելի հաստատուն շենքի մնացորդներ: Այն կլոր հատակագծով, 6 մ տրամագծով կիսագետնափոր տուն էր, որի պատը կազմել է կողք-կողքի ջցված գերանների շարքը, երեսից 10 սմ հաստութեամբ կավաշերտով սվաղված<sup>9</sup>:

Նատուֆյան մշակույթին մոտավորապես ժամանակակից է Զագրոսյան լեռներում տարածված էպիպալեոլիթյան հնագիտական այն մշակույթը, որը ներկայացված է Զավի-Չեմի-Շանիդար հնավայրի նյութերով: Բավականաչափ ընդարձակ այս բնակավայրում (մակերեսը շուրջ 275×215 մ է): բացվել են կլոր հատակագծով (մոտ 4 մ տրամագծով) քարե շարվածքներ, որոնք թերևս կացարանի պատի ստորին մասն էին կազմում<sup>10</sup>: Պեղողները շեն կարողացել պարզել, թե արդյոք այդ կառուցվածքը վերգետնյա՞, թե կիսագետնափոր շինութիւն էր: Այսուհանդերձ նույն տարածքում պեղված ժամանակագրական հաջորդ շրջանը ներկայացնող Թելլ Մըլեֆաաթ բնակավայրում հայտնի են կիսագետնափոր ձվածիք (3,5××2,7 կամ 4×3 մ) կամ կլոր (4 մ տրամագծով) հատակագծով կառույցներ<sup>11</sup>:

Ճարտարապետական այդ ժառանգութիւնը վերափոխվում և էապես հարստանում է Առաջավոր Ասիայի պատմութեան հաջորդ շրջաններում, որոնք վաղագույն նեոլիթ (պրոտոնեոլիթ) ու նախակերամիկական նեոլիթ անվանումն են ստացել և կարող են թվագրվել մ.թ.ա. 8500—6500 թթ. միջև ընկած ժամանակահատվածով: Պրոտոնեո-


լիթի և նախակերամիկական նեոլիթի տա-  
շին շրջանի հուշարձանները ներկայացնում են  
կառուցողական մտքի և շինարարական տեխնի-  
կայի որոշակի զարգացում: Այդ ժամանակաշրջա-  
նում հայտնագործվում, իրականացվում և տա-  
րածվում է ազատ կանգնած պատի գաղափարը,  
որը հնարավոր էր դարձել կավահողի կապակե-  
ցող հատկութունների բացահայտման շնորհիվ:  
Այսուհետև շարվածքը հանդես է գալիս ոչ միայն  
որպես հենապատ կամ հիմնաշար, այլև ձևավոր-  
ում է կառուցյան վերգետնյա ծավալը: Շինու-  
թյունները ավելի հիմնավոր են դառնում: Կիսա-  
գետնափոր հյուղակների կողքին լայնորեն տա-  
րածվում են վերգետնյա կացարանները: Այդ  
զարգացումը ցայտուն կերպով ներկայացնում  
են Մյուրեյթեի պեղումները: Հայինատուֆյան  
շերտին անմիջականորեն հաջորդող բնակավայ-  
րի գոյությունը երկրորդ փուլում կառուցվում են  
վերգետնյա և կիսագետնափոր կլոր հատակաձևի  
կացարաններ: Դրանց պատերը կավածեփ են:  
Շինությունների ամրացման համար օգտագործ-  
վել են կավաշաղախով շարված քարե շարվածք-  
ներ: Երկրորդ փուլի միաբաժնի կառուցյանին եր-  
րորդ փուլում (10—17-րդ շինարարական հորի-  
զոններ) հաջորդել են կլոր բազմաբաժնի խոշոր  
(6 մ տրամագծով) կացարաններ: Դրանց արտա-  
քին պատերը գանգվածոջ են, կավաշաղախով  
ամրացված միջին ու մանր քարերի շարվածքով  
կամ կավածեփ են: Ներսում կացարանները կա-  
վածեփ բարակ միջնորմներով հատվել են մի քա-  
նի բաժանմունքների: Տանիքի համար օգտագործ-  
վել են գերանակապ կառուցվածքներ, որոնք հեն-  
վել են սյուների վրա: Նույն փուլի վերջին շրջա-  
նում կլոր հատակաձևով բնակելի կացարանների  
կողքին հանդես են եկել կիրառական յուրահա-  
տուկ նշանակության (հավանաբար՝ տնտեսա-  
կան) քարաշեն բառանկյունի բազմաբաժնի կա-  
ռուցյանը: Այսպիսով, արձանագրվում է անցումը  
կլոր հատակագծից դեպի ուղղանկյուն:

Սիրիա-պաղեստինյան նախակերամիկական նեո-  
լիթի ճարտարապետական նորույթները շեն սահ-  
մանափակվել վերոհիշյալ փոփոխություններով:  
Թեև Աստուդի պեղումների ընթացքում արձանա-  
գրվել է հարթատուցիկ (պլանոկոնդրա) ձևի  
հում աղյուսի օգտագործումը, իսկ Նահալ Օրենի  
2-րդ շերտը ներկայացնում է բնական ուղիների  
թեք լանջի դարձանդային կառուցապատման  
առաջին փորձերից մեկը: Այդ

պեղվել են արհեստական շորս դարավանդներ,  
որոնց վրա բացվել են կլոր հատակաձևով 3—4 մ  
տրամագծով միաբաժնի 14 կացարաններ: Տները  
պատերը կառուցվել են կավաշաղախով շարված  
քարերով: Կացարանները խմբավորվել են այն-  
պես, որպեսզի ներքևում դրված տան լանջին  
հարկած պատի հատվածը հենապատ ծառայի վե-  
րին դարավանդի շինության համար<sup>12</sup>:

Ճարտարապետական գաղափարը վաղադույն  
նեոլիթի ժամանակաշրջանում վերացած է նաև  
սիրիա-պաղեստինյան մշակութային սրբափոս-  
մաններից դեպի: Խուրխուստնում պեղված Ալիկոշ  
արհեստական բլուր-բնակավայրի Իբա Մորյու:  
մշակութային փուլի շերտում բացվել են ուղղան-  
կյուն փորքիկ (2,25 մ երկարությամբ) կացարան-  
ներ, որոնց պատերը շարվել են բնական կար-  
մըրավուն գույնի կավաշերտից կտրված՝ 25×  
×15×10 սմ չափի պրիզմայաձև կավախորոնե-  
րով:

Նույն ժամանակաշրջանին է պատկանում Քեր-  
մանշահի մոտակայքում պեղված Գանջղարեհ  
բնակավայրը, որի D շերտը հոծ կառուցապատ-  
ման պատեր է ներկայացնում: Այստեղ բացվել  
են կողք կողքի կառուցված խորանարդաձև ծա-  
վալի բազմաթիվ փորքիկ շինություններ, որոնց  
մի մասը թերևս պահեստային նշանակություն է  
ունեցել: Պատերը շինվել են հարթատուցիկ հում  
աղյուսներից, որոնց 1 մ-ի հասնող երկարու-  
թյունը հուշում է Հյուսիսային Միջագետքում նեո-  
լիթի ավելի ուշ փուլում տարածված կավի եր-  
կարուկ կտորներին՝ «շերտերից» պատեր կառու-  
ցելու ավանդույթի հնարավոր ակունքները: Բնա-  
կավայրի կենտրոնում պեղված մի քանի շինու-  
թյուններ ներկայացնում են բնակելի տան երկ-  
հարկ ծավալի ստեղծման փորձը: Պահպանվել են  
թևեր, որոնք բարձրացված են եղել փայտե շոր-  
տուների վրա, տակից թողնելով ենթադրվող պա-  
հեստային նշանակության խորանարդաձև կա-  
ռուցվածքները: Կացարանների ծածկերում օգտա-  
գործվել է հորիզոնական գերանների վրա հեն-  
ված, կավահողով ծածկված ճյուղերից կառուց-  
վածքը: Գանջղարեհ D-ի ճարտարապետությունը  
ներկայացնում է կայարանների ներքին ձևա-  
փորման նոր տարրեր՝ շինություններից մեկում  
պաշտամունքային նշանակության խոշոր մեկու-  
յվել, որտեղ գտնվել է վարի ոչխարների բարձր



վորապես՝ ցլերի) գանգերի օգտագործումը սըր-  
րարանների ներքին ձևավորման համար բազ-  
մատեսակ եղանակով հանդես է գալիս նեոլիթ-  
յան մշակույթների դարգացման հաջորդ փուլում՝  
Հարավային Անատոլիայում գտնվող Ջաթալ-Հու-  
յուբում: Ծարտարապետական նորույթներով բազ-  
մաճարուսս Կանչղարե: D շերտում հայտնաբեր-

վել է նաև Առաջավոր Ասիայում սու ախօր հայտ-  
նի հնագույն խեցեղեն (մ.թ.ա. VIII հազարամ-  
յակի երկրորդ կես)<sup>13</sup>:

Մոտավորապես նույն ժամանակաշրջանին են  
պատկանում Հայկական լեռնաշխարհի նեոլիթ-  
յան ճարտարապետության այժմ հայտնի հնա-  
գույն հուշարձանները:

## ԳԼՈՒԽ Ա.ԴԱԶԻՆ

### ՀԱՅՍՏԱՆԱՆ ԼՆՈՆԱՇՈՒՄՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՌՈՒԹ-ԷՆՆՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԱՌՄ

Նորագույն հայտնագործությունների վկայությամբ Հայկական լեռնաշխարհի ճարտարապետական առաջին հուշարձանները նույնքան հին են, որքան հին է Առաջավոր Ասիայի նախակելամիական նեոլիթի առավել զարգացած շրջանների ճարտարապետությունը: Հայկական լեռնաշխարհում մինչ օրս պեղված հնագույն կառույցները վերաբերում են նախակերամիկական նեոլիթի երկրորդ փուլին: Սակայն դրանց ձևերի ու շինարարական տեխնիկայի դարգացման աստիճանը հուշում են այդ ճարտարապետության նախապատմության գոյությունը, որը, թերևս, կարող է վերագրվել մեզոլիթի և պրոտոնեոլիթի ժամանակաշրջաններին:

Նշված կառույցները հայտնագործվել են լեռնաշխարհի հարավարևմտյան մասում՝ Հայկական Տավրոսի ստորոտում, Չայոնու Քեփեսի արհեստական բլուր-բնակավայրի պեղումների ընթացքում: Ընավայրը գտնվում է այժմյան Դիարբեկի միլիտարի էրզանի (Արզանա) քաղաքից 7 կմ դեպի հարավ-արևմուտք Հիլար (Սևովերեն-փինար) գյուղի հյուսիսային եզրին, Բողազայ Վեղկատի ափին: Չայոնու Քեփեսի կառուցապատ տարածքը շուրջ 3 հեկտար էր: Այստեղ ներկայացված է բնակեցման երեք ժամանակաշրջան, որոնք իրարից անջատվել են ամայության երկպարտև ժամանակահատվածներով: Հիմնական հետաքրքրությունը ներկայացնում է մշակութային ստորին շերտը, որն արտացոլում է նայոնույան հնագիտական մշակույթը: Այդ շերտի բնակավայրը վերաբերում է նախակերամիկական նեոլիթին և ուղիորածխածնային անսլիզի

ավյանների համաձայն, գոյատևել է շուրջ կես հազարամյակ՝ մ.թ.ա. VIII հազարամյակի ընթացքում: Ստորին շերտը կամ շայոնուի փուլը պեղողները ստորաբաժանել են ժամանակագրական մի քանի ենթափուլերի: Պեղումների միջոցով հայտնաբերված ճարտարապետությանը վերաբերող նախնական հաղորդումներից՝ կարելի է եզրակացնել, որ շայոնուի փուլի բոլոր ենթափուլերին բնորոշ էր բնակավայրի ազդմեբատիվ կառուցապատումը՝ առանձնացված դիրքով կանգնեցված կառույցներով: Չայոնուի ճարտարապետական զարգացման համեմատաբար բարձր մակարդակը շեշտվում է ստանդարտ ձևերի կառույցների առկայությամբ: Այստեղ բացահայտվել են շինությունների մի քանի տիպեր, որոնք առանձնանում են մեկը մյուսից ինչպես հատակագծային լուծումներով, այնպես էլ կիրառված շինարարական տեխնիկայով: Պեղողները առանձնացրել են կառույցների 4 տիպ:

Ամենավաղ ենթափուլում կառուցվել են «վանդակաձև» հատակագծի հիմքեր ունեցող կառույցներ: Բացվել են այս տիպին պատկանող միատևակ ամբողջական 7 շինություններ: Արտաքին էրոզից դրանք ուղղանկյուն են (5×7 մ չափի): Ներսից բաժանված են նեղ կողմին զուգահեռ՝ մի երկայնական պատից դեպի մյուսը ուղղաձիգ ձգվող միջանկյալ պատերով, որոնց միջև մնում էր նեղ (մի քանի տասնյակ սանտիմետր լայնությամբ) ու երկարով մի տարածություն (միջանկյալ այդ պատերի քանակը հասնում է 7-ի): Պատերը շարվել են մանր ու միջին մեծության անմշակ բարերի կավահողե շագախով ամրացված

շարվածքով, ենթադրում է, որ այդ «վանդակաձև» հիմքերի վրա դրվել է շինություն փայտե հատակը: Առաջավոր և Միջին Ասիայի ավելի ուշ ժամանակաշրջանի վաղերկրագործական մշակույթների բնակավայրերում հայտնի են իրար զուգահեռ կողք-կողքի դրված կարճ պատերի խմբեր, որպիսիք մեկնարանվում են իբրև ցորենի պահեստների հիմքեր: Այդ հուշարձաններում դրանք հանդես են գալիս բնակելի բնույթի այլ կառույցների հետ մեկտեղ: Զբացառելով Չայնուի «վանդակաձև» հիմքերի նման մեկնարանման նարավորությունը, նշենք, որ այս հուշարձանում դրանք գտնվել են այլ տիպերի կառույցներից մի փոքր ավելի խորը, այսինքն չի հաստատվել դրանց գոյակցությունը շինությունների մյուս տիպերի հետ:

Կառույցների երկրորդ տիպը, որ թերևս հանդես է եկել «վանդակաձև» հատակագծի շինություններից մի փոքր ավելի ուշ, պեղողների կարծիքով, բնօրոշվում է երկու հատկանիշով: Դրանց մեջ հատակի հարթեցումը կատարվել է մանրակրիտ և, իբրև շինարարական տեխնիկայի նորույթ, օգտագործվել են ուղղահայաց կանգնեցված կրաքարի սալեր: Այս տիպի կառույցները նույնպես ուղղանկյուն հատակաձևի են և հասնում են խոշոր շափերի: Դրանցից մեկը  $9,5 \times 7,5$  մ մակերես է ունեցել: Այդ շինությունների հատակները սալապատվել են խոշոր, բարակ սալերով կամ կառուցվել են «տեռացցո» տեխնիկայով: Այս տիպը առանձնանում է ևս մեկ կարևոր հատկանիշով՝ ներսում շինությունների պատերը օժտված են քարաշար որմնահեղերով, որոնք թերևս կրել են տանիքի կառուցվածքը: Այս տիպը պեղողները անվանում են «լայնարձակ սալահատակված հատակագիծ» (broad pavement plan):

Երրորդ տիպը, որը «բջիջաձև» հատակագիծ անվանումն է ստացել, ներկայացված է ուղղանկյունաձև շինություններով: Սրանք ունեցել են քարաշեն ավելի բարձր զետեխարսիս, որի վրա դրված էր հում աղուսից շարված պատեր: Ներսից նույնատիպ շարվածքի միջնորմներով շինությունները բաժանվել են ուղղանկյունաձև, մոտավորապես հավասարաչափ բջիջների, որոնց թիվը 6 և ավելի է: Այս տիպը տարբերվում է «վանդակաձև» հատակագծի կառույցներից երկայնական միջնորմների առկայությամբ, բջիջների այլ համաչափություններով և պատերի աղ-

յուն շարվածքով: Կարելի է ենթադրել, որ «բջիջաձև հատակագիծ» շինությունները պահեստային նշանակություն են ունեցել:

Վերջապես կառույցների ևս մեկ տիպ հանդես է եկել շայնույան մշակույթի վերջին, վերին ենթափուլում: Սրանք նույնպես ուղղանկյունաձև հատակագծի քարաշեն պատերով խոշոր կառույցներ են (մեկի շափը շուրջ  $5,10 \times 9$  մ է), առանց ներքին բաժանման հետքի:

«Բջիջաձև» հատակագծի կառույցներից մեկում հայտնաբերվել են Չայնուի տների կավե երկու մոդելներ: Դրանք ներկայացնում են հարթ տանիքով ծածկված շինություններ: Մոդելների վերին եզրի տակ գտնվում են տանիքը պահող գերանների նշաններ:

Չայնուի մշակույթը ոչ միայն ճարտարապետական նորույթներով է հարուստ: Այստեղ հայտնաբերվել են բնակտոր պղնձից պատրաստված մետաղե առարկաներ, որոնք հնագույնն են մեր մոլորակում:

Ճարտարապետության պատմության տեսանկյունից Չայնուի փուլը և կարևոր երևույթ է: Ինչպես էլ մեկնաբանելու լինեց կառույցների տիպերի հաջորդականությունը, շատ հավանական է, որ այդ բնակավայրում միաժամանակ գոյություն են ունեցել մեկ տիպից ավելի շինություններ: Այս կոհանմանը հետևում է ճարտարապետության ֆունկցիոնալ ճյուղավորման հնարավորությունը, այսինքն, կիրառական տարբեր նշանակության կառույցներ հանդես են եկել ճարտարապետական յուրովի լուծումներով, որպիսիք և պահանջվել են շինության առավելապես նպատակահարմար, մասնագիտացված օգտագործումը:

Չայնու Քեփեսին միակ հուշարձանը չէ, որ բացահայտում է ճարտարապետության ֆունկցիոնալ ճյուղավորման սկզբնավորումը Առաջավոր Ասիայում մ.թ.ա. VIII հազարամյակում: Այս տեսանկյունից նշանակալից են բիրլիական Յեբիթովի (Քելլ-էս-Սուլթան հնավայրը Պաղեստինում) նախակերամիկական նեոլիթի առաջին փուլի շերտերի պեղումների արդյունքները: Յեբիթովի նախակերամիկական նեոլիթի այդ փուլի բնակավայրը շուրջ 3—4 հա մակերեսով ընդարձակ տարածք էր զբաղեցնում: Այն ամփոփված էր կավաշաղախով շարված քարաշեն պարսպով: Պեղումների ամենանշարձակ տեղամասում այդ պարսպը ունեցել է 3 մ հաստություն և պահ-

պանվել է 3,9 մ բարձրությամբ: Նրան հպված է 8,5 մ բարձրությամբ պահպանված կլոր հատակազածով աշտարակը, որի հիմքի տրամագիծը 10 մ է: Աշտարակի ներքին սնամեջ տարածությունն կարելի էր մտնել 1,7 մ բարձրությամբ դռնով: Աշտարակի ստորին մասում մեծ հաստություն ունեցող պատը վեր բարձրանալով՝ հետըզհետե նեղանում է, ներսից կազմելով համակնետրոն 22 աստիճան, որոնց միջոցով կարելի էր բարձրանալ աշտարակի գագաթը<sup>2</sup>: Հետազոտողները իրավամբ նշում են, որ Յերիքոյի պարիսպը կոլեկտիվ աշխատանքների կազմակերպման արդյունք է: Այսպիսով, մ.թ.ա. VIII հազարամյակում նկատվում է ոչ միայն կենցաղային-բնակելի ճարտարապետության յուրահատուկ կիրառման համար նախատեսված ճարտարապետական ձևերի մշակում, այլև վերաշինության ձևավորում, որը վկայում է վաղերկրագործական առավել զարգացած համայնքների հասարակական կյանքում տեղի ունեցած էական փոփոխությունները:

Մ.թ.ա. VII հազարամյակի ճարտարապետության զարգացման ընթացքում Առաջավոր Ասիայում ձևավորվում են կառուցողական յուրահատուկ ավանդույթների տարածման շրջանները: Այդ ավանդույթները հաճախակի համընկնել են հնագիտական առանձին մշակույթների հետ: Հարավային Փոքր Ասիայի այդ ժամանակաշրջանի ճարտարապետական ավանդույթը ներկայանում է Կոնիայի դաշտավայրում գտնվող Չաթալ-Հույուքի արևելյան բլրի պեղումների նյութերով, որտեղ առաջին անգամ, այսօրվա սովորներով, բուցահայտվում է ճարտարապետության և կերպարվեստի կալուն միացության հնագույն եղանակը:

Արևելյան Չաթալ-Հույուքը նեոլիթյան բազմաշերտ բլուր-բնակավայր է, որը զբաղեցնում է շուրջ 13 հա տարածություն: Նրա նեոլիթյան 19 մ հաստությամբ մշակութային նստվածքները ավելի հզոր են, քան առաջավորսիական մյուս բնակավայրերի նեոլիթյան շերտերը (Յերիքոյ՝ 13,7 մ, Մերսին՝ 9 մ, Թելլի Մագալիտա՝ 8 մ, Թեփե Գուրան՝ 7 մ): Չաթալ-Հույուքում շուրջ 4000 քառ. մ մակերեսով պեղվել են իրար հաջորդող շինարարական 12 հորիզոն<sup>3</sup>, որոնցից յուրաքանչյուրն առանձին բնակավայր է ներկայացնում: Դրանք ամբողջությամբ, թերևս, գոյատևել են 7—9 դար և ռազիոածխածնային մեթո-

դով թվագրվում են մ.թ.ա. VII հազարամյակով: Բնակավայրերի կառուցապատումը հոծ էր, հատակազածային որոշ կանոնավորության պահպանմամբ: Տները բաղկացած էին ուղղանկյուն հատակազածով 1—3 սենյակներից: Հիմնական սենյակը, որի մակերեսը սովորաբար 25—27 քառ. մ է, ծառայել է իբրև բնակարան և խոհանոց, իսկ ավելի փոքր, օժանդակ սենյակները՝ պահեստներ: Պատերն ունեցել են քառանկյուն կտրվածքի գերաններից կազմված հիմնակմախք, որի միջանկյալ տարածությունները շարվել են հում աղյուսներով: Տան մուտքը տանիքի կողմից էր, որտեղից իջնում էին փայտե աստիճաններով: Պատերի վերին մասում կային նաև լուսավորության համար թողնված լուսամուտներ: Բակերը սակավաթիվ էին: Այսպիսով, շարժումը բնակավայրի տարածքում կատարվել է հիմնականում տանիքների վրայով:

Չաթալ-Հույուքում պեղվել է մոտ 40 սրբարան, որոնք բնակելի սենյակներից տարբերվում են միայն ներքին ձևավորմամբ: Սրբարաններում պահպանվել են աստվածահիների և հովազների պատկերներով կավե գունավորված բարձրաքանդակներ, ցուլերի կավե զլուխներ, վայրի ցուլերի եղջյուրներով պարզարված կոտրեր, որմնանկարներ: Որմնանկարներից առավելապես աչքի են ընկնում եղջերուների և ցուլերի որսի տեսարաններ, մարդկանց դիակների վրա հարձակվող ուրուրներ, ձեռքերի պատկերներ, գորգանախշ հորինվածքներ: Հայտնաբերվել է հրաբխի ժայթքման պատկերով բնակարար: Սրբարաններից մեկում բացվել է հատկապես թաղման արարողությունների համար կառուցված շենքի պատկերով որմնանկարը: Դա ճարտարապետական կառույցի գեղանկարչական հնագույն պատկերն է, որը վկայում է բնակավայրից դուրս գտնվող պաշտամունքային հատուկ շինությունների գոյությունը և ճարտարապետության ֆունկցիոնալ ճյուղավորման բավականաչափ զարգացած աստիճան է ներկայացնում: Չաթալ-Հույուքի կառույցների ուսումնասիրությունը բացահայտում է ճարտարապետության և կերպարվեստի միավորման առաջին փորձերից մեկը: Սրբարաններից շատերում գտնված որմնանկարներն ու ծավալային անշարժ պատկերները օրգանապես չեն կապվում պաշտամունքային սենյակի ներքին ծավալի ճարտարապետական ձևի հետ: Նրանց տեղարարչությունը սենյակի առանցքների նկատ-


մամբ հաճախ պատահական է և չի համ-  
րեկնում նրա համաշխարհայիններին: Այս  
դեպքում կարելի է խոսել ճարտարապետա-  
կան ձևի և կերպարվեստի գործի մեխանի-  
կական միավորման մասին: Մակասյն սրբա-  
րանների մյուս մասը ներկայացնում է կանխա-  
մտածված լուծումների այնպիսի փորձեր, որ-  
պիսիք հուշում են օրգանական համադրման  
սկզբնավորումը: Առաջին հերթին պետք է նշել  
տների հիմնականագի փայտե շորտունների օգտա-  
գործումը սենյակների գեղագիտական ձևավոր-  
ման համար: Ուղղահայաց այդ շորտունները որմ-  
նահեցերի նման դուրս գալով պատի մակերե-  
սից նրա նարթուքումը բաժանել են շրջանակա-  
վորված հատվածների: Չորտունները հաճախակի  
գունավորվել են, իսկ շրջանակավորված մա-  
կերեսները օգտագործվել են որմնանկարների  
համար այնպես, որպեսզի շրջանակը որմնա-  
նկարչական ամբողջական հորինվածք ամփոփեր:  
Իսկ 7-րդ և 6-րդ հորիզոնների սրբարաններում  
շրջանակավորված մակերեսները զուգաշափորեն  
զբաղեցնում են ծավալային պատկերներ, որոնց  
տեղաբաշխումը կազմակերպում է ճարտարապե-  
տական ծավալը: Չաթալ-Շուլուքում ճարտարա-  
պետության և կերպարվեստի միավորումը դրսե-  
վորվել է միայն ներքին ծավալներում՝ սրբա-  
րանների ինտերյերներում:

Նեոլիթյան հնավայրեր, որպիսիք որոշակիորեն  
կարող են վերագրվել մ.թ.ա. VII հազարամյա-  
կին, Հայկական լեռնաշխարհի տարածքում առ-  
այժմ հայտնի չեն: Պարզ չէ, թե ի՞նչ է հաջորդել  
Չալոնու Թևփեհի ճարտարապետական ավան-  
դույթին: Մ.թ.ա. VI հազարամյակում Հայկական  
լեռնաշխարհի հարավարևելյան ծայրամասում  
տարածված էր Հաջի Ֆիրուզի հնագիտական մշա-  
կույթը, որի անվանումը ծագում է Ուրմիա լճի  
հարավային ափին, Սոլդուզի հովտում գտնվող  
համանուն բլուր-բնակավայրից: Այստեղ բազա-  
հայտվել է շինարարական 6 շերտ: Հաջի Ֆիրուզի  
բնակավայրերի կառուցապատումը խիստ կնք:  
Տր-  
ներն իրարից անջատվել են բակերի և նեղ ան-  
ցուների միջոցով: 6,5×4 մ միջին չափի ուղ-  
ղանկյունաձև հատակագծով տները կառուցված են  
մեկ սենյակից, որի ներսում, սակայն, որոշակիու-  
րեն առանձնացվել են բնակելի, խոհանոցային և  
պահեստային տարածությունները (գծագր. աղ-  
3ա): Մուտքերը սկսվել են հրթիթ, պետնի մակե-  
րեսից, որի մակարդակի տարբերությունը տան

հատակից մեկ աստիճանից չի անցել: Որոշ տնե-  
րի հատակները ներկվել են կարմիր օխրայով:  
Օջախները գտնվել են պատերի տակ, հարթակի  
վրա բարձրացված: Միջնորմի միջոցով դրանք  
հաճախակի անջատվել են պահեստային տարա-  
ծություններից: Բացվել են տանիքի ծանրությու-  
նը կրող հում աղյուսից շարված որմնահեցերի և  
փայտե սյուների հետքեր: Պեղողները ենթադրու-  
թյամբ, վերնաշարի լիտ հեկված, ճյուղերից և  
եղեգներից կառուցված ու կալով սվաղված տանիքը  
ջրամեկուսացման նպատակով կարող էր ձիթված  
լինել: Եթե հիմնական տների պատերը կառուց-  
վել են կավաշաղպախով շարված կանոնավոր հում  
աղյուսներով, ապա բակերի կողմից նրանց կցը-  
ված օժանդակ կառույցների պատերը շինվել են  
պեղացված կավացեխով: Հաջի Ֆիրուզի հնա-  
գիտական մշակույթը որոշ աղբյուրներ ունի Հյու-  
սիսային Միջագետքում տարածված հատուկ  
մշակույթի վաղ փուլի հուշարձանների հետ:

Հաջի Ֆիրուզի մշակույթը հիշեցնող ևս մեկ  
հուշարձան պեղվել է Ուրմիա լճից արևելք, Թավ-  
րիդից հարավ-արևմուտք: Այդտեղ գտնվող Յանիք-  
թեփե երկու արհեստական բլուր-բնակավայրերից  
փոքրը (արևելյան) բլուրը պեղողի կողմից պահու-  
ցրվել է ուշ նեոլիթի ժամանակաշրջանին: Ռադիո-  
ածխածնային անալիզի տվյալներով, այն պետք է  
թվագրել մ.թ.ա. VI հազարամյակով: Ամենա-  
վաղ շերտերից այստեղ առկա են հում աղյուսից  
շարված դանգվածից պատերով ուղղանկյունաձև  
հատակագծով տներ: Յանիք-թեփեի փոքր բլուր  
ուշ նեոլիթյան ճարտարապետությունը խիստ հի-  
շեցնում է Հաջի Ֆիրուզի բնակարանները: Այս-  
տեղ նույնպես պատերն ու հատակները ներ-  
կելու համար օգտագործվել է կարմիր օխրան,  
իսկ հաստ ու կարծր հատակները շինվել են գիպ-  
սի շաղպաից:

Նեոլիթի վերջում Հայկական լեռնաշխարհի  
հյուսիսային և Հարավային Կովկասի կենտրո-  
նական մասերում տարածված է կղև շուրվերի-  
շումթեփյան մշակույթը, որի ճարտարապետա-  
կան ավանդույթը լիովին տարբերվում է Ուրմիա  
լճի ավազանի նշված հնավայրերի պեղումներով  
ընձևած տվյալներից: Այդ մշակույթի առաջուր  
հայտնի հիմնական հուշարձանները կենտրոնաց-  
ված են Կուրի միջին հոսանքի աջակողմյան  
վտակների (Խրամ, Դերեղ, Աղսու) հովիտ-  
ների ստորին մասում, սակայն հայտնի են առ-  
անձին փաստեր, որոնք հիմք են տալիս կրա-



Աղ. 1 ա) Իմրիս-գորա՝ բնականորի բնդանուր նառակազիծր, բ) Խրամիս Գիղի-գորա՝  
 բնդանուր նառակազիծր, գ) Կաղալար-թեփեխի՝ բնականորի պեղված նառվածի  
 բնդանուր նառակազիծր, զ) Շոմու-թեփե՝ բնականորի պեղված նառվածի բնդանուր  
 նառակազիծր:

հելու նրա տարածումը նաև Արարատյան դաշտում: Շուկավերի-շոմուֆեֆիան հնագիտական մշակույթը ժամանակակից է Հյուսիսային Միջագետքի հասունյան մշակույթի ուշ փուլին ու հայաֆյան մշակույթին և թվագրվում է մ.թ.ա. VI—V հազարամյակներով: Մի շարք բյուր-բնակավայրերի (Շուկավերիս-գորա, Իմիրիս-գորա, Արուխու 1-ին, Խրամյա Դրդի-գորա, Շոմու-թեֆե, Քոլրև-թեֆե, Գառգալար-թեֆեֆե) մեծածավալ պեղումները, որոնց միջոցով մի քանի հազար բառ. և մակերեսով և մինչև 9 շինարարական հորիզոնների խորությամբ բացվել են ճարտարապետական բազմաթիվ մնացորդներ, հնարավորություն են ընձևում վերակազմելու և մանրամասն ուսումնասիրելու շուկավերի-շոմուֆեֆիան մշակույթի կառուցողական ավանդույթը (գծագր. աղ. 1 կ—Գ): Այդ ավանդույթը բնորոշվում է հետևյալ երևույթների միասնականությամբ. ա) բնակավայրերի մնացորդները բազմաշերտ են և, որպես կանոն, արհեստական բյուր-բնակավայր են կազմում, բ) բնակելի համալիրները խմբավորվել են բնակավայրի կենտրոնական հրապարակի շուրջ (Իմիրիս-գորայի հրապարակի տրամագիծը մոտ 12 մ էր), գ) կառուցապատումը հոծ էր, բնակատեղիի ամբողջ տարածքի նվազագույն մասն անգամ ազատ չէր կառուցապատվից, դ) կառուցապատումը կազմված էր բնակելի կառույցներից, պահեստային շինություններից և ցանկապատված բակերից. ե) բակի շուրջը միավորված շինությունները կազմել են առանձին համալիրներ. զ) բոլոր տները, առանձին կառուցված պահեստային հորերը և բակերի ցանկապատների մեծ մասը ունեցել են կլոր կամ ձվաձև հստակագիծ (կառույցների տրամագիծը ստանդարտ է 0,5-ից մինչև 5 մ), է) շինությունների ճնշող մեծամասնությունը «մեղվանոցաձև» էր, այսինքն, հում աղյուսից կառուցված կեղծ թաղը սկսվել է զետեի մակերեսից, շարվածքի ամենաստորին շարից, իսկ հաջորդ շարերը 2—3 սմ-ի շեղվածքով տեղադրվել են զետեի կառույցի ներս: Գլանաձև ստորին մաս ունեցող մի խումբ կառույցներ նույնպես պսակվել են աղյուսաշեն կեղծ դմբեթներով. բ) բոլոր տները վերգետնյա էին, աննշան չափով զետեի մակերեսի մեջ խորացված: Շարվածքի ստորին շարերն ամբացվել են կառույցը արտաքին կողմից օղակող զետեի վրա դրված կավե բարձի

միջոցով. թ) պատերի հաստությունը պայմանավորված էր աղյուսի լայնքով ու այն ծածկող կավի սվաղի շերտի հաստությամբ և կազմում էր 20—35 սմ. ժ) օգտագործված գրեթե միակ շինանյութը հարթաուռուցիկ (պլանոկոնվեքս) ձևի հում աղյուսն էր, որը շարվել է կավաշագախով: Իրոք շինանյութ չի օգտագործվել բարբ, որը լայնորեն կիրառվել է վաղերկրագործական տարբեր մշակույթներում, հատկապես աղյուսաշեն պատերի գետնախարխսիների համար: Կավածեփ տեխնիկայի կիրառման մասին տեղեկություն գրեթե չունենք: Վերջապես, այժմ հայտնի հարյուրավոր շինությունների ճնշող մեծամասնության կառուցման ընթացքում բացարձակապես չի օգտագործվել փայտը: Փայտաշեն կառուցվածքի օգտագործման մի դեպք հայտնի է Իմիրիս-գորայից, որտեղ թեթև սյան վրա հենվել է ձողակապ հարթ տանիքը: Փայտե սյան և, հետևաբար, նրա վրա հենված տանիքի հետքեր բացվել են Շոմու-թեֆեի կառույցներից մեկում: Խրամյա Դրդի-գորայի բակերից մեկի պեղումների ընթացքում գտնվել են բարակ սյուների շարքի հետքեր, ուստի ենթադրվում է, որ բակի այդ մասը ծածկված էր փայտաշեն թեթև կառուցվածքով: Սակավածքի վրա փաստերը միայն շեշտում են շուկավերի-շոմուֆեֆիան մշակույթի շինարարական ավանդույթին փայտի օգտագործման խորթ լինելը: Ոչ պակաս ուշագրավ է Շուկավերիս-գորայի, Իմիրիս-գորայի և Շոմու-թեֆեի բազմաթիվ շինությունների հատակագծերում ուղիղ դեբրի լիակատար բացակայությունը:

Այսպիսով, բարի և փայտի օգտագործման բացակայությունը շուկավերի-շոմուֆեֆիան մշակույթի շինարարական տեխնիկայում հուշում է ճարտարապետական այդ ավանդույթի ձևավորման ընթացքը բնական այնպիսի միջավայրում, որտեղ չեն եղել այդ երկու կարևորագույն շինանյութերը: Միաժամանակ պետք է նշել, որ կլոր հստակաձևեր և կառույցների «մեղվանոցաձև» ծավալներն առավելագույն չափով նպատակադրամար էին աղյուսակավային ճարտարապետության դարգացման համար: Շինարարական բարբ, խճից ու զլաքարից սկսած և ժայռակտորներով վերջացրած, առատ էր Փոքր Կովկասի լեռների տարածքում: Այդ ժամանակաշրջանում թեև անմատչելի չէր նաև փայտը: Այսպիսով պետք է կիրակացնել, որ շուկավերի-շոմուֆեֆիան ճար-

տարապետական ավանդույթը չի ձևավորվել այն տարածքում, որտեղից հայտնի են այժմ նրան ներկայացնող հուշարձանները:

Պետք է ենթադրել, որ նեոլիթյան ճեղափոխության ժամանակաշրջանից սկսած, Հայկական լեռնաշխարհի տարբեր հատվածներում ապրող հասարակությունները անհամաչափ են զարգացել: Արագընթաց զարգացում են ապրել հովիտներում կենտրոնացված վաղ երկրագործական մշակույթները, որոնք շրջապատված են եղել լեռներում և անտառներում բնակվող որսորդական-հավաքչական տնտեսություն վարող խմբերով: Փաստական տվյալներով այդ անհամաչափությունը բացահայտվում է ավելի ուշ դարաշրջանում: Այն ժամանակ, երբ լեռնաշխարհի հարավային և կենտրոնական հովիտներում սկսվել է խալկոլիթյան (կամ, այլ տերմինաբանությամբ, նեոլիթյան՝ պղնձեքարեդարյան) մշակույթների զարգացումը, հյուսիսային մասի հովիտներում թերևս հարատևել են նեոլիթյան մշակույթները:

Մ.թ.ա. VI հազարամյակի երկրորդ և V հազարամյակի առաջին կեսում Հայկական լեռնաշխարհի զգալի հատվածները (մասնավորապես՝ հարավ-արևմուտքը) ընդգրկվում են հյուսիս-միջագետքյան հյալաֆյան Նեագիտական մշակույթի տարածման ոլորտում, իսկ ավելի ուշ՝ մ.թ.ա. V հազարամյակի երկրորդ կեսին Հայաստանում տարածվում է հյալաֆյան և հյուսիսուբյեյդյան գունազարդ խեցեղենի խառնածին համալիրը: Հյալաֆյան, հյալաֆուրեյդյան կամ նրանց հետ առնչվող նեագիտական համալիրներ ներկայացված են Վանա լճի պազանում (Շամիրամալթի), Գիարբեթրի դաշտում (Գիրիթի-հաջրյան), Խարբեղի դաշտում (Տյուլին-թեփե), Արաքսի միջին հոսանքում (Առաջին Քյուլ-թեփեի առաջին շերտը, Թևղուտ):

Հյալաֆյան դասական մշակույթի բնակավայր է Գիրիթի-հաջրյանը, որը գտնվում է էթնոլիար գյուղի մոտ, էրգախայից շուրջ 20 կմ դեպի հարավ-արևելք և թվագրվում է մ.թ.ա. VI հազարամյակի երկրորդ կեսով: Հյալաֆյան խեցեղենի հետ մեկտեղ, բնակատեղիի ստորին շերտում բացվել է տուրսի (կլոր հատակաձևով կառույց, որին կցված է ուղղանկյունաձև երկարով մի սենյակ) քարաշեն գետնախարհիսր: Դրա կողքին պեղվել են կլոր հատակագծով ևս վեց կառույցների պահպանված առանձին հատվածներ, առանց ուղղանկյունաձև կցակառույցների հետ-

քրիի նույն շերտերում բացվել են ուղղանկյուն տների մնացորդներ, որպիսիք վկայում են կլոր և ուղղանկյունաձև հատակագծով շինությունների համատեղ գոյությունը: Պատերը կավակերտ էին, սակայն ճշտված չէ՝ արդյոք կառույցի՞ն են դրանք հում ալյուսից, թե՞ կավածեփի շերտերով:

Հայկական լեռնաշխարհի էնեոլիթի ժամանակաշրջանի մշակույթների ճարտարապետության ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն նախիջևանի մոտ պեղված Առաջին Քյուլ-թեփե բլուր-բնակավայրի նյութերը: Նրա հսկայական հողորոթյան (22 մ-ից ավելի) մշակույթային շերտերում պահպանվել են ճարտարապետական բազմաթիվ մնացորդներ, որոնք, ցավոք, բացահայտվել էին պեղավայրի խիստ սահմանափակ տարածքում: Առաջին Քյուլ-թեփեի շերտը 9 մ հաստությամբ ստորին (առաջին) շերտի շինարարական բազմաթիվ հորիզոնները վերաբերում են էնեոլիթի ժամանակաշրջանին: Ժամանակագրական արդի տվյալներով այդ շերտը ընդգրկում է մ.թ.ա. V հազարամյակի առաջին կեսը: Այնուհետև բլուր-բնակավայրի տարածքում կյանքը դադարել է և վերսկսվել է վաղ բրոնզեդարյան շենգավիթյան հնագիտական մշակույթի ժամանակաշրջանում: Այդ մշակույթի մնացորդները կազմել են Առաջին Քյուլ-թեփեի երկրորդ՝ 8,5—9,5 մ հաստությամբ մշակույթային շերտը, որի ճարտարապետությանը կանդրադատանք հաջորդ պլանում:

Այս հնավայրի պեղումների սահմանափակ տվյալների հիման վրա բացահայտվում է էնեոլիթյան ճարտարապետության անպիսի մի ավանդույթ, որը երկուս տարբերվում է շուրվերի-շումթեփեյան մշակույթի շինարարական ավանդույթից: Առաջին Քյուլ-թեփեի ստորին շերտին համանման հուշարձանների հետագա պեղումները անկասկած լրացնելու են վերակազմված ավանդույթի պատկերը, որն առայժմ ներկայանում է նետեյալ տարբերով. ա) բնակավայրի մնացորդները արևստական բլուր-բնակավայր են կազմում, բ) շինարարական ամենաստորին հորիզոններից սկսած (Յ-րդ շրջան, 21,4 մ խորության բլրի գագաթից), առաջին շերտի գոյություն բոլոր շրջաններին բնորոշ է քառանկյուն և կլոր հատակագծի կառույցների կայուն համադրությունը, գ) կառույցների մի մասը բաժանվել է քառանկյունի հատակաձևով մի քանի սենյակների (շինություն №14), որոնցից մեկի երկարու-


Քյունը 4, իսկ լայնությունը՝ 3,3 մ էր. դ) կլոր հասակաձևով կառույցները՝ հիմնականում մեծ տրամագծով են ունեցել (6—8,5 մ), միայն № 10 շինությունը ներքին տրամագիծը 1,5 մ էր. ե) բացակայում է Նում աշխարհի՝ Դրոս փոքրարևի պատերը կազմակերպող եղանակով են բարձրացվել: Հայնոքեն կիրառվել է (առնվազին գիտնախարհիսենների կառուցման համար) միջին չափի ճարքաբարերից և զլաքաբարերից կազմաշաղխով ամրացված շարվածքը. գ) փայտե կառուցվածքների կիրառումը հաճախորդ էր. Փայտը օգտագործվել է ծածկերի համար, որոնք հենվել են փոսերի մեջ ամրացված աղասու կանգնած կրող սյուների վրա. զ) ուղղագծի պատերից մեկի հատումը մտու 1 մ է, ուստի կարելի է ենթադրել, որ այն պատկանել է զանգվածոց մի շինության, որը կարող էր հասարակական նշանակություն ունենալ:

Այսպիսով, ակնհայտ է դառնում շուրջվերջումությունների և բյուզնդական կենտրոնի մշակույթների շինարարական ավանդույթների տարբերությունը: Ճարտարապետական այդ համալիրների ընդհանրությունը սահմանափակվում է երկու երևույթներով՝ դրանք հանդես են եկել արհեստական բլուր-բնակավայրերում և երկուսն էլ ներկայացնում են կլոր հատակագծի իրականացման փաստերը: Այդ բնդահանրությունները կարելի է դիտել Հարափայլին Քուրբանիսից (Անաս) մինչև Բաղկանյան թևերակցին տարածված վաղ երկրորդ ասիական ամենատարբեր մշակույթներում: Էսպես տարբեր են շուրջվերջումություն մշակույթի և Առաջին Քյուլ-թեփի առաջին շերտի շինություններում օգտագործված շինանյութերի ու շինարարական տեխնիկան: Հարթաուսուցիկ (պլանական) սյուները շուրջվերջումություն մշակույթի գրեթե միակ շինանյութն էր, մինչդեռ Քյուլ-թեփում այն ներկայացված չէ և փոխարեն օգտագործվել են կազմակերպող տեխնիկան, փայտը և քարը: Առաջին Քյուլ-թեփի ստաջին շերտի կլոր հատակաձևով կառույցները հարթ կամ կոնածև տանիք են ունեցել (առայտմ ավելի ստույգ որոշել հնարավոր չէ): Հետագայ, այդ տանիքը պետք է հենվել զանազան ծավալի վրա, որը կարող էր կազմվել ուղղահայաց պատերի միջոցով: Տարբերվում են բնակելի համալիրների հատակագծային և դրան համապատասխան՝ ծավալային հորինվածքները: Եթե շուրջվերջումություն մշակույթում այդ հորինվածքները

կազմվել են մեղվանոցաձև շինությունների խմբերով, սպաս Քյուլ-թեփում ձևավորվել են ուղղանկյուն և կլոր հատակագծի կառույցների բառանխտ և զլանաձև ծավալների համադրություններով: Ոչ պակաս նշանակություն ունի շուրջվերջումությունների և բյուզնդական կլոր հատակագծով կառույցների մակերևույթի ցայտուն տարբերությունը: Վերջին կարող է հուշել նրանց գործառական տարբերության հնարավորությունը: Քյուլ-թեփի կլոր հատակագծով կառույցն իր մեջ կարող էր միավորել մի քանի ֆունկցիաներ, որպիսիք թերևս բաժանված էին շուրջվերջումությունների մեղվանոցաձև տարբեր շինությունների միջև: Այս հանգամանքը կարող է հուշել շուրջվերջումությունների բնակատեղիների և Առաջին Քյուլ-թեփի առաջին շերտի բնակավայրերի բնակչության ապրելակերպի միջև եղած տարբերությունները:

Վերածնունդ Առաջին Քյուլ-թեփի առաջին շերտի ճարտարապետական հուշարձանները, անհրաժեշտ է նշել նրանց աղբյուրները հալաֆյան հնագիտական մշակույթի շինարարական ավանդույթի հետ: Երկու մշակույթներին էլ բնորոշ է պատերի կառուցումը կազմակերպող շերտերից: Քյուլ-թեփի կլոր հատակագծով կառույցների տրամագիծը մոտ է հալաֆյան մշակույթի համանման խոշոր շինությունների տրամագծին: Օրինակ, Առաջին Քյուլ-թեփի ստորին շերտի տանիքի տրամագիծը զգալիորեն զերպանցում է Յարլիմ-թեփի 2-րդ բլուր-բնակավայրի շինարարական հնագույն (9-րդ) հորիզոնում բացված հալաֆյան բնակելի «տուրսներ» տրամագծին (3-ից մինչև 5,3 մ)<sup>10</sup> և նմանվում է Արփաշիցի խոշորագույն ստույների, որոնց արտաքին տրամագիծը 10 մ-ի է հասնում: Հալաֆյան «տուրսները» շարտերը հարթ կամ կոնածև տանիք են ունեցել (Յարլիմ-թեփի 2-րդ): Նման ծածկեր վերակազմվում են նաև Առաջին Քյուլ-թեփի ստորին շերտի կառույցների տվյալներով:

Կառույցների կլոր և ուղղանկյունաձև հատակագծերի համարությունը բացահայտվել է նաև Դաշտային Արտաբաղում գտնվող Իանլի-թեփի բլուր-բնակավայրի պեղումների ընթացքում: Այդ հուշարձանը թերևս մի փոքր ուշ է Առաջին Քյուլ-թեփի ստորին շերտից և կարող է վերագրվել մ.թ.ա. V հազարամյակի երկրորդ կեսին: Իանլի-թեփում զերակաշտող են կլոր հատակագծով շինություններ, սակայն նրանց առաջվել են



Աղ. 2 ա) Քեղտուի բնականոցի կացարանի կորվածքը, բ) Քեղտուի բնականոցի ընդհանուր հատակագիծը, գ) Քեղտուի բնականոցի կացարանների ընդհանուր հատակագիծը:

նակ ուղղանկյուն, սուր, բութ և կլորացված անկյուններով նստակաձևների (գծագր. աղ. 3 Բ) կուռույցները<sup>11</sup>: Այս նախնական անկյունավոր հասակագծով կառույցները օժանդակ նշանակություն են ունեցել:

Հալվական լեռնաշխարհի էներգիայան մշակութայինը բնութագրող ճարտարապետական մեկ ուրիշ ավանդույթ բացահայտվում է Արարատյան դաշտում՝ էքսիթանից հարավ պեղված Քեղուտի բնակատեղիի նյութերով<sup>12</sup>: Այս բնակավայրը գոյատևել է մի քանի տասնամյակների ընթացքում, նավանաբար մ.թ.ա. V հազարամյակի երկրորդ կեսին կամ IV հազարամյակի սկզբին: Կառուցապատման յուրահատկությունն հետևանքով բնակատեղի ամբողջ տարածքով մեկ մշակութային շերտ չի գոյացել: Այսպիսով, ի տարբերություն վերոհիշյալ հուշարձանների, Քեղուտը արհեստական բլուր-բնակավայր չէր:



Քեղուտի կառուցապատման սկզբունքը միանգամայն հակադիր է թվում շուրավերի-շոմուրի-թեփյան մշակույթի և Առաջին Քյուլ-թեփի ստորին շերտի ճարտարապետությանը: Առաջին հերթին, Քեղուտի կառուցապատման խտությունը նշված բնակավայրերից մի քանի անգամ նվազ է: Կառույցների միջև մնում էին ազատ, բնորոշակ տարածություններ: Եթե Իմպրիս-գորայում բնակավայրի դիտվող հատակագծի կենտրոնը զբաղեցրել են նրան շրջապատող կառույցները, ապա Քեղուտի բնակատեղիի ներառվող կենտրոնը կարելի է ներկայացնել համարել շինությունների խտացման և կուտակման վայրը (գծագր. աղ. 2 Բ): Քեղուտում չեն հայտնաբերվել ցանկապատված բակեր, Նտևաբար չեն բացահայտվում նաև նրանց միջոցով առանձնացված բնակիչի կառույցների համալիրները:

Քեղուտի ճարտարապետության յուրահատկությունները ի հայտ են գալիս նաև կացարանների ճարտարապետական-ծավալային կառուցվածքի և շինարարական տեխնիկայի բնութային միջոցով: Քեղուտի բլուր կացարանները, պահեստային շինությունները կիսապետափոր էին (գծագր. աղ. 2 Գ): Օրինակ, № 1 կացարանի հողի մեջ փորված մասի խորությունը 1,6 մ էր: Կառույցների հիմնական մասը հողի մեջ իջեցվել է շուրջ 1 մ խորությամբ: Քեղուտի կացարանները հաստատում են Հարավային Կովկասում և Հարավային լեռնաշխարհում էներգիայի ժամա-



նակաշրջանի կիսագետնափոր շինությունների գոյությունը, որը առաջին անգամ հայտնի է դարձել Ղազախի մոտ գտնվող Բաբա-գերմիշ բնակավայրի պեղումների միջոցով<sup>13</sup>: Քեղուտի կառույցների գետնափոր մասի պատերը շինվել են տարբեր եղանակներով: Այսպես, № 1 կացարանում այդ մասը կավածեփ էր, № 2, 12, 13 կացարաններում՝ շարված էր մեկ աղյուսի հաստությամբ ունեցող ուղղանկյունաձև հում աղյուսների շարվածքով (գծագր. աղ. 2 Ա), № 7 կացարանում՝ ուղղանկյունաձև հում աղյուսների և զլաքարերի խառը շարվածքով: Առանձին խումբ են կազմում № 3, 5, 8 կառույցները: Դրանց պատերի ստորգետնյա մասը կազմված էր կավային մայր հողի կտրվածքով, որը միայն սվաղվել է կավի շաղախով: Բուրբ կառույցները ունեցել են նաև պատերի վերգետնյա հատվածը, որի մասին վկայում են հասակները ծածկող կամ գետնափոր մասը լցնող հում աղյուսի կամ կավածեփի թափվածքները:

Քեղուտի կառույցները զբանաձև ծավալի էին: Դրա մասին են վկայում աղյուսե պատերի կանգուն մասերի ուղղահայաց կորուսյան բացակայությունը, ինչպես նաև ծածկի կավե սվաղի բեկորների վրա պահպանված բարակ մուղերի դաջվածքները: Այսպիսով, հաստատվում է փայտի կիրառումը Քեղուտի շինություններում և պարզվում, որ այս բնակավայրի կիսագետնափոր շինությունների տանիքն ու պատը կառուցվածքային առանձնացված տարրեր էին: Այստեղ դիտվում է Քեղուտի կացարանների և շուրավերի-շոմուրի-թեփյան մեղվանոցաձև շինությունների կառուցվածքային տարբերությունը: Եթե Քեղուտի կիսագետնափոր հյուղակները կողք և կլավող տարրերի միացությունից կազմված կառուցվածքներն էին, ապա շուրավերի-շոմուրի-թեփյան մեղվանոցաձև կառույցների կոնստրուկցիան «աշխատում էր» զանգի սկզբունքով:

Քեղուտի կացարաններում ծածկը կողք սյուներ չեն եղել: Կարելի է մտածել, որ փայտակերտ տանիքը հարթ էր ու հնարավորին շափ թեթև: Նրա մեջ պետք է տեղ գտներ լուսավոր-խային անցքը: Կիսագետնափոր հյուղակներից սրել է մեկում չեն պահպանվել մուտքի բացվածքի ներքին, ուստի պետք է ենթադրել, որ դրանք եղել են շինությունների վերգետնյա մասում: Թերևս կացարանի իջել են փայտե աստիճաններով: Այսպիսով, կառույցների պատերի վեր-



բ



Աղ. 3 ա) Հաջի Ֆիրուզ, բնակարանի նախապլան, բ) Իլսույի-Սևինե, պեղավայրի ընդհանուր նախապլան, գ) Տշույի-Սևինե, պեղավայրի ընդհանուր նախապլան:

գետնյա մասի բարձրությունը պետք է սուր-վազն հավասար լինի մուտքերի հնարավոր բարձրությանը: Արևմտյան Ասիայի վաղ երկ-րագործական մշակույթների ճարտարապետու-թյունից կատելով, կարելի է եզրակացնել, որ մուտքերի բարձրությունը 0,5—0,6 մ-ից պակաս չէր: Թեղուտի № 1 կայարանը խորացվել է հո-ղի մեջ 1,6 մ-ով: Հետևաբար այդ կացարանի պատի ընդհանուր բարձրությունը կարող էր լի-նել 2,2—2,5 մ, իսկ վերգետնյա մասի բարձրու-թյունը, որը կախված էր ստորգետնյա մասի խորացման աստիճանից՝ մասափորսպես 0,6—1,6 մ: Այսպիսով, այսօր այնտի հուշարձանների շարքում Թեղուտի ներկայացրած ճարտարապե-տական ավանդույթը ուրուցն է իր կառուցա-պատման սկզբունքներով, շինարարական ախի-նիկալով, կառուցյունների ծավալային կառուցված-րով, կիսազետնափոր ձևով, շինուձևայինների ա-ռանձին մասերի կոնստրուկտիվ փոխհարաբերու-թյամբ: Այդ ավանդույթի կարևոր առանձնա-հատկությունը շինության կյոը հատակագծի (ոյր հատակագծի միակ ձևն է) և տանիքի փայտային մասի համապարտությունն է: Այս երկու տարրերը ներկայացնում էին շինարարական տարրեր նա-րավորություններ: Կյոը հատակագիծն ավելի հարազատ էր կեղծ-թաղակապ մեկվանոցան հինություններին, միևյուր փայտի օպագործ-ծումը տանիքի հատար ենթադրում է շինության իրանի և ծածկի կառուցվածքային և ծավալային բաժանվածություն և կարող էր հանգեցնել ուղ-զանկյունանաև հատակագծի զարգացմանը:

Գիտելիքների արդի վիճակում նեոլիթի և նեո-լիթի ժամանակաշրջանի կառուցյունների կյոը հա-տակաձևման ավանդույթի կենտրոնը կարող է համարվել Կուրի միջին հոսանքի ասլիսյա մասը և Արարատյան դաշտը, որը երևան է դալիս պեղ-ված բնակավայրերում՝ այդ հատակագծի բա-ցարձակ գերակշռությամբ: Հայկական լեռնաշ-խարհի հարավ-արևելքի, հարավ-արևմուտքի և այդ մասերին հարող շրջանների բնակարանա-շինության մեջ կյոը հատակագիծը խաչաձևիվ է ուղղանկյուն հատակագծի ավանդույթի հետ կամ վերջինս գերիշխող է եղել:

Խաչաձևման լավագույն օրինակ է ներկայապ-նում հայաֆյան հնադիտական մշակույթը, որի տարածման հյուսիսային շրջանների մասին խոս-վել է նախորդ էջերում: Հայաֆ-ուրեյյան ա-վանդույթների տարածման ժամանակաշրջանում,

մ.թ.ա. V հազարամյակի երկրորդ կեսին, Հայ-կական լեռնաշխարհի տարբեր մասերի ճարտա-րապետական հուշարձանները հակադիր պատ-կերներ են ներկայացնում: Վերը նկարագրված Թեղուտի շինարարական ավանդույթին հակա-դրելի է հարբերդի դաշտում պեղված Տյուլին-թեփեի ճարտարապետությունը: Այդ երկու բնա-կավայրերը պատմամշակութային դարձանքանի մոտավորապես նույն դարաշրջանի հուշարձան-ներ են: Սակայն, եթև Թեղուտում հյուսիս-ուրեյյ-յան մշակույթի ազդեցությունը նկատվում է շի-մականում խեցեղենի վրա, ապա Տյուլին-թեփեն անսխալապես ընդգրկվել է հայաֆուրեյյան հնագիտական համալիրի տարածման ոլորտը:

Տյուլին-թեփեն էլլադիպի 21 կմ դեպի արևելք գտնվող խոշոր արհեստական բլուր-բնակավայր էր, որի վերին շերտերը երկաթգծի կառուցման աշխատանքների ընթացքում լիովին հանվել են՝ մինչև շրջապատող գետնի ժամանակակից մա-կարդակը: Նախկին բլրի կենտրոնական մասում երևան են եկել ուշ հայաֆյան և հայաֆ-ուրեյյան մշակութային շերտերը: Այդ ժամանակաշրջանի բնակավայրը ընդամենը 0,25 հա տարածք էր զբաղեցնում: Սեժ հետաքրքրություն է ներկա-յացնում նրա կառուցապատման ձևը: Բնակա-վայրի կենտրոնական մասում բնակելի համա-լիրները կանոնավորությամբ տեղադրված են ուղիղ անկյուն տակ հատվող շուրջ 2 մ լայնու-թյամբ փողոցների գծով: Բնակատեղիի եզրերին կառուցապատման կատարվել է խոտացող կու-տակման սկզբունքով: Այդ մասերում բնակելի համալիրների ազատ կանգնած ծավալները մեկը մյուսի նկատմամբ անկանոն են դասավորված: Կառուցյունների միջև մնում էին ազատ տարածու-թյուններ, բակեր (գծագր. ազտ. 3 Գ):

Յուրաքանչյուր բնակելի համալիրը բաղկա-ցած է երկու և ավելի սենյակներից: Արտաքին կողմից համալիրների ծավալը կոտրատվում է ուղիղ անկյուններով, որը սենյակների մեխանի-կական ավելյացման և համալիրի ընդարձակման հետևանք է: Տները կաղոված են մեկ-երկու ուղղանկյուն հատակագծով խոշոր, բավականին լայն սենյակներից, որոնք շրջապատված են նեղ և երկարուկ ուղղանկյունանաև փոքրիկ սեն-յակներով:

Կոր գծեր տների հատակագծերում շին արձա-նագրվել: Տների ներքին հորինվածքի անբաժա-նելի մասն էին կազմում օջախներն ու վառա-

բանները, որոնք գտնվել են մեծ քանակությամբ ինչպես սենյակներում, այնպես էլ բնակարաններից դուրս՝ բակերում: Հնարավոր վերակազմությանը տևերի հարթ տանիքը փայտահողային կառուցվածք է ունեցել: Բացված բոլոր բնակելի համալիրների պատերը կառուցվել են ուղղանկյունաձև հում աղյուսից, առանց կավածեփի սեխնիկայի և քարի օգտագործման: Քարը չի օգտագործվել նույնիսկ գետնախարսխների համար:

Բնակարանաշինություն ուղղանկյուն հասակաձևման ավանդույթը պարզացած և ուշ խալկոլիթի (էնեոլիթի) ժամանակաշրջանում արձանագրվում է նաև Ուրմիա լճի ավազանում գտնվող Յանիբ-Քեփեի մեծ բլրի և Գյոյ-Քեփեի հնավայրերում, որոնց համապատասխան շերտերում բացված ճարտարապետական մնացորդները կարող են թվագրվել մ.թ.ա. V հազարամյակի երկրորդ և IV հազարամյակի առաջին կեսով: Գյոյ-Քեփեում բացվել են քարաշեն գետնախարսխախվրա ուղղանկյունաձև հում աղյուսներից կառուցված քառանկյուն շատկազոմ սենյակներ<sup>15</sup>: Յանիբ-Քեփեի մեծ բլրի ուղ շենոլիթյան ժամանակաշրջանի շերտը բաղկացած էր առնրվազն շինարարական շուրս հորիզոններից: Այդ հորիզոններում բացված ճարտարապետական մնացորդներով ներկայանում են բակերի շուրջը խմբավորված հում աղյուսից կառուցված ուղղանկյունաձև շատկազոմ մի քանի սենյակներից կազմված բնակելի համալիրներ: Պեղվել են նաև օժանդակ նշանակության ուղղանկյունաձև փոքրիկ նեղ սենյակներ<sup>16</sup>:

Հայկական լեռնաշխարհի էնեոլիթի ժամանակաշրջանի ճարտարապետական ավանդույթների փոփոխությունը բացատրելու համար կարևոր նշանակություն ունեն նրա անմիջական հարևանությամբ գտնվող Այկեմեկ-Քեփեի բնակավայրի պեղումների արդյունքները<sup>17</sup>: Այս հուշարձանը գտնվում է Կուր գետից հարավ, Մուղանի տափաստանում, Աղբրեջանական ՍՍՀ Զալիարագի շրջանում: Այկեմեկ-Քեփեի սրահնատական բլուր-բնակավայր է, որի 4 մ հաստությամբ էնեոլիթյան շերտը բաժանում է շինարարական 6 հորիզոնների (Օ-ից 5՝ հաշված գագաթից դեպի հիմքը): էնեոլիթյան բնակատեղին ամբողջությամբ թվագրվում է մ.թ.ա. V հազարամյակի երկրորդ կեսով և, թերևս, IV հազարամյակի սկզբով: Բոլոր հորիզոններում տես-

րը շինվել են տարբեր չափերի ուղղանկյունաձև հում աղյուսներով: 5-րդ և 4-րդ հնագույն շինարարական հորիզոններում բացվել են կլոր հասակազոմով 3,5 մ միջին արամազոմով շինուխյուններ, որոնց կցված էին քառանկյունի սնտակական նշանակության փոքրիկ կառույցներ և բրուտագործական երկհարկանի վառարանների մնացորդներ: Շինարարական 3-րդ հորիզոնում պեղվել են վերգետնյա կլոր շատկազոմ մի քանի ինչպես 1 ուղղանկյունաձև մեկ կատույց, որոնց կողքին բացվել է նաև կիսադեկորատիվ կլոր շատկազոմով մի կայարան, որի կավով սվաղված պատերն այդտակացվել են կրով և ներկվել կարմիր օխրայով: 2-րդ շինարարական հորիզոնի ճարտարապետական պատկերը կապես տարբերվում է նախորդ հորիզոններից: Այն պեղվել է համեմատաբար լայն տարածքում: 2-րդ հորիզոնի բնակավայրը կառուցապատված էր ազատ կանգնած բնակելի խոշոր համալիրներով: Դրանք անջատվել են շրջապատից հոծ ցանկապատով, որը ամփոփում էր քառանկյուն հասակազոմով մի քանի սենյակ և ներքին բակը: Համալիրների արտաքին պատերը կարող էին նաև կորած և շատկազոմ ունենալ: Սենյակների ներսում բացվել են աղյուսաշեն մի քանի որմնահեցեր, որոնք ամրացրել են պատերը և կրել կառույցների հարթ ծածկը: 1-ին հորիզոնի կառույցները ուղղանկյունաձև հատկազոմով էին: Բացվել է ավելի բուն 7 մ երկարության կորած մի պատ, որին երկու կողմից կցվել են սնտակական փոքրիկ (2—2,5 քառ. մ մակերեսով) շինություններ: Դրանց կողքին գտնվել են նաև բնակելի կառույցներ: Կարելի է ենթադրել, որ 1-ին հորիզոնը, 2-րդի նմանությամբ կառուցապատված է եղել բազմասենյականոց առանձին համալիրներով: Ինչպես 2-րդ, այնպես էլ 1-ին հորիզոնում հայտնաբերվել են բրուտագործական ենթոպրկող երկհարկանի վառարաններ:

Ուշ խալկոլիթի (էնեոլիթի) ժամանակաշրջանում (մ.թ.ա. IV հազարամյակ) Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում հարատևել է ուղղանկյունաձև շինությունների կառուցման ավանդույթը, որի հիմնական գծերը ներկայացրել ենք վերևում, Տյուրան-Քեփեի ճարտարապետությունը նկարագրելիս: Այդ նորատեսման մասին են վկայում նորոշեն-Քեփեի ուշ խալկոլիթյան շերտերում բացված աղյուսաշեն կառույցները<sup>18</sup>:

Հայկական լեռնաշխարհի ու Հարավային Կով-

կասի նեոլիթի և էնեոլիթի ժամանակաշրջանի ննագիտական մշակույթները ներկայանում են նաև հասարակական շինարարական աշխատանքների խոտուն վկայություններով: Դրանք բնակավայրերը շրջապատող կամ եզրին գտնվող արհեստական խանդակներ են, որոնք, անկասկած, փորվել են բնակավայրում ապրող համայնքի բնօճանուր ուժերով: Այգպսիս խանդակներ հայտնաբերվել են նրանի գետաձուլի ստորին հատվածի բնակավայրերում (Արուխու 1-ին, Իմիրիսպուր): Միջլարտրադի ստփասանում (Շահ-թեփե), Արարատյան դաշտում (Մասիսի բլուր): Այգ խանդակների ստեղծման հիմնական նպատակը ջրի պաշարի կուտակումն էր, որը կարող էր օգտագործվել ոռոգման, ինչպես նաև անտեսակայն այլ կաշիքների համար<sup>10</sup>: Չի բացառվում էնեոլիթյան խանդակների նաև պաշտպանական նշանակությունը, որը, սակայն, մինչ օրս հաստատված չէ: Արուխու 1-ին բնակավայրը շրջապատված էր համակենտրոն երկու խանդակներով: Արտաքին խանդակի խորությունը շուրջ 2 մ էր, իսկ վերին մասի լայնությունը՝ 9,5 մ: Խանդակը լցված էր հոտող ջրով: Ներքին խանդակը թերևս «չոր էր», նրա լայնությունը վերին կտրվածքում 11 մ էր հասնում, իսկ խորությունը շուրջ 3 մ էր: Արհեստական այդ բլուրբնակավայրի տրամագիծը 150 մ է, ուստի պարզ է դառնում խանդակների շինարարության ժամանակ կատարված հողալային աշխատանքի մեծ ծավալը, որը պահանջում էր համայնքի աշխատանքի համապատասխան կազմակերպում:

Այգպսով, Հայկական լեռնաշխարհի և Հարավային Կովկասի նեոլիթի և էնեոլիթի դարաշրջանի վաղ երկրագործական ննագիտական մշակույթները ներկայացնող հուշարձանների քրեներությունը բացառապես, այդ ժամանակաշրջանի ճարտարապետության զարգացման հիմնական ուղիները: Լեռնաշխարհի որոշ մասերում դեռևս նեոլիթյան հեղափոխության շրջանում ճարտարապետությունը իր ժամանակի ամենաբարձր մակարդակի է հասել (Չայնու Քեփե-սի): Առայժմ չի բացահայտվել միասնական ճարտարապետական ավանդույթը, որը կարող էր ընդգրկած լինել լեռնաշխարհի ամբողջ տարածքը նեոլիթի և էնեոլիթի դարաշրջաններում: Հավանակ դրան, հայտնի են ճարտարապետական տարրեր, յուրահատուկ մի քանի ավանդույթներ, որպիսիք համապատասխանում են ննագիտական առանձին մշակույթներին: Այգ ավանդույթները բնութագրող կարևոր գծերից է բնա-

կարանաշինությունն ապարեզում կլոր և ուղղանկյուն հաստակագծերի կիրառման փոխհարաբերությունը: Կլոր հաստակագծի բացարձակ կիրառությունը բացահայտվում է Կուրի միջին հոսանքի աջափնյա և Արարատյան դաշտի բնակավայրերում (շուկվերի-շումթեփյան մշակույթ, Թեղուտ): Վաղ էնեոլիթի դարաշրջանում կլոր կառույցներն ուղղանկյունաձև շինությունների հետ համագրված՝ ամենալայն տարածում են ստացել հայկական ննագիտական մշակույթի զարգացման և նրա ազդեցության ոլորտում՝ մ.թ.ա. VI հազարամյակի երկրորդ և V հազարամյակի առաջին կեսին: Այնուհետև զարգացած և ուշ էնեոլիթի շրջանում, մ.թ.ա. V հազարամյակի երկրորդ կեսին և IV հազարամյակում, կլոր բնակարանաշինության տարածման արեալը թերևս, խիստ սահմանափակվում է: Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան և հարավարևելյան մասերում այդ ժամանակաշրջանի ճարտարապետությունը առողջ ներկայացված է միմիայն ուղղանկյունաձև կառույցներով (Խարբերդի դաշտ, Ուրմիո լճի ավազան, Մուղանի տափաստան):

Հայկական լեռնաշխարհի և Հարավային Կովկասի նեոլիթյան և էնեոլիթյան վաղ երկրագործական այժմ հայտնի բնակավայրերը պարսպապատ չէին: Դրանք հանդես են գալիս արհեստական բլուր-բնակատեղիների ձևով, որպիսիք հայտնի են միմիայն դաշտավայրային շրջաններում: Պետք է նեխողրել, որ բնակատեղիները կղև են նաև լեռնային և նախալեռնային շրջաններում, սակայն դրանք բլուր-բնակավայրերից տարբեր են: Չնայած բնակավայրերի կառուցապատված խորածրի էական տատանումներին (0,25 հեկտարից մինչև 3—4 հեկտար), նրանց միջև չի նկատվում տիպարական տարբերություն: Այդ ժամանակաշրջանի մոնումենտալ ճարտարապետությունը հուշարձաններ Հայկական լեռնաշխարհի և Հարավային Կովկասի տարածքում ևս չէ: շին հայտնաբերվել: Սակայն աստիճանաբար կուտակվում էր նրանց ստեղծման համար հարող դարաշրջանում անհրաժեշտ շինարարական հասարակական աշխատանքի փորձը:

Հայկական լեռնաշխարհի նեոլիթի և էնեոլիթի ննագիտական մշակույթների ճարտարապետական ավանդույթները պետք է զարգանային ու կայան փոխվեն հարող ժամանակաշրջանում, մ.թ.ա. IV հազարամյակի երկրորդ և III հազարամյակի առաջին կեսին, երբ ամբողջ լեռնաշխարհի տարածքը ընդգրկում է մշակութային նոր ընդհանրությունը:

## ՎՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՇՐՋԱՆՆԵՐԻ  
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՂ ԲՐՈՆՋԻ ԴԱՐՈՒՄ

(Մ. թ. ա. IV հազարամյակի կեսից մինչև III հազարամյակի  
3-րդ փառոդը)

Մ.թ.ա. III հազարամյակի առաջին կեսին ձևավորվում է Դաղստանից Պաղեստին ձգվող հնամշակութային մի մարզ, որը բաղկացած է մի քանի երևելի հնագիտական մշակույթներից: Մշակութային այդ ընդհանրության միասնականությունը արժանացել է մի շարք հետազոտողների ուշադրության: Այդ մարզը կազմող մշակույթներից առավելապես ուսումնասիրված են Հայկական լեռնաշխարհի մեծ մասը զբաղեցնող շենգավիթյան հնագիտական մշակույթը, որը, արդի տվյալներով, ընդգրկել է առնվազն Ուրմիո լճի արևելյան ափի, Կարնո և Խարբերդի դաշտերի միջև ընկած տարածքը և քիրբեթկերական հնագիտական մշակույթը, որը տարածված էր Ասորիքում և Պաղեստինում:

Շենգավիթյան հնագիտական մշակույթի գոյության ժամանակաշրջանը շրջադարձային էր Հայկական լեռնաշխարհի հնագույն պատմության համար: Էնեոլիթյան մշակույթների ոռոգելի երկրագործության ավանդույթների վերընթաց զարգացումը շենգավիթյան մշակույթում հասնում է իր գագաթնակետին: Բրիչային երկրագործությանը փոխարինում է արորայինը: Նշանակալիորեն աճում է անասնապահության ղերը տնտեսական կյանքում: Արորային երկրագործության և արորային անասնապահության տարածումը հնարավոր էր դարձնում բարձր լեռնային շրջանների տնտեսական յուրացումը: Շենգավիթյան մշակույթի բնակավայրերը հա-

վասարապես հայտնի են ինչպես դաշտավայրային, այնպես էլ լեռնային շրջաններում: Անասնապահության զարգացման և լեռնային գոտույուրացման հետ կապված մեծանում է որսորդության տնտեսական դերը, որը երկրորդական նշանակություն է ունեցել ուշ նեոլիթյան և էնեոլիթյան դաշտավայրային երկրագործության մշակույթներում: Այսպիսով, եթե նեոլիթի էնեոլիթի դարաշրջաններում մշակույթային առաջընթացի համար առաջատար նշանակություն են ունեցել դաշտավայրահովտային շրջանները, ապա շենգավիթյան մշակույթի ժամանակաշրջանում դաշտավայրային և լեռնային մշակութային օջախների դերը հավասարվում է:

Շենգավիթյան մշակույթի ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհում սկսվում է վաղ բրոնզեդարը: Մետաղագործության և մետաղամշակման զարգացման հետ կապված էր աշխատանքի հասարակական բաժանման նոր փուլի ձևավորումը՝ սկսվել է արհեստների բաժանումը գյուղատնտեսությունից: Զենքի կատարելագործումը վկայում է ուղիմական գործի նշանակության կարևորության մասին:

Տնտեսական զարգացման հետևանքով ձևափոխվել է շենգավիթյան մշակույթի հասարակության կառուցվածքը: Գոյություն է ունեցել մասնավոր սեփականության իրավունքը: Փոքր ընտանիքներից կազմված դրացիական համայնքները մի շարք շրջաններում աստիճանաբար փո-

խորհիվել են չբաժանված մեծ բնտանիքներից յարգկացած համայնքներով: Սոցիալ-անասնապետական տնտեսվել զարգացած շրջաններում տառաջացել են քաղաքային քաղաքակրթության առաջին ստորբերով: Այսպիսով, վաղորդնկադարյան շենդավիթյան հնագիտական մշակույթի ժամանակաշրջանի առաջին կեսը կարող է դիտվել իբրև Հայաստանում նախնադարյան համայնքային հասարակարգի զարգացման գաղափարների, մինչդեռ երկրորդ կեսում որոշակիորեն նկատվում է այդ հասարակարգի քայքայման պրոցեսը:

Հայկական լեռնաշխարհի այդ ժամանակաշրջանի պատմության ընթացքում նկատվող վերահիշյալ երևույթները որոշակիորեն արտահայտվել են նաև ճարտարապետության ասպարեզում: Միևնույն մշակույթի սահմաններում հանդես են եկել բնակավայրերի կառուցապատման տարբեր եղանակներ: Նկատելի են լեռնային և դաշտավայրային բնակավայրերի միջև եղած ճարտարապետական տարբերությունները: Բնակարանաշինության ասպարեզում տեղի են ունենում հասակագծման և հորինվածքի էական փոփոխություններ: Զարգանում է քաղաքային քաղաքակրթության վաղագույն փուլերին բնորոշ ճարտարապետության ֆունկցիոնալ էությունները, որը ներկայացնում են պաշտամունքային և ամբաշինական մոնումենտալ ճարտարապետության հուշարձանները:

Դադանա-պղնձեդարյան համայնքային մարզի բնակարանաշինության ակունքներին և հետագա զարգացման օրինաչափությունների բացահայտման համար հանգուցային նշանակություն ունեն շենգավիթյան հնագիտական մշակույթի վաղագույն համայնքները: Արարտյան դաշտում, էջմիածնից 4 կմ հարավ գտնվող Մոխրաբլուր արհեստական բլուր-բնակավայրում կատարվող պեղումների ընթացքում, շերտագրական կտրվածքի միջոցով ուսումնասիրվել է շենգավիթյան հնագիտական մշակույթի ավելի քան 7 մ հաստությամբ մշակութային շերտը: Այդ շերտում բացվել է բնակելի ճարտարապետության շինարարական 9 հորիզոն (3-րդից—11-րդը, հաշվելով վերևից ներքև), որոնցից մի քանիսը (4-րդը, 5-րդը) կազմված են կառուցողական մի քանի ենթաշրջանների մնացորդներից: Մոխրաբլուրի շենգավիթյան մշակույթի շինարարական հորիզոնները ներկայացնում են բնակելի ճարտարապետության զարգացման շրջա փուլ: Առա-

ջին, վաղագույն փուլը միավորում է 11-րդից 9-րդ հորիզոնները, երկրորդը՝ 8-րդից—6-րդ հորիզոնները, երրորդը՝ 5-րդ և 4-րդ հորիզոնները, իսկ չորրորդ փուլը ներկայացված է մեկ 3-րդ շինարարական հորիզոնով: Առաջին ու երկրորդ, երրորդ ու չորրորդ փուլերի միջև հնարավոր է ժամանակագրական կարճատև խզում: Առաջին փուլի շինարարական հորիզոններում, որոնք թվագրվում են մ.թ.ա. IV հազարամյակի երկրորդ կեսով, բացվել է ազատ կանգնեցված շինություններից առաջացած խիտ (բայց ոչ հոծ) կառուցապատման պատկերը: Պեղված ամբողջական կառուցվածքներ առանց բացատրության կյոռ հասակագծով են: Բացվել են ուղղաձիգ պատերի միայն 2—3 փոքրիկ հատվածներ: Շինությունների պատերը ունեցել են հոմ աշյունների մեկ շարքի հաստություն: 1,8—2,5 մ տրամագծով փոքրիկ շինությունների կողքին գտնվել են նաև մինչև 4 մ տրամագիծ ունեցող աներ: Ինքուր առանցքի կառուցվածքից մեկը (№ 42), որը թերևս պահեստային նշանակություն է ունեցել, ուղղաձիգ միջնործով երկու մասի էր բաժանվում: Այդ փոքրիկ շինությունները շինարարական տեսնիկակալի երկու նորույթներ են ներկայացնում: Դրանցից մի քանիսի պատերը շարվել են նեղ, երկար կողի վրա դրված աղյուսներով, ուստի պատի հաստությունը հավասար է աղյուսի բարձրությանը, և կավի սվաղի հետ կազմում է 14—16 սմ: Երկրորդ նորույթը վերաբերվում է շինությունների պատերի ստորին մասի կառուցվածքին: Շինարարական 9-րդ հորիզոնում պեղված № 43 շինությունը կիրառական յուրահատուկ նշանակություն պետք է ունեցած լիներ: Նրա պատի ստորին մասը կազմված էր երկու համակենտրոն աղյուսն շարվածքներից, որոնց միջև ազատ տարածություն էր մնում: Վերջինս ամբողջությամբ լցված էր ջարդված կավամանների բեկորներով: Կառույցի ներսում պատի տակ փորված մոխրով լցված գլանաձև փոսը իբրև օջախ է ծառայել: Այսպիսով պարզ է դառնում այդ շինության ներսում չորույթային պահպանման անհրաժեշտությունը, որը ապահովում էին բեկորների մեկուսացնող շերտը և շրջանցող օջախը: Մոխրաբլուրի ամենավաղ, 11-րդ շինարարական հորիզոնում բացվել է բավականին ճատ ուղղաձիգ մի պատ, որը շարված էր քառակուսի (16×16 սմ) հում աղյուսներով: Էլ տարբերություն այդ փուլի մյուս կառույցների, այս պատի

հաստութիւնը կազմել են երկու շարք աղյուսները Պատի երկու մակերեսները սժպլ չին ունեցել, իսկ շարվածքի մասոր օգտագործվել են երկու գուլչի՝ մուգ գորշ և բաց դեղնավուն աղյուսները Յուրաքանչյուր շարքում մուգ գորշ երկու աղյուսներին հաջորդել է բաց դեղնավուն մեկ աղյուս, որից հետո զրված են եղել ևս մուգ գորշ երկու աղյուսները Այսպիսով, կանգուն վիճակում աղյուսների շարվածքի կարելով բաժանված մուգ գորշ պատի մակերեսը զարդարված էր հորիզոնական առանցքով, ուիթմիկորեն տարածվող բաց դեղնավուն ուղղանկյուններով Այդ դասավորութիւնը նույնութիւնը դիտելի էր պատի երկու կողմից:

Այսպիսով, Մոխրաբլուրի բնակելի ճարտարապետութիւն առաջին փուլում բացահայտվել է ճարտարապետութիւն և կերպարվեստի պարզունակ սինթեզի փաստը:

Բնակարանաշինական նույն փուլում հանդես է եկել նաև պատի շարվածքի մի ձև, որը արձանագրվել է 10-րդ շինարարական հորիզոնում: Այստեղ բացվել է կլոր հատակաձևով շինութիւն պատի մի հատված, որի հաստութիւնը կազմում է լայնութիւնը զրված աղյուսների շարքը:

Այսուհանդերձ Մոխրաբլուրի բնակարանաշինութիւն առաջին փուլում օգտագործվել են տարբեր շափի հում աղյուսները 10-րդ և 9-րդ հորիզոնների պեղումները ցույց են տվել, որ աղյուսների մեծ մասը հաստատուն լայնութիւն էին՝ 21—22 սմ:

Մոխրաբլուրի առաջին փուլին հաջորդող հուշարձանը Նորաբաց բնակավայրն է, որը գրտնրվում է Երևանի մոտակայքում, Ներքին Չարբախից՝ 1,7 կմ դեպի հարավ—հարավ-արևմուտք<sup>3</sup>: Այդ հնավայրի ծավալուն պեղումները բացահայտում են Արարատյան դաշտի մ.թ.ա. IV հազարամյակի վերջին քառորդի բնակավայրային ճարտարապետութիւն պատկերը: Նորաբացի պեղումներով բացվել է շենգավիթիան հնագիտական մշակույթի շինարարական մեկ հորիզոն, որը կառուցապատված էր աղումերատիվ եղանակով տեղաբաշխված ազատ կանգնեցված առանձին տներով: Տները միջև մնում էին միջանկյալ ազատ տարածութիւններ, այնպես, որ շինութիւնների զբաղեցրած մակերեսը բնակավայրի մաքուր տարածքի կեսից քիչ է: Պեղված 9 տներից միայն մեկը (№ 2) ունեցել է քարաշեն ուղղագիծ գետնախարսիս, սակայն շենգա-

վիթիան մշակույթի հորիզոնին նրա պատկանելը առայժմ կասեցնուել է մնում: Մնացած բոլոր տները միաստակ պատկեր են ներկայացնում (գծագր. աղ. 4 գ): Դրանք 4,8—7,5 մ արտաքին տրամագծով կլոր հատակազով շինութիւններ են՝ յուրատեսակ կցակառուցներով: Տներից մեկը (№ 9) երկու բաժանումներից բաղկացած ուղղանկյունաձև հատակազով կցակառուց է ունեցել: № 4 կայարանի կցակառուցը անկանոն հատակազով էր Մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում երկր տների (№№ 3, 5, 7) կցակառուցները: Դրանք ստեղծվել են տան պատին արտաքին կողմից զուգահեռ կառուցված կոր պատի միջոցով: Այսպիսով երկու պատերի միջև ստեղծվում էր միջանցքանման երկարութիւն տարածութիւն, որը որոշ դեպքում (№ 5 տունը) օգտագործվել է կենցաղային նպատակների համար:

Նորաբաց բնակավայրում իրար կողքի հանդես են եկել զլանաձև և «ձեղվանոցաձև» ծավալի շինութիւնները, Այսպես, № 8 տան պատը ուղղահայաց կորվածքում պահպանել է դեպի ներս թեքված կողութիւն, որը սկսվել է գրեթե գետնի մակերեսից: Իսկ № 3 տան ներսում հաստաբերվել է տանիքը կրող սյան կարսխար և եղգնից ու ճյուղերից կազմված սվաղված տանիքի մնացորդները: Այս դեպքում տանիքը պետք է հարթ լիներ, քանի որ սյան խարսխար տեղադրված էր ապակենտրոն դիրքով:

Նորաբաց բնակավայրի շինարարական տեխնիկան որոշակի առանձնահատկութիւններ է ունեցել: Պատերը կառուցվել են հորիզոնական կորութիւն ունեցող հում աղյուսներից: Այդ աղյուսների պատի արտաքին մակերեսը կազմող երկար կողը ավելի երկար է, քան ներքին մակերեսի կողը: Երկար կողերի տարբերութիւնը 3—7 սմ է: Ամենաերկար աղյուսների արտաքին երկար կողը 60 սմ է, իսկ ներքինը՝ 53 սմ: Սեղանաձև կամ «կիսալուսնաձև» այդ աղյուսները հարմար են հատկապես շրջանազծալին շարվածքի համար և կարող էին իրենց յուրահատուկ ձևը ստանալ միայն կլոր հատակազման ավանդույթի դարավոր գերիշխանութիւն և զարգացման պայմաններում: Նորաբացի աղյուսների երկարութիւնը գերազանցում է շենգավիթիան մշակույթի մյուս հնավայրերից հայտնի աղյուսների երկարութիւնը: Այս բնակավայրում աղյուսների երկարութիւնը խիստ փոփոխական է 40—60 սմ-ի

առհասաներում: Այդուհանդերձ Նորարացի աղյուսների լայնությունն ու բարձրությունը շատ ավելի կայուն է՝ լայնությունը՝ 22—23, իսկ բարձրությունը՝ 10—12 սմ: Նույն հուշարձանում կիսալուսնաձև աղյուսներից բացի հաստնաքերվել են նաև ուղղանկյունաձև աղյուսներից (շափր՝ 48×22×10/12) շարվածքներ:


Նորարացի գլանաձև ծավալի տներում պատի հաստությունը կազմում է հորիզոնական դրված աղյուսների մեկական շարքը, մինչդեռ «մեղվանոցաձև» կացարաններում պատի հաստությունը կազմում են նեղ երկար կողերի վրա շարված աղյուսների իրար զուգահեռ երկու շարքեր, որոնց միջև մնացած տարածությունը լցվել է կավաշաղխով: Արտաքին և ներքին կողմից բոլոր պատերը սվաղվել են կավով, իսկ ներսից նաև սպիտակեցվել են կրալին կամ գիպսալին շաղխով: Պատերի հիմնաշարի ամրացման նպատակով արտաքին կողմից դրանք օղակվել են աղյուսաշեն «բարձերով», իսկ խոնավությունից խուսափելու համար շինության արտաքին կողմից հիմքի մոտ նաև լցվել են ջարդված կավամանների բեկորներից շերտեր: Հույժ աղյուսի շարվածքներ օգտագործվել են նաև կացարանների ներքին ձևավորման, մասնավորապես՝ պատերին կից շարված նստարանների համար:

Նորարացի կացարանների ներսում օգտագործվել են երեք տեսակ կրակարաններ՝ խոհանոցային վառարաններ, պաշտամունքային և ջեռուցման օջախներ, ուստի համապատասխան եղանակներով լուծվել է ծխի հեռացման և օդափոխության հարցը: Պաշտամունքային և ջեռուցման բաց օջախների ծուխը թերևս դուրս էր բերվում տանիքում ստեղծված երդիկից: Մինչդեռ աղյուսն թաղակապ խոհանոցային վառարանները կառուցվել են պատերի տակ և նրանց ծուխը դուրս էր գալիս վառարանի և պատի հպման մասում հույժ աղյուսից պատի մեջ կառուցված ծխնելուղի միջոցով: Տան արտաքին կողմից ծխնելուղը բացվում էր գետնի մակերեսից ոչ բարձր, վառարանի թաղի մակարդակին հավասար: Տներից մեկում, պաշտամունքային օջախը, որը մայր հողի մեջ փորված գլանաձև փոս էր ներկայացնում, հպված էր պատին:


Այսպիսով, Մոխրաբլուրի հնագույն փուլի և Նորարացի բնակելի ճարտարապետության մի քանի տարրեր մոտեցնում են այդ հուշարձանները շուգավերի-շումուբևիական մշակույթի ճար-

տարապետական ավանդույթին: Դրանք են՝ կառուցների գլանաձև և «մեղվանոցաձև» ծավալների համադրությունը, կլոր հատակագծի քաջարձակ գերակշռությունը, ուղղափոք պատերի հազվադեպ օգտագործումը, շինությունների օգակող «բարձերի» անկալությունը, պաշտամունքային օջախների տեղադրումը պատերի տակ և այլն: Այդ նմանությունները թերևս կարող են հիմք ծառայել շուգավերի-շումուբևիական և շենգավիթյան մշակույթների ճարտարապետական ավանդույթների ազգակցական կապ ենթադրելու համար, սակայն շպետք է աշարթող անել այն հանգամանքը, որ մինչ այժմ հայտնի շուգավերի-շումուբևիական մշակույթի ուղի փուլի և շենգավիթյան մշակույթի վաղադույն հուշարձաններ իրարից անջատված են մոտ 9-ից 12 դար ընդգրկող ժամանակաշրջանով: Ուստի միջանկյալ հուշարձանների ճարտարապետության անհայտ լինելու պայմաններում այդ ենթադրությունը չի կարելի վերջնական համարել:

Շենգավիթյան հնագիտական մշակույթի բնակելի ճարտարապետության զարգացման հաջորդ փուլերը առկա են Հայկական լեռնաշխարհի բազմաթիվ հնավայրերում: Մ.թ.ա. IV և III հազարամյակների սահմանազխի և III հազարամյակի առաջին քառորդի բնակարանաշինական հատակագծման սկզբունքներն արտահայտված են ուղղանկյունաձև կցակառուցներով մեկ սենյականոց կլոր տների գերակշռությամբ, որոնց կողքին քիչ քանակությամբ հանդես են եկել ուղղանկյունաձև հատակագծով առանձնացված կառուցներ: Նմանօրինակ պատկեր են ներկայացնում Արաքսի միջին ճոսանքում գտնվող Նախիչևանի Առաջին Քյուլ-թեփի մշակութային երկրորդ շերտի ճարտարապետական մնացորդները: Այդ շերտը պատկանում է շենգավիթյան հնագիտական մշակույթին և ունեցել է 8,5—9,5 մ հաստություն<sup>4</sup>: Սույն շերտի պեղումների ընթացքում բացվել են հաջորդաբար իլյար ծածկող շենարարական տանաշորս հորիզոններ, որոնք համարակալվել են ներքին: 1—12-րդ հորիզոնները պեղվել են շերտի ստորին մասում 9—13 մ խորությամբ մեջ՝ հաշվելով բլրի զազաթից: Այսպիսով, 12 շինարարական հորիզոն ամփոփող շերտի հաստությունը ընդամենը 4 մ է, իսկ լուրջաբանչուր հորիզոնի միջին հաստությունը՝ 0,33 մ: Երկրորդ շերտի դանգավածի վերին մասում կառուցների մնացորդներ գրեթե չեն բա-




u




q

0 2 4 6 8 10




p

0 3 6 9 12




a



b

0 5 10 15



v

0 2 4 6

Աղ. 4 ա, բ) Նախիջևան. Քյուլ-Քեփե, Բ շերտի կացարանների հատակագիծը, գ) Նորաբաշ-  
 րնակուտղիի ընդունուր հատակագիծը, դ) Մոխրաբլուր. տաճարական աշտարակ-  
 ճակատ և հատակագիծ, ե) Յանիք-Քեփե. հատակագիծը:

ցահայտվել, բացառությամբ 6,4 մ խորության մեջ պեղված 13-րդ շինարարական հորվալների շատ ուշագրավ հետքերի: Այս հորիզոնը ամփոփված է արճեն 1,2 մ հաստությամբ շերտում: Վերջապես, 14-րդ հորիզոնի աննշան հետքեր գտնվել են 5,2 մ խորությունից: Շինարարական բոլոր հորիզոնները ներկայացնում են բնականաբանաշինական հատկագծման վերոհիշյալ պատկերը:

Առաջին ֆլույթների երկրորդ շերտում ընդամենը բացվել է 40 շինություն, որից 28-ը կլոր հատակագծով կառույցներ են, իսկ մնացածը՝ կլոր կացարանների ուղղանկյունաձև կցակառույցներ կամ առանձին կանգնեցված ուղղանկյուն հատակագծով մի քանի շինություն են (գծագր. աղ. 4 Ա, Բ): Տները և նրանց ստորաբաժանումները ունեցել են գետնի մակերեսից սկսվող 0,7—1,1 մ լայնությամբ մուտքեր: Քանի որ շինարարական մնացորդները բացվել են փոքր մակերեսում, դժվար է բնութագրել բնակավայրի հատակագծային առանձնահատկությունները: Այնուամենայնիվ, կարելի է եզրակացնել, որ ստորին 12 շինարարական հորիզոնները ներկայացնում են առանձնացված ծավալներով, խիտ, բայց ոչ հոծ կառուցապատում:

Երկրորդ շերտի կառույցներում իբրև հիմնական շինանյութ օգտագործվել է հում աղյուսը: Աղյուսները տարբեր չափի են՝  $40 \times 20 \times 10$  սմ,  $50 \times 24 \times 10$  սմ,  $44 \times 20 \times 12$  սմ,  $44 \times 22 \times 10$  սմ,  $42 \times 18 \times 12$  սմ,  $42 \times 22 \times 12$  սմ,  $42 \times 24 \times 12$  սմ, սակայն չուրաբանչուր շինության կառուցման համար օգտագործվել են միևնույն չափի աղյուսներ: Տարբեր հորիզոններում ամենատարածված չափը եղել է  $42 \times 18 \times 12$  սմ, 2—8-րդ հորիզոններում օգտագործված աղյուսների հիմնական լայնությունն է 22 և 18 սմ: 50 սմ երկարությամբ աղյուսներ հասնողներ են միայն 1-ին շինարարական հորիզոնում: Աղյուսները պատրաստվել են կաղապարի միջոցով: Հում աղյուսի կողքին բոլոր հորիզոններում լայնորեն օգտագործվել է կավածեփի տեխնիկան: Կապակցող միակ նյութը կավաշաղախն էր: Փայտը՝ գերաններ, ճյուղեր, ձողաններ, եղեգն՝ սյունների, դռների և նրանց սանիների համար:

Առաջին հալաքից թվում է, թե Առաջին ֆլույթների երկրորդ շերտի շինարարական բոլոր մնացորդները միապաղպղ, անփոփոփ պատկեր են ներկայացնում: Սակայն մանրադիտն քննությամբ

ստորին հորիզոններից մինչև վերինը բացահայտվում է ճարտարապետական մշակույթի որոշակի դարգացում, որը դրսևորվել է շինարարական կառուցածքներում և կառույցների ծավալների փոփոխությամբ:

Ստորին 12 շինարարական հորիզոններում բացված կլոր կառույցների ներքին տրամագիծը փոփոխական է 3,5—8,3 մ սահմաններում: Սակայն ամենից տարածված է եղել 4,5—6,5 մ չափը: Ուղղագիծ միջնորմներով կլոր շինություններն անհավասար մասերի են բաժանվել: Ստորին հորիզոններում բացված ուղղանկյուն կցակառույցները հիմնականում փոքր են եղել: Այսպես, օրինակ, № 20 կցակառույցը  $2,45 \times 1,35$  մ չափի էր: Առաջին և երկրորդ շինարարական հորիզոններում նույնիսկ ամենախոշոր՝ 7,3 մ, 8,25 մ, 8,35 մ ներքին տրամագծով տների պատերը բարակ են եղել (հաստությունը՝ 25—32 սմ): Դրանց հաստությունը կազմել է երկայնական դրված աղյուսների մեկ շարք: Երրորդ հորիզոնից սկսած հիմնական կառույցների պատերի հաստությունը կրկնապատկում է, հանդես է գալիս շարվածքի նոր ձև: Այս դեպքում պատերի հաստությունը կազմված է երկարությամբ դրված աղյուսների իրար հպված երկու շարքերով, որոնց վրա վերինից դրված շարքը կազմում են լայնությամբ շարված աղյուսները: Ընդլայնական շարքը մի փոքր լայն էր երկայնական շարքերից, ուստի պատի մակերեսը օղակված էր հորիզոնական իրար չուրաբանչուս կոտուս գոտիներով, որպիսիք վերացվել են մակերեսային կավածեփի հաստ շերտի միջոցով: Այդ հորիզոնից սկսած բարակ պատեր են ունեցել միայն աղյուսաշեն կցակառույցները կամ կավածեփ ոչ մեծ շինությունները: 11 մ խորությունից սկսած (այդ խորությունը մոտավորապես համապատասխանում են 5—8-րդ շինարարական հորիզոնները) երկրորդ շերտի պեղումների ընթացքում արձանագրվել է զլաքարի և դաշտաքարի (խամ քար) կիրառությունը կառույցների գետնախարսխի շարվածքի համար, մի ավանդույթ, որը պահպանվել է մինչև տվյալ շերտի վերին՝ 14-րդ շինարարական հորիզոնը: Հիշենք նաև, որ քարաշեն գետնախարսխներ հայտնի են նաև նույն բնակավայրի առաջին կենդիության շերտում:

Երկրորդ շերտի կառույցների ծածկը կազմված էր գերանների, ձողանների ու ճյուղերի հիմնակմախքով, որը ծածկվել էր եղեգնի շերտով:

իսկ այնուհետև սվազվել կավով: Այդ մասին են վկայում տանիքների փայտե մասերի ածխացած մնացորդները: Շերտի ստորին 12 շինարարական հորիզոնների կլոր տների տանիքը հարթ էր՝ նման հետևությունների կարելի է հանգել վերլուծելով Մ Ռ 30, 28, 18, 7 տներում բացված ծածկը կրող սյուների սալային խարխուլների դիրքը: Այդ տներում եղել է մեկական սյուն, որը փոքրացնում էր ծածկվող տարածության թռիչքը: Սյունը տեղադրվել է ապակենտրոն դիրքով, որը բացառում է կոնաձև կտուրի գոյություն հնարավորությունը: Կարելի է ենթադրել, որ սյան շեղումը կենտրոնից կարող էր պայմանավորված լինել լուսաձխնելուզային անցքը կենտրոնում տեղադրելու անհրաժեշտությամբ: Վերջինիս կենտրոնական դիրքը թերևս պայմանավորված էր կիրառական (հավասար լուսավորություն) և պաշտամունքային գործոններով: Խարխուլների վերին մակերեսը համընկնում էր տների հատակների մակարդակին, հետևաբար սյունը ծածկի կառուցվածքի կրող-կրվող տարրն էր: Հնարավոր է, որ հարթ կտուրը կենտրոնական մասում մի փոքր բարձրացվել է, քանի որ լուսաձխնելուզային անցքը կարող էր երիզվել ձողանների պսակով: Հարթ էր նաև նույն հորիզոններում բացված ուղղանկյունաձև հատակագծով կցակառուցյաների և առանձնացված շինությունների տանիքը:

Շինարարական 13-րդ հորիզոնը նախորդ հորիզոնների համեմատությանը ներկայացնում է ճարտարապետական մշակույթի առավել զարգացած սլատկերը: Այդ հորիզոնի կառուցյաների փլատակներից գոյացած շերտը գրեթե չորս անգամ ավելի շատ է, քան նախորդ յուրաքանչյուր հորիզոնի մնացորդը:

Այս փաստը հուշում է կառուցյաների շափերի և նրանց պատերի զանգվածողության տարբերությունը: Այդ հորիզոնում բացված Մ 2 կլոր հատակաձևով կառուցյի ներքին տրամագծը կարող էր (ըստ վերականգնության) լինել մոտ 12 մ: Քարաշեն գետնախարսի վրա դրված նրա կաված՝ փ պատի հաստությունը 0,7 մ էր, իսկ կառուցյի ենթադրվող մակերեսը՝ շուրջ 115 քառ. մ. էր: Մ 2 կառուցյանը հայտնաբերվել են փայտե սյան ալյուրած մնացորդները՝ 30 սմ տրամագծով պլանի: Ժայռը թաղված էր 35 սմ խորությամբ փսի մեջ և ամրացված էր բարերով: Այսպիսով, ի տարբերություն նախորդ հորիզոններից, Մ 2 տան սյունը կանգնած էր ազատ կերպով և

ծառայում էր իբրև կառուցվածքի միայն կրող տարր: Ուշագրավ է սյան ապակենտրոն դիրքը կառուցյի ներսում: Նրա հետավորությունը պատի մոտակա հատվածներից 3,5—4,5 մ է, որը համապատասխանում է ծածկի թռիչքի հնարավոր մեծությանը: Սակայն սյան հետավորությունը պատի հանդիպակաց, հեռավոր կետերից 6,9—8,7 մ է, ուստի պետք է ենթադրել, որ նման թռիչք ծածկելու համար կառուցյի ներսում կանգնեցված էր ևս մեկ կամ թերևս երեք ու ավելի սյուն: Այսպիսով, Մ 2 կառուցյան սյան տեղադրման նոր եղանակ ներկայացնելով, վավերացնում է նաև բազմասյուն կառուցվածքների առկայությունը շենգավիթյան մշակույթի ճարտարապետության կլոր բնակարանաշինության զարգացած փուլում:

Նախիջևանի Առաջին Քյուլ-Քեփեի երկրորդ շերտի ճարտարապետական զարգացմանը նմանվող երևույթներ նկատելի են նաև էջմիածնի Մոխրաբլուրի բնակարանաշինության երկրորդ և երրորդ փուլերում: 11-րդ—9-րդ շինարարական հորիզոնների փոքր ու միջին տրամագծի կլոր հատակաձևով տների փոխարեն, Մոխրաբլուրի 8-րդ շինարարական հորիզոնում հանդես են եկել անհամեմատ ավելի մեծ տրամագծի կլոր կառուցյաներ, որոնք ունեցել են ուղղանկյունաձև կցակառուցյաներ: Օրինակ, Մ 37 տան ներքին տրամագիծը 7 մ էր: Այսուհանդերձ նրա բարակ պատը (հաստությունը 25 սմ) կազմված է երկայնու-թյամբ շարված 22 սմ լայնության աղյուսների մեկական շարքով: Կառուցյի ներսում բացվել են ապակենտրոն տեղադրության սյան խարխուլներ, որոնց դիրքը վկայում է տանիքի հարթ ձևի մասին, որը, սակայն, չի բացառում ծխալուսային անցքը եզերող բլրաձև պսակի գոյության հնարավորությունը: Այսպիսով, Մոխրաբլուրի 8-րդ շինարարական հորիզոնը ցայտուն նմանություններ է դրսևորում Առաջին Քյուլ-Քեփեի երկրորդ շերտի 1-ին և 2-րդ շինարարական հորիզոններին, որոնց կլոր շինությունների պատերի հաստությունը նույնպես կազմված էր երկայնությամբ դրված աղյուսների մեկական շարքով: Մոխրաբլուրի 7-րդ շինարարական հորիզոնից սկսած արձանագրված է ազատ կանգնեցված քառանկյունի հատակագծով կառուցյաների առկայությունը: Մ 33 շինությունը գրեթե քառակուսի հատակաձևով էր (ներքին չափեր 2,08×2,01 մ) նրա պատը կազմված էր յայնությամբ դրված աղյուս-

ների շարքով: Թևակոտ Մոխրաբլուրի ստորին շերտերը բացվել են սահմանափակ տարածքում, այնուհանդերձ նրանց ճարտարապետական մնացորդները խոսուն փաստեր են ներկայացնում: Այսպես, 7-րդ և 6-րդ շինարարական հորիզոններում պեղված կլոր կառույցների պատերը շարվել են երկարությամբ դրված աղյուսների մեկական շարքով, որը և կազմել է պատի հաստեղանում, մինչդեռ նույն հորիզոնների առանձին կանգնած քառանկյունի շինությունների և կցակառույցների պատերը շարվել են նաև լայնությամբ դրված աղյուսների մեկական շարքով:

Մոխրաբլուրի բնակարանաշինության առաջին և երկրորդ փուլերում օգտագործված աղյուսների լայնության հիմնական չափը  $22 \pm 1$  սմ է:

Այսպիսով, աղյուսների չափերը կարող են արժեք ներկայացնել շենգավիթյան մշակույթի Արաքսի միջին հոսանքի հուշարձանների ժամանակագրական հետազոտության համար: 50 սմ արտասովոր երկարության աղյուսները գտնվում են Նախիջևանի Առաջին Քյուլ-թեփի երկրորդ շերտի միայն առաջին շինարարական հորիզոնում և նորաբացում: Իսկ աղյուսի լայնությունը  $22-23$  սմ-ին հավասար չափը բնորոշ է Մոխրաբլուրի 10-րդից—6-րդ, Քյուլ թեփի երկրորդ շերտի 2-րդից—8-րդ հորիզոնների և նորաբացի շինարարական տեխնիկայի համար: Անհրաժեշտ է նշել նաև, որ նորաբացի աղյուսների երկարությունն ու լայնությունը նույնական են շուկավերի-շոմու-թեփյան մշակույթի բնակավայրերից մեկի՝ Շոմու-թեփի և Վրանդուկես աղյուսներին: Սակայն այս վերջին նմանությունը կարող է նաև պատահական լինել:

Մոխրաբլուրի շերտագրական պեղվածքում սուսմնասիրված բնակարանաշինության երրորդ փուլում բացահայտվում են կարևոր մի շարք նորություններ, որպիսիք անհայտ են երկրորդ փուլում: Առաջին և երկրորդ փուլերում շինարարական յուրաքանչյուր հորիզոնը ներկայացված է կառուցողական մեկական շրջանով և այդ շրջանի կառույցների կործանմանը հաջորդող շրջանում (այսինքն՝ հաջորդ հորիզոնում) շինությունների հատակագծային տեղադրությունը փոխվում է: Երրորդ փուլի պատկերը (5-րդ և 4-րդ հորիզոններ) միանպաստյան այլ է: Այստեղ հորիզոնի հատակագծային կմախքը կազմող կլոր կառույցները բազմիցս վերանորոգվել են իրենց տեղերում, իսկ հատակագծային փոփոխության են-

թարվել են այդ տները շրջապատող անկյունավոր շինություններն ու կցակառույցները: Այսպիսով, 4-րդ և 5-րդ հորիզոնների սահմանները ուրոշվում են կլոր կառույցների հիմնաքանակ և վերջնական կործանման մակարդակներով: 4-րդ շինարարական հորիզոնում բացահայտվել է կառուցողական շրջա շրջան, իսկ 5-րդում՝ երկու շրջան, երկուական են թաշրջաններով: Յուրաքանչյուր նոր շրջան նշանավորող վերանորոգման ժամանակ հիմնական կլոր տների պատերը քանդվել-հարթեցվել են, իսկ այնուհետև հին պատի տեղում ճշգրիտ կերպով տեղադրվել է կառուցողական նոր շրջանի պատը: Ուշագրավ այս երևույթը բացահայտում է կլոր տների հատուկ նշանակությունը բնակելի համալիրներում, ինչպես նաև թույլ է տալիս մտածելու, որ նախկին տան վերարտադրությունը վերանորոգման ընթացքում պետք է կատարվեր այդ տանը բնակվող ընտանիքի կողմից: Ուստի կառուցողական մի քանի շրջանների ընթացքում գոյատևած տներում թերևս ապրել են միևնույն ընտանիքի տարբեր սերունդներ:

Շինարարական գործունեության եղանակի փոփոխությունը դրսևորվում է նաև շինարարական հորիզոնների չզորութային տարբերությամբ: Եթե Մոխրաբլուրի բնակարանաշինության երկրորդ փուլի յուրաքանչյուր հորիզոնի հաստությունը  $0,4-0,7$  մ է, ապա 5-րդ հորիզոնի հաստությունը՝  $1,6$ , իսկ 4-րդ հորիզոնինը՝  $1,8$  մ է: Շինարարական հորիզոնների զանգվածեղացումը երկրորդ փուլից երրորդին անցման շրջանում չպետք է բացատրել միայն կառուցողական շրջանների քանակի տարբերությամբ՝ այսինքն՝ վերանորոգման շնորհիվ հորիզոնի առանձին շինությունների գոյատևման երկարացմամբ: Որոշակիորեն նկատելի է նաև կառույցների պատերի զանգվածեղացման ընթացքը, որը պայմանավորված էր շարվածքի նոր տեխնիկայի առկայությամբ: 5-րդ շինարարական հորիզոնում պատերը հաստանում են, լայնանալով մինչև  $40$  սմ, իսկ 4-րդ հորիզոնի № 6 և 7 հիմնական կլոր տների պատը շարվում է երկարությամբ դրված աղյուսներից՝ իբրև հպված երկու շարքով: Այս եղանակով շարված № 7 տան պատի հաստությունը  $68$  սմ է: Այսպիսով, Մոխրաբլուրում բացահայտվում է բնակելի կառույցների զանգվածեղացման այնպիսի ընթացք, ինչպիսին պիտիվում է նախիջևանի Առաջին Քյուլ-թեփի

երկրորդ շերտի 2-րդ շինարարական հորիզոնից 3-բզին և 12-րդից—13-րդին անցման շրջանում:

Մոխրաբլուրի բնակարանաշինության զարգացման երրորդ փուլում նկատվում են նաև հատակագծման նորույթներ: Ենթադրական պեղամասի տարածքը 5-րդ շինարարական հորիզոնի կառուցողական վաղ շրջանի վերջում հոծ կառուցապատման պատկեր էր ներկայացնում: Անկյունավոր հատակաձևի կցակառուցյուներով կլոր տները շրջապատվել են զգալի մեծությամբ բազմանկյուն կամ քառանկյուն սենյակներով (լուսանկ. աղ. 1): Այսպիսով հիմք էր դրվում բնակելի բազմասենյականոց համալիրների, որոնց առաջացումը թերևս պայմանավորված էր հայրիշխանական լրամանված մեծ ընտանիքի ձևավորմամբ: 4-րդ հորիզոնում բնակելի համալիրները խմբավորվել են փողոցների երկայնքով: Այդ հորիզոնում փողոցի բացված հատվածի լայնությունը 1,75—2,50 մ է: Ծինարարական 5-րդ հորիզոնի կառուցողական վերջին շրջանում տարածվում են նոր շափի 36×27×9 սմ աղյուսներ: Աղյուսների այս շափը բացարձակապես գերիշխող է դառնում 4-րդ շինարարական հորիզոնի պեղված կառույցներում: Այն ուշագրավ է կողերի 1:3:4 համաչափ հարաբերությունով:


Մոխրաբլուրի բնակարանաշինական երրորդ փուլին համանման ճարտարապետություն ավելի մեծ մակերեսում բացվել է Ջրահովտի (Մասիսի շրջան) բլուր-բնակավայրի պեղումների ընթացքում<sup>6</sup>: Երևանից մոտ 18 կմ հարավ գրտնըվող այս բլուր-բնակավայրում պեղված 10,5 մ խորություն շերտաբրական պեղմաստում բացահայտվել են շենգավիթյան մշակույթի տասնհինգ շինարարական հորիզոններ և կառուցողական շրջաններ: Առավել ընդարձակ պեղումների կատարվել են շենգավիթյան մշակույթի 3-րդ (վերևից սկսած) շինարարական հորիզոնում, որտեղ բացվել է փողոցի մի երկօր հատված ու նրա երկու կողմերում նույն աղյուսից կառուցված կլոր հատակագծով կառույցներ, հարակից տրեսեսական նշանակության շինություններով, բակով, որոնք փողոցից անջատվել են ցանկապատով: Տարբեր հորիզոնների կլոր կառույցներում գտնվել են խոհանոցային երկմասանի վառարաններ: Ջրահովտի 3-րդ հորիզոնի շինությունների հատակագծային կազմակերպման առանցքը փողոցն էր, որը հոծ կառուցապատման

պայմաններում ապահովում էր բնակելի համալիրների գործառնությունը:


Մոխրաբլուրի շենգավիթյան մշակույթային շերտի բնակարանաշինության շրջորդ փուլը (3-րդ շինարարական հորիզոն), որը հնարավոր է վերագրել մ.թ.ա. III հազարամյակի երկրորդ քառորդին, նույնպես ներկայացնում է փողոցների երկայնքով կատարված հոծ կառուցապատման պատկերը: Այստեղ վերստին հանդես է եկել աղյուսների քառակուսի ձևը նախկինում անհայտ չափերով (32×32×8 սմ): Քառակուսի աղյուսների օգտագործմանը դուզընթաց շարունակվել է ուղղանկյունաձև աղյուսների արտադրությունը: Այս և նախորդ փուլի տարբերությունը առաջին հերթին բացահայտվում է կլոր և ուղղանկյուն հատակաձևով կառույցների փոխհարաբերության ուսումնասիրության միջոցով: Եթև երրորդ փուլում կլոր կառույցները, շրջապատված լինելով անկյունավոր կցակառույցներով և առանձին կանգնած շինություններով, կազմել են բնակելի համալիրի միջուկը, ապա շրջորդ փուլի բնակելի համալիրը ձևավորվել է քառանկյունի խոշոր շինությունների հարակցման եղանակով, իսկ կլոր կառույցները ինչպես բանակով, այնպես էլ զբաղեցրած մակերեսով համեմատաբար շատ փոքր տեղ են գրավել: Այսպիսով, Մոխրաբլուրի բնակարանաշինության շրջորդ փուլում դիտվում է վաղ երկրագործական մի շարք մշակույթներին բնորոշ կլոր հատակագծման ավանդույթի հարատևման վերջին շրջանը: Այդ շրջանի բնակավայրի պատկերը Արարատյան դաշտում ներկայացնում է դենվոդ հնագիտական մշակույթի անվանադիր հուշարձան Ենեգավիթը<sup>7</sup>:

Այդ հնավայրը գտնվում է Երևան քաղաքի հարավարևմտյան կողմում, նախկինում Հրազդան գետի, իսկ այժմ՝ Երևանյան արհեստական լճի ձախ ափին: Հուշարձանը զբաղեցնում է 6 համակերեսով բնական բլրի գագաթը և նրա լանջերի վերին մասը: Բլրի գագաթը Հրազդան գետի հունից բարձր է 25—30 մ-ով: Բլուրը հրվանդանաձև տեսք է ունեցել, հյուսիսից և արևմուտքից այն եղերված էր Հրազդան գետով, իսկ հարավից՝ ոչ խոր փոստրակով:


Ենեգավիթի բնակավայրը պատկանում է բնական բարձունքների վրա տեղադրված արհեստական բլուր-բնակավայրերի տիպին: Մշակութային շերտի ամբողջ հաստությունը լավ պահ-



ա



բ



գ

Աղ. 5 ա) Շենգավիթ. բնակարանների համալիրների հատակագիծ, բ) Գառնի. բնակելի կա-  
սույցի հատակագիծը, զ) Շենգավիթ. ընդհանուր հատակագիծ:

պանված կենտրոնական հատվածներում 3,4—4 մ է: Այն հիմնականում բաղկացած է շենգավիթյան հնագիտական մշակույթին պատկանող իրար հանրորոշ շորս շինարարական հորիզոններից, ըստ որում վերին հորիզոնի կլոր հատակաձևով կառույցների մի մասի հիմքը դրված է նախորդ հորիզոնի կլոր շինությունների պատի տեղում, ուստի այդ երկու հորիզոնները թերևս կարող են դիտվել իրրև միևնույն հորիզոնի կառուցողական երկու շրջանների Շենգավիթյան մշակույթի ստորին երկու՝ 3-րդ և 4-րդ հորիզոնների կառույցների տեղադրությունը տարբերվում է մեկը մյուսից, ինչպես և վերին հորիզոններից: Տվյալների հանրագումարը թույլ է տալիս թվագրելու այդ շորս հորիզոնների ամբողջությունը մ.թ.ա. 2800—2500 թթ.:

Շենգավիթի վերին հորիզոնի բնակավայրի հասակագծում նկատվում է ծուռտիկ փողոցի մի հատված, որի երկու կողմերը հոծ կառուցապատում են ունեցել (գծագր. աղ. 5 գ): Դրանով Շենգավիթի պեղված մասի կառուցապատման եղանակը նմանվում է Մոխրաբլուրի բնակարանաշինական երրորդ և չորրորդ փուլերին և Զրահովտի 3-րդ շինարարական հորիզոնին: Շենգավիթի վերին հորիզոնի բնակելի տները բաղկացած են եղել ուղղանկյուն հատակագծով (3×3 մ, 4×7 մ և այլն) մի քանի սենյակներից (մինչև 12) 1. կլոր հատակագծով մեկ շինությունից (գծագր. աղ. 5 ա) որը յուրաքանչյուր տան համալիրում կարևոր նշանակություն է ունեցել (լուսանկ. աղ. 2 ա): Կլոր կառույցների ներքին սրամագիծը 6—8 մ է (լուսանկ. աղ. 2 բ): Սենյակներին կցվել են ցանկապատված բակեր, որոնցից մեկի շափերն են՝ 14,5×7,5 մ:

Պատերը գետնախարհիս են ունեցել, ստորին հորիզոններում գետնաբարով շարված, իսկ վերինում՝ միջին մեծության ճեղքված քարով և գլաքարով: Պատի արտաքին կողմում դրված քարերը ներսի շարվածներից ավելի խոշոր են: Քարերը շարվել են կավաշաղախով կամ շոր շարվածքով: Գետնախարհիս վրա դրվել է շթրծած աղյուսով պատը: Հանդիպում են երկու շափի՝ 28×20×10 սմ և 40×27/29×10 սմ աղյուսներ: Այսպիսով, երկրորդ համաշափության աղյուսները պատրաստվել են առաջինի կրկնակի մեծությամբ: Հանդիպում են նաև 12 սմ հաստությամբ աղյուսներ: Որոշ պատեր ամենաստորին շարից սկսած շարվել են աղյուսից, առանց բարև գետնա-

նախարսխի: Պատերի հաստությունը 0,8—1 մ էր, իսկ պահպանված մասի բարձրությունը՝ մինչև 2 մ է: Ներսից և դրսից պատերը սվաղվել են կավով, հաճախ՝ առանց որևէ գործիքի օգնության, որի մասին վկայում են սվաղի վրա տեղ-տեղ պահպանված մատնահետքերը: Մուտքերը երբեմն քարե շեմ կամ աստիճաններ են ունեցել: Հատակները շարվել են հում աղյուսով կամ մանր կուրիճի համակենտրոն շրջաններից բաղկացած շարվածքով, իսկ այնուհետև սվաղվել են 1—1,5 սմ հաստության կավի շերտով: Հատակի նորոգման ժամանակ այն ծածկվում էր նոր կավաշերտով: Սենյակների ներսում պատի պարագծով կառուցվել են նստարաններ (նստարաններից մեկը ունեցել է 45 սմ լայնություն և նույնքան՝ բարձրություն): Ենթադրվում է, որ որոշ սենյակների պատերը ներսում ներկվել են կապույտ կամ երկնադույն ներկով:

Շենգավիթի բնակարանները ծածկերը ունեցել են կլոր-կլորոջ այնպիսի կառուցվածք, որը էներկայացվել է Մոխրաբլուրի և Նախիջևանի Քյուլ-թեփեի բնակարանաշինության նկարագրությամբ: Ուղղանկյուն սենյակների ծածկը հավանաբար հարթ էր, իսկ կլոր շինությունների տանիքը ավելի բարդ կառուցվածք է ունեցել: Դատելով նրանց մեջ հայտնաբերված սյան խարիսխների ապակենտրոն տեղադրությունից և օջախների դիրքից, կարելի է ենթադրել, որ այդ կառույցների կտուրը կենտրոնական մասում ունեցել է գերանակապ պսակներ, որոնք օջախի վերևում երդիկ էին ստեղծում: Այսպիսով, Շենգավիթի կլոր հատակագծի շինություններն արտաբուստ գլանաձև ծավալի էին, իսկ նրանց տանիքը, եզրերում հարթ լինելով, կենտրոնում որոշ բեռաձևություն է ունեցել: Վերջինս կարող է դիտվել իրրև գլխատան կառուցվածքի նախատիպերից մեկը:

Բազմասենյակ համալիրների կլոր շինությունները, օգտագործվելով նաև կենցաղային նպատակների համար, հիմնականում պաշտամունքային նշանակություն են ունեցել: Այս կերպ րայցարտվում է նրանց վերակառուցումը միևնույն տեղում, շինարարական տարբեր հորիզոններում կամ կառուցողական շրջաններում: Շենգավիթյան մշակույթի բնակավայրերում հետաքրքիր այս երևույթը նկատվում է Մոխրաբլուրի բնակարանաշինական երրորդ փուլից սկսած: Շենգավիթի կլոր շինությունների կենտրոնում

(ինչպես և որոշ ուղղանկյուն սենյակներում) տեղադրվել է արտաքին կողմից կտր, 0,5—1 մ տրամագծով պաշտամունքային օջախը:

Հասարակական գործոնը կտր շինությունների վերացման կարևորագույն պատճառներից էր: Զբաժանված նահապետական մեծ ընտանիքների տարածման հետևանքով ձևավորվել է բնակելի կառույցի նոր ձևը՝ ուղղանկյուն սենյակներից բաղկացած բազմասնակյա տներ: Այդ տան կազմում կտր սենյակը դեռ գոյատևում է վերապրուկի տեսքով, կապված լինելով մարդկանց գործունեության ամենաավանդական, զգվարությունը փոփոխվող երևույթի՝ ընտանեկան պաշտամունքի հետ: Պաշտամունքային ճարտարապետությունը տեղ-տեղ պահպանել է կտր կառույցի ձևը դադատանա-պաղեստինյան հնամշակութային մարզի գոյության նույնիսկ ուշ շրջանում: Դրա մասին է վկայում ամբողջությամբ պեղված Կվաց-խևլերի բնակավայրի միակ կտր կառույցը՝ սրբարանը, ինչպես նաև Քիրբեթ-Կերակի մոնումենտալ տաճարի ճարտարապետությունը:

Այսպիսով, զարգանալով Առաջավոր Ասիայի վերջ երկրագործական տարբեր մշակույթներում, ներկայացնելով Հայկական լեռնաշխարհի մի բանի հազարամյակային ճարտարապետական ավանդույթները՝ կտր հատակագծով բնակելի կառույցների տիպաբանական խումբը վերանում է շենգավիթյան մշակույթի զարգացած փուլի վերջում:

Շենգավիթին ժամանակակից է հնագիտական եռույն մշակույթը ներկայացնող Գառնիի վաղ-բրոնզեդարյան բնակավայրը: Նրա շերտը հնա-ցույն է անտիկ ամրոցի տարածքում: Գառնիի շենգավիթյան բնակավայրի տեղադրությունը տարբերվում է վերը հիշատակված հուլարձաններից: Այն դաղնցնում է Գառնիի եռանկյունաձև հովանդանը, որի ժայռկազմ երկու հողմերը ուղղահայաց կտրվելով դեպի կիրճի հատակը, անմատչելի են: Երրորդ կողմից բնակավայրը պաշտպանված էր անմշակ խոշոր բարներից շարված պարսպով: Այսպիսով, Գառնիի շենգավիթյան մշակույթի բնակավայրը տեղադրությամբ նման է բրնձեղ դարի ավելի ուշ փուլերում Հայաստանում տարածված, այսպես կոչված, «կիկլոպյան ամրոցներին»: Գառնիի և նրան ժամանակակից ու համանման հուլարձանները սկսում են «կիկլոպյան ամրոցների» տիպաբանական կրկար շարքը, որը սոցիալական է մինչև

միջնադարը: Գառնիի վաղ բրոնզեդարյան ամրոց-բնակավայրը թեև գտնվել է լեռնային հուլարձաններին բնորոշ բնական միջավայրում, այնուհանդերձ միավորել է լեռնային և դաշտավայրային բնակավայրի հատկանիշները: Հրվանդանի մակերևույթի փոքր թևքությունը չի խանգարել տեղի բնակիչներին կիրառելու հարթավայրային կառուցապատման սկզբունքները:

Շենգավիթյան մշակույթի շերտի առավելագույնս պահպանված հաստությունը Գառնիում շուրջ 2—2,2 մ է: Թևքետ պեղումների մակերեսը սահմանափակ էր, այստեղ բացահայտվել են Լերեք շինարարական հորիզոններ: Ստորին (3-րդ) հորիզոնում բացվել է 6, 7 մ տրամագծի մի կտր կառույց (գծագր. աղ. 5 բ), որի պատի քարաշեն ստորին մասի տեղ-տեղ պահպանված բարձրությունը 1,2 մ-ի է հասնում: Պատը շարված է անհամաչափ մեծության քարերով՝ մանր ու միջին չափի քարերի կողքին հանդիպում են 0,7 և 0,4 մ բարձրություն ունեցող քարեր:

Դրսից և ներսից պատը սվաղված է կավով: Արևելյան կողմից բացված մուտքը ունի 1 մ լայնություն: Կառույցի պատի հաստությունը 0,9 մ է, որը կարող է ցույց տալ նրա՝ Շենգավիթում բացված կառույցների ժամանակակից լինելը: Ծինության հատակը դրված էր մայր հողի վրա, որը հարթեցվել է խճաքարերով, իսկ երեսից սվաղվել հարդախառն կավի հաստ շերտով:

Միջին (2-րդ) շինարարական հորիզոնի հաստությունը մոտ 0,4 մ է: Այստեղ բացվել են կտր հատակաձևով երկու շինությունների քարաշեն գեոմետրիային հատվածներ և հում աղյուսներից մի շարվածք, որը հատել է 3-րդ շինարարական հորիզոնի կտր կառույցի տարածքը:

Վերին (1-ին) շինարարական հորիզոնում, որի վերին սահմանը համապատասխանում է 1,3 մ խորության, բացվել է 6,7 մ տրամագծով կտր հատակագծով մի կառույց, որի անմշակ քարերով շարված գեոմետրիային բարձրությունը 0,5 մ էր, իսկ հաստությունը՝ 0,6 մ: Ուշագրավ է 1-ին և 3-րդ շինարարական հորիզոնների կտր կառույցների տրամագծի կրկնությունը: Ներսից և դրսից գեոմետրիային սվաղված էր կավով: Գեոմետրիային վրա պահպանվել են հում աղյուսից շարված պատի հետքեր: Պահպանված աղյուսների չափերն են՝ 26×20×10 սմ: Այսպիսով, Գառնիի 1-ին շինարարական հորիզոնի աղյուսները կրկնում են Շեն-

գավիթի վերին (1-ին) շինարարական հորիզոնի փոքր աղյուսաների շափերը, որը թերևս կարող է ժամանակագրական կոմպոնեն ծառայել այդ հուշարձանների հարաբերական ծավալման համար: Գառնիի վերին հորիզոնի նկարագրված կառուցքը կավածեփ հատակ է ունեցել: Այդ կլոր շինությունը հաված էին ուղղանկյունաձև կառույցներ: Պեղամասի տարածքում դրանցից բացվել է 0,65 մ հաստությամբ ուղղագիծ պատի ստորին մասի շարվածքը՝ անմշակ, միջին մեծության քարերից:

Շենգավիթին և Գառնիին ժամանակակից (մ.թ.ա III հազարամյակի կեսը) բնակավայրի կլոր և ուղղանկյունաձև կառույցներով կառուցապատման մեկ այլ տարբերակ բացվել է էլառում (Արովյան)<sup>9</sup>: Հուշարձաններով հարուստ այդ վայրում հայտնաբերվել են շենգավիթիան մշակույթը ներկայացնող բազմաթիվ կառույցներ, որոնց ամենաուշագրավ մասը բացվել է Գարանի մինչուրարտական ամրոցի լանջերին<sup>10</sup>: Ամրոցի տարածքում մշակութային շերտի հաստությունը հասնում է 4 մ-ի, որի ստորին զանգվածում բացվել են շենգավիթյան մշակույթի շինարարական երկու հորիզոններ: 2-րդ (ստորին) շինարարական հորիզոնում պեղվել է քառանկյուն շինություն ուղղագիծ պատի մի հատված, որը շարված էր խոշոր քարերով: Հայտնի չէ՝ արդյոք այդ շարվածքը գետնախարհի սի էր որի վրա բարձրացվել է հում աղյուսի պատը, թե՞ պատը ամբողջությամբ քարաշեն էր: Ուշագրության արժանի է այն փաստը, որ քառանկյուն կառույցի տեղում, շենգավիթյան մշակույթի 1-ին (վերին) շինարարական հորիզոնում գոյություն է ունեցել կլոր հատակաձևով մի շինություն: Ուստի պետք է ենթադրել, որ էլառի վաղբրոնզեդարյան բնակավայրում իրար կողքի հանդես են եկել կլոր և քառանկյուն հատակաձևով կառույցներ: Էլառի կլոր հատակազծով կառույցների ներքին տրամագիծը 4—8 մ էր, իսկ պատերի հաստությունը, որը կազմված էր քարերի կրկնակի շարվածքով՝ շուրջ 1 մ էր: Մի շարք շինություններում պատի արտաքին շարվածքի քարերը ավելի խոշոր են, քան ներսից շարվածները: Կլոր կառույցներում պատերի քարե շարվածքի պահպանված բարձրությունը 1,2 մ-ի է հասնում: Այսպիսով, կարելի է ենթադրել, որ այդ տների պատերը կարող էին ամբողջությամբ քարաշեն լինել և նրանց կառուցման համար հում աղյու-

սը թերևս չի օգտագործվել: Տների նստակները ձևավել են կավով:

Շենգավիթյան մշակույթի ճարտարապետական ավանդույթների ուսումնասիրության համար հատկապես կարևոր է բնակավայրի կառուցապատման այն եզրանակը, որը վերակազմվում է էլառի պեղումների տվյալների հիման վրա: Գառնիի ամրոցի բլրի հյուսիսարևելյան լանջին բացվել են արճեստական երկու դարավանդների վրա կառուցված կլոր տներ: Ստորին դարավանդում պեղվել է երկու շինություն, իսկ վերին դարավանդում՝ հինգ: Գարավանդները իրարից բաժանում է մի քանի տասնյակ մետր լայնությամբ մի տարածություն: Այսպես առաջանում էին տների՝ մեկը մյուսից առանձնացված շարքեր և յուրաքանչյուր դարավանդ կամ իրար մոտ գտնվող դարավանդների կարող էին հանդես գալ իրեն յուրատեսակ թնդամասեր: Ուշագրավ է շինարարական աշխատանքնր կատարելու նպատակով բլրի լանջի արճեստական փոփոխման փաստը: Նույն բլրի հարավային լանջին կատարված պեղումները ևս արճեստագրել են արճեստական դարավանդների ստեղծման փաստը, ընդ որում պարզվել է, որ դարավանդի վրա կլոր տունը կառուցելիս, բլրի բնական լանջը կտրվել է և այդ կողմից տունը միաձուլվում էր լանջի հետ: Այսպիսով, էլառի շենգավիթյան մշակույթի բնակելի ճարտարապետությունը, հիմնականում նմանվելով նույն մշակույթի այդ փուլի հայտնի մյուս հուշարձաններին, ներկայացնում է կարևոր երեք առանձնահատկություն՝ ա) բնական թեքության արճեստական դարավանդման առկայություն, բ) բնակավայրի կառուցապատման կազմակերպում ըստ դարավանդների, գ) տան հետին կողմը լանջի մեջ մտցված լինելը:

Նմանօրինակ կառուցապատում է ունեցել նաև Ախալցխայի մոտ գտնվող Ամիրանիս-գորա բնակավայրը, սակայն այդտեղ կլոր տներ չեն հայտնաբերվել: Ամիրանիս-գորայի կառույցների հիմնական ձևը քառանկյուն երկարուկ տունն է:

Էլառի ճարտարապետությունը ներկայացնում է Հայկական լեռնաշխարհի դաշտավայրային միջավայրում արմատավորված տան կլոր հատակաձևի փոխադրման փորձը թեև լանջերի վրա: Էլառում դեռևս չենք տեսնում լեռնային բնակավայրերի կարևոր հատկանիշներից մեկը՝ կառույցների այնպիսի դասավորություն, որի ղեկ-

յում ներքին դարձանդի շինութունների տանիքը վերին շինութուններին ծառայում է իրրի բուհ: Սակայն շինարարության նպատակով արհեստական դարձանդների ստեղծումը, ինչպես նաև տան հետին կողմը բանջի մեջ թողնելու սովորությունը: առաջացումը, անհրաժեշտ նախադրյալ էին բնակավայրերի լեռնային տիպի ձևավորման համար: Այսպիսով՝ էլաուր կարող է դիտվել իրրի գաղտավայրային բնակավայրերից լեռնայինին անցումնային տիպի օրինակը:

Արարատյան դաշտի և նրան եզերող նախալեռնային ու լեռնային գոտու տարածքում հայտնի են տարրիք ծավալով պեղված շենգավիթյան մշակույթի բնակելի ճարտարապետության մնացորդներ ներկայացնող նաև մի շարք այլ հուշարձաններ՝ Այգեհանը, Լեափի բլուրը, Ոսկեբլուրը, Աղարուրը (Կողզյակ բլուրը), Արևիկը, Ձյանբերդը (Հարավային Ղոջթուր), Կամարիքը (Գլամբեղ), Յրանգանոցը, Ախթամիրը (Ոսկեվազ)<sup>11</sup>, նախնական հաղորդումներից պարզվում է, որ այդ բնակավայրերում պեղված կառույցների մնացորդները արտացոլում են շենգավիթյան մշակույթի ճարտարապետական զարգացման վերահիշյալ երևույթները կամ մասամբ լրացնում են նկարագրված պատկերը: Այսուհանդերձ պետք է շեշտել, որ Արարատյան դաշտի և հարակից շրջանների տարածքում շենգավիթյան մշակույթի բոլոր փուլերը հավասարապես ուսումնասիրված չեն: Դեռ պետք է բացահայտվեն և ուսումնասիրվեն չհետազոտված փուլերի ճարտարապետական հուշարձանները: Բացարձակապես անհայտ է շենգավիթյան մշակույթին անմիջապես նախորդող ճարտարապետությունը: Նաև հայտնի է՝ ի՞նչ է հաջորդում Շենգավիթի 1-ին (վերին) շինարարական հորիզոնին:







Քննենք բնակարանաշինության զարգացման ընթացքը շենգավիթյան մշակույթի տարածման մյուս շրջաններում: Բազմաշերտ մի շարք հուշարձաններ հայտնաբերվել և մասնակիրեն պեղվել են Դաշտային Ղարաբաղում՝ Միլի տապաստանի հյուսիսային կողմում Ղուրուշայի և Քննդվենշայի գետահովտների ստորին մասում: Այստեղ ուշադրության հատկապես արժանի է Ղարաբյուրի-Քննդվի բաղնիքային բնակավայրը<sup>12</sup>: Այդ հուշարձանում պեղված շենգավիթյան մշակույթի շերտի շինարարական հորիզոնները բաժանված են երկու ենթաշերտի: Ստորին ենթաշերտում պեղվել են կլոր հատակաձևով 3,5—4 մ

տրամագծով մեկ սենյականի տներ: Տեղ-տեղ 1 մ բարձրությամբ պահպանված այդ կառույցների պատերը շարված են հարթ սալիկներից և անմշակ փոքր գուշաքարերով: Ղարաբյուրի-Քննդվի ստորին ենթաշերտի շինութունների հատակներն ու պատերը սվաղվել են կավով և ներկվել կարմիր ներկով: Աշխարհագրական նույն շրջանում գոյություն են ունեցել նաև կլոր հատակաձևով բնակելի սվաղի խոշոր կառույցներ: Այսպես, Գյունեշ-Քննդվում պեղված տան տրամագիծը 7 մ-ից ավելի է: 0,7 մ բարձրությամբ պահպանված նրա պատերը շարված են սվաղի խոշոր քարերով: Ղարաբյուրի-Քննդվի շենգավիթյան շերտի վերին ենթաշերտում բացվել են միմիայն քառանկյուն սենյակներից կազմված բնակելի բաղնիքային համալիրներ: Վերին ենթաշերտում կլոր շինութունները բացակայում են: Բաղնիքային տների պատերը կառուցված են ճեղքված խոշոր քարերից և դաշտաքարերից, որոնք շարվել են կավաշաղախով: Դրանց հաստությունը 1 մ է, իսկ առանձին տեղերում դրանք պահպանվել են 1,2 մ բարձրությամբ: Ներսի կողմից պատերը սվաղվել են կավով: Թեպետ շատ հավանական է Ղարաբյուրի-Քննդվի երկու ենթաշերտերի միջև ժամանակազրկան խզման գոյությունը, այսուհանդերձ տվյալ բնակավայրի շերտագրությունը լավ է արտացոլում շենգավիթյան մշակույթի բնակելի ճարտարապետության զարգացման հիմնական օրինաչափությունը:

Շենգավիթյան մշակույթի զարգացման կարևորագույն օջախներից է Պարսկահայքը: Ուրմիո լճի ափերին գտնվում են այդ մշակույթի տասնյակ հուշարձաններ: Մի կողմ թողնելով այդ շրջանում կատարված հետախուզական աշխատանքները, նշենք, որ դրանցից այս կամ այն չափով պեղվել են երեքը. Յանիք-Քննդվի լճի արևելյան, Գյուլ-Քննդվի՝ արևմտյան և Հավտավան-Քննդվի՝ հյուսիսային ափին:

Յանիք-Քննդվում շենգավիթյան մշակույթի հզոր շերտը պեղվել է արևմտյան (մեծ) բլրում: Այդ շերտը ծածկում է իրեն նախորդող շուրջ 8 մետր հաստությամբ էնեոլիթյան (խալկոլիթյան) շերտը: Շենգավիթյան շերտը բաժանվել է երկու ենթաշերտի, որոնք անվանվել են «Յանիքի վաղբրոնզեդարյան 1-ին» և «Յանիքի վաղբրոնզեդարյան 2-րդ»<sup>13</sup>,

Վաղբրոնզեդարյան 1-ին փուլը ներկայաց-



Աղ. 6 ա) Ամիրանիս-գորա. ընդհանուր հատակագիծ, բ, գ) Դեյիրմեն-թեփե. կացարանների հատակագիծ, դ) Կվաջիսիկերի. Շ, շերտի ընդհանուր հատակագիծը, ե, զ) Երկանանո-գորա. կացարանների հատակագիծ:

ված է ինք հիմնական շինարարական հորիզոններով, որպիսիք իրենց հերթին ստորարժանվում են մի շարք կառուցողական շրջանների (14-ից 26-րդ վերինը ներքև): Այդ հորիզոններում պեղվել է հում աղյուսից կառուցված կլոր հատակաձևով 57 շինություն:

Յանիքի վաղբրոնզեդարյան 1-ին փուլի շինարարական տարրեր հորիզոնների համադրումը բացահայտում է ճարտարապետության որոշ փոփոխություններ, որոնք դրսևորվել են կառույցների շափերի և բնակավայրերի կառուցապատման եղանակի միջոցով: Այդ փուլի վաղագույն հորիզոններում պեղված կլոր տների արտաքին տրամագիծը ընդամենը 3,5—3,6 մ է: Մինչդեռ 17-րդ (նույնը (F<sub>4</sub>) B) կառուցողական շրջանում արտաքին տրամագիծը հասնում է 6,9 մ-ի (տուն N° 2): Ստորին հորիզոնների կառուցապատումը ազատ ազդում երատիվ է: Առանձնացված կլոր տների միջև մնում էին կառույցներից աչառտ մակերեսներ, որպիսիք ապահովել են բնակավայրի տարածքում շարժման ազատ հնարավորությունը: Նույն վաղբրոնզեդարյան 1-ին փուլին վերաբերող 17-րդ կառուցողական շրջանը շինությունների մեծագույն խտացման պատկեր է ներկայացնում: Այն հետևանք էր բնակչության էական աճի: Ենթադրվում է, որ սյդ կառուցողական շրջանի գոյություն ժամանակահատվածում Յանիք-Քեփեի բնակավայրի բնակչության թիվը երկու հազարի էր հասնում: Կառուցապատումը հոծ էր դարձել, սակայն նրա եղանակը մնում էր անկանոն:

Բնորոշ է պեղամասի այն հատակագիծը, որը 17-րդ կառուցողական շրջանն է ներկայացնում (գծագր. աղ. 4 և): Այստեղ բացվել է բնակավայրը շրջափակող պաշտպանական պարսպին կից մի հատված: Պարսպի գիծը ընդհատվում էր նեղ մուտքի (կամ մուտքերից մեկի) բացվածքով, որից ներս գտնվում էր կառույցներից ազատ մի փոքրիկ տարածություն (թևերն՝ նրբանցքի սկիզբը): Պեղված հատվածում այդ տարածություն մի կողմը լցված էր իրար կպած տներով: Սրկու տների (N° 12 և 17) միջև մնացած մակերեսը բաժանվում էր ցանկապատով, որի ներսի կողմում գտնվող շուրջ 40 քառ. մ մակերեսով բակը նույնպես եղբված էր կլոր տների հոծ գծով: Յանկապատի մեջ եղած մուտքը նկայում էր բակը պարսպից ներս ընկած ազատ տարածության և ալպահատով՝ բնակավայրի մուտքի

դի հետ: Բակը հիմնականում ծառայում էր N° 1 շինությանը, որը, ամենայն հավանականությամբ, համայնքի ցորենի շտեմարանն էր: Շտեմարանի ճարտարապետական հատուկ ձևը հավանական է դարձնում այս վարկածը: Բակը շրջափակող բնակելի տների մուտքերը տարբեր կողմերոշում են ունեցել, որոշ դեպքում մուտքերը ուղղված էին բակից դուրս: Այս փաստը հուշում է, որ բակը չի ծառայել շրջապատի տները միավորելու համար, այլ ապահովում էր շտեմարանի շահագործումը: Շտեմարանը թեևս միտումնավոր կերպով կապվում էր արտապարսպային տարածության հետ: Կառուցողական 17-րդ շրջանը ներկայացնում է ցորենի պաշարների կուտակման և պահպանման խընդրի ճարտարապետական լուծման երկու եղանակներ, որոնք արտացոլում են համայնքի սննդամթերքի պահպանման և բաշխման ձևը: Ըստարակական շտեմարանի հետ մեկտեղ յուրաքանչյուր տանը եղել են նաև ցորենի աղյուսաշեն փոքր ամբարներ:

Յանիք-Քեփեի վաղբրոնզեդարյան 1-ին փուլի բնակելի կառույցների գրեթե միակ ձևը կլոր տունն է՝ քառանկյունի հատակաձևով փոքրիկ կցակառույցով: Առանձին կանգնած քառանկյուն շինությունները հատուկ կենտ էին և բնակելի չեն եղել: Կլոր կառույցները տվյալ փուլի առնչված միջին և ուշ կառուցողական շրջաններում հաճախակի հարատեղ են երկու և ավելի կառուցողական շրջանների ընթացքում (շինություններ N° 2, 4, 10, 11, 12, 20): N° 1 կառույցը՝ հասարակական շտեմարանը, նույնպես գործել է երկու (18-րդ և 17-րդ) կամ երեք (18-րդ—16-րդ) կառուցողական շրջանների ընթացքում: Կլոր շինություններից շատերը վերակառուցվել են իրենց նախնական հատակաձևի ուղղությամբ, մինչդեռ քառանկյուն կցակառույցները մեկ կառուցողական շրջանից ավել չեն գոյատևել, ենթարկվելով էական փոփոխությունների: Այս պատկերը Յանիքի վաղբրոնզեդարյան 1-ին փուլի միջին կառուցողական շրջանները նմանեցնում է Մոխրարլուրի բնակարանաշինության երրորդ փուլին:

Յանիքի վաղբրոնզեդարյան առաջին փուլի տները ներսում հաճախակի բաժանված էին բարակ միջնորմի միջոցով: Այս նույն երևույթը նկատվել է Նախիջևանի Առաջին Քյու-Քեփեի երկրորդ շերտի ստորին (5-րդ և 9-րդ) շինա-

բարական հորիզոններում (կառույցներ № 19 և № 9), ինչպես նաև էքսիանին Մոխրաբլուրի 9-րդ շինարարական շրջանում (կառույց № 42): Հատկանշական է Յանիբի կլոր շինութունների պատերի կառուցման եղանակը: Դրանք շարվել են նում աղյուսով, բայց որում 17-րդ շինարարական հորիզոնի բնակելի տների պատերի հաստութունը 25-ից—50 սմ է: Պետք է նկատել, որ բարակ պատերը շարվել են երկարութամբ դրված աղյուսների մեկական շարքով: Ամենից հաստ է նոստարակական շանտարանի աղյուսաշեն պատը: Երկարութամբ դրված մեկ շարք աղյուսների հաստության պատը, ինչպես նշվեց, հանդիպել են Մոխրաբլուրի բնակարանաշինական առաջին և երկրորդ փուլերի կլոր կառույցներում և Առաջին Քյուլ-Քեփեի երկրորդ շերտի ամենատարին՝ առաջին և երկրորդ շինարարական հորիզոններում: Յանիբ-Քեփեի կլոր շինութուններում հանդիպում ենք նաև Քյուլ-Քեփեին բնորոշ աղյուսաշեն շարվածքին՝ համեմատաբար պանզվածից պատերը ունենին իրար դուգահեռ երկարութամբ շարված աղյուսների երկու շարք, որի վրա դրված է լայնութամբ դասավորված աղյուսների շարքը: Յանիբի կլոր կառույցներից շատերի պատերը պահպանել են ուղղահայաց կտրվածքով դեպի ներս կորանալու նշաններ: Դրանց կողքին բացվել են ուղղահայաց պատեր ունեցող շինութուններ: № 36 տանը գտնվել են նաև ալյուսած տանիքի մնացորդներ, որպիսիք ներկայացնում են ձողաններից և էլուղներից կազմված վերինից էավածևի մի կառուցվածք: Էլուղիսով, կարելի է նկատել, որ Յանիբի կառուցապատման մեջ կողք կողքի զոյսութուն են ունեցել միլիանոցային (կեղծ-թաղակապ) և գլանած ծավալի կառույցներ: Նրա երևույթը, ինչպես նշվեց, նկատվել է նաև Սոսրաբացի բնակատեղիում:

Յանիբի կլոր տների մի մասը ունեցել է շինության կենտրոնին մոտ դրված ծածկը պահող մեկական սյուն: Տարբերվելով Քյուլ-Քեփեի սյուների մեծամասնութունից, նորաբացի, Մոխրաբլուրի, Շենգավիթի սյուների տեղադրման եղանակից, որտեղ սյուները դրվել են տափակ քարերի վրա և կառուցվածքի կլոր-կլորով տարրն են կղել, Յանիբի սյուները ամրացվել են փոսերի մեջ: Փոսերի մեջ սյուների հիմքերը սկզբից են բարերով կամ այլ փակում սյան հիմքը օղակվում էր աղյուսե շարվածքով, այսինքն՝

նրա բունը գլանած երարքանում էր հաստակի վրա: Հետևաբար, Յանիբի կլոր տների սյուները կառուցվածքի ազատ կանգնած միմիայն կրող տարր էին: Սյուների սակագրման նման եղանակ արձանագրվել է Առաջին Քյուլ-Քեփեի երկրորդ շերտի 13-րդ շինարարական հորիզոնում (շինութուն № 2) և կվայցիկերիում:

Յանիբ-Քեփեի կլոր տները «տիպային» կառավորում են ունեցել: Մուտքի կողքին գտնվել են նում աղյուսից շարված արկածակ փորք ամրապահողներ: Անթաղվում է, որ դրանք զերպահայպես օգտագործվել են ցորեն պահելու նամար, սակայն, նրանց մեջ ցորենից բացի կարող էին պահվել նաև այլ մթերքներ: Ամբարների կողքին գտնվում էր կաթը շաղախի շերտով ծածկված հարթակը, որի վրա ինչ-որ մթերքներ են մշակվել: Այդ մշակման ընթացքում առաջացած հեղուկի հեռացման նամար հարթակի եզրին ապու էր թողնված: Իրեն հարթակի շարունակութուն, պատի հիմքի պարագծով կառուցված էր մի նստարան, որի վրա շարվել են կավանոթներ: «Տիպային» այդ կահավորումը, որը վկայված է կլոր տների մեծամասնության ներսում, լրացնում էր կիսածվածիք հատակածեղ խոհանոցային վառարանը: Որոշ տներում խոհանոցային մասը միջնորմով անջատված էր բնակելի տարածութունից: Յանիբի «տիպային» կահավորման առանձին տարրերը՝ ամբարներ, նստարաններ, վառարաններ կամ նրանց համադրության միասնությունը հայտնաբերվել է նաև Նախիջևանի Առաջին Քյուլ-Քեփեի երկրորդ շերտում, նորաբացում, Զրահովիտում:

Այսպիսով, Յանիբ-Քեփեի վաղբունդեղարյան առաջին փուլի բնակելի ճարտարապետութունը հիմնական տարրերով նմանվում է Նախիջևանի Առաջին Քյուլ-Քեփեի երկրորդ շերտի և Մոխրաբլուրի բնակարանաշինական երկրորդ և երրորդ փուլերի ճարտարապետությանը: Հավանական է նաև նրանց ժամանակակից լինելը: Յանիբի վաղբունդեղարյան առաջին փուլը թերևս բնորոշում է նաև Մոխրաբլուրի բնակարանաշինության առաջին և երկրորդ փուլերի միջև ընկած ժամանակահատվածը:

14-րդ կառուցողական շրջանի ավերումից հետո կյանքը Յանիբ-Քեփեում դադարում է և վերսկսվում է երեք-չորս դար անց, մ.թ.ա. III հազարամյակի երրորդ քառորդում: Բնակավայրի պատմության այդ ժամանակաշրջանը ներկա-

յացնում են Յանիբի վաղբրոնզեդարյան երկրորդ փուլի կառուցողական շրջանները (13-ից—7-ը): Երկրորդ փուլի սկիզբը նշանակվորվել էր ճարտարապետական ավանդույթի կտրուկ փոփոխությամբ: Ընակավայրի պեղված տարածքը կառուցապատված էր քառանկյունի հատակաձևով սենյակներից բաղկացած բազմասնյակ տներով: Կլոր հատակաձևերի նվազագույն հետքը չի նկատվում: Կառուցապատումը խիտ էր, բայց ոչ նոժ: Տնկերի միջև մնում էին 3—4 մ լայնությամբ փոքրիկ բակեր, միջանցիկ տարածություններ, որոնց միջոցով իրականացվում էր շարժումը բնակավայրի տարածքում (գծագր. աղ. 8 ա): Կառույցների սում աղյուսկ պատերի հաստությունը նստում էր 0,7—0,8 մ-ի: Բացված սենյակների մակերեսը փոփոխվում էր 5-ից—25 քառ.մ. ստամաններում, սակայն հավանական է նաև ավելի խոշոր սենյակների գոյությունը:


Յանիբ-Քիփևի վաղբրոնզեդարյան երկրորդ փուլի ճարտարապետության ամենանշանավոր նորույթը երկնարկանի տների առկայությունն է: 24 քառ.մ. մակերեսի № 5 սենյակի անկյունում մուտքի դիմաց գտնվող երկայնական պատին զուգահեռ դրված էր մեկ ուրիշ պատ, որի երկարությունը մոտ 2 մ էր: Վերջինս կտրվում էր սենյակի ներսում առանց որևէ միացման մյուս պատերի հետ: Սենյակի արտաքին պատի մեջ, հատակից բարձր, տարբեր մակարդակներին պահպանվել են գերանների մնացորդներ, որպիսիք միացրել են այդ պատը կարճ պատի հետ: Պարզ է, որ սենյակի այդ անկյունում գոյություն է ունեցել վերին հարկ տանող աստիճանավանդակը: Այսպիսով, Յանիբի վաղբրոնզեդարյան երկրորդ փուլը Հայկական լեռնաշխարհի տարածքում երկհարկանի տան առաջին հաստատապես հայտնի նազույն օրինակն է ներկայացնում: Յանիբի այդ փուլը պատկանում է ուսումնասիրվող հնագիտական մշակութային ընդհանրության գոյության ուշ շրջանին: Ենթդեղևից բացի դրա ապացույցն է նաև տների ներքին ձևավորումը, որը պահպանել է Յանիբի վաղ բրոնզեդարյան առաջին փուլի «տիպարային» կահավորման առանձին տարրեր:

Քիչ բան է հայտնի Ուլմիո լճի արևմտյան ափին գտնվող Գյուլ-Քեփևի շերտերում ներկայացված շենգավիթյան մշակույթի ճարտարապետության մասին: Այդ հուշարձանը Հայկական

լեռնաշխարհի խոշորագույն արհեստական բլուր-րնակավայրերից մեկն է: Նրա բարձրությունը մերձակա դաշտավայրի մակերևույթից 24 մ է, իսկ մակերեսը՝ մոտ 20 հա է: Շենգավիթյան մշակույթը ներկայացնող շերտի հաստությունը՝ պեղված 1-ին փոստրակում, 6,7 մ է, որը ստորաբաժանվել է երեք ենթաշերտերի՝ Կ<sub>1</sub>, Կ<sub>2</sub>, Կ<sub>3</sub> (որից Կ<sub>1</sub> ստորինն է, իսկ Կ<sub>3</sub> վերինն է)<sup>1)</sup>: Կ<sub>1</sub> ենթաշերտում բացվել են կորագիծ քարի շարվածքներ, որպիսիք թերևս կլոր հատակաձևով տների աղյուսկ պատերի գետնախարխիսներն էին: Կ<sub>2</sub> ենթաշերտում պեղվել է 1,7 մ հաստության ուղղագիծ հում աղյուսկ հզոր մի պատ, որը, անկասկած, մոնումենտալ ինչ-որ կառույցի մասն էր: Ենթադրվում է, որ այդ պատը կարող էր պաշտպանական նշանակություն ունենալ: Վերջապես, վերին՝ Կ<sub>3</sub> ենթաշերտում գոյություն են ունեցել հում աղյուսով կառուցված քառանկյուն խոշոր կառույցներ, որի մասին վկայում է 1,4 մ հաստության ուղղագիծ պատի պեղված հատվածը: Այսպիսով, Գյուլ-Քեփևի Կ շերտը կարող է ներկայացնել կլոր հատակաձևով շինություններից ուղղանկյուն կառույցներին անցման երևույթը:

Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան մասում, հարբերդի դաշտից (այժմ՝ Ալթինովա) մինչև Մալաթիա վերջին տարիների ընթացքում տարբեր հնավայրերում կատարված պեղումները բացահայտել են վաղ բրոնզեդարի հզոր շերտեր, որոնք շենգավիթյան մշակույթին ազգակից հնագիտական մշակույթ կամ նույնիսկ այդ մշակույթի լուկալ (տեղայնական) տարբերակ են ներկայացնում: Պեղումների ընթացքում բացվել են վաղբրոնզեդարյան ընկելի տների տարբեր տիպեր, որոնք իրարից տարբերվում են ինչպես հատակագծային լուծումներով, այնպես էլ՝ կիրառված շինարարական տեխնիկայով: Տների այդ տիպերը հանդես են եկել վաղ բրոնզեդարի տարբեր ժամանակահատվածներում, ուստի պետք է ենթադրել, որ հարբերդ—Մալաթիայի շրջանում, սկսած մ.թ.ա. IV հազարամյակի վերջից մինչև III հազարամյակի վերջը, հաջորդաբար փոխվել են բնակարանաշինական տարբեր ավանդույթներ:

Նորշուն-Քեփև, Տյուլին-Քեփև և Խան-Իբրահիմ-Շահ բնակավայրերում հայտնաբերվել են կլոր հատակաձևով կառույցներ, որոնց գոյությամբ հաստատվում է Արարքսի միջին հոսանքի և Ուր-



Աղ. 7 ա) Սարգսյ-Փուլար, 10-րդ հարկանի քեղանոց հասակագիծ, բ) Փարսաթա-Ալ. Աբրա-  
 ընակարանի հասակագիծ, գ) Սարգսյ-Փուլար, 5-րդ շինարարական հարկանի քեղ-  
 նանոց հասակագիծ, դ) Փեկ Ջուզեյրեհ, VI դերան քեղանոցի հասակագիծ:

միտ լծի ավազանի բնակարանաշինական ավան-  
դույթի ապրումները հարբերոյ—Մալաթիայի դուշ-  
տաժարելի վաղորդակարգան մշակույթի գար-  
գացման որոշ մասնակահատվածներում: Տյուլին-  
յնփեհի կտր կացարանը<sup>15</sup> կիսավեհնափոր շինու-  
թյուն էր, որի ստորին մասը խորացված էր բլրի  
խալկոթիթյան (կենդիթյան) շկտի մեջ: Պատերը  
խնամքով շարված էին քարե շարթ սալերից: Շի-  
նության ներքին տրամագիծը 3,6 մ էր, իսկ  
պատերի պատկանված բարձրությունը 1,6 մ-ից  
ավելի է: Այդ կտույցի շինարարության համար  
հում աղյուսը թերևս չի օգտագործվել: Տյուլին-  
յնփեհի կտր տունը վերոնիշյալ բնակարանաշի-  
նական ավանդույթի ևս մի կարևոր հատկանիշ  
ունի՝ նրան նպաստ էր քառակյուն հատակաձևով  
փոքրիկ կցակառույցը: Խան-Իրբահիմ-Շահ բնա-  
կավայրում<sup>16</sup> կտր կառույցների բացվել են 6-րդ  
շինարարական Նորիզոնում: Գրան նախորդող  
7-րդ Նորիզոնի ճարտարապետական մնացորդ-  
ների ներկայացնում են մեկ սենյակից բաղկա-  
ցած ազատ կանգնեցված քառակյունի հատա-  
կագծով, բարե գետնախարխիսի վրա հում աղ-  
յուսով շարված պատերով տներ, իսկ հաջորդող  
5-րդ շինարարական Նորիզոնում հայտնաբերվել  
են քառանկյունի երկաթյակ երկու-երեք սենյակ-  
ներից կազմված տների քարաշեն գետնախա-  
րխիսները: Գրանց միջև ընկած 6-րդ շինարարա-  
կան Նորիզոնի հատակագծում որոշակիորեն  
բուսնանաճում է ուղղանկյուն կառույցներով շրջա-  
պատված կտր շինությունը, որի ներքին տրա-  
մագիծը 4,3 մ է: Այդ Նորիզոնի շինությունները  
նույնպես քարաշեն գետնախարխիս են ունեցել:

Հատակապես ուշագրավ է Նորշուն-թեփեհի կտր  
տան շինարարական դիրքը<sup>17</sup>, Այն պեղվել է հա-  
վայրի վաղորդակարգան ստորին շերտերում՝  
24-րդ շերտով ներկայացված շինարարական Նո-  
րիզոնում: Այդ շերտից ներքև ընկած վաղ բրոն-  
զեդարին վերագրված 26-րդ շերտում պեղվել են  
բառանկյունի սենյակներից կազմված աղյուսա-  
շեն բաղմասենյակ տներ, իսկ վերևում՝ 14—23-րդ  
շերտերում իրար կողքի հանդես են եկել մեկ  
սենյականի քառանկյուն հատակաձևով առանձ-  
նացված դիրքով կանգնեցված աղյուսաշեն տներ,  
երկարավուն դասավորությամբ քառանկյուն սեն-  
յակներից բաղկացած աղյուսաշեն տներ և ձու-  
ղանների վրա հյուղերից հյուսված հիմնակախա-  
րով կազմակերպ բնակելի շինությունները: 24-րդ  
շերտի կտր կառույցը շուրջ 6 մ տրամագիծ է

ունեցել: Նրա պատի հաստությունը կազմված է  
հում աղյուսների մեկ շարքից: Այդ շինությունը  
կցված էր միջին մեծության քառանկյուն հա-  
տակաձևով աղյուսաշեն մի կառույց, որի փոքր  
մասն էր ընկած պեղավայրի տարածքում: Այն  
հանգամանքը, որ պեղավայրի մեծ մասը ազատ  
էր շինություններից, հուշում է Նորշուն-թեփեհի  
24-րդ շերտով ներկայացված բնակավայրի ազատ  
կառուցապատումը: Չի բացատրում նաև, որ պեղ-  
ված հատվածում ի նայու է բերվել բնակավայ-  
րի եզրային մասը:

Խարբերող—Մալաթիայի շրջանի վաղբրոնզեդար-  
յան բնակավայրերի տարբեր շերտերում բաց-  
ված բնակելի հարչարավոր շինությունների  
շարքում կտր կառույցները հազվագյուտ են հան-  
դիպում, իսկ Նորշուն-թեփեհի և Խան-Իրբահիմ-  
Շահի կտր կացարանների շերտազբաղան դիր-  
քը հուշում է այդ տարածքի ճարտարապետու-  
թյան մեջ կտր բնակարանաշինության հանկարծա-  
կի ներխուժման հնարավորությունը: Մինչ օրս կու-  
տակված նյութը թույլ է տալիս մտածելու, որ  
նաբրելոյ—Մալաթիայի տարածքում կտր բնակա-  
րանաշինության ավանդույթը չի ունեցել այնպի-  
սի խոր արմատներ, ինչպիսիք բացահայտվում  
են Կուրի և Արաքսի միջակետում և Ուրմիտ լճի  
ավազանում: Կատարված վերլուծությունը ցույց է  
տալիս, որ Խարբերող—Մալաթիայի վաղորդակ-  
արջան բնակարանաշինության մեջ կտր հատա-  
կաձևը հանդես է եկել այնպիսի համադրությամբ,  
սրը բնորոշում է կտր հատակաձևներից քառանկ-  
յուն ձևերին անցման փուլը: Հատակագծային  
նման պատկերը պետք է հաջորդի Մոխրաբլուրի  
բնակարանաշինության 3-րդ փուլին, ինչպես և  
Ջրահովիտի շինագլխիթյան հնագիտական մշա-  
կույթի 3-րդ շինարարական Նորիզոնին: Ինչպես  
նշվել, այն առավելապես բնորոշ է Շենգավիթին  
և Մոխրաբլուրի բնակարանաշինության վարգա-  
ման 4-րդ փուլին (3-րդ շինարարական Նորիզոն):

Կտր բնակարանաշինությանը նաբրելոյ—Մա-  
լաթիայում թերևս նախորդել է կամ անմիջա-  
պես հաջորդել է առն այն տիպը, որը ներկա-  
յացված է Սաքյու-Փուրուրի<sup>18</sup> (Սաքյու-բլուր)  
11-րդ—9-րդ շինարարական Նորիզոններում (Նո-  
րիզոնները համարակալվել են վերինց ներքև): Այդ  
տները նեղ ու երկար ուղղանկյունաձև կամ սե-  
ղանաձև հատակագծով էին և բաղկացած էին երեք  
մասից (գծագր. աղ. 7, ա): Վերջիններս առա-  
ջացել են երկայնական պատերի միջև գտնվող

Ճակերեսը ընդլայնական երկր պատերով հաստիլու միջոցով: Երկլայնական պատերի վերջավորությունը միացնող պատը կազմում էր տան հետին կողմը: Ընդլայնական միջին պատը բաժանում էր նեղ կողմերով իրար կցված երկու սենյակները, մինչդեռ տան ճակատային կողմի ընդլայնական պատը հավասարված չէր երկլայնական պատերի ծայրերին, այլ դրված էր մի փոքր խորությամբ, այնպես որ երկլայնական պատերի դեպի ճակատն ուղղված վերջավորությունը մույթներ (անտերի) տեսքով առաջ էր բերված: Այդ երկու ելուստները և ճակատային ընդլայնական պատը կազմում էին երեք կողմից փակված և ճակատից բաց, վերևից ծածկված մի նախասենյակ: Նախասենյակի և սենյակները բաժանող ընդլայնական պատերի մեջ մուտքեր էին բացված, որպիսիք կազմավորել են տան երեք մասերի շարանային դասավորությունը երկլայնական առանցքով: Բնակիչի տան այս հատակածը հիշեցնում է հունական մեգարոնների հնագույն նախատիպերը, որոնց ձևավորման տարածքն է համարվում Արևմտյան Անատոլիան (Տրոյա 1-ին և 2-րդ, Բեյքեսուլթան և այլն) և Հյուսիսային Բալկանները:

Սաքյուլ-Փուլուրի վաղբունկեղաբայան բոլոր շերտերի տները բացվել են փոսեր, որոնք ծառայել են ծածկ կրող սյան տեղադրման համար: Այսպիսով սյունը կառուցվածքի ազատ կանգնած կրող տարրն էր: Հարթ տանիքները շինվել են գերաններից, ձողաններից, ճյուղերից և եղևյեղից, իսկ վերևից սվաղվել են կավով: 11-րդ—9-րդ հորիզոնների կառույցների 30—80 սմ հաստությունը պատերը շարվել են հում աղյուսից: Գրանց մեծ մասը դրված էր միջին և մասը շափի անմշակ բարելավ կառուցված ցածր գետնախարսիսի վրա: Աղյուսները երկու շափի են, մեծը՝  $18 \times 3 \times 8$  սմ, իսկ փոքրերի շափի մեծերի կեսն է:

Հատուկ ուշադրություն արժանի է Սաքյուլ-Փուլուրի 11-րդ—9-րդ հորիզոններով ներկայացված բնակավայրերի կառուցապատման սկզբունքը: Տները կցված են իրար երկլայնական պատերով և կազմում են մի հոծ շրջանագիծ, որի կենտրոնական մասում մնում էր մեծ բակի կամ փոքր հրապարակի ազատ տարածությունը: Այսպիսով, տների հետին պատը հենվում էր բնակավայրի: օղակող արտաքին դանդաղ պատին, սրբ պաշտպանական պարսպի կամ հինապատի դեր էր

կատարում, իսկ ճակատային նեղ կողմը կամ նախասենյակը դուրս էր գալիս դեպի ներքին հրապարակը: Այդ եղանակով ստացվում էր հոծ շրջանաձև կառուցապատում: Սաքյուլ-Փուլուրի ուսումնասիրվող հորիզոնների կառուցապատման եղանակը անկասկած շարունակում է ճարտարապետական այն ավանդույթը, որը բացահայտվել է Կիլիկիայում Մերսինի բլուր-բնակավայրի խալկոլիթյան (էնեոլիթյան) շերտի պեղումների ընթացքում<sup>19</sup>, Այստեղ, 16-րդ շինարարական հորիզոնում բացվել է բնակավայրի պարագիծը շրջանաձև օղակող անկյունավոր աշտարակներով պարիսպը, որը կազմում է նրան հենվող բնակելի տների հետին կողմը: Տները բաղկացած էին սենյակների երկու շարքից: Հատ որում, ներքին շարքի ճակատները նայում էին դեպի կենտրոնական հրապարակը: Մերսինի 16-րդ հորիզոնը վերաբերում է ուշ ուրեյդյան ժամանակաշրջանին: Այսպիսով, Սաքյուլ-Փուլուրի 11-րդ—9-րդ հորիզոնների կառուցապատման եղանակը և տնիքի հատակագծային ձևը են տալիս այն եզրակացություն, որ նշված հորիզոնների բնակավայրերի ճարտարապետությունը ավելի մոտ էր կանգնած Կիլիկիայի և Անատոլիայի, քան թե Հայկական լեռնաշխարհի այդ ժամանակահատվածի ճարտարապետական ավանդույթներին:

Կառույցների հատակագծի բնական փոփոխություն է դիտվում Սաքյուլ-Փուլուրի վերին, ավելի ուշ հորիզոններում<sup>20</sup>, 7-րդ շինարարական հորիզոնը բնակելի կառույցների հաստագծային լուծման երկու տիպ է ներկայացնում: Այստեղ հանդես են եկել ստանձնացված դիրբով կանգնեցված ուղղանկյունաձև կամ դուրսնուսկուցման հատակաձևով տներ, որոնք ներքին մեծությամբ օգնությամբ բաժանվել են բառանկյուն երկու սենյակի: Սենյակները իրար հետ չէին հարցազուգույնում: Նրանց մուտքերը բացվել են տան երկլայնական պատերից մեկի մեջ կամ մուտքերից մեկը գտնվել է տան ընդլայնական, իսկ մյուսը՝ երկլայնական ճակատի մեջ: Այդ տների բնորոշ առանձնահատկություններից է դրան բացվածքի տեղադրությունը սենյակի անկյուններից մեկում: Տան այս տիպի կողքին հանդես է եկել նաև բնակելի բազմասենյակ համալիրը, որը կազմված է իրար կցված երեք, երկու և մեկ սենյականոց բջիջներից: Յուրաքանչյուր բջիջը դրսից առանձին մուտք է ունեցել և չի հարցազուգույնում: Նախնա ընդհանուր հատակագծից Սաքյուլ-Փուլուրի հարթը՝ 6-րդ

շինարարական հորիզոնում բազմասնյակ համալիրների կողքին բացվել են նաև առանձին կանգնեցված մեկ սենյակից բաղկացած բառաուսուցիչների (15 և 23); Տան այդ տիպը գերիշխող է դարձել հարձակ Մալաթիայի ստրուածքի վաղբունդեղարյան բնակարանաշինութան վերջին շրջանում:

Սաքլու-Փուլուրի 5-րդ շինարարական հորիզոնը արտացոլում է շինարարական տեխնիկայի հիմնական փոփոխություն: Այդ հորիզոնի պատերը հում աղյուսից կամ անմշակ քարից շարված 50 սմ բարձրությամբ գետնախարիսխ են ունեցել: Գետնախարիսխի արտաքին, ներքին և նույնիսկ վերին հարթությունը խնամքով պատվել են կավով: Ենթադրվում է, որ գետնախարիսխի շարվածքը երկու կողմից ընդգրկվել է փայտե կաղապարով (οπαυδικα), որի մեջ և լցվել է ջրիկ կավաշաղախը: Գետնախարիսխի վերին հարթության վրա բարձրացվել է պատի փայտաշեն կառուցվածքը: Պատը ունեցել է գերաններից ու ձողաններից կառուցված հիմնակամախ, որի վրա հյուսվել են բարակ ճյուղեր: Սենյակի ներսի կողմից հյուսվածքը ծեփվել է կավով: Այդ կղանակով կառուցվել է բաղձամայակ բնդարձակ մի համալիր, որը կազմված էր 11 սենյակից (գծագր. աղ. 7 Գ): Մի սենյակի բացատությունը, սենյակները միավորված էին երկու բջիջներում: Բջիջի ներսում սենյակները իրար հետ կապվել են մուտքերով, միջանցքով և նախասենյակով: Մեկը մյուսից բջիջները անջատվել են խուլ պատով: Բջիջներից մեկը միավորել է վեց սենյակ, մյուսը՝ չորս:

Փայտի կիրառումը Սաքլու-Փուլուրի 5-րդ շինարարական հորիզոնի պատերի կառուցվածքում պատահական էր: Խարբերող-Մալաթիայի շրջանի վաղբունդեղարյան մշակույթի գարգացած փուլում տարածում է գտել բնակելի տան մի նոր տիպ, որը ձողանների վրա հյուսված հիմնակամախքով կամածեփ պատերի շինարարական տեխնիկան է ներկայացնում: Այդ նոր տիպի հանդես գալու հանկարծակրությունը որոշակիորեն նկատվում է Նորշուն-Քեփեհ և Գեյլիմեն-Քեփեհի շերտագրության մեջ: Գեյլիմեն-Քեփեհում<sup>21</sup> պեղվել են վաղբունդեղարյան շրջանի շինարարական հորիզոններ (հորիզոնները համարակալվել են վերից-վար), սրպիսիք իրենց հերթին կառուցողական առանձին շրջաններ են բաժանվել (լուսանկ. աղ. 4): Պեղված ստորին՝ 4-րդ շինարարական հորիզո-

նում բացվել են ուղղանկյուն մի քանի սենյակներից բաղկացած տների պատերի ջարաշեն գետնախարիսխներ: Պատերի հաստությունը հասնում է 75—80 սմ-ի: 3-րդ շինարարական հորիզոնի մնացորդները միանգամայն տարբեր են: Այդ հորիզոնի շինությունների համար քարը կամ հում աղյուսը չեն օգտագործվել: Պատերի կառուցման ընթացքում փոսերի մեջ ուղղահայաց ամրացվել են ձողանների շարքեր, որոնց վրա բարակ ճյուղերից և ձողիկներից հյուսվել է պատի հիմնակամախքը: Այնուհետև ծեփվել է կավով: Ստեղծված պատերի հաստությունը 15—25 սմ էր: Այդ շինությունների ծածկը պետք է որ թեթև լիներ: 3-րդ հորիզոնի վերին (ա) կառուցողական և 1-ին/ստորին (բ) կառուցողական շրջանի պեղումները բացահայտել են հյուսված հիմնակամախքով կավածեփ պատեր ունեցող բնակելի կառույցների ամբողջական հատակագծեր (գծագր. աղ. 6 բ, գ), որոնք առանձնապես դիրքով կանգնեցված կլորացված անկյուններով ուղղանկյուն կամ սեղանաձև հատակագծով տներ են, որոնցից մեկը մի սենյականի կառույց էր, իսկ մյուսը կավածեփ բարակ միջնորմով երկու մասի էր բաժանված:

Ուսումնասիրվող աշխարհագրական շրջանում շինարարական նման տեխնիկայի միջոցով կառուցված շինություններ պեղվել են Նորշուն-Քեփեհի վաղբունդեղարյան շերտի ամենաստորին հորիզոններում (22-ից մինչև 14-րդը) և Թաշկուն Մեկիի բնակավայրում<sup>22</sup>: Նորշուն-Քեփեհի կառույցները մի փոքր տարբերվում են Գեյլիմեն-Քեփեհում պեղվածներից: Նորշուն-Քեփեհի մի քանի կառույցներում ձողանների վրա հյուսված հիմնակամախք ծեփվել է միայն սենյակի ներսի կողմից: Այս բնակավայրի հյուսված հիմնակամախքով կավածեփ կացարանները ունեցել են կլորացված անկյուններով ուղղանկյուն հատակաձև: Նմանօրինակ երկու կառույցների հարակցման միջոցով ընդարձակվել է բնակարանի մակերեսը, տուներ երկմասանի էր դարձել: Հյուսված կավածեփ պատերի տակ սենյակի ներսում հում աղյուսից շարվել են «նստարաններ», որոնց վրա դրվել են զանազան իրեր: Նույն տներում գտնվել են նաև պաշտամունքային նշանակության հուսման օջախներ և պայտաձև զոհարաններ: Նորշուն-Քեփեհի նույն շերտերում, հյուսված հիմնակամախքով կավածեփ բնակարանների կողքին, բացվել են բառանկյուն հատակաձևով

հում աղյուսից կառուցված տները: Հրապարակումների նախնական ընտելթր թույլ չի տալիս վերջնական երազակացութեան հանգել, սակայն հավանական է, որ տների երկու ձևերի միջև գործառութեան տարբերութուններ չեն եղել: Ինչպես հյուսածո հիմնակմախքով կավածեփ տներ, այդպես էլ՝ աղյուսաշեն կառուցներ միաժամանակ ծառայել են տարբեր նպատակների՝ որպես բնակարան, ընտանեկան պաշտամունքի վայր և արտադրութեան տեղ: Այսպիսով, ճարտարապետական ձևերի տարբերութունները չէին կարող բխել գործառական տարբերութունից: Պետք է ենթադրել, որ էթնիկական խմբերի տեղաշարժերի հետ հարբերդի դաշտի աղյուսաշեն ավանդական ճարտարապետութեան ուղղությամբ տարածվել է կավածեփ հյուսածո հիմնակմախքի շինարարական տեխնիկայի ավանդութիւնը: Վերջինս կարող էր մտնել Հայկական լեռնաշխարհի հյուսիսային և հյուսիսարևմտյան մասերից, ինչպես նաև Արևելյան Վրաստանի տարածքից, որտեղ ներկայացված են այդ տեխնիկայի զարգացման մի քանի փուլեր: Եկվորները օգտագործել են հարբերդի դաշտի պայմաններում առավել հարմարավետ աղյուսաշեն ճարտարապետութեան ժառանգութիւնը, սակայն իրենց համար կառուցած նոր՝ հում աղյուս բնակարանների կողքին պահպանել են նախահայրենիքի բերված հյուսված հիմնակմախքով կավածեփ տան տիպերը:

Հայկական լեռնաշխարհի ճարտարապետութեան պատմութեան համար առաջնակարգ հետաքրքրութիւն է ներկայացնում հյուսված հիմնակմախքով կավածեփ կառուցների տարածման փաստը դադատանա-պարհատիւնյան հնամշակութային ընդհանրութեան գոյութեան զարգացած և ուշ փուլերում: Շինարարական այս տեխնիկան մասնավորապես լավ է ներկայացված ներքին Քարթլիի (Շիրա-Քարթլի) բնակավայրերում (Խիզանաստ-գորտ, Կվալցխելբի, Գուդարբերտկա): Այն տարածված էր նաև Աղստի ստորին հոսանքի շրջանում (Բարա-Գերվիշ՝ Ղազախի մոտ), ինչպես և Կուրի միջին հոսանքի հովտի ավելի ստորին շրջաններում (Մինգիչաուր): Ուշագրավ է Գաղստանի և Չեչեն-Ինգուլեթիայի վաղբունդեղարյան մշակութիւնում նույն եղանակով կառուցված շինութիւնների հանդես գալու փաստը<sup>23</sup>: Հյուսածո հիմնակմախքի կավածեփման շինարարական տեխնիկան միանպատակ խորթ էր Հայկական լեռնաշխարհի վերը ներկայացված վաղ

երկրագործական բոլոր մշակութիւնների ճարտարապետական ավանդութիւններին: Այն կայում է Հայաստանի վաղ բրոնզեդարի ուշ փուլերի ճարտարապետութիւնը Փոքր Ասիայի հյուսիսային շրջանների և Բալկանյան թերակղզու ճարտարապետական հնագույն ավանդութիւնների հետ:

Խարբերը—Մալաթիայի վաղբունդեղարյան մշակութի զարգացման վերջին փուլի սկզբից լայնորեն տարածվում է բնակելի տան մի նոր ձև, որը տարբեր բնակավայրերում աչքի է ընկնում միօրինակութեամբ (տիպորինակութեամբ): Նրա հատկաձևը քառակուսու մոտեցող ուղղանկյունն է, որն իր մեջ ամփոփում է մեկ սենյակ: Սենյակի մակերեսը տարբերակվում է 10-ից մինչև 22—24 քառ.մ: Այդ տների կարևոր հատկանշանքից սինիաձև կլոր կավե օջախն է, որը սովորաբար տեղադրված էր մուտքի հանդիպասց պատի տակ, սենյակի երկայնական առանցքի վրա: Ներկայացվող տիպի մյուս հատկանշանքից պետք է ընդգծել նրա տեղադրման եղանակը բնակավայրի կառուցապատման ընդհանրութեան մեջ: Այդ տները մշտապես դիտվել են իբրև աղատ կանգնեցված առանձնացված ծալվալ, որը օրգանապես չէր մտնում ավելի ընդարձակ համայնքների մեջ: Նման երկայնացութեան կարելի է հանգել վերլուծելով կառուցապատման այն երկու եղանակները, որոնք բնորոշվել են այդ տների առկայութեամբ: Խիտ, բայց ոչ հոծ կառուցապատման պայմաններում դրանք հանդես են եկել իբրև քառանկյուն առանձին ծալվալներ, որոշ դեպքում ունենալով քառանկյուն հատակաձևով փոքրիկ կցակառուցներ: Հոծ կառուցապատման մեջ այդ տները մեծանիկորեն կցվել են մեկը մյուսին, այնպես, որ պատերի արտաքին մակերեսները հաճախ իրար չեն հպվել: Երբ պատի հարթութիւնը կալում էր հարևան տան անկյանը, ներկայացվող տիպը առանձնանում է նաև պատերի զանգվածեղութեամբ: Դրանց հաստութիւնը որոշ կառուցներում հավասարվում է 1,05—1,10 մ-ի, իսկ նվազագույն դեպքում 0,5—0,7 մ-ից պակաս է: Թևփեղիկի պեղումների րնթացքում այս տիպի կառուցներում բացվել են միջհարկային ծածկի մնացորդներ<sup>24</sup>: Այսպիսով, կարելի է ենթադրել, որ ներկայացված այդ յուրահատուկ տիպի տների մի մասը, թերևս, երկհարկանի էր: Դրանք հավասարապես հանդես են եկել Խարբերը—Մալաթիայի գաղտավայրերի մեծ ու փոքր բնակավայրերում՝ Նորուն-թեփեում,

Քեփեզիկում, Խան-Իրբա՛հիմ-Շահում, Գեյիբմհն-  
թեփեում<sup>25</sup> և այլ հուշարձանների այն շերտերում,  
սբոնք թվագրվում են մ.թ.ա. III հազարամյակի  
կեսերով և երկրորդ կեսով:


Առումնասիրվող տարածքի վաղ բրոնզեդարի  
միջին և ուշ փուլերի բնակավայրերը, ինչպես  
նշվեց, կառուցապատման երկու եղանակ են ներ-  
կայացնում: Փոքր բնակավայրերում գոյատևել է  
նեոլիթի և նեոլիթի դարաշրջանի վաղ երկրա-  
գործական բնակավայրերի կառուցապատման ա-  
վանդույթը: Գրանց կառուցապատումը խիտ էր  
(բայց ոչ՝ հոծ) ու ազդեցություն ուներ Շարժումը  
բնակավայրի տարածքում իրադրովել և կա-  
ռույցների միջև մնացած աղատ տարածություն-  
ների միջոցով (Գեյիբմհն-թեփե, Թաշկուն-Մեկիի,  
Խան-Իրբա՛հիմ-Շահ): Խոշոր բնակավայրերի տա-  
րածքում հոծ կառուցապատումը կատարվել է  
փողոցների երկայնքով (Նորշուն-թեփե, Քեփե-  
զիկ): Հատուկ ուշադրության արժանի է փողոց-  
ների ուղղաճի լինելը: Նորշուն-թեփեում բաց-  
ված փողոցի լայնությունը 2—3,5 մ էր, իսկ Քե-  
փեզիկում պեղվել է ուղիղ անկյունով հաստվող  
փողոցներով առաջացած խաչաձև կառույցներ:

Կառուցապատման այս երկու ձևերը արտացո-  
լում են երկրագործական գյուղական համայնը-  
ների բնակավայրերի և ձևավորվող վաղ քաղա-  
քային կենտրոնների միջև առաջացող տարբե-  
րությունը: Քաղաքային մշակույթը հատկանշող  
ճարտարապետական ձևերից էր երկհարկանի  
բնակելի տունը: Երկ-ևուղիների բնակարանի առա-  
ջացումը միշտ չէ, որ կապված էր բազալային  
մշակույթի ճարտարապետության ձևավորման  
հետ: Ասեպյն Հալիական լեռնաշխարհի տարած-  
քում այդ երկու երևույթները թերևս հանդես են  
եկել միևնույն ժամանակաշրջանում:

Հայկական լեռնաշխարհի փայլուն ցեղաբան  
մշակույթի տարածման հետևանքով Սիրիայում և  
Պաղեստինում առաջացած քիրեևթ-կերական  
հնագիտական մշակույթի ճարտարապետությունը  
հայտնի է պակաս չափում: Նրա բնակելի շինու-  
թյունները պեղվել են Քեյ-Ջուղեյզեհում, Թալ-  
նատում, Դհահարում, Չաթու-Հուլուքում (Ան-  
տիոքի դաշտ), Թարարա-Էլ-Աբրադում (Հալեպից  
հյուսիս-արևմուտք), Համայում (Օրոնտեսի ա-  
փին), իսկ պաշտամունքային ճարտարապետու-  
թյան մի հուշարձան բնակելի ճարտարապետու-  
թյան հետ մեկտեղ հայտնաբերվել է Քիրեևթ-Էլ-  
Կերակում (Պաղեստին): Ուշագրավ է Քեյ-Ջու-


ղեյզեհի բնակելի ճարտարապետության շերտա-  
գրությունը<sup>26</sup>: Այդ բուր-քնակավայրի մի քանի  
շինարարական նորիզոններով ներկայացված Ա-  
մուկի մշակութային Հ փուլում (մ.թ.ա. III հա-  
զարամյակի առաջին բաժնի) գեղես հայտնի  
էր հաջորդ՝ Կ փուլում տարածված շենգալիթ-  
յան մշակույթին ազդեցից կարծրաուկ փայլեց-  
ված խեցեղենը, որը քիրեևթ-կերական մշակույ-  
թը բնութագրող կարևորագույն տարրերից է:  
Մակայն Հ փուլի նորիզոններում բացվել է ճար-  
տարապետական ուշադրավ պատկեր՝ կլորավուն  
հատակաձևով՝ իսկ աղյուսից շարված դանգվա-  
ծիկ պատերով կառույցը, որը ամփոփված էր  
բարաշեն գեղանախարհյախ վրա դրված աղյուսե  
պատերով քառանկյուն հատակագծով շինու-  
թյունների միջավայրում: Կլոր կառույցը գո-  
յատեսել է երկու շրջանների ընթացքում, մինչդեռ  
նրա շրջապատում եղած քառանկյուն տները նույն  
ժամանակամիջոցին վերակառուցման են ենթարկ-  
վել: Ճարտարապետական այս պատկերը, ինչպես  
նշվեց, նմանվում է շենգալիթյան մշակույթի  
բնակարանաշինության պարզացած փուլին: Ուշա-  
գրավ է, որ Ամուկի Հ և Կ փուլերի միջև նկատ-  
վում է անընդմեջ վարացում: Ի փուլը, որտեղ  
ձևավորված տեսքով ներկայանում է քիրեևթ-կե-  
րական մշակույթը, նախորդ փուլից սահմանա-  
դատվել է կարծրաուկ խեցեղենի տարածումը:  
Այսպիսով, Քեյ-Ջուղեյզեհի շերտագրությունը հու-  
շում է, որ Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզե-  
դարյան մշակույթի սպիտակույթներ Սիրիայի առ-  
բածքում սկսվել է քիրեևթ-կերական մշակույթի  
տարածմանը անմիջականորեն նախորդող շրջա-  
նում և առաջին հերթին արտացոլվել է ճարտա-  
բույսական տվածըություններում:

Ամուկի Կ փուլում (քիրեևթ-կերական մշա-  
կույթի մ.թ.ա. III հազարամյակի կեսը) Անտիո-  
քի դաշտում տարածվում է ոչ միայն կարծրաուկ  
փայլեցված խեցեղենը, այլև սպաշտամունքային  
օջախի այն տիպը, որը բացահայտվել է Հայկու-  
կան լեռնաշխարհի հյուսիսային մասի շենգա-  
լիթյան մշակույթի ուշ փուլի բնակավայրերում  
(Շիրակավայր, Ախալցխայի Ամիրանիս-գորա):  
Այս փուլի բնակելի ճարտարապետությունը Քեյ-  
Ջուղեյզեհում ներկայացնում է ուղղանկյուն հա-  
տակաձևով երկարավուն տունը, որի երկու հիմ-  
նական, քառակուսի հատակաձևին հարող սենյակ-  
ները սեկաղրված էին հյուսիս—հարավ առանցքով  
(գծապր. ազ. 7 Գ): Ծան մուտքը գտնվում էր




u

0 2 4 u



p

0 5 10 u



q

0 5 10 15 u

Աղ. 5 ա) Ճանրի վեֆե, բնակատեղիի նախակազմը, բ) Քեֆեյի վիջին բրոնզեդարյան շրջանի բնակատեղիի նախակազմը, գ) Ճարչուն վեֆե, արտաբանական կառուցված բնակատեղիի նախակազմը

երկայնական պատի մեջ: Այն բացվում էր հարավային սենյակից: Հյուսիսային սենյակը դեպի դուրս բացվող դուռ չի ունեցել, նրա մուտքը հարավային սենյակից էր: Այդ տան աղյուսաշեն պատերը դրվել են բարև դետնախարբիսի վրա և կառուցվել են մեծ խնամքով: Արտաբին կողմից տունն ունեցել է շինարարական նույն տեխնիկայով կառուցված բառանկյուն հատակաձևով փոքրիկ կցակառույցներ:

Քիրբեթ-կերակյան մշակույթի նմանօրինակ մեկ ուրիշ տուն բացվել է Քաբարա-էլ-Աբրադի պեղումների ընթացքում<sup>27</sup>: Այստեղ 7-րդ շինարարական հորիզոնում պեղվել է ուղղանկյունաձև ձգված մի կառույց, որը միջնորմների միջոցով ուղղանկյուն մի քանի սենյակների էր բաժանվում (գծագր. աղ. 7 բ): Սենյակներից մեկի մուտքը գտնվում էր տան երկայնական պատի մեջ, իսկ հարևան սենյակի հետ այն հաղորդակցվել է միջնորմի մեջ գտնվող դռան միջոցով: Տան աղյուսաշեն պատերը զանգվածեղ էին, երկայնական պատերից մեկի հաստությունը կազմել են երեք շարք, իսկ մյուսինը՝ բարդ շարվածքի երկու շարք աղյուսներ:

Համայնած քիրբեթ-կերակյան մշակույթը ներկայացված է K5—K1 հորիզոններով<sup>28</sup>: Այդ հորիզոններում պեղված բնակարանների գերիշխող տիպը մեկ հիմնական քառանկյուն սենյակից և նրա կողքերին կցված մեկ կամ երկու փոքր սենյակներից կազմված տունն է: Հում աղյուսից էառուցված պատերը կանգնեցվել են անմշակ քարից շարված գեանափարսիսի վրա, հատակները ծեփվել են կավով կամ պատվել են կոպիճով: Տներինց մեկը սալահատակ է ունեցել: Միօրինակ այդ տներից տարբերվում են երկուսը: Մեկը սեղանաձև հատակագծով կլորացված անկյուններով տուն էր, որը միջնորմի միջոցով կառուցված մասի էր բաժանվում: Մյուս կառույցի հատակագիծը առանձնանում է մի կողմից կիսաշրջանաձև տեսքով: Ապսիդային հատակաձևի այց սենյակը միանում էր մեկ ուրիշ՝ քառանկյուն հատակագծով սենյակի: Համայն K3 հորիզոնում բացվել է մի փոքր, որի երկու կողմը կառուցապատված էր բնակելի սենյակով:

Քիրբեթ-էլ-Կերակում (Բեթ-Յերաճ), որը գրանցվում է Գալիլեյան լճի ափին՝ Պաղեստինում, ուսումնասիրվել է այդ հնավայրի անունը կրող հնագիտական մշակույթի 2 մ հաստությունը շերտը: Այդ շերտը, ինչպես և ամբողջությամբ

դիտված քիրբեթ-կերակյան մշակույթը համապատասխանում է Պաղեստինի վաղ բրոնզեդարի 3-րդ փուլին (մ.թ.ա. XXVI—XXIV դդ.)<sup>29</sup>: Քիրբեթ-էլ-Կերակում բացված կառույցների մասշտրոլները ներկայացնում են Հավկական լեռնաշխարհում առաջացած դադատանա-պաղեստինյան հնամշակութային մարզի ճարտարապետության դարգացման այն աստիճանը, որը բնորոշում է ուսումնասիրվող մշակույթի ընդհանրության աշխարհագրական ամենալայն տարածման ժամանակահատվածը:

Քիրբեթ-էլ-Կերակում պեղված բնակելի կառույցների մեծ մասը կառուցվել է կավաշաղախով շարված անմշակ որձաքարերից, առանց հում աղյուսի օգտագործման: Հում աղյուսն կառուցվածքները թեև հայտնի էին, սակայն երկրորդական նշանակություն են ունեցել: Ուղղանկյուն և քառակուսի հատակաձևով սենյակներից կազմվել են բնակելի բազմասենյակ համալիրներ: Սենյակների շափերը տարբեր են՝ 2×2 մ-ից մինչև 7×8 մ: Քառանկյուն սենյակներից բաղկացած բազմասենյակ համալիրների կողքին բացվել է կլոր հատակագծով բնակելի շինություն պատի մի հատված՝ ներսի կողմից պահպանված աղյուսաշեն նստարանով: Սենյակներից մեկը որձաքարերից շարված սալահատակ է ունեցել: Այսպիսով, Քիրբեթ-էլ-Կերակի բնակելի ճարտարապետության հումար բնորոշ է քառանկյուն հատակագծման լայնարձակ դերակառուցությունը, որի կողքին հատուկևստ հանգուս են ելել կլոր հատակաձևով շինությունները: Նման պատկերը, ինչպես նշվեց, բնորոշում է էջմիածնի Մոխրալուրի բնակարանաշինության վարդացման վերջին փուլը, ինչպես նաև Շենգավիթի վերին շինարարական հորիզոնը: Այս համարությունը յուրյց է տալիս տվյալ շերտերի ճարտարապետության բնդհանրությունը և հնարավորություն է ընձևոում ենթադրելու նրանց ժամանակակից լինելը:

Այժմ հնարավոր է նաև բացահայտել շենգավիթյան մշակույթի բնակարանաշինության վարդացման ընդհանուր օրինաչափությունը Հայկական լեռնաշխարհի հյուսիսային և հյուսիսարևմտյան մասում: Այդ տարածքի վաղբրոնզեդարյան հնավայրերը անհամաչափ են պեղված: Դրանք կազմում են տարածական երկու խումբ: Մեկին բնդգրկում է Զավախքը, Քուղոթը, Շիրակն ու Կուգարքը, մյուսը՝ Կարնս դաշտում էրվումի

չրջակայքը: Այդ շրջանների հուշարձաններում դեռևս չի բացահայտվել շինգավիթյան մշակույթի վաղագույն փուլերի ճարտարապետությունը: պեղված կառույցները պատկանում են այդ մշակույթի կարգապահ միջին և ուշ շրջանին:

Փամբակ գետի ձախ ափին, Կիրովական քաղաքում պեղված Քոսի-ճոթեր բնակավայրում բացվել է Ենթագավիթի բնակավայրին ժամանակակից մի կառույց (որը թերևս պետք է վերագրել մ.թ.ա. III հազարամյակի երկրորդ քառորդին): Սա կլոր հատակաձևով բնակելի շինություն էր, որի քարաշեն պատը պահպանվել է մոտ 1 մ բարձրությամբ: Պատի հաստությունը 0,45 մ էր: Հատակ ուղղորդյալ արժանի է այն փաստը, որ պատը շարվել է չոր շարվածքով՝ միջին մեծություն անմշակ քարերից: Ներսից այն սվաղված էր կավով: Կացարանը հավանաբար ունեցել է փայտից և եղեգնից շինված հողածածկ կտոր, պատից հատակը<sup>30</sup>: Մակայի շրջանում գտնվող Օզնի հնավայրում պեղվել է կլոր հատակաձևի մեծ տրամագծի շինության պատի ստորին քարե շարքը<sup>31</sup>: Ենթարարական մի ուղազրավ համալիր պեղվել է Սամշվիղի բնակավայրում<sup>32</sup>: Նրա կենտրոնական մասը զբաղեցնում են կիսաշրջանաձև համակենտրոն քարաշեն երեք գետնախարիսխներ, որոնց հատակաձևը հիշեցնում է Նորարացի, Յանիք-թևփի և Խիզանաանտ-գորայի համակենտրոն շրջանաձև կամ կոր պատերը: Կիսաշրջանների երկու կողմերին կցված էին քառանկյուն հատակաձևով սենյակներ, որոնք բնակելի և տնտեսական նշանակություն են ունեցել: Դժվար է վերակազմել Սամշվիղի կիսաշրջանաձև պատերով կառուցվածքի ճարտարապետական նախնական ձևը, ինչպես և որոշել նրա օգտագործման եղանակը: Կարևոր է, սակայն, այդ բնակավայրում կլորավուն և քառանկյուն հատակաձևերի ներդաշնակ համադրման փաստը: Հետաքրքրություն է ներկայացնում Սամշվիղի բնակավայրում պեղված կառույցների շինարարական տեխնիկան: Կավաշաղախով շարված քարաշեն գետնախարսիսի վրա դրվել է գերանային հիմնավմասիքը, որի վրա ամրացվել է ճյուղերից հյուսված կառուցվածքով կավածեփ պատի զանգվածը: Նմանվող շինարարական տեխնիկան, ինչպես նշվեց, հատկանշական է Սաքյուլ-Փուլուրի 5-րդ շինարարական հորիզոնի համար: Թեթրի-Մղարույում<sup>33</sup> պեղված շենյակ-վիթյան մշակույթի բնակավայրում իրարից ոչ

հեռու բացվել են կլոր և քառանկյուն հատակաձևով բնակելի կառույցներ: Ենթությունների պատերի պահպանված մասը շարված է անմշակ քարերի չոր շարվածքով: Կլոր կացարանի տրամագիծը 6 մ էր, իսկ ուղղանկյուն շինություններից մեկը՝  $4 \times 9$  մ: Ուղղաքիծ պատերի պահպանված հատվածների երկարությունից երևյալ են թագրվում է, որ քառանկյուն տների լայնությունը 5 մ-ից չէր անցնում, մինչդեռ երկարությունը հասնում էր 9—10 մ: Այսպիսով, Թեթրի-Մղարույի բնակավայրի բնակարանշինական պատկերը մի շարք հատկանիշներով նմանվում է Ենթագավիթի 1-ին (վերին) շինարարական հորիզոնին:

Ներկայացված նյութը ցույց է տալիս, որ Թեթր-Ջավախք-Երրակ-Լոռվա տարածքի վաղորոնկեղարյան մինչ օրս հայտնի հնագույն բնակավայրերը, որպիսիք պատկանում են շենյակ-վիթյան մշակույթի վաղագույն փուլին, ներկայացնում են կլոր և քառանկյուն շինությունների համադրությունը: Ենթագավիթյան մշակույթի ուշ փուլերում (մ.թ.ա. III հազարամյակի կեսը և երրորդ քառորդը) կլոր կառույցներն իսպառ վերանում են նաև այս տարածքից: Այդ ժամանակաշրջանի բնակարաններ սևղվել են Երրակավանում, Կանոտաում, Հառիճում (Երրակ), Ախալցխայի Ամիրանիս-գորայում (Ջավախք):

Երրակավանի շենյակ-վիթյան մշակույթի բնակավայրի մնացորդները<sup>34</sup> բացվել են բլրի թեք լանջին: Ենթությունների տեղագրման համար լանջի վրա ստեղծվել են սրահատական դուրսվանդներ: Դարավանդներից մեկի վրա բացվել է ուղղանկյուն հատակաձևով խոշոր մի կառույց, որին կցված էին նույնպես քառանկյուն ավելի փոքր կցակառույցներ: Այդ տան պատերը տմրուջությամբ շարվել են հողաշաղախով ամրացված միջին ու փոքր մեծություն անմշակ քարերով:

Հառիճում գտնվող շենյակ-վիթյան մշակույթի րնդարձակ բնակավայրը զբաղեցրել է երկու ձուլերով եռերկամ լեզվակաձև հրվանդանի մակերեսը<sup>35</sup>: Հրվանդանի երեք աստիճանների իջնում է հարավ-արևելքից դեպի հյուսիս-արևմուտք: Ջղալի թևքություն ունի միայն առաջին (ստորին) աստիճանի մակերեսը, մինչդեռ միջին (երկրորդ) և վերին (երրորդ) աստիճանների թևքությունը փոքր է: Նկատի ունենալով աստիճանների մեծ տարածքը (առաջին աստիճանի մակերեսը 2,5 հա է, երկրորդինը՝ 2,8 հա, երրորդինը՝ 0,5 հա,

խակ բնակավայրի ամրոցը տարածքը շուրջ 6 հա էր), պետք է ենթադրել, որ այստեղ վարդապետական շինարարության համար արհեստական դարպասները ևն ստեղծվել, ուստի բնակավայրի կառուցապատմանը դարավանդային շերտերի և պետք է արտացոլեր հարթավայրային բնակավայրերի կառուցապատման սկզբունքները: Հաղճի պեղումների ընթացքում բացվել են ուղղանկյուն հատանակաձև կառույցների պատերի շերտերի շարձան կտրերը: Ավելի մանրամասն են հրապարակված Ախալցխայի Ամիրանիս-գորայի պեղումների արդյունքները<sup>1</sup>: Ախալցխայից 2,5 կմ դեպի հյուսիս-արևելք գտնվող այդ բնակավայրը դրազեղնում է փոքրիկ սարի դաղաբլու և նրա հարավային ու հարավարևելյան լանջը: Ենթադրվում է, որ բնակավայրի կառուցապատված տարածքը մոտ 3 հեկտար էր: Հաջողվել է բացել միայն մեկ շինարարական հորիզոն (գծագր. աղ. 6 ա): Պեղումները հիմնականում կատարվել են սարալանջին, որի թևերը 10 աստիճան է: Լանջի թևերում է հարավային ու հարավարևելյան փոքրորոշմամբ էր պայմանավորված բնակավայրի կառուցապատման ընդհանուր պատկերը: Շինարարության նպատակով լանջը փորելու միջոցով ստեղծվել են իրար հաջորդող արհեստական դարավանդներ: Յուրաքանչյուր դարավանդի լայնությունը 7—10 մ էր, իսկ բարձրությունը՝ 1—1,35 մ: Կառույցները տեղադրվել են ըստ դարավանդների, որի միջոցով կատարվել է առանձին շինությունների խմբավորում: Մի դարավանդի կառույցները սովորաբար շինվելու մյուս դարավանդի շինություններին: Բացասություն են կազմում VI և VII կառույցները: Առոտիկ դարավանդում կառուցված VII շինությունը սարալանջին հարավ պատը հիմք է ծառայել նրանից վերև ընկած դարավանդում տեղադրված VIII կառույցի երկայնական պատի համար:

Ամիրանիս-գորայում պեղվել են միայն բառանկյուն հատակաձևով շինություններ, որոնք ներկայանում են հատակագծային լուծման և տեղադրման եզանակի երկու տիպերով: Առաջին տիպը միավորում է բավականաչափ լայն (3—4 մ լայնություն) ուղղանկյունաձև՝ 20-ից 54 րոմ մակերևույթ սենյակով, բնակիկ կառույցներ (լուսանկ. աղ. 3 ա), որոնք տեղադրվել են դարավանդի երկարությամբ ողողաշտայու Ախալցխայի անների երկայնական պատերի հատակ են

դարավանդը, ընդլայնական ճեղքի պատը հրապարակում էր սարալանջի կտրվածքին, իսկ մուտքը պետք է գտնվեր ճակատային ընդլայնական պատի մեջ, որոնց մեծ մասը չի պահպանվել: Դատելով ամրոցը լայնությամբ պահպանված XXIII տան հատակաձևից, կարելի է ենթադրել, որ տները այս տիպը ներսում ընդլայնական միջնորմի միջոցով երկու մասի էր բաժանվում: Տան ճակատային մասում գտնվում էր լայն, ոչ խոր նախասենյակը, որի միջոցով ներսում էր մտնել հիմնական սենյակը: Նախասենյակի և հիմնական սենյակի դռները գտնվել են տան երկայնական առանցքում: Կառույցների նման հատակագիծը, ինչպես տեսանք, բնորոշում է Սարյու-Փուլուրի XI—IX հորիզոնների բնակիկ ճարտարապետությունը: Այն խիստ հատկանշական է նաև Կվաթխեղբերի մեքաբոնաձև տները համար:

Երկրորդ տիպը ներկայացված է նեղ, երկար, ուղղանկյունաձև շինություններով (XXV, XXIV, XXVII և այլն), որոնց երկայնական առանցքը համապատասխանում է դարավանդի երկարությունը, ճեղքաբաց այն ուղղահայաց է առաջին տիպի տների առանցքին: Այդ կառույցները լիքևս ծառայել են իրեն պահեստներ կամ էլ՝ գոմեր: Առաջին և երկրորդ տիպի կառույցները, նպվելով մեկը մյուսին կամ առանձնացված դիրքում գտնվելով, հավանաբար, կառվել են զորածառական միասնական համալիրներ: Այսպեսով բնակավայրի կառուցապատումը կազմել է այդ երկու տիպերի շինություններից, որոնց տեղադրման վրա ուղղել են արհեստական դարավանդային պատը և լանջի բնասշարժագրական կողմնորոշման գործոնները:

Առաջին տիպի շինությունների նախասենյակների մուտքերն ուղղվել են դեպի դարավանդի ելքը, որը համապատասխանել է հարավարևելյան կողմին: Մուտքերի հարավարևելյան ուղղությամբ շտայն է առկա, որ Ամիրանիս-գորայի բնակիկ տները կառուցվածքով կերպով ուղղվել են դեպի սար, լուսավոր կողմը: Այս տեսանկյունից օրինաչափ է նաև ամրոցը բնակավայրի տեղադրումը Ամիրանիս-գորայի հարավային լանջին:

Կառույցների այն պատը, որն ուղղված էր դեպի սարալանջը, համընկնում էր դարավանդների սահմանի հետ: Այստեղ պատը հենվում էր լանջի ելքվածքին, խորացված լինելով 1,3—1,5 մ-ով, սարալանջի բնական մակերևույթի ներքև:

Շինությունների բարձրությունը առնվազն 2,5 մ էր, ուստի լանջակողմյան պատը ստորդեղնային հատվածից բացի, անկախված, ունեցել է նաև վերջնական մասը Լանջի թևերի վրայում ուղղահայեղ դրված պատերի լանջակողմյան մասը նույնպես պետք է որոշ շափով հողով ծածկված լիներ: Այսպիսով, Ամիրանիս-գորայի կառույցների մի կողմը խորացված էր նոյի մեջ: Դարավանդների փոքր բարձրության հետևանքով, ստորին շարքում գտնվող սենյակի ծածկերի մակարդակը չէր կարող նամբնենել նրան վերևից նորոգ շարքի կառույցների հասակների մակարդակին: Քանի որ ստորին շարքը կազմող սենյակի տանիքները բարձր էին վերին դարավանդից, պետք է ենթադրվի, որ սենյակի շարքերի միջև, դարավանդների եզրին պահպանվում էին փոքրիկ նրբանցքներ՝ անցուղի թմբ: Տամբը:

Այսպիսով, բնակավայրի կառուցապատումը խիստ էր, բայց հոծ չէր: Նույն շարքում գտնվող գործառական միևնույն նշանակության կառույցները հազվադեպ էին կցվում մեկը մյուսին: Նրանց միջև մնում էին շեղ անցուղիներ: Ե.Շ. Ե.Է. քառակուսիներում պեղված բազմասենյակ երկու համալիրները կազմվել են առաջին և երկրորդ տիպի կառույցների մեխանիկական հարազանման եզանակով: Դարավանդների վրա տեղադրված մնում էին տներից ազատ սարածություններ, որոնք օգտագործվել են տարբեր նպատակների համար: Ներքեից երկրորդ դարավանդում բացվել է տների միջև գտնվող 120 քառ. մ մակերեսով բակը, որը եզերվում էր քարե ցածկապատով: Պեղումների ընթացքում չի նշողվել պարզել՝ ո՞րն էր բնակավայրի կառուցապատման միջուկը, դարավանդներից բացի նրա կառուցապատումը արդյոք նույն ուրիշ կառուցվածք է ունեցել:

Ամիրանիս-գորայի սենյակի պատերն ամբողջությամբ կառուցվել են կավաշաղախով ոչ մեծ շափի անմշակ քարերից: Պատի շարվածքը երկու մասի է բաժանվել: Ստորգետնյա հատվածում պատը լանջի կողմածքն ամրացնող հենապատի նշանակություն է ունեցել: Այդ մասը հաստությունը մոտ 30 սմ է, որը կազմված է քարերի մեկական շարքից: Պատերի վերջնական շուրջ 70 սմ հաստությամբ մասը շարված է կրկնակի շարվածքով: Ներսից պատերը սվաղովել են կավով: Տների մեծ մասը ծածկված էր հողային հարթ տանիքով, որի հիմքն էր կազմում երկա-

նական պատերի միջև ձգված գերանների շարքը: Կառույցների տանիքը կրող կենտրոնական սյան հետքեր չեն հայտնաբերվել (XIII տան կենտրոնում դրված աննյի օգտագործումը իրրև սյան խարիսիս շատ կասկածելի է), ուստի ենթադրվում է, որ սենյակի մեծ մասը միաթուղք ծածկեր ուներ: Յուրահատուկ կառուցվածք է ունեցել է III կառույցի ծածկը: Քառակուսի հասակաձևով 3×3 մ չափի սյու շինվել է պատերի հաստությունը կազմված էր քարերի սենյակից: Սենյակի ներսում, պատերի սակ, սուկունեներում և պատի կենտրոնական մասին կից բացվել են տավախ սալեր, որոնք այնպիսի կարծրով, ծառայել են իրրև սյան խարիսիսներ: Եթև այդ ենթադրությունը համապատասխանում է իրականությանը, սպա պետք է եզրակացնել, որ ծածկի հիմնական ծանրությունը կրել են պատերի կողմին դրված սյուները: Սյուների նմանօրինակ տեղադրությունը բնորոշ է նախկին գլխատան կառուցվածքին:

Շենքավիթյան մշակույթի մյուս բնակավայրերի նմանությամբ Ամիրանիս-գորայի տներում մուտքի հանդիպակաց պատի տակ գտնվում էր սպասքի տեղադրման համար օգտագործված հարթանի կամ «նստարան», իսկ կենտրոնական մասում՝ օջախ, որի գլխավերևում պետք է եղած լիներ լուսածխնելուղային անցք՝ երդիկը: Հորդառատ անձրևների ժամանակ երդիկից կամ այլ անցքերից սենյակը լցվող ջրի հետքման նպատակով սովանված կավից հաստակներ շինվել են աննշան թևերով, որը ուղղված էր հետևի պատից դեպի մուտքը:

Այսպիսով, Ախալցխայի Ամիրանիս-գորան ներկայացնում է հարթավայրային կառուցապատման և լեռնային դարավանդային հոծ կառուցապատման բնակավայրերի միջանկյալ տիպը: Այստեղ առկա են լեռնային բնակավայրի կարևորագույն հատկանիշները՝ արհեստական դարավանդացում շինարարության նպատակով, կառուցապատման կազմակերպումը բոտ դարավանդների, կառույցների հարակցում բնական լանջի կողմածքին: Սակայն չի վերականգնվում լեռնային բնակավայրի մեկ այլ՝ ստորին դարավանդների կառույցների տանիքների նախնական վերին դարավանդների նեո գործառուկան կազմածության կարևոր հատկանիշ: Անցումնային այս տիպի կառուցապատումը դիտեցինք էլաոի բնակավայրում, որը ինչ-որ չափով վաղ է Ամիրանի-

նիստ-գործադրիչ, կնիքաբեռնիս-գործան բնութագրում են նաև ճարտարապետական այլ հատկանիշներ, որոնք ցույց են տալիս այդ բնակավայրի արվարձանական շտրաշտակությունը՝ բազմակողմանի բարձրազանգվածային բնակլիմայական գործոններին (լանջի կողմնորոշման բնատրոփյուն, մուսթերի ուղղվածություն, շատակների թևերություն, կենցաղային գործառական համալիրների կազմակերպում երկու պատի կառուցվածքից, տան ծածկի տեղադրում պատերին կցված սյուների վրա)։

Կարևոր դաշտում՝ էրզրումի շրջակայքում, պեղվել է շենգավիթյան նազդիտական մշակույթի կրեթ բնակավայրը՝ Կարազը, Հյուսիսային (Կարսի) Փուլսերը (բլուրը) և Գյուղեղեղյան<sup>37</sup> Այգ հաշտը՝ ձանկերը հոր շերտերով արևատական բլուր-բնակավայրեր են։ Կարազում և Գյուղեղեղյանում շենգավիթյան մշակույթի շինարարական հորիզոններում բացվել են քարաշեն գեոստախարհիսներով, նրա աղյուսն սյուտերով, ուղղանկյուն հաստակածով շինություններ։ Գյուղեղեղյանի կուռույցները աչքի են ընկնում խոշոր շափերով։ Կարազի 12-րդ և 15-րդ հորիզոններում պեղված շինությունների աղյուսների շափերն են՝  $30 \times 35 \times 12$  սմ։

Շենգավիթյան մշակույթի միջին և ուշ փուլերի զարգացման կարևոր օջախներից էր Հարավային Կովկասի կենտրոնական մասը, հատկապես՝ Ներքին (Շիրակ) Քարթլին։ Այստեղ ուսումնասիրվել են ինչպես անառն-գորա և Կվացխելբեր բնակավայրերը։ Ինչպես անառն-գորայի ստորին շերտերը վաղ են Կվացխելբերի հնագույն հորիզոններից։ Հորիզոնների ամբողջությունը ընդգրկում է այդ տարածքում շենգավիթյան մշակույթի չորս—հինգ հարյուրամյա զարգացման ժամանակաշրջանը։ Այդ երկու բնակավայրերի ճարտարապետությունը մանրամասն ուսումնասիրված է<sup>38</sup>, ուստի նշենք միայն նրա հիմնական գծերը։

Կվացխելբերի C<sub>1</sub> հորիզոնի բնակավայրը հնում ամբողջությամբ բաղկացած էր 35—40 տներից, որոնք տեղադրվել են կանոնավոր շարքերով (գծագր. աղ. 6 դ)։ Այդ շարքերը ուղղված են ինչպես հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք, այդպես էլ՝ հարավ-արևմուտքից դեպի հյուսիս-արևմուտք։ Շարքերի միջև մնում էին ազատ տարածություններ կամ փոքրիկ հրապարակներ։ Ուշագրավ է այդ հորիզոնում պեղված տների կողմնորոշումը։ Պեղված 25 կառույցներից 13-ի մուտք-

բերը ուղղված են դեպի հարավ-արևմուտք, 7-ինը՝ դեպի հյուսիս-արևելք։ Ուսումնասիրողները նկատել են, որ նման կողմնորոշումը պայմանավորված էր գետահովտի այդ մասում տարվա բոլոր եղանակներին փչող արևելյան կամ արևմուտյան քամիներով։ Մուտքերն այնպես են ուղղվել, որպեսզի քամին չներխուժի տունը՝ սանեցնելով սենյակը կամ տարածելով օջախի կայծերը, որը բառ վտանգավոր էր Կվացխելբերի տների փայտաշեն կառուցվածքների առկայության պայմաններում։

Ինչպես անառն-գորայի և Կվացխելբերի շինարարական հորիզոնների հաջորդականությունը ներկայացնում է բնակարանների հատակագծերի փոփոխության ուղադրված պատկերը։ Ինչպես անառն-գորայի ներքևից երկրորդ հորիզոնում բացվել են կլոր և ձվածիր հատակածով կացարաններ, որոնք օղակված էին տան պատի հետ համակենտրոն նեղ շրջանցներով (գծագր. աղ. 6 և)։ Պեղավայրի տարածքում կառույցների ամբողջական հատակածներ չեն բացահայտվել, իսկ եղած տվյալներից կարելի է եզրակացնել, որ շրջանցքը օղակում էր տան պարագծի անվազի կետը (տուն № 15), կամ կցված էր նրան մի կողմից (տուն № 16)։ Համանման շրջանցները, ինչպես տեսանք, բնորոշում են նաև Նորարացի բնակավայրի ճարտարապետությունը։ Ինչպես անառն-գորայի հաջորդ՝ C<sub>3</sub> և C<sub>2</sub> հորիզոններում կլոր կառույցներն իրենց տեղը զիջում են կլորացված անկյուններով ուղղանկյուն տներին, որոնք հանդես են եկել իրեն մեկանյականի ազատ կանգնեցված շինություններ (տուն № 13) կամ ունեցել են տան երկայնական պատին դրսից կցված կցակառույցներ։ Այդ երկու կառույցները թերևս նախորդ՝ D հորիզոնում հայտնի շրջանցների ձևափոխումն են։ Ինչպես անառն-գորայի և Կվացխելբերի C և B շերտերի բոլոր հորիզոններում տարածված էր տան մեկ այլ հատակած, որը միօրինակ վերարտադրվել էր կառույցների բացարձակ մեծամասնությամբ։ Այս «աիպորինակ» տները ուղղանկյունաձև էին, կլորացված անկյուններով։ Ընդլայնական միջնորմի միջոցով տան ճակատային կողմում առանձնացվել է նախասենյակը։ Այսպիսով, տունը բաղկացած էր նախասրահից և հիմնական սենյակից (գծագր. աղ. 6 դ)։ Տան և հիմնական սենյակի մուտքերը գտնվել են երկայնական նույն առանցքում։ Այսպիսով, Կվացխելբերի և Ինչպես անառն-գորայի

«տիպօրինակ» տները մեկգործնաձև հաստակագծով նման են Ախալցխայի Ամիրանիս-գորայի և Սաք-յու-Փուլուրի 11-րդ—9-րդ հորիզոնների կառույցներին, որտեղ մեկգործնի նախասրահի արտաքին ձևակառույցի կողմը բաց է եղել, մինչդեռ հիդրանտանտ-գորայի և Կվաջիխելերի կառույցներում նախասենյակը այդ կողմից չ'ոճ պատ է ունեցել: Այսպիսով, Շիրա-Քարթլիում դիտվում է շենգավիթյան մշակույթի բնակարանաշինական հատկանիշների նույն փոփոխությունը, որը բնորոշ է այդ մշակույթի տարածման մյուս շրջանների ճարտարապետությանը: Այստեղ նույնպես անցում է կատարվել կլոր հատակներից դեպի ուղղանկյունը, որին միայն հաջորդել է մեկգալստնաձև «տիպօրինակ» տների տարածումը:

Հատուկ ուշադրության է արժանի հիդրանտանտ-գորայի և Կվաջիխելերի բնակավայրերի շինարարական տեխնիկան: Տների մեծամասնությունը ունեցել է ուղղահայաց ձողանների շարքի վրա ճյուղերից հյուսված, երկու երևաններից կախված ծեփված հիմնակմախքով պատեր (յուսանկ. սղ. 3 Բ): Բարակ պերաններից և ճշտվերից կազմված հարթ տանիքի կառուցվածքը ծածկվել է հողով: Պատերից բացի, տանիքը հենվում էր հիմնական սենյակում տան երկակող սյան կառուցվածքի վրա տեղադրված քառակող սյան վրա: Սյունը սենյակի կենտրոնում դրված չէր, այլ նրանից մի փոքր տեղաշարժված էր տան հետին պատի ուղղությամբ: Սյունը հանդես է եկել իբրև կառուցվածքի միմիայն կրող տարր՝ նյւս հիմքը ամրացված էր 30—40 սմ տրամագծով փշախմբի մեջ: Կվաջիխելերի C<sub>1</sub> հորիզոնի հրեհնման հետևանքով կառույցների հատակին բացվել են ծածկերի ածխացած մասեր, որոնց պրակարացիան թույլ է տվել վերակազմելու տանիքի կառուցվածքի մանրամասնությունները:

Հյուսված հիմնակմախքով կալածեփ պատերի շինարարական տեխնիկայով կառուցված տների կողքին բացվել են նաև հում աղյուսով կառուցված փոքրաթիվ շինություններ: Միատեսակ՝ 43×17×11 սմ շափի աղյուսները պատրաստվել են կաղապարման միջոցով: Որոշ կառույցներում զուգորդվել են շինարարական երկու տեխնիկաները:

Խարբերդ-Մալաթիայի շրջանի վաղբրոնզեդարյան բնակավայրերում բացված՝ հյուսված հիմնակմախքով կալածեփ պատերով վերոհիշյալ

տները առավելապես նման են հիդրանտանտ-գորայի C<sub>2</sub> հորիզոնի կառուցվածքներին:

Հայկական լեռնաշխարհի ճարտարապետության պատմության ստանկույնից մեծ նւտաբրբուրյուն են ներկայացնում Կվաջիխելերի՝ մեկգործնաձև տները: Բնակարանի այդ ձևը Հարավային Կովկասում թերևս տարածվել է Հյուսիսային Բալկաններից մ.թ.ա. III հազարամյակի երկրորդ քառորդում, էթնիկական տեղաշարժերի հետ միասին<sup>39</sup>:

Կլոր և քառանկյուն հատակաձևերի փոփոխությունը վկայված է նաև Դաղթառանի վաղբրոնզեդարյան բնակավայրերում, որտեղ ներկայացնում են շենգավիթյան մշակույթի տեղայնական տարբերակը: Սակայն այդ փոփոխությունների ժամանակագրությունը ճշտված չէ<sup>40</sup>:

Այսպիսով, դադստանա-պաղեստինյան հնամշակութային մարզի և հատկապես՝ շենգավիթյան հնագիտական մշակույթի բնակավայրերի և բնակարանաշինության ուսումնասիրությունը ուշագրավ պատկեր է ներկայացնում: Զարգանալով նեոլիթ-էնեոլիթյան մշակույթների ճարտարապետական ավանդույթների հիմքի վրա, շենգավիթյան մշակույթի միասնաբանությունը հասել է զարգացման միանգամայն նոր մակարդակի: Ձևավորվել են բնակավայրերի կառուցապատման նոր սկզբունքներ: Առաջացել են բնակարանների նոր ձևեր, որոնց ստեղծումը պայմանավորված էր հասարակական-տնտեսական փոփոխություններով, բնակիչմայական նոր շրջանների յուրացմամբ, էթնիկական տեղաշարժերով:

Շենգավիթյան մշակույթում առաջացել և զարգացել է Հայկական լեռնաշխարհի հնագույն ունումնետալ ճարտարապետությունը, որը հետևանք էր սոցիալական որոշակի գործոնների ազդեցության: Մոնումենտալ առաջին կառույցները վերաբերում են ամրոցաշինությանն ու պաշտամունքային ճարտարապետությանը: Թեև չի բացառվում Հայաստանում նեոլիթյան կամ էնեոլիթյան ժամանակաշրջանների ամրոցաշինական հուշարձանների հայտնաբերումը, սակայն առայսօր հայտնի այդ կարգի մնացորդներ մ.թ.ա III հազարամյակի սկզբից վաղ չեն:

Վաղ բրոնզեդարի հենց սկզբից միջնդարյան ընդհարումների ուժեղացման պատճառով անհրաժեշտություն է դառնում բնակատեղիների ամրացումը: Վաղագույն փուլի՝ մ.թ.ա. 3-րդ հազարամ-

յակի առաջին քառորդի ամբողջինությունը տարբերվում է Հայաստանի ավելի ուշ դարաշրջանների պաշտպանական ճարտարապետությունից: Նիւնակուս Էրեբ Նաակունիչներով, Ա) Պոռտուգալական կառուցչների առաջին նամակագրերը սակցծովում են բնակաշինարարների սեփականատեղական արտգրանից գույքացույցի դիֆերենցացուցիչի պայմաններում: Առաջի առաջինը սյարիսպներ ունեցել են սակավաթիվ խոշոր շենակավայրեր, ոչսակց սկիզբ էին առնում բաշարային բաշարակրթության տարրերը: Այդ ժամանակաշրջանում բնակատեղիների մեծ մասը գեղեսու ամրացված չէր: Բ) Սկզբնական շրջանում բնական ամբույժաններ չեն օգտագործվել: Պարտապատ առաջին բնակավայրերը նարթավայրային էին և հեշտությամբ մատչելի թշնամու նարթակման համար, քանի որ նրա ճանապարհին բնական արդիւններ չեն եղել: Շենակավայրեր մշակույթի վաղ փուլի խոշոր բնակավայրերի բնակիչները իրենց անվտանգությունն ապահովելու համար ապավինել են միայն արհեստական ամբույժաններին՝ պարիսպներին, խանդակներին: Գ) Ամբողջինությունը առաջացել է կալիակերտ ճարտարապետության ավանդույթի սահմաններում: Վաղագույն պարիսպների համար օգտագործված նիւնակուս կամ գրեթե միակ շինանյութը նամ աղյուսն էր: Այդ առանձնահատկությունները սրբաշինարարն բացահայտվում են Մոխրալուրի, Գյուլ-Քեփիի և Յանիք-Քեփիի<sup>15</sup> ամբողջանական կառուցչների բնույթով:

Մոխրալուրի մ.թ.ա. III հազարամյակի սկզբի շինարարական նորիզոններն օդակող 1,8—2 մ հաստությամբ պորիսպր ամբողջությամբ շարված էր նամ աղյուսից: Այստեղ միայն տեղյանեղ շարվածքի ստորին շարքերի ամբողջման համար օգտագործվել է մանր գետաշարը: Գյուլ-Քեփիի K<sub>2</sub> ենթաշերտում պեղված 1,7 մ հաստությամբ վերահիշյալ պարսպի համար նույնպես օգտագործվել է միայն նամ աղյուսը:

Քարը սրբ շարված օգտագործվել է Յանիք-Քեփիի 4-րդ նորիզոնի պարսպի շարվածքում: Ընդարձակ նարթավայրում քնկած այդ բնակավայրը ավելի ժամանակահատվածում նախարարադար էր շուրջ երկու հազար բնակիչներով: Նրա պաշտպանության համար կառուցվել է հսկայածավալ պարիսպը, որը հայտնաբերված մուսրի հատվածում 4,6 մ հաստությամբ է ունեցել: Պարսպի ստորին մասը կազմել է մանր, ու միջին

շափի անմշակ պարարկից կավաշաղխով շարված ցիտնախարիսխը, որը բոլոր կողմերից սվաղված էր կավի հաստ շերտով: Գետնախարիսխի վրա դրված էր հում աղյուսից պատը: Առանձին ուղարկության արժանի են մուսրի մնացորդները: Նրա երկու եզրերում ցանկող վերին պահպանված քարերի շարքերը առաջ են եկած, ուստի ենթադրվում է, որ մուսրը ձածկված էր կեղծ թաղով:

Հին Հայաստանի բնակիչները հայտնագործել են իրենց համար քարի առավելությունը ամբողջանական գործում կավի նկատմամբ: Տյուրին-Քեփիի դաշտավայրային վաղորոնդողարյան բնակավայրի կենտրոնական թաղամասը, թերևս՝ միջնաբերդը, գոտեղված էր անմշակ մանր քարերից կավաշաղխով շարված մոտ 2 մ հաստությամբ պարսպով: Քարը շարվածքի պահպանված բարձրությունը 1,23 մ է<sup>12</sup>, ուստի դժվար է երկակացնել՝ արգյուք պարիսպը ամբողջապես բարաշեն էր, թե՛ բարձր գետնախարիսխ է ունեցել:

Հայկական լեռնաշխարհի բնական պայմաններում մանր ու միջին շափի քարերից կազմված շարվածքները չէին կարող այնպես համապատասխանել ամբողջինության պահանջներին, ինչպես խոշոր սալերից կամ ժայռակերտներից կառուցվածքները: Ուստի պատահական չէ, որ գեղեսու մ.թ.ա. III հազարամյակի առաջին կեսին Շրեշ-Բլուրի (Էջմիածնի մոտ) բնակավայրը ամբողջվել է պարսպով, որից անմշակ հակայական ժայռակերտներ էին մնացել<sup>13</sup>, Թերևս այդ ժայռակերտները գետնախարիսխի են պատկանել և կապակցվելով միմյանց կավաշաղխի միջոցով կրել են հում աղյուսից շարված պատի զանգվածը: Այստեղ, ուղարգումն այն է, որ Շրեշ-Բլուրի պարիսպը նարթավայրային բնակավայր է պաշտպանել, որտեղ անհրաժեշտ շինանյութը խոշոր շափի քարը, թեև անմատչելի չէր, սակայն սովորությամբ նայթալիկի (քարը պետք էր փոխադրել մի քանի կիլոմետր հեռավորությամբ): Հակառակ շինարարության համար անբարենպաստ սյամաններին, այդուհի ապրել է մարդկանց բավականաչափ խոշոր կոլեկտիվ, որը կարող էր իրականացնել հասարակական համապատասխան աշխատանք և լավատեղյակ էր հարթավայրային ամբողջանական ավանդույթին ու դիտակ էր լեռնաշին շինանյութի օգտագործման առավելության: Նմանապես խոշոր ան-

մշակ քարերից կառուցված էր Շենգավիթի բնակավայրի պարսպի<sup>44</sup> գեոնախարհիսր: Այս պարսպը թևե վերակառուցվել է վաղ երկաթեդարում, սակայն նրա հիմնադրումը մ.թ.ա. II հազարամյակի երկրորդ քառորդում, կասկած չի հարուցում:

Շենգավիթյան մշակույթի ուշ փուլում սկսվում է պաշտպանութան համար հարմարավետ բնական ուղիների լրացումն ու հզորացումը: Ընտրեն կառուցված արհեստական ամրություններով: Այդ շրջանում ձևավորվում են ամրոցների տեղադրության և դրան համապատասխանող պաշտպանական համակարգի հիմնական երկու տիպեր, որոնք այնուհետև գոյատևել են Հայաստանում մինչև զարգացած միջնադարը: Ա) Ամրոցի կամ ամրացված բնակավայրի տեղադրումը կիրճերով և գետերով մայրախի շրջանում վրա: Այս դեպքում սովորաբար ձևավորվում հատկ ևն պարսպով (կամ մի քանի պարսպներով), որը դրվել է սարահարթին միանալու տեղում: Բ) Ամրոց-բնակավայրը կառուցվել է անառիկ, բարձր բլրի գագաթին և նրա լանջերին, իսկ պարսպները ողակել են գագաթը, ինչպես նաև կարող էին գտնորդել բլուրը նրա լանջերի տարբեր մակարդակներում: Առաջին տիպի ամրացված բնակավայրերի օրինակ է Գառնին, երկրորդ տիպի՝ Ձյանբերդը (Հարավային Ղոյթոթ)<sup>45</sup>:

Գառնիում շենգավիթյան մշակույթի բնակավայրի պարսպը կառուցվել է գրեթե այն ուրվագծով, որը հետագայում ունեցել է անտիկ ժամանակաշրջանի պարսպը՝ հիմքի մոտ կտրելով սարահարթից և տանկունաձև ձևավորված, որի վրա կառուցված էր բնակավայրը: Գառնիի վաղ բրոնզեդարյան պարսպը շարվել է ժայռից պղծված, առանց կրկնակի մշակման բազալտե հսկայական քարերից, որոնք դրվել են այնպես, որպեսզի յուրաքանչյուր քարի ճեղքված, համեմատաբար հարթ կողմը շարվածքում, ուղղված լինի դեպի դուրս: Այսպիսով, ստացվել է պարսպի միաձուլ մակերևույթ: Քարերի միջև եղած արանքները լցվել են կավաշաղախով:

Ձյանբերդը զբաղեցնում է Արագածի լեռնագանգվածից դաստիղ բարձրագույն կուտաներից մեկը, որն իրենից ներկայացնում է երկաստիճան կոնսոն լավային բլուր: Այն հարստաբանության կողմում իջվածքի միջոցով միանում է լեռնագանգվածին, իսկ հարավային ուղղությամբ կտրուկ

իջնում է դեպի Արարատյան դաշտը: Ձյանբերդի տեղանքը ամբողջությամբ իշխում է Արարատյան գետին հարող Արագածի ողջ նախալեռնային գոտու վրա: Շենգավիթյան մշակույթի ուշ փուլի (մ.թ.ա. III հազարամյակի կեսի) ամրոց-բնակավայրը զբաղեցնում է լավային կոնի երկու աստիճանները և նրա արևմտյան ու հարավային ստորտեսները: Գագաթի հարթակի և նրան օգակող ստորին դարավանդի ընդհանուր մակերեսը մոտ 0,5 հա է, իսկ ամրոցը բնակավայրի տարածքը 1,5—2 հա-ից չի անցնում: Բնակավայրը արշակիրեն երեք մասի է բաժանվում. ա) լուսավառիմտյան և հարավային ստորտեսներն ու լանջերին տեղադրված անպաշտպան շինություններ, բ) ստորին դարավանդը, որի եզրի պարսպով հզոր պարսպ է կառուցվել, գ) բլրի գագաթը, որը նույնպես պարսպապատ էր: Երկու պարսպների հատակագծման սկզբունքներն էլ ենթարկված էր և կրկնօրինակում էր գագաթի և ստորին դարավանդի ուղիների ուրվագծին: Երկու պարսպներն էլ զբոծ են ամրոցի պաշտպանականությունը հզորացնող որմնահեղեղից կամ աշտարակներից: Երկուսն էլ կատարել են ինչպես պաշտպանական կառույցների, այնպես էլ՝ բնակատների դերը:

Ձյանբերդի վաղ բրոնզեդարյան պաշտպանական կառույցների շինարարական տեխնիկայի համար բնորոշ է բազալտե հսկայական քարերի օգտագործումը, որոնք իրենց վրա շեն կրում մշակման որևիցե հետք: Իրենց բնական ձևերով քարերը շարվածքի մեջ հարմարեցված են մեկը մյուսին: Պատերի հաստությունը կազմված է հիմնականում քարերի մեկ, իսկ առանձին հատվածներում՝ երկու շարքերով: Այս դեպքում երկու շարքերի քարերն էլ պատի հաստության մեջ թափանցում են մի շարքից մյուսը և այս եղանակով ազդեցվում են միմյանց: Շարվածքը հավանաբար չոր էր, առանց կապակցող շաղախի: Նկարագրված շարվածքի տեխնիկան, որը դիտվում է հնագույն մի շարք ամրոցներում, իրավամբ կարելի է «կիրկուպյան» անվանել: Այսպիսով, Հայաստանում վկայված են շինարարական այդ եղանակի ձևավորման տարրեր փուլեր, որոնք ընդգրկել են մ.թ.ա. III հազարամյակի առաջին—երրորդ քառորդները: Այնուհետև «կիրկուպյան» տեխնիկան պարբերաբար կիրառվել է Հայաստանում մինչև ուշ բրոնզի դարաշրջանի վեր-

ըր (մ.թ.ա. XIII—XII դարեր), երբ աստիճանաբար փոխարինվել է «միդիս» շարվածքներով և կոպտասառ թարի օգտագործմամբ:

Շենգավիթյան մշակույթի մոնոմենտալ շոգեվոր ճարտարապետությունը ներկայացված է տաճարներով և դամբարանային կառույցներով: Այժմ հայտնի են զաղստանա-պաղեստինյան հնամշակութային ընդհանրության մոնոմենտալ երկու տաճարներ՝ Մոխրաբլուրի (մ.թ.ա. III և ազարսույանի սուաչին քառորդ) և Քիրբեթ-Լի-Կե-րակի (մ.թ.ա. III հազարամյակի կեսը): Մոխրաբլուրի տաճարը<sup>16</sup> շերտագործին նամապատասխանում է մոխրաբլուրյան բնակարանաշինությունների կերպով և երբայց փուլերին: Տաճարը կառուցվել է բնակավայրի կենտրոնական հրապարակում, որտեղից ճյուղավորվել են բնակելի տանձին համալիրներ միավորող փողոցները: Պաշտամունքային այդ համալիրը բաղկացած էր հիմնական երկու մասից՝ հրապարակային ծիսակատարությունների համար կառուցված տաճարական քարաշեն աշտարակից և նրան կից գտնվող ոչ այնքան բարձր ալյուսաշեն կառույցներից: Տաճարի իմաստային, ֆունկցիոնալ և ծավալային միջուկը կազմող բառակր աշտարակը պահպանվել է 4,5 մ բարձրությամբ (գծագր. աղ. 4 դ): Այն կառուցվել է հզոր բարձի վրա, որը ստեղծված կավածեփից է: Աշտարակը ենթարկվել է մի քանի վերակառուցումների, սակայն պահպանել է ուղղանկյուն հատակաձևը, որի երկայնական առանցքը ճշգրիտ համընկնում է արևելք—արևմուտք ուղղությունը: Բարձի վրա անմիջականորեն դրված հնագույն աշտարակի երկարությունը 5,4 մ էր: Այն շարվել է կավաշաղախով կապակցված տուֆի տափակ սալերից: Այնուհետև, երբ կառույցի ստորին երեք շարքերը թաղվել են մշակութային անձող շերտի մեջ, աշտարակը բարձրացվել է ավելի խոշոր քարերով, որոնց մեծ մասը տուֆ է, սակայն հանդիպում է նաև բազալտը: Մոխրաբլուրի տաճարի կառուցողական այդ շրջանում, աշտարակի պատերի տակ, հրապարակի մակերեսին կանգնեցվել են տափակ սալերից ուղղահայաց փորքի կոթողները, որոնց հիմքը ամրացվել է գլաթարով: Կառուցողական երրորդ շրջանում աշտարակը ավելի է ձգվել արևելք—արևմուտք ուղղությամբ: Այդ շրջանում նրա երկարությունը 7,4 մ էր, լայնությունը՝ 5,5 մ, իսկ բարձրությունը՝ 4—5 մ-ից պակաս չէր: Երեք շրջաններում էլ աշտարակի

պագաթին տեղադրված էր հսկայական զոհասեղանը: Սա բազալտե լիթիարի կոթող է 3,9 մ երկարությամբ և 0,7—1 մ լայնությամբ, որի մակերեսին պարզորոշ նկատվում են քարի երկայնական առանցքին գրեթե ուղղահայաց 8—12 սմ լայնությամբ ակոսներ: Դրանք կոթողը փայտե սեպերի և ջրի միջոցով բազալտի ժայռից կտրելու նետերին են: 6—7 տոննա կշռող այդ միակարգ բեկվել է Մոխրաբլուր անվանյալ 8—12 կմ հեռավորությունից: Տաճարի գլուխյան վերջին շրջանում այն օգտագործվել է որպես զոհասեղան և գրված էր հորիզոնական դիրքով աշտարակի լայնական պատին զուգահեռ: Չի բացատրվում, որ սուաչին և երկրորդ կառուցողական շրջաններում կոթողը կանգնեցված էր աշտարակի գագաթին, որի հետ միասին ստեղծում էր 9—10 մ բարձրությամբ ուղղահայաց առանցք՝ նախաքայքի կենտրոնում:

Այսպիսով, Մոխրաբլուրի տաճարի ճարտարապետական ձևերը նպատակաուղղվել են ամբողջ համայնքի կողմից կատարվող բացթյալ ծիսակատարությունների պահպանմանը: Դրանով բացատրվում է աշտարակի արտաքին ծավալի շեշտումը, լինչպես նաև ամբողջ կառույցի ճարտարապետական ձևի միջոցով երկիր-երկինք առանցքը վերարտադրելու բացահայտ միտումը: Արտաքին ծավալների նկատմամբ նախապատվության առաջացումը նշանավորել է վաղ երկբազործական մշակույթների ճարտարապետական մտքի խոշոր թռիչքը: Այդ մշակույթներում պաշտամունքային ճարտարապետությունը ավանդաբար զարգացել է ներքին ծավալի ձևափոխման ճանապարհով, որը վկայված է նեոլիթի և էնեոլիթի դարաշրջանների բազմաթիվ սրբարաններից: Նույն ավանդույթին հետևել են Քիրբեթ-Կերակի տաճարի կառուցողները<sup>17</sup>:

Այդ տաճարի ճարտարապետական ձևը արդյունք է ներքին առանձին ծավալների գումարման ու համադրման: Ուղղանկյուն հատակաձևով կառույցը զբաղեցրել է մոտ 1200 քառ.մ մակերես (30×40 մ): Այն կաղմվել է ներքին բակը եզրափակող բազալտե 10 մ հաստությամբ պատի միջոցով, որի մեջ իրար կողքի գտնվել են կլոր հատակագծով 7—9 մ տրամագծով 9 սենյակներ: Յուրաքանչյուր սենյակը քարաշեն որմնասյուների միջոցով շրտ հավասար մասի է բաժանվել: Ենթադրվում է, որ որմնասյուները պահել են նույն ալյուսից շարված կեղծ գլխերի:

Թեև հետադատողների մեծ մասը դիտում է Քրիստոսի-Վերակենդանացիության շնորհը որպես տաճար, սակայն չի բացառվում նաև նրա շտեմարան լինելը:

Նկարագրված հուշարձաններով չեն սահմանափակվում շենգավիթյան մշակույթին վերաբերող հասարակական շինարարական խոշոր աշխատանքների վիզուոթյունները: Այստեղ անհրաժեշտ է նաև խոսել Յանիթ-Քեֆեի հասարակական շտեմարանը, նորարարի խանդակը, Մոսկովայի մեծածավալ արհեստական ջրամբարը իր պատվարով<sup>48</sup>:

Շենգավիթյան մշակույթի գոյությունը ժամանակաշրջանում առաջանում է Հայկական լեռնաշխարհի ճարտարապետության մինչ այդ անհայտ մի բնագավառ՝ դամբարանային ճարտարապետությունը: Թեև Հայաստանում ուշ էնեոլիթի դարաշրջանում թաղման ծեսը շատ է բարդանում նախորդ ժամանակաշրջանների համեմատությամբ (Քրուչո-Քեֆե), սակայն թաղումը կատարվել է տարբեր շափի հասարակ փոսերում կամ կարասներում, որպիսիք չի կարելի դիտել իբրև ճարտարապետության հուշարձաններ: Կամբարանային ճարտարապետությունը առաջանում է վաղ բրոնզեդարի սկզբից, երբ տարածվում են դամբարանաբլուրային կառույցները և նրանց մեջ ամփոփված քարաշեն բարդ կառուցվածքները: Դամբարանաբլուրները Հայկական լեռնաշխարհի բնական լանդշաֆտի մեջ մարդու կողմից մտնված նոր տարր էին: Շենգավիթյան մշակույթին վերա-

դրելի դամբարանաբլուրներ պեղվել են Թուրքում (XIX և XXIV դամբարանաբլուրներ)<sup>49</sup>, իսկ Արագածի հարավային ստորոտին՝ Մայիսյանում պեղված № 10 դամբարանաբլուրի տակ<sup>50</sup> (մ.թ.ա. III հազարամյակի սկիզբ) հայտնաբերվել է մեծ խնամքով կառուցված քարաշեն դամբարանախուցը, որը բրգաձև ծածկ է ունեցել և դեպի հարավ ուղղված՝ մուտք: Մուտքից ներս կառուցված էին քարաշեն կրկու աստիճաններ: Շատ բարդ կառուցվածք են ունեցել Մայիսյանի դամբարանաբլուրների կրկնորդ խմբի դամբարանաթմբերը (մ.թ.ա. III հազարամյակի կեսը):

Այսպիսով, շենգավիթյան մշակույթի գոյության ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհի ճարտարապետությունը արմատապես կերպարանափոխվում է: Այդ որակական ձևափոխության ստեղծական հիմնական դրոժոնները էր՝ հայրիշխանական կարգերի հաստատում, քաղաքային բազաքակրթության տարրերի ձևավորում, կյանքի ուղղման արդյունքում՝ նոր փուլում սաղմնավորվել են ամբողջ բրոնզեդարին հատուկ ճարտարապետական ավանդույթներ, որոնք սակայն հետագայում աստիճանաբար չեն դարձացել, քանի որ մ.թ.ա. XXIV—XXIII դդ. դադստանա-պարսպային համաշխարհային ընդհանրությունը և նրա միջուկը կազմող շենգավիթյան մշակույթը տրոհվել են: Ուստի պատմական նոր պայմաններում Հայաստանի ճարտարապետությունը նոր ուղիներ է գտնում:

## ԳԼՈՒՒՆ ԵՐՐՈՐԳ


ՀԼԻՅՎԻԿԱՆ ԼԵՌՆԱԾԽԱՐՃԻ ՄԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ  
ՎԱՂԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ  
ԱՌՆՋԻՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԾՐՋԱՆՈՒՄ  
(Մ. ք. ա. ԽԻ հազարամյակի վերջին քառորդից մինչև  
մ.թ.ա. I հազարամյակի սկիզբը)

Մ.թ.ա. III հազարամյակի վերջում և II հազարամյակի սկզբին Հայկական լեռնաշխարհի սոցիալ-տնտեսական և էթնիկական պատմության մեջ եղել են շրջադարձային փոփոխություններ: Մ.թ.ա. III հազարամյակով ավարտվում է Հայաստանի պատմության նախնադարյան-համայնական հասարակարգի ժամանակաշրջանը: III հազարամյակի վերջին քառորդից սկսած լեռնաշխարհի տարբեր մասերում զարգացել են վաղդասակարգային հասարակություններ, ձևավորվել են պետական հնագույն կազմավորումներ: Լեռնաշխարհի պատմական և տնտեսամշակութային զարգացումը այլևս միասնական չէր: Եթե հարավարևմուտքում շարունակվել է երկրագործական բնակավայրերի ելնէջներով զարգացումը (գծագր. աղ. 8 Բ), ապա հյուսիսային և հյուսիս-արևելյան մասերում վաղ բրոնզեդարի վերջին փուլում (մ.թ.ա. III հազարամյակի վերջին քառորդ) և միջին բրոնզեդարում (մ.թ.ա. II հազարամյակի առաջին կես) նստակյաց կյանքի առանձին օջախներ շրջապատված էին զարգացման բարձր մակարդակի հասած կիսաքոչվորական անասնապահական հասարակություններով:



Մ.թ.ա. III հազարամյակի վերջին քառորդում հարբերդի դաշտում գոյություն է ունեցել բաղաբային կյանքի խոշոր կենտրոն՝ Նորշունիևփես: Վաղ բրոնզեդարի երրորդ փուլում (Ճ. րդ շինարարական հորիզոն) նրա միջնաբերդում կառուցվել է պալատական տնտեսության պահես-

տային համալիրը<sup>1</sup>, որը աստիճանաբար ձևավորվել է հում աղյուսից կառուցված շորս խոշոր շենքերից (գծագր. աղ. 8 Գ): Հատկապես ուշագրավ են այդ համալիրի մասնակները: Ամենախոշոր շենքը ունեցել է շորս մասան, որոնց մեջ սեղավորված էր 98 կարաս: Կարասներ եղել են նաև մյուս կառույցներում:

Կուրի և Արաքսի միջագետքում մ.թ.ա. III հազարամյակի վերջին քառորդի և II հազարամյակի առաջին կեսի ճարտարապետությունը ներկայացված է հիմնականում դամբարանային կառույցներով: Հայ ճարտարապետության պատմության տեսանկյունից առավելապես հետաքրքիր են բարդ կառուցվածքի դամբարանախցերի ձևավորման ընթացքը: Միջին բրոնզեդարի առաջին փուլի բեդենյան մշակույթում տարածում են գտել գերանակապ պատերով և ծածկով դամբարանախցերի կառուցվածքները<sup>2</sup>: Միջին բրոնզեդարում, մ.թ.ա. XXI—XIX դարերում, Քոնդքի հրակայածավալ դամբարանաբուրները ամփոփել են մինչև 175 ք.մ. մակերեսով դամբարանարաններ, կրկար ու լայն դամբարանաձևերով (դրոմոսներով), տափակ սալերից շոր շարվածքով կառուցված մինչև 6 մ բարձրությամբ պահպանված պատերով: Այդ դամբարանարանների գերանային ծածկը հենվում էր փայտե սյուների և քարաշեն որմնահենքերի բարդ կառուցվածքի վրա<sup>3</sup>: Միջին բրոնզեդարում և ուշ բրոնզեդարի վաղագույն փուլում (նեբրաոյալ մ.թ.ա. XV դարը) կազմա-






u





q




p



r



s



Աղ. 9 ա) Նոսի բերդի դամբարանը, նառակաղիծ և կարվածք, բ) Նառակաղիծ կարվածք, գ) Ջորադ-բար (Նոսուն-դաշ), զ) Աբխիզի կառավարության դամբարան, ե) Օշական թողրուզի տները, դամբարան, նառակաղիծ և կարվածք:

փորվել է բարաշեն պատերով և սալալին ծաղկով երկարավուն և համեմատաբար նեղ դամբանա-սրահի ձևը, որը հանդես է եկել ծածկերի երեք տարբերակներով. Ա) Ուղղահայաց պատերի վրա հենված սալալին հարթ ծածկու: Այս տարբերակում դամբանասրահի լայնությունը պայմանավորված էր ծածկասալերի երկարությամբ: Բ) «Կեղծ թաղով» ծածկված դամբանասրահներ, որոնք առաջին անգամ մանրամասն նկարագրվել են Թ. Թորամանյանի կողմից և զբաղեցրել են մեջ հայտնի են «օղուզի տներ» անունով: (զծագր. աղ. 9 Ե): Այդ դամբանասրահների տափակ սալերից կառուցված պատերի շարվածքի շարքերը բարձրանալով աստիճանաբար առաջ են գալիս փոքրացնելով ծածկի թռիչքը, որը փակվում է առաստաղի սալերով: Գ) Ուղղահայաց պատերով դամբանասրահներ, որոնք ծածկված են երկթեք ծածկի տարբերակով՝ երկայնական պատերի վերին շարքի վրա իրար դիմաց թեքությամբ դրվել են խոշոր սալերի մեկական շարք, որոնք կախվել են դամբանասրահի ներքին տարածության վրա և միացվել են իրար առաստաղի հորիզոնական դրված սալերի շարքով (զծագր. աղ. 9 Գ):

Մասնագիտական գրականության մեջ երկար ժամանակ տիրել է չհիմնավորված այն կարծիքը, որ «օղուզի տները» կայարաններ են և դրանք վերագրվել են շափազանց վաղ ժամանակաշրջանին: Սակայն վերջին երկու տասնամյակներում կատարված պեղումները հիմնովին մխտել են այդ ենթադրությունը, սպառնալիցով, որ բոլոր «օղուզի տները» առանց բացառության դամբանասրահներ են և դրանց վաղագույն օրինակները ստեղծվել են միջին բրոնզեդարում և մ.թ.ա. II հազարամյակի առաջին կեսից հին չեն: Գրափայտություն է կոտրվել 28 6 դամբարանը և Զավախի մի շարք հուշարձանները:

Միջին բրոնզեդարում դամբարանային մոնումենտալ կառույցներից կազմավորվել են ամբողջական «մեռյալների բաղաներ», որոնց լավագույն օրինակը Զանգեզուրում Մխիթանից մ.թ.ա. 2 կմ դեպի հյուսիս-արևմուտք գտնվող Զորաց-րարն է (Ղոշուն-գաշ): Այդ հուշարձանի վերաբերյալ նույնպես արվել են թյուր ենթադրություններ: Իրականում հուշարձանը իրենից ներկայացնում է հրվանդանաձև բարձունքի վրա զբոսերովույ շենյավիթյան մշակույթի բնակավայր, որի տարածքում միջին բրոնզեդարում առաջացել է

«մեռյալների բաղանը»: Երջակայքից հայտնի են նաև ավելի ուշ ժամանակաշրջանների դամբարաններ: Գրականության մեջ հիշատակվող Զորաց-բարի մեղալիթյան կառույցները առանց բացառության միջին բրոնզեդարյան դամբարաններ են կամ նրանց հետ առնչվող պաշտամունքային շինություններ:

Զորաց-բարի միջին բրոնզեդարյան «մեռյալների բաղան» տարածքը շուրջ 7 հեկտար է: Այն սահմանազատվում է սարահարթից շղթայաձև տեղադրված բազալտե ցից կոթողներով («մենհիրներով»), որոնք սիմվոլիկ ցանկապատ են կազմում: Առանձին «մենհիրներ» բարձրությունը 2,5—3 մ-ի է հասնում: Հուշարձանի ամենաբարձր մասում, կոթողների շարքում նկատվում է բացվածք-մուտքը: Վերջինիս մոտ ցից բարերի մի ուրիշ շարք կաղմում է շրջանագիծ, օղակելով «երկթեք» ծածկով բարաշեն մի հսկա դամբարան: «Մեռյալների բաղան» խոտված է լցված է դամբարաններով, որոնք դասավորված են անցուղիների երկարությամբ և տեղ-տեղ առանձին խմբեր են կաղմում: Բաց վիճակում գտնվող ամենախոշոր դամբանասրահների երկարությունը հասնում է 11—13 մ-ի (զծագր. աղ. 9 Գ): Դամբարանային նշված ձևերի կողքին ուշ բրոնզեդարում տարածում են գտել բարե ծածկ (հասնախակի՝ կեղծ թաղը) կողք գերաճալին կառույցաձևերը (կոտրվել, լճաշեն) (զծագր. աղ. 9 ա, բ) և մույտի մեջ փորված կառույցները (երթիկ) (զծագր. աղ. 9 Գ):

Մ.թ.ա. II հազարամյակի երկրորդ կեսին վերսկսվում է բաղանային բաղանակրթության զարգացումը Հայկական լեռնաշխարհի հյուսիսային և հյուսիս-արևելյան շրջաններում: Այդ մասին վկայում են Արարատյան դաշտի և Նուբե Լեզրոյ նախալեռնային շրջանների մի շարք հուշարձաններ՝ Գվինը, կազարավանը, Մեծամորը, Ալվանը, Մոտկանը, կանչադրուրը, լճաշենը և այլն: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում կազարավանը (տեղական անվանում՝ Գյավուր-դալա), որը գտնվում է Աշտարակի շրջանի նաղրվան գյուղից 1,5 կմ հյուսիս և զբաղեցնում է 2 հեկտար գետի կիրճի արևելյան (ձախ) ափին տարածվող զարավանդը: Քաղաքատեղիի տարածքը մոտ 35—40 հա է, որից 1,5 հա զբաղեցնում է միջնաբերդը: Այն գտնվում է բաղաբառադրի կենտրոնական մասում՝ արևմտյան կողմով նաված Շահավուրի կիրճին, որի եզրով մի պարիսպ է անց-

նում: Մնացած երեք կողմերից միջնաբերդը պաշտպանված է Նոր պարիսպներով, որոնք հարավային կողմում եռաշարք են:

Միջնաբերդի անտիկուսթյունը սպահովել են դեպի բաղնիք ուղղված տասը հսկա աշտարակները, որոնք ունեն ուղղանկյուն հատակագիծ և սլարսպաշղթայի հիմնական զանգվածից դուրս են խոլանում 4—5 մ: Նրանց ճակատային երկարությունը հասնում է մինչև 17 մ: Միջնաբերդի ներսում նկատվում են մոտավորապես ճարտարապետության մնացորդներ:

Քաղաքատեղին ունեցել է կանոնավոր հատակագիծ, ուղիղ փողոցների երկու կողմերում տեղադրված են եղել բնակելի տներ, որոնց ավերակները առանձնապես լավ են նկատվում քաղաքի հյուսիսային կողմում: Ամենախոշոր փողոցների լայնությունը հասնում է 6 մ-ի: Առանձին տեղերում դիտվում են առանձնացող թաղամասեր և փողոցները միավորող հրապարակներ:

Ամբողջությամբ վերցրած՝ քաղաքատեղին ունի հյուսիսից հարավ ձգված տեսք, եղել է պարսպապատ, որի հետքերը պարզորոշ նկատվում են արևելյան և հարավային կողմում:




Ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանի (մ.թ.ա. II հազարամյակի երկրորդ կես և I-ի սկիզբ) բնակարանաշինության մասին եղած տեղեկությունները սահմանափակ են: Կցկուտը տվյալներ հայտնի են լեռնաշխարհի հարավարևմտյան մասի և Պարսկահայրի վերաբերյալ: Այլաբառի տարածքում այդ ժամանակաշրջանի բնակարաններ պեղվել են Մեծամորում, կենինականում, Կարմիր-բերդում, Գեղարքունիքում՝ Լճաշենում<sup>8</sup>, Առավելապես ուսումնասիրված է Կարմիր բլուրի վաղերկաթեդարյան նախաուրարտական բնակավայրը<sup>9</sup>: Պեղվել են նախաուրարտական շինարարական 4 հորիզոններ: Դրանցից 3-ում բացվել են կառույցների ավերակներ: Ուսումնասիրված կառույցները պատկանում էին բնակելի համալիրներին, որոնք բաղկացած էին անկյունավոր հատակագծով մեկ ընդարձակ (մինչև 120 քմ մակերեսով) և 5—6 ավելի փոքր սենյակներից: Տները եղել են վերգետնյա, մի փոքր խորացված արտաքին մակերեսից: Դրանք կառուցվել են նախապարսպատված հարթակների վրա, որոնց մակերեսը հարթեցված էր մանր գլաբարիերի, քարակերտների, խճի և մարուր կավի լիցքով:

Հարթիցման շերտի հաստությունը 6—13 սմ է: Պատերը կառուցվել են միջին և մանր լավի անմշակ քարաբեկորներից ու գլաբարներից՝ կավաշաղախով և ունեցել են 0,75—1,20 մ հաստություն: Բնակելի 1-ին համալիրում բացվել է 2,20 մ հաստությամբ կարճ պատը, որի հաստացումը, հավանաբար, համալիրի ընդարձակման արդյունք է: Հատակները ծեփվել են 2—7 սմ հաստությամբ հարդախառն կավաշաղախով: Հարդակացական տարբեր նշանակության մուտքեր ունեցել են 0,80—3,70 մ լայնությամբ բացվածքներ: Ծածկերի համար օգտագործվել են փայտը, կղեզներ, կավը: Մեծ սենյակներում հայտնաբերվել են օջախներ, ցորենի մեծ հորեր և քարե մարդակերպ կուռքեր: Հավանաբար, պեղված համալիրները մեծ ընտանիքների՝ զերգաստանների բնակարաններ էին: Նախաուրարտական բնակավայրի միջնաբերդը թերևս գտնվել է ուրարտական Թեյշեբախի քաղաքի միջնաբերդի տեղում:

Ուշ բրոնզի և վաղ երկաթի ժամանակաշրջաններում թեև բացահայտվում է բնակավայրերի սոցիալ-տնտեսական արագընթաց շերտավորման պրոցեսը, սակայն դրանց ամենատարածված տիպերը ներկայացնում են ամրոց-բնակավայրերով, որոնք նախկինում սուսումնասիրվել են որպես, այսպես կոչված՝ «կիկուպյան ամրոցներ»<sup>10</sup>:

Հայկական լեռնաշխարհի հնագույն ամրոց-բնակավայրերի թվադրման և ժամանակագրորեն ստույգ տարբերակման խնդիրը նրանց ուսումնասիրության դժվար հարցերից մեկն է: Կառուցված լինելով պաշտպանական տեսակետից հարմար դիրքերում, նրանք դարերի ընթացքում շեղ կորցրել իրենց զերը, ենթարկվել են տարբեր ժամանակների շինարարական վերանորոգումների և արմատական վերակառուցումների: Այժմյան վիճակով նրանք մեծ մասամբ պահպանել են իրենց գոյատևման վերջին շրջանի հատակագծային պատկերը, որը, բաց հնագիտական նյութերի, համապատասխանում է գերազանցապես ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջաններին: Այս ամրոցների դիմագրության են հանդիպել ուրարտացիները՝ Անդրկովկասի տարածքում իրենց տիրապետության ընդարձակման ժամանակ:

Ամրոց-բնակավայրերի տարածման հյուսիսային սահմանն է Խրամի գետի ավազանը, իսկ



0 20 40 60 80M

Աղ. 10. ա) Սառնաղբյուր, Վերի բերդ, բ) Սառնաղբյուր, Իռի-քար ամրոց, գ) Ամրոցների համախորհրդ (սխեմա)

արևելյան սահմանը՝ Գյանջաչալ գետը։ Անճամատ դժվար է եզրագծել նրանց տարածման հարավային և արևմտյան սահմանները։

Ամրոց-բնակատեղիներ համեմատաբար խիտ են տեղաբաշխված Արագած լեռան, Գեղամա և Սևանի լեռնաշղթաների լանջերին, որն արդյունք է այս շրջանների ունեցած կենսական և պաշտպանական շահեկան սլաքամանների։ Գրանք, առաջին հերթին, ընդարձակ արտադրյալներ են և արդյունքների առատությունը։ Հաճախ կարելի է հանդիպել ամրոց-բնակատեղիների, որոնք միջանցից ոչ մեծ հեռավորությամբ և մեկ շարքով կառուցված են լեռան լանջն ի վար իջնող միևնույն գետակի կամ հեղեղատի եզրին։ Մեծ նշանակություն է ունեցել նաև թիկունքում ընկած լեռը, որն ինքնի բնական հզոր պատնեշ է հանդիսացել այդ կողմից թշնամու հարձակման դեմ։

Հայկական լեռնաշխարհի հնագույն ամրոց-բնակատեղիները, որոնց թիվը մի քանի հարյուրի է հասնում, պատկանում են համեմատաբար քիչ ուսումնասիրված հուշարձանների թվին։ Նրանց նվիրված աշխատությունները հիմնականում արդյունք են նախնական, հետախուզական ուսումնասիրությունների և քանակական առումով ընդգրկում են հուշարձանների փոքր մասը։ Ի տարբերություն նույն զարաշրջանի հնագիտական այլ նյութերի, այս կառույցները դեռևս չեն ներգրավվել գիտական շրջանառության մեջ և հազվադեպ են բնարկվել պատմաճարտարապետական խնդիրների առումով, որը շատ կարևոր է հետագա զարաշրջաններում կիրառված ամրաշինական և քաղաքաշինական սկզբունքների ծագումնաբանության համար։

Մասնագիտական գրականության մեջ բնորոշված է այս հուշարձանները անվանել «կիկլոպյան ամրոցներ»։ Անթաղվում է, որ նրանք կառուցված են առանց կապակցող շաղախի, այսինքն, ի սկզբանե եղել են ալյուխին, ինչպիսին են այժմ։ Այս անվանմանը պետք է վերագրել խիստ պայմանական բնույթը։ Կավե շաղախի գործածությունը և հում աղյուսի տեխնիկան, որ ծագում են նոր քարեդարյան ժամանակներից, վաղ բրոնզի և հետագա զարաշրջաններում Հայկական լեռնաշխարհում ունեին համընդհանուր կիրառություն (աղյուսաշեն են վերը նշված Մոխրաբլուրի, Գյուլ-թևիկի վարդունդեղաբլուրյան պարիսպները)։ Ամենայն հավանականությամբ, պարիսպների մեծ մասի երրևմանի աղյուսաշեն վե-

րին մասերը և քարե գետնախորտիսինների ու ամրոցությունների բարից շարված պարիսպների կալվե շաղախը դարերի ընթացքում խոսքո հողմահարվել և քայքայվել են։ Սա չի նշանակում, իհարկե, որ ամենեին չեն եղել շուր «կիկլոպյան» շարվածքներ։ Այդպիսի են եղել Եռուզնուպետ սրահատական կամ բնական պարավանդների եզրով կառուցված հենուպատերը, որոնք շարված են խոշոր ու տևե ժառանգեկոներով և հիշեցնում են արապերից։ Այդպես են կառուցված Հոտմի, և մասամբ Սառնաղբյուրի վերի և Թոփբար ամրոցները, որոնցից վերջին երկուսը այլ ամրոցների թվում կենդանացվեն ստորև։

Հայկական հողմաշրջանի Մատնաղբյուր գյուղի տարածքում գտնվում են շուր ամրոց-բնակատեղի, որոնք պատկանելով բրոնզի և վաղ երկաթի զարաշրջանների տարբեր ժամանակահատվածների, բնորոշ օրինակներ են նույն շրջանների այլ հուշարձանների թվում։ Այս հուշարձանները համեմատաբար լավ են պահպանված և ունեն մեկ կամ երկու հնագիտական մշակութային շերտ, որը, ի տարբերություն բազմաշերտ հուշարձանների, պարզեցնում է ամրոցի գոյատևման ժամանակը որոշելու հարցը։ Հուշարձանների միմյանց մոտ գտնվելու հանգամանք բացառում է նրանց՝ համեմատական վերլուծության ժամանակ տեղայնական առանձնահատկություններին վերագրելը, որոնք պարզորոշ գրանցվում են տարածքային տարբեր շրջանների համամասնակյա հուշարձանների համադրման ժամանակ։ Այս ամենը թույլ են տալիս ստորև ներկայացվող հուշարձաններում դիտելու ամրաշինական ձևերի զարադրման որոշակի միտումներ ժամանակի ընթացքում, որ սկզբունքորեն ընդհանրական կարելի է համարել Հայկական լեռնաշխարհի հնագույն ամրոցների համար։

Վեյի բերդ կամ Ղալախի կոչվող ամրոցը գտնվում է գյուղի արևմտյան կողմում, մոտ 1 կմ հեռավորությամբ, սարահարթի հրվանդանաձև էլուտտի վրա (գծագր. աղ. 10 ա)։ Բարձունքի հարթ գաղաթը, որ գրավում է մոտ քառորդ հեկտար տարածություն, եզրագծված է պաշտպանական սլաքապուր։ Վերջինիս արևմտյան հատվածը հատակադժում ունի ներկվածք՝ մուտքի բացվածքի համար, պաշտպանական առումով հարմար, ոչ ճակատային դիրքորոշում ստեղծելու նպատակով։ Պարսպի ներսում նկատվում են ուղղանկյուն հատակադժով կառույցների հետքեր,

իսկ հրվանդանի արևելյան ծայրին կանգնեցված է մենհիր: Հրվանդանի լանջերին, հիմնական պարսպին մոտավորապես դուգանո, պահպանվել են երկու, իսկ մի հատվածում՝ երեք այլ պարսպներ, որոնք ստեղծելով արհեստական դարավանդներ, այս հատվածում աղևնաձև շրջափակում են կենտրոնական ամրությունը: Եթե հիմնական պարսպը կառուցված է կոպիտ մշակված բարերով, ապա դարավանդների նեոստուպարիսպները շարված են բոլորովին անմշակ, խոշոր ժայռաբեկորներով, նման են հսկա քարակույտերի, որոնք տեղ-տեղ հասնում են մինչև 2,5 մ բարձրության: Հատակագծում բոլոր պարսպներն ունեն անկանոն կորածև հատակագիծ՝ հարմարեցված բարձունքի ռելիեֆի պայմաններին: Պարիսպներից դուրս ամրոցը ունեցել է նաև բնակելի կառուցապատում, որից գետնի մակերեսին պահպանվել են աննշան մնացորդներ և վերգետնյա հնագիտական հարուստ նյութ: Ելնելով վերջինից, նկատի ունենալով նաև ամրոցի պարզունակ հատակագծային ձևերը և շինարարական տեխնիկան, հուշարձանի հիմնադրումը կարելի է վերագրել մ.թ.ա. III հազարամյակի կեսերին, որ վերակառուցված է բնակեցված է եղել նաև ուշ բրոնզի ժամանակաշրջանում: Այդ են վկայում նաև ներքին ուղղանկյուն կառույցները և պարսպը՝ ամրոցի մուտքի հատվածում:

Վերի բերդից դեպի արևմուտք, կես կիլոմետր հեռավորության վրա, սարահարթի վրա բարձրանում է մի այլ բլուր, որի վրա կառուցված է Քոփ-Լուր կոչվող փոքրիկ ամրոցը (գծագր. աղ. 10, բ): Բլրի ժայռոտ գագաթը պարուրում է մի պարիսպ, որը անկանոն գծագրությամբ հատակագծով և մեծածավալ, անմշակ քարերի անկանոն շարքով նման է վերի բերդի դարավանդների պարսպ-հենապատերին: Ամրոցի մուտքը, որի երկու կողմերում կանգնեցված են բարե հսկայական երկու դանգված, ուղղված է արևելք՝ դեպի Վերի բերդը: Այստեղ, ի տարբերություն նախորդ ամրոցի, կ'պարսպի ներսում, կ' շրջակայքում չի հայտնաբերվել որևէ հնագիտական վերգետնյա նյութ, որը վկայի բնակատեղիի գոյության մասին: Այս հանդամանքը հիմք է տալիս ենթադրելու, որ Քոփ-բար ամրոցը չի ունեցել առանձին, ինքնուրույն նշանակություն, չի եղել բնակեցված, այլ Վերի բերդի համար հանդիսացել է պաշտպանական պահակակետ: Այդ են


վկայում նաև նրա համեմատաբար փոքր չափերը և սարահարթի նկատմամբ գերիշխող դիրքը, որ շուրջ Վերի բերդը:

Մի այլ փոքր ամրոց, հավանաբար դարձյալ Վերի բերդին ժամանակակից և նրա պահակակետը հանդիսացող, գտնվում է նրանից հյուսիս՝ մոտ 700 մ հեռավորությամբ, նույն սարահարթի մի այլ հրվանդանաձև ելուստի վրա: Այստեղից ննարավոր է հսկել և անհրաժեշտության դեպքում պաշտպանել ձորով դեպի բնակատեղի տանող ճանապարհը: Համարյա լրիվ ավերված այս ամրոցի փոքր չափերը և վերգետնյա հնագիտական նյութի օտակավությունը դարձյալ բացատրում են նրա բնակատեղի լինելու հավանականությունը:

Սառնաղբյուրի վերոհիշյալ երեք ամրոցները դիտելով մի ընդհանուր միասնության մեջ, որի համար հիմք են ծառայում շինարարական տեխնիկայի և հատակագծային սկզբունքների նույնությունը, պաշտպանական տեսակետից նպատակահարմար փոխադարձ դիրքորոշումը և հավանական ֆունկցիոնալ փոխհարաբերությունը, մեր առջև բացվում է քաղաքաշինական և պաշտպանական մի հետաքրքիր համակարգ՝ կենտրոնական ընդարձակ ամրոց-բնակատեղիով և երկու ամրացված պահակակետերով, որոնք տեղադրված են ընդհանուր տարածքի լայն տեսանելիություն ունեցող և առավել խոցելի հատվածներում (գծագր. աղ. 10, ց):

Պաշտպանական այսպիսի համակարգեր կարելի է դիտել բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանների ամրաշինական այլ հուշարձաններում ևս. Հոտոմ դյուղի մոտ գտնվող բնակատեղիում, որի տարածքում գտնվող երեք բլուրներն էլ ամրացված են պարիսպներով, Տեղեր գյուղի հուշարձանում, սրտեղ բարձրադիր կենտրոնական ամրոց-բնակատեղիից ավելի ցածր գտնվող չրվանդանաձև երեք ելուստների վրա տեղադրված են փոքր ամրոց-պահակակետեր, և այլուր:


Ընդհանրապես, հավանական պետք է համարել այս հուշարձանների տարբեր ուսումնասիրողների արտահայտած այն կարծիքը, որ պաշտպանական համագործակցություն է գոյություն ունեցել նաև առանձին ամրոց-բնակատեղիների միջև՝ առավել մեծ մասշտաբներով: Կառուցված լինելով բարձունքների վրա, նրանք հնարավորություն ունեին միմյանց հետ անմիջական կապի



ա



բ



Աղ. 11 ա) Սառնազրյուրի Փոսք բերդ, բ) Սառնազրյուրի Միծ բերդ

և վտանգի զեպքում պայմանական աղղանշանի միջոցով ընդհանուր ուժերով դեմագրավելու թըշնամուն:

Պաշտպանական-ամրաշինական համակարգերը, որոնք ծագումը և առաջին նմուշները տեսնում ենք բննարկվող դարաշրջանում, հետագայում՝ պետականութիւնն պայմաններում, պաշտպանական ճարտարապետութիւնն և շինարարական տեխնիկայի կատարելագործմանը զուգահեռ, ունեցան իրենց զարգացումը և առանձին բաղադրիչների որոշակի ֆունկցիոնալ տարբերակումը:

Շիրջուր ամրոցը գտնվում է Սառնաղբյուր գյուղից հյուսիս, 3,5 կմ հեռավորութիւն վրա, ձորի հյուսիսային կողմում: Ամրոցը երեք կողմից շրջապատված է թեք լանջերով և միայն արևելյան կողմից է հաղորդակցվում սարահարթին: Այս կողմից ևս, հնարավորին չափ դժվարամատչելի դարձնելու համար, ամրոցը սարահարթի հետ միացման պարանոցի նեղ մասում, ժայռերի մեջ, փորված է բավական խոր ու լայն մի խանդակ: Վերջինիս նկատմամբ գերիշխող դիրք է գրավում ամրոցի արևելյան ծայրին կառուցված շինութիւնը, որն ունեցել է նաև պաշտպանական հզոր աշտարակի դեր: Նրա հարավային՝ թեք լանջին կից մասում թողնվել է ամրոցի մուտքը՝ աստիճանաբար նեղացող միջանցքի նմանութիւնով, որը հնարավորութիւն է ստեղծում մտեցող թշնամուն հարվածելու միաժամանակ երեք կողմից: Պարիսպը, որի արտաքին ստորին շարքերն են պահպանվել, հատակադժուռ ունի կլոր, ուղիղֆին խիստ համապատասխան դժադրութիւն և միայն բարձուների հյուսիսարևելյան համեմատաբար փոքր թեքութիւնն ունեցող լանջի կողմից ամրացված է երկու՝ փոքր և մեծ աշտարակներով:

Ամրոցի ներսում պահպանված կացարանները, ինչպես և սրբելյան կառույցի սենյակների պատերն ունեն բնկյուններում կորացված, կամ լրիվ կոր հատակադժուռ Միայն հյուսիսային պարսպի կենտրոնական մասում, նրան կից մի շարքով կառուցված սենյակներն ունեն ուղղադժուռ և մուտավորապես փոխուղղահայաց հատակադժուռի ցանց:


Ըստ հնագիտական հետախուզական ուսումնասիրութիւնների, ամրոցը հիմնադրվել է միջին բրոնզի դարաշրջանում, սակայն կյանքը այստեղ հարատևել է մինչև մ.թ.ա. XI—X դարերը: Նախնական թվագրմամբ միջին բրոնզի դարաշրջանին

են պատկանում նաև լեռնակերտ գյուղի մոտ գտնվող Վերի բերդ և Վարի բերդ ամրոցները, որոնք Շիրջուր ամրոցի հետ որոշակի ընդհանրություններ ունեն պաշտպանական կառույցների հատակագծային լուծումներում:


Փոքր բերդ ամրոցը գտնվում է Սառնաղբյուր գյուղից մոտ 2 կմ դեպի արևելք, երկու՝ մեծ և փոքր ձորերի միացումից առաջացած հրվանդանի վրա (գծագր. աղ. 11, ա): Մեծ ձորի կողմից նա բացարձակապես անմատչելի է, շնորհիվ մոտ 70 մ բարձրութիւնով բարափի և, բնականաբար, այս մասում ամրացված չէ պաշտպանական պարսպով: Հրվանդանի արևմտյան բարձրագիւր մասում կառուցված է միջնաբերդը, իսկ նրանից արևելք, հրվանդանի լայնացող տարածքում՝ ստորին բերդը: Երկուսն էլ եզերված են 3—3,5 մ հաստութիւնով պարիսպներով, որոնք, ի տարբերութիւն նախորդ ամրոցների, ունեն ուրողակի ութթմով, կանոնավոր կառուցված ուղղանկյուն աշտարակներ: Երկու զեպքում էլ մուտքերը թողնված են պարիսպների հարավային՝ քարափին հարող ծայրերում, որ պաշտպանական տեսակետից առավել նպատակահարմար է համարվել: Ամրոցի ներսում պահպանվել են մեծ մասամբ ուղղաձիգ պատերով բնակելի կառույցների հետքեր: Հետախուզական աշխատանքներով հայտնաբերված հնագիտական նյութը միատարր է, և ամրոցը թվագրվում է մ.թ.ա. XI—X դարերով:

Փոքր բերդին մոտավորապես ժամանակակից է (մ.թ.ա. X—IX դդ.): Մեծ բերդը, որ գտնվում է նույն ձորում՝ 1,5 կմ ավելի հյուսիս, սարահարթի վրա, նույն բարափի եզիրին (գծագր. աղ. 11, բ): Ամրոցի մուտքը թողնված է պարսպի կենտրոնական մասում, սարահարթի կողմից, որտեղ և տարածված են Լեղև ամրոցից զուր գտնվող բնակելի կառուցապատումը և բարակցային դամբարանադաշտը: Համեմատելով վերջին երկու ամրոցները, տեսնում ենք նրանց պարիսպների հատակագծային ձևերի սկզբունքային նմանութիւն, որն ընդհանուր է ոչ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանների ոչ միայն Արագածի, այլև Սևանի ավազանի և որոշ այլ շրջանների ամրոցների համար:

Հայկական լեռնաշխարհի համաժամանակյա ամրոց-բնակատեղիներում, ընդհանրապես, պարզորոշ նկատուի են նաև տեղաբնական յուրահատկութիւններ, որոնք դրսևորվում են ինչպես հուշարձանների ընդհանուր հատակագծերի կառուցված-



ա



բ

Աղ. 12 ա) Շամշազիև. Գոզլու ամրոց, բ) Շամշազիև. Մասմալար ամրոց

քում, ախպես էլ առանձին պաշտպանական կառույցներին՝ պարիսպների, մուտքերի հատակազբծային և ծավալատարածական լուծումներում: Այս երևույթն առավել ցայտուն է երևում, երբ վերը ներկայացված հուշարձանները համեմատվում են Հայաստանի հյուսիսարևելյան շրջանների նույնատիպ հուշարձանների հետ, որտեղ պարիսպները գերազանցապես շունեն հատակազծային ուղղափոխ ձևեր և զուրկ են պաշտպանական աշտարակներից:

Ստորև, որպես նմուշ, համառոտակի ներկայացվում է Շամշադինի շրջանի երկու ամրոց-բնակատեղի:

Վուլու ամրոցը գտնվում է Վրդի գյուղից արևելք, 15 կմ հեռավորության վրա, Աղնչի գետի աջ ափին, մի փոքր բլրի վրա, որը հյուսիսարևելյան կողմից սահմանակից է հարթավայրին և նրա նկատմամբ ունի 20—25 մ բարձրություն (գծագր. աղ. 12, ա): Ամրոցը գրավում է բլրի հեռանկյուննաձև հարթ գագաթը և, բացառությամբ հյուսիսարևմտյան կողմի, ունի գագաթը կզրագծող մեկ պարիսպ: Այս, համեմատաբար հարթ կողմում կառուցված են հենապատ-պարիսպներով ամրացված երկու դարավանդ, ուր և բացվում է ամրոցի մուտքը:

Մասնալար ամրոցը գտնվում է Ղրղի գյուղից 3 կմ հյուսիս-արևմուտք, սարահարթի նկատմամբ մոտ 45 մ բարձրություն ունեցող բլրի վրա, որի լանջերը երեք կողմից դառիվայր են և մասամբ պատված ժայռերով (գծագր. աղ. 12, բ): Հյուսիսարևմտյան կողմում, որտեղ լանջի թևությունը փոքր է, տեղադրված է ամրոցի մուտքը: Բլրի լանջերը շլատված են երեք օղակաձև արհեստական դարավանդով՝ հենապատ-պարիսպներով եզերված: Հետաքրքիր և այս շրջանների հուշարձաններին բնորոշ կառուցվածք ունի ամրոցի մուտքը: Բլրի հյուսիսային լանջին դարավանդների պարիսպները մի փոքր շեղվելով մեկը մյուսի նկատմամբ՝ իրենց միջև ստեղծում են զեպի ամրոցի միջուկը տանող զալարապտույտ ճանապարհ, որն ամրոջը երկարությամբ երկկողմանի հարվածի տակ կարող են առնել ամրոցի պաշտպանները:


Նկարագրված երկու ամրոցներն էլ գոյություն են ունեցել մ.թ.ա. II հազարամյակի վերջին և մ.թ.ա. VIII—VI դարերում արդեն եղել են լրբաված:

Չնայած բրոնզի և վաղ երկաթի դարաշրջան-

ների ամրոցների դեռևս անբավարար ուսումնասիրությանը, ննարավոր է ընդհանուր գծերով պատկերել Հայկական լեռնաշխարհում ամրաշինական մտքի, պաշտպանական կառույցների ձևերի զարգացման ընդհանուր նկարագիրը: Այս դեպքում, իհարկե, պետք է նկատի առնել նաև այն, որ հուշարձանների հատակազծային առանձնահատկությունները, արտահայտելով նրանց պարզացման ընդհանուր պատկերը, ինքնին չեն կարող լինել որոշիչ կամ չափանիշ ժամանակագրության որոշման հարցում: Փաստ է տարբեր տիպերի միաժամանակյա գոյությունը, որ արդյունք է տեղայնական ավանդների կարևորության աստիճանի, ֆունկցիոնալ տարբերությունների և այլն:

Հնագույն ամրոց-բնակատեղիների պարիսպները կառուցված են բարձունքի հարթ (կամ հարթեցված) գագաթի կզրագծով, ուղիղ համապատասխան անկանոն կր գծագրությամբ (գծագր. աղ. 13, 1Ա): Շինանյութը պայմանավորված է տեղի ննարավորություններով: Լեռնային շրջաններում պարիսպներն ամրոցողվին կամ մասամբ քարաշեն են՝ կառուցված մեծ և անմշակ ժայռաբեկորներից (Ստանաբլուր գյուղի Վերի բերդ և Քոփ-քար ամրոցները, Հոռոմ գյուղի բնակատեղին), դաշտային շրջաններում աղյուսաշեն են՝ լրիվ կամ քարի գետնախարսխից վեր (Մոխրաբլուր, Յանիք-թեպե): Պարսպի հատակազծի այս ձևը պաշտպանական կառույցների զարգացման շրթնալում բնորոշ պետք է համարել վաղ բրոնզեդարյան ժամանակաշրջանին, չնայած շատ հուշարձաններում ավանդաբար այն գոյատևում է բրոնզի և վաղ երկաթի ողջ դարաշրջաններում:

Ավելի ուշ պարիսպը ստանում է կանոնավոր շարվածքի ձև, հատակազծում որոշ ուղղագծություն կամ երկրաչափական կոր գծագրություն և, օգտագործելով ուղիղ թևաձև հնարավորությունները, արդյունավետ պաշտպանության նպատակով արվում են հատակազծային զիգագաձև կամ աշտարակաձև ելուստներ, որոնց մեջ կարելի է տեսնել պաշտպանական աշտարակի կամ որմնահենցի գաղափարը (Սառնաղբյուր գյուղի Շիշբլուր, Լեռնակերտ գյուղի Վերի բերդ և Վարի բերդ ամրոցները, գծագր. աղ. 13, 1 Բ): Հետագայում այդ ելուստներն ընդունում են ուղղանկյուն կանոնավոր ձևեր, որոշակի համաչափություն և ուրիշ՝ ելնելով ֆունկցիոնալ պաշտպանական և,



Աղ. 13 ԱՂՐՈՑՆԵՐԻ գարիպների սխեմաներ՝ ժուտերի, պատերի ձևեր

Տավանական է, արդեն գեղազիտական նկատառումներին: Պարսպի հատակագծային այս ձևը բնորոշ է ոչ բրոնզի և վաղ Երկաթի ժամանակաշրջանին, սակայն, ինչպես վերը նշվեց, կարելի է նկատել նաև տեղաչնական որոշ յուրահատկություններ: Եթե Սևանի ավազանի ամրոցներում աշտարակները զանգվածային են (գծագր. ազ. 13, 1 Կ), իսկ Արագածոտնում, Արարատյան 1 Շիրակի նաթմավայրերում՝ համեմատաբար փոքր են (գծագր. ազ. 13, 1 Կ), ապա յուրաքանչյուրից շրջաններում այգպիտիք հանդիպում են հագվադեպ:

Ուղղանկյուն աշտարակներով ամրացված և կոր հատակագծով պարսպի ձևը համընդհանուր և լայն տարածում է ունեցել ընդհանրապես Առաջավոր Ասիայի մ.թ.ա. II հազարամյակի Երկրորդ կեսի և I հազարամյակի սկզբի ամբողջինության մեջ (Խաթվուռա, Աշտուր, Սամալ և այլն): Ավելի ուշ պարսպի հատակագիծը դառնում է կանոնավոր ուղղանկյ, փոխուղղահայաց հատումներով (գծագր. ազ. 13, 1 Ե), մի կերևույթ, որի արտահայտիչը Հայկական լեռնաշխարհում վանիթագավորությունն էր: Վերջինիս ամբողջինությանը խարսկվեց տեղական, բրոնզեդարյան ավանդների վրա՝ կազմելով նրա դարգացման հաղորդ օղակը և իր զարգացումն ապրեց Առաջավոր Ասիայի մշակույթի փոխադրեցումից ոլորտում:

Մուտքի պաշտպանական համակարգի ամենախոցելի նստվածք և Ամենաանադիկ ամրոցն անգամ ունի անոձվազն մեկ մուտք՝ դեպի այն տանող ճանապարհով, որից կարող էր օգտվել նաև թշնամին: Հետևաբար, մուտքի կառուցման ժամանակ անհրաժեշտ էր առավելագույն խնամք և նարամտություն՝ ստեղծելու պաշտպանական ուժերի չոր կենտրոնացում և լայն ճակատով բազմակողմանի հարձակոձ ննարավորություն:

Հայկական լեռնաշխարհի և, ընդհանրապես, Առաջավոր Ասիայի ամբողջինական կառույցներում կարելի է տեսնել այս նույն խնդիրների լուծման միմյանցից տարբեր և դարերի ընթացքում զուգահեռաբար զարգացող երկու սկզբունք: Առաջինը մուտքի ճակատային սիմետրիկ տեղադրումն է, որի դեպքում նրա երկու կողմերում կառուցվում են պաշտպանական աշտարակներ կամ մուտքի բացվածքը արվում է մեկ այլպիսի չոր աշտարակի առանցքով: Աշտարակների


կամ որմնասեղերի հավասարաշափ ութմով բաժանված պարսպի միապաղաղ ֆունի վրա մուտքի այսպիսի հորինվածքը նրան հաղորդում է շեշտված վեհություն, հանդիսավորություն, հզորություն: Մոտեցումը կամ ճանապարհն այս դեպքում մուտքի առջև սովորաբար լինում է ճակատային պարսպին ուղղահայաց (գծագր. ազ. 13, 2 Ա—Լ),

Ամրոցի մուտքի կառուցման երկրորդ սկզբունքի դեպքում, որի առաջացումը պետք է վերագրել այն շրջանին, երբ արդեն մշակված էին ռազմագիտական որոշակի փորձ և հմտություն, արդյունավետ պաշտպանության հարցերը լուծվում են ավելի ննարամիտ միջոցներով: Մուտքը տեղադրվում է պարսպի՝ առաջին հայացքից աչքի չընկնող անկյունային մասում, թեք լանջին կամ քարավանի կից, իսկ երբեմն՝ այդ նպատակով պարսպի հատակագիծում արված շրջադարձային հատվածի խորքում: Մուտքի այսպիսի կառուցվածքը հնարավորություն է տալիս սահմանափակել թշնամու գործունեության դաշտը և, հետևաբար, մուտքի առջև նրանց ուժերի կենտրոնացումը, երկու կամ երեք կողմից խաչաձև հարվածի տակ առնել հարձակողներին: Բացի այդ, դեպի ամրոց տանող ճանապարհը մուտքի մոտ անհրաժեշտաբար անցնում է պարսպի որոշակի հատվածին զուգահեռ կամ նրա նկատմամբ փոքր անկյան տակ և միշտ կարող է պաշտպանվել այդ կողմից (գծագր. ազ. 13, 3 Ա—Գ):

Ինչպես մուտքի տեղադրության, այնպես էլ ամբողջ հուշարձանի հատակագծային հորինվածքի ձևավորման հարցում որոշիչ դեր ունեն տեղագրական յուրահատկությունները:

Ամրոցները, ինչպես նշվեց, կառուցված են բարձրադիր և դժվարամատչելի վայրերում, որոնք, ըստ ուկրեինի բնույթի, կարող են դառնալ երեք հիմնական տիպի՝ բլուր, սարահարթ և լեռնային հրվանդան: Այս տիպերից յուրաքանչյուրը կարող է ստեղծել միայն իրեն բնորոշ հատակագծային հորինվածք և քաղաքաշինական բաղադրիչների որոշակի փոխազանավորություն:

Բլուրի վրա կառուցված ամրոցներ: Այս խմբին պատկանող պարզագույն հուշարձաններում (գծագր. ազ. 15, 1—7) ամրոցը գրավում է բլրի միայն զագաթի տարածքը, որն ունի մեծ մասամբ շրջանաձև կամ ձվածիկ եզրագիծ, իսկ պարսպից դուրս գտնվող բնակելի կառուցապատումը, եթե այլպիսին կա, տարածվում է նրա համեմատա-



Աղ. 14 Ամրոցների զաստիարկման սխեմա

բար հարթ լանջերին և ստորոտում: Ընդհանուր հատակագծային այս սկզբունքը, անկախ հուշարձանի բացարձակ չափերից և կառուցողական մանրամասներից, սիմվոլիկ կերպով կարելի է արտահայտել երկու համակենտրոն շրջանների ձևով, որոնցից կենտրոնականը կպատկերի ամբողջը կամ միջնաբերդը, իսկ արտաքինը՝ նրանց շրջապատող բնակիչի թաղամասերը: (Հատա- կազմերի սխեմատիկ կառուցվածքն արտահայտ- տող սիմվոլիկը այս և հաջորդ աղյուսակներում պատկերված են նրանց աջ կողմում):

Աղյուսակում պատկերված ամրոցների հատա- կազմերը սկզբունքային այս ընդհանրության հետ ունեն նաև զգալի տարբերություններ. կան կրրկ- նակի մուտքերով ամրոցներ (Ձիլակ, Վարդա- ձոր—2, գծագր. աղ. 15, Գ, Զ) և կան ամրոցներ, որոնց պարիսպները և, հատկապես, մուտքերը ամրացված են աշտարակաձև ելուստներով կամ որմնահեցերով:

Բլրի վրա կառուցված մեկ պարիսպով հուշար- ձանների բնորոշ օրինակներ են Թոփ-քար և Տուֆաշի ամրոցները, որտեղ բլրի գագաթի եզ- րագծով կառուցված պարիսպներն ընդհատվում են այն մասերում, ուր անմատչելի ժայռերը բնականորեն ապահովում են այդ հատվածի ան- ճրամշտ պաշտպանությունը: Թոփ-քար ամրոցի միակ մուտքը, որ գտնվում է արևելյան կողմում, ճակատային մի պարզ բացվածք է՝ երկու կող- մերում տեղադրված խոշոր ժայռաբեկորներով (գծագր. աղ. 15, Ա): Տուֆաշի ամրոցն ունի երկու մուտք՝ կառուցված նրա հյուսիսարևելյան և հարավարևելյան անկյուններում:

Համեմատաբար բարդ հատակագծային կա- ռուցվածք ունեն այն հուշարձանները, որտեղ պարսպի կամ նենապատի մի երկրորդ շարքով կերպարվում է նաև բլրի լանջի բնական կամ արհեստականորեն ստեղծված դարավանդը (գծա- գր. աղ. 15, Բ—ԺԿ): Միջնաբերդը այս դեպքում զբաղեցնում է ոչ միայն բլրի գագաթի տարածքը, այլև լանջերի վերին հատվածը: Ընդհանուր հա- տակագծի այս պատկերը սիմվոլիկ կերպով կարող ենք ներկայացնել համակենտրոն երեք շրջանների ձևով, որոնք համապատասխանաբար կարտահայտեն միջնաբերդի, դարավանդի և բնա- կիչի թաղամասերի փոխադարձ դասավորությունը:

Աղյուսակում ներկայացված հուշարձաններից առանձնանում է Շամբորի մոտ գտնվող ամրոցը (գծագր. աղ. 15, Ժ), որը, չնայած փոքր

չափերին, ունի շորս մուտք: Սա եղակի երևույթ է՝ թեկզրոված, հավանաբար, մեղ անհայտ ֆունկ- ցիոնալ պահանջներով:

Հուշարձանների այս խմբին ենք դասել նաև Լեռնակերտ գյուղի Վերի բերդ ամրոցը (գծագր. աղ. 15, ԺԳ), որտեղ դարավանդը կառուց- ված է միայն առանձին հատվածներում: Նրա ամրոցականությունը խանցարել են բլրի լանջերի ժայռային ելուստները:


Կան ամրոցներ, որոնք մի քանի շարք դարա- վանդներով զբաղեցնում են բլրի լանջերի զգալի մասը, երբեմն, սամբողջը՝ մինչև ստորսա (զր- ծագր. աղ. 15, ԺԵ—ԺԸ): Այսպիսի հուշարձան- ները հիշեցնում են աստիճանաձև բուրգ, որի յու- րաքանչյուր հատվածը պարագծվում է պարսպով կամ հենապատով: Նրանց հատակագիծը կաղմ- վում է բլրի գծագրությանը համապատասխան մի քանի համակենտրոն շրջաններից, որոնք միմ- յանց նետ հաղորդվում են մուտքերի համախ- բավական բարդ համակարգով:

Հատակագծային այս կառուցվածքն արտա- հայտելու համար սխեմայում ավելացված է ևս մեկ միջանկյալ օղակ, պայմանականորեն պատ- կերելով մեկից ավելի դարավանդներ ևնեցող ամրոցներ:

Այս հուշարձաններում ստորոտից դեպի բլրի գագաթը տանող ճանապարհը անհրաժեշտաբար մի քանի տեղում պետք է հատեն զարավանդ- ները եզերող հենապատերը: Բերինք այս հան- զույցների լուծման միմյանցից տարբեր երկու օրինակ:

Մաղկահովտի ամրոցում (գծագր. աղ. 15, ԺԹ) այս ճանապարհը ձգվում է արևելյան լանջի երկու- րությամբ, նարսպից՝ հյուսիս՝ մոտավորապես նույն անկյան տակ հատելով բլրույն օղակող դա- րավանդները: Գնապարհին իր ողջ երկարությամբ ամրացված է հատուկ նենապատով, որը վերևում միանում է առաջին դարավանդի պարսպին: Ար- դեն ներկայացված Մասմալար ամրոցում (գծագր. աղ. 15, ԺԸ) դարավանդների հենապատերը չեն փակվում և ստեղծում են բլրի գագաթի տանող ոլորապատույտ ճանապարհ:

Ամփոփելով բլրի վրա կառուցված ամրոցների վերաբերյալ ներկայացված նյութը, կարելի է նշել, որ այս դեպքում ուղեհեջը, անկախ ամրոցի բնույթից և չափերից, ստեղծում է հատակագծա- յին համակենտրոն հորինվածք: Այսպիսի ամրոցը սկզբունքորեն նախատեսված է բլրորսձև պաշտ-



Աղ. 15 Ամբոցների գառակարգման սխեմա

պանութեան համար, որտեղ շկան պաշտպանական ուժերի որոշակի կողմնորոշում և նրանց տեղաբաշխման տարածքային տարբերակում:

Ստրատեգիայի վրա կառուցված ամրոցներ: Այս հուշարձաններում որպէս կանոն ամրոցը կառուցված է ձորի կամ կիրճի եզրին, իսկ պարսպից դուրս գտնվող բնակելի կառուցվածքները գրավում են սարահարթի ամրոցին առընթեր տարածությունը (գծագր. աղ. 14): Հուշարձանների հտտակագծային ընդհանուր կառուցվածքը պատկերող սխեմայում այն արտահայտված է համակենտրոն կիսաշրջանների ձևով, որոնց հատող ուղիղ գիծը պայմանականորեն ներկայացնում է սարահարթի եզրը: Հատակագծային ավելի բարդ հորինվածքի դեպքում, ըստ ընդունված սկզբունքի, ավելացվում են պաշտպանական պարիսպների շարքերի բանակն արտահայտող միջանկյալ կիսաշրջաններ:

Դիտելով այդուսակում բերված հատակագծերը, կարելի է նկատել, որ ամրոցների կառուցման համար միշտ ընտրվել են բարահարթերի հրվանդանաձև ելուստավորվող հատվածները: Ամրոցի այսպիսի տեղադրությունը հնարավորություն է տվել գրավել առավելագույն տարածություն և ուղիղ գրավել առավելագույն պարսպի պարսպի նվազագույն երկարություն պայմաններում: Սա ընդհանուր սկզբունք է այս խմբի ամրոցների համար:

Սարահարթերի վրա կառուցված ամրոցները պաշտպանական տեսակետից ունեն այն առավելությունը, որ ձորի կամ կիրճի կողմից մեծ մասամբ անմատչելի են և այդ հատվածում կարիք չունեն պաշտպանական պարսպի: Սակայն այս առավելությունը փոխհատուցվում է այն հանգամանքով, որ սարահարթի կողմից ամրոցի հարթերական բարձրությունը շրջապատի նկատմամբ աննշան է, որ պահանջում է հզոր պաշտպանություն: Ներկայացված հուշարձաններից միայն Աշկլապ ամրոցն է (գծագր. աղ. 14, Բ), որ պարսպապատված է նաև սարահարթի եզրով:

Այս խմբի հուշարձանների տիպական օրինակ է Ստոնադրյուր գյուղի Մեծ բերդի ամրոցը (գծագր. աղ. 14, Գ), որի միակ մուտքը գտնվում է աշտարակներով ամրացված պարսպի միջին մասում: Սակայն ավելի ընդունված էր մուտքը կառուցել սարահարթի եզրին մոտ, ինչպես այդ անունով: Ենթ Յոդամարդ—2 ամրոցի նստակա-


գծում (գծագր. աղ. 14, Ծ): Լամրոցի մուտքի այսպիսի տեղադրությունը պայմանավորված է, իհարկե, պաշտպանական նկատառումներով, քանի որ սարահարթի եզրի առկայությունը նրա մի կողմում նույնպես պաշտպանական պրզելք է, որ սահանափակում է թշնամու հարձակման ճակատը:

Մուտքի հատակագծային այսպիսի լուծում ունի նաև Բանդան—2 ամրոցը (գծագր. աղ. 14, Զ), որ պատկանում է սարահարթի վրա կառուցված և կրկնակի պարիսպ ունեցող ամրոցների թվին: Հուշարձանների այս վերջին խմբում գոյություն ունի պարիսպների հարաբերական դիրքի երկու սկզբունք: Մի դեպքում, որ պատկերված է այս գծագրում, երկրորդ պարիսպը ամբողջովին չի ընդգրկում միջնաբերդը, այլ սկիզբ առնելով առաջինից, ընդլայնում է սարահարթի պարսպապատ տարածությունը միայն մեկ ուղղությամբ: Մյուս դեպքում երկրորդ պարիսպը ավելի մեծ շառավիղով ձգվելով սարահարթի մի եզրից մյուսը, իր մեջ է ընդգրկում միջնաբերդն ամբողջությամբ: Այսպիսի հատակագծով է կառուցված Արծվաբար—1 ամրոցը (գծագր. աղ. 14, Է):

Այս խմբի հուշարձաններից առավել բարդ հատակագծային հորինվածք ունեն Աղթամարի և Լանջաղբյուր ամրոցները (գծագր. աղ. 14, Ը, Թ), որոնք գրավում են մի քանի հեկտար տարածություն: Այստեղ առանձին պարիսպներով ամրացված են և՛ միջնաբերդը, և՛ դարավանդները, և՛ բնակելի թաղամասերն ամբողջությամբ: Լանջաղբյուր ամրոցը, ի տարբերություն մյուսների, պարսպապատ դարավանդ ունի նաև ձորի կողմում, և այդ պատճառով նրա հատակագիծը որոշ չափով հիշեցնում է բլրի վրա կառուցված և հատակագծային բարդ կառուցվածք ունեցող ամրոցները:

Լեռնային հովանդանի վրա կառուցված ամրոցներ: Լեռնային հրվանդանը ստեղծվում է երկու ձորերի կամ հեղեղատների միացման հետևանքով: Առաջին դեպքում այն ունենում է մեծ, իսկ երկրորդ դեպքում՝ փոքր չափեր: Սակայն անկախ նրա գրաված տարածություն մեծությունից, ստացվում է մոտավորապես Լեռնակունսն և հատակագծով մի տարածք, որտեղ ամրոցը զբաղեցնում է նրա ծայրամասը, իսկ բնակելի թաղամասերը տարածվում են հրվանդանի լայն մասում:

Երկրաշտպական նման պատկերի և կարող



ձև. 16 Անբուրձի գոտակարգման սխեմա

է արտահայտվել այս խմբի հուշարձանների հատակագծային ընդհանուր կառուցվածքը պատկերող սխեմայի վրա:

Այս խմբի հուշարձանների հատակագծերը պատկերող պոլյուսակում (գծագր. աղ. 16) առաջին հայացքից անգամ կարելի է նկատել, որ պաշտպանական տեսակետից առավել հզոր են կառուցված զեպի սարահարթին ուղղված պարիսպները, որոնք մեծ մասամբ ամրացված են նաև որմնահենցիքով և զանգվածեղ աշտարակներով: Ինչպես սարահարթի վրա կառուցված ամրոցներում, այս հուշարձաններում ևս նկատվում է որոշակի ձգումով մուտքերը կառուցելու ձորի կամ նեղեղատի կարին: Այսպիսի հուշարձանի պարզ և տիպական օրինակ է Ցողամարզ—I-ը (գծագր. աղ. 16, Գ): Շիրշուր ամրոցում (գծագր. աղ. 16, Ը), որտեղ հրմանգանր սարահարթին կապող պարանոցը ժայռու է և նեղ, այս կողմից պաշտպանությունը ուժեղացնելու նպատակով ժայռի մեջ, պարսպին դուգահեռ, լայնական ուղղությամբ փորված է խրամառ:

Լեռնային հրվանդանի վրա կառուցված ամրոցներում երկրորդ պարիսպը ընդհանրապես իր մեջ է ընդգրկում նրա տարածքի մի նոր հատված՝ սարահարթի կողմում (գծագր. աղ. 16, Բ): Սակայն, Լրբեմն, հրը լանջերի թեքությունը մեծ է. նա շրջանցում է հրվանդանի փայտաթիբ բոլոր կողմերից, առաջին պարսպից սրող հեռավորության վրա և նրան դուգահեռ՝ ստեղծելով օղակաձև զարավանդ (Ուջան, Լուսակերտ, գծագր. աղ. 16, ԺԱ, ԺԲ): Կրկնակի պարսպով հուշարձանների բնորոշ օրինակներ են Բեշաաշենի ամրոցը (Վրաց. ԽՈՂ, գծագր. աղ. 16, Ժ), որն ունի ամրաշինական կառույցների ու, հատկապես,

մուտքերի բարդ և կատարյալ համակարգ, և Լուսակերտի գյուղի Փորը բերդի ամրոցը (գծագր. աղ. 16, Ժ), որտեղ մասամբ պահպանվել են ամրոցի ներքին կառույցների հիմքերը:

Հատակագծային նորինվածքի բազմաթիվ տարբերակներ կարող են ունենալ առավել մեծ ամրոցները և բնակատեղիները՝ լեռնային հրվանդանի ուղիների պայմաններում: Այս կարգի հուշարձաններից նշանավոր է Մոտկան ամրոցը (գծագր. աղ. 16, ԺԶ), որի միջնաբերդն ունի մոտ կես կիլոմետր երկարություն, լայնական միջնապարիսպներով բաժանված ութ հատվածների, լանջերին ունի սլորսլայսլայս մի քանի դարավանդ և բնակատեղիի նախ միասին գրավում է մոտ 40 հա մակերես:

Ներկայացված ամրոցների ընդհանուր հատակագծային հորինվածքը, ինչպես տեսանք, հիմնականում պայմանավորված է ուղիների բնույթով (բլուր, սարահարթ, հրվանդան) և հուշարձանի մեծությամբ կամ կառուցվածքային բարդությամբ, որ պայմանականորեն բաժանված է նույնպես երեք տիպի. պարզ՝ մեկ պարսպով, միջին՝ երկու պարսպով և բարդ՝ երեք և ավելի պարիսպներով:

Այս գործոնների տարբեր համադրություններով են ստեղծվել ամրոցների հատակագծերի բոլոր հնարավոր սկզբունքային տարբերակները, որ բնորոշ են ոչ միայն իրենց առաջացման և նախնական դարաշրջանին, այլև ունենալով բազմաշինական և պաշտպանական սպիտակ ընդամենը, բնույթով պահպանվել և դարպացել են հետագայում՝ վանի թագավորության, անտիկ և միջնադարյան դարաշրջաններում:

**ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ**

**ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՀԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

## ՆՆՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հինարևելյան աշխարհը, որը ժամանակին տարածվում էր Առաջավոր Ասիայից մինչև Խաղաղ օվկիանոսի հեռավոր ափերը, իր կազմում ընդգրկում էր նաև Հայկական բարձրավանդակի երբեմնի հզոր և մշակույթի տեսակետից զարգացած ուրարտական երկիրը: Այդ են վկայում, պատմական հին տարեգրություններից բացի, նաև հնագիտական նորագույն պեղումների հայտնագործությունները, որոնք պարբերաբար կատարվում են Հայկական ԽՍՀ-ում, ինչպես նաև նրա սահմաններից դուրս՝ երբեմնի Ուրարտուի պատմական տարածքում:

Ասորեստանյան տարեգրությունները, որոնք Ուրարտուի պատմության հետազոտության վաղ շրջանի հիմնական, իսկ որոշ դեպքերում նաև միակ աղբյուրներն էին, Ասորեստանից հյուսիս փոխած տարածքներն անվանում էին հավաքական է. ինչ-որ շափով նաև ընդհանրացած ձևով՝ Նաիրի երկիր կամ երկրներ: Նաիրին կազմված էր բազմաթիվ ցեղախմբերի միավորումներից: Այդ երևում է թեկուզ այն փաստից, որ Ասորեստանի Թուկուլթինիուրտա Ա (1243—1221) թագավորի օրոք Նաիրին կարողացավ ոսպմի դաշտ դուրս բերել 43 թագավորների զորքերը:

Այսպիսով Ուրարտուի նախապատմությունը թաղված է խոր անցյալի՝ նաիրի-ուրարտական բազմաթիվ ցեղախմբերի համատեղ զոյակցման վաղնջական ժամանակաշրջանում: Դեռևս մ.թ.ա. II հազարամյակում Նաիրի-Ուրարտուի այդ ցեղախմբերը, իսկ նրանցից հետո նաև Ասորեստանը, պատմական ժամանակաշրջանի որոշ հատվածում, մտնում էին հինարևելյան Միտանիական հզոր թագավորության կազմի մեջ: Միտանին եգիպտական աղբյուրների «Նախարինա» երկիրն էր, իսկ ասորեստանյան սեպագրերի

«Խանիգալուստը» գրավում էր Վերին Միջագետքի տարածքը՝ Խարուր և Բալիխ գետերի հովիտները, իր սահմաններն մայրաքաղաքով:

Նաիրի-ուրարտական ցեղախմբերի ու Ասորեստանի պատմական համատեղ զոյակցումը Միտանիական թագավորության կազմում չէր կարող շանդրադառնալ նրանց մշակույթների միջև գոյություն ունեցող ընդհանուր գծերին: Այդ է պատճառը, որ հետագայում, երբ կազմավորվում են ինքնուրույն ու անկախ ուրարտական և ասորեստանյան պետական միավորումները, նրանց մշակույթների տարբեր ուղարտներում տեսանելի են դառնում որոշակի զուգահեռներ: Մենք մասնավորապես նկատի ունենք քաղաքաշինության, որմնանկարչության և շինարարական արվեստի բնագավառները:

Տվյալ դուրսնների առումով արժանի է ուշադրություն Ա. Խաշտրյանի՝ նույն հարցին վերաբերող հետազոտությունը, որի եզրակացությունները հանդում են նրան, որ Ուրարտուի պատմությունը, որպես աղբյուրին, Խուրի-Միտանի պետության պատմական կյանքի շարունակությունն է, որի համար, ինչպես կարծում ենք, անկա էին օբյեկտիվ հիմքեր<sup>2</sup>:

Նաիրի-Ուրարտուի դարաշրջանում պետական մի այլ միավորում էր Հայաստանը, որը նույնպես իր նշանակալից պատմական դերով դրսևորվեց Առաջավոր Ասիայի այս հատվածում: Դեռևս Սուպպիլուլիումաս Ա թագավորի ժամանակներից լինելով ինթերին ենթակա երկիր, միաժամանակ այն ուղիներ էր փնտրում ազատագրվելու այդ հզորագույն հարևանի կախյալ վիճակից: Հայասան հայերի բնօրրանն էր, ինչպես գրում է Գր. Ղափանցյանը: Նրա կարծիքով, հայասացիները կարողացան հայացնել Վև.

րին նփրատի շրջանում ապրող մի շարք ցեղախմբերի, այդ թվում՝ խեթերին, ինչպես և իրենց՝ ուրարտացիներին<sup>5</sup>։

Սակայն, պատմական տվյալ փոխակերպումների բովում մշակութային արժեքները, մասնավորապես ճարտարապետությունը, չէին կարող անհետ կորցնել դարերով ստեղծված իրենց հարուստ ավանդույթները։ Խեթական ճարտարապետության ավանդները, ամենայն հավանականությամբ, Հայաստան-Ազգրի մշակույթի տարածման ուղիներով իրենց փոխակերպված արտաստությունները գտան ուրարտական շինարարական արվեստում։ Այս առումով ուրարտական ճարտարապետական մշակույթի ակունքներում, որպես կազմավորող ավանդույթներ, առկա են խեթական, խուրի-միտանիական, ասորեստանյան, ինչպես նաև Հայաստան-Ազգրի ճարտարապետական մշակույթների հինարևելյան խոր արմատները։

Սկսած մ.թ.ա. IX դարից նախրիի ցեղախմբերից անջատվում է նրանից ամենախոշորը և կազմավորվում որպես ինքնուրույն ուրարտական պետություն։ Իսկ բուն նախրին, հիշյալ ցեղային միավորման մեջ կորցնելով իր քաղաքական կշիռն ու ազդեցությունը, զրկվում է տարածքի զգալի մասից, փոքրանում և իր անհետացման շրջանում սյարփակվում Խուրուշկիա երկրի սահմաններում, Վանա լճից հարավ՝ Արևելյան Տիգրիսի (Բոհատան) ափերին<sup>6</sup>։

Եվ այսպես, արդեն կազմավորված Ուրարտուն, որի մասին առաջին հիշատակությունը «Ուրուտտարի» անվամբ արված է Սարմանաստր I-ի (մ.թ.ա. 1280—1261 թթ.) սեպագիր արձանագրության մեջ<sup>7</sup>, զրավում էր Վանա լճի հարավարևելյան տարածքները։

Ասորեստանյան ազդյունները, որոնք թևեկցկառուր տեղեկություններ են հաղորդում իրենց հյուսիսային հարևանի մասին, այնուամենայնիվ հուշում են, որ Ուրարտուն, կամ այն ժամանակվա նախրի-Ուրարտուն, ուսզված աստակաբեռնից ներկայացնում է բախական թույլ միավորում, որը հաճախ էր ենթարկվում Ասորեստանին։

Ուրարտուի միավորմանն ու հզորացմանն անուղղակիորեն օժանդակում էին նաև Ասորեստանի բազմաթիվ արշավանքներն այդ երկրի վրա<sup>8</sup>։

Ուրարտական թագավորները հզորության իրենց վերելքի տարիներին կազմակերպում են մի շարք արշավանքներ, որոնցից ուսզվածատարտու-

ղիական տուժումով կարևորագույններն ուղղված էին դեպի հարավ-արևելք՝ Ուրմիա լճի շուրջը, արևմուտք, և դեպի հարավ-արևմուտք՝ հյուսիսային Սիրիա<sup>9</sup>։ Վերջինները նպատակ ունին տիրանալ Սիրիայի երկաթի հանքերին ու մետալուրգիական կենտրոններին<sup>10</sup>։

Արգիշտի Ա-ի և Սարգուրի Բ-ի որոք արդեն բավական հզորացած Ուրարտուն ծրագրում էր, ներթափանցելով թևերից՝ աստիճանաբար շրջապատել Ասորեստանը Ուրարտացիները նախապես զբաղվում են Մանա, Մելիզ ու Կուտուխ երկրները ու հասնում մինչև Բաբելոնի տարածքի Դիալա գետի հովիտը։

Խափանելով Ասորեստանի առաջխաղացումը դեպի հյուսիս, ուրարտական թագավորները սկսում են ընդլայնել իրենց պետության սահմանները, հիմա արդեն, ի հաշիվ Ալազ սրկրի, որը գտնվում էր Արարատյան դաշտավայրում և որը հետագայում նշանակալից դեր խաղաց Ուրարտուի տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքում։ Ազա երկիրը նվաճելու գործում առաջին բալլերը կապված են Մենուա թագավորի անվան հետ։ Իր գահակալության տարիներին նա հասավ Արարատ լեռան հյուսիսային ստորոտները և դուրս եկավ Արաբսի աջ ափը։ Գրավելով այս նոր տարածքները, ուրարտացիք այնտեղ հիմնադրում են իրենց սագամտորատեղիական հենակետերը քաղաք-ամրոցի ձևով, որոնք մինևույն ժամանակ հանդիսանում էին նվաճված նահանգների նաև վարչական կենտրոնները։

Վաղադույն նման կենտրոններից մեկը՝ Մենուախինիին, հիմնադրված է Մենուա թագավորի կողմից՝ Արարս գետի աջ ափին, ժամանակակից Տաշրուրունի շրջակայքում<sup>11</sup>։ Անշուշտ, Մենուալի ուսզմաստրատեղիական հեռատես քաղաքականությունն էր, որ հետագայում սովեց իր ցանկալի արդյունները։ Այսպես, Արգիշտի օրոք (VIII դարի առաջին կես) ուրարտացիք շարժվում են դեպի հյուսիս, անցնելով Արաբսի ձախ ափը, հասնում մինչև Սևանա լիճ ու Արագած լեռան շրջակայքը։ Այս զբաղված տարածքների իրացումը բնթանում էր այնքան արագ, որ միայն Արգիշտիի ժամանակ այստեղ հիմնադրվեցին այնպիսի խոշոր քաղաքներ, ինչպիսիք էին էրևուրունին ու Արգիշտիխինիին։ Ուրարտացիք այստեղ հիմնավորվել էին բավականաչափ երկարատև ու ամուր, մինչև իրենց պետության վերջ-

նական անկումը, այդ ընթացքում արժատուպեն հեղաթնկելով տեղական ցեղերի պատմական ճակատագիրը և աստիճանաբար ու իտրապիս ևն-թարկելով նրանց իրենց մշակութի ազդեցութիւնը:

Արգիշտի Ա-ից Նեոս Արարս դեմից Նյուսիս կատարվող նվաճումները շարունակում էր նրա որդին՝ Սարգուրի Բ-ն, որն այդ ժամանակ արդեն իր ձեռքում էր պահում Միջերկրական ծովի անտարական շիմնական տարանցիկ ճանապարհները, իսկ նրանից Նեոս էլ այդ նույն քաղաքականութիւնը շարունակում էր Արգիշտիի թոռը Ռուսա Ա-ն:

Սակայն, Ռուսա Ա-ի օրոք ուրարտացիները ստիպված էին ճաշակել նաև ռազմական անհաջողություններ մ.թ.ա. 714 թ. Սարգոն Բ-ի հայտնի արշավանքի ժամանակ: Այնուամենայնիվ ուրարտացիք շարունակում էին ամուր պահել իրենց ձեռքում ինչպես Երկրի կենտրոնական մարզերը, այնպես էլ ծայրամասերը: Ավելին, նրանք շարունակում էին բերդաշինական նշանակալից աշխատանքներ ծավալել Երկրի տարբեր վայրերում:

VII դարի (մ.թ.ա.) կեսերին Ռուսա Բ թագավորը Արարատյան դաշտում կառուցեց մի հուսկապ ամրոց-քաղաք՝ Քլշչբախինին, որի հնագիտական ուսումնասիրությունը Ուրարտուի պատմության և մշակութի, այդ թիւում նաև ճարտարապետութան համար շատ կարևոր է:

Մ.թ.ա. VII դ. վերջերին Ուրարտուն, ինչպես նաև Ասորեստանը դրախտին սկսում են թուլանալ ու Երկրուց կրել բարձրացող Մարաստանի ու բարկոնական նոր ու հզորացող սազմութազարկան միավորումից: Եվ, իբրև, կործ ժամանակից Նեոս այդ միավորումը մասնացու հարված հասցրեց Ասորեստանին ու, շնորհիւ նրան օպտութիւն հասնող երկրներն նրա արտասաններ Ուրարտուի ու Մանայի մեծացույն ճիգերին, Ասորեստանը վերջնականապես անհետանում է պատմութիւն սասպանդից: Ուրարտուի Երկրուց անհիմն չէր, քանի որ նրան ես շուտով միճակվեց նույն ճակատագիրը: 590—585 թթ., ըստ Լևոնան-Հատպուտի, Մարաստանի հուճկու հարվածների ներքո կործանվում է Ուրարտուի թագավորութիւնը:

Այդ իրադարձությունները շրջադարձային էին չին արևելքի պատմական կյանքում: Կյուրուսի հիմնադրած, իսկ Նեոագայում Կամրիգեսի ու

Դարնի կողմից ընդարձակված արեմենյանները պետութիւնն իր գերիշխանութիւնը ևնթարկեց շին աշխարհի մի զրայի մասը: Նվաճված Երկրների շարքում էր նաև Հայաստանը, որը պատմական ստպարեզում նոր էր փոխարինել Ուրարտուի ու դեռևս լիովին չէր կազմավորվել որպես ինքնուրույն հզոր պետութիւն:

Ուրարտական երբեմնի հզոր պետութիւնը հինարեւելյան Երկրների շարքում առաջավոր էր նաև իր մշակութիւնով, մասնավորապես ճարտարապետութիւնը: Գրազմապետութիւնն են ան հուշարձանները, որոնք հայտնաբերվել են Երկրի կենտրոնական մասում՝ Վան քաղաքի շրջակայքում, Ռուփրախ-կայնում, Ալթին-Թեփեում, Կայալիդերում, Կեթ-Կայսեում, Արծկեում (Աղշլեազում), ապա էթիունի Երկրում, ինչպես նաև Ուրարտուի արեւելյան մարզերում:

Վերջին տարիների հնագիտական հետազոտությունների նշանակալից արդշունքները դրախտուն ընդարձակեցին մեր պատկերացումները Ուրարտուի արեւելյան մարզերի ճարտարապետական մշակութի մասին: Այստեղ հայտնաբերվեցին մի շարք քաղաքների ու բերդերի մնացորդներ՝ Ռուսա Բ-ի կառուցած նշանակալից Ռուսախինիլիում (Բաստում), Վերախումում, Աւալերդիքեղում, Կայս-Քազարուզում, Դանաթիւյում, Աղար-Քեփեում, բազմաթիվ վիմապոր կառույցներ, որոնք աչրի են բնկում իրենց ճարտարապետութիւնը: չորահատուկ հորինվածքներով:

Արեւելյան մարզերի ճարտարապետական մշակութիւնն իր տաճարային կառույցների հորինվածքների առումով որոշակիորեն առնչում է կենտրոնական մարզերի տաճարների ձևերի հետ, միաժամանակ տարրիկում էթիունի Երկրի տարատական նույն կառույցներից:

Ուրարտական ճարտարապետութիւնը հայտնի կառույցվածքներից ուշագրավ են աշխարհիկ ու պաշտամունքային շէնքերը, բազմաթիվ վիմապոր կառույցները, ստղծան ջրանցիները, թուղներն ու մեծորիւլ կոթողները:

Վերջին տասնամյակում կատարված պեղումները պարզում են այդ կառույցների ձևերը, շէնքերն ու ծովայինները, հորինվածքների ու կառույցվածքային տարրերի բնույթը կողմերը, շինարարական նյութերի յուրահատկութիւնները: Իսկ Արիներեկում հաջողվեց հայտնաբերել նաև մի

շարք ուրարտական տերմինների ճարտարապետական արտահայտությունները, ինչպես, օրինակ, Art; Susi, E-gal, burgana և այլն:

Ուրարտական մշակույթի կարևոր հայտնագործությունները դարձան նաև նրա բարձրարվեստ որմնակարները՝ աշխարհի ու պաշտամունքային բնմաներով, որոնք ընդլայնեցին մշակույթի այդ բնագավառի մասին լեզու պատկերացումները:

Ուրարտուի մշակույթի նեո մեկտեղ, Հայկական լեռնաշխարհում դեռևս անփշրկի ժամանակներից սկսած ծաղկում էր տեղական ղեղերի մշակույթը, որը, եթե դատելու լինենք պեղումներից հայտնաբերված նյութերով, գտնվում էր իր ժամանակի դարգացման բարձր մակարդակին: Տեղական ղեղերի շինարարական տեխնիկային կարելի է հետամուտ լինել մեզալիթյան մշակույթից, որից Հայաստանում պահպանվել են ինչպես առանձին կանգուն կոթողներ, այնպես էլ հուշարձանախմբեր (Ղոշուն-դաշ, Ուղ, Օշական և այլն): Մեզալիթյան այս կոթողներում դրսևոր-

վում են կեղծ թաղի հուսակ պատկերացումներ, զորմենների կատարյալ ձևեր, մոնումենտալ կրոնիկներ: Սակայն, հատկապես բազմազան են պահպանված բնակատեղիք կամ, այսպես կոչված, «բերդչենները», որոնք սովորաբար կառուցվում էին բարձր բլուրների գագաթներին, ժայռոտ ձորերի ավերին կամ այլուր, որտեղ ասյահույժ կարող էր լինել նրանց անտիկոթյունը:

Ուրարտուի ու էթիունի երկրի տեղաբնիկների (որոնք էթնիկական առումով մոտ էին իրար) մշակույթների երկու դար տեղ համագոյակցության պայմաններում պետք է որ ստեղծվեն այդ մշակույթների միաձուլված տարրեր, իսկ ճարտարապետության բնագավառում կատարյալ մի փոխներթափանցում:

Ելնելով այդ համոզմունքից, կարծում ենք, որ ուրարտական ճարտարապետության բազմաթիվ կոթողներում պետք է տեսնել նաև տեղական ծագում ունեցող ձևերի արտահայտություններ:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Ուրարտական քաղաքները, որպես կանոն, փռված էին բարձր բլուրների ստորոտներում, որոնց գագաթներին, շրջապատված հզոր պարիսպներով, վեր էին խոյանում նրանց միջնաբերդները:

Բարձր բլուրները ռազմական արշավանքների ժամանակ միակ հզոր ու հուսալի ապաստարաններն էին հինավուրց բնակավայրերի բնակիչներին: Համար: Միջնաբերդերի իշխող բարձր դիրքը Գրեհեք առաջ փռված հարթավայրերի նկատմամբ նպատակ ուներ տեսողաշտում պահել բուլոր այն ճանապարհները, որոնք տանում էին դեպի տվյալ բնակավայրը: Մյուս կողմից, բլուրների գագաթները պարփակող հզոր պարիսպները բնակավայրերի պաշտպանության նկատման համար նվազագույն չափերի էին հասցրել, քանի որ դրանով համապատասխանորեն կարճացվում էին բերդապարիսպների եզրագծերը, որով առավել ինտենսիվ էր դառնում բերդերի պաշտպանունակությունը:

Բերդերի հետագա հզորացումն արտահայտվում էր մի քանի շարք արտաքին պաշտպանական պարիսպների կառուցումով:




Ք. Քորամանյանի կատարած մի շարք կիրառական բերդերի հետազոտություններից պարզվում է, որ նրանց պարիսպները, հատկով բլուրները տարբեր մակարդակների վրա հորիզոնական ուղղությամբ, միևնույն ժամանակ հասնում էին բլուրների գագաթներից դեպի ստորոտը իջնող սարածրք՝ բլուրների ամբողջ բարձրությամբ ստեղծելով պաշտպանական ինքնուրույն բլուրներ: Մակայն դարրուցման նախնական շրջանում

բնակչությունը ամբողջովին ապավինում էր լոկ պարիսպների անառիկությանը: Այդ կապակցությամբ էլ բլուրների կառուցապատման համակարգում պարիսպները դառնում էին արտաքինապես շեշտված նրա հիմնական տարրը, իսկ բուլոր կենցաղային շինությունները նախատեսվում էին երկրորդ պլանի վրա: Ք. Քորամանյանը որպես նման բնակավայրերի օրինակ բերում է ժամանակագրությունը դժվարությամբ որոշվող, թերևս ուրարտական կամ ավելի վաղ դարաշրջանից Հաջի-Խալիլը, Հոռոմը և մյուսները:

Ձարգացման հետագա փուլին վերաբերող օրինակ կարող են ծառայել Սևանի հյուսիսարևմտյան ափերին, Լճաշեն գյուղի մոտ փռված բերդի մնացորդները: Այստեղ երևում են պաշտպանական հզոր պարիսպների երկու շարք, որոնք շրջապատում են բլուրը, ինչպես նաև անպիսիք, որոնք հասնում են բլուրը շարավիզային ուղղությամբ: Այստեղ, բերդի հորիզվածքում, արդեն տեսանելի է կենտրոնական բակի շեշտված ստեղծումը, սրում նրա շինությունները, կառուցելով սեղաների ծալքերին, անկանոն ձևով կցված են արտաքին պարիսպներին:

Նշված օրինակներն արտահայտում են բլուրների բարձունքների վրա հիմնված բերդերի նախատիպից սկսվող դարգացումը, որը հետագայում շարունակվում է հարթավայրի տարածքներում, ուր է ստեղծվում էին վաղնչական բնակատեղիների նախնական ձևերը:

Քաղաքաշինական նման սկզբունքը օրինականացված չէր Միջագետքում, որ պայմանավորված էր երկրի գերազանցապես հարթավայրային տեղանքով: Դրա մասին է խոսում Միջա-



Աղ. 17 Բաւոստ. բնօրէնը Նառտկայիձ, մուտքի Նառտկայիձ, սրբոնագորգ գոհիձիձի  
ձայիձր

գետքի հազվագյուղ բլուրներից մեկը՝ ԹԼԼ-Ակուրը, որն իր ուղիղ աստղագիտական մեծագույն առավելություններով Կալիսոնի (Նեմրոզ) հուսալի պաշտպանության նկատմամբ կարող էր լինել: Սակայն ժամանակին այն չգրավեց այդ բաղադրի հիմնադիրների ուղիղությունը և աստղաբանության այդ մայրաքաղաքը գրկվեց 6 կմ հեռավորության վրա՝ Կալիսոնի տարածքում վեր խոյացող հիանալի պաշտպանական հետազոտիչ: Նման բլուրը, որը հենց այդ առումով էլ գրավեց մեր ուղիղությունը, իր արմատներով երբևէ չէր մնա արտաբնական բաղադրաչափայինների տեսողաշարից:

Ուրարտական քաղաքները, որոնք սեպագից արձանագրություններում նշվում են URU-գաղափարագրով (palari), բավական հաճախ հիշատակվում են ուրարտական, ինչպես նաև ասորեստանյան տարբերություններում: Այդ տարբերությունների հետազոտությունները լամպուսում են, որ URU-ն նրանցում նշանակում է «բնակավայր» ընդհանրապես, անկախ նրա մեծությունից կամ նշանակությունից: Միայն այսպես կարելի է հասկանալ URU-ների մեծաքանակ գրավումները: Սարգոտի Բ-ն հաղորդում է, որ մեկ օրում Իզանի երկրում գրավել է 200 քաղաք ու 35 բերդ:

Նույն Սարգոտի Բ-ն Սեկենդիլի արձանագրության մեջ հայտնում է. «մեկ օրում հաղթեցի ես 55 քաղաք», միևնույն ժամանակ ավելացնելով. «խազավորական իրյիսանի քաղաքը, որը ամրացված էր, ևս գերեցի մարտում»: Պարզվում է, որ մեկ օրում գրաված բազմաքանակ այդ քաղաքները փաստորեն ամրացված քնակավայրեր էին և, հետևապես, բոլորը չէ, որ գրավվում էին մարտական գործողությունների հետևանքով, ինչպես այդ ասվում է իրյիսանի մասին<sup>2</sup>:

Մյուս կողմից, ինչպես երևում է նշված թվերից, ավելի բիշ թվով բերդեր էին գրավվում, քան քաղաքներ: Հետևապես, միշտ չէ, որ քաղաքներն ունեին բերդեր: Բերդեր կազմում էին այն միջուկը, որոնց շուրջը փոփված էին քաղաքները: Այդ հաստատվում է բազմաթիվ բերդերի, մասնավորապես՝ Անիաշտանիա բերդի օրինակով, որն իր շուրջն ուներ 17 քաղաք:

Սակայն, բացի քաղաքներից, նրանց տարածքում էին գտնվում նաև ոռոգման ջրանցքներ, մշակվող դաշտեր, այգիներ, անտառներ, որոնք

միասին կազմում էին գյուղատնտեսական խոշոր միավորումներ: Հասկանալի է, որ նման տարածքների պարսպապատումներն անիմաստ միջոցառումներ կլինեին: Նրանցում ամրացված էր միայն կենտրոնական քաղաքն իր բերդով (E—gal): Այդ ամրոցը տարածքը, ինչպես կարծում ենք, ASUNI էր, կամ «մարզ», ինչպես զա վերածանում է Ի. Գյակոնովի<sup>3</sup> Կարելի է նաև պնդել, որ նման միավորումը արտահայտում էր անտեսական մի ամրոցը՝ համակարգ: Տարածական առումով այն պատկերում է կենտրոնական ամրացված քաղաք E—gal-ով, որի շրջակա տարածքներում փոփված էին URU-ները կամ գյուղական այն միավորումները, որոնք կազմում են համակարգի անտեսական հիմքը:

Միայն այդ կենտրոնական քաղաքների մակերեսները, երկնքով պեղումների ավյալներից, հավանաբար կազմում էին շուրջ 100—200 հեկտար: Սակայն այդ թվերը չեն կարող հաստատուն համարվել, քանի որ հինարևելյան քաղաքների մակերեսները խիստ տարբեր են: Մեգիդոն, օրինակ, սահմանափակվում էր բնիսանի 5 հեկտար տարածքով, Կախունը (Նիգիտոս)՝ 10 հեկտարով, Գուռ-Շառուկինի տարածքը՝ 274 հեկտար էր: Արտաակարգ մեծ շափերի էր Արգիշտի-խինիլին, որն ուներ շուրջ 400—500 հեկտար տարածք<sup>4</sup>:

Նման տարբերությունները գուցե հետևանք են այն բանի, որ հինարևելյան ոչ բոլոր քաղաքներն են պեղված իրենց իրական տարածքների լրիվ սահմաններում: Ինչ վերաբերում է Արգիշտի-խինիլին, կարծում ենք, այդ սահմաններում նկատի են ունենել քաղաքի նաև գյուղական մոտակա բնակավայրերի տարածքները:

Քաղաքների տարածքներ որոշ առումով արտահայտում են նաև քաղաքների ազգաբնակչության քանակը: Թեյշեբախին, օրինակ, իր կառուցապատման խտությունը, եթե այն համեմատելու լինենք համանման քաղաքների հետ, պետք է ունենար շուրջ 20 հազար բնակիչ:

Հարկ է սակայն, ավելացնել, որ ամրացված քաղաքների ընդլայնմանը խոչընդոտում էին դրանք պարսպակող ուղիղապես պահանջներով կառուցված արտաքին պարսպները: Այս պատճառով է, որ ուրարտական քաղաքներում ստանձնապես սուր էին դրված հողատարածությունների նպատակահարմար օգտագործման հետ կապված հարցերը: Հալանարար, այս պարունակը նա

իր հերթին մեծապես խթանել է ուրարտական քաղաքներում բաղմամբ լինելի շենքերի առաջացմանը: Պարզ է նաև, որ բացի այդ հանգամանքից, բազմաթիվ շենքերով հարստացվում էին փողոցների ծավալատարածական նորինվածքների ճարտարապետական արտահայտությունները, որոնց բարձր արժանիքները, ի դեպ, տեղ են գտել Մովսես Խորենացու մոտ՝ Տուշպայի նկարագրություններում:

Կարծում ենք, ուրարտական քաղաքաշինության այդ սկզբունքները մասնական լինելի սերտ պետք է կապված լինեին նաև խեթական, ինչպես և հարևան Հայաստանի քաղաքաշինության ավանդույթներին: Այն, որ քաղաքները բլուրների գագաթներին ունեին ամրացված միջնաբերդեր, օրինաչափ էր խեթերի մոտ, և դրսևս լիարժեք է ոչ միայն երկրի մայրաքաղաք Խաթվանույի ցայտուն օրինակով, այլև վկայում է ինքուրար Մուրսիլիս Բ-ի տարեգրությանը, որի մեջ, ի դեպ, նա պարմանք է հայտնում այն բանի համար, որ հարևան Պալա երկիրը շուններ ամրացված քաղաքներ կամ պարսպապատված հենակետեր: Տեղաբնիկ առումով բարդ պայմաններում էր գտնվում Հայաստանի գլխավոր քաղաք Ուրուև, որի բլրի զաղաթին կառուցված բերդից, ինչպես նաև դեպքերում նաև բոլոր ուրարտական բերդերից, դիտվում էր: Նույնները տարածվող ստրատեգիական կարևոր մայրուղին<sup>5</sup>:

Ուրարտական քաղաքների պատմական կազմավորումը, մասնավորապես նրանց տեղի ընտրության տեսակետից, համաձայն ասորեստանյան աղբյուրների, պայմանավորված էր քաղաքների այնպիսի փոխադարձ դասավորություններ, որոնք իրար հետ անընդմեջ էին տեսողական կապով: Ռազմական կամ այլ վտանգի դեպքում քաղաքների բարձր բլուրների վրա գտնվող միջնաբերդերից, որոնք պահպանում էին տեսողական այդ կապը, վտանգը ազդարարվում ու իրար էր հաղորդվում խարուկներից բարձրացող կրակի պայմանական նշաններով, և դրանով փոխադարձաբար համաձայնեցվում էին քաղաքների անհրաժեշտ ռազմական զործողությունները:

Սարգոն Բ-ի նկարագրություններից երևում է, որ ուրարտական ամրացված վայրերը այդ ձևով կապակցվելով իրար հետ, կազմում էին մեկ ընդհանուր շղթայաձև համակարգ<sup>6</sup>:

Ի դեպ, կրակի ազդանշանները կիրառվում էին նաև Ասորեստանում՝ հույժ կարևոր տեղեկու-



թյունները շտապօգնություն փոխանցելու համար:

Այսպիսով, ուրարտական քաղաքաշինական ժրագիրը թելադրվում ու պայմանավորվում էր հիմնադրվող քաղաքների ոչ միայն տարածքների արտերազմային տեղային հանդուսնաբնույթով, այլ հիմնականում ու անավելապես տվյալ տարածքի համակարգում փոխադարձաբար շարկապված նրանց ռազմաստրատեգիական դիրքով:

Սակայն ամեն դեպքում չէ, որ նմարավոր էր քաղաքների միջև տեսողական կապ ստեղծել: Նման դեպքերի համար որպես կապակցող անհրաժեշտ օղակներ քաղաքների միջև վեր էին խոչանում աշտարակաձև կառույցներ՝ սահմանափակ ներքին տարածությունը, ինչպիսիք էին Գանսթյուն, Ագրայ-Քեփին (Բրան) և այլն. կամ ստվորական աշտարակներ, որոնք պատկերված են ուրարտական արվեստի տարբեր ձևերում՝ նրանցից վեր խոչանցող՝ նիզականման կրակ պատկերով նշանով:

Պաշտպանական միջոցառումներն ուրարտական քաղաքաշինության բնագավառում չէին սահմանափակվում մեր բերած օրինակներով: Ռազմական միջոցառումներ ձեռնարկվում էին նաև քաղաքների ներքին տարածքներն ապահովելու համար, այն հարավոր իրավիճակների պահին, եթե այնտեղ ներխուժեին թշնամու զորաբանակները: Այդ դեպքերի համար է, որ քաղաքների հատվածները բաժանվում էին հզոր պարիսպներով, որոնց նպաստակն էր խափանել քաղաք ներխուժած թշնամու ազատ տեղաշարժերը և դրանով ստիպել ծանր մարտեր մղել ամեն մի թաղամասի համար:

Հատակագծման այս սկզբունքները, որոնք իրագործվել են նաև Հին Հունաստանում, իրենց տեսական հիմնավորումը գտան Արիստոտելի երկերում<sup>7</sup>: Սակայն, ռազմական պրոբլեմի հետ մեկտեղ, քաղաքաշինության մեջ ոչ պակաս կարևորություն ունեին նաև սոցիալական մեկնակետերը: Նորից անդրադառնալով քաղաքային պարիսպների համակարգին՝ կարող ենք նշել, որ դրանք կառուցվում էին ոչ միայն արտաքին թշնամիների դեմ, այլ միևնույն ժամանակ ապահովում էին պալատի մեկուսացումը քաղաքի բնակիչներից: Ուրարտում, օրինակ, Քեյլերաինում, պաշտպանական նման պարիսպները ապահովում էին պալատի մեկուսացումը քաղաքի ստորապես ազգարնակությունից: Բնորոշ է նաև, որ Քեյլերաինում դեպի փողոց դուրս ե-



Ազ. 18 Արվշտիխի. ա) միջնաբերդի վերակազմություն, բ) քեզանուր նստակազիժ.  
 գ) միջնաբերդի նստակազիժ, դ) սիտուացիոն նստակազիժ

կող ընակելի տների բոլոր արտաքին պատերը, որպես կանոն, հիմարեկցան ճարտարապետության նմանությամբ, խուլ էին, իսկ տների միակ գոնեները բացվում էին թաղամասերի փողոցների վրա:

Եթև դիտարկենք Թևեշերահինի, ինչպես և մյուս քաղաքների թաղամասերի կամ առանձին շենքերի հատակագծերը, շահերը, սենյակների քանակը, ճարտարապետությունն ընդհանրապես, ինչպես և շենքերի դերը փողոցների նկատմամբ, կարելի է պատկերացում կազմել սոցիալական տարրեր խավերի տեղաբաշխման սկզբունքների մասին քաղաքներում: Այդ հարցի պարզաբանման համար առատ նյութ են տալիս Թևեշերահինի քաղաքի պեղումները: Այնտեղ, վեր-

նախավի ընակելի տները կառուցված են սեկցիոն սկզբունքով, բավական ընդարձակ ներքին տարածություններով ու սշունդաբար սենյակներով: Եվ այդ առումով որոշակիորեն արտասուտում են իրենց պատկանելությունը:

Սակայն նույն պեղումները սպառիչ պատկերացում չեն տալիս ուրարտական քաղաքների բարեկարգման մակարդակի մասին: Առանձին տեղեկություններից կարելի է միայն ենթադրել, որ նրանցում եղել են ջրմուղներ, ջրամբարներ, կանաչիչներ, զրոսագիներ ու բաղնիքներ: Պատկանել են նաև ասորեստանյան թագավորների ուղղակի վկայությունները ուրարտական քաղաքների հրապարակներում վեր խոչնդաց արձանների մասին:

### ՈՒՐԱՐՏԱՆԱՆ ԲԱՂԱՔՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՌԳՈՒՄԸ

Ուրարտում կային թագավորանիտ, վարչատնտեսական, սպանական, ինչպես նաև պաշտամունքային նշանակության քաղաքներ:

Թագավորանիտը Լալաֆենե: Այս խմբին են պատկանում Երկրի մայրաքաղաքները՝ Արգաշկոն, Տուշպան, Ռուսախինիլին: Տուշպան եղել է Երկրի խոշորագույն քաղաքական, տնտեսական, ազգամական ու պաշտամունքային կենտրոնը և մայրաքաղաքը Ուրարտուի պատմության գրեթե ամբողջ ժամանակաշրջանում: Իսկ եթե իրավացի էր Լեման-Հատպուր, ապա Ռուսաշի օրոք մայրաքաղաքին որպես այդպիսին փոխարինել էր Ռուսախինիլին՝ Թոփրախ-կալում: Սակայն Ուրարտում չեն նշվում մայրաքաղաքների այնքան հաճախակի փոփոխություններ, որը բնորոշ էր Ասորեստանին:

Արգաշկու: Արգաշու լիտան շրջակայքում զբնդվող Երկրի այս առաջին մայրաքաղաքի մասին (մ.թ.ա. IX դար), որը Սալմանասար III-ն (859—824 թթ. մ.թ.ա.) անվանում է Արամու: Նորարացու թագավորանիտ քաղաք, մեր պատկերացումները միանգամայն մակերեսային են: Նրանք ստացված են Բալավատյան դռների վրա կառավարված բրոնզյա քանդակի սխեմաների գծագրված յուրաքանչյուրի քննությունը ցույց է տալիս, որ միջնաբերդը գտնվել է բլրի վրա, ունեցել է Երկու շարք բերդապարիսպներ՝ աշտարակներով ու որմնահեղեղով և մուտքերը ավարտվել են կամարներով:

Այն փաստը, որ քաղաքը հարթաբանդակի վրա պատկերված է պաշարման ընթացքում այրվող

վիճակում, ցույց է տալիս, որ նրանում կային նաև փայտե կառույցներ:

Սալմանասար III-ի հաղորդումից պարզվում է նաև, որ քաղաքն իր շրջակայքում ունեցել է բազմաթիվ բնակատեղիներ, որոնք տեսել ու ավերել էր նա:

Հետևապես, Արգաշկոն բացի մայրաքաղաք լինելուց, եղել է նաև գյուղատնտեսական բնակավայրերի կենտրոն:

Տուշպան փոխած էր Վանա լճից արևելք, առափնյա տարածքում և ուներ հզոր միջնաբերդ: Քաղաքն ամրացված էր այնքան հուսալիորեն, որ ասորեստանցիները նամարյա թե իրենց բոլոր արշավանքների ընթացքում հրամարվում էին այն պաշարելու մտքից: Այդ էր պատճառը, որ Տուշպան երբևէ չի գրավվել թշնամու կողմից: Բացի դրանից քաղաքը պաշտպանվում էր նաև բերդի համակարգով, որոնք դասավորված էին Տուշպանի մոտակա ու հեռավոր մատուցներում: Գրանցից կարևորներն էին Հայկաբերդը, Խորլումը, ԱնգաՖը ու Արալեզը: Գրանցից Հայկաբերդը մայրաքաղաքի այն կարևորագույն առաջապահ էր, որը գտնվում էր Ասորեստանից Եկոդ ուղղությամբ տեղեկական հիմնական մայրուղիների վրա:

Տուշպան առայսօր դեռ չի ենթարկվել հնագիտական պեղումների, հետևապես նրա նյութական մնացորդների մասին շատ քիչ բան է հայտնի: Մ. Խորենացին քաղաքի շինարարությունը վերագրում էր Ասորեստանի Ծամիրամ թագու-

Նուն: Նա թողել է քաղաքի նկարագրությունը, որով որոշակի պատկերացում ենք կազմում այդ քաղաքի մասին:

«...Քիչ տարիներից հետո,— գրում է Մ. Խորենացին,— Շամիրամը գլուխ է բերում հրաշալի շինվածքը՝ ամուր պարիսպներով ու պղնձակերտ դռներով: Քաղաքի մեջ շինում է նաև բազմաթիվ բնօրի պարանոցներ, կրկնահարկ ու եռահարկ, դարդարված տեսակ-տեսակ գույնզգույն լարերով, և ամեն մեկում պատռճաններ ըստ հարմարությունների: Քաղաքը մասերի է բաժանում գեղեցկազույն և ընդարձակ փողոցներով: Շինում է նաև շքեղ ու զարմանալու արժանի բաղնիքներ՝ համապատասխան քաղաքի գիրքին ու պիտույքներին: Գևորգի մի մասը քաղաքի մեջ բաշխելով, անց է կացնում ամեն տեսակ պիտույքների, բուրաստանների և ծաղկանոցների ոռոգման համար, իսկ մյուս մասը (անց է կացնում) ծովակի աջ ու ձախ փերով՝ քաղաքի և բոլոր շրջակայքի ոռոգման համար: Քաղաքի արևելյան, հյուսիսային և հարավային կողմերը զարգարում է դաստակերտներով, վարսագեղ սաղարթախիտ ծառերով՝ կանազանակերպ պտուղներով ու տերևներով, և այնպես տնկում է բազմաթիվ առասարկր և գինեբեր այգիներ: Պարսպած քաղաքն ամեն կերպ հռչակապ ու հռչակավոր է դարձնում և մեջը բնակեցնում մարդկանց անթիվ բազմությունը»:

Ինչպես կարելի է տեսնել, Մ. Խորենացին այստեղ շեշտում է քաղաքի միջավայրի կառուցապատման գեղագիտական կողմը և նրա տարածքների ուցիտնալ օգտագործված լինելը:

Գրանից հետո նա շարունակում է՝ «Իսկ քաղաքի (վերի) ծայրը և այնտեղի հրաշալի շինվածքները մարդկանց շատերին անհասկանալի են մնում և պատմելու հարավորություն չկա: Այդտեղ դադարի շուրջը պարիսպ բաշխելով՝ ներսը շինում է զծվար մտնելու և զծվար դուրս գալու ինչ: Եր ծածուկ ու անճակի արքայանիստ շինվածքներու Գրանց շինության որպիսությունը մենք ոչ որից ճշտությամբ չենք լսել, ուստի հարմար չենք պատում մեր պատմության մեջ հյուսել. այսքանը կասենք, թե, ինչպես լսել ենք, սրանք բոլոր թագավորական գործերի մեջ առաջին և վեհագույնն են համարվում: Իսկ բարաժայտի ղեկյի արևգակ շարժումը կողմը, որտեղ այժմ է ոչ մի գիծ կարող է մարդ գծել երկաթով այսպիսի կարծր արքի մեջ, զանազան սենյակներ, ննչարաններ,

գանձարաններ և երկար վիհեր՝ հայտնի չէ ինչ բանի համար հրաշակիրտեց»:

Տուշպայի միջնաբերդը կառուցված էր անառիկ ծայրերի վրա և ամրացված էր այնպիսի պարիսպներով, որոնք ամբողջությամբ շարված էին բազալա քարից, հակառակ ավանդական սովորության, երբ երկրում, գրեթե ամենուրեք միանց որմածոր վերին շարքերը բարձրացվում էին հուն ալյուսից (յուսակն. աղ. 9 ա, բ): Այս արտակարգ կառուցապատումը մայրաքաղաքը դարձրեց անառիկ՝ Ուրարտուի բազում պատերազմներով ի պատմական կյանքի ընթացքում:

Տուշպայի ծայրուտ լեռը հնարավոր դարձրեց այնտեղ ստեղծել վիտափոր կառույցներ՝ պաշտամունքային և աշխարհիկ նշանակությամբ, որոնք գտնվելով տարբեր բարձրությունների վրա, իրար են կապված բազմաթիվ սանդուղքներով, որոնց աստիճանների բարձրությունը երբեմն հասնում է մեկ մետրի:


Տուշպան, լինելով ռազմատրատեգիական քաղաք, հայտնի է նաև ռազմական նշանակություն ունեցող կառույցներով, որոնց մի մասը գտնվում էր մոտակա արվարձաններում, ամենայն հավանականությամբ, քաղաքից արևելք՝ Վարազա լեռան ստորոտում:

Բացի մայրաքաղաքից, Ուրարտուում գոյություն ունեին նաև թագավորների պատկանող քաղաքներ, այդպիսին էր Ռիարը, որը Սարգուրիին էր, կամ Արբուն, որը Ռուսայի տոհմական քաղաքն էր: Այդ քաղաքներից հայտնի են նաև թագավորների պատկանող քաղաքները, որոնք, ինչպես կարծում է Գ. Ա. Մելիքիշվիլին, նրանց անձնական սեփականությունն էին<sup>9</sup>:


Վարչատնտեսական նշանակության ևաղբներ:

Այս երկրորդ խումբը կազմում է երկրի քաղաքների հիմնական մասը: Այդպիսի քաղաքներն իրենց միջնաբերդերի շուրջն ունեին մի միասնական տնտեսական միավորում կազմող բազմաթիվ բնակատեղիներ: Նման միավորումը բայի բնակատեղիներից ուներ նաև դաշտերի արհեստական ոռոգման համար անհրաժեշտ զարգացում համակարգ ներկայացնող բազմաթիվ ձյուղավորումներ: Այդ համակարգի կազմի մեջ էին մտնում նաև ջրանցքները, թունելները, ինչպես նաև արհեստական մեծ ջրամբարները:


Ասորեստանյան աղբյուրների (գրանց ավելանում են նաև նորագույն հնագիտական պեղումների տվյալներ) խոստում են երկրի քաղաքային



ա



բ



գ

0 80 160 220ս

Աղ. 19 Գյուղեր. ա) Գուգտան, բ) Բուրրի ձևի, գ) Կարմանան

կենտրոններում կուտակված մեծ հարստությունների մասին: Այսպես, Սարգոն Բ-ն ղեկավարում էր (մ.թ.ա. 714 թ.) կատարած իր հայտնի արշավանքի ժամանակ, ավերելով երկիրն ու նրա հարուստ տնտեսական կենտրոնները իրենց պահեստներով, վերջիններս մեջ գտնում է «անհասցիվ բանակությունը: հացահատիկ, գինի» և այլն: Միայն մեկ այդպիսի շտամարանում գինու տարողությունը կազմում էր 225 հազար լիտր, մյուս պահեստում տեղավորվում էր 1020000 «կապի» ցորեն:

Մթերքների զգալի մասը սովորաբար վերամշակվում էր տեղերում, ուր այդ նպատակի համար գյուղություն ունեին համապատասխան արհեստանոցներ, որից հետո արտադրանքը տեղափոխվում էր երկրի մայրաքաղաք՝ Տուշպա: Կարմիր բլուրի միջնաբերդում հայտնաբերված են ձիթան, գինու և գարեջրի արհեստանոցներ և այլն:

Արհեստանոցների զարգացմանը քաղաքներում մեծապես օժանդակում էր երկրում իր ժամանակին հայտնի բոլոր անհրաժեշտ նյութերի առկայությունը՝ փայտը, քարը, կավը, մետաղը, նյութեր, որոնք արտաճանվում էին նաև հարևան երկրներ:

Ուրարտական վարչատնտեսական խոշոր քաղաքներ էին Արգիշտիխիխին, Թեյշեբախին, Ալիխ-Յեփես, Ալավերդիքենդը, Վեռախրամը և մյուսները, որոնք իրենց պարսպապատված միջնաբերդերով, շրջակա բազմաթիվ գյուղական ավաններով կազմում էին գյուղատնտեսական հզոր համակարգեր, ստեղծելով (քաղաքաշինական առումով) տարածական միասնական համակարգ:

Արգիշտիխիխի: Հիմնադրվելով մ.թ.ա. 776 թ., արդեն դարի կեսին այն դարձավ երկրի նշանավոր քաղաքներից մեկը: Նրա հիմնադիր Արգիշտի Ա-ից հետո քաղաքը զբաղիտեն բալասավանց նրա որդի Սարգուրի Բ-ի օրոք: Լինելով վարչատնտեսական հարուստ կենտրոն, Արգիշտիխիխին ուներ ոտոզման ցանցի լայնատարած շանակարգ, Ազա երկրի հողերի արգավանությունը պայմանավորում էր նպաստում էր քաղաքի տնտեսական կյանքի վերելքին:

Այդ են հաստատում ոչ միայն ուրարտական թագավորների սկզբագիր արձանագրությունները, այլև ջրանցքների մնացորդները, որոնց հետքերը տեսանելի են 50 կմ երկայնքով Արարատյան շրջանավայրում, որը Ազա երկրի տարավել բեր-

բառատ շրջանն էր, խոշոր քաղաքների առաջ գալը դառնում էր առանձնապես հասկանալի: Դրա վկայությունն է Արգիշտիխիխին, որի տնտեսական կյանքը տալիս է հիմնվուրջ հողագործության պատկերը, հաճախ իր ամենամանրամասն զրվագներով: Հնագիտական պեղումները պարզել են, որ, իրոք, քաղաքն ունեցել է երկու տարածք՝ տարբեր շինություններով կառուցապատված: Կենտրոնական մասը և նրա օղակաձև հատվածը ծառայում էր հողագործական տնտեսությունների համար: Երկրորդ մասը իր մակերեսով մի քանի անգամ ավելի էր առաջինից:

Կենտրոնական կառուցապատված մասը բաղկացած էր իրարից 2 կմ հեռավորության վրա գտնվող բլուրների գագաթներին վեր խոյացող երկու միջնաբերդից և քաղաքի բնակելի թաղամասերից<sup>10</sup> (գծագր. աղ. 21): Սակայն, կարելի է կարծել, որ մնացած թվով 6 բլուրները կառուցապատված լինելով, իրենց գագաթային մասերում կազմում էին մի միասնական համակարգ: Արմավիլի բլուրը, որը մյուսներից ավելի բարձր էր (76 մետր) և որից պարզ տեսանելի էր լայնատարած շրջակայքը՝ մինչև հեռավոր հորիզոնն ու հեռավոր մատուցներից երևացող ճանապարհները, ուներ ռադամատրտեգիական նշանակություն: Սակայն, հավանական է, որ բլուրը ծառայել է ավելի պաշտամունքային նպատակների:

Հակառակ դրան, քաղաքի մյուս միջնաբերդը՝ Դավթի բլուրը, ինչպես այդ պարզ տեսանելի է նրա ընդհանուր հատակագծից, աշխարհիկ կարիքների համար կառուցված մի համալիր էր՝ իր պալատական շենքերով ու տնտեսական պահեստային մասերով:

Այսպիսով, կազմվում է մեկ ընդհանուր միասնություն՝ միևնույն քաղաքի սահմաններում, այդ միջնաբերդերը տեղ-տեղ պարփակված էին պարիսպների 3 շարքով: Իսկ քաղաքի կառուցապատված միջին մասը, սովորաբար վերջած, պաշտպանված էր հզոր պարիսպներով, որոնց պահպանված առանձին հատվածներն այժմ էլ պարզ տեսանելի են: Քաղաքի բնակելի շենքերը հիմնականում հայտնաբերված են բլուրների շրջապատում և նրանց թևք լանջերի վրա, որտեղ դրանք կառուցվել են՝ հարմարացվելով ժայռոտ տեղանքին: Հարթավայրի մասի շենքերը՝ ծածկված մնալով հողի հաստ շերտերով, անորոշ դարձրին քաղաքի բնակչության տարածքի ընդ-

հանուր հատակագծման սկզբունքները: Պարզ է միայն, որ հայտնաբերված շենքերը թեև լանջերի վրա կառուցապատված են, այսպես կոչված, աղատ կառուցապատման եղանակով ու գտնվելով անհիշատակ պալատական շենքերի հարևանությամբ, հավանաբար, կազմում են քաղաքի սրգաբանակչության սոցիալական բարձր խավին պատկանող հատվածը: Ամենայն հավանականությամբ, տվյալ բնակչության մի մասն էլ կազմել են պետական ծառայողներն ու արհեստավորները:

Իր պատմական կյանքի ընթացքում քաղաքն անընդմեջ զարգացել ու ընդլայնվել է: Այդ է հաստատում բնակչի շենքերի նոր տարածքների առկայությունը նաև միջին քաղաքի պարիսպներից դուրս:

Արգիշտիխինի ռենբր նաև խմելու ջրի համար հարմարավետ ջրամբար՝ 70.000 լիտր ընդհանուր տարողությամբ, ընկղմված միջնաբերդի թեք սարավանդերի խորություն մեջ, պալատական շենքի սահմաններում:

Քաղաքի դամբարանադաշտը գտնվում էր նրա հյուսիսարևմտյան մասում:

Քաղաքաշինության առումով ընդողջ է ու ուշագրավ, որ Արգիշտիխինի խորածրուց հիմնադրվում է ու զարգանում Հայաստանի հին մայրաքաղաք Արմավիրը: Ուշագրության արժանի է, որ ներկա դեպքում երկու տարբեր դարաշրջանների՝ քաղաքաշինարարներին՝ ռազմաստրատեգիական, քաղաքաշինական ու այլ առումներով հավասարաչափ բավարարել են տեղանքի միևնույն պայմանները՝ բլուրն իր միջնաբերդով, իսկ ստորոտում քաղաքը՝ փռված հորթնության վրա:

Արգիշտիխինի շրջապատի նշանավոր ավաններից մեկը գտնվում է Արարատյան դաշտավայրի ներկայիս Արագած գյուղում: Այն բավականին փոքր է, նրա կառուցապատման հետքերի տարածքը 10—15 հեկտարից չի անցնում, մնացած մասը, ինչպես և նրա եզրագծի սահմանները, առանց ննդիտակառուցված պեղումների որոշվել չեն կարող (գծագր. աղ. 23):

Այստեղ՝ ժայռու ցածր լլբակի վրա, պահպանված են քառանկյուն հատակագծով, շատարակներով ու որմնահեցներով, հավանաբար, երկհարկ պալատական կառույցի մնացորդները, որը ժամանակին իշխում էր շրջապատի վրա:

Այդ կառույցի հարավարևմտյան մասը պարբսպապատված էր: Նման պարիսպների մնա-

ցորդներն այստեղ բավական շատ են, հատկապես հյուսիսարևմտյան մասում: Ընդ որում, կենտրոնի նրանց պատերի երկարություններից, ավանական պետք է համարել, որ նրանք պատկանում էին պահեստային կառույցների շենքերին, ուր հավաքվում էր հողատարածքներից ստացվող բերքը:

Բնակչի շենքերի տեղադրությունից կարելի է եկեղծարել, որ նրանք գտնվում էին մշակչի ուղղամասերի վրա:




Շենքերի ներսում, բնասանի եկեղանիները: Նման ատանձնացված նշանակալից մակերևույթով հատվածները հաստատում են տվյալ ավանում նաև անասնաբուծության զարգացման մասին:

Այս երկրի մյուս խոշոր վարչատնտեսական կենտրոնը Թեյշեբախի քաղաքն էր:

**Թեյշեբախի:** Ուրարտական քաղաքաշինության սկզբունքներն ավելի որոշակի են արտահայտված Թեյշեբախի հատակագծման մեջ, որը պարզվում է լայնատարած պեղումների շնորհիվ<sup>11</sup>:

Թեյշեբախի քաղաքն իր աշխարհագրական դիրքով գտնվում էր այն մայրուղու վրա, որը Ազա երկրի սահմաններում որպես ելակետ ուներ Մենուայիներին, և որի մի ճյուղն անցնում էր Արգիշտիխինի միջով դեպի արևելք, դեպի Մեծամոր, Թեյշեբախի, էրբուռնի և ապա հյուսիս՝ դեպի Դարանի և Սևանա լճի ափերին տարածված ուրարտական քաղաքները: Այս կապակցությամբ Թեյշեբախի քաղաքի ամրաշինական կառույցներում պարզորոշ դրսևորված են ռազմաստրատեգիական սկզբունքները, որոնցով նրա շինարարները դեկավարվել են սկսած դեռևս քաղաքի տեղի ընտրությունից (լուսանկ. աղ. 6 բ):

Միևնույն ժամանակ որոշակի է, որ քաղաքի տեղադրումն իր միջնաբերդի հետ Հրազդան գետի բարձր ափին՝ պայմանավորված է պաշտպանական նկատառումներով: Փռված լինելով լարթավայրի տարածքում, որը կրեք կողմից կորագծված էր խոր ձորերի մեջ հոտող գետով, քաղաքը դրանով ապահովված էր զովարամաշկլով, իսկ որոշ հատվածներում էլ գետի բոլորովին անմատչելի պատնեշանման ափերով: Միևնույն ժամանակ, Արարատյան դաշտավայրի կողմից, որտեղ բնական պատնեշները բացակայում էին, Թեյշեբախին պաշտպանված էր հողը բերդապարսպով, որի մնացորդները պահպանվել են տեղում:



0 20 40 60 м

Ել. 20 Միջնաբերդը. ա) Արագած միջնաբերդի ընդհանուր տեսքը, վերահարկումը, բ) Միջնաբերդի նստակայանը, գ) Հին վերահարկումը

Քեյշերախի տեղի բնտրությունը պայմանավորված էր նաև տեղական նշանակության մի շարք նախապարհների առկայությամբ, որոնք հանգուցավորվում էին այստեղ:

Ժամանակը շնչել էր նրանք հետքերը երկրի վրայից: Նակայն, ամենայն հավանականությամբ, ամենահարմար տեղը, ուր կարող էին հանդիպել Քեյշերախի մոտ տարրեր տեղերից եկող ճանապարհները՝ հարթավայրի հարավային մասն էր, միջնաբերդի գլխավոր մուտքի դիմաց:

Ի վրում է, որ այստեղ գոյություն ունեցող ներկայյն ճանապարհը ուրարտական ճանապարհի ուղղության կրկնությունն է: Ինչ վերաբերում է քաղաքի կապին՝ Հրազդան գետի մյուս ափի հետ, ապա այն կարող էր տեղի ունենալ հարավարևմտյան մասում, ուր տեղանքը համեմատաբար նպաստավոր էր գետի անցման համար: Հատկապես այդ տեղում է, որ գտնվել են քաղաքի մշակակած բեկորներ, որոնց մի մասը դեռ կանգուն է որմածքի ձևով և, հավանաբար, պատկանել է ուրարտական կամրջի հենակներին:

Քեյշերախի կառուցապատված ամբողջական տարածքը նշված սահմաններում ձգված է արևելքից արևմուտք, կազմելով շուրջ 30 հեկտար տարածություն, որից 4 հեկտարը գրավում է արևելյան մասում վեր խոյացող բլրի գագաթին գտնվող միջնաբերդը (լուսանկ. աղ. 8 ա): Այս տարածությունը համեմատաբար հարթ էր իր միջին մասում, ուր հայտնաբերված են քաղաքի թաղամասերի հիմնական հատվածները ու առավել ուղղաձիգ փողոցները: Դրանցից արևմուտք, մինչև Հրազդան գետի տիկըր, տեղանքը թաղամասերի կառուցապատման համար դառնում է ավելի անհարմար: Դեպի գետը քաղաքից տանում էին մի բանի ճանապարհներ, որոնցից մեկը բավական լայն է ու միանգամայն հարմար անիվային արասնպարտի երթևեկության համար:

Չնայած նրան, որ նեբեկայտն աղբն պեղված է բողաքի մի պղպի մասը ու տրդեն հայտնի են նրա մոտավոր սահմաններն ու կերպերը, սակայն առայսօր չի հաջողվել պարզել քաղաքի արտաքին պարիսպների լրիվ գծագրությունը, բացի 1948 թ. հայտնաբերված նրա 500 մետրանոց մի հատվածից: Վերջինս, որն ունի աշտարակներ, որմնահեցեր, սկսվում է միջնաբերդի հարավարևելյան անկյունից, երայածում է քաղաքի արևելյան մասը, ապա գրեթե ողիվ ան-

կյան տակ թևավելով դեպի հարավ-արևմուտք՝ ընդհատվում է մի մեծ աշտարակի ավերակներով: Պարիսպների 200 մետր երկարություն ունեցող մյուս հատվածը, որ սկիզբ է առնում միջնաբերդի հյուսիսարևմտյան մուտքից ու անցնելով հարավարևմտյան ուղղությամբ, գծագրում է քաղաքի հյուսիսային մասը տվյալ սահմաններում, նույնպես ընդհատված է: Այդ 3 մետր հաստություն ունեցող պարիսպներից պահպանվել են միայն ստորին 1—2 շարքը (բացայտի կոպտատաշ բեկորներից):

Քաղաքի մյուս հատվածներում արտաքին պարիսպները նույնպես ընդհատվում են: Ինչ այնտեղ, ուր ժայռոտ ափերի բնական կլոններն իրենցով ապահովում էին քաղաքի անառիկությունը: Այդպիսի մի հատված էր, օրինակ, քաղաքի հյուսիսարևմտյան պարիսպը:

Ինչպես ասվեց, քաղաքի միայն հարավային մասով կարող էին անցնել այն ճանապարհները, որոնք ժամանակին Քեյշերախին կապել են մյուս քաղաքների հետ, հետևապես և այստեղ պետք է գտնվի նրա գլխավոր մուտքը: Սակայն արտաքին պարսպապատն այդ մասում այնքան է ավերված, որ բոլոր հետքերն անհետ կորել են:

Հավանաբար այնտեղ, ուր ընդհատվում է միջնաբերդի հյուսիսարևմտյան անկյունից սկսվող պարսպապատը, քաղաքն ունեցել է ևս մի մուտք, որի տեղում ներկայումս գծագրվում են հիմքերի մնացորդներ:

Բացի արտաքին պարիսպներից, մի շարք պատերի հետքեր են երևում նաև քաղաքի ներքին տարածքում: Այսպես, միջնաբերդի հարավային մասում, նրա կենտրոնական մուտքի ձախ աշտարակի բազալտե խոշոր բարեից շարված բավականին լայն մի պատի մնացորդ միացած է բազալտե արտաքին պարսպին, դրանով իսկ արվակելով աղառ շարժումը քաղաքի մեջ: Բացի դրանից, մի շարք նույնանման պատերի հետքեր, որոնք պարզ նշմարվում են մակերևույթից, գծագրվում են քաղաքի այլ մասերում: Որոշակիորեն սաղմուկան նշանակություն ունեցող այդ պատերի ղուգահեռները տեսնում ենք հինուրեկյան շատ քաղաքներում:

Այսպես էր կառուցված նաև խեթական իսթրուսան, սակայն նրանում, բացի դրանից գոյություն ունեցող նաև ստորգետնյա ճանապարհ՝ միջնաբերդից մինչև բլրի ստորոտը՝ քաղաքի վրա պրոնոգ թշնամուն թիկունքից հարվածելու նպա-

տակով: հեթեղը հաճախ էին իրենց քաղաքները պատում կրկնակի պարիսպներով, ինչպես, օրինակ, այդ արված է Սամալում: Նման ղեկ-րեղում ստեղծվում էր քարե միջանցք, որի միջոցով թշնամին վերջվում էր մուգակի մեջ: Այդպիսին էր նաև պարսպապատերի մուտքերի կառուցման համակարգը, որի սրամիտ լուծումները ծառայում էին տակտիկական մտահղացումների: Այդ առումով խեթական օրինակներն ավելի յայտուն էին արտահայտում քաղաքների ամրաշինական սկզբունքները Հին արևելքում:

Սակայն ուրարտական քաղաքաշինության մեջ բավականին տեսանելի են դառնում նաև սոցիալական հնգաբանաբանները: Թեյշեբախիի համար այդ կարգի կարևոր հարցերից մեկն է, օրինակ, քաղաքի սահմաններում սոցիալական տարբեր խավերի տեղավորման սկզբունքը: Համաձայն Բ. Բ. Պիրոտովսկու, քաղաքի հիմնական աղաք-րենակառուցումը կազմում էին ուրարտական գինավորներն իրենց ընտանիքներով, պետական հողերը մշակող և կախյալ վիճակի մեջ գտնվող հողագործները, արհեստավորները, ինչպես նաև վարչական անձնակազմը<sup>11</sup>:

Կարծում ենք, որ այստեղ, քաղաքի կենտրոնական մասում, տեղավորված էին ուրարտական զորքն ու վարչական անձնակազմը, որոնց բնակարանները գտնվում էին միջնաբերդին կից: Այդ են հաստատում մեծ շափերի սեկցիոն տունը և մյուս հարուստ մենատներն (գծազր. աղ. 34):

Քաղաքի կենտրոնական մասում գտնվող թագամասերի փողոցներն ուղղաձիգ են ու կանոնավոր (լուսանկ. տղ. 8 բ): Հակոտակի դրոնց, քաղաքի արևմտյան մասի թագամասերը հիմնրված են տեղանքի տեսակետից աճահարմար վայրերում, անկանոն շարքերով և հավանաբար, հենց այն մասում էր բնակվում քաղաքի արքայի արքայի գահակառուցումը, որն այստեղ էր բերված գյուղատնտեսական տարբեր աշխատանքներ կատարելու համար: Այն հանգամանքը, որ քաղաքը հիմնադրված էր պետական ենթակայության ներքո գտնվող ուրարտական զորքի, արհեստավորների, հողագործների և վարչական կազմի համար, ասում է այն մասին, որ քաղաքի կառուցողը պետությունն էր, հետևաբար և նրա հիմնարկումը պետք է որ լիներ մի միասնական ճարտարապետական մտահղացման արդյունք:

Հայտնի է, որ հիտարեկայան պետական իշխանությունների կողմից սահմանվում էին քաղա-


քաղաքաշինության կանոններ. օրինակ, Միշուգետում հանրահայտ էին Բարյուրի թագավոր Համուրաբի կամ Ասորեստանի թագավոր Սինախերիբի շինարարական օրենքները: Փաստերը հաստատում են, որ Թեյշեբախիի կառուցապատումը ևս իրացվում էր նախապես կազմված ինքնատիպ քաղաքաշինական որոշակի ծրագրի համաձայն, պատասխանելով նաև ժամանակի ուղղապատասխանական բուրդ պահանջներին: Այսպես, քաղաքի առանձին հատվածներում կրկնում են ուղղաձիգ փողոցների բավական կանոնավոր կառուցապատումները: Քաղաքի կենտրոնական մասի երեք փողոցներից երկուսը դրեթև ուղղահուն են, որոնցից առաջինն ունի մոտ 200 մետր երկարություն: Այն սկսվում է քաղաքի կենտրոնական մասից, հասնում մինչև միջնաբերդի գլխավոր մուտքը, ձգվելով արևելքից արևմուտք՝ 5,57 մետրը լայնությամբ և կառուցապատված է առանց որևէ խախտումների: Այս երկու փողոցները հատվում են երրորդ, ավելի լայն (9,16 մետր) փողոցով, որն անցնում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք:

Սակայն, բացի երկկողմանի անիվային տրանսպորտի համար հարմարավետ ուղիղ ու լայն փողոցներից, Թեյշեբախիում կային նաև անպիսիները, որոնք նեղ ու անկանոն էին, շենքերն էլ իրենց հերթին կառուցապատված էին անսխառն:


Թեյշեբախիում կային նաև հրապարակներ, որոնցից մեկը գտնվում է միջնաբերդի գլխավոր մուտքի առջև: Արևելքից հրապարակը եղրագծված է պատով, արևմուտքից 50 մետր հեռավորությամբ նրան սահմանագծում են քաղաքի թագամասերի կառույցները: Քանի որ այստեղ էր միջնաբերդի գլխավոր մուտքն իր աշտարակներով, այն է՝ քաղաքի ճարտարապետական առավել մոնումենտալ ու շեշտված կառույցը, ուրեմն հրապարակը Թեյշեբախիի գլխավոր կենտրոնը պետք է լիներ (գծազր. աղ. 25):

Ուրարտական քաղաքների տարածական ձևերն արտահայտվում էին իրենց կառուցվածքների հարթ ծածկերի հորիզոնական ուրվագծերով: Սակայն, զրա հետ մեկտեղ, Թոփրախիկայում ա: Կարմիր բլուրում, բրոնզյա հարթաքանդակների, ինչպես նաև ոսկրե մանրակերտի ձևով հայտնաբերված աշտարակները հաստատում են քաղաքների կառուցապատումներում նաև վերասլաց ծավալների առկայությունը:

Թեյշեբախիի սովյալ մանրակերտն իր բնական



Պատ. 21 Արփե քիլի. միջնաբերդի հարավային



չափերով, հավանաբար, ներկայացնում էր բառակուսի հատակագծով բավականին վերասլաց հորինվածք: Աշտարակն իր անկյունային մասերում ունի ելուստներ, որոնց հարթօթյունների վրա տեսանելի են վերին երկու հարկերի պատուհանանման խուլ բացվածքներ: Կառույցը ավարտվում է հորիզոնական բաժանումներ ունեցող հզոր գոտիներով, ավանդական աստիճանաձև բուրգերով, միջին մասում վեր խոյացող գմբեթաձև ծավալով, իսկ ներքևում, այդ բոլորը պահող, ատամնաշար հիշեցնող պահպանակների շարքով: Քիվի հզոր ձևը, էլենլով հումաշափական համապատասխան կանոններին, հաստատում է, որ աշտարակի ընդհանուր բարձրությունը պետք է որ բնական վիճակում լինի 15—20 մետր: Հիշյալ մանրակերտը, հավանաբար, պատկերում էր բաղաձիգ կանգուն աշտարակը:

Մեծ ընդհանրություն կա տվյալ աշտարակի և Ակսում բաղաձիգ (Եթովպիա) կանգուն աշտարակների միջև, որոնց բարձրությունը հասնում է շուրջ 37 մետրի և որոնցում նույնպես երևում են համանման անկյունային ելուստներ, խուլ պատուհան պատկերող շարքեր՝ ըստ հարկերի և կիսապլոր վերջավորություն:

Քաղաքների նման կառույցներն իրենց վերասլաց ծավալների հակադրամիասնությամբ պետք է որ զգալիորեն հարստացնեն նրանց կառուցապատումների ճարտարագիտատարածական թեմատիկայի բացմադանությունը:

Նվ այսպես, Արգիշտիխիլին և Թելլբրահինին, իրենց շուրջը փոված URU-ներով կազմում էին վարչատնտեսական զարգացած համակարգ կամ Asuni՝ «բաղաձիգ մարզը»:

Ալավերդիի ենթ: Բնակավայրերի նման խոշոր կուտակումներ գոյություն ունեին նաև Ուրարտուի արևելյան մարզերում, գրեթե համանման բնույթով ու տարածական կառուցվածքով: Այստեղ նույնպես խոշոր ու ամրացված բերդերի շրջակայքներում փոված են գյուղատնտեսական բնակավայրեր, ջրանցքներ ու մշակվող դաշտեր<sup>12</sup>:

Տնտեսական նման մի խոշոր համալիր էր իր բնորոշ արտահայտությունը Ալավերդիքենդը, որը գտնվում է Ուրմիա լճից հյուսիս, Կարադիետդին հարթավայրի արևելյան մասում, Բաստամից 20 կմ արևելք: Տվյալ համակարգի կենտրոնը կառուցված է 40 մետր բարձրություն ունեցող բլրի գագաթին, որն ունի պաշտպանական նշանակության կառուցապատման պարզ հետքեր: Նույն

նկատառումներով Ալավերդիքենդից 3 կմ հեռու գտնվող Ուզուր-Քևփե բլուրի վրա է խոյանում մի այլ, ավելի փոքր բերդ, որը իշխելով այնտեղ անցնող ճանապարհի վրա, իր տեսադաշտում պահում էր տվյալ տարածքը:

Ալավերդիքենդի՝ 134×152 մետր չափեր ունեցող ամրոցը պարփակված էր հզոր պարիսպներով: Ամրոցը օժտված է կենտրոնական բակով, ուր կանգուն է բառանկյուն հատակագծով մի շենք (24×40 մ)՝ անկյունային մասերում աշտարակներով և միջին մասում նույնպես բակով: Բերդի պարիսպներին ներսից կցված են տարբեր չափերի շինություններ, իսկ հարավ-արևմտյան մասում երկու շենքով աշտարակների միջև նրա մուտքն է, որի երկու դռները դասավորված լինելով իբրև նկատմամբ ուղիղ անկյուն տակ, խոչընդոտում էին անցումը տվյալ պարփակված տարածքի մեջ (գծագր. աղ. 27):

Նշված երկու բլուրների միջև տարածված էին բնակելի շենքերը, այստեղից էր անցնում նաև տվյալ հողատարածքների համար շինված հնագույն ջրանցքը, որը իր 3/4 մասով մտնում է առաջս որ գործող ջրատար մասակարգի մեջ:

Այս ջրանցքները ոռոգում էին բլուրների շրջապատի տարածքներում փոված ընդարձակ մշակվող դաշտերը, ներառյալ նաև Թուրքի-Քեփե, Դուշգափի և մյուս գյուղատեղիների հողատարածքները (գծագր. աղ. 22):

Այդ տարածքում մշակվող դաշտերը բարեբեկությունն էր, խիստ կանոնավոր կերպով, բաժանված էին հավասար՝ 40/50/75 մետր չափերի հողամասերի: Մշակվող հողերի նման ճշգրիտ երկրաչափական բաժանումը սուաշին օրինակն է Ուրարտուում:

Հավանաբար, այլ հողակտորները թագավորական (պեխական) վարչությունը վարձակալական սկզբունքով մշակման համար հանձնում էր նույն բնակատեղիների առանձին մարդկանց<sup>13</sup>:

Ինչպես նշվեց, Արգիշտիխիլիի համալիրի նման կային գյուղական բնակավայրեր, մշակովի հողատարածություններ, որոնցից է Թուրքի-Քևփեն՝ Բաստամից 45 կմ արևմուտք, 180—200 մետր չափերի բլրի վրա, կառուցապատված է առանձին բացմասնեյակ բնակելի տներով<sup>14</sup> (գծագր. աղ. 22 ք): Բլրի հարավարևմտյան մասում կանգնած է 35×60 մետր չափերով բերդ՝ իր կենտրոնական բակով (10×16 մետր), որի շուրջը, արտաքին պատերին կից են մի շարք սենյակներ:

իր Տատակագծով այն նման է Շիրազի և Ամիրի կառույցի: Տատակագծին: Համաձայն Վ. Կլալսի Նևտոնականությունների, Քուրբի-Քեփին մ.թ.ա. VII դարի գյուղական տիպի բնակավայր կր, իսկ բերրը նրա տիրակալի նստատեղին էր նման բերդեր, (Տհ՝ս լուսանկ. աղ 17 ա, բ, գ, դ)՝

Գյուղական տիպի նման մյուս վայրը Գուլզագին է, որը գտնվում է Բաստամից 40 կմ հյուսիս: Բնակատեղին փոխած է հյուսիսից հարավ ձգվող, շրջակայքի նկատմամբ 65 մետր բարձրություն ունեցող մի բլրի վրա, որի եզրագծերը մեծ թերթի վրա անջատվում են շրջակայքից<sup>15</sup> (գծագր. աղ. 22ա):

700 մետր երկարություն ունեցող այդ բնակատեղին իր միակ պարսպով անջատվում է երկու մասի, որի հյուսիսայինը նրա զիխավոր հատվածն էր (260×360 մետր մակերեսով): Որմնաշենքեր ունեցող այս 95 մետրանոց պարիսպը կենտրոնական մասում իր միակ մուտքով զգալիորեն իշխում է հարավային հատվածի վրա: Այս վերջինի հարավարևելյան բարձրադիր մասի վրա կանգուն էին մի քանի շենքեր, որոնցից մեկը ավանդական քառակուսի Տատակագծով ու անկունային մասերում աշտարակավոր ելուստներով, Վ. Կլալսի կարծիքով, տաճարային կառույց էր, որը միանգամայն հավանական է: Իսկ այդ նշանակում է, որ ոչ միայն բաղաձեռնը, այլև գյուղերը Ուրարտուում ունեին իրենց տաճարները:

Գուլզագիի մյուս նկատելի կառույցը, որը գտնվում է նրա հյուսիսարևմտյան մասում և 12,5×19,0 մետր չափերի է, Վ. Կլալսը համարում է պահեստային շենք և դա հավանական է, քանի որ Գուլզագին, լինելով Ալավերդիքները շրջապատող բնակավայրերի անտեսական հիմքը, պետք է ունենար շտամարան:

Ալավերդիքների անտեսական ապամերայրին, Արդիշախիսիսիսի ու Թևյեբուսիսի օրինակով, գտնվում էր Բաստամ քաղաքի հովանավորություն ներքո, որը մասնավորապես պահպանում էր Ակլալից սկզբնավորվող ջրատար համակարգը, սրպես միջանկյալ բերդ ունենալով Ալավերդիքներից 3 կմ հեռավորություն վրա գտնվող Ուլուր-Քեփին:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ ուրարտական տեսական նման միավորումները ներկայացնում էին ընդարձակ մարզեր՝ իրենց կենտրոնական ամրացված քաղաքներով և նրանց շրջակայքում փոխած URU-ներով, դաշտերով ու

սոպոման ջրանցքներով, որոնք կազմում էին մի համակարգ՝ պաշտպանված սոպոմական նշանակություն թաղանթներով ու նրանց ենթակա փոքր բերդերի ցանցով:



Ալթին-Քեփին: Այս քաղաքը ուրարտական վարչատեսակական կարևոր կենտրոններից մեկն էր, երկրի հյուսիսարևմտյան ծայրամասում, փոխած Երզնկայի հարթավայրում, որը գտնվում է էրպուսից Սիվաս տանող ճանապարհի մոտ: Քաղաքը, որի պատմական տեղանունը հայտնի չէ, նազետ Քասին Օղզունի կարծիքով, համանաբար, հիմնադրված է մ.թ.ա. VIII դարում<sup>16</sup>: Ալթին-Քեփին գտնվում է երկրի արգավանդ հողատարածությունների վրա և, որ գլխավորն է, հեռու հողը Ասորեստանից, որից Երզնկայի գաղտնանջատված է բարձր լեռնաշղթաներով: Այս հանգամանքի շնորհիվ քաղաքը մնաց անչասանելի ասորեստանյան լանակների համար ու համարակվեց ավերածությունների, որոնց ժամանակին անընդմեջ ենթարկվել են Ասորեստանին սահմանամերձ ուրարտական մյուս քաղաքները: Դրանով էլ Ալթին-Քեփին միջնաբերդի կառույցները մեր օրերն են հասել համեմատաբար բարվոր վիճակում, տուժելով միայն ժամանակի ավերածություններից:

Հարթավայրի վրա փոխված այդ հինավուրց քաղաքի միջնաբերդը կառուցված է հյուսիս—հարավ ուղղությամբ ու վեր է խոյանում բարձր բլրի պագաթին, ինչպես և գրեթե բոլոր ուրարտական քաղաքների միջնաբերդերը: Եվ չնայած, Ալթին-Քեփինի միջնաբերդը հեռու էր ռազմատարատեղիական ճանապարհներից, այնուամենայնիվ, այն կրապղծված էր որմնահենքեր ունեցող հող բերդապարիսպներով:

Ինչպես կարելի է կուսել միջնաբերդում պահպանված առանձին կառույցների մնացորդների տեղադրությունից, այստեղ սուկա և շինարարական մի քանի ժամանակաշրջան (գծագր. աղ. 24)՝ նախնական տաճարային համալիրն է՝ իր նորակից շինություններով, նույն կառույցով է սյունապարզ մի պահիճ. որը պրակտիկայում մեջ էլ բուն անվանվում է ապոպանա և դրսևում սրպես արեմենյան նույնատիպ կառույցների նախատիպերից մեկը:

Բացի այդ մոնումենտալ կառույցներից, միջնաբերդից դուրս գտնվել են պահեստային բնակարանի շինություններ:

Ալթին-Քեփին այսօրվա դրությամբ ուրարտա-



Աղ. 22 Քելլերախի միջնաբերդի ներքինը ձախող վերահսկումը, նրախարհեկան սուրբ վերահսկումը, միջնաբերդի նախնականը

պիտոթյանը հաղորդակից է դարձնում ժամանակի մոնոմենտալ շինարարության առանձին ձևերին, որպիսիք անհայտ էին Ուրարտուի մյուս բաղաբնների ձևարտապետությունները: Խոսքը վերաբերում է նաև տարբեր ձևեր ունեցող դամբարանների կառույցներին, որոնք իրականացված են մեծածավալ քարերով և կոնստրուկտիվ ուղուն մտահղացումներով:

Սակայն տվյալներ չկան Նուշարձանի քաղաքաշինական առանձնահատկությունների մասին: Օջականի ուրարտական կառույցները: Աշտարակի շրջանի Օշական գյուղի կենտրոնում բարձրանում է Նրարիսային ծագում ունեցող մի խոշոր բլուր: Այն սեղացիներն անվանում են Գիղիկոնդ: 1971—1983 թթ. պեղումների շնորհիվ բլրի գագաթին բացվել է մի փոքրիկ, լավ ամրացված, մ.թ.ա. VII դարի ուրարտական ամրոց, որն իր գոյությունը պահպանել է մինչև մ.թ.ա. V դար և հետագայում նրա փլատակների վրա առաջացել է վաղմիջնադարյան բնակատեղի<sup>17</sup>: Բլրի հյուսիսային լանջի ստորոտներին պեղվել են նույն՝ մ.թ.ա. VII դարում կառուցված ուշ ուրարտական պալատական համալիրներ, որոնք, ինչպես և ամրոցը, հարատևել են մինչև մ.թ.ա. III դարը, իսկ նրանց փլատակների վրա մ.թ.ա. VII դարից սակած կառուցվել են անտիկ դամբարաններ<sup>18</sup>:

Ամրոցը ներկայացնում է մոտ 0,25 հա տարածություն ունեցող քառակուսի մի շինություն (գծագր. աղ. 36 գ): Սա ունի հզոր արտաքին պատեր՝ շարված կավե շաղախի օգտագործմամբ, լավ տաշված տուֆի խոշոր քարերից, որոնցից մի քանիսի երեսների եղբերը ինամբով հարթեցված են (առատովկա): Ծխլ քարերի նման մշակումը լավ հայտնի է Թոփրաբա-կալեից և Արգիշտիխիխիլիից, ապա քարերի երեսների վրա նկատվող կլորավուն ելուստները, ինչքան մեզ հայտնի են, հանդիպում են միայն Թեյշեբախիի ներքին պարիսպների առանձին քարերի վրա<sup>19</sup>: Պարիսպները լրացուցիչ ամրացված են պատերից 1—1,1 մ հեռացող որմնահեցերով և փոքրիկ անկյունային աշտարակներով: Որմնահեցերի երկարությունը հասնում է 3,1 մ և իրարից հեռու են շուրջ 7 մ-ով:

Ըստ երևույթին արևմտյան պատի 2-րդ և 3-րդ որմնահեցերի միջև գտնվել է ամրոցի մուտքը, ղեպի ուր տանում էր բնական ուղին:

Ամրոցի տարածական ներքին լուծումը ինքնա-

տիպ է. հյուսիսից հարավ անցնող պատով բաժանվում է երկու թևի՝ արևելյան և արևմտյան: Արևելյան թևի հյուսիսային մասը բաղկացած է մի խոշոր զանգեից, որն ունի 260 մ<sup>2</sup> տարածություն, դրան կից երկու փոքրիկ սենյակներից և ներսում է մի բնական ժայռարուք, որի վրա պահպանվել էին միջնադարյան մատուռի հետքեր: Մատուռի ուղղությունը խախտված է ղեպի հարավ և համընկնում է ժայռի վրա կտրված լարթակի հետ: Ըստ երևույթին մատուռի տեղում հնում այս հարթակի վրա եղել է ինչ-որ պաշտամունքային կառույց և հարթակի խախտումը ղեպի հարավ կատարվել է ամրոցի կառուցման ժամանակ: Ամրոցի արևելյան թևի հարավային մասը ընկած է վերահիշյալ ժայռարուքից հետո և անջատված է արևելյան թևից 24,2 մ երկարություն և 2,15 մ լայնություն ունեցող մի պատով, որը արևելյան մատուռի պատը միացնում է ամրոցը երկու մասի բաժանող միջանկյալ պատի հետ: Արևելյան թևի հարավային մասում պեղվել են հինգ ոչ մեծ սենյակներ, որոնցից հնում օգտագործվել են միայն № 3 և 7-ը, իսկ մյուսները վաղ միջնադարում: № 3 և 7 սենյակների պատերը կառուցված են ամրոցի հետ միաժամանակ և շարված են նույն կարծր տուֆի մեծ քարերից: Չնայած դրանք պատերը պահպանվել են բավական մեծ բարձրությամբ, սակայն սենյակները շունեն դռներ: Այս սենյակների կոնստրուկտիվ առանձնահատկությունները հնարավորություն են տալիս ենթադրել, որ ամրոցն այս մասում եղել է երկհարկանի: Այս ենթադրությանը հիմք է ծառայում այն հանգամանքը, որ № 3 և 7 սենյակների արտաքին պատերն ունեն մեծ լայնություն և կառուցված են 2-րդ հարկի ծանրությունը կրելու համար: Սենյակները ծածկվել են լայնակի գցված գերաններով, որոնք կազմել են 2-րդ հարկի հատակի հիմքը, որի մեջ բացվել են սողանցքեր, որտեղից ձեռնասանդուղներով կարելի էր իջնել նկուղային սենյակները:

№ 3 և 7 սենյակների միջև ընկած ազատ տարածությունը հնում ըստ երևույթին օգտագործվել է տնտեսական նպատակների համար: Այդ մեծ տարածությամբ ծածկը նույնպես կատարվել է գերաններով, սակայն թուխը փոքրացնելու համար այստեղ, ըստ երևույթին, կառուցվել է մույթ, ինչպես Արգիշտիխիխիի և Թեյշեբախիի մի շարք սենյակներում: Այս ծածկի վրա

բարձրանում էր մի գահ՝իճ՝ երկու փոքրիկ կողային սենյակներով, կամ ավելի ճիշտ՝ 4—5 բնակելի ավելի փոքր սենյակներով: Առաջինի ղեկավարն ույս գահ՝իճի ծածկը պետք է չենվեր սյունների վրա, որի նման օրինակներ հայանի են նույն Օշականի պայտատական շինություններում կամ սխտը է ունենար լայնակի գցված գերաններով կազմված տափակ տանիք:

Երկրորդ չարի առկալությունը նարավորություն է տալիս ենթադրելու, որ ամրոցի արտաքին պաշտպանողական պարիսպների ավելի բարձր: Են եղել, քան երկրորդ չարկի տանիքի մակարդակը (8—9 մ) և կազմել են մտտավորապես 9—10 մ:

Ամրոցի արևմտյան մասը խիստ բարձրացված է, նրա նարավային նստվածում պահպանվել է մի խոշոր փոս (բայտությունը՝ 3,7, խորությունը՝ 3 մ)՝ վերոհիշյալ մատուռի ծալարուրի և նարավային պարսպի միջև Փռվածքի պատերը և հատակը խիստ բարձրված են: Հետագայում կառուցված միջնադարյան շինությունների և մեր դարի սկզբին նաչիկ Դաղյանի կողմից կատարված պեղումների պատճառով դժվար է պարզել նրա նշանակությունը, կարելի է միայն ենթադրել, որ պատերը նույն սվաղված են եղել կալով և ան ծառայել է իբրև ջրավազան, ինչպիսին հայանի է Արիգշտիխիսի պեղումներից<sup>20</sup>: Արևմտյան թևի մյուս մասը, շուրջ 400 մ<sup>2</sup> տարածություն, շինություններից զուրկ փոքր-ինչ թևը լին է կազմում:

Ամրոցի բնորոշակի դահլիճների առկայությունը նարավորություն է տալիս ենթադրել, որ նրանք եղել են սյունազարդ: Ամրոցի փաստացի բնակելի տարածությունը հանդիսանում է արևելյան մասի նարավային նստվածի 2-րդ հարկը՝ 125 մ ընդհանուր տարածությամբ, որ լավագույն ղեկավար կարող էին բնակվել մի բանի տասնյակ գինյուրներ և բարձր: Այդ պայմաններում վերոհիշյալ երկու՝ 700 մ<sup>2</sup> ծածկված տարածություն ունեցող սրահների առկայությունը, որը կազմում է ամրոցի ավելի քան 25 տոկոսը, անհասկանալի է դառնում: Ըստ երևույթին այդ տարածությունները օգտագործվել են ոչ թե կայսրի կողմից, այլ ծառայել են բնակավայրի բնակչության համար իրի սպասարան՝ հակառակորդի նարավածան ծամանակ:

Ենելով ամրոցի փոքր չափսերից և նրա ներսում բնակելի պահեստային մեծ տարածություն:



նրի բացակայությունից, կարելի է ենթադրել, որ այս ամրոցը պատերագմների ծամանակ հանդիսացել է իբրև պահակատ, իսկ խաղաղ պայմաններում ծառայել է որպես ուրարտական կառավարիչների ամառային նստավայր:

Պալատական շինությունների փլատակները նայտներբով են Գիդի-կոնդ բլրի նյութային լանջի ստորոտում: Նրանց վերերկրյա ղենումը պարզում է, որ այդ շինությունները բարձրացած են եղել 4—5 համալիրներից: Պեղված 1—2 համալիրներն ուղղված են նյութային նարավ՝ 40՝ թեթևելով դեպի արևելք: 3-րդ և 4-րդ համալիրները տեղադրված են արևելքից դրանց հանդակ ուղղահայաց (50—200 մ հեռավորությամբ), իսկ 5-րդը՝ արևմուտքից (100 մ հեռավորությամբ):

1-ին համալիրը ուրարտական վարպետների նշակապ ստեղծագործությունն է: Այն բարձրացած է 14 սենյակներից և 900 մ<sup>2</sup> ընդհանուր տարածություն ունեցող բակից (№ 15 սեն.): 2-րդ համալիրը բարձրացած է 23 սենյակից, բայց նրա պեղումները ավարտված չեն (գծագր. աղ. 36 բ):

№ 15 սենյակը կամ բակը, ունեցել է երկու մուտք: Կենտրոնական մուտքը կառուցված է արտաքին պատի արևելյան մասում և ունի 1,65 մ լայնություն, նրա երկու կողմերից կան երկու կուռտ (3,2 2,5 մետր), որոնք կազմում են յուրահատուկ գեկորատիվ աշտարակներ և նրան տալիս են մոնումենտալ տեսք, որը հատկանշական էր ուրարտական և հինարևելյան ճարտարապետության համար: Երկու համալիրների միջև տեղադրված բակի առկայությունը նույնպես բնորոշ էր ուրարտական հատակագծային լուծման համար (էրերունի, Արիգշտիխիսի, Տուշպա)<sup>21</sup>: Երկրորդ մուտքը կառուցված է արևմտյան արտաքին պատի նյութային նստվածում և փոքրիկ միջանցքով կապվում է 2-րդ համալիրի սենյակների հետ, սակայն շուտով այդ մուտքը փակվում է պատով, իսկ միջանցքը վեր է ածվում պաշտամունքային որմնախորշի, որ տեղադրվում են ֆալուսներ և կուռտեր:

1-ին համալիրը № 13 սենյակի միջոցով միանում է բակին, իսկ մի շարք այլ ղեներով միանում է № 9, 11—14 սենյակների հետ: Նրա մնացած սենյակները բակի հետ չեն կապվել և, լստ երևույթին, ունեցել են ինքնուրույն մուտքեր: Այսպես՝ № 6 և 7 սենյակները միացած են դռներով, սակայն կապ չունեն մյուս սենյակների հետ, իսկ № 1 սենյակի բոլորովին մեկուսացված է:



Աղ. 23 Երեւանի. ա) Սյունազարգ բակի վերակազմությունը. բ) Միջնաբերդի նստակազմը

Միևնույն ժամանակ № 2—5, 8 և 10 սենյակները մեկը մյուսի նետ կապված են դռներով և ունեն ինչնուրույն մուտք՝ կառուցված 3-րդ սենյակի արևելյան արտաքին պատի հարավային մասում: Այս նանգամահըք ննարավորություն է տալիս ենթադրել, որ № 1—7 սենյակները նույնպես ունեցել են արտաքին մուտքեր, որոնց նետքերը շեն պահպանվել, բանի որ դրանց նյութապային պատը համարյա ձուլված է շրջապատող տեղանքի հետ:

2-րդ համալիրը բաժնի հետ միացվում է արևելքից արևմուտք ձգվող մի շարք դռների միջոցով: 1-ին գոնով, որը տանում է № 25 սրահը և 2-ով, որը բացվում է դեպի մի նեղ միջանցք, կարելի է անցնել 2-րդ համալիրի համարյա բոլոր սենյակները, բացի № 21-ից: 3-րդ և 4-րդ դռների միջոցով կարելի է անցնել մեկուսացված № 28 և 29 սենյակները: Ինչ վերաբերում է № 21 սենյակին, ապա նա մուտք ունի արևելյան պատում, որը տանում է դեռևս չպահված մի այլ սենյակ, որոնց ընդհանուր մուտքերը կպարզվեն 2-րդ համալիրի արևելյան թևը պեղելուց հետո:

Այս երկու համալիրները, անկասկած, կառուցված են մ.թ.ա. VII դարի առաջին կեսին, Ուրարտուի երկրորդ վերելքի ժամանակաշրջանում, որը հաստատվում է հնագիտական, նատուպես խնդրանքներով: Սակայն դրանք կառուցված են փոքր-ինչ ուղիղ ուշ, բան մյուս համալիրները և ամբողջը: Այդ մասին են վկայում № 3 սենյակում գտնված 2 ուրարտական դամբարանները, որոնք ծածկված են սենյակի հատակով և մաստաֆ նյութապային պատով: Նման պատեր նկատվում է Արգիշտիխիխի պեղումների ժամանակ, ուր նոր թաղամասեր կառուցելիս անտեսվում էին աղբառ խավերին պատկանող դամբարանները<sup>22</sup>:

2-րդ համալիրը, ինչպես նշվից, նույնպես կառուցված է VII դարում, բայց սրա «նյութապային հակառակ» (որը նախում է դեպի բակ) տեսքը դիտելիս պարզ երևում է, որ սա կառուցված է ավելի ուշ, քան 1-ինը: Իր հաստակագծում այդ պատը ներկայացնում է կտրտված, ոչ կանոնավոր գիծ, որը բնական է բակ դուրս եկող սենյակների համար: Այդ հաստատվում է նաև շինարարական տեխնիկայով և հաստակագծային տվյալներով: Առաջին համալիրի պատերը շարված են խոշոր, կոպիտ տաշված ուղղանկյուն կամ քառակուսի բարերից, կավի շաղախով: Այս համալիրն ունի պարզ հատակագիծ՝ կազմված 14 ուղղանկյուն սենյակներից, որոնց դռների մուտքերը ծածկված

են խոշոր տուֆի սալերով: 2-րդ կոմպլեքսի պատերը կառուցված են տուֆի շարդոնով ու գետաբարերով և սվաղած են կավի բարակ շերտով: Այս համալիրի սենյակների հասակագիծը խիստ անկանոն է, ոչ հավասար անկյուններով, որը նրանց տալիս է տարբեր տեսք:

Չնայած երկու համալիրների շարվածքի և շինարարության լուծման համարի և գեոմետրիայի մասի միջև վերջինս հանդիսանում է առաջինի բնական շարունակությունը՝ յիշեցնելով Արգիշտիխիխից և Թեյշերախիից գեոմետրիայից պատերը: Երկրորդ համալիրի սենյակները տեղադրված են Իրդի-Կոնդի փոքր բլրի լանջին՝ նյութից դեպի հարավ, և բոտ երևույթին ունեն աստիճանաձև տեսք: Այս ենթադրությանը հիմք են տալիս ինչպես լանջի թևերը, այնպես էլ շարք շարք արևելքից արևմուտք ձգվող մոնոմենտալ պատերը, որոնք կրում էին կոնստրուկտիվ ծանրությունը և միաժամանակ ծառայում որպես խրենց սահմանագծված շինարարական տարածքների հիմնապատեր (կրկուսիցաներ):

Կառուցողական այդպիսի ձևեր նկատվել են նաև Հ. Ա. Օրբելու կողմից վանում և Հայկաբերդում<sup>23</sup>, Կ. Լ. Հովհաննիսյանի կողմից՝ Թեյշերախիում<sup>24</sup> և Հ. Ա. Մարտիրոսյանի կողմից՝ Արգիշտիխիխիում<sup>25</sup>: Այսպիսի մոնոմենտալ հիմնապատերի առկայությունը Օշականում ցույց է տալիս, որ ուրարտական ճարտարապետության այս ձևն օգտագործվել է ոչ միայն ամրաշինական, այլև բաղաբացիական շինություններում:

Օշականի կառույցների տանիքները փայտից էին՝ ծածկված եղևգներով և կավե սվաղով, որի մասին են վկայում պեղումների ժամանակ հայտնաբերված եղևգնի մոխրի հետքերը: Ըստ երևույթին այս սենյակների մեծ մասը, որոնք ունեին նեղ թռիչք, ծածկված են եղել տափակ տանիքով, իսկ № 25 և 27 սյունագաղղ դահլիճները, ինչպես նաև № 3, 12, 26—28 մեծ թռիչքով սենյակները ծածկված են եղել հայկական գլխատար ձևի ծածկով և լուսավորվել են վերևից:

Յուրահատուկ ձևով է նշված դրան բացվածքների լուծումը: 1-ին համալիրի բացվածքի ամբողջ խորությամբ երկու կողմից տեղադրված էին խոշոր բարեր, իսկ շեմերը ծածկված էին տուֆի սալերով, 2-րդը՝ մանր բարերով և սվաղված կա-

վով: Հատակների նախատարված նամար 1-ին համալիրում շենքերի առջև կառուցվում էին տաշված սալերից 1—2 սասիճաններ, իսկ 2-րդում, բնակ հատակների բարձրություններն ավելի մեծ տարբերություններ ունեին, զրկում էին անմշակ, կտրիտ բարերը երկու համալիրներում էլ գտնվել են մեծ քանակությամբ դուռն կրունկներ բազալտից է տուֆից, որոնք վերջում են, որ դռներն այս-տեղ ամրացվել են սրածայր շարվածք: աստիցների վրա:

6, 12, 25 և 28 սենյակների պատերի տակ նայտնարերվել են նստարան-մատարաններ՝ շարված ասֆոլ, բազալտ քարերից, վերնից սվաղված կավով, որպիսիք հայտնաբերվել են նաև Արգիշտիիինիլի պեղումների մամանակ:

Ինչպես ցույց են տալիս հայտնաբերված հնագիտական նյութեր և ճարտարապետական ձևերը, այս համալիրները ներկայացնում էին անպաշտպան բնակավայր, որը լինելով կառուցված մ.թ.ա. VII դարի I քառորդում՝ հարատևել է մինչև ուրարտական պետության անկումը: Պեղումները բացահայտել են նաև նրա անկումն պատկերը, այն, ինչպես Քելշերախին և Արգիշտիիինիին, գրավվել է հրդեհվել են: Հստ երևույթին, շինությունները անկումից հետո մի քանի տասնյակ տարի անմարդաբնակ են եղել, որի հետևանքով պատերի մի մասը փլվել և թափվել է: Մ.թ.ա. VI դարի կեսերին այդ շենքերը վերականգնվում են առանց հատակագծային փոփոխությունների: Դուռն բացվածքներում իբրև անկյունաքարեր զրկում էին բազմաթիվ խոշոր ֆայլաներ, որոնք ժամանակին տեղադրվել են պատանների սրբարաններում:

Հնագույն կառույցների ուսումնասիրության և շենքերի վերականգնման պարզարաման համար մեծ նշանակություն ունեն № 25 և 27 սրահների պեղումները: Վերջին սրահը ներկայացնում է ութ սյունանոց դահլճ՝ 100 մ<sup>2</sup> տարածությամբ: Սրահ հատակային մասերում պեղվել են շորս սալածածկ հոր, որոնք լցված էին «սրբազան մոխրով» և զոհարկված կենդանիների ոսկորներով: Այստեղ գտնվել են 25 կուրթեր և ֆայլաներ, իսկ 9 այլ ֆայլու-կուրթեր գտնվել են № 27-ին կից պատի շարվածքում: Այս սյունազարդ դահլճից, ըստ երևույթին, եղել է այդ շինությունների ընդհանուր սրբավայրը, ուր տեղադրված էին բազմաթիվ ֆայլաներ, կուրթեր և մարդակերպ արձաններ: Մ.թ.ա. VI դարում կատարված վերականգ-

նումից հետո սյունները հանվում են և նրանց խորհանների մի մասը ծածկվում երկրորդ հատակով, իսկ հյուսիսարևմտյան հատվածում կառուցվում է մի կրակարան, որը ներկայացնում է մի փոքրիկ խոշո՝ ներսում կանգնեցված քարերից կառուցված օջախով:


№ 25 սրահը, որը նույնպես 8 սյունանոց դահլճ էր, ուներ 150 մ<sup>2</sup> տարածություն: Նրա հարավային պատի տակ ամրոցը երկարությամբ կառուցված էր նստարան-մատարան: Այս սրահը ուներ երեք դուռ և սրահ մեջ բացակայող սյունաձուռնաքյին նշանակության առարկաները հնարավորություն են տալիս ենթադրել, որ սա հանպիսցան էլ խորհրդակցությունների դահլճ:

Վերականգնելուց հետո, ինչպես և № 27 սրահում, սյունները ոչնչացվել են և կենտրոնում կառուցվել է միջնապատ՝ նախկին սրահը բաժանելով երկու մասի, որոնցից առաջինի մուտքը պահպանվել էր բակից, իսկ 2-րդին՝ վերը նշված միջանցքից: Երկու նորաստեղծ սենյակներում, որոնցից յուրաքանչյուրի տարածությունը կազմում էր շուրջ 75 մ<sup>2</sup>, կառուցվում են ձվաձև և ուղղանկյուն կավե օջախներ, որոնց պատերն ունեին 15—20 սմ բարձրություն և թաղված էին հատակում: Ասածով չի սահմանափակվում պաշտամունքային նոր կետերի թիվը: № 20 և 22 սենյակներում կառուցվում են վերոհիշյալ օջախների տիպի ևս երեք օջախ, որոնք վկայում են, որ այս պալատական շինությունների վերականգնումից հետո ուրարտական սրբանների փոխարեն ստեղծվում են 3 խոշոր (յուրաքանչյուրը 75 և 100 մ<sup>2</sup> տարածությամբ) և 2 փոքր այլ կրակարաններ:

Խազմական հեռակետ բազալտ: Խազմական շինությունը իր որոշակի ու նշանակալից տեղն ուներ Ուրարտուի սարատեղիական պլաններում, որն իր սկզբունքներով զգալիորեն ներգործեց այդ շինարարության բովանդակության վրա և ստեղծեց յուրահատուկ կառույցներ՝ դորանոցներ, ախոռներ, մրցազարտեր, լճակներ՝ ռազմական ձիերին լողացնելու համար, բերդեր, ռազմական ճամբարներ ու բազալտներ:

Ռազմասարտեղիական բոլոր կառույցներն իրենց տեխնիկական մակարդակով միանգամայն համապատասխանում էին հարակից երկրների նույնատիպ կառույցների բոլոր սկզբունքներին:

Ուրարտական հենակետ քաղաքները ուղարկողից ինչպես և նրանցից լավ ու հուսալի:



Աղ. 24 Միջնաբերդի հարսակազմերի սխեմա

Այդ կարևոր է, կորակացնել Սարգոն Բ-ի արդեն նշված տարեգրություններից, ուր նա հայտնում է, որ Ուրարտուում տեսել է հզոր ու պեղեցիկ բերդեր՝ 120 շերտ աղյուս ունեցող պատերի բարձրությունը (կազմում է շուրջ 18 մետր)։ Բերդերն ունեն 2—3 շարք պարիսպներ՝ իրենց աշտարակներով ու որմնահեցերով և տեղ-տեղ էլ իրենց առջևում արված իրամասներով։ Այդպիսիք են Ուայախս, Արգիշտինան, Կալլանիա, Տարուխ ու Տարմակիսու և մյուս բերդերը։ Արգիշտիուսնայում ու Կալլանիայում գտնվողների կառուցողների մասին Սարգոն Բ-ն նույն տեղում ասում է, որ «ծրանցյում գտնվող կառուցողը կազմված էր լավագույն մարտիկներից, մարտերում կոփված ու հաղթանակող զորքից»<sup>26</sup>։

Ինչպես պարզում են Արինբրդյի պեղումները, ուրարտական ամրոցները լավ էին նախարհեցված երկարատև պաշարումների դիմանալու համար, բանի որ նրանցում գտնվում էին ցորենի մեծ շտամարաններ և ջրավազաններ։ Ուրարտական ամրոցները հասարակ միջոց կանգնած էին բարձր բլուրների վրա կամ կարագծված խոր ձորերի միջով հոսող գետերի ուղղապատյուններով և պաշտպանված էին անմատչելի, իսկ որոշ դեպքերում էլ անտրիկ, ուղղածիք ապսոսմ ափերով։

Երևում է։ Ուրարտացիների բաղաբանի շարքում առավել նշանակալից էր էրեբունին, որը հիմնադրվել է մ.թ.ա. 782 թ., որպես Ազուերկրի հզորագույն ռազմաստրատեգիական հենակետ (լուսանկ. աղ. 6 ա, 7 բ)։ Քաղաքի հիմնադրման կապակցությամբ Արգիշտի Ա-ն թե՛ իր խորխորյան և թե՛ էրեբունիի արձանագրություններում բնութագրում է քաղաքի ֆունկցիոնալ նշանակությունը։

«Խալդի աստծո մեծությունը, Արգիշտին՝ Մենուայի որդին այս հզոր բերդը կառուցեցի... Բիանիլի երկրի հզորության համար և թշնամական երկրներին ի սարսափ...»։

Միջնաբերդի տեղի ընտրությունը Արինբրդյի բլրի գագաթին՝ ստորտեղիական առումով բավական հաջող էր։ Բլրի գագաթից սլաքը երևում են Արարատյան դաշտավայրը՝ իր մի շարք բնակավայրերով, ինչպես նաև էրեբունիի հեռավոր ու մերձակա մատուցները հասնող ղլխավոր մայրուղիները։

Քաղաքների այս շղթայաձև կապի պայմաններում էրեբունիի խալդի տաճարի աշտարակը՝ burgana-ն, բացի իր որոշակի նշանակությունից

պետք է որ ազդանշան տվող խառույկների տեղ լիներ։ Իսկ այդ մեծ տաճարը, միջնաբերդի ընդարձակ տարածքում, սպասարկում էր էրեբունի միջնաբերդում ու բազաբում տեղափոխված զորքերին։ Տաճարում էին կատարվում խալդի աստծուն նվիրված զոհարությունների՝ զորքը մարտի դաշտ դուրս բերելուց առաջ։

Բացի հարթավայրից, որ փոփոխ էր Արինբրդյի ստորոտում, քաղաքի սահմանների մեջ էին մտնում նաև երկր բլրակները, որոնք գտնվում է. միջնաբերդից հյուսիս ու նարավ-արևելք և որտեղ նույնպես պեղումների ընթացքում հայտնաբերվում է համապատասխան նապիտական նյութ։

Գտնելով քաղաքի հարավարևելյան մասում գտնվող բնակելի շենքերի մնացորդների հատակագծային լուծումներից, կարելի է կարակացնել, որ այդ տեղի կառուցապատումը կատարվել է բավական խիտ ձևով։ Թեև վերջնականապես պարզված չեն այդ տների հատակագծային հորինվածքները, ինչպես նաև նրանց ճարտարապետության ատաքին ձևերը, սակայն արդեն որոշակի ընդհանրություն կարելի է տեսնել նրանց և Թեյշեբախիի ու Արգիշտիի խիլի քաղաքների բնակելի շենքերի միջև։

Քաղաքի նույն հատվածում հայտնաբերված 25 մետր երկարությամբ ուղղածիք պատը, կարծում ենք, կարող է լինել ռազմական ձևերի ախտի պատի հատվածը։ Թվում է, թե կարմիր բլուրի պեղումների ընթացքում գտնված միու մի ճակատակալը՝ «Մենուա թագավորի ախտը» սեպագրով, ինչպես և այստեղ գտնված Մենուայի մյուս իրերը պետք է պատկանեն էրեբունի քաղաքին։

Միջնաբերդից 200 մետր հյուսիս-արևելք, 4 մետր խորությամբ վրա հայտնաբերվել է բազալտե քարերից կանոնավոր ձևով շարված ընդարձակ մի հատակ։ Սակայն, բացի կառույցների նման մնացորդներից կամ նրանց հագիվ նյութի հետքերից՝ մակերեսի վրա, էրեբունի քաղաքի սահմաններում անհարին է գծագրել փողոցների հետքերը, բանի որ ներկայումս խիտ կառուցապատված է մամանակալից շենքերով։ Միայն քաղաքի առանձին հատվածներում կույտերի ձևով կարելի է նկատել կարմիր գույնի կավ, որը, անկասկած, պետք է պատկաներ հինավուրց շենքերի փլված պատերի վերին շարքերին։

Ռուսախիբիլի (Քաստամ): Ուրարտուի արևելյան մարզի այս աչքի ընկնող քաղաքն ու երկրի խոշոր ռազմական կենտրոնը գտնվում է ժամանակակից Քաստամ գյուղի տարածքում, Մակուից 85 կմ հարավ-արևելք, իսկ քաղաքից հյուսիս՝ Քաղաքը հիմնադրել է Ռուսան՝ Արգիշտիի որդին, մ.թ.ա. VIII դ. և կոչել է իր անվամբ սեպագիր այն արձանագրության մեջ, որը ժամանակին Քաստամից տեղափոխելուց հետո, ի վերջո նորից նայտնարելի է 1910 թ., այս անգամ մակու քաղաքում:

Քաղաքը տարածվում է Սևու գետի շրջակայքում վեր խոյացող բարձր բլրի փոսնձին հատվածներում, ինչպես նաև նրա առջև փոլված հարյուրյալայրային մասերում (լուսանկ. աղ. 7 ա):

Քաստամի տեղանքը, իր ջլատված հատվածներով, համապատասխանաբար անդրադարձել է նրա տարածքի կառուցապատման կազմավորման վրա:

Ձգվելով հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք, նրա միջնաբերդի կառույցները խմբավորվել են երեք մասում, որոնք համապատասխանաբար ստացել են ստորին, միջին ու վերին բերդեր ժամանակակից պլանմասկան անվանումները: Քաղաքի միջնաբերդի հիմնական կառույցները գտնվում են բլրի հարավային մասում, որից հյուսիս, համեմատաբար հարթ տարածքում, փոլված են քաղաքի սպասարկող արհեստավորական և առևտրական խավին պատկանող թաղամասերը (գծագր. աղ. 20):

Քաղաքի մյուս կառույցները գտնվում էին միջնաբերդից շուրջ 500 մետր արևելք, որտեղ պահպանվել են նաև ռազմական նշանակություն ունեցող, 130×159 մետր չափերի կանոնավոր ձևով պարսպապատված մի բառանկյուն տարածք ու նրանում գտնվող լավ տեսանելի շինքի մնացորդները: Բլրի ամենաբարձր, բրգաձև զագաթի մասում վեր էր խոյանում ռազմաստրատեգիական նշանակություն ունեցող մի դիտակետ, որն իր տեսադաշտում էր պահում լեպի քաղաք ուղղված բոլոր մայրուղիները:

Թեև Քաստամի ոչ բոլոր հատվածներն են հավասարաչափ պեղված և առայսօր հայտնաբերված կառույցներից էլ որոշ տեղերում պահպանվել են նրանց հաղիվ նշմարելի հետքերը, սակայն ընդհանուր առումով միջնաբերդի հատակագծային հորինվածքը պարզորոշ գծագրում է

նրա քաղաքաշինական բոլոր սկզբունքային մտահղացումները:

Միջնաբերդը պարփակված էր հզոր պարիսպներով, իսկ որոշ հատվածներում, հատկապես իր հյուսիսարևելյան թեք սարալանջի երկայնքով, որ նրա առավել խոցելի հատվածն էր, էլնելով տեղանքի բնույթից, ամրացված էր նաև հենապատերով: Այստեղից էլ, սկսած ստորին բերդից, Տուշպայից եկող և տվյալ հատվածում սալահատակված ճանապարհը տեղանքում էր միջնաբերդի հյուսիսային մասը նրա երկու մուտքով՝ հյուսիսային ու հարավային:

Ստորին բերդում տեղավորված էին գյուրանոցները, ձիերի ախոռները, ինչպես նաև դրանց սպասարկող տնտեսական շինություններն ու պահեստները:



Բացի գյուրանոցներից, այստեղ առավել նշանակալիցները ռազմական անհրաժեշտություն ներկայացնող ախոռներն էին:

Նրանցում, ձիերի դասավորության առումով, իբրևնց հատակագծային լուծումներով առանձնանում են երկու տարբերակ: Այդ կառույցների ներքին 9-ական մետր լայնությունները բաժանվում են երեք նավերի, ժամանակին քարե խարխախների վրա կանգնած փայտյա սյուներով<sup>27</sup>: Ձիերը նրանցում կանգնեցվում էին եզրային սալահատակված նավերում, գլուխներով դեպի միջին նավը, սահմանազատվելով նրանից 50—60 սանտիմետր լայնությամբ ունեցող ցածր նստարանով, որոնց վրա դրվում էր կերը: Կառույցի երկարությունը 47 մետր էր և նրանում, համաձայն Վ. Կլալսի հաշվարկների, տեղավորվում էր շուրջ 70 ձի<sup>28</sup>:

Ախոռների մյուս աիպի կառույցում, որտեղ արտաքին պատերի տակ էին գտնվում կերի համար 30 սանտիմետր բարձրությամբ կավակերտ նստարանները, ձիերը կանգնեցվում էին հակառակ ուղղությամբ. գլուխներով դեպի դուրս:

Ախոռների առավել մեծ չափերի համալիրը գտնվում է քաղաքի արևելյան մասի դաշտում, Սևու գետի մոտ: Այստեղ այդ կառույցն իր առջև ունի պարսպապատված ընդարձակ հրապարակ, որն, ամենայն հավանականությամբ, պետք է ծառայեր ձիավարությունների նամար:

Վերևում արդեն ասվեց, որ ուրարտացի ռազմական ձիերի վարժեցման գործի հմուտ վարպետներ էին: Այդ մասին դիտերին ասորեստան-



Ազ. 25 Տաճարներ. ա), բ), գ) Ալիին-Քեփե. տաճարի վերակազմություններ, դ) կալավազի. տաճարի նստակազմը, է) Ալիին-Քեփե. տաճարի մտորի վերակազմություն, զ) Ալիին-Քեփե. տաճարի նստակազիծ, լ) ԿիՖ-կարեհի. տաճարի ներքին սեւարը, վերակազմություն

ցիները: Սարգոն Բ-ն իր արձանագրություններից մեկում հիշատակում է այն մասին, որ Սուրի ինհանգի (ժամանակակից Թավրիզի շրջապատում) բնիկները այդ բնագավառում շունեին իրենց հավասարները:

Ուշագրավ է նաև այն, որ ձիավարժությունը որպես սպորտային ձև մեծ տարածում ուներ երկրում և նրանով զբաղվում էին նաև իրենք՝ Թագավորները: Հայտնի է, օրինակ, որ Մենուան սպորտի այդ ձևի լավագույն մարզիկներից էր «Արծիբի» իր ձիու վրա նա թռել էր 22 կանգուն երկարություն, որը հավասար է 11 մետր 20 սմ:

Բաստամի գլխավոր ախոռների կառույցները սկզբունքորեն համանման լուծում ունեն մ.թ. I հազարամյակում Մեզիդդոլում գոյություն ունեցող նման համալիրի հետ, որը նույնպես ձիերի վարժեցման համար ընդարձակ հրապարակ ուներ: Մեզիդդոլի համալիրը հայտնի է իր վերականգնված տեսքով: Նրանում բացի նշված հրապարակից ու ախոռների կառույցից, կային նաև պահեստներ՝ ռազմական մարտակառքերի համար, որոնք պատկանում էին զորատեսակների այդ միավորումներին: Նման միավորումներով նախալրված էր նաև Բաստամի ռազմական կայազորը, քանի որ նրանում ևս, ինչպես նշում է Վ. Կլայսը, միջնաբերդի հյուսիսային մուտքի մոտ հայտնաբերված են մարտակառքերի կանգառներ:

Մ. Ռիմշնայդերի այն կարծիքը, որ Ուրարտում կառուցվում էին լճակներ՝ ձիերին լողացնելու համար, չափանական է: Այստեղ՝ Բաստամում, որպես լողարան կարող էր ծառայել Սելս դեաի ավազանը:

Բաստամի ստորին բերդում պահպանվել են պահեստային մեծ շինքերի բավականին հստակ շիմբերի, պատերի և մույթերի մնացորդներ: Ենթադրվում է, որ այն մի շինքի արտակարգ չափերից, Վ. Կլայսը իր կատարած վերակառուցման մեջ այն պատկերել է բազմահարկ տեսքով (զծագր. աղ. 21):

Միջնաբերդի միջին հատվածի բարձունքի կոորդին, ինչպես և Ալթին-Քեփեում կամ Կայալիդեյում վեր էր խոյանում ավանդական քառակուսի հատակագծով սաճարը: Գրա առաջ ստեղծված էր 15×60 մետր չափերի հրապարակ, որը, ինչպես և Կայալիդեյում, սալահատակված ու նախատեսված էր մեծ բազմություն համար: Այդ կապակցությամբ էլ գրեթե հաստատորեն կարելի է ա-

սել, Լյնելով նաև մի շարք այլ սաճարների համանման տեղադրումից, որ ուրարտական պաշտամունքային ծիսակատարությունները հիմնականում կատարվում էին սաճարների առաջ, բացօթյա տարածքում:

Անդրադառնալով Բաստամի տաճարին, կարծում ենք, որ այն սպասարկում էր հիմնականում կայազորի ռազմական անձնակազմին, ինչպես որ էրևում է իր խաղի աստուտ տաճարը: Ուստի և մեծ տարածությամբ լայն հրապարակը նրա առջև անհրաժեշտ էր:

Մեր կարծիքը տաճարի սպասարկման ֆունկցիաների մասին խարսխվում է այն փաստի վրա, որ հալդին, բացի գեթագույն աստված լինելուց, նաև պատերազմների աստված էր, իսկ Բաստամում էլ գտնվում էր ռազմական կայազորը:

Ռուսա Բ-ի Բաստամյան այն սեպագեր արձանագրության մեջ, որում խոսվում է տաճարի կառուցման մասին, առաջին անգամ ուրարտական տարեգրություններում հայտնվում է այն մանրամասնությունը, որ տաճարը հիմնված է եղել տեղանքի թեք սարավանդին:

Բաստամը, ինչպես արդեն ասվեց, Ալավիդդի բնիկ տեսակական համակարգի ռազմական հովանին էր: Կարծում ենք, որ այն այդպիսին էր նաև մի շարք այլ տնտեսական կենտրոնների համար, որպիսիք գոյություն ունեին Ուրմիա լճի հյուսիսային տարածքներում: Մենք նկատի ունենք Վերսիխումը, Լիվարը և մյուսները (զծագր. աղ. 27):

Ինչպես պարզել են Վ. Կլայսի հնագիտական պեղումները, Բաստամը շարունակում էր իր կյանքը նաև հետուրարտական դարաշրջանում: Այդ շրջանից պահպանվել են առանձին կառույցների մնացորդներ, ինչպես նաև պարթևական դամբարանների՝ համապատասխան հնագիտական իրերով<sup>29</sup>:

Ղևուսիլի-քևիկ: Ուրարտական բողոքաշինության ու հատկապես ռազմական բազարների շինարարության բնագավառում իր ուրույն տեղն է զբաղում Ղևուսիլի-քևիկն, որի հնագիտական մնացորդները փոշած են Վանա լճի հյուսիսային ափի մոտ գտնվող դաշտավայրում:

Ինչպես կարծում են այդ քաղաքի հետազոտողներ Բրյունյե ու Լավտեր<sup>30</sup>, շինարարական աշխատանքները դրանց հիմնադրման մասնակցին հասցրել իրենց ավարտին, և դա հաստատվում է այն հանգամանքով, որ բազարի լու-

լոր շինքերը համահավասար պահպանել են միայն իրենց քարի որմածքների առաջին շարքերը: Նույնը հաստատող նրանց մյուս կողմնը այն է, որ տվյալ տարածքում չեն գտնվել նաև խնցղեն իրերի ուղարգրավ մնացորդներ, որոնց առկայությունն այնտեղ պարտադիր էր, եթե քաղաքն ապրել է իր, բեկուղն կարճատև կյանքով:

Անկախ այս վիճակից, ներկա դեպքում մեզ առավելապես հետաքրքրում են քաղաքի հատակագծման տվյալ ուրույն սկզբունքները՝ իրենց տեսանկի փաստական արտահայտությամբ:

Զերնակի-թեփեն, ինչպես և բոլոր ուրարտական քաղաքները, կառուցված է բարձր բլրի ստորոտում փռված հարթավայրի վրա, իսկ միջնաբերդը՝ այդ բլրի գագաթին: Սրանով տվյալ հորինվածքն արտահայտում է ուրարտական քաղաքաշինական հայտնի ավանդույթը: Սակայն նորույթը քաղաքի ընդհանուր հատակագծային հորինվածքի խիստ կանոնավոր երկրաչափական յանյի լուծման մեջ է:

Այդ ցանցում զծագրված թաղամասերը միատիպ քառակուսիներ են, յուրաքանչյուրը 35,0×37,0 մետր շափերի, որոնց արտաքին պատերը 1,40—1,50 մետր հաստությամբ ունենին, իսկ ներքինները՝ 1—110 մ.:

Այդ թաղամասերի միջև անցնող և նրանցով կազմված փողոցները համապատասխանաբար ուղղագիծ էին, իրար զուգահեռ կամ ուղղահայաց և բոլորն էլ 5 մ լայնությամբ: Դրանց հետ մեկտեղ քաղաքի գրեթե առանցքներով անցնում են ուղիղ անկյան տակ իրար հետ հատվող երկու գլխավոր փողոցները, յուրաքանչյուրը 7-ական մետր լայնությամբ:

Այդպիսին են քաղաքի վերերկրյա, միայն տեսանելի մասերը, շուրջ մեկ քառակուսի կլորմետր տարածքով, բն: որում, ինչպես երևում է նրա՝ հողով ծածկված եզրագծերից, քաղաքի մակերեսը շատ ավելի մեծ էր:

Միատիպ հատակագիծ ունեցող թաղամասերը կազմված են միջանցքով անջատված, համարյա թև նման դասավորություն ունեցող երկու խումբ սենյակներից, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին կազմում էր ինքնուրույն բնակելի տուն: Այլ կերպ ստանձամեն մի թաղամասը կազմում էր 4 բնակելի տուն: Իսկ, ինչպես կարծում են Քերենյը և Լավսոնը, այստեղ կարող էր լինել 2-րդ հարկ, և այդ դեպքում յուրաքանչյուր տան նեղ սենյակ-

ներից մեկը պետք է որ աստիճանավանդակ լիներ: Համաձայն նրանց հաշվարկների, Զերնակի-թեփեն ունեցել է 7 հազար բնակիչ:

Կասկածից դուրս է, որ Զերնակի-թեփեն քաղաքը, որպես այդպիսին, նախատեսված էր միատիպ գործունեությամբ զբաղվող բնակիչների համար: Դրա հետ մեկտեղ, ամենայն հավանականությամբ, քաղաքի բնակիչները գտնվում էին պետական խնամքի ներքո: Այդ է պատճառը, որ բնակելի շինքերի ծավալատարածական հորինվածքներին տրված է նշված ընդհանրությունը և միօրինակությունը:


Այդ բոլորից պետք է եզրակացնել, որ քաղաքի բնակիչները կազմում էին համահավասար վիճակում գտնվող զանգվածներ, որպիսիք կարող էին լինել ուրարտական ռազմիկները: Հետևապես, Զերնակի-թեփեն ուրարտական ռազմաստրատեգիական կենտրոններից մեկն էր, իր հատակագծային ուրույն արտահայտությամբ:

Հարկ է նաև նշել, որ քաղաքային օրգանիզմի հատակագծման տվյալ միասնական կոմպլեքսային լուծումը (տիպային բնակելի շինքեր) ուրարտական քաղաքաշինության նվաճումների բարձրագույն արտահայտությունն է:

Այդ մասնայական, լայնատարած ու նույնատիպ կառույցների ճարտարապետական առանձին ձևերը՝ համընդհանուր տարածական հորինվածքում, իրենց կերպի ընկալման մեջ ստանում են տեսողական առումով միասնական (ներդաշնակ) արտահայտություն:

Ինչպես պարզել են Քերենյն ու Լավսոնը, հատակագծային այդ սկզբունքը կիրառված է նաև Վերին Անգլիա քաղաքատեղիում, որը գեոսես չի պեղված, սակայն իր արդի վիճակով որոշ չափով հիշեցնում է Զերնակի-թեփենի հատակագծային կանոնավոր ցանցը: Զերնակի-թեփեն նման է կանոնավոր հատակագիծ ունեցող հին աշխարհի տարբեր դարաշրջանների մի շարք քաղաքներին: Նման կանոնավոր, ինչպես նաև սիմետրիկ հատակագծով հորինվածքի օրինակի (գյուղական վայրերի համար) նկարագրությունը կարելի է գտնել հնդկական հայտնի «Շիլպաշաստրայում», որն առնվազն մ.թ.ա. II հազարամյակի նյութերի հավաքածու է:

Քնորոշ են այդ առումով նաև հետուրարտական դարաշրջանի Միլեթը, Կնիդոսը՝ էգեյան ծովի



Ազ. 26 ա) Մուսաբերի տաճար, բ) կաղնի տաճարի նախակազիմի և վերակազմությունը, գ) Սուսի տաճարի նախակազիմ, դ) Հրո տաճարի նախակազիմ, ե) Տաշրուրուն, տաճարի ներքին տեսքը, վերակազմություն, զ) Տաշրուրուն, տաճարի նախակազիմ

ափերին, Տիմզգար՝ հունական-հյուսիսային Աֆրիկայում, ինչպես նաև սելեկյան Գուրա-Յվրուպոսը նփրատի վրա և շատ ուրիշներ:

Պակայն այդ որոշ քաղաքների հետ անընդունաճանությամբ հետ մեկտեղ Ջերնակի-Յեփեկե նրանցից ստորերվում էր մի չուրահատկությամբ. ԼՅԽ հետագա դարերի տվյալ քաղաքների հատակագծերում ներգծված էին խոշոր հասարակական շրջապարակներ, որոնց վրա վեր էին խոչանում աշխարհիկ ու պաշտամունքային մոնումենտալ շենքեր: ու այլ հասարակական կառույցներ, որոնք իրենց շեշտված ուղղաձիգ ձևերով քաղաքի ծավալատարածական սրվագիծն էին կազմում և համապատասխան ճարտարապետական տեսադաշտեր ստեղծում, Ջերնակի-Յեփեկեում ստորածական իրավիճակն այլ էր:

Այստեղ ամեն մի ծավալ միօրինակության արտահայտություն էր, որոնք ստեղծում էին համանման. թաղամասերը՝ բնակելի տների իրենց տիպային լուծումներով, Իսկ նման դեպքում, ԼՅԽ անդրադառնանք քաղաքի ամբողջական ծավալատարածական լուծմանը, ապա պարզ կդառնա, որ այն պետք է ունենար հարթ ծածկով ավարտված շենքերի մեկ բնդհանուր միաձուլլ հորինվածք: Դրա հետ մեկտեղ, Ջերնակի-Յեփեկի մոնումենտալ կառույցները՝ պալատներն ու տաճարները և նրանց բերդապարիսպները, ինչպես և ամենուրեք ուրարտական բաղադրները, վեր էին խոչանում կից բլուրների գագաթին և իշխելով քաղաքների վրա, որպես նրա վերասլաց ու ուղղաձիգ ծավալներ, պետք է որ ստեղծեին մեկ արդեն ծանոթ ճարտարապետական ձևերի հակադրամիասնություն:

Ուշաբլուրյան է արժանի Ջերնակի-Յեփեկի կառույցման անուվորտ ոտախճանը, որից երևում է, որ իրրե նորարարական քաղաքաշինական սկզբունք, գրեթեովելով Ուրարտուի պատմական կյանքի վերջին փուլում, հալիվ արտահայտվեց միայն իր մեկնակետային վիճակով: Սակայն, կանոնավոր հատակագծման Ջերնակի-Յեփեկի այդ հորինվածքը, որպես քաղաքաշինական սկզբունք, համարենհանուր ճարտարապետության պատմության մեջ ունի իր հետագա փուլերը: Դրանք հելլենիստական քաղաքաշինության համապատասխան հատակագծման հորինվածքներն են, որոնք լայնորեն հայտնի են «Հիպոստաման» մեթոդ անվամբ:

Ազգար-բեփե: Քաղաքների միջև կանգնեցված

աշտարակած փոքր շափերի կառույցներից մեկը Ազգար-բեփեկն է, որի մնացորդները գտնվում են ուրարտական թագավորության արևելքում՝ Հասանլուի մոտ:

Բերդի՝ էլիպսե մոտ պարզ տեսանելի հոտակաղիք իր հաղիվ 200 մ<sup>2</sup> ուղղակար մակերեսով բաժանված է փոքր հատվածների, որոնք շրջափակված են բավական հոյր որմնահնցեր ունեցող ու արտակարգ հաստ պարիսպներով: Բերդի մուտքը, պարսպի հարավային մասում, իր մեկ մետր բացվածքով ծառայում էր միայն հետիոտն անցումների համար: Բերդի կառույցների մեջ դեպի վերին հարկերը տանող աստիճանների պահպանված հետքերը հաստատում են շենքի արտաքին ճարտարապետական ծավալների աշտարակաձև դարգացումը:

Հատակագծում սենյակների փոքր քանակը հաստատում է բերդի սահմանափակ ֆունկցիոնալ նշանակությունը: Այդ ատուով կարծում ենք, որ Ազգար-բեփեկն պետք է դասվի ուղղմաստրատեգիական նշանակություն ունեցող կառույցների շարքը, թերևս սահմանափակ ու մասնակի տակտիկական հարցերի լուծման համար, որպիսիք կարող էին լինել հաղորդամենի կրակի պայմանական նշաններով, ուղղմական ճանապարհների հետախույզական հսկողություններն և այլն:

Այլ խոսքով՝ դրանցով իրացվող շղթայաձև այդ կապը տվյալ տարածքում ստեղծում էր այն ուրույն նշանակությունը ճարտարապետական համակարգը, որի մասին խոսվեց վերևում:

Վ. Կլայսը անդրադառնալով այդ կարգի հուշարձաններին, նշում է իր տեսած նման փոքր շափերի (15×25) աշտարակաձև կառույցների առկայությունը Մարանդի հովտում: Էլ ավելի փոքր շափերի կառույցներ, կլոր հատակաղծով, մենք տեսել ենք Քավրիդ—Գեխարգան—Մարագա երթուղուն զուգահեռ լեռնային մասով անցող պատմական ճանապարհների երկու կողմերում, որոնք ժամանակին իրենց հսկողության տակ էին պահում նրանցում կատարվող շարժումը:

Իրենց գտնում է Վ. Կլայսը, կանոնավոր էլիպսի ձև ունեցող հատակագծով Փոչը Զարը, որի ավերակները փոկված են Մարանդից 8 կմ հեռավորության վրա, Սուֆիանի<sup>31</sup> մոտ, նման փոքր շափերի ուրարտական բերդ էր, որն ունի ուղղմական նշանակություն և իր հսկողության տակ էր պահում այստեղից անցող ճանապարհը: Սակայն, բանն այն է, որ ուրարտական բերդա-

շինութեան և ընդհանրապէս ճարտարապետութեան բնագավառում տվյալ կանոնավոր լիպսածեղ շունի ո՛չ իր նախատիպը, ո՛չ էլ հետագա արդարացումը:

Մենք գտնում ենք, որ տվյալ կառուցը պատկանում է ոչ թե ուրարտական, այլ ասորեստանյան ճարտարապետական մշակութիին: Իր արտաքին եզրագծով այն նման է ասորեստանյան, օրինակ, Սինախլիթի ռազմական ճամբարին, որն իր էլիպսաձև հատակագծով գրեթէ հար և նման ձևով պատկերված է մի շարք ասորեստանյան հինավուրց հարթաքանդակներում: Իր շափերով էլ՝ 75×90 մ., համապատասխանում է վերջիններիս պահանջներին: Կարծում ենք, որ այդ կառուցը, որ գտնվում է դեպի Ուրարտու 714 թ. մ.թ.ա. Սարգոն Բ-ի արշավանքի ճանապարհին, լինելով, ինչպես հաստատում է Վ. Կլայտը, նույն դարի գործ, եղել է ասորեստանցիների ռազմական ճամբար: Այնտեղ է տեղի ունեցել նրանց հայտնի մարտը ուրարտացիների դեմ՝ Տլիխուի համար (ժամանակակից՝ Մարանդ):

Այլ էր ուրարտական ռազմական ճամբարի ծավալատարածական ճարտարապետական արտահայտությունը, որպիսին Բրեննյն ու Լավսոնը տեսնում են Անդավուրի մնացորդներում: Նրանում գրեթե չկան կառուցների հետքեր, ինչպիսիք պետք է լինեին ճամբարային տարածքում, քանի որ այնտեղ գտնվելու էր զորքը: Սակայն, միևնույն ժամանակ այնտեղ կար արհեստական ձևի, որը պետք է ծառայեր որպես ռազմական ձիերին լողացնելու տեղ: Իսկ կից բլրի բարձրութեան վրա երևացող քառակուսի հատակագծով, փոքր շափերի կառույցների հետքերը հաստատում են, որ այնտեղ էր ժամանակին գտնվում ճամբարի դիտակետը:

Այսպիսով, թեև հարթավայրերի պայմաններին բնորոշ ռազմական ճամբարի ասորեստանյան տիպն ունի կանոնավոր լիպսածեղ և, ապա ուրարտական ճամբարները կլնելով քաղաքաշինական ուրույն սկզբունքներից, մշտապես կցվելով բլուրներին, օգտագործում էին լեռնային տեղանքի առավելությունները:


Պաշտամունեային Բալախներ: Այս քաղաքներից են ուրարտական պանթեոնի գերագույն երրորդութեան՝ Խալդիի, Թեյշլեբայի ու Շիվիների պաշտամունքային կենտրոնները: Ուրարտական գերագույն աստծո՝ Խալդիի պաշտամունքի կենտ-

րոնը ասորեստանյան և ուրարտական սեպագիր արձանագրություններից լայնորեն հայտնի Մուսասիր քաղաքն էր կամ Արդինին, ինչպես այն անվանում էին ուրարտացիք: Ուրարտական պանթեոնի մյուս աստծո՝ Թեյշլեբայի պաշտամունքի կենտրոնը Կումենու քաղաքն էր, որը գտնվում էր Վանա լճից հարավ-արևելք, Վերին Զաբ գետի միջին հոսանքի շրջանում: Մուսասիրի մերձակայքում Շիվիների արևի պաշտամունքի կենտրոնը Ուրարտուի մայրաքաղաք Տուշպան էր:


Մուսասիրը գտնվում է, ինչպես ենթադրվում է, Նինվիից 120 կմ հյուսիս-արևելք, ժամանակակից Ռեանդուդ քաղաքի շրջակայքում: Դատելով Սարգոն Բ-ի Դուռ-Շառուկիի պալատում գտնված դռան հարթաքանդակներից մեկի վրա պատկերված Մուսասիրի տաճարի և նրա շրջակա տեղանքի կառուցապատումից, քաղաքը գտնվում էր բլրաշատ վայրում, ուր բնակելի շենքերը կառուցված էին թեք լանջերի վրա՝ աստիճանաձև հորինվածքով (գծագր. աղ. 29, ա):

Ի դեպ, նույն տեղում նշված է նաև, որ ասորեստանյան զորքի Մուսասիր ներխուժման ժամանակ տեղի բնակչությունը հավաքվել էր տների հարթ կտուրներին, ինչը համապատասխանում է հարթաքանդակի վրա գծագրված տների ձևերին: Այդ տները ոչ թե բազմահարկ էին, ինչպես կարելի է պատկերացնել՝ նայելով այդ հարթաքանդակներին, այլ աստիճանաձև էին, որի յուրաքանչյուր շենքը գծագրված է տարածություն մեջ ու ձուլվելով մյուսին ընդհանուր հարթության վրա արտահայտվում է բազմահարկության տեսքով: Ուշադրության է արժանի նաև այն, որ յուրաքանչյուր շենքը կողքի կառույցից անջատված է ուղղածիզ գծով, ինչը պետք է արտահայտեր շենքերի՝ մեկը մյուսից բաժանված վիճակը տարածքում:


Քանի որ Խալդիի երկրի գերագույն աստվածն էր, Մուսասիրն էլ իր հերթին Ուրարտուի կրոնական կյանքի կենտրոնն էր. այդ բանը ի վերջո նրան հասցնում է տնտեսական ունեախընթաց վերելքի ու հզորության: Խալդիի միևնույն ժամանակ պատերազմների հովանավորող աստվածն էր, որը իր հերթին քաղաքին տալիս է նշանակալից արտոնություններ: Դրանով կրոնական այդ կենտրոնի տնտեսություններն այնքան էին ուռճանում, որ դառնում էին նյութական մեծ պաշարների տիրապետողներ: Այդ պաշարները բազ-




U



F



q



z

Աղ. 27 ա), բ) Սյուսպարար և մաշիկրով սկեյֆների և գաշիվների նախապատերի սխեմա,  
 գ) Տանարների մուտքերի սխեմա, դ) Ամրացների մուտքերի սխեմա

մայատկվում էին, երբ ուրարտական թագավորներն ամեն անգամ հարուստ նվերներով այցելում էին հաղիքի պաշտամունքի այդ կենտրոնը:

Մուսասիրի հարստության շափը հայտնի է դառնում Սարգոն Բ-ի հաղորդումից, երբ նա, իր արշավանքի ժամանակ ավերելով այդ պաշտամունքային կենտրոնը, արձանագրում է նրանում բռնագրավված հարստությունները:

Քաղաքների դասակարգումը ըստ հատակագծային հորինվածքների: Ինչպես երևում է, քաղաքների հատակագծման հորինվածքների լուծման՝ այստեղ բերված մեր օրինակներից, նրանցում որոշակիորեն դրսևորված են ուրարտական քաղաքաշինության տարբեր սկզբունքները:

Դրանք են՝ ազատ հատակագծումը, Լրկրաշափական կանոնավոր ցանցի համակարգը, խառը կառուցապատումը և դարավանդային համակարգը:

Ազատ հատակագծման սկզբունքը ամենուտարածվածն էր և դարգանում էր տարբերայնորեն, որի հետևանքով բնակատեղիների փողոցները ստեղծվում էին տնամեջ տարածքներում: Այդ կապակցությամբ էլ նման տարածքներում առավելապես շեշտվում էին շենքերի ծավալները և ոչ թե հատակագծային որևէ լուծումները: Տվյալ սկզբունքը հատկապես բնորոշ է գյուղական բնակատեղիների համար (Արագած, Թուրքի-Ֆեփե, Գուլագի, Կալե-Կամանա և այլն<sup>32</sup>, գծագր. աղ. 22, 23):

Ուրարտական քաղաքաշինության համար ուրույն սկզբունք էր հատակագծման կանոնավոր ցանցի համակարգը, և այդ կապակցությամբ Զեր-նակի-Ֆեփեին նրա նշանակալից Լերևոյթներից է իր տեսակի մեջ:

Մակայն ուրարտական քաղաքաշինության ավանդական լուծումները առավելապես կառույց էին խառը կառուցապատման սկզբունքներին:

Յուրահատուկ է ուրարտական քաղաքների տեղադրությունը լեռնային շրջանների տեղանքի մեծ թևությունների պայմաններում: Նման տարածքներում քաղաքներն ունեին իրենց կառույցների աստիճանաձև փոխանցումները, որոնք, ի վերջո, կարծես ստանալով տեսական հիմնավորում, դառնում էին քաղաքաշինական հաստատուն օրենքներ:

Սյապիսին է Հայկարիդը ակադ. Հ. Օրբելու

նկարագրություններում: Այն ունի Լրեք արտաքին պարիսպներ, մեկը մյուսից բարձրագիբ տեղում, որոնց հետի տարածությունները մինչև համապատասխան նիշը լցված էին հողով՝ ընդլայնելու համար բերդի օգտակար մակերեսը<sup>33</sup>:

Ինչպես ասվեց վերևում, այդպիսին է եղել նաև Մուսասիր քաղաքի կառուցապատումը, որը նույնպես գտնվում էր լեռնային շրջանում: Կառուցապատման այդ եղանակը բավականին լայն դրսևորում ունեցավ ինչպես ուրարտական ժամանակաշրջանում, այնպես էլ հետագա դարերում: Այսպես, Զանգեզուրում, Հայաստանի այդ լեռնային շրջանում, ինչպես նաև ընդհանրապես Անդրկովկասում, հիմա էլ կարելի է տեսնել նույն ձևով կառուցված բազմաթիվ բնակելի դանգվածներ կամ, նույնիսկ, ամբողջական բնակատեղիներ, ուր շենքերն իրար սեղմվելով՝ լեռնային թևությունների վրա ստեղծում են ծավալների աստիճանաձև փոխանցումներ և ներքևի տան ծածկն օգտագործվում է որպես բակ վերևի տան համար:

Տարածական կառուցապատման մեջ, այդպիսով, առանձին շենքերի ծավալներով ստեղծվում է հսկայական սանդղուղը:

Ուրարտական քաղաքներում առավել սուղ էր դրված հողային ֆոնդի խնայողաբար օգտագործման պրոբլեմը, որը բխում էր քաղաքների պաշտպանության ռազմատարտեզիական սկզբունքներից: Մոլվեսն հորենացու՝ Տուշպայի նկարագրությունից երևում է, որ այնտեղ գոյություն են ունեցել բազմահարկ բնակելի շենքեր, մի բան, որ, հավանաբար, այդ նույն հողատարածությունների խնայողաբար օգտագործման սկզբունքի արգասիքն էր:

Այն մեծ ընդհանրությունը, որ գոյություն ունի ուրարտական ու հետագա հայկական քաղաքների ծավալատարածական հորինվածքների միջև, հաստատում է ուրարտական քաղաքաշինական ավանդույթների շարունակությունը հայրի մոտ:

Քաղաքաշինությունը Ուրարտում ուղեկցվում էր հետաքրքիր ավանդույթով, ըստ որի քաղաքների հիմնադրումները նշանավորվում էին հատուկ հուշանվերներով: Այդպիսի մի հուշանշան, որը նվիրված էր էրեբունիի հիմնադրմանը, գրտնվել է Կարմիր բլուրի պեղումների ընթացքում և պատկերում է զինվորի արձանիկ: Այն զբրված է բրոնզյա 8 սմ տրամագծով և 3 սմ բարձ-

բությամբ գլանաձև պատվազանի վրա, որի արտաքին մակերեսին դրոշմված սեպագիր արձանագրությունը հաղորդում է.

«Խալդի աստծուն, իր տիրոջը, այս առարկան

(Շան) փայտից Արգիշտին Մենուայի որդին պատրաստեց, երբ Էրևունի քաղաքը կառուցվեց»:

Պարզվում է, այսպիսով, որ Արգիշտին քաղաքաշինական հետաքրքիր ամանգույլի սկզբնավորողն է եղել:

## ԳԼՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

### ԲՆԱԿԼԻՍՏՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՐԱԿԵՏՈՒԹՅՈՒՆ

Կեցութեան հասարակական ձևերը, ինչպես ամենուրեք, այնպես էլ Ուրարտուում, զրսեւորում էին որոշակի նախադրյալներ բնակարանային ճարտարապետութեան ստեղծման համար:

Ուրարտուում բնակելի տների կազմավորումը մի զեպրում որոշվում էր բնակիչների անհատական պահանջներով, մյուս զեպրում այդ կազմավորումը թելադրվում էր բնակիչների հասարակական կենցաղի ուրույն վիճակով: Վերջինս վերարերում է այն զեպրերին, երբ բնակիչները գինվորական, ինչպես նաև վարչական մարմինների բարձրաստիճան գործիչներ էին, որոնք շունեին սեփական տնտեսութուն և ենթակա էին պետական պարենավորման:


Այս իրավիճակն Ուրարտուում ստեղծեց բնակելի տան այնպիսի տիպեր, որ պետական իշխանութեան և նրա պահանջների արգասիքն էին: Նման բնակելի տների հատկագծային հորինվածքները խարսխվում էին ճարտարապետութեան բնագավառում առաջացող նոր, այն է՝ «տիպային» լուծումների սկզբունքների վրա, իսկ զրա հետ մեկտեղ առաջ էին գալիս նաև բազմասեկցիտն ու բազմահարկ, ամեն առումներով իսկական քաղաքատիպ բնակելի շէնքեր: Նման շէնքերի առկայութունը ցույց է տալիս, որ Ուրարտուում, մասնավորապես բնակելի շէնքերի հետ մեկտեղ, զոյութուն ունեին սոցիալական առումով բնակելի տների նոր միավորումներ, որոնք կազմում էին պետական բնակարանային ֆոնդը:

Ուրարտուի բնակարանային ճարտարապետութեան մասին նախնական տեղեկութունները, թեև կցկտուր, պահպանվել են Մոփսես հորինացու


«Հայոց պատմութուն» մեջ: Այդ տեղեկութունները հիմնված են նրա ստացած բանավոր հաղորդումների վրա: Ըստ որում, Մոփսես հորինացու տեղեկութունները վերաբերում են միայն երկրի մայրաքաղաք Տուշպային: Վերջինս, համաձայն նրա նկարագրութունների, բավական մեծ, բարեկարգ, անառիկ բերդաքաղաք էր, բազմաթիվ երկու ու երեք հարկանի շէնք շէնքերով: Դեռ այն ժամանակ, երբ ո՛չ Ուրարտուում և ո՛չ էլ Միջագետքի տարածքներում չէին կատարվում ննագիտական լայնատարած պեղումներ, Մ. հորինացու այդ տեղեկութունները Տուշպայի բազմահարկ շէնքերի մասին անհավատալի ու առասպելական էին թվում: Սակայն, շուտով առաջին տվյալները, թեև անուղղակի, եկան հաստատելու զրա իսկութունը: Խոսքը Ուր քաղաքի պեղումների մասին է Միջագետքում, որոնցով այդ հինավուրց քաղաքում հայտնաբերվեցին առաջին երկհարկանի բնակելի տան մնացորդները Հին արևելքում:

Հետագայում նոր ապացույց, նույնպես պեղումների շնորհիվ, հայտնվում է վան քաղաքի մոտ, Թոփրախ-կալի բլրի վրա, թեև այս անգամ լրրոնգն հարթաքանդակի ձևով, ուր պատկերված է Լուսահարկ բնակելի մի տուն: Այս վերջին հայտնագործութունը արդեն կասկած չէր թողնում Ուրարտուում բազմահարկ բնակելի շէնքերի առկայութեան մասին:


Ներկայումս, րացի տվյալ հարթաքանդակից ու այլ նյութերից, ուրարտական բազմահարկ շէնքերն իրենց տեսանելի մնացորդների ձևերով հայտնվել են՝ Կարմիր բլուրի, Արագածի, ինչպես նաև, հավանաբար, Էթե ճիշտ են Վ. Կյալսի




0 2 4 6 8m




0 2 4 6 8m




0 2 4 6 8 10m



0 2 4 6 8 10m



0 2 4 6m



0 2 4 6 8m

Սկ. 28 ա, գ, դ, ե, զ) Արգիշտիի կամ Բաբելոնի քաղաքի շտապարաններ, բ) Քառասուն քաղաքի և շտապարան

կոա՛նունները, նաև Բաստամի միջնաբերդերում՝ Արարատի բնակելի ճարտարապետության մասին մեր բոլոր տեղեկությունները պարզում են բնակելի տների ալսպիտի դասեր, ա) մենասներ, բ) բնակելի տներ խմբային կառուցապատումներով, գ) մեկ և բազմահարկ սեկցիան տներ:

Մենասներ: Այս կարգի կառույցները, որոնք պահպանվել են առավել մեծ չափով, իրենց ատանակը մնացորդներով չափեր են երկրի տարրեր բազաքներին նապիտական տարածքներին: Այս տարրեր մենատների ճարտարապետությունը դրսևորվում էր մի շարք համանման արտահայտություններով թե՛ իրենց ճարտարապետական բովանդակությամբ և թե՛ շինարարական սկզբունքներով: Մենատներն իրենց մեջ միավորում էին՝ բնակելի, սևտեսական, պահեստային սենյակներ, բնտանի կենդանիների համար հատկացված համապատասխան նստվածներ և կառուցվում էին ավանդական՝ հում աղյուսի պատերով քարե գեղեցիկախիսիների վրա, հարթ ծածկերով, վերին լուսավորությամբ, իսկ ամբողջությամբ վերքրած ներկառնցիում էին պարսպապատված ներքին տարածություններ իրենց արտաքին միակ դռնով: Տան մեջ էր գտնվում նաև նրա պաշտամունքային անկյունն իր ամուսնատանիան քանդակակերտ կտորով:

Մենատները երբևեմ ենթարկվում էին տարրեր վերակառուցումների, կա՛մ ընդլայնվում էին, կա՛մ ջլատվելով կազմում մի բանի տարրեր ու իրարից մեկուսացված բնակելի տների շարվանաբար, դրանք պաշտամանավորված էին բնտանիքների ընդլայնումներով և կամ, ընդհակառակը, նրանցում տեղի էր ունենում տան մի մասի վաճառքը: Կարծում ենք, որ ուրարտական բազաքներում, որտեղ շատ սուղ էր հողային տարածքը, բնակելի տներ կարող էր զանալ առուծախի առարկա:

Արգիշտիխիսիլիի մենատները: Մենատներն այստեղ ստանձնապես շատ են և ունեն կոմպոզիցիան ազատ դասավորություն:

Մենատներից առավել նշանակալիցն ունի բուռակուսուն մտակող հատակագիծ (23,8×27,0 մետր), որի միակ արտաքին մուտքը բացված է նրա հյուսիսարևմտյան հատվածում: Եներք եղբազանք արտաքին պատերի, ինչպես և քաղաքի մյուս տներն ունեն ուրարտական ճարտարապետությանը բնորոշ որմնահեղեր (գծագր. ազ. 28):

Ժամանակին այս շենքը բաժանվել է երկու սեկուսացված ինքնուրույն մասերի: Վերացնելով նետազա վերակառուցումների հետ կապված ներքին պատերը, ստանում ենք շենքի նախնական հատակ հատակագծային լուծումը՝ կենտրոնական գահին՝ Երկու սյուններով, 77 մ<sup>2</sup> ընդհանուր մակերեսով, բնակելի, սնտեսական ու պահեստային տարրեր շափերի սենյակներով կառուցապատված մաս: Դահլիճը տան գլխավոր մասն էր, որի պատերի տակ շինված կավակերպ նրատարանները հաստատում են, որ այստեղ կարող էին նավարկել մեծ թվով մարդիկ ու ծառայում էր որպես ընդունարան:

Դահլիճի հյուսիսային պատին կից է իր ընդհանուր հորինվածքով դուրս ցցված ծավալը, սրբ, ինչպես կարծում ենք, բակ էր և ոչ թե դահլիճ, ինչպես այդ համարում են պեղողները: Բանն այն է, որ երկրորդ գեղարվում ցմվար է բացասարկ կազր կողքի կառուցված երկու մեծ դահլիճների առկայության հանգամանքը: Բացի դրանից, այստեղ սևտանելի է սալահատակված հարթակը՝ անջատված բակի մյուս մասից, որն, անկասկած, տնային կենդանիների համար էր, ինչպես այդ առկա է Թեյշերախիի համապատասխան տներում: Բակի մնացած հատվածը ծառայում էր սևտեսական բացօթյա կատարվող աշխատանքներին:

Արարատյան դաշտավայրում, որտեղ կառուցված էր Արգիշտիխիսիլին, կլիմայական շոգ պայմաններում, բնակելի տների համար ավանդական էր բակի տարածքի առկայությունը, որին լուսային բնակելի տներում փոխարինում էր դահլիճը: Մենատան հարավարևմտյան ու հարավարևելյան սենյակները ծառայում էին սնտեսական ու պահեստային նպատակների: Բոլոր այս սենյակների հատակների նիշերը տարբեր են, որը պայմանավորված է տեղանքով. անցումները նրանց միջև կատարվում էին սանդղաղբներով:

Մենատան ծածկը, ինչպես ուրարտական բնակելի ու պալատական բոլոր շենքերում, հարթ էր, իսկ լուսավորությունը՝ վերինից, սովորական էր պիկների միջով: Շավանական է, որ վերջինս կառուցվում էր հետագայում Հայաստանում տարածված «հազարաշեն» կոչվող կղանակին մոտ ձևով: Պատերի ներքնամասը քարից էր, իսկ վերինը՝ աղյուսից:

Արգիշտիխիսիլիի տվյալ մենատան հատակագիծը իր սկզբունքային լուծումով հիշեցնում է

Միջազգետքի այն մենատան հատակադիրը, որ հայտնաբերված է Ուր քաղաքում և կառուցված էր մ.թ.ա. II հազարամյակում: Տարբերությունն այն է, որ վերջինի միջին մասը ոչ թե դաշիճ էր, այլ բակ: Հատակագծման այդ սկզբունքն իր որոշ տարբերակներով տարածված էր ընդհուպ մինչև Եգիպտոս: Ընդ որում, Միջագետքում բնակելի տան հատակագծային այդ հորինվածքը դարձավ մոտենենալ՝ պարտական, ինչպես նաև պաշտամունքային կառույցների հիմքում ընկած նրանց ընդհանուր հորինվածքի մենակատը: Ուրարտուի ու Միջագետքի բնակելի այդ շենքերում գրանցված ճարտարապետական ընդհանրությունը տվյալ երկրների պատմական դարավոր կապերի արգասիք է:

Արգիշտիի ինիլի մենատների հատակագծային լուծումների մյուս բնորոշ կողմը սենյակների երկշաբք դասավորությունն է նրանցում՝ տարբերակների աննշան շեղումներով (զծագր. պ. 31):

Մենատուն Արագածում: Ունի քառակյունի հատակագիծ և բաղկացած է տարբեր նշանակություն ունեցող ու համարյա քառակուսի հատակագծով իրար կողքի դասավորված երեք սենյակներից և նրանց առջևում փոված բակից, որի մի հատվածը, հակադիր մասում, ծածկված էր: Այս մասը ընտանի կենդանիների համար էր նախատեսված, իսկ բակը ամբողջությամբ օգտագործվում էր տնտեսական կարիքների համար (գծագր. ա. 23):

Տան հարավային սենյակը պահեստ էր, նրանում գտնվել են 500 և 600 լիտր տարողությամբ երկու կարասներ, թեև նրանց քանակը ավելի է եղել: Պահեստային այս սենյակի հատակը մյուսների նկատմամբ իջեցված է 60 սմ: Հատակների նիշերի նման տարբերությունը նպատակային էր, հատկապես պահեստային սենյակների համար, որոնք խորանալով հողի մեջ, դրանով իսկ պահպանվող մթերքների համար ստեղծում էին ջերմային անհրաժեշտ ուժիմ:

Հատակի խորությունն մեջ ընկղմված նման շտեմարաններ կան նաև Եգիպտոսի այն բնակելի շենքերում, որոնք կառուցված են նոր թագավորության ժամանակ Նեղոսի արևմտյան ափի Գերդ-էլ-Մեդինեի հովտում. դրանց ծավալային լուծումները մոտ են Արագածի տան համանման մասերին:

Բնակելի շենքերի շտեմարանների կառուցողա-

կան այդ սկզբունքները աստիճանաբար դարձան ու տարածվել են և ստացան իրենց ձևերի մասնակալից արտահայտությունը, իսկ հետագայում ստեղծվեց «Նեկուզային հարկ» հասկացողությունը:

Մենատան մյուս սենյակը, որտեղ կանգնած էր փայտյա մեկ սյուն, ինչպես նաև երրորդ սենյակը, որն անմիջապես դուրս էր գալիս բակ, բնակելի էին և նույնպես լուսավորվում էին կրկիլից:






Շենքի մոտ 1,0—1,2 մետր բարձրությամբ բավականին լավ պահպանված պատերը, ինչպես նաև ծածկի մնացորդները, հնարավորություն տվեցին կատարել նրա լայնական կտրվածքի վերարտադրությունը:

Շենքում հայտնաբերված ֆալոսը հաստատում է պաշտամունքին հատկացված հատուկ տեղի առկայությունը նրանում:

Պաշտամունքին վերաբերվող նման կոթողներ գտնում ենք նաև Կարմիր բլուրի, Արգիշտիի ինիլի, Էրբեունիի և այլ բնակելի շենքերում: Հետևաբար կարելի է եզրակացնել, որ ուրարտական բնակելի շենքերում առկա էին համապատասխան անկյուններ, որտեղ ընտանիքի կողմից կատարվում էին պաշտամունքի հետ կապված անհրաժեշտ ծիսակատարություններ: Այս առումով նշանակալից է նաև, որ Էրբեունի քաղաքի հյուսիսային հատվածի բնակելի տներից մեկում, ուրարտական խեցեղենի հետ մեկտեղ հայտնաբերվել է եգիպտական Բես աստծո դիմակը: Բեսը Եգիպտոսում այն շատ տարածված աստվածներից էր, որը տան օջախի պահպանն էր շար ոգիներից, օձերից, որ հիմա արդեն համահավասար շափով նաև ուրարտական բնակելի տան պահպանն է դարձել:

Արագածի բնակելի այս մենատան հատակագիծն իր պարզ հորինվածքով գրեթե դասականի շափ տիպական է Ուրարտուի գյուղական բնակավայրերի: Համար. այն արտահայտում է տան հիմնական կենսական պահանջների ծավալատարածական լուծումները: Սակայն, հատակագծման այս հորինվածքի սկզբունքային լուծումը կիրառվում էր նաև քաղաքային բնակելի տների համար, մասնավորապես այն կարելի է տեսնել Թեյշեբահին քաղաքում:

Մենատուն Փեյշեբահինում: Պահպանվել է պատերի բարձրությունը՝ 0,75 մ, շարված են կոպտատաշ սուֆից, իսկ որոշ մասերում նաև գետաքա-



ե

Աղ. 29 ա) Բազմաշարի բնակելի տան հսկիտ, վերակազմություն, բ) Արգիշտիի/Կելի/ բնակելի տան հատակագիծ, գ) Արգիշտիի/Կելի/ բնակելի տան կտրվածք և վերակազմություն, զ) Բաստամ, բնակելի տան հատակագիծ, ե) Ջերմակի-Քևիկ, բնակելի տան հատակագիծ

րերից: Գտնվում է նկատելի թևորթություն ունեցող ազատ տարածքի վրա. բաղաբի հարավարևմտյան մասում:

Ժամանակին կառույցը ենթարկվել է պարզ տեսանելի վերափոխումների, որի հետևանքով նրա նախնական հատակագիծը բաժանվում է երկու հատվածի՝ ինքնուրույն մուտքերով (գծագր. աղ. 32): Իր նախնական հորինվածքով այն կազմված էր հինգ սենյակից, մեկ մեծ դահլիճից ու բակից՝ 500 քմ ընդհանուր մակերևույթով: Թեյշշերախի բաղաբի հողային տարածքի սուղ պայմաններում բնակելի տան նման մակերեսը արտակարգ չափերի էր: Հանրահայտ են Հին արևելքի չափանիշները նման տների համար: Օրինակ՝ Ախետատնի բաղաբում Եգիպտոսի գերագույն բուրմի Պախախի մենատունն ուներ համարյա նույն չափերը՝ 550 քմ:

Մասնով պարզ են դառնում այն արտակարգ պահանջները, որ առաջադրում էր հինարևելյան ու մասնավորապես Թեյշշերախի սոցիալական բարձր խավը՝ ներքին կենցաղի ձևերի կազմակերպման նման շենքերում: Այդ նկատելի է նաև նրա առանձին հատվածների լուծումներից:

Այսպես, շենքի մուտքն ունի արտակարգ լայնություն (3,22 մետր), որը, հավանաբար, նախատեսված էր անիվային տրանսպորտի, թերևս մարտակառքի անցման համար: Նման ենթադրությունը միանգամայն հավանական է, քանի որ բաղաբում, այն էլ նրա այս հատվածում, բնակվում էին բարձրաստիճան պետական ու ռազմական պաշտոնյաներ, և մենատունը կարող էր պատկանել նրանցից մեկին: Մնացած սենյակները բնակելի ու տնտեսական կարիքների համար էին, ինչպես երևում է նրանցում հայտնաբերված համապատասխան հնագիտական նյութերից: Մեծ դահլիճը, սկզբնական շրջանում, ինչպես այդ պարզ տեսանելի է, ծառայել է որպես ընդունարան՝ տվյալ մենատան համար (քանի որ այն չէր կարող ինքնուրույն ու մեկուսացված կառույց լինել և ֆունկցիոնալ առումով իր առանձին նշանակությունն ունենալ):

Դահլիճի երեք սենյակները, որոնց քարե խորիսխները պահպանվել են տեղերում, նրա ներքին տարածությունը պետք է որ համապատասխան ութթմ հաղորդելու: Եթե այս ներքին տարածությունը համեմատենք էրեբունիի պալատական սյունազարդ դահլիճների հետ, որտեղ դ դեպ,

սյուները նույնպես դասավորված են կենտրոնական երկայնական տառնցքի մի կողմի վրա, պարզ կզանա նրանց սկզբունքային ընդհանրությունը: Թեյշշերախի շինարարների պետք է որ հայտնի լիներ Արգիշտիի պալատի ճարտարապետական կերպը էրեբունիում, քանի որ այդ տարիներին էրեբունին դեռ կանգուն և լավ վիճակում էր: Մյուս կողմից, արդեն հաստատված ճշմարտություն է, որ պալատական կառույցների ճարտարապետական ավանդակն ձևերի մեկնակետը բնակչության սկզբնավորման մեջ: Հետևապես բնակարկող մեր օրինակները արգասիք են հենց այդ սկզբունքի:

Մենատունն այնքան լավ է պահպանվել, որ նրա նախնական ընդհանուր ծավալատարածական ձևը վերարտադրման իմաստով կասկած չառաջացնող բավականին պարզ կառուցվածք է:

Թեյշշերախի մեզ առնելը: Այս բավականին մեծ շենքը, որը գտնվում է բաղաբի գլխավոր երկու փողոցների խաչմերուկում, իր ճարտարապետական հորինվածքով զգալիորեն տարբերվում է Թեյշշերախիում եղած բոլոր մյուս շենքերից: Մենատան գլխավոր ճակատն իր լայն շքամուտքով լավ տեսանելի է բաղաբի կենտրոնական մասում, մինչդեռ, բաղաբի մյուս բոլոր շենքերի մուտքերը, որպես կանոն, դասավորված են նրբանցքների, կարծես, քողարկված հատվածներում:

Փողոցների սահմանները բաղաբի ընդհանուր հատակագծում նշված են բազալտե խոշոր բեկորներով, ինչը հաստատում է, որ հատակագիծը կազմված է նախապես:

Բաղաբի այս մասում, հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ձգված փողոցը բեկվում է, շենքն իր ամբողջ խորությամբ բաժանվում է երկու հատվածի՝ դրսից ինքնուրույն մուտքով:

Ուշադրություն է արժանի այն, որ տվյալ տունը միակ հայտնի շենքերից է Թեյշշերախի բաղաբում, որը դրսից երկու դուռ ունի և այն էլ իրենց ընդգծված տեսքով (գծագր. աղ. 32):

Շենքի հարավային ու հիմնական հատվածը, ինչպես այն պարզ երևում է նրա հատակագծի լուծումից, ընդունարանն էր: Այն բաղկացած էր լայն շքամուտքից, երկու սյուններով՝ պատերի ելուստների մոտ, երկու սյունազարդ սենյակներից, որոնցից երկրորդում կա օջախ: Շենքն իր հատակագծային հորինվածքով հիշեցնում է Տիբիթոսի «մեզագրոն» կոչվող հյուրատունը և

այդ կապակցութեամբ էլ Քնչշերտիկի տվյալ մենատունն այդպէս էլ անվանեցինք:

Անճարի տեղանքի պատճառով շենքի հատակագիծը ծանոված է: Այսպէս, շքամուտքի ներք ընկած պատը ոչ թէ ուղղահայաց է տան հիվայնական պատին, ինչ որ կլինէր ընական, այլ գուցահեռ է փողոցին, որով նրա անկյունային մասերում ստեղծվել է շքամուտքի համար հավասար խորութիւնով Ապա՛ն Յէն շքամուտքի հյուսիսային անտը (պատի ելուտը) կառուցված լինէր իր պատի առանցքի շարունակութեան վրա, առանց այդ խախտման, ապա շքամուտքի տարածական ընկալման մեջ կխախտվեր ելուտների անհրաժեշտ հավասարութիւնը: Այս լուծումը հնարավոր է դարձրել այդ ելուտին մոտեցնել դռան բացվածքը, որով այն համընկել է ղլխավոր ճակատի առանցքի հետ:

Մեզարոնի շինարարի ուշադրութիւնից չի վրիպել նաև ծանօտների միջև եղած պատի դիրքը: Այն նույնպէս կառուցվում է երկայնական պատի նկատմամբ որոշ անկյան տակ՝ դահլիճը քառակուսի հատակագծին մոտեցնելու միտումով:

Ծվ, այսպէս, հողամասի հետ կապված շենքի հատակագծի ձևի նման շտկումները շինարարը հաղթահարել է վարպետորեն ու կատարելապէս:

Այսպիսով, տվյալ կառուցվածքի ճարտարապետական հորինվածքի նման ճշտումները, որոնք կատարված են շափազանց պարզ ու հստակ, իրացվել են դասական հնագույն կառուցչի հորինվածքի ձևին նրբաճաշակ վարպետութեամբ հարմարվելու բարդ եղանակով, օգտվելով դրա համար ճարտարապետութեանը բնորոշ օպտիկական ճշտումների միջոցներից:

Հարկ է նշել մի առանձնահատկութիւնն ևս մենատան մեզարոնի հատվածում: Դա նրա ղույզ սյունների դասավորութիւնն է դահլիճի լայնական առանցքի վրա, թեև մեզ հայտնի նման դեպքերում նրանց դասավորութիւնը կատարվում էր երկայնական առանցքով:

Մենատան հյուսիսային հատվածը նրա տեսեսական մասն էր, որը ենթարկվել էր վերակառուցման և երկու սյունանոց սենյակը ստացել էր ինքնուրույն մուտք դրսից:

Շենքի պահպանված մասերի հիման վրա հնարավոր դարձավ վերարտադրել նրա նախնական տեսքը դրսից, ընդ որում այն ցույց տալ քաղա-

քի տվյալ խաչմերուկի միջավայրում: Ամենայն հավանակտութեամբ, մենատունը ստորոգծովին կառուցված է եղել քարից, քանի որ պեղումների ընթացքում վերջինս մեծ լսփերով գուրս է բերվել նրա տարածքից:



Շենքի շքամուտքային մասը, որը դուրս է դուրս պեղման փողոցի խաչմերուկը, բաղադրի բնակելի շենքի համար նման տնտեսաօգտակար բացվածքով, կարծում ենք, որ մասնական ունէր հասուկ նշանակութիւն: Այն կարող էր խանութ լինել, մասնավանդ, որ գտնվում էր քաղաքի կենտրոնական բանուկ մասում: Ի դեպ, հնագետ Լեոնարդ Վուլին՝ նման նշանակութիւն էր տեսնում Ուր քաղաքի շատ ավելի վեղ շրջանի կառուցչներից մեկում, համանման հորինվածք ունեցող հատվածի համար:

Բնակելի տներ խմբային կառուցապատումով:

Քնչշերտիկի քաղաքում, քաղաքի մենատներից ու սեկցիոն տներին, պահպանվել են խմբային կառուցապատումով բնակելի տներ, որոնք թերևս կազմում են քաղաքի կառուցապատման հիմնական մասը (գծագր. աղ. 39): Բնակելի շենքերով կառուցապատված թաղամասերի մեջ աչքի է ընկնում մի շենք՝ արտաբուստ պահպանված 1,10 մ բարձրությամբ ու շարված գետաքարերով: Այն սկզբից եւթ եղել է առանձին շենք, որին կցված մյուս շենքերը նրա հետ կապված շեն իրենց շարվածքով: Հաստատվել է, որ այդ շենքը կառուցված է եղել մյուսներից շատ ավելի առաջ, ըստ որում, երբ գեո շէյն բացված փողոցները ու հետևապէս հատվածները շտկումներ բնակելի թաղամասը: Այդ հաստատվեց շենքի ներսում ընկած քարն ատամնավոր բարավորների առկայութեամբ, որով սպացուցվեց, որ կողքի պատերի վերին մասում երբեմն գոյութիւն են ունեցել պատահականներ:

Կարելի է ենթադրել, որ այդ մեկուսի կանգնած փոքր մակերեսով ու քառակուսի հատակագծով կառուցը նախապէս եղել է աշտարակած շինութիւն և կաղմել է ուղղաձուգաձուգական նշանակութիւն ունեցող համակարգի մի մաս՝ Ուր երկրի այս հատվածում, դեռ Քնչշերտիկի քաղաքի հիմնադրումից առաջ: որի մասին խոսվեց նախորդ գլխում:

Այս կառուցչի արևմտյան պատին կցված է եղել համարյա նույն չափերի սենյակ, իսկ նրանց առջև, հարավային մասում, ստեղծված էր պա-



Ն.Ղ. 30 Քելշերսինի. բնակիչի տան բակ, վերակազմություն, բնակիչի թաղամասի կորվածք  
 և վերակազմություն, բնակիչի թաղամասի հատակագիծ

ըրսպպատ քակ, որի մի մասը ունեցել է ծածկ՝ սյունների վրա, քարն խարխսնկերով, սրունք պահպանվել են տեղում:

Տվյալ թաղամասի մյուս բոլոր շենքերը դանազան տարբերակներով կրկնում են նկարագրված տան հատակագծային սկզբունքները՝ ամեն անգամ հարմարվելով թաղամասի տարրերի եզրագծերին: Իրանով թաղամասում գոյանում են 2 և 3 սենյականոց բնակելի տներ, համապատասխան բակերով, որոնցում, բացառությամբ ձմեռային ամիսների, կատարվում էին տան համարյա բոլոր տնտեսական աշխատանքները: Բակի սալահատակված մասում, ծածկի տակ պահվում էին նաև ընտանի կենդանիներ: Բակի միջին մասում գտնվում էր տան օջախը, իսկ նրա մի անկյունում դրված էր կարասը՝ խմելու ջրի համար, շուրջ 150 լիտր տարողությամբ: Բակում էր գտնվում քարե մեծ սալով անշատված տան դուռարանը:

Ուրարտական բնակելի տները երկրի տաք և ցուրտ շրջանների համար իրենց տարածական ձևերի լուծումների առումով երկու տիպի էին՝ առաջիններում տան սենյակները խմբավորվում էին բակի, իսկ երկրորդներում՝ կենտրոնական դահլիճի շուրջը:

Ստորև բերված երկու տան մակերեսների աղյուսակից պարզվում է, որ նրանց մակերեսները որոշակիորեն չափավորված էին քաղաքում:

Տների անվանումը	Մակերեսների բանալը մ <sup>2</sup> -ով			
	բնակելի սենյակ	տնտեսական մաս	բակ	ընդամենը
Առաջին տան Երկրորդ տուն	21,80	22,57	55,20	99,57
	22,95	27,20	47,73	97,93

Աղյուսակից երևում է, որ բակերի մակերեսները փոքր են, որ հետևանք է ոչ միայն հողատարածության, այլև նրանց տնտեսական նշանակության սահմանափակության:

Թաղամասի կառույցների պատերի շուրջ մեկ մետր շափով պահպանված բարձրությունը հնարավոր է դարձնում նրա տարածական ձևերի հավաստի վերակազմությունը:

Թաղամասի կտրվածքի վերակազմության գծագրում տեսանելի են սենյակների հարթ ծածկերը,

բնակելի երկու շենքերի բակերի ներքին տարածական ձևերի հորինվածքները: Յուրաքանչյուր բակում թափփված քարն կույտերի քանակը լրացնում է պատերի ավերված մասը, որով նրանց բարձրությունը կազմում է շուրջ 3,5 մ: Նման բարձրությունը կոնստրուկտիվ առումով համապատասխանում է 0,7—0,8 մ լայնություն ունեցող պատերին, այդ համաչափությունը միանգամայն օրինաչափ էր նաև ժողովրդական ճարտարապետության բնակելի շենքերի մեծ մասի համար:

Թելքերահինում խմբային կառուցապատումով բնակելի տները կազմել են մի շարք թաղամասեր, որոնք ունեն ճարտարապետության համանման տարածական ձևերի լուծումներ: Արտաքինապես այդ թաղամասերն ունեցել են հարթ ծածկեր, իսկ փողոցների երկայնությամբ փռված նրանց ճակատները խուլ պատերի տեսքով էին, ինչպես այդ բնորոշ էր հինարևելյան նույն այլ քաղաքների համար: Պատերի միակ բաշվածքները դռներն են, որոնք, սակայն, արված են նրբանցքների կամ առավել անտեսանելի տեղերի կողմից: Այս հնազույն մի պահանջ էր՝ տարածված դեռ Շումերում, ուր տան դրսի դուռը պետք է լիներ նեղ ու անկայուն, ինչպես այդ ասված է «Տեալին նախապաշարման տեքստ»-ում, որից մեջբերում է կատարել Լենարդ Վուլինը:

Բաստամի բնակելի տունը: Բաստամը, որի բլրի ստորոտում է փռված հյուսիսարևելյան հարթավայրային մասի բնակելի թաղամասը, ունի բնակելի տների խիտ դասավորություն, և ինչպես կարելի է դատել տների վերերկրյա տեսանելի հետքերից, նրանք ունեն տարբեր հատակագծային հորինվածքներ: Այստեղ, տվյալ թաղամասի հյուսիսային մասում մանրամասնորեն պեղված է միայն մեկ շենք, որը խմբային բնակելի կոմպլեքսի մի մեծ հատվածն է:

Շենքն իր պեղված մասում ունի 9 բնակելի, տնտեսական, պահեստային սենյակներ, մեծ դահլիճ, բակ՝ տնտեսական կարիքների ու մի առանձին հատված ընտանի կենդանիներ պահելու համար (գծագր. աղ. 31 բ): Մեծ չափերի դահլիճը տան հիմնական մասն էր, որը կառուցապատված էր նրա միջին մասում և իրար հետ էր կապում նրա հյուսիսային ու հարավային շարքերի սենյակները: Դահլիճի հյուսիսարևելյան ու հարավարևելյան պատերի տակ կառուցված երկար նստարանները հաստատում են, որ այստեղ

բազմանդամ ընտանիքի հավաքատեղին էր: Քանի որ տվյալ դահլիճն իր բոլոր կողմերից կառուցապատված էր, ուստի պետք է որ լուսավորվեր միայն վերևից, երդիկի միջոցով:

Դահլիճի արևմտյան պատին կից բակը իր ծածկված հատվածով, որի մի մասը, անշատված լինելով ցածր ցանկապատով, ինչպես Թեյշերահիյի բնակելի տներում, սալահատակված էր, նույնպես ծառայում էր ընտանի կենդանիների համար: Բակի մնացած մասերի պատերի տակ շինված են նստարաններ: Հետևապես հենց այստեղ էլ կատարվում էր տան տնտեսական աշխատանքների հիմնական մասը:

Տունը դրսից ուներ երկու մուտք, որից մեկը՝ բակի մուտքը, նաև տնային կենդանիների համար էր:

Ինչպես երևում է շենքին կցված հարևան կառույցների պատերի առանձին հատվածներից, տվյալ բնակելի տունը մեկ ընդհանուր կառուցապատված համալիրի միայն մի մասն է կազմում: Հետևաբար, ամբողջությամբ վերցրած այն կազմում էր մեծ թաղամաս:

Իսաստամի այս բնակելի տունն ուներ փայտյա հարթ ծածկ, քարե պատեր, իրենց հում աղյուսի վերևի շարքերով, ախիսնքն, կառուցված էր ուրբատակուն ճարտարապետութձյան ավանդական սկզբունքներով:

Սեկցիոն բնակլի տներ: Այս կարգի տները ստեղծվել են բնակիչների կենցաղի անհատական պահանջների ընդհանրության հաշվառումով, ինչը պայմանավորված էր, ինչպես ասվեց վերևում, այնպիսի ապրելակերպով, երբ բնակիչը շուներ մասնավոր տնտեսություն և ենթակա էր պետական պարենավորման: Ներկա դեպքում, հավանաբար, դրանք պետական ծառայության մեջ զբաղվող ռազմիկներ էին:

Սեկցիոն տների հատակագծային լուծումների տիպարային սկզբունքները անակնկալ հորինվածքներ չեն Հին արևելքի ճարտարապետության համար: Օրինակները շատ են, կարող ենք մատնացույց անել Բեկազ Անդրինես-տարույի կամ այլ համայնքում կառուցված բնակելի միատիպ շենքեր: Եզրիպտոսում:

Մեկ հավանի սեկցիոն տուն: Տվյալ տունը, որ հայտնաբերվել է Թեյշերահիյի տարածքում, իր բավական հասուն ճարտարապետական ձևերով, հավանաբար, ունեցել է զարգացման նախնական աստիճանները: Շենքը բաղկացած է չորս

միատիպ տներից, որոնք կազմում են ընդհանուր քառանկյունիներ: Պահպանված մասը բարից է, շուրջ 0,80 մ բարձրությամբ, իսկ դրանից վեր պայտերը շարված են հում աղյուսից, որոնցից երևում են առանձին հետքեր (գծագր. աղ. 31):




Տների միատիպությունը բացահայտում է նրանց ընդհանուր շինարարին, որը պետությունն էր, և շինարարության ընդհանուր ժամանակը: Ի դեպ, եզրիպտական Կախուն քաղաքի կառուցապատումը ցայտուն օրինակն է այն բանի, որ համանման պայմաններում գտնվող բնակիչների համար կառուցվում էին ոչ միայն առանձին տներ, այլև թաղամասեր և նույնիսկ ամբողջական քաղաքներ:

Թեյշերահիյի սեկցիոն տների երկու առաջին հատվածները ծառայում էին օժանդակ կարիքներին: Այդ արտահայտվում է թեկնող նրանով, որ նրանք շենքի մնացած սենյակներից անջատված են միջանցքով: Մյուս կողմից՝ բավականին լայն մուտքը դրսից (2,05 մ) հաստատում է, որ այն շենքի միայն առաջին հատվածի կարիքների համար էր նախատեսված: Հավանական է, որ ինչպես Թեյշերահիյի նկարագրած նախորդ մեծատներից մեկում, այստեղ ևս նման բացվածքը ծառայում էր կամ խոշոր եղջերավոր անասունների, կամ, որ ավելի հավանական է, ձիերի մուտքի համար: Շենքը, ինչպես կարծում ենք, ռազմական բարձրաստիճան հրամանատարների համար էր, իսկ ձին նրանց մշտական ուղևորին էր:

Տան երկրորդ հատվածը՝ մեծ սենյակը, միայնակ սյունով, և նրա նկատմամբ սիմետրիկ դասավորված փոքր սենյակը, որը անմիջապես հաղորդվում է միջանցքի հետ, ծառայել են՝ առաջինը որպես շտեմարան, որտեղ նաև պատրաստվում էր կերակուրը, մյուսը՝ պահակատուն:

Տան բնակելի մասը գտնվում էր նրա երրորդ և չորրորդ հատվածներում և բաղկացած էր հինգ սենյակից: Գլխավորը մեծ դահլիճն էր (6,15 × 10,15 մ), որը հաղորդակցվում էր մյուս սենյակների հետ, որոնց ֆունկցիոնալ ստույգ նշանակությունը հնագիտական նյութի պակասության պատճառով չի որոշվել:

Գլխավոր դահլիճը, համաձայն սեղում հայտնաբերված նրանց խորիխների, ուներ 4 սյուն (D = 0,52 մ): Այն, հավանաբար, ուրբատակուն ճարտարապետության մեջ առաջին հայտնի նման տարածական հորինվածքն է: Դահլիճը տան այն հիմնական ներքին տարածությունն է, որպիսին



Ագ. 31. Քելերտինի, բազմասեղանի թանկեղի սանդղապարհի նախապատ, վերահաստի վանդակները, ներքին սեղանը, վերահաստի վանդակները:

նախորդ մենատնտեսում հանդիսանում էր բակը: Դասչիճի կոնստրուկտիվ կառուցվածքի կազմի մասը 4 սյուններով պահվող հարթ ծածկի կենտրոնական հատվածն էր, որտեղ պետք է որ գտնվեր երդիկը: Կասկածից դուրս է, որ տան այս սենյակների լուսավորությունը կատարվում էր երդիկների միջոցով, քանի որ կառուցապատված լինելով միմյանց կից և դասավորված լինելով զգալի խորության մեջ, սենյակները չէին կարող լուսավորվել այլ եղանակով: Խոսք առաջին հատվածի մուտքին կից տարածությունը փոքր բակ էր կազմում, որի միջնորդությամբ դռների միջոցով էլ լուսավորվում էին նրա հետ հարակից սենյակները:

Ոչ բոլոր սենյակներն էն, որ ունեին օջախներ, հետևապես նրանք տաքացվում էին շարժական օջախներով, որպիսիք էին բաղալուս սալերը, որոնց մեակ օրինակը (0,40×0,60 մ) գտնվել է դասչիճում:

Շենքի մնացորդները հնարավոր դարձրին նրա արտաքին ու ներքին ճարտարապետական ձևերի վերաբերությունը, շնչված միայն շենքի բարձրության նախնական շափու: Այն ընդունված է պայմանականորեն 5 մետր, հիմք ընդունելով ժողովրդական ճարտարապետության համանման օրինակները, ինչպես նաև տվյալ շենքի պատերի հաստությանը համապատասխան հնարավոր բարձրությունը:

Շենքի արտաքին ճարտարապետական ծավալները մեր վերակազմության մեջ արտահայտվում են լակոնիկ ձևերով՝ որմնահեղեղով ու դռների բացվածքներով նրանց միջև:

Այսպիսով, Քեյշեբաինի սենցիոն բնակելի տան հատակագծային հորինվածքի լուծումը չէր պայմանավորվում նրա բնակիչների անհատական պահանջներով և ոչ էլ ընտանիքի անդամների քանակով, ինչպես այդ արտահայտված է բաղալուցի մյուս շենքերում, այլ ստեղծվում է կանխակալ, ստանդարտ ու ենթադրյալ հնարավոր պահանջների հիման վրա, «պտենցիալ» բնակչի համար:

Իսլամաբադի սեկցիոն տուն: Ուրարտական ճարտարապետության տվյալ կառույցի կերպը հայտնաբերված է բրոնզյա թիթեղի վրա՝ Քոֆ-բախ-կալեում, իսկ մի ուրիշը՝ բազալտե բեկորի վրա՝ Կեֆ-կալեսիում: Դրանք որպես ուրարտական ճարտարապետության տիպիկ քաղաքային տուն ունեն արտակարգ նշանակություն:

Հարկ է նշել, որ նման շենքերի մասին մեր բոլոր կրթակազմությունները արվում են միայն նրանց ճակատների ճարտարապետական ձևերից ստացած տպավորությունների հիման վրա (գծագրեր. աղ. 29 ա):

Պետր է ենթադրել, որ տվյալ շենքերի կառուցողական խորությունը մեծ չէր, քանի որ այդ շենքերում սենյակների լուսավորությունը վերևից բացառվում էր: Բացի դրանից, այդպիսի շենքերում բացառվում էր նաև տնտեսական կարիքների համար մեծ տարածքների գոյությունը, ինչը հնարավոր էր մեկ հարկանի շենքերում:

Հետևաբար, ինչպես սենյակների քանակը, այնպես էլ նրանց մակերևույթը նման բազմահարկ շենքերում պետք է որ խիստ սահմանափակ լինեին:

Վերջին տարիներին, երբ Բրիտանական թանգարանի պահեստներում գտնվեցին այդ տունը պատկերող բրոնզյա թիթեղիկների մնացած բեկորները, որոնք ժամանակին այնտեղ էին տարվել Քոֆ-բախ-կալեյց, պարզվեց, որ շենքը ունեցել է երեք սեկցիա:

Դատելով տվյալ շենքի հատակագծման հնարավորությունները ու բաղալուցիով այն ժամանակակից կառուցվածքների հետ, կարելի էր նրա ծավալները հորինվածքների մասին ստանալ մոտավոր պատկերացում:

Շենքը ունեցել է 3 շքամուտք, որոնք բացվում էին դեպի աստիճանավանդակը: Նման կրթակազմության կարելի է հանդիպել Կեֆ-կալեսիի ժայռաբեկորի վրա հայտնաբերված համանման տան գծագրից, որտեղ աստիճանավանդակների պատահանները, տեղադրված լինելով մուտքի առանցքի վրա, շեն համապատասխանում բնակելի շարկերի պատահանների բարձրությանը, ինչպես ժամանակակից բնակելի շենքերում:

Թեև մենք չունենք տվյալ շենքի կտրվածքը, սակայն սկզբունքորեն նրան կարող են փոխարինել եզրագծային թուփանքների բազմահարկ տան համապատասխան կտրվածքի գծագրերը՝ կատարված նրա դամբարանի պատերից մեկի վրա Թերեում: Այդ կտրվածքներից մեկի վրա, որը որոշակիորեն արտահայտում է ժամանակի բազմահարկ բնակելի տան կոնստրուկտիվ համակարգը, աստիճանավանդակի պատահանները նույնպես շեն համարվում բուն շարկերի պատահանների հետ: Բացի դրանից, շենքի հարկամիջյան ծածկերը այստեղ պահվում են փայտյա

սյուններով, ինչը որոշ ազատություն էր ստեղծում կառուցապատման խորությամբ շափի ընտրության համար: Կտրվածքներից երևում է նաև, որ պատահանները դասավորված են պատերի վերևի մասում:

Հակառակ Կեֆ-կալևսիի ժայռակերտի վրա պատկերված շենքի պատահանները դասավորություն ունեն (տեսանկ. աղ. 28), Քոփրախ-կալևսի բրնձյա հարթաքանդակի վրա պատկերված շենքի պատահանները մի գծի վրա են: Հավանաբար այս տիպի շենքում, հակառակ նախորդ օրինակի, աստիճանավանդակը գտնվում էր շենքի խորվայան մեջ: Նույն Քոփրախ-կալևսի վածքից երևում է, որ աստիճանավանդակի նման դասավորությունը, լինելով կիրառելի հորինվածք եգիպտոսում, կարող էր հայտնի լինել նաև Ուրարտում<sup>5</sup>:

Ի տարբերություն Քոփրախ-կալևսի բրնձյա հարթաքանդակի վրա պատկերված բարավորների, Կեֆ-կալևսիի բեկորի վրա պատկերված պատահաններն ունեն լավականին պարզ գծված քարե լեկորներ:

Շենքերի մուտքերը երկու դեպքում էլ ավարտված են կամարակապ ձևով, որը բավականին տարածված էր ուրարտական ճարտարապետության մեջ և հայտնի է բազմաթիվ համանման հին հարթաքանդակներում: Այս երկու շենքերի ընդհանրություններից հիշենք նաև, օրինակ, աստիճանավանդակների արտաքին ճակատային հատվածները, որոնք երկու դեպքում էլ վերջված են բավականին չզոր որմնահյուսերի միջև, երկու դեպքում էլ քիվերի տակ զարդանկարները բավականին լայն շերտով են արված. նրանց գծագրությունները եռանկյունաձև են: Ուրարտոսի տարբեր շրջաններում նշված նմանությունը հավաստում է բազմահարկ բնակելի տան ճարտարապետության համար արդեն ստեղծված հաստատուն ավանդույթների մասին:

Ուշագրության արժանի է Անդրե Պառոտի<sup>6</sup> կողմից անցկացված Ղուգահեռը ուրարտական տվյալ բազմահարկ տան և Առաջավոր Ասիայի արաբական բազմահարկ տների միջև: Նմանությունը այդ շենքերի միջև բավականին նշմարելի է, հատկապես շենքերի վերին հատվածներում քիվերի ճարտարապետական ձևերի, աշտարակաձև կառույցների միջև: Նմանությունը չի կարող տարակուսանքի տեղիք տալ, եթե նկատի ունենանք նրանց պատմական միջավայրը: Ինչ վերաբե-

րում է Անդրե Պառոտի բերած մյուս ղուգահեռներին, որ նա անց է կացնում Խորասրահի հայտնի հարթաքանդակի վրա պատկերված Մուսասիրի շենքերի ու Սեյունի արաբական բազմահարկ շենքերի միջև, ապա նրանք անընդունելի են, քանի որ, ինչպես մենք ցույց ենք տվել, Մուսասիրի տները ոչ թե բազմահարկ են, այլ թեք սարավանդի վրա ստորինահասնակ կառուցված մեկ-շարկանդ շենքեր են, որոնք, տարածական հորինվածքի ընկալման մեջ միաձուլվելով, ասորեստանյան հնագույն նկարում ստացել են բազմահարկ լինակելի տան տեսք:


Սակայն միանգամայն համոզեցուցիչ է Ուրարաղաքի հնագույն շենքերի համեմատությունը ժամանակակից արաբական քաղաքների բնակելի տների հետ, որ կատարել է Լեոնարդ Վուլին:

Ի դեպ, մեր համոզմամբ, Կեֆ-կալևսիի ուրարտական բազմահարկ շենքի կերպը կարող է լինել ոչ թե կանգուն շենքի վերարտադրություն, այլ, ամենայն հավանականությամբ, այն բազմահարկ շենքի ճախարհի՞ է՞՝ պատկերված քարի վրա: Այդ հաստատելու համար մեր կողմանց այն է, որ քարի բեկորի շարված եզրի վրա պատկերված է սեպաձև գծագրություն մի հատված, որը պետք է թիվ լինի տվյալ նախագծի համար և ոչ թե ճարտարապետական մի դրվագ:


Բազմահարկ շենքի նկարագրությունից պարզվում է, որ նրանում անհնարին էր կատարել տրնտեսական լայնատարած աշխատանքներ: Եվ քանի որ նրա բնակիչները ամբողջովին ենթակա էին պետական պարենավորման, հավանաբար նրանք կարող էին պատկանել սոցիալական այն խավին, որը գտնվում էր ռազմական ծառայության մեջ: Իսկ այդ դեպքում շենքը պետք է լիներ սովորական զորանոց (barzudibiduni):

Այս առումով, թերևս, պատահական չէ, որ տվյալ հարթաքանդակը գտնվել էր այնտեղ, ուր նրա տարածքում, Մ. Ռիմշնայրերի կարծիքով գտնվում էր ձիերի լողացնելու համար արհեստական լիճը, որի մոտերքը, ի դեպ, Մենուան կատարեց իր հայտնի թռիչքը Արծիբի ձիու վրա, և որտեղ անհիշելի ժամանակներից ի վեր կանգուն է հինավուրց զորանոցային մի շենք: Դուցն զորանոց էր նաև այն շենքը Բաստամի ռազմական քաղաքում, որը, Վ. Կյալսի կարծիքով, նույնպես եռահարկ էր (գծադր. աղ. 20):

Բայց ինչպե՞ս է կոլվել զորանոցային շենքը




Պատկեր 31




Պատկեր 32



Պատկեր 33



0 2 4 6 8ս



0 2 4 6 8ս

Աղ. 32. Փլյնբրաինի մեզարան տխրի բնակիչ տների բառի վերակազմություն, մեզարան տի-  
պի բնակիչ տան ներքին տեսքը, վերակազմություն, խոտակաղիծ, մենատան խոտա-  
կաղիծ

ուրարտեբնն: Հանրահայտ է ուրարտական «barzudibiduni» առայսօր չլիբրանված սևվանուժը:

Կոիբրանցի արձանագրությունում Մենուա թագավորը ասում է. «barzudibiduni տունը կառուցեցի: Մենուա թագավորի (barzudi biduni տունը անունն է) (նրա) հալոյի աստվածը Տչոր է (բուլը) աստվածների շարքում»:

Barzudibiduni-ին չէր կարող պաշտամունքային շինք լինել, ինչպես այդ կարծում էր Գր. Ղափանցյանը, քանի որ նման շինքերը թագավորների անունով չէին կոչվում:

Արձանագրության շարունակության մեջ ասված է. «Թող լինի այնտեղ Մենուա (թագավորին) ուժ, որը նվերված է (?) հալոյ աստծու ռազմիկին»:

Հետևապես՝ barzudibiduni-ում գտնվում էր ուժ, անշուշտ ռազմական ուժ, որը տվյալ ռազմիկին էր նվիրված և որը, հետևապես, գտնվում էր այդ շինքում: Եղբակացությունը կասկած չի հարուցում, որ barzudibiduni-ին զորանոցային շինք էր:

Իրոնզեդարյան ժամանակաշրջանի և արտագրական տների նամադրումը նարավորություն է տալիս ծագումնաբանական կապ տեսնել տեղական ցեղերի բնակելի տան ստեղծման նվաճումների և ուրարտական տների ճարտարապետական ձևերի միջև:

Նկատելի է նաև այն որոշակի ընդհանրություններ, որ առկա է հիւսարեկլյան խաթթուսայի և Յերբոլի երկու սենյականոց տների ու նրանց բակի հորինվածքների և Թեյշեբախիի համանման բնակելի տների միջև:

Եթև անդրադառնալու լինենք ուրարտական բնակելի շինարարական ժառանգությանը ու հատկապես նրա աղեկցություններին, հին Հայաստանի բնակելի ճարտարապետության կազմավորմանն ու նետագա զարգացմանը, կտեսնենք, որ այդ հատկապես արտահայտվում է Հայաստանի ժողովրդական ճարտարապետության զարթոյթին ու լեռնային շրջանում պոլյություն ունեցող իրարից տարբեր տիպերի հորինվածքներում:

Հարթավայրային շրջաններում, ինչպես և Թեյշեբախիում? և Արագածում, տարվա տաք ամիսներին տան կենցաղային անտեսական կյանքը ծավալվում էր բակում: Այս հանգամանքն է

պատճառը, որ այդ տների հորինվածքներն էլ միանման էին, մասնավորապես, որ նրանց շինարարությունը կատարվում էր միևնույն շինանյութից:

Լեռնային շրջաններում զարգանում էր բնակելի շինքի այն տիպը, որը իր մեջ միավորում էր բուլըր սենյակները՝ «տուն» հասկացություն ունեցող կառույցի մեջ նրա հիմնական տարածական միջուկը՝ դահլիճը, ծածկված էր «հողաբաշեն» կոշվող գմբեթային ձևով, որը հաճախ հենվում էր շորս սյուների վրա, ինչպես այն տեսանք Թեյշեբախիի սեկցիոն տան դահլիճում:

Այսպիսով, շորս սյուներով, երդիկի միջոցով կենտրոնական լուսավորությամբ ներքին տարածության կազմավորման մեջ էարել է որոշակիորեն տեսնել ուրարտական ակունքները:

Ներքին տարածության այդ հորինվածքն անցնում է զարգացման մի երկարատև ուղի, դրբևտրվելով ոչ միայն բնակարանային կառույցներում, այլ նաև միջնադարյան հայ ճարտարապետության դասական մոնումենտալ շինքերում, ինչը առաջին անգամ բացահայտվեց Ստ. Լիսիցյանի հետազոտություններով: Բացի տարածական այս հորինվածքից, մենք նկատի ունենք նաև Մեղրիի շրջանի և Լեռնային Ղարաբաղի ժողովրդական ճարտարապետության մեջ պահպանված բնակելի այնպիսի շինքեր, որոնց մեջ առկա է նմանությունը Թեյշեբախիի քաղաքում հայտնաբերված բնակելի շինքի մյուս տիպի՝ «մեզարոնի» ձևերի հետ: Հավանաբար, վրացական ժողովրդական ճարտարապետության մեջ հայտնի բնակելի տունը՝ դարբաղի անվամբ, նույնպես կապված է ուրարտական «մեզարոն» կոշվող ձևի հետ, զանի որ վրացական այդ շինքերի՝ գվիբղիների կոշվող փայտի ծածկի ձևը ընդհանուր առմամբ իր ծագումնաբանական կապերի տուժումով համանման է հայկական «ճազարոշեն» ծածկի ձևին:

Այսպիսով, ուրարտական բնակելի շինքերի ճարտարապետական սկզբունքները հետագայում իրենց հետքը թողեցին Հայաստանի ժողովրդական բնակելի շինարարության ճարտարապետության վրա մինչև մեր օրերը հասած նրա հարթավայրային ու լեռնային շրջանների բնակելի տների երկու՝ արդեն նշված տարբեր տիպերում:

# ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

## ՄՈՆՈԻՄԵՆՏԱԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

### Ա. Աշխարհիկ շենքեր

Ուրարտուի մոնումենտալ կառույցների շարքում առավել մեծածավալ շենքերը պալատներն են, որոնց միջագետքյան գաղափարագիրը՝ Է.ԳԱԼ-ը, նրանց սեպագիր արձանագրություններում ունի նույն նշանակությունը՝ «Մեծ տուն»: Այդ նույն գաղափարագիրը, որին կցվում էր «ամրացված» մականունը, միաժամանակ արտահայտում էր «Ամրոցի» կամ «Միջնաբերդի» հասկացությունը:

Միջնաբերդերը և նրանց մասը կազմող պալատները, համաձայն ուրարտական քաղաքաշինական հաստատուն ավանդույթների, կառուցվում էին անառիկ բլուրների գագաթներին և նրանց ստորոտներում փոխած բնակատեղիների հետ կազմում էին քաղաքները: Մական միշտ չէ, որ այս վերջինները իրենց կազմում ունեին Է.ԳԱԼ-ները: Այդ հաստատվում է նրանով, որ ուրարտական քաղաքների գրավման կամ ավերման մասին ասորեստանյան տեղեկություններում Է.ԳԱԼ-ները շատ ավելի հազվադեպ են հիշատակվում, քան URU-ները: Հարկ է նշել նաև, ինչպես ասվեց «Քաղաքաշինություն» գրքում, Լորենմն որոշ քաղաքներում միջնաբերդերը մեկից ավելի են, ինչը որ պայմանավորված էր հարակից բլուրների առկայությամբ, որոնք նման դեպքերում նույնպես կառուցապատվում էին, բայց արդեն ստրատեգիական պահանջների մղումով՝ ստեղծելու համար պաշտպանական միասնական համակարգ:


Սեպագիր արձանագրություններում պալատները հաճախ հիշատակվում են պաշտամունքային կա-

ռույցների հետ մեկտեղ, օրինակ՝ DHalđini šeštili-ի «նալդյան դռների» ու այլ տաճարների հետ: Պալատների ու տաճարների միասնական կառուցումը հինարևելյան այն ավանդույթն է, որի արտահայտությունները դրսևորված են Առաջավոր Ասիայի ու Եգիպտոսի բազմաթիվ քաղաքների պալատներում, օրինակ՝ Սարիի, Խաթթուսայի, Մեդինետ-Խաբուի և մյուսների: Այդ նույնը հայտնի է նաև ուրարտական հուշարձանների պեղումներից:


Այս կապակցությամբ ուշագրավ է Գ. Ֆրանկֆորտի այն միաբը, թե քանի որ հինարևելյան աստվածների ու հասարակացություն միջև միջնորդի պարտականությունները դրված էին թագավորների վրա, հետևապես շատ հարմար էր, որ տաճարներն իրենց հերթին հանդիսանային պալատական համալիրների բաղկացուցիչ մասը: Ինչ վերաբերում է Եգիպտոսին, ապա թագավորներն այստեղ ոչ միայն այդպիսի միջնորդներ էին, այլև, բայց գոյություն ունեցող պատկերացումների, նրանց և աստվածների միջև գոյություն ունևր արյունակցական կապը:

Անտարակույս, այս հանգամանքն է, որ ստեղծել է հինարևելյան պալատական ճարտարապետության ձևերի որոշակի: խստություն, բայց նաև ճոխություն:


Ուրարտական Է.ԳԱԼ-ները իրենց նշանակությամբ, ինչպես դա հաստատվում է վիմագրական ու հնագիտական նյութերով, բաժանվում են երեք հիմնական խմբի՝ վարչատնտեսական, ուսգմական ու պաշտամունքային:



0 2 4 6 8 10



0 4 8 12 16 20m



0 5 10 15 20

Ազ. 33 Մեջևրախնի, Բիճարերի կարտաների սենյակ, վերականգնություն, ա) հատակագիծ, բ) նշական, բնակելի տան հատակագիծ, գ) Սշական, ուրարտական ամրացի հատակագիծ

Առաջիններում կառույցների հիմնական մասը ծառայում էր արտադրական կարիքներին: Նրանցում գործում էին արհեստանոցներ, որտեղ աւելում ու մշակում էին Լրկաթ, պղինձ, բրոնզ, ինչպես նաև՝ արծաթ ու ոսկի: Այստեղ պահվում էին գյուղատնտեսական մթերքներ, որոնց զգալի մասը նախաքվում էր տեղի ազդարնակաշտվույնից որպես տուրք, իսկ մյուս մասը հավաքվում էր պալատներին ենթակա մշակվող տողերից՝:

Ուրարտական պալատների հարուստ շտեմարանները մասին իր սեպագրում մանրամասն պատմում է նրանց ականատեսը՝ Սարգոն Բ-ն, իր կատարած հայտնի արշավանքի ժամանակ դեպի Ուրարտու մ.թ.ա. 714 թ.հ: Այդ նույն սեպագրերը բազմաթիվ կարևոր տեղեկություններ են հաղորդում նաև ուրարտական ռազմական բերդերի մասին: Այսպես, նրանք վկայում են, որ ուրարտական Է. GAL-ները շրջափակված էին հզոր բերդապարիսպներով ու խրամատներով և որ այդ բերդերում գտնվում էր ուրարտական թագավորների կայազորներ կազմող լավագույն, փորձված ու մարտերում կոփված զորքը:

Ուրարտական պալատներն ու բերդերը իրենց մոտակա ու հեռավոր մատուցյններում ունեին նաև այնպիսի կառույցներ, որոնք որպես նրանց ռազմական առաջակցներ իրենցով պատնշում էին այդ Է. GAL-ները:

Պալատների պաշտպանությանը մեծապես օժանդակում էր նաև լեռնային տեղանքը, քանի որ, որպես կանոն, պալատներն ու բերդերը վեր էին խոյանում անառիկ բլուրների գագաթներին կամ նման տարածքների անմատչելի մասերում: Դրա հետևանքով այդ կառույցների հատակագծային հորինվածքները ռացիոնալ կերպով կապվելով տեղանքին, ստեղծում էին ճարտարապետական ծավալների մտածված փոխանցումներ և օգտագործման համապատասխան հնարավորություններ:

Այդ են հաստատում նման ձևով կառուցված միջնաբերդերը՝ Վանա ժայռի վրա, Հայկաբերդում, Ալիթի-Յեփեում, Բաստամում, Կարմիր բլուրում և այլուր:

Կառուցողական համանման սկզբունքները հայտնի են դեռևս խեթական ճարտարապետության մեջ, իսկ նրանից խիստ տարբերվում են արհեստական հարթակների վրա վեր խոյացող Միջագետքի մոնումենտալ շենքերի կառուցողական սկզբունքները:

Շենքերը վարպետորեն կապակցելով տեղանքին, ուրարտացիք մշտապես նաշվի էին ստնում տվյալ կապերի բոլոր անհրաժեշտ լուծումները: Հատկապես միջնաբերդի արտաքին եզրագծերը կառուցապատվում էին ապաստմ քարերի հիմնապատերով, որոնք պետք է դիմադրեին սահմանափակված շենքերի կառույցների սովորաբար ոչ խոր հիմքերի կայունությունը:

Թեև պալատների հիմնական մասը դեռ մնում է հողի հաստ շերտերով ծածկված, սակայն վերջին տասնամյակները պեղումները զգալիորեն բնորոշելուցին մեր պատկերացումները պալատների ճարտարապետության մասին: Պարզվել է, որ ուրարտական պալատները մոնումենտալ կառույցներ էին, հաճախ երկհարկանի, որմանկարներով զարդարված ներքին տարածություններով, սյունազարդ բակերով ու դահլիճներով, ինչպես նաև բազմաթիվ օժանդակ սենյակներով:

Պեղումների ժամանակ հայտնաբերված ճարտարապետական տվյալ ձևերը լիովին համապատասխանում են նրանց այն նկարագրություններին, որոնց հանդիպում ենք վիճաբանական նյութերում և հատկապես ասորեստանյան սեպագրերում, ուր հաճախ ենք գտնում այդ կառույցների բարձր գնահատականները:

Անդրազգանայով միջնաբերդերի տարածական ձևերի հորինվածքների ճարտարապետական արտահայտություններին, կարող ենք դրանք դասակարգել ըստ հետևյալ տիպերի.

ա) Միջնաբերդ՝ առանձին կանգնած շենքերի համալիրային կառուցապատումով,

բ) Միջնաբերդ՝ կառուցապատված միասնական ծավալի ձևով,

գ) Միջնաբերդ՝ եզրագծային կառուցապատումով, միջնամասում վեր խոյացող ծավալային միջուկով:

Տուշպա: Նման դասակարգման համաձայն, առաջին տիպին է պատկանում Տուշպայի միջնաբերդը, որը ճարտարապետական առումով ամենաբնորոշը, ամենախոշորն ու անառիկն էր, ինչպես այն իր նկարագրության մեջ ներկայացնում է Մովսես Խորենացին:

Տուշպայի միջնաբերդի մասին մեր տեղեկությունները բավականին աղոտ են, քանի որ նրանում երբևէ չեն կատարվել հնագիտական պեղումներ: Այդ պատճառով մեր պատկերացումները նրա մասին սահմանափակվում են այն եզրագծող արտաքին պարիսպների տեսքից՝ ստա-

ցած տպավորություններով, որոնք համապատասխանում են նրա հզորության մասին պահանջած տեղեկություններին (լուսանկ. աղ. 9 ա, բ)։

Միջնաբերդի թեք սարալանջերը բաղմամբով հատվածներում ունեն աստիճաններ՝ փորված անմիջականորեն ապառամների մեջ, որոնք իրար են միացնում մի շարք վիմափոր ու այլ կառույցներ՝ ինչպես աշխարհիկ, այնպես էլ պաշտամունքային կարիքների համար, և իրենց ձևերի առումով ուրարտական ճարտարապետության կարևոր կոթողներին են։

Անդրադանալով թոփրախ-կալեին (լուսանկ. աղ. 5), լենթադրում ենք, որ թոփրախ-կալեին Ռուսախինիի անվամբ կարող էր լինել Ուրարտուի ոչ թե հերթական մայրաքաղաքը, ինչպես այդ կարծում էր Լեման Հաուպտը<sup>5</sup>, այլ նույն Տուշայայի՝ նրա արվարձանում գտնվող պաշտամունքային կենտրոնը։ Այդ են հաստատում պաշտամունքին վերաբերող կառույցները, տաճարը, ինչպես նաև «ՄՆերի գուռ» կոչվող մայրային կառույցը՝ իր սկզբի արձանագրությամբ, որի մեջ թվարկված են ուրարտական պանթեոնի հավանաբար բոլոր աստվածները և նշված է սահմանված կարգը՝ այդ աստվածներից յուրաքանչյուրին մատուցվող զոհի տեսակն ու շափը։ Հավանաբար քուրմերին էր պատկանում թոփրախ-կալեում գտնվող պալատը, որ բոլոր մյուս կառույցների հետ մեկտեղ կազմում էր մի ընդհանուր պաշտամունքային համալիր։ Թեև Այդ են մեք չունենք այդ պալատի հատակագիծը, քանի որ այն լրիվ չի պեղվել ու չափագրվել, սակայն նրա հարդարանքի առանձին պատուհանները՝ բարե մոդաիկ հատակը, մարմարե պատերի քանդակները արտահայտում են նրա ներքին տարածքի ճարտարապետական բարձրարժեք տիրապետումները։

Էրեբունի։ Այդ ևրկրի ուրարտական քաղաքի այս հնագույն միջնաբերդը, որը փոխված է 6 հեկտար տարածության վրա, 65 մետր բարձրությամբ ունեցող Արինիբոզ բլուրի գագաթին, միջնաբերդերի առաջին տիպի առավել ցայտուն օրինակն է (գծագր. աղ. 26)։ Միջնաբերդի Լուսանկյունաձև տարածքը պարփակված է հզոր պարիսպներով (լուսանկ. աղ. 10 ա, բ), որոնք հարավարևելյան մասում ունեն ևրկր շարք։

Այստեղ միջնաբերդի մուտքի մոտ պեղվել է սյունազարդ մի կառույց։ Այն ունի բարձր հարթակի վրա կանգնած 6 սյուն, որոնք զծագրվում

են որմնակարներով ծածկված հետին պատի ֆոնի վրա։ Կառույցի ճակատային ամբողջ ևրկարությամբ փոխված 6 աստիճանները հաղորդում են նրան հանդիսավոր տեսք։ Ուշադրություն գրավող ճարտարապետական այս ծավալը դիտվում էր անգամ բլրի հեռավոր մատուցներին։





Հավանաբար այն ամբողջ կալազորի պահակակետն էր և միևնույն ժամանակ պետք է որ լիներ նաև ղեսպանների ու բարձրաստիճան հյուրերի դիմավորման պաշտոնական վայրը։ Այս պատճառով էլ միջնաբերդի մուտքի կողմը տանող ճանապարհի առնչությամբ սյունազարդ կառույցի հետ որոշակի հանդիսավորություն էր հաղորդում տվյալ տարածքին։ Միջնաբերդի բուն մուտքը քարե աստիճաններից էր կազմված (լուսանկ. աղ. 11)։

Միջնաբերդի ընդարձակ համալիրը կազմված է պալատական սյունաամունքային ու պահեստային հատվածներից, որոնց միջև գտնվում է հրապարակը՝ նման լուծում առաջին անգամ է հանդիպում ուրարտական ճարտարապետության մեջ։

Պալատը, գրավելով միջնաբերդի հյուսիսարևմտյան հատվածը, ուղղված է ղեպի Արարատի և Արագածի վեհաշաք տեսարանները։

Պաշտամունքային մասն իր օժանդակ կառույցներով գրավում է միջնաբերդի ամբողջ հարավարևմտյան հատվածը։ Հրապարակի առանցքով վեր էր խոյանում հալդիի տաճարը, որը մի մեծ, մոնումենտալ կառույց էր՝ իր ճակատային մասով փոխված նրա ողջ երկարությամբ և կազմված աշտարակից կամ burgana-ից (ինչպես այն անվանում էին ուրարտացիք), կամ զիկուրատից (ինչպես այն կոչում էին ասորեստանցիները) և 12 փայտյա սյուններից (43 սմ տրամագծով) բաղկացած շքամուտքից։ Պալատի ճակատային մասերն ավելի փոքր աշտարակներ ունեին, ինչպես միջնաբերդի մուտքը, որով նա ընդգծվում էր դեռ հեռվից։ Այդ ծավալներն իրենց ուրվադեբերով, կազմակերպելով հրապարակի տարածական հորինվածքը, միևնույն ժամանակ արտահայտում էին նրանում ուրարտական շինարարական ղեպի ասիմետրիկ լուծումներն ունեցած որոշակի նախասիրությունները։

Այսպիսով, այստեղ ստեղծվել է ներդաշնակ ընդհանրություն ճարտարապետական հակադիր ձևերի, այն է՝ հոծ աշտարակների, պալատական խուլ ճակատների, ծանր որմնահեցերի ու վերապայց հարձակված օժակած տաճարի շքամուտքի



Ազ. 34. Գամբարաններ. Ալթին-Յէլվե. ա) կտրվածք հեռանկարում, հատակագիծ, բ) հատակագիծ և կտրվածք, գ) հատակագիծ

նյւյգակց սյունների միջև Սյունները, որոնք ստեղծում են այդ վերապայց դինամիկ շարժումը, հրապարակի ուղջ ճարտարապետութանը հաղորդում էին լարված դիֆիլմի արտահայտություն՝ Իսկ կլին նկատի ունենանք, որ ճարտարապետական սովյալ տարածքի գեղագիտական ընկալման նպատակով միջնաբերդի բոլոր հնարավոր տեսադաշտներում ստեղծված էր գունեղ ու նշմարելի տարածական ֆոն (երբեմն որմնանկարների բարդ հորինվածքներով), որը տաճարային հրապարակին հաղորդում էր հանդիսավորություն, ապսպրակի կրօնան ախ վիճաշուք տեսարանը, որն առկա էր այստեղ, այն էլ վեհապանծ Արարատ լեռան հիասքանչ ուրվագծի վրա: Գույներ, այդպիսով, նախ և առաջ ավելի հնչել էր դարձնում հենց իրենց՝ ճարտարապետական կառույցների ձևերը:

Բացի այս կենտրոնական հրապարակից, միջնաբերդի տարածական հորինվածքի համար բնորոշ են սյունազարդ ու բաց բակերը, անցումները բաց աստիճանների ձևով, որոնց համար տեղ-տեղ բուրի գազաթը հարթեցրել են:

Այսպիսով, էրեբունիի միջնաբերդում, ուր առկա է առանձին կանգուն կառույցների համալիրային միասնություն, կատարված են ճարտարապետական ձևերի էֆեկտիվ արտահայտության նախնական փորձերը:

Հարկ է հիշատակել նաև, որ հնագիտական պեղումների ընթացքում պարզվել էր, որ միջնաբերդի արտաքին եզրագիծը ու հատկապես հատակագծի անկյունային մասերը ժամանակին ենթարկվել էին զգալի վերակառուցումների, որը բավականին դժվարացնում էր նրա նախնական հորինվածքի ճշտումը: Այդ պատճառով էլ նրանց վերականգնման ընթացքում ընդգծվեցին հատակագծային հորինվածքների առավել ցայտուն ու տեսանելի ձևերը:

Արգիշտի Ա-ի պալատի (E.GAL.) մասին նրա մուտքի մոտ պահպանված արձանագրության մեջ սոված է՝

«Նալույ մեծությունը Արգիշտին՝ Մենուայի որդին այս հողակապ պալատը կառուցեց» (լուսանկ. աղ 12):

Ինչպես ասվեց, ուրարտական սեպագրերում պալատական կառույցները հաճախ են հիշատակվում տաճարների հետ միասին: Տվյալ դեպքում այդ հաստատվում է առարկայական ձևով in situ, քանի որ պալատի ներսում կանգուն է

SUSI կոչվող տաճարը, որի մասին համապատասխան արձանագրություններ է թողել Արգիշտի Ա-ն՝ շենքի գլխավոր ճակատի վրա:

Պալատի բոլոր սենյակները խմբավորված են պերիստիլ ու տեսակական բակերի, ինչպես և մեծ դահլիճի շուրջը: Պերիստիլ բակի շուրջը դասավորված են պալատի ընակելի, պաշտոնական կառույցներն ու տաճարը, որը մի փոքր խախտումով ընկած էր բակի երկայնական առանցքի վրա, իսկ բակի միջին մասում գտնվում են զահասեղանն ու նրան կից պատի տակ՝ կավակերտ նստարանը: Պերիստիլ բակը աչքի է ընկնում նաև իր գունային արտահայտությամբ՝ նրա մուգ կարմիր պատերը SUSI տաճարի կապույտ գույնի հետ ստեղծում են նրանց հակադրամիասնությունը:

Տաճարի հակադիր կողմում գտնվում են չորս սենյակ, որոնցից մեկը պերիստիլ բակի լայնություն ունեցող, որմնակարմուխ՝ զարգարված դահլիճ է, իր նախասենյակների սիմետրիկ դասավորությամբ, որոնք ստեղծում են հատակագծային կուռ հորինվածքի ու ճարտարապետական ձևերի հանդիսավորություն: Սյուն դահլիճը, որը գտնվում է պերիստիլ բակի հյուսիսարևմտյան մասում, սյունազարդ էր, կավաշեն նստարանով՝ երկայնական պատի տակ: Ժամանակին դահլիճի առաստաղը կաղմել են կողերը տաշած, կողը-կողքի կիպ շարված ու մուգ կապույտով ներկված հեծանները, որով ընդգծվում էր նրա հանդիսավոր տեսքը:

Այս երկու դահլիճների միջև գտնվող կարասների պահեստային սենյակում պահվում էր գինին, որ, ամենայն հավանականությամբ, ծառայում էր պաշտամունքային նպատակների, ասպահովելով բակի կենտրոնական մասում գտնվող զահասեղանի մոտ կատարվող ծիսակատարությունները: Սկզբնական շրջանում պահեստի երկայնական առանցքի վրա երևել են երեւո սյուն, որոնցից պահպանվել են երկու կանոնավոր խարիսխ, իսկ հետագայում, հավանաբար ծածկի վերանորոգման կապակցությամբ, նրանց կողքին կանգնեցվում են ևս երեւո սյուն: Գուցե այս լրացումը կապված է վերին լուսավորության համակարգի կարգավորման հետ:

Պերիստիլ բակից հյուսիս փոխված է երկրորդ բակը, որի շուրջը, նրա թևք սարալանջի վրա շինված կառույցներն արտաքինապես կաղմում էին աստիճանաձև ծավալներ: Այստեղ էր գտնու-

վում պալատը ուպասարկող տնտեսական մասը: Տեղում, գրեթե բոլոր սենյակներում պահպանվել են տարբեր շափերի խեցեղենի մնացորդներ: Պալատի տնտեսական մասն ունի շուրջ 20 սենյակ:

Պալատային մասի մյուս հատվածը, որը կառուցված էր շինարարական հաջորդ փուլում, գտնվում է միջնաբերդի բավականաչափ բնոցըծված տեղում, հարդի տաճարի դիմաց: Այն բավականաչափ մեծ, սյունազարդ դահլիճ է՝ 12,0 × 39,0 մետր շափերի, երեք կողմից սենյակներով կառուցապատված (լուսանկ. աղ. 13):

Դահլիճի երկայնական առանցքի վրա կանգնած փայտյա հինգ բարձր սյուներն իրենց ուղղաձիգ դիսամիկայով առաջացնում էին տարածության խորության տպավորություն և ընկալման խտություն, որով և դահլիճը ստանում էր մոնումենտալ տեսք: Այս դահլիճի հանդակավորությունը լրացվում էր ճոխ ու գունեղ սրմնանկարներով: Նրանց մեջ գտնում ենք խիստ ուշագրավ և ուրարտական արվեստում առաջին անգամ հանդիպող աշխարհիկ բնույթի որմնանկարներ, որոնց անվթար պահպանված առանձին բեկորների վերարտադրությամբ դիտելի են դառնում: Որսի, հողագործության, խաչնարածության, ինչպես նաև պաշտամունքային թեմաներին վերաբերող տեսարաններ: Այստեղ երևում են թփուտներ, ճահճոտ տարածքներ՝ եղեգնուտներով, անտառ խորհրդանշող ծառեր, ինչպես նաև կենդանիներ՝ ցուլեր, շատ փոքրիկ ցլիկ, բծավոր ընձառյուծ, ձիեր, շներ, ուշխարներ, կովեր և այլն: Իրենց սլացիկությամբ, ներքին դիսամիկայով տվյալ կենդանիների պատկերները միանգամայն նոր խոսք են ասում ուրարտական արվեստի մեկնաբանությունների մեջ՝ ուսուցողական հասկացությունների առումով:

Դահլիճի հյուսիսարևելյան կողմից կառուցապատված միատիպ սենյակներն ու տարբեր շափերի դահլիճները, հավանաբար, զորանոցային կառույցներ էին՝ միջնաբերդը պահպանող քաղաքի կայազորի ռազմիկների համար: Դրանցից արևելք միջնաբերդի պահեստներն էին, ուր, համաձայն սեպագրերի, գտնվում էին *ari*-ները, այսինքն, ցորենի շտեմարանները՝ կառուցված Արգիշտի Ա, Սարգուրի Բ և Ռուսա Գ թագավորների կողմից:

Միջնաբերդն ուներ ջրմուղային ինքնահոս

համակարգ, որ խմելու ջուր էր մատակարարում բաղաբի մոտակա լեռների աղբյուրներից: Ջրմուղի խողովակաշարը անցնում էր ստորգետնյա ուղիներով, սրով ապահովվում էր նրա անխափան աշխատանքը նաև միջնաբերդի հնարավոր պաշարման պահերին, իսկ էրեբունիի միջնաբերդը հարմարեցված էր երկարատև պաշտպանության համար:

Ալրին-ընկն: Ուրարտական նշանավոր վարչատնտեսական բաղաբի այս միջնաբերդը վեր է խոյանում 60 մետր բարձրությամբ ունեցող բլրի զազաթին, դրավում է շուրջ 4 հեկտար տարածություն և շրջափակված է որմնահեցեր ունեցող երկու շարքով կառուցված հզոր պարիսպներով:

Հնագիտական պեղումներն այստեղ հայտնաբերել են մի շարք մոնումենտալ կառույցներ՝ սյունազարդ մեծ դահլիճ, տաճար (ավանդական քառակուսի հատակագծով՝ պարփակված պիրիստիլ բակում), ինչպես նաև մի շարք սահեստային շենքեր: Բլրի արևելյան լանջերի թեքություն մեջ հայտնաբերվել են մի շարք քարաշեն դամբարաններ՝ ճարտարապետական ձևերով (գծագր. աղ. 24):

Միջնաբերդում հայտնաբերված ճարտարապետական կառույցները: մնացորդները հաստատում են, որ տարբեր ժամանակաշրջաններում այստեղ տեղի են ունեցել վերակառուցումներ: Ընդ որում, թվում է, թե տաճարն, ինչպես նաև պալատական մեծ դահլիճը, տարբեր ժամանակների կառույցներ են, ինչպես այդ կարելի է կռահել նրանց՝ իրար նկատմամբ ունեցած շերտագրական դիրքից: Ակնհայտ է, որ սյունազարդ դահլիճը կառուցված է տաճարից հետո, քանի որ մեկ անկյունով նա կանգնած է տաճարը եզրագծող պիրիստիլ բակի հարավարևելյան պատի մի հատվածի վրա: Նման կառուցապատման հետեվանքով դահլիճն իր ծավալներով մեծապես խափանել է տաճարի բակը տանող մուտքերից մեկը, թերևս նրա զլխավոր մուտքը:

Բացի այս մոնումենտալ կառույցներից, նրանց շրջապատում տեսանելի են միջնաբերդի մի շարք պաշտպանական սենյակների ու մի այլ սյունազարդ դահլիճի, ինչպես նաև պարիսպների հետքեր՝ քառակուսի հատակագիծ ու ներքին տարածություն ունեցող աշտարակներով:

Ալթին-թեփի սյունազարդ դահլիճն ուրարտական ճարտարապետության առաջօր հայտնի

աշխարհիկ կառույցներից ամենամեծն է, որի շահերը ներսփյց հավասար են 25,30×40,0 մետրի: Այդ ներքին տարածությունը բաժանված է եղել երեք սյունաշարերով, յուրաքանչյուրում 6-ական սյուն: Տեղում պահպանված են նրանց բավականին հզոր թաքե կոոր խարխիսները, որոնց տրամագծի շափերը հավասար են 1,5 մետրի:

Դահլիճի պատերի առաջին շարքերը քարից են, իսկ նրանցից վեր՝ հում աղյուսից, և սվաղված ու ծածկված են եղել հարուստ որմնանկարներով, որոնք պետք է որ դահլիճի ներքին տարածությունը հաղորդեին արտակարգ շքեղություն: Այդ որմնանկարներն իրենց հորինվածքներով, զարդանկարներով ու երանգավորումներով նման են էրբերունի օրինակներին, ընդ որում այստեղ ևս մեծ տեղ է զբաղում աշխարհիկ թեմատիկան: Բնորոշ է հատկապես գազաններին նվիրված տեմաանան անտառում, որը պատկերում է առյուծի հանդիպումը եղջերուի հետ:

Ալթին-թեփեի այս մեծ դահլիճն իր որմնանկարներով ուրարտական արվեստի ուշագրավ կոթող էր:

Սակայն, գունեղ որմնանկարների առկայության պայմաններում դահլիճում պատշաճ ձևով պետք է կազմակերպված լինեիր բնական լույսի ներթափանցումը: Հավանական է, որ դահլիճն ունեցել է լույսի համատեղ երկու աղբյուր՝ երդիկից և կողքի վերին պատուհաններից:

Պայտական մյուս սենյակները, որոնք զբոսնում են սյունազարդ դահլիճից արևելք և նույնպես ծածկված էին գունեղ որմնանկարներով, կազմում էին դահլիճի հանդիսավոր նախամուտքը:

Ալթին-թեփեի սյունազարդ դահլիճի ճարտարապետական ձևավորմամբ կարելի է հիմնավորել այն փաստը, որ Աքեմենյան Իրանի ապագանների նախասկիզբը պետք է փնտրել ուրարտական ճարտարապետության մեջ: Սակայն, վերջինիս արմատները, կարծում ենք, թաղված են խեթական աշխարհի ճարտարապետական մշակույթի մեջ: Մենք նկատի ունենք Բողազքոյի, հնամենի Խաթթուսայի միջնաբերդում պեղումներով հայտնաբերված քառակուսի հատակագծով 25 սյունանոց դահլիճը, որն ականբերաբար հավաստում է, որ խեթերն են ստեղծել բազմասյուն այն դահլիճի հորինվածքը, որը հետագայում

նշանավոր սպաղանաների տեսքով հայտնվում է Աքեմենյան Իրանում:

Սակայն Ուրարտուն զարգացման էվոլյուցիոն այս շղթայում կազմում է այն միջանկյալ օղակը, որի միջոցով ապագանայի ճարտարապետական ձևը ներթափանցել է Իրան: Այդ հաստատվում է նրանով, որ սյունազարդ դահլիճների ստեղծման պահին Իրանում խեթական սովյալ ձևերը վաղուց արդեն դադարել էին գործող շենքեր լինելուց ու գրեթե անհետացել էին, մինչդեռ ուրարտական օրինակները, ինչպես Ալթին-թեփեի սյունազարդ դահլիճը, գործող կառույցներ էին:

Հետագայում ապագանային ձևը գունալով պալատական դահլիճների կառուցման դեկավար թեմա, իսկ տեկտոնիկ միջոցների կիրառման շնորհիվ ստանալով մոնումենտալ արտահայտություն, որպես Իրանի դասական ճարտարապետության գլխագործող, վեր է խոյանում նրա Պասարգադը, Պերսեպոլիս և Սուլայս բաղաբնիկում:

Ապագանայի ձևը լայնորեն տարածվելով Իրանում, սկսում է մուտք գործել նաև Առաջավոր Ասիայի երկրները, հատկապես Միջագետք, իսկ հետո Եգիպտոս և Նուբիայի հասնում է մինչև Հնդկաստանի Պատալիպոտրայի՝ Աշոկա թագավորի պալատը:

Այսպիսով, Իրանի դասական ճարտարապետության ամենաբնորոշ ու կատարյալ կառույցի այս ձևը անցել է խեթական աշխարհից Ուրարտու—Իրան և այլ երկրներ:

Ալթին-թեփեի մյուս նշանավոր կառույցը նրա տաճարն է, որն ունի ավանդական քառակուսի հատակագիծ՝ անկյունային ելուստներով ու համապատասխան ճարտարապետական հորինվածք: Միսակատարությունները արվում էին գլխավոր ճակատի առջևում և շենքի ետևի մասում, ուր պահպանվել են զոհարանների մնացորդները:

Միջնաբերդի պահեստային հատվածը իր մի շարք սենյակներով գտնվում է ըլրի հյուսիսարևելյան լանջերի վրա: Գրանցից առավել լավ պահպանվածն ու մեծը 10,00×15,80 մետր շափերի կառույց է, որի ծածկը պահվում էր 4 փայտյա սյուններով, որոնք ունեն 67 սմ տրամագծով բազալտե սրբատաշ խարխիսներ:

Պահեստներում պահպանվել են բազմաթիվ մեծ շափերի կարասներ, որոնք սովորականի պես կիսով շափի իջեցված են հատակի խորություն մեջ:

Այդ պահեստներում, ինչպես նաև տաճարում հայտնաբերված նագիտական բարձրարվեստ իրերը՝ բրոնզից, փղոսկրից ու փայտից, հաստատում են միջնաբերդի բնակիչների հարուստ ու ճոխ կենցաղը:

Կայալիդեռե: Ժամանակակից այս գյուղը, որտեղ պահպանվել են ուրարտական կոթողներ, գտնվում է Վանա լճից 100 կմ հյուսիս-արևմուտք, Արածանիի աջ ափին՝ փոխած Մշո դաշտում, որը ուրարտական թագավորության հիմնադրման ժամանակներից ի վեր երկրի կարևորագույն մարզերից էր:

Հնագիտական հուշարձանների մնացորդներն այս տարածքում իրենց առանձին հատվածներով երբևէ տեսանելի են տեղում՝ գրեթե միայն ջնջված հետքերի ձևով: Սակայն տարիներ առաջ հնագիտական մասնակի պեղումները հայտնաբերեցին 80×100 մետր շափեր ունեցող միջնաբերդի մի քանի նշանակալից կառույցներ, որոնք զրսևորում են ուրարտական թագավորության կենտրոնական մարզերի ճարտարապետությանը բնորոշ մի շարք ցայտուն հատկանիշներ<sup>8</sup>: Այսպես, միջնաբերդի կառուցապատված հատվածը, որն իր հյուսիսարևմտյան կողմում եզրագծված է ժայռու կուտտներով, ձգվում է հարավ-արևելք, ուր լանջերի մեծ թեքությունների հետևանքով շինությունները նրանում աստիճանաձև են՝ ուրարտական ճարտարապետության համար բնորոշ հորինվածքով:

Միջնաբերդը գտնվել է ապառաժ բլրի վրա, որը կառված է փոքր տեսակարար կշիռ ունեցող հրաբխային վարդագույն կոնգլոմերատից, սակայն միջնաբերդի շենքերը կառուցված են բլրի շրջակայքում գտնվող հանքերից բերված բազալտ քարից: Միայն այդ կառույցների պատերի որմածքի մյուս կողմ է, որ լցված է այդ կոնգլոմերատի բեկորներով:

Միջնաբերդի տարածքը, չնայած պաշտպանող իր բնական ապահով դիրքին, այնուհանդերձ շրջափակված էր հողոր պարիսպներով, որոնց առանձին, լինելով որում, բավականին քայքայված հատվածներն են, որ հայտնաբերվեցին պեղումների ընթացքում:

Միջնաբերդը պեղող հնագետ Չարլզը Բրենկի գտնում է, որ բլրի վրա ժամանակին կատարվել են ուրարտի վերակառուցումներ, որոնք, նրա կարծիքով, կապված էին անհրաժեշտ ու հրատապ պաշտպանական միջոցառումների հետ:

Այդ վերաբերում է մի քանի պատերի վերակառուցումներին ու հատկապես մուտքերին, որոնցից ներքևինը, որը 2,90 մետր լայնություն ուներ ու նախատեսված էր մարտակառքերի անցման համար, նեղացվում, հասցվում էր մինչև 1,50 մետրի: Իսկ այնտեղ գտնված խարիսխները, Չարլզ Բրենկի կարծիքով, ժամանակին տեղադրված էին մուտքի մոտ և իրենց սյուներով ստեղծում էին ճարտարապետական համապատասխան հորինվածք: Տվյալ հատվածում պեղումներով հայտնաբերված նիզակի ծայրերը հաստատում են այստեղ տեղի ունեցած մարտերի մասին:

Միջնաբերդի մուտքից, որը կառուցված է բլրի հյուսիսային հատվածում և որտեղ պահպանվել են նրա մնացորդները, սկիզբ է առնում սալահատակ մի նեղ փողոց, որը շարունակվում է մինչև բլրի կենտրոնական մասը, ուր արդեն տեսնում ենք բավականին ընդարձակ ու նույնպես սալահատակված հրապարակ:

Այդ հրապարակի վրա ժամանակին վեր էր խոյանում միջնաբերդի՝ ճարտարապետական առումով շեշտված կառույցը՝ տաճարը, ավանդական բառակուսի հատակագծով, որի մնացորդները լրիվ պահպանված են:

Իր դիրքով շրջապատի տարածքի նկատմամբ, Կայալիդեռեի այս տաճարը հիշեցնում է Ալթին-թեփեի տաճարի համանման հորինվածքային լուծումը: Սակայն Կայալիդեռեի տաճարը որակական առումով խիստ զիջում է Ալթին-թեփեի տաճարի շինարարական արվեստին:

Կայալիդեռեի տաճարի մուտքի առանցքով, հրապարակի միջին մասում, երբևէ կանգուն էր քարե մի կոթող և նրան կից շարժական զոհանրան, որի մետաղյա ոտքերը առայստ քարե սալերի մեջ թողել են իրենց պարզ տեսանելի հետքերը:

Միջնաբերդի այլ հատվածներում, որոնք նույնպես չեն ենթարկվել հնագիտական ծավալում պեղումների, նշմարվում են պահեստային մի շարք մեծ շինությունների հետքեր (լուսանկ. աղ. 16 ա, բ), որոնցով այս միջնաբերդը կարելի է դասել ժամանակի տնտեսական նշանակալից կենտրոնների շարքը:

Բլրի լանջերի մեծ թեքությունների վրա կառուցված այդ պահեստային շենքերը միաթռիչ շինություններ են, որոնցում չկան մույթեր, որոնք այնքան բնորոշ են ուրարտական պահեստային շինություններին: Միայն նրանցից մեկում

գտնված է փայտյա սյան քարե կլոր խարիսխ, որը միակ հաստատումն է այստեղ սյունահեծային կոնստրուկտիվ համակարգի: Այդ է պատճառը, որ այստեղ պահպանված շինքերը, ինչպես և համանման տեղանք ունեցող ուրարտական շատ այլ կառույցներ, իրենց հորինվածքներով արտաքինպես եղել են աստիճանաձև:

Կայլիդղբերի միջնաբերդը, կառուցված է ապարած բլրի վրա, առավելապես հայտնի է իր դամբարան-բարայրով: Իր չափերով, ծավալով քարայրը ուրարտական ճարտարապետության առաջօր հայտնաբերված ամենալայնատարած քարայրներից է: Թեև այն բացված է իր մի բարավաճով միայն, սակայն ծավալով մոտենում է եգիպտական ճարտարապետության համանման հուշարձանների չափերին և շինված է նրանց կառուցողական արվեստի սկզբունքներով:

Դամբարանը փորված է բլրի լանջի թևերվյան մեջ, միջնաբերդի հարավային ծայրում, նրա արտաքին պարսպից դուրս ու նրանից մի փոքր ավելի ցած, որտեղ էլ գտնվում է նրա մուտքը:

Այսպիսով ի նայտ է գալիս մի բնորոշ սկզբունք, ըստ որի, ուրարտական դամբարանները հաճախ կառուցվում էին բլուրների թև քարայրանջղի խորովյալ մեջ, ինչպես Ալթին-թեփեում կամ Կանանում: Թերևս դա արվում էր սպահովության նկատառումներով:

Պետք է ենթադրել, որ Կայլիդղբերի միջնաբերդը, իր շինությունների աստիճանաձև ծավալներով փոփոխվելով բլրի լանջերին, իջնում էր դեպի նրա ստորոտային մասերը, որտեղ, ի դեպ, պահպանվել են շինությունների առանձին մնացորդներ:

Միջնաբերդերի երկրորդ տիպին՝ միջնաբերդեր կառուցապատված միասնական ծավալի ձևով, պատկանում են՝

Արգիշտիխինիլի երկու միջնաբերդերը, մեկը քաղաքի արևելյան մասում՝ 76 մետր վեր խոյաքող Արմավիր բլրի գագաթի շուրջ երկու հեկտար մակերեսի վրա, մյուսը նրանից արևմուտք՝ 52 մետր բարձրություն ունեցող ս. Դավթի բլրի գագաթի՝ նույնպես երկու հեկտար մակերեսի վրա (գծագր. աղ. 21):

Քաղաքների միևնույն տարածքներում երկու առանձին բարձրությունների վրա միջնաբերդեր տալանի են նաև Կրդ-կալսխում, հող քաղաքի ռես, Կալս-Իսմայիլ-աղալում, Ուրմիա լճից արև-

մուտք, ինչպես նաև Ուրարտոսի արևելյան մարզերի մի քանի այլ քաղաքներում:

Արգիշտիխինիլի տարածքը գլուխադասությամբ կառուցված համար ունեցող նախադրյալներ, որոնք զգալիորեն կրկնապատկվեցին, էրը նրա հողերը, Արգիշտի Ա-ի քրանցքաշինական միջոցառումների շնորհիվ դարձան ոռոգելի: Ջրանցքաշինական աշխատանքներն այստեղ կատարվում էին նաև հետագայում, ուրարտական թագավորներ Սարգուրի Բ-ի, Ռուսա Գ-ի կողմից: Այդ միջոցառումների շնորհիվ Արգիշտիխինիլին դառնում է զարգացած գյուղատնտեսական բնակավայրերի կենտրոն:

Քաղաքի արևելյան միջնաբերդի կառույցները, ելնելով բլրի տեղանքի ձևից, ձգվում էին արևելքից-արևմուտք և պարփակված էին հզոր պարսպով, որը միևնույն ժամանակ կատարում էր միջնաբերդի կառույցների արտաքին պառի դերը:

Թեև արևելյան ամրոցի կառույցների նախնական հատակագծի հորինվածքը դեռևս լրիվ չի բացահայտված, սակայն ուրարտական ճարտարապետությանը բնորոշ հատակագծային սկզբունքները նրանում որոշակիորեն նկատելի են: Այդ հատկանիշները վերաբերում է տեղանքին համապատասխան ծավալների տվանդական աստիճանաձև լուծումներին, սենյակների նեղ ու երկար հատակագծային ձևերին, որմնահեցերի սովորականը:

Միջնաբերդի բարձրագույն մասում նշարվում են տարբեր ժամանակաշրջաններում վերակառուցված ծավալներով, տվանդական ձևերի մնացորդներ, որոնցում դժվար է նկատել նախնական հորինվածքի հատակագծի: Սակայն ենթադրվում է, որ ժամանակին այստեղ կանգուն էր աշտարակաձև կառուց կամ թե տաճարային շենք՝ քառակուսի հատակագծով, անկյունային աշտարակներով, ինչ որ բնորոշ էր կենտրոնական մարզերի տաճարների ձևերին:

Հավանաբար այդ կառույցներին էին պատկանում տվյալ տարածքում հայտնաբերված բազալտե սրբատաշ այն բեկորները, որոնք պատկերում են խորշաձև խուլ պատուհաններ՝ իրենց բարավորներով, որպիսիք կարելի է տեսնել շենքեր պատկերող Թոփրախ-կալեի և Կեֆ-կալսիի ուրարտական մի քանի հարթաքանդակների վրա:

Արգիշտիխինիլում գտնված բազալտե քարերի մյուս տիպի, նույնպես սրբատաշ բեկորները, որոնք կազմում էին քառակուսի հատակագծով

մուլթեր՝ իրենց սնկյունային ելուստներով հայտնի կարմիր լուրի ու Կեֆ-կալեսիի միջնաբերդերից, հավանաբար պատկանում էին այստեղ գոյություն ունեցող մի այլ տիպի դահլիճին, որն, ամենայն հավանականությամբ, ինչպես և Կեֆ-կալեսիում՝ պաշտամունքային մոնումենտալ մի կառույց է եղել:

Պեղումների ընթացքում միջնաբերդի տարածքի տարբեր հատվածներում հայտնաբերվել են որմնակարների առանձին բեկորներ, որոնց առկայությունը հաստատում է, որ, ինչպես գրեթե բոլոր ուրարտական նշանակալից պալատներում, այստեղ ևս, հանդիսավոր ու պաշտոնական ընդունելությունները համար եղել են ճոխ դարձրված դահլիճներ:

Ամրոցի եզրամասում, մուտքի մոտ գտնվող միանման փոքր շափերի սենյակները ծառայել են ամրոցի պահպանողների Մեծ, երկարավուն սենյակները ծառայում էին որպես շտեմարաններ ու պահեստներ:

Չաղաքի պատմական կյանքի համար բնորոշ է նաև Տելլեխեստական դարաշրջանի դրսևորումը միջնաբերդում, թեև այն հանդես է գալիս ավելի վերակառուցումների ձևով:

Դավլի՛ բլրի վրա կառուցված Արգիշտիխինիլիի մյուս, արևմտյան միջնաբերդն իր հատակագծով տարբեր դարաշրջանների վերակառուցումների արգասիք է՝ Այստեղ, ինչպես և շատ տեղերում, բլրի գագաթը կառուցապատմից առաջ նախապես մասնակի հարթեցվել է: Իսկ պալատի այն մասը, որը կառուցապատված է բլրի թեք սարալանջի վրա, նույնպես ունի շենքերի աստիճանական ծավալներ, որով ավելի էր շեշտվում կառույցի մոնումենտալ արտահայտությունը տրվալ տարածքում:

Չնայած միջնաբերդի ընդհանուր կառուցապատման մեջ մխրճված հետագա շինարարական ծավալներին, նախաստեղծ ճարտարապետական ձևերն այստեղ շատ ավելի բարվոք վիճակում են, քան արևելյան բլրի վրա և հանդես են գալիս իրենց պարզորոշ արտահայտությամբ:

Տարածական ընդհանուր հորինվածքի միջուկը նրա ընդարձակ բակն է, որի հարավարևելյան հատվածը զբաղվում է միջնաբերդի հիմնական կառույցը՝ պալատի իր համապատասխան շինություններով: Բնակելի ու տնտեսական կարիքներին ծառայող սենյակները տարածված են բա-



կի շուրջը, իսկ հյուսիսարևմտյան բարձունքի վրա վեր է խոյանում արտակարգ հաստ պատերով մի կառույց, որը հնագետ Հ. Մարտիրոսյանը համարում էր միջնաբերդի տաճարը:

Կենտրոնական բակն իր արտաքին մուտքերով, օրգանապես իրար կապելով բոլոր հարակից կառույցները, կազմակերպում էր միջնաբերդի շարժման գրաֆիկը: Ընդ որում, առանձնապես նշմարելի է հյուսիսարևմտյան մուտքի կառուցապատման լուծումը, որը տակտիկական առումով քարակերտ մի ծուղակ էր, որում միջնաբերդի պաշարումը թշնամու կողմից պետք է ուղեկցվեր մեծագույն կորուստներով: Ի դեպ, կառուցողական այս սկզբունքները մեծ շափով առնչվում են խեթական ու սիրիա-խեթական համանման կառույցների լուծումների հետ, ուստի և որոշակիորեն կապված են հինարևելյան ուսումնասիրտարապետական համապատասխան ավանդույթներին:

Միջնաբերդի հյուսիսարևմտյան ու հարավարևելյան թեք սարալանջերը, կառուցապատված լինելով աստիճանաձև շինություններով ու ժամանակին ամրացվելով հենապատային շարքերով, ղգալիորեն ընդլայնել են միջնաբերդի օգտագործելի մակերեսը: Մասնավորապես հյուսիսային մասում դրանցով գոյացած հարթակներից մեկը կարող էր մարտակազմերի և ընդհանրապես անիվային տրանսպորտի ընդարձակ կանգառը լինել:



Միջնաբերդի հիմնական մասը զբաղվում է պալատական շենքը՝ E.GAL-ը: Ստեղծվելով միջնաբերդի ընդհանուր կառուցապատման հետ միաժամանակ, E.GAL-ի հատակագծային լուծումը բնորոշվում է իր ինքնուրույն հորինվածքով, որին մի կողմից հարում են իրարից անջատ բնակելի սենյակներ, որոշ մասերում նաև իրենց նախասենյակներով: Պալատական շենքի հանդիսավոր մասը կազմում է սյունազարդ մեծ դահլիճը՝ երկու շարքով դասավորված քսան սյուներով, իսկ մյուս կողմից տնտեսական մասը՝ իր մի քանի կարասային պահեստներով, ինչպես նաև օժանդակ սենյակների՝ պալատի պահակային անձնակազմի համար:

Ուշադրություն արժանի է այն զուգահեռը, որ գոյություն ունի Արգիշտիխինիլիի ու Ալլին-թեփեի համանման դահլիճների միջև, թեև վերջինում սյուների շարքերը երեքն են: Սակայն, այնուհանդերձ, կարող ենք տեսնել, որ սյունա-



0 2 4 6 m

Ա



0 2 4 6 8 m

Բ

Աղ. 35 Վիմփոր կառույցներ. ա) կայսրիկերև, հատակագիծ, կորվածք, բ) նաև հորար, հատակագիծ, կորվածք

զարգ դալինների հորինվածքը, որպես այդպիսին, ուրարտական ճարտարապետության մեջ դառնում է նրա ավանդական ձևը:

Այսպիսով, Արգիշտիսինիլի քաղաքի ղեկավար կենտրոնները սովյալ երկու միջնաբերդերն էին և, հավանաբար, դրանցից մեկը՝ արևմտյանը, վարչատնտեսական, մյուսը՝ արևելյանը, պաշտամունքային ֆունկցիաներ էին տնօրինում:

Թեյշեբանիի միջնաբերդը Ազա երկրի մյուս մեծ ու նշանակալից քաղաքի կառույցն է, որը վեր էր խոյանում Կարմիր բլուրի վրա, միջին մասում՝ երկու հարկով, քաղաքի կողմն ուղղված երկու թևերով ու այդ մասերում գտնվող մուտքերով ու ճակատային մասը պարփակող հզոր պարիսպներով<sup>1)</sup>: Այսպիսով միջնաբերդը ներկայացնում էր մեկ ընդհանուր կառույց՝ իր մոնումենտալ միաձուլված բավալով, որի հզորությունն ավելի էր շեշտվում թափամթիվ աշտարակներով ու որմնահենքերով (բազադ, աղ. 25):

Կառույցի հատակագիծը տեղանքի թեք ուղիների հետևանքով բաժանված է առանձին ու ինքնուրույն հատվածների, որոնք այստեղ հիմնականում շորսն են: Ամեն մի հատվածը գտնվելով մեկ հարթության վրա, մյուսի հետ կապված է աստիճանավոր միջանցքներով:

Միջնաբերդից պահպանվել է միայն նրա առաջին հարկը, որը դրսից շունի անմիջական մուտք. ժամանակին անցումը իրացվում էր միայն երկրորդ հարկից, որը հիմա, բացի իր աղյուսների մի բանի շարքերից, լրիվ ավերվել է:

Ներքնահարկի, հատկապես պահեստային մասերը լայնացնելու նպատակով նրանցում կառուցվում էին հաստ մուլթեր, ինչպես նաև որմնամուլթեր, որոնք հնարավոր էին դարձնում երկրորդ հարկում ունենալ բնակելի սենյակներ, ինչպես նաև, ըստ երևույթի, հանդիսավոր ու պաշտոնական ընդունելությունների համար՝ դահլիճային մեծ տարածություններ: Այդ մասին են խոսում այն գունեղ ու շքեղ բուսական ու կենդանական աշխարհը պատկերող որմնանկարները, որոնց պատառիկների մի մասը միջնաբերդի հորձհի մասնանկ այրված վիճակում վերևից ընկել էին ներքնահարկը: Ներքնահարկում էին գտնվում պահեստներ, շտեմարաններ, մառաններ, ինչպես նաև արհեստանոցներ (լուսանկ. աղ. 15):

Կառույցի հյուսիսարևմտյան հատվածն ունի երկու կարևոր արտադրամաս: Նրանցից մեկում

արտադրվում էր գարեջուր, որը բավականին արածված էր Ուրարտուում, մյուսում արտադրվում էր քնջութի ձևով: Պահպանված քարե ավազանն ու այլ հարմարանքները պատմում էին ձևերի պատրաստման տեխնոլոգիական ողջ ընթացքի մասին:

Միջնաբերդի արտադրական գործունեության է վերաբերում նաև նրա բաց հարթակը հարավարևելյան մասում, որը ստեղծված էր երկրորդ հարկի մակարդակի վրա: Այնտեղ թվով 30 կարասներ պահպանված էին գինին կիզիլ արևի տակ՝ հասունանալու համար: Պատրաստելուց հետո այդ գինին տեղափոխվում էր մառանները ու պահվում կարասների մեջ (լուսանկ. աղ. 14):

Շտեմարանները, ինչպես նաև այն սենյակները, որոնք իրար հետ անմիջականորեն զուգորդվել էին կապվում, 3,5 մետր հաստությամբ ունեցող պատերի մեջ, հատակից մտարդու հասակի բարձրությամբ, ունեին 15×15 սմ շափի անցքեր՝ բանավոր հաղորդակցման համար:

Այսպիսով, առաջին հարկաբաժինը, իր շուրջ 140 շտեմարաններով, պահեստներով, մառաններով ու հատկապես իր արտադրական արհեստանոցներով, տնտեսական մի մեծ համալիր էր, որն իր ենթակայության ներքո ուներ հողային մեծ տարածություններ՝ գյուղատնտեսական մթերքներ ստանալու և վերամշակելու համար: Այդ է հաստատում Ռուսա II թագավորի կողմից կառուցված մեծ ջրանցքը, որը, անցնելով Թեյշեբանի քաղաքի արվարձանով, ոռոգում էր մոտակա Կուարլինի կոչվող հողերը, որի մասին է վկայում Զվարթնոցի հայտնի սեպագիր արձանագրությունը: Այդ նույնն են հաստատում միջնաբերդում գտնված մի շարք սեպագիր աղյուսակները, որոնցում նշվում է գյուղատնտեսական աշխատանքների ուղարկվող բանվորական անձնակազմի մասին:

Քանի որ այս շտեմարաններում պահվում էին նյութական մեծ արժեքներ, միջնաբերդի տնօրինությունը մշտապես մտահոգված էր նրանց հաստատուն: Այդ մտահոգության իրականացումը, հին արևելյան կյանքի նորմերի համաձայն, արտահայտվում էր աստվածներին զոհաբերություններ մատուցելով: Այդ կառուցվածքային այստեղ, ներքնահարկի տնտեսական սենյակների շարքում, ստեղծվել էր զոհասրահ՝ համապատասխան ծիսակատարությունների համար: Զոհաբերություն-

ների համալիրը բաղկացած էր Լրեք սենյակից, որոնցից մեկը պեղումների ժամանակ լցված էր հորթերի ոսկորներով՝ 0,4—0,5 մետր բարձրությամբ, որոնք հավաքված էին այստեղ կողքի սենյակում գտնվող ղոհասեղանից՝ ծիսակատարության արարողությունը կատարելուց հետո:

Սակայն, միայն սրանով չէ որ բավարարվել են միջնաբերդի տերերը: Կարասների ամենամեծ մտանքներից մեկի հատակի վրա պատրաստված կավաշեն ղոհարանի վրա նույնպես կատարվել են աստվածներին մատուցվող ղոհաբերություններ՝ շանուն այստեղ կուտակված բարիքների պահպանության: Պահեստային տարածքներում ղոհասեղանների առկայության ավանդույթը ծանոթ է դեռ Ուր քաղաքի մեծ պահեստներից, որտեղ կուտակվում էին նաև աստծո ստեղծության համար նվիրաբերված մթերքները, որոնք պահպանվելու համար նույնպես ղոհներ էին մատուցում:

Թելչերախինի միջնաբերդում կային նաև պաշտամունքային կառույցներ: Այդ են հաստատում միջնաբերդի հարավարևմտյան մասում հայտնաբերված տաճարին պատկանող սեպագիր արձանագրությունների բեկորները, որոնք, ի մի բերվելով, գծագրում են էրեբունիի susi տաճարին մոտ հատակագիծը:

Պետք է ենթադրել, որ այս տաճարը, ինչպես և տաճարների ողջ համալիրը սպասարկում էր քաղաքի ընդհանրությանը, որոնց համար էլ պատրաստված էր այն ճանապարհը, որը, սկսվելով միջնաբերդի հարավային մուտքից, 8,75 մետր լայնությամբ թեք հողաթմբով բարձրանում էր Եհնչև պաշտամունքային կառույցների հարթակը:

Այսպիսով, միջնաբերդի հատակագիծը բնորոշվում է իր տարբեր հատվածներով, որոնք դասավորված են տեղանքի թեք սարավանդի վրա, աստիճանաձև, հաճախ սիմետրիկ լուծումներով, ունենալով կառուցապատման մեծ խորություն: Այդ կապակցությամբ էլ նրա ներքին տարածությունների լուսավորության համար այստեղ ստեղծվել էին իրար հաջորդող վերևից բաց սենյակներ:

Թեք սարավանդերի վրա աստիճանաձև կառույցների դեպքում ներքին տարածությունները լուսավորվում էին նաև սլառերի վերևում տեղադրված պատուհաններից: Այդ են հաստատում պեղումների ընթացքում հայտնաբերված միջ-

նաբերդի պատուհաններում օգտագործված փայտյա բարավորները:

Նման պատուհաններ, շուրջ մեկ մետր բացվածքով, լայնորեն հայտնի են ուրարտական ճարտարապետության մեջ, մասնավորապես բրոնզյա այն թիթեղների վրա, որոնք պատկերում են Թուփրախ-կալեի, Կեֆ-կալեսիի ընակելի տների ճակատները:

Թելչերախինի միջնաբերդն այնքան լավ է պահպանվել, որ հնարավոր եղավ նրա առանձին ճարտարապետական ձևերի համոզեցուցիչ վերականգնումը: Մասնավորապես ներքնահարկերի, մտանքների ու սենյակների տեսքի վերականգնման նախագծերը կատարվեցին ամենայն ճշշտությամբ՝ տեղում ընկած ծածկերի կոնստրուկտիվ ձևերի, լրիվ պահպանված հեծանների ու պատերի բարձրության վրա մնացած նրանց տեսանելի հետքերի համաձայն: Հնարավոր եղավ վերականգնել նաև միջնաբերդի հարավային ու հյուսիսարևելյան մուտքերը: Սրանք կառուցված էին հում աղյուսից, քարե շարքերի վրա և ունեին բազալտե սրբատաշ քիվեր, որոնք պահպանված առանձին բեկորները լրիվ վերարտադրվում են իրենց նախնական ձևերով (գծագր. աղ. 15):

Մուտքերի ճարտարապետական այդ ձևերի վերականգնումը հիմնված է տեղում գտնված բեկորների, հատակագծային հորինվածքի, ինչպես նաև հին հարթաքանդակներում պատկերված մուտքերի ձևերի (Արզաչկուն՝ Ուրարտում, Խշտարի մուտքը՝ Բաբելոնում, պալատը՝ Դուռ-Շառուկինում) հիման վրա: Դրանց վրա է հիմնված նաև միջնաբերդի լրիվ պեղված հարավարևելյան հատվածի արտաքին ձևերի վերակազմությունը: Նրանում արտահայտված են ընդհանուր ծավալների աստիճանաձև կառուցվածքը, նրանց կապը տեղանքի ծալքերին, ձորի կողմը ուղղված երկրորդ հարկի բաց սյունասրահն իր բազալտե մույթերով ու որմնահեցերով, որոնք ընդհանուր ձևերին հաղորդում են մոնումենտալություն:

Թելչերախինի միջնաբերդի ներքին հարդարանքի համար կարևոր հայտնագործություն էր սկզբումների ընթացքում գտնված բրոնզյա թիլևիկների առանձին պատասիկները, որոնցով պատում էին պալատահան գոնեքը: Այս զնայում միջնաբերդի ճարտարապետությունը շանգես է

գալիս նոր ու ճոխ տեսքով, իր գուգահեռներն ունենալով ասորեստանյան ու բարելոնական պալատների հարդարանքներում:

Միջնաբերդի արտաքին ճարտարապետական ձևերն իրենց աշտարակներով ու որմնահեցերով ունեին ծավալների ուղղահայաց շրտում և իրենց դեպի վեր ուղղված դինամիկ ու մոնումենտալ շարժմամբ իշխում էին քաղաքի ողջ տարածքում, նրա բնակելի շենքերի ծածկերի հորիզոնական ծավալների հետ կազմելով ցայտուն հակադրամասնություն:

Քելջերահինի միջնաբերդն ապրեց պատմական կարճատև կյանք, որը դադարեց սկյուֆացիների կողմից VII դ. վերջում քաղաքի վրա կատարված արշավանքի հետևանքով:

Արագած գյուղում (էջմիածնի շրջան) գտնվող միջնաբերդը բնորոշվում է ճարտարապետական արտաքին ձևերի նրբովի արտահայտությամբ<sup>12</sup>, Այն ներկայացնում է երկհարկանի միջնաբերդի ցայտուն օրինակ (գծագր. աղ. 23): Միջնաբերդը դեռ XVII դարում իր վրա էր գրավել ֆրանսիացի ճանապարհորդ Պոլ Լեկուզի ուշադրությունը, որն անցնելով այս գյուղով հուշարձանի վերակազմությունը կատարել էր ձեպանկարի ձևով և հրատարակել Չրանսիայում: Նրա նկարում հուշարձանը որոշակիորեն պատկերված է երկհարկանի, շասկանալի է, որ Պոլ Լեկուզի օրոք, այն է՝ շուրջ 350 տարի առաջ, կառույցը պետք է որ ավելի լավ պահպանված լիներ և իր տեսանելի մնացորդներով որոշակիորեն կարող էր հաստատել երկրորդ հարկի առկայությունը նրանում: Սակայն բոլորովին անհիմն են նրա վերակառուցման գծագրում տեղ գտած՝ սովյալ հուշարձանը XVII դարի ճարտարապետական ոճին վերագրող զրվագները:

Ի դեպ, Պոլ Լեկուզի այդ գծագրով ժամանակին ներկայացվեց առաջին հայտը Նվրոպայում պատմական հայ ճարտարապետության ուսումնասիրության ուղղությամբ:

Միջնաբերդի երկրորդ հարկի առկայությունը ժամանակին հաստատեց նաև Ք. Յորամանյանը: Նույնը հաստատվեց նաև 1955 թ. մեր կատարած մանրամասն պեղումների արդյունքներով: Այդ ընթացքում հուշարձանի արևելյան մասի տեղանքի ժայռոտ կրունների միջև մասնակի կերպով դուրս եկող երկայնական կիսամուխի երկու կողմերի ծավալների մեջ բացվելից դեպի վեր տանող հում աղյուսի աստիճանների մնացորդ-




ները Տեղում գրեթե հիմնովին կործանված որմածքին պատկանող հում աղյուսներից պատահմամբ պահպանված մի քանի օրինակները, իրենց ձևերով ու չափերով նման են Կարժիլ բլուրի միջնաբերդի այլուսներին: Իրանով էլ, ի դեպ, Արագածի ուրարտական հուշարձանը թվարկվեց մ.թ.ա. VII դարով:

Մեր պեղումները հաստատեցին նաև, որ հուշարձանն ուներ հարթ ծածկ՝ փայտյա հեծանների վրա, ուրարտական ճարտարապետության մեջ տարածված կոնստրուկտիվ ձևերի հայտնի սկզբունքներով:

Հուշարձանի հատակագծային հորինվածքը՝ քառանկյան ձևով անկյունային ելուստներով և որմնահեցերով նրանց միջև, ծանոթ էր հինարևելյան ճարտարապետությանը: Անշուշտ, որոշակի զուգահեռներ կարելի է գտնել նաև Միջագետքի դեռ IV հազարամյակում ստեղծված Քեփե-Կավրայի, Աբու-Շարայի կամ Երիզուրի ու այլ համանման հուշարձանների մեջ, սակայն կարծում ենք, որ Արագածի միջնաբերդի հայնական ձևն իր պարզ օրինակով առկա է Ինչիլուի հուշարձանում: Վերջինս, որի լավ պահպանված մնացորդները գտնվում են Արագած լեռան հարավային լանջին, Բյուրահանից ընդամենը երեք կիլոմետր հեռավորության վրա, ի հատակագծով նույնպես քառանկյուն է, սակայն, իր ճակատների հարթ, լակոնիկ մշակմամբ՝ առանց որմնահեցերի:



Արագածի միջնաբերդը իր արևմտյան և հարավային կողմերում ուներ փոքր չափերի բակ, որը սահմանադրված էր չորս պարիսպներով: Տվյալ հատակագծային հորինվածքը համոզում է, որ առաջնային այստեղ պաշտպանական նկատառումներ են, որի հետևանքով էլ ստեղծվել է ալպիսի հատակագծային լուծում: Իսկ միջնաբերդի արևելյան ու հյուսիսային սարածություններում, որտեղ տեղանքն իր բազալտե կրատեսերով արդեն իսկ սպահովվում էր անհրաժեշտ պաշտպանությամբ՝ նման պարիսպներ չունեի:

Չնայած միջնաբերդի խիստ քայքայված վիճակին, այնուհանդերձ կարելի է եզրակացնել, որ նրա բնակելի մասը տեղավորված էր գրեթե լրիվ կործանված 2-րդ հարկում, իսկ պահպանված տուաջին հարկը տրամադրված էր օձանդակ սենյակներին: Կասկածից դուրս է, որ սովյալ բնակատեղիի պահպանված մասերը տեղադրված էին միջնաբերդի ստորին հարկում, Ենպես, օրինակ, դա արվում էր Քելջերահինիում և այլուր: Սա-




2-2


u





φ



γ



ρ



Աղ. 36 Վանա ծայր. վիճակոր կառույցներ. ա) հատակագիծ, կորվածք, բ) հատակագիծ, կորվածք, գ) հատակագիծ, կորվածք, դ) հատակագիծ, կորվածք

կայն միջնաբերդի սահմանափակ մակերեսի պատճառով տնտեսական պահեստները, ինչպես կարելի է կոահես պեղումների նյութերից, գտնվում էին նաև միջնաբերդից դուրս, նրան կից տարածքներում, որտեղ հայտնաբերված են բավականին մեծ շափեր ունեցող կառույցի հետքեր:

Քանի որ Արագածի բնակատեղին մի սովորական URU էր, որը, հավանաբար, Արգիշտիխի-նիլիի ազլումեբրացիայի հզոր համակարգի կազմում մի գյուղական միավոր էր, ուստի և չէր կարող ունենալ մեծ միջնաբերդ՝ իր պահեստային մասերով, որոնք այստեղ առանձին մեկուսացած կառույցների ձևով պետք է փոխված լինեին համակարգի ամբողջ տարածքում:

Եզրագծային կառուցապատում ունեցող՝ միջնամասում վեր խոչնցող ծավալային միջուկով միջնաբերդերի տիպին պատկանող կառույցներ:

Ուրարտական պետության արևելյան մարզում, հատկապես Ուրմիա լճի շրջափակում, վերջին տարիների ընթացքում Վ. Կլայսի հնագիտական արշավախմբի կողմից հայտնաբերվել են բազմաթիվ ուրարտական բնակատեղիներ, բերդեր, ինչպես նաև վիմափոր կառույցներ: Այդ բոլոր հուշարձանները, իրենց հատակագծային հորինվածքի լուծումներով, դրսևորում են ուրարտական բերդերի նոր կողմերը, ուրարտական ճարտարապետությանը բնորոշ ու նրան հատուկ խորապես ինքնատիպ մակարդակ (գծագր. աղ. 27)<sup>13</sup>:

Սակայն, հարկ է նշել նաև, որ այդ հուշարձանները գրեթե պեղված չեն ու որոշ դեպքերում էլ հայտնի են միայն իրենց հազիվ տեսանելի վերերկրյա, երբեմն էլ խիստ եղձված հետքերով: Բանն այն է, որ որոշ հուշարձաններում երբեմն իսպառ ոչնչացել են պատերի հում աղյուսի շարքերը, իսկ ներքևի քարե շարքերում հաճախ պահպանվել են միայն նրանց բեկորների տևե քարակույտերը, որոնցով ոչ միշտ կարելի է կահել նախնական հատակագծային հորինվածքի ստույգ ձևերը: Հետևապես այդ ընդհանուր եզրակացությունները պետք է ընդունվեն խիստ վերապահումներով: Այս բոլորը չի կարելի տարածել պեղումների հետևանքով համեմատաբար լավ ուսումնասիրված Բաստամի վրա, որը հանդես է գալիս իր ճարտարապետական նորույթներով:

Այս երրորդ տիպի կառույցներին վերագրվող բնորոշ հորինվածքը պարզ նկատելի է իր զարգացման էվոլյուցիոն ընթացքով՝ հատկապես

Ուրարտուի արևելյան մարզերի միջնաբերդերում, որոնք և պատկերված են մեր աղյուսակում: Իրա նախաստեղծ ձևը պարզ քառանկյուն էր, ինչպես, օրինակ, Տուշպայից արևելք գտնվող Կերթին կնդաֆի բերդը, որին եզրագծող պատերը չունեն ս՛չ աշտարակներ, ս՛չ էլ որմնահեցեր:

Այսպիսին էր Ուրարտուի վաղ շրջանում կառուցված պատերի մեծ մասը, այդ թվում՝ նաև Տուշպայի շրջակայքում կառուցված Սարգուրիի հայտնի փոքր ամրոցի պատը, որոնք, սակայն, հետագայում ստանալով աշտարակներ ու որմնահեցեր, դառնում են կուռ համակարգեր (գծագր. աղ. 44):

Այսպիսի մի քառանկյուն հատակագծով, աշտարակներով ու որմնահեցերով կառույց էր Կալե-թեփե Դոգազը, հիմնված VIII—VII դդ. (մ.թ.ա.), Ուրմիա ճի հարավային ափերից 20 կմ արևմուտք: Իրա փոքր չափերը ենթադրել են տալիս, որ այն ծառայում էր որպես ռազմական առաջապահ՝ Ռեզայե ձգվող ճանապարհի ուղղությամբ: Նման փոքր չափերի էր, բայց ավելի ձգված հատակագծով, Ուզուր-թեփե բերդը, որը գտնվում է Ուրմիա լճից հյուսիս, Բաստամից 30 կմ արևելք, և նույնպես ռազմական նշանակություն ունեցող մի առաջապահ էր:

Տվյալ տիպի հորինվածքի զարգացման հետագա աստիճանը կարելի է տեսնել Շերագիե-ամիր, ինչպես նաև Կուխ-ի-Սամբիլ բերդերի հատակագծային լուծումներում: Սրանցից առաջինը գրտնրվում է Մարսինդից 25 կմ հյուսիս-արևմուտք լեռնային հարթավայրի եղրին, որից արևելք փրված են ուրարտական մի այլ բերդի մնացորդները:

Շերագիե-ամիրի միջուկը, որը 18×31 մետր չափերի քառանկյուն կառույց է՝ աշտարակներով ու որմնահեցերով, իր միջնամասերի պատերին կից ունեն սենյակների շարք, իսկ մնացած մասը բավական ընդարձակ դահլիճ էր: Այս միջուկը, ինչպես ցույց են տվել Վ. Կլայսի հետազոտությունները, հետագայում կառուցապատվել է հզոր բերդապարիսպներով և դրանով էլ, ինչպես կարծում ենք, հիմք է դրվել բերդերի՝ վերիններում նշված նոր տիպին: Նման վերակառուցումը հետագայում դառնում է ճարտարապետական օրինակաբան ձև՝ էվոլյուցիոն ընթացքի իր նոր արտահայտություններով:

Այսպիսին էր նաև Կուխ-ի-Սամբիլ բերդի զարգացման ընթացքը, որը գտնվում է Ռեզա-

լիցի 37 կմ հյուսիս-արևելք, Ուրմիա լճի ափերի մոտ գտնվող լճանի լանջին:

Թագմասարատեղեկան նշանակություն ունեցող այս կառույցը պահպանում էր Ռեկվալեից հյուսիս գտնվող դաշտավայրը, լինելով տևողական կապով առնչվող բերդերի միջին օղակներից մեկը:

Կուխի-Սամբիլ բերդը շինարարական մի քանի փուլերի արգասիք է: Նրա նախնական՝  $42 \times 105$  մ չափերի բավականին ձգված միջուկն էր հյուսիսային ճակատային մասում ուներ հզոր աշտարակներ, ինչպես նաև որմնահեղեղ: Այս քառանկյուն հատակագիծ ունեցող կառույցի ներքնամասում են գտնվում բերդի հիմնական սենյակները: Հետագայում այդ միջուկը կառուցապատվել է իր մնացած ծավալներով, որով և այն ստացել է իր արդի տեսքը:

Նույն կերպ են բնութագրվում նաև մյուս բերդերը, այդ թվում մ.թ.ա. VII դ. Կալե-Սիրախը՝ կառուցված Մակուից 36 կմ արևելք, մ.թ.ա. IX դ. կիզ-կալսին՝ Եվբզուրի մոտ, որոնք, Վ. Կյայսի կարծիքով, վերակառուցվել են մ.թ.ա. VII դարում: Կիզ-Կալսինի միջնաբերդի չափերը ( $175 \times 245$  մ) թույլ են տվել նրան հաստատելու, որ այն գավառագետի նստատեղին է եղել:

Հուշարձանի տեղանքի բնորոշ հատկանիշն են նրա մեծ թևերությունները, որոնց հետևանքով կիզ-Կալսինի միջուկը, կառուցված լինելով աստիճանաձև հորինվածքով, ցայտուն օրինակ է դառնում շենք տեղանքի ծայրերին ամենայն խստությամբ կապելու սկզբունքի, որով կրճատվում կամ բոլորովին վերացվում է քարի որմածքի աննպատակ օգտագործումը: Դրա հետ մեկտեղ աստիճանաձև ծավալները պետք է որ շենքի արտահայտության հաղորդիկն վերադառնա ու մոնումենտալ տևա:

Հետագայում գտնվեց այս հորինվածքի նոր տարրերակ՝ Կուխի-Քաղարուաղի, Ալավերդի օբեկի և մյուս միջնաբերդերում: Մրանցում արտաքին, եզրագծային պատերն իրենց ֆունկցիոնալ առումով շարունակում են մնալ ոչ միայն պաշտպանական տարրը, այլ ներսից կառուցապատվելով սենյակներով, ստանում են ծավալատարածական ներքին հորինվածք:

Քաղարուաղի բերդում  $10 \times 16$  չափերի առանձին կանգնած կառույցը՝ քառանկյուն հատակագծով, հավանաբար նրա նշանակալից ու պաշտպանական մասն էր: Իսկ նրա  $10$  մետրանոց լայնու-

թյունը հաստատում է, որ ծածկը նրանում պահվում էր սյունահեծանային կոնստրուկտիվ հասակարկի միջոցով:

Պահպանելով նույն սկզբունքը, անկանոն էլիպսին մոտեցող Ալավերդի օբեկի հատակագիծն էր միջին մասում ունի տարբեր շինությունների պարզ տեսանելի շևտեր, որոնցից առավել ցայտունը ներկայացնում է  $28 \times 38$  մ չափերի քառանկյուն շենքի հատակագիծ՝ իր դուրս եկող անկյունային աշտարակներով: Այս շենքին հատկանշական են նրան եզրագծող պատերի միջև գտնվող երկայնական սենյակները, որոնք խիստ բնորոշ են Միջագետքի մոնումենտալ ճարտարապետությանը: Կառույցի միջին մասի  $15 \times 25$  մ չափերի տարածքը, որը նրա շեշտված մասն էր, կարող էր լինել բակ կամ դահլիճ:

Սակայն այս անցումային ձևերը, իրենց զարգացման մեջ ստեղծելով իրար հետ շարժապակած արտահայտություններ, դառնում են հասկանալի: Այդ առանձնապես պարզ տեսանելի է Դանաթ-լուի փոքր չափերի բերդի ձևի մեջ, ուր վերևում նշված որոնումները, կարծես նրանում խտացվելով, ամփոփվել են ծավալատարածական լուծման մեջ: Դանաթ-լուի տարածքի միջից, որը պարփակված է աշտարակներ ու որմնահեղեղ ունեցող պատերով, իր քառակուսի հատակագիծի ( $6 \times 6$  մետր արտաքին չափերով) վեր էր խոյանում մի կառույց, որի ներքին տարածության անշշան մակերեսը հաստատում է նրա վերասլաց աշտարակ լինելու հանգամանքը: Այդ են հաստատում նաև նրա շուրջն ընկած կավաշեն պատերի մնացորդները, որոնք, ամենայն հավանականությամբ, պատկանում էին աշտարակին: Հետևապես այն բարձր ու վերասլաց մի կոթող էր, որի հիմնական նպատակը տվյալ տարածքի հսկողությունն էր:

Ուշադրության է արժանի նաև այն, որ ուրարտական պալատական շենքերը, որոնք իրենց հատակագծային հորինվածքի հիմքում ունենին մեծ դահլիճ ու երկայնական կողմերին կից սենյակներ, դարձան դասական հայ ճարտարապետության պալատական շենքերի մեկնակեանային ձևը: Ինչպես ցույց է տվել ճարտարապետ Կ. Ղաֆադարյանը, խարսխվելով այդ ձևի վրա հայ ճարտարապետության մեջ առաջացան Արուճի, Դվինի պալատների, Անիի հյուրանոցի և մյուս ների ցայտուն հորինվածքները:

## Պաշտամունքային շենքեր

Ուրարտուի հասարակական կյանքում, ինչպես ամենուրեք հին աշխարհում, կրոնին վերապահված խոշոր դերը դրսևորվում էր իր տարբեր արտահայտություններով։ Ուրարտական բազմաթիվ աստվածները իրենց պանթեոնում դասավորված էին խիստ հիերարխիկ կարգով, որի բարձրագույն աստվածանին կանգնած էր զերազույն Լույակը՝ հալդին, Քելշերան և Շիվինին։ Աստվածների դասակարգումը պանթեոնում համապատասխանում էր Երկրի ստրկատիրական հասարակության սոցիալական կառուցվածքի համանման կարգին։ Այդ իրողության արտահայտություններից մեկն էլ այն է, որ Ուրարտուի աստվածները, երկրամասերի վարչական իշխանության կուսակալների նման ունեին իրենց աթոռանխտ քաղաքները, որոնք նրանց պաշտամունքային կենտրոններն էին։

Ուրարտական ծիսակատարությունների մասին մեր տեղեկությունները շափաղանց թերի են։ Հայտնի է միայն, որ լայնորեն տարածված էին զոհաբերությունները, ընդ որում ինչպես խոշոր ու մանր եղջերավոր անասունների, այնպես էլ մարդկանց, ինչպես այդ կարծում է Բ. Բ. Պրոտրովսկին։ Մարդկային զոհաբերությունները, հավանաբար, գոյություն ունեին Հին արևելքի ժողովուրդների պաշտամունքային սովորություններում, մասնավորապես խեթերի մոտ, որ վկայվում է խեթական մի կնիքով. պատկերված է զոհի կիզում ծիսական պարերի ու երաժշտության ներքո<sup>14</sup>։ Սակայն, ինչպես գտնում էր Ա. Բ. Տուրանը, մարդկային զոհաբերությունները Հին արևելքում հազվադեպ էին, իսկ հետագայում իսպառ վերացվում են, տեղի տալով կենդանիների զոհաբերություններին<sup>15</sup>։

Բացի զոհաբերություններից, աստվածներին նվիրաբերում էին նաև զանազան իրեր՝ դեկորատիվ վահաններ, սաղավարտներ, կապարճներ, զենքեր, որոնք պահվում էին տաճարներում, իսկ վահանները կախվում էին նրանց պատերին։

Չհաբերությունները, ինչպես այն պարզվել է Արինքերի ու Կարմիր բլուրի պեղումների րնթացքում, կատարվում էին աստվածների արձանիկների կամ նրանց որմնանկարների առջև՝ ուղեկցվելով նյութական բարիքների և ընդհանրապես բարեմաղթությունների կոնկրետ ազերսանքներով։

Հավանաբար ծիսակատարությունները կատար-



վում էին մեծ շրջաօրվում, որի բնթացքում այրվում էր մագնեկիումի հանքաքարը՝ շրջապատը լուսավորելով ասանձնահատուկ պայծառությամբ։ Դրա համար Քիզաս Պարասար 1-ր պարտավորեցրել էր Մելիզի բաղադրեցիների որպես տուրք հանձնել մեկ «միերա» այդ հանքաքարից՝ զոհաբերությունների ընթացքում տաճարներում օգտագործելու համար։

Մեզ հայտնի շին նաև բրմերի գործունեության մանրամասնությունները և նրանց հիերարխիկ դասավորությունը տաճարներում։ Սակայն, հավանական է, որ ուրարտական տաճարների կրոնական գործիչներից որպես քուրմերի պաշտոնակատարները՝ ալիտենի ու պալադի կոչվածներն են, ինչպես այդ ենթադրում է Ն. Հարությունյանը՝ 1962 թ. Կարմիր բլուրում հայտնաբերված Ռուսա Մ արձանագրության վերձանման հիման վրա<sup>16</sup>։ Հայտնի է նաև, որ շումերական տաճարներում աղոթքները, հիմները կատարվում էին ուղեկցվելով եղբերով ու նվագով երաժշտական գործիքների վրա, այդ թվում ծընծրղաններով։ Քելշերախիի միջնաբերդում պեղումների ընթացքում գտնված նման ծնծղայի օրինակը հաստատում է այդ սովորության գոյությունը նաև Ուրարտուի տաճարներում։


Հավանաբար, ուրարտական խոշոր տաճարներն ինչարձակ համալիրներ էին, որտեղ պաշտամունքային կառույցները միավորվում էին աշխարհիկ, տնտեսական, արտադրական ու պահեստային շենքերի հետ։

Քուրմերի գործունեությունը տաճարներում չէր սահմանափակվում միայն կրոնական ծիսակատարություններով, ինչպես և այդ տաճարները միայն նյութական արվեստներ չէին կուտակում իրենց մեջ, այլ դրանք հանդիսանում էին նաև ռազմական հզոր կենտրոններ։ Նրանցում գործում էին զվեք պատրաստող արհեստանոցներ<sup>17</sup>։


Ուրարտական ճարտարապետությունը ստեղծել է տաճարային կառույցների մի շարք ձևեր, որոնք բացի բազմաթիվ սեպագիր արձանագրություններից, հայտնի են նաև պեղումներից գրտնելված օրինակներով։ Ուրարտական սեպագրերում հիշատակվում են այդպիսի կառույցների հետևյալ տարբերակները՝ Ե—տուն (աստծո)—տաճար, Ե BAR—տաճար, tarani—մատուռ, Տի-tile—աստվածների զարպաս։ Պաշտամունքային է հղել նաև այն կառույցը, որ սեպագրերում հիշատակվում է suse սնունով։




բ



գ



դ



ե



Ճ.դ. 37. Համաչափություններ. ա) կանգուն, բ) քիվեր, գ) քիվեր, դ) սալաբար, ե) վան, իտր-  
չեր, զ) աշտարակի հատակագիծ

Հավանաբար, պաշտամունքային են եղել նաև Սիրիխանի և Աղունիսիի կառույցները, որոնք հիշատակվում են 1962 թ. Կարսի ըլուրում հայտնաբերված սեպագրերում<sup>18</sup>: Պաշտամունքային կառույց էր նաև burgana-ն, որը տաճարներին կցված բուրգ էր:

Քեև ուրարտական սեպագրերում նշված են տաճարների մի շարք տեսակներ, դրանց հայտնաբերված ձևերը իրենց հատակագծային ճորինվածքներով երբև են՝

— քառակուսի հատակագծով— ուղղանկյուն հատակագծով՝ երկայնական առանցքով— ուղղանկյուն հատակագծով՝ լայնական առանցքով:

#### ա. Տաճարներ Բառակուսի հատակագծով

Ուրարտական տաճարաշինության մեջ կառույցի այս տիպը նրա հիմնական ու տարածված ձարտարապետական ձևն է՝ Դրանց առավել հայտնի օրինակների մնացորդները հայտնաբերված են Ալթին-Քեփեում, Քոփրախ-կալեում, Անգավուր-Քեփեում, Կայադղերեում, Վերախրամում, Դանաթլում և այլ տեղերում:

Ալթին-Քեփեի տաճարը այս տիպի լավագույն պահպանված կառույցներից է, որը հայտնաբերվել է 1961 թ. կատարված պեղումների ժամանակ, 60 մ բարձրություն ունեցող բլրի գագաթին<sup>19</sup>, ժամանակին ինչևնով տվյալ տարածքում, տաճարն իր ծավալներով պարզ տեսանելի պետք է լիներ տարրեր կողմերից (լուսանկ. աղ. 19 ա, բ): Տաճարի քառակուսի հատակագծի առանձնահատկությունը նրա անկյունային ելուստներն էին կազմում:

Տաճարը գտնվում էր 27,00×27,00 մ չափերի պերիստիլ բակի կենտրոնական մասից բիշ հեռավակի ծածկված մասը արտաքին պատի եզրով էր: Բակը մասամբ սալահատակված էր և ուներ շրահեռացման համակարգ (գծագր. աղ. 24):

Պաշտամունքային ծիսակատարությունները կատարվում էին շենքի ներսում, ինչպես և բակում, որ հաստատում են այստեղ պահպանված մի քանի զոհարանները, մեկը՝ տաճարի զլխավոր ճակատի առջև, նրա մուտքի առանցքով, մյուսը դրանից 3 մետր հեռավորության վրա, իսկ երրորդի մնացորդները գտնվում են տաճարի հետևի մասում:

Տաճարների շրջապատում, բացառյա կոտորվող զոհարաններին ավանդական դարձած սովորությունը հաստատվում է նաև Քոփրախ-կալեի ու Կայադղերի օրինակով: Վերջինում, նույն պես տաճարի առջևի մասում փոխված շրայարակում, որը սալահատակված էր, կիսավեր վիճակում պահպանված պատվանդանի վրա կանգնած էր կոթողը՝ կիսակոր Վերջավորությամբ, իսկ նրա մոտ՝ բազայան սովորաբար սովորված շարված շարիակի վրա, պարզ տեսանելի ձևով, պահպանվել են բրոնզյա եռոստանի զոհարանի ամրացման հետքերը: Այս երկու կոթողները ստեղծել են ֆունկցիոնալ առումով պաշտամունքային մի շարակարգ:

Տաճարի ներսի մասը (որի քառակուսու մի կողմը 5,20 մ էր կամ 10 կանգուն) Քեև բավական փոքր է, սակայն, այստեղ ևս մուտքի դիմացի պատի տակ տեղավորված էր զոհարան, որի պահպանված ստորին շարքերը սրբատաշ բազալտից էին: Պատերի եզրով կառուցված էր նստարան՝ նույնպես սրբատաշ քարից, ինչպիսիք սովորական էին ուրարտական այլ տաճարների համար: Հետևապես ուրարտական տաճարների ծիսակատարությունների ժամանակ նստած վիճակը օրինականացված էր:

Տաճարի հում աղյուսե պատերը ինչպես Կայադղերեում, այնպես էլ Ալթին-Քեփեում և մյուս համանման կառույցներում, բավականին հաստ էին, որ, ինչպես կարծում ենք, սլալամանավորված էր նրանց ծածկի մասերի կոնստրուկտիվ առանձնահատկություններով:

Ինչպես արդեն պարզվել է, մոնումենտալ որմնանկարները ուրարտական կառույցների անբաժանելի մասն են կազմել: Ալթին-Քեփեում տաճարի արտաքին ու ներքին, նաև նրա Լգրսագծող պերիստիլ բակի պատերը, ինչպես ցույց են տալիս գտնված առանձին բեկորներով, նույնպես ծածկված էին ճոխ որմնանկարներով, որով էլ ապկի էր շեշտվում տվյալ տարածքի ճարտարապետական հարդարանքը:

Ի դեպ, տաճարի դասավորությունը պերիստիլ բակի միջին մասում ունի փյունիկյան Ամրիս բազարի տաճարի տարածական կազմավորման նման լուծում: Այնտեղ, ժայրի մեջ փորված բակի 25×48 մ տարածքի միջին մասում կանգուն տաճարը շրջապակված էր սյունադարպ ուրարտի, որի ծածկի փայտյա հեծանների մի ծայրը պահ:

վում էր ժայռի մեջ մտցված, իսկ մյուսը հենվում էր փայտյա սյունների վրա<sup>20</sup>:

Այսպիսով, Ալթին-Քեփեում, կայալիզերում և ալլուր լայնորեն տարածում գտած բառակուսի հատակագծով տաճարները բնորոշվում են ոչ միայն ձևերի, այլև շափերի համանմանությամբ:

Սակայն այդ տաճարների քայքայված վիճակը զովարացյուն է նրանց ձևերի նախնական հորինվածքի վերականգնումը և տեղի տալիս մի շարք վարկածների: Այդ կապակցությամբ հիշատակելի են, օրինակ, Ալթին-Քեփեի տաճարի ճարտարապետական ձևերի վերականգնման ուղղությամբ կատարված փորձերը (գծագր. աղ. 28):

Առաջին փորձը կատարել է ճարտարապետ Ակոկը, որի վերակառուցման նախագծում անկյունային աշտարակաձև ծավալները բարձրացված են ալիւի, բան կառուցյի միջին ծավալն է: Ճարտարապետական տվյալ ձևն ընդունված սկզբունք էր Ուրարտուում: Հին արեւելքի տարածքում կարելի է գտնել համանման բազմաթիվ լուծումներ, մասնավորապես, օրինակ, Գուռ-Շառուկինի պալատական մուտքի ճարտարապետական ձևերում և այլն:

Սակայն տաճարի ներքին տարածություն լուսավորության պրոբլեմն է, որը վերականգնման տվյալ նախագծում լուծված է բավական պարզունակ կերպով, այն է՝ ի հաշիվ ծածկի վերացման:

Ալթին-Քեփեի տաճարի նախնական ձևի մասին Ակոկի այս պատկերացումները Վ. Կլայսը սխալ է համարում և կազմում նույն տաճարի վերակազմության իր տարբերակը<sup>21</sup>:

Այդ նախագծում նկատելի է, որ Վ. Կլայսը տաճարը դիտում է որպես աշտարակաձև կառուցվածք՝ բավականաչափ վեր խոցացող ծավալներով: Իրանում կիրառված է ծածկի համար վրանաձև ծալալ, որն, ինչպես երևում է, Մուսասիրի տաճարի ծածկի յուրովի ընկալման փոխակերպված ձևն է:

Վ. Կլայսն էլ իր նախագծում չի լուծում տաճարի ներքին տարածության լուսավորության հարցը, ծածկի մեջ շողունելով ոչ մի համապատասխան բացվածք: Իսկ այս դեպքում, ներքին տարածության վեր դարգացող ու խավարի մեջ բնկղմված ծավալը, որը շունի նույնիսկ զոհասեղանից բարձրացող ծխի համար որևէ էլք, բացի մուտքի բացվածքից, նույնպես անհավանական է: Ընկեր է պատվերացնել, որ ծխի ու խավարի մեջ

պետք է անտեսանելի թողնվեն դռան բացվածքից վեր գտնվող պատերի վրա կատարված մանր ու գունեղ որմնանկարները:

Ճարտարապետական այսպիսի հորինվածք ունեցող տաճարների Ուրարտուում բավականին տարածված լինելու հանգամանքը մեզ ստիպեց անդրադառնալ նրա նախնական կերպի վերակազմությանը:

Վերակազմության մեր հիմնական դրույթները հետևյալն են.

ա) Տաճարի ներքին տարածությունը եղել է ծածկված, որի մեջ թողնված էր երդիկանման բացվածք՝ ներքին տարածության լուսավորության և ծխի դուրս գալու համար:

բ) Տաճարի արտակարգ հաստ պատերը իրենց մի մասի վրա կրում էին ծածկը, որը բարձրաևում էր անկյունային աշտարակաձև ծավալներից վեր: Ծավալների նման ուրվագիծը, որն իր բնորոշ արտահայտություններն ունի հինարևելյան բազմաթիվ նման հուշարձաններում, պարզ տեսանելի է հատկապես էրբրունիի խալդի տաճարի burgana կողմը ծավալների մնացորդների մեր վերականգնման մեջ: Սրանով է իմաստավորվում նման փոքր ծավալ ունեցող տաճարի արտակարգ հաստ պատերի առկայությունը:

Տաճարի վերականգնման մեր գծագրում շենքի քիվերն արտահայտված են ուրարտական ճարտարապետության համար ավանդական ատամնավոր շարքերով, որոնք վերականգնվում են Կեֆ-կայեսիի տաճարի արքածրում պեղումների քննթացքում հայտնաբերված համապատասխան բեկորի հիման վրա: Տվյալ բեկորը պահպանված է իր վերին փոքր մասով միայն, այդ պատճառով էլ ժամանակին նրա պեղողների կողմից չձանաչվեց իր իսկ բուն նշանակությունը:

## Բ. ՏԱՃԱՐՆԵՐ ԵՐԿԱՅՆԱԿԱՆ ԽԱՏՈՒԿԱԳԾՈՎ

Այս տիպի կառույցի ամենարևորը sasi տաճարն է, որը գտնվում է էրբրունի պալատի պերիստիլ բակի երկայնական ստանցիի արևմտյան հատվածում (գծագր. աղ. 29 գ): Տաճարի մասին տեղեկություններ են հաղորդում գլխավոր ճակատի մուտքի երկու կողմերում փորագրված նույնանման սեպագիր արձանագրությունները: Նրանցում ուրարտական թագավոր Արգիշտին՝ Մենուայի որդին, հաղորդելով տվյալ տաճարի կառուցման մասին ասում է.

«Իվարշա աստծուն, այս տունը (susi) Արգիշ-տին՝ Մենուայի սրգին կառուցեց: Արգիշտին տունը է՝ ճողը (այս տեղում) ամայի էր (susi) ոչինչ անտեղ չէր կառուցված: Արգիշտին թագավոր է Նոր, թագավոր է մեծ, թագավոր է Բիսյնիի Երկրի, Տուշպա քաղաքի տիրակալը»:

Ինչպես կարծում է Մ. Ա. Մևիլբիշվիլին, Իվարշան լուսավորման-փորձարարական աստվածություն էր, որի մասին հիշատակում են Բողոքոյանի խնթական տարեգրությունները<sup>22</sup>, Հեռաբար, Արգիշտին այստեղ հիմնում է հաթև և Սուպանի երկրների աստծուն նվիրված տաճար: Եթե ճիշտ է այս վարկածը, մնում է անհասկանալի, թե ինչ կարիք ունեին պալատական րնակիչները պաշտելի կուռք դարձնելու ճարեան երկրի աստծուն, մի բան, որ շատ հետո էր հիմարեկյան սովորություններից ու բարբերից:

Թևե susi կոչվող տաճարները վաղուց էին հայտնի ուրարտական արձանագրություններից, սակայն նրանց ճարտարապետական տեսանկյունից ձևերը հայտնաբերված են միայն Էրեբունիի տրվյալ կառույցում:

Էրեբունիի susi-ն ուղղանկյուն հատակադժով փոքր ծավալի մի կառույց է, 5,05×8,08 մ ներքին և 10,00×13,5 մ արտաքին չափերով: Կինկով պալատական տաճար, շուրջ 40 քմ. մակերեսով, այն հետևապես սահմանափակ թվով մարդկանց համար էր նախատեսված:

Տաճարը երկրի կողմերի նկատմամբ սեղանաձև էր շեղակի, ինչը բնորոշ է Միջագետքի տաճարաշինության համար: Մ. Տրանկֆորարը դտնում է, որ տաճարների նման տեղադրումը Միջագետքում պայմանավորված էր պաշտամունքային նկատառումներով և որ այդ նկատմանքը կապված էր երկնակամարի այն լուսատուների հետ, որոնք արտահայտվում էին համապատասխան աստվածություններով:

Տաճարի ճարտարապետական արտաքին ձևերի պահպանված մնացորդներից դատելով, պարզ նկատելի է դառնում, որ նրա զուսպ լակոնիկ ծավալներն անմիջականորեն բխում են կառույցի պարզ ուղղանկյուն հատակագծից: Միայն գլխավոր ճակատի միջնամասում, որտեղ դռան բացվածքն է, ճակատը մոտ 0,27 մ ներս է ընկած: Տվյալ հատակագծին համապատասխան, տաճարի արտաքին զանգվածը, ինչպես և ներքին տարածությունն իր սահմաններով ուրվագծում է ճշգրիտ կառուցված երկ-

րուսփական ձև, որի բնորոշ արտահայտությունը նրա սիմետրիկ լուծումն է: Այդ վերաբերում է տաճարի նստակազմի ու ճարտարապետական արտաքին ձևերի հարմարվածներին ու նույնիսկ նաև գլխավոր ճակատի վրա սեպագիր արձանագրությունների տեղադրությանը:

Գլխավոր ճակատի պատը պահպանվել է շուրջ 2,6 մ բարձրությամբ: Գրան հակառակ, արևմրայան պատը միայն նախիվ նշմարվում է: Պատի նախիվ տեսանկյունից շրջերին զուգահեռ, ամբողջ ներքնամասը լուսավորվում, պահպանվել են մի այլ շրջի մնացորդներ, որոնք պատկանում էին այստեղ եղած զոհարանին:


Տաճարն ունեցել է հարթ ծածկ, որից մեկ են հասել նրա նեոնների ու խոյրների ամբողջած մնացորդները, այսինքն այն բոլորը, ինչից կազմված էր կառույցի ծածկը: Ամենայն հավանականությամբ, այստեղ ես, ինչպես և վերը քննարկված քառակուսի հատվածով տաճարներում, ներքնամասը լուսավորվում էր առաստաղի մեջ բացված երկրից:

Տաճարի ճարտարապետության համար բնորոշ է նաև նրա երեսպատման համար օգտագործված սրբատաշ քարի, այն է՝ շատ ամուր գորշ գույնի տուֆի խնայողալար օգտագործումը:


Այդ պատճառով է, որ քարը տեսնում ենք կառույցի որմածքի միայն ստորին երկու շարքերում, ըստ որում, սրբատաշ բեկորներով շարված են միայն զլխավոր ճակատի այն մասերը, որտեղ մուտքի երկու կողմերում փորագրված են սեպագիր արձանագրությունները, ինչպես նաև՝ ներսից բայրայման ենթակա դռան անկյունային մասերը: Ընկատների մնացած մակերեսները սվաղված էին ու ներկված կապուչուտով, իսկ քիլից ցած, ամբողջ կլրագծով, տաճարն ուներ դոսիաձև զարդանկար:

Տաճարն իր տվյալ տեսքով պետք է որ աչքի ընկներ ձևերի դանդաղածանրությամբ ու նախի-սովորությամբ, որոնք արտահայտում էին լակոնիկ հարթություններ ու ռացիոնալ պարզություններ: Մակերեսը նկատելի է նաև, որ պերիստիլ բակում այս տաճարն ընկալվում է ոչ թե իր ճարտարապետական ձևերի մեկուսացված արտահայտությամբ, այլ այստեղ ստեղծված տվյալ միջավայրի մնացած կառույցների հետ ձուլվելու շնորհիվ ներդաշնակ միասնությամբ:


Հանդիսավոր էր նաև տաճարի ներքին տարածությունը, որտեղ ի հայտ է բերված փյուղված




u




p



q



r



t

Աղ. 38. Մաթկերի ձևեր

պատերի կապտագուն ծծփը, որի վրա պահպանված են եզրագորգային որմանակարների հետքերը: Հավանաբար կապույտը ավանդական էր ուրարտական տաճարների համար. այդ գույնով էին ներկված մի շարք այլ տաճարներ ևս, էրեբունիի՝ Խաչդիի, Կայալիդեբեի, Ալթին-Քիփեի և մյուս տաճարները:

Տաճարի ճարտարապետական բնութագրումը կարելի է լրացնել նրա հատակագծային հորինվածքի համաչափություններով, որոնք արտահայտված են 5×8 հարաբերությամբ:

Ուրարտուի անկումից հետո, երբ Հայաստանը ենթարկվեց արեմենյան իշխանության տիրապետությանը, էրեբունիի ուրարտական շինությունների հիմնական մասը, այդ նոր իշխանության պահպանների համաձայն, ենթարկվեց վերակառուցումների: Այդ ընթացքում SUSI տաճարը և նրան հարող պերիստիլ բակը վերակառուցումների հետևանքով դառնում են արեմենյան պաշտամունքային կառույց, հրո տաճար-ատրուշան: Այդ վերակառուցմամբ SUSI-ն և պերիստիլ բակը մոտենում են Մուզայի (Շոշի) արեմենյան հրո տաճարի տարածական ձևերի հորինվածքին:

Այսպիսով, այնտեղ, ուր առաջ պաշտվում էր ուրարտական իվարշա աստվածը, նրան փոխարինում է Արեմենյան Իրանի մեծ աստված Ահուրամազդայի պաշտամունքը:

Մուսասիրի տաճարը թեև մեղ հայտնի է միայն իր գլխավոր ճակատի հարթաքանդակի ձևով, բայց այն դասում ենք երկայնական հատակագծով կառույցների շարքը: Այդ միտքը պայմանավորված է շենքի շորինվածքով, որի գլխավոր ճակատն ունենալով ճակտոն ու նրան համապատասխան երկթեք ծածկ, ավանդական բոլոր հայտնի օրինակների համաձայն, ուղղանկյուն հատակագծի կարճ կողմը պետք է լիներ (գծագր. աղ. 29):

Մուսասիրի տաճարը, որը նվիրարբերված էր երկրի գլխավոր աստծուն՝ Խաչդիին, կառուցված էր Ննջ նրա պաշտամունքի կենտրոնը հանդիսացող Մուսասիր բաղաբուն, որը մինևույն ժամանակ համայն երկրի պաշտամունքի կենտրոնն էր և գտնվում էր, ինչպես կարծում է Աման-Հատուպոր, ժամանակակից Ռևանդուզի մոտ, վան լճից հարավ-արևելք: Տաճարը ուրարտական ամենավաղ շրջանի կառույցներից էր և, հավանաբար, հիմնվել է մ.թ.ա. IX դարում: Բարձրա-

բանդակի վրա պատկերված տեսարանն արտահայտում է Սարգոն II-ի զորքի կողմից տաճարի կողոպուտը, մ.թ.ա. 714 թ. հանրահայտ արշավանքի ժամանակ: Կարծում ենք, որ տվյալ շորինվածքի կենտրոնում պատկերված տաճարի շենքը մեկն էր միայն այն մեծ տաճարային համալիրի մեջ, որը պետք է, որ այստեղ գոյություն ունենար:

Տաճարն իր օժանդակ կառույցներով հիմնադրված էր, հավանաբար, բարձր բլուրների գագաթին՝ հարթաքանդակում քանդակագործի պայմանական գծագրությամբ արտահայտված բլրի ուրվագծի համաձայն, մի բան, որ անուղղակի հաստատում է, որ Մուսասիրը գտնվում էր լեռնային տարածքում, որպիսին է այժմյան Ռևանդուզի տեղանքը:

Տաճարի գլխավոր ճակատն ունի պարզ ու լակոնիկ ձևեր, որի սյունաշարքը հունական ճարտարապետության մեջ ընդունված բնորոշումներին համապատասխան անվանվում է հեքսաստիլ: Կառույցի բարձր հարթակն իր առջև ու ամբողջ լայնությամբ պետք է ունենար աստիճաններ, որոնք տաճարին հաղորդում էին հանդիսավորություն և մոտեննետալություն:

Այսպիսով, տաճարի ճարտարապետական ձևերի հորինվածքն արտահայտված է երեք հիմնական տարրերով:

ա) Հարթակը, որպես այդպիսին, ուրարտական ճարտարապետության մեջ կիրառվել է նաև Թոփրախ-կալեի և Արգիշտիխիլիի տաճարում, ինչպես և էրեբունիի սյունազարդ շքամուտքում: Սակայն այն ավելի բնորոշ է Միջագետքի ճարտարապետության համար: Ուրարտում այդ ձևը, ըստ երևույթի, պետք է համարել ներմուծված երևույթ: Ընդ որում, եթե տաճարների հարթակները Միջագետքում պատրաստվում էին այդ կառույցների պաշտպանության համար՝ տեղանքի ջրերից, ապա Մուսասիրում այն, ամենայն հավանականությամբ, կառուցվել էր լեռնային տեղանքի հարթեցման համար:

բ) Սյունաշարքը ուրարտական ճարտարապետական կառույցների բաղադրուցիչ ու բավականին տարածված հորինվածքն է կազմում: Սակայն Մուսասիրի տաճարի սյունները, որոնք, նկատի ունենալով թեկուզ միայն նրանց տրամագծի չափերը, բարից էին՝ մինչ հիմա մեղ հայտնի եզակի օրինակներից են: Կարելի է ենթադրել, որ ամբողջ տաճարը կառուցված էր բարից և ոչ Ռև-

բարտուի մոնումենտալ կառույցների համար ավանդական դարձած հում արժույթը Ընդ որում, խաբխիսների ու խոլակների բացառությունը նրանցում մասնակ է տալիս, որ տվյալ սյունաշարեր ուրարտական ճարտարապետության զարգացման վաղ շրջանի արգասիք է Ավելին: Ուշագրություն արժանի են սյունների բարձրության զրուտումը Տորիգանական գոտիներում: Է. Ներքինիզի կարծիքով, դրանք մետաղական օդակներ են՝ սյունների բների մասերը իրենց միադեման տեղերում: սպահելու համար<sup>23</sup>: Այդ գեպարում անբացատրելի ու ակնհիշապես անհիմն են մնում նաև նման գոտիների առկայությունը պատմական հարմարությունների վրա, որոնք այստեղ եւ երևում են: Հավանաբար ձևն ալն է, որ Տորիգանական գոտիներն այստեղ գեկտրատիվ բնույթ ունեն, որոնք սյան բարձրությունը ձևափոխում էին գեղագիտական առումով:

Հավանաբար, ուղղահայաց հենակների զատման նման սկզբունքը փոխ էր անված արվեստների հարակից բնագավառներից: Որպես օրինակ կարող ենք նշել Քուբրախ-կալնում հայտնաբերված մոմակալի ուղղածից հենակը, որի բարձրությունը նույնպես զատված է համանման հորիզոնական օդակներով<sup>24</sup>:

գ) Տաճարի երկուսը, որով ավարտվում է կառույցի գլխավոր ճակատը, ուրարտական ճարտարապետության միակ հայտնի օրինակն է: Սակայն, թվում է, թե այդ ձևը, որպես աչքախիս, ուրարտական ճարտարապետությանը ծանոթ մտահայացում էր: Այդ որոշակիորեն հաստատում է նույն տաճարի մուտքի վրա բանդակի ձևով ճակատն պատկերող եռանկյունաձև զծագրությունը:

Տաճարի ճակատի գեկտրատիվ դրվագներից է նրան սյունալուղ նիդակի ծայրը, որը կարող էր լինել նաև սրբազան ծառի խորհրդանիշ, ինչպես այդ կարծում են Բրյնելը և Լավոտին, Լինելով Արիզիսից: Հայտնաբերված Քեյշերա ասածու շարժարանդակների վրա պատկերված սրբազան ծառերից (լուսանկ. աղ. 26): Սակայն այդ կարծիքը չի բավում Քուբրախ Օղզուչու, որն Ալթին-Քեֆեի տաճարի պեղումների քննարկում հայտնաբերել է մեծ բանակովամր նիդակների մուտքեր, որոնք նվիրաբերված էին նիդալիին:

Մենք համաձայն ենք այս վերջին կարծիքին, թեկուզ միայն այն առումով, որ եալին պատերազմի աստվածն էր և այդ հանգամանքը պետք է արտահայտվեր համապատասխան խորհրդանշանով:

Կարծում ենք, որ տաճարի ծածկն իր մեջ ունեցել է երրկանման պատուհան: Այս ենթադրությունը արված է բառ ասորեստանյան քանդակի, ուր տաճարի կողմալուց Սարգոնի զինվորներից մեկը պարանով բարձրանում է վեր, դեպի ծածկը, որտեղ, հավանաբար, պետք է լինի պատուհան: Գուցե նեց ալստեղից էլ ասորեստանյան մտնել են տաճար, նախապես շխարհանալով բացել ամուր փակված նրա դռները: Գլխավոր ճակատի մասում Մուսասիրի տաճարն ուներ մոնումենտալ բանդակներ, որոնք դրսևորում են արվեստի սինթեզի բավական զարգացած աստիճան: Բանդակների մի մասը պատկերում է նիդակավոր դռնապահներին, որոնք ստատիկ վիճակով ու սխեմորիկ ձևով կանգնած են դռան երկու կողմերում: Դրանք շինեցնում են Միջագետքի Մարի քաղաքի Գագան տաճարի համանման կերպարները, թեև ավանդույթը Հին արևելքում նման տեղերում կանգնեցված էին առավելապես առյուծներ կամ ավելի հաճախ՝ լամատուներ:

Բանդակների մյուս խումբը կազմում է կոլն իր հորթով՝ մուտքի աջակողմյան մասում: Համաձայն Լավրի պոլուսակի, ասորեստանյան կենդանիների քանդակների այդ խումբում տեսել են նաև մի ցուլ, որը տվյալ դեպքում չի պատկերել բանդակագործը: Սակայն, նույնիսկ իր նշված տեսքով, այդ շատ ուշագրավ արձանախումբը որոշակիորեն աննշում է հինարևելյան մշտնապատկերված հետախոսության նկատելի են այն դուրահանները, որոնք գոյություն ունեն Մուսասիրի տվյալ բանդակների և, առանձնապես, Միջագետքի հայտնի Քեյ-էլ-Օրեյդեի տաճարի բանդակների թեմատիկայի միջև, ուր պատկերված է կոլների մի ամբողջ հոտ: Հայտնի է, որ Միջագետքի տաճարներում գոյություն ունեն սրբազան կովեր, և այնտեղ բոլորները թագավորների համար պատրաստում էին խորտազ նախամոր աստվածուհու կաթը: Հավանաբար այս ավանդությունը կապված էր այն վաղնջական պատկերաչափների հետ, երբ դոնարությունները համարվում էին աստվածների կերակրելու միջոց և միայն հետագայում են ստացել այժմյան հայտնի իմաստը:

Այսպիսով, տաճարն իր մոնումենտալ բանդակներով կառույցին հաղորդում էր արտակարգ հանդիսավորություն ու մոնումենտալություն, որը լրարացվում էր գլխավոր ճակատին փակված բոնդ-

յա ու սոկյա քանդակազարդ շքեղ վաճանհերով, որոնք նվիրաբերվում էին հաղթի աստծուն, որի տաճարը, ի դեպ, կոչվում էր «վաճանների տուն»՝ էսպված վաճանի պաշտամունքի հետ: Հայտնի է, որ այդ պաշտամունքը գոյություն ուներ ոչ միայն Ուրարտուում, այլև լալնորեն տարածված էր Միջերկրական ծովի շատ երկրներում (Կրետե, Էթրուրիա, Հին Հունաստան և այլն):

Ամենայն հավանականությամբ, Մուսասիրի տաճարն ունեցել է նաև հարուստ որմնանկարներ, քանի որ երկրում բոլոր տաճարներն անխտիր հարդարված էին նրանցով, հետևապես երկրի զխավոր տաճարը Հէր կարող բացառութիւն կազմել:

Մուսասիրի տաճարը պատկերող քանդակի վրա հորէկէ է տեսնել նուև բրոնզյա երկու կաթսաներ, որոնք պետք է որ հեղման գինու համար լինեին:

Ազրադառնալով տաճարի ներքին տարածությանը, կարծում ենք, որ այն շատ ավելի ընդարձակ էր, քան այդ մասին քանդակից ստացած տպավորություններն են հաղորդում: Այդ են հաստատում այն բազմաթիվ իրերը, որոնք համաձայն լուվրյան աղյուսակի, գտնվում էին տաճարում, այդ թվում՝ բազմաթիվ մոնումենտալ արձաններ ու նույնիսկ մարտակառքեր:

Ուրարտական ճարտարապետության մեջ Մուսասիրի տաճարի ճարտարապետական ձևերի զարգացման նախնական աստիճանը դեռևս մնում է անհայտ: Պարզ է միայն, որ տաճարը կառուցված էր իր ժամանակի մոնումենտալ ու դեկորատիվ արվեստի արտակարգ զարգացած սկզբունքների հիման վրա:

Մուսասիրի տաճարի ուրույն ձևերի հորինվածքը պարզորոշ վկայում է, որ հինարևելյան մշակույթում Ուրարտուի պաշտամունքային ճարտարապետության զարգացումը բնորոշվում է իր որոշակիորեն ինքնուրույն ուղիներով:

#### գ. Տաճարներ: լայնական հատակագծով

Խաղլիի տաճարը էրբուրեհում լայնական ուղղանկյուն հատակագծով տաճարների կատարյալ տիպարն է Ուրարտուում: 1950—55 թթ. ընթացքում պեղումներով հայտնաբերված այս տաճարը կառույցների մի մեծ համալիր է: Մի կողմ թողնելով հետադա դարերի կառուցապատումները, կտանանք տաճարի նախնական հորինվածքը՝

կազմված մեծ դահլիճից, կից օժանդակ սենյակից, աշտարակից (burgana) և սյունասրահից: Առասյուր հայտնի ուրարտական բոլոր տաճարներից Խաղլիի տաճարը ամենամեծն է, ինչպես նաև նշանակալիցը իր ճարտարապետական հորինվածքի առումով (գծագր. աղ. 29):

1968 թ. աշտարակի վերջնական պեղումների ժամանակ նրա ճակատային մասի ներքևում in situ գտնվեց սեպագիր, որի մեջ կարդացվում է.











«Խաղլի աստծուն (իբ) տիրոջը այս տունը Արգիշտին Մենուայի որդին կառուցեց. Արգիշտին ասում է...»

Մնացած 4 տողերը չեն վերծանվում: Սակայն, այսքանն էլ բավական էր, որ պարզվեին կառուցման հանգամանքները:

Տաճարի ներքնամասն է կազմում դահլիճը՝ տեղավորված միջնաբերդի արտաքին եզրագծին կից, որի հետևանքով տաճարի հարավարևմտյան պատը միաժամանակ նաև միջնաբերդի արտաքին պատն է: Այս պատի ուղղությամբ փոխված դահլիճը 7,2×37,0 մետր չափերի է, որի հարավային պատին կից գտնվում է նրա լայնությանը հավասար և նրա հետ հաղորդող տաճարի պահեստային կարիքների ծառայող փոքր չափերի մի սենյակ:

Խաղլի աստծու այս տաճարը իր ճարտարապետական ձևերով մոտ է ասորեստանյան տաճարներին, հատկապես Աշուրնասիրպալ II-ի պալատի տաճարային կառույցներին, որտեղ տեղավորված էին թագավորի արձաններն ու զոհարանը: Էրբուրեհի տաճարի դահլիճի լայնական ձևը, ինչպես և Միջագետքի ավանդույթների համապատասխան երկրի կողմերի նկատմամբ շեղությամբ տեղադրված լինելը նույնպես բնորոշ են Ասորեստանի տաճարներին: Նրա զխավոր ճակատի լուծման մեջ նկատվում է, թև ինչպես այդ կառույցներին այնքան բնորոշ հաստահեղույս ու մոնումենտալ պատը ետ է մղվում և տաճարի առաջին պլանի վրա հայտնվում է սրահն իր փայտյա թևիկ սյունաշարով: Այս սյունասրահն ունի երկվաք տեղավորված 12 սյուներ, որոնք ուղղահայաց սլացիկությամբ համապատասխան դինամիկ շարժում էին հաղորդում զխավոր ճակատի այդ հատվածին:

Սյունասրահի պատերի տակ, նրանց երկայնքով տեղադրված էին կավակերտ նստարաններ (լուսանկ. աղ. 18), որոնք նախատեսված էին մեծ թվով մարդկանց համար: Այդ սյունասրահը



Աղ. 39. Աղյուսի շարվածքի եմուշեեր

գոհաբերութիւններէ ժամանակ կարող էր օգտագործվել ոչ միայն պաշտամունքային նպատակներին, այլև աշխարհիկ հալաւարտութիւններին, յայնչ որ կառուցված էր հրապարակի վրա, ուր հավաքուած էին էրեբունիի ընկալիչները:

Տաճարի՝ դինամիկ շարժումով օժտուած այս հաստիածը հակադիր զուգորդութեան մէջ էր նրա հարավարևելեան հատվածի նկատմամբ, ուր կանգուն էր ասորեստանեան դիկուրատ հիշեցնող մոնումենտալ աշտաբակը՝ burgana-ն: Վերջինիս ներսում կանգուն է զանդվածային հզոր մույթը, որը շուրջանակի կառուցված միջանցքի աստիճաններով հաղորդակցվում էր վերնամասի հետ: Այդ միջանցքում պեղումներից հայտնաբերված գորշագուն տուֆի կոպտատաշ բարերը պատկանել են մույթի վերնամասին, որը դրսից աշտարակաձև էր և ունեցել է համապատասխան ատամնավոր ավանդական քիվ:

Խաղիի տաճարի burgana-ն այստեղ կանգնեցվել է հինարևելեան այն սովորութեան համաձայն, ըստ որի գլխավոր աստվածութեանը նվիրված ամեն մի տաճար պետք է ունենար աշտարակ (Միջագետքում դրա օրինակներն են՝ Մարդուի տաճարը Բաբելոնում, Շամաշինը՝ Սիպպարում, Աշուրինը՝ Կար-Տուկուլտի նիւնուրայում և այլն)<sup>25</sup>: Այդ ավանդույթը կոպտած է Սուշավոր Ասիայի հնագույն կրօնների այն պատկերացման հետ, որի համաձայն, աստվածները ցած են իջել լեռներից: Հենց այս պատճառով էլ Ասորեստանի՝ լեռներ իւրհրդանշող մերձտաճարային դիկուրտաները կից էին շինվում տաճարներին:

Այսպիսին էր նաև էրեբունիի տաճարի burgana-ն: Մակայն այն ուներ նաև այլ նշանակութուն (որի մասին խոսվել է վերևում), կարող էր ծառայել որպէս աշտարակ՝ ազդանշան տվող խորուկների համար:

Տաճարն այնպէս էր կանգնեցված բլրի դադաթին, որ վեր խոշանալով քաղտրի տարածքի վրա՝ իշխում էր նրանում ճարտարապետական ծափուների իր հզորութեամբ: Տաճարի տրտարին պատերը միաձուլվելով միջնաբերդի պարիսպներին, կազմել են ճարտարապետական մեկ ընդհանուր օրգանիզմ: Տաճարը կառուցված է միջնաբերդի բարձրադիր մասում, դա, հավանաբար, ընդհանուր կանոն էր Հին արևելքում, քանի որ, ինչպէս ասում է Աշուրբանակալը իր մի կառուցքի մասին՝ «Մեծ աստվածների սրբատեղիների սոցի-

ալ վախեցաւ և այդ հարթուի կառուցքը չբարձրացրի շատ վերս:

էրեբունիի տաճարի պատերի՝ այդ հաստիածում որմնանցքերի ուղիղ գոտավորութիւնը փոխարինվել է պատերի՝ զեպի ներս զնայող աստիճանաձև զարգացող սիմետրիկ լուծում ունեցող ձևերով, ինչը տաճարի արտաքին ճակատի ճարտարապետութեանը հաղորդեց անհատական արտահայտութիւն, իսկ ամբողջութեամբ վերցրած այս մոնումենտալ տաճարի ճարտարապետական ձևերը հատկանշվում են իրենց լակոնիկ ծափուների ռացիոնալ հաստիածութեամբ:

Տաճարի ներքնամասը, ինչպէս և սլոնասբաճի ձևավորվել են գունեղ որմնանկարներով, որոնք ունեցել են պաշտամունքային բնույթի թեմատիկա (գծագր. աղ. 49, 50): Այստեղ աչքի են ընկնում եզրագաղթերը, որոնց հորիզոնական շերտերը ծածկված են եղել երկրաչափական ու բուսական զարդանկարներով, ինչպէս նաև մարդկային կերպարներով: Եզրագաղթերից ներքև պատերը հարգարված են բազմաթիւ նախշանկարներով, մանր ու խոշոր վարդայակներով՝ շախմատաձև դասավորված կապտագուն ֆոնի վրա, որոնք, կարծում ենք, արտահայտում էին երկնապարհի իր լուսատուներով:

Բացի դրանից, սլոնասբաճում որմնանկարների մի ամբողջ շարք պատկերում էր ուրարտական պանթեոնի գլխավոր աստված հալդին՝ առյուծի վրա կանգնած<sup>26</sup>: Տաճարի որմնանկարները, իրենց թեմատիկ բովանդակութեան առումով ավելի հարուստ են նրանցից մի պատուհիկի վրա սրտակերպով է երկու մարդկային ֆիգուր: Դրանցից մեկը կանգնած է, իսկ նրա դիմացինը՝ նստած, դառապանք ձևերին, որից պահպանվել է միայն ձեռքը՝ դադաթանով ու մարմնի առջևի մասի եզրագլխով: Կանգնածը գլխին ունի խուլք, հետևապէս խաչավոր է, մշտն այդ զեպում պետք է որ աստված լինի: Կասկածից զուրս է, որ առաջինը Արգիշտին է, իսկ մյուսը՝ հալդին: Արգիշտինի ձեռք մեկնել է զեպի հալդին:

Սրտակերպի այդ հորիզոնածքը համանման է եզրագաղթի Սեթի I-ի հարթաբանդակին՝ Արիդուսի տաճարից, որտեղ փարպուներ նույնպէս կանգնած է ձեռքը պարզած՝ գալազանք ձևերին նուստած Պտա-Սուկար աստծու գիմաց:

Ինչպէս Մուսասիրի տաճարում, այստեղ ևս տաճարի պատերից կախված էին բրոնզե պատկերները: Կարծիք բլուրի պեղումների ընթացքում

գտնված Արզիշտի I-ի վահանների վրա թողած արձանագրություններում ասված է.

«Նալդի աստծուն, տիրակալին, էրեբունի բաղաբի համար այս վահանը Արզիշտին Մենուայի որդին պատրաստեց: Արզիշտին Մենուայի որդին թագավոր է, հոբո, թագավորը Բիայնիլի Լրկրի—տերը Տուշպա բաղաբի»:

Ճոխ ձևավորված վահանների համակենտրոն էրզիշտի վրա առյուծների ու ցուլերի պատկերներ են զրվագրված, ըստ որում նկատի է առնվել վահանի ուղղահայաց դիրքը, քանի որ նրանք կախվում էին տաճարի պատերին: Տաճարներին են նվիրաբերվել նաև սաղավարտներն ու կապարճները, որոնք թեև հայտնաբերվել է: Կարծիր բլուրում, սակայն՝ նույնպես էրեբունիական ծագում ունենալ

Քանի որ Նալդին միաժամանակ պատերազմների աստված էր, իսկ էրեբունին երկրի խոշորագույն ռազմական կենտրոնը, անհիմն չի կարող համարվել մեր այն եզրակացությունը, թե տաճարը ծառայել է էրեբունիի ռազմական կալազորի պաշտամունքային պահանջներին: Բանն այն է, որ միջնաբերդի պալատն ուներ իր տաճարը susi-ն: Հետևաբար Նալդիի տաճարը պետք է ծառայեր միջնաբերդի մնացած մասի բնակիչներին, այսինքն՝ ղորքին, որը տեղավորված էր ինչպես միջնաբերդում, այնպես էլ քաղաքում: Այստեղ, հավանաբար, կատարվում էին Նալդիին նվիրաբերվող զոհաբերություններ՝ ղորքը ռազմազաշտ ղուրս բերելուց առաջ:

Էրեբունիի Նալդի տաճարի ճարտարապետությունը բավականին որոշակիորեն առնչվում է հինարևելյան համանման կառույցներին, որոնք ունեն տարածական ներքին ձևերի զարգացում, հատկապես Միջագետքի տաճարներում: Իսկ ԼՅԻ փնտրենք ավելի կոնկրետ ակունքներ, կարելի է մտանշանշել Իշտարի տաճարը Աշշուրում, Ույլիի տաճարը, ինչպես նաև հյուսիս-սիրիական նշանավոր կառույցի տիպը՝ հանրահայտ Բիտ-Հիլանին՝ սյունազարդ մուտքով տաճարը: Ժամանակին այս վերջին տիպը բազմաթիվ ընդօրինակություններ է ունեցել, որի մասին հիշատակում է նաև Սարգոն II-ը իր նոր մարաբաղաբի՝ Գուլ-Շառուկինի հիմնադրման կառավարությունում<sup>27</sup>:

Սրանով, որպես մի կարևոր միջանկյալ օղակ,

առաջ է մղվում Հյուսիսային Սիրիայի կամ սիրիա-խեթական ճարտարապետական մշակույթի ղերը խեթա-ուրարտական կապերում:

Ինչպես susi-ն, Նալդիի տաճարը ևս արժանիքային տիրապետության օրոք ենթարկվեց հիմնական վերակառուցման և շարունակեց իր պատմական կյանքի նետազա՝ երկրորդ փուլը:

Այդ վերակառուցման ընթացքում տաճարի 12-սյունանոց քրահին կցվում է 13-սյունանոց մի տարածք, որն ամբողջությամբ կազմում է սյունազարդ մի մեծ դահլիճ՝ արժանիքային ճարտարապետության մեջ հայտնի ապագան անվամբ: Պերսոպոլիսի կամ Պասարգադքի ապոդա-նանների նմանությամբ էրեբունիի ապագան Ժառանգել է պալատական պաշտոնական բնդունելությունների ու հանդիսավոր արարողությունների համար: Տվյալ ապագան ստեղծել են տեղական վարպետները, նրա կառուցողական տեխնիկայի բոլոր մանրամասներում առկա են ուրարտական շինարարական ավանդները:

Կեֆ-կալեսի: Ուրարտական կենտրոնական մարզերի քաղաքներում կառուցված միջնաբերդերի շարքում իր ուրույն տեղն ունի Կեֆ-կալեսին, որը գտնվում է վանա լճի հյուսիսում տեղադրված Աղիչլեալ (Արծիկ) քաղաքից 6 կմ հեռավորության վրա, Սիփան սարի հարավարևմտյան մասում: Այստեղ, միջնաբերդի համալիրը կազմող բազմաթիվ աշխարհիկ ու պահեստային կառույցների շարքում ուշադրով են մի ինքնատիպ դահլիճի ֆունկցիոնալ ստանձնատեղությունները և նրա՝ մոնումենտալ ձևեր ունեցող ճարտարապետությունը (գծագր. աղ. 28):

Այստեղ գտնված զարդաքանդակներով ծածկված բարե խոշոր բեկորների վրա (յուսանկ. աղ. 28), զրոշմված սեպագրի արձանագրությունների բովանդակությունից պարզ է դառնում համայնի բուն նշանակությունը: Թեև արձանագրությունը բովանդակին Լեղծված է, սակայն նրա բովանդակությունից, այնուամենայնիվ, պարզվում է, որ Արզիշտիի որդի Ռուսա թագավորը Նալդի աստծուն մեծությամբ պաշտամունքի այս տեղը շինել է զոհաբերությունների համար, որոնց ընթացքում զինի է հեղվել:

Տվյալ տարածքում պեղումներով բացվել են մեծ չափերի երեք մասաններ, որոնցում պահպանված կարասները զինու Տեղման համար էին, այլ պատճառով էլ այս մասանները կառուցված էին հանդիսավոր արարողությունների համար

նախատեսված դահլիճին կից, ճիշտ այնպես, ինչպես այդ արված էր Էրկրունիի սպալատում:

Գահլիճի ներքնամասում առանձնապես շեշտված էր մտնում է: Երկրունիները, այնուհետև կանգնած էին բազալտե չոր մուլիեր, բանդակադարգ խորանարդաձև բեկորներ ու կավեկերտ նստարաններ՝ պատերի ողջ երրորդերով, որոնք հաստառու են, որ գահլիճը նախատեսված էր մեծ բազմություն, մասսայական բնույթի արարողությունների համար:

Մուլիերն երկու դուզանե շարք էին կազմում՝ չորսբանջուրում շորսական, մեկը մյուսից 7 մետր հեռավորության վրա՝ երկայնական և 5,75 մետր լայնական ուղղություններով: Իրենց հատակաղծում նրանք 3,00×3,60 մետր շափերի են, որոնց անկյունային մասերը դուրս են բերված քառանկյան ընդհանուր երրորդից և դրանով հարևան մաս են Կարմիր բլուրում հայտնաբերված բազալտե մուլիերին:

Մուլիերի դասավորությունը հաստատում է, որ գահլիճը բավականին մեծ էր և ուներ շուրջ 20,0×60,0 մետր շափեր: Ծածկը պահող այդ մուլիերը, որոնք երեք շաբբ քարի որմածիցի վեր շարված էին հում աղյուսից, ինչպես և պատերը, ծածկված էին գունձի որմանկարներով: Սակայն այդ հարդարանից ստացված տպավորությունները լրացվում էին 1,40×1,40×1,10 մետր շափերի բազալտե խորանարդաձև ծավալների ճառագայիկ հարթությունների վրա կատարված բավականին հարուստ շարժարանակներով: Քանի որ նրանց բեկորների թիվը գահլիճում վեցն է, և նկատի ունենալով նրանց ընկած տեղերի դիրքը, պետք է ենթադրել, որ նրանք ժամանակին դասավորված էին մուլիերի միջև: Այդ դեպքում նրանց բանդակված մակերևույթը հավասարապես կղիտվելին բոլոր կողմերից: Նրանց չորս միանման ճակատներում պատկերված են առյուծների վրա կանգնած աստվածներ, իրենց ճանկերում նստապատկերներ պահած արծիվներ, որոնք քանդակված են եռանկյանի կառույցի ֆունկ: Վրա: Արծիվների քառակուսի հաստատում են իրենց պաշտամունքի առկայությունը Ուրարտում և խորհրդանշում են, ինչպես և հին Բաբելոնում, թագավորական իշխանությունը: Այդ քանդակների վրա, աշտարակաձև կառույցի ներքին մասում տեսանելի են դժագրություններ, որոնք հնագետներ էմին Բիլլիքը և Բաբի Օղյունը համարում են նիզակի ծայրեր

կամ նոճիներ: Մենք կարծում ենք, որ դրանք պատկերում են կրակի լեզվակ՝ արտահայտված նիզակի ծայրի ձևով: Հիրավի, եթե անդրադառնանք, սրինակի վրա-նամուտ սթուղոյ շրջանակների կոթողը-ի որս պատկերված ասածու և աստվածուհու դարձերությունների տեսարաններին, այնուհետև կտեսնենք բոցի նույնատիպ պատկերը: Այդ գծագրությունը մոտ է նաև Աշշուբի դահլիճաններից մեկի ճակատին բանդակված պատկերը:

Մենք փորձեցինք տվյալ գահլիճի վերականգնված ընդհանուր ճարտարապետական տեսքը ներկայացնել ճեպանկարի ձևով, հենվելով հնագետներ էմին Բիլլիքի ու Բաբի Օղյունի կատարած՝ գահլիճի բավականին մանրամասն նկարագրությունների վրա<sup>28</sup>:



Գահլիճի ծածկը հարթ էր, ինչպես երևում է տեղում պահպանված առաստաղի ալյուված հեծաններից, իսկ լուսավորությունը նրանում վերինց էր՝ ծածկի մեջ պատրաստված երդիկանման բացվածքներից:

Այսպիսով, մեր առջև է ուրարտական առաջօր անհայտ այն կառույցների ձևերից մեկը, որտեղ կատարվում էին մասսայական դարձերությունները, համաձայն պահպանված սեպագրերի, ուղեկցվում էին հեղման գինով ու, պետք է ենթադրել, կատարվում էին մեծ հանդիսավորությամբ ու միաժամանակ գահլիճի տարբեր տեղերում:




Գուցե այդ տունը կառվել է ուրարտական սեպագիր արձանագրություններում հաճախ նշվող «Միրիխանի» կամ «Աղունիսինի» պաշտամունքային կառույցներից մեկի անունով:

Ուրարտական մոնումենտալ պաշտամունքային կառույցները նշանակալից դեր են խաղացել հայ դասական ճարտարապետության կազմավորման գործում: Վերջինիս սպունավորման պրոցեսին առնչվեց ուրարտական քառակուսի ու լայնական զարգացում ունեցող կառույցների ավանդույթների հետ ու կոնստրուկտիվ նոր մտահայտումներով ստեղծվեցին նոր դավանանքի պահանջներին համապատասխան կրոնական նոր շենքեր:

Կորողներ: Պաշտամունքային հուշարձանների շարքին են պատկանում նաև ուղղահայաց դիրքով կանգնեցված տախտակաձև ու կիսակլոր վերջավորությամբ բարև այն կոթողները, որոնք ուրարտացիք անվանում էին «պուլուսի»-ներ:



Р






0 40 80 120 160 см

0 40 80 см


U

q




Г


Աղ. 40. Փակոնների ձևեր




U





P



Q



R



Սրանց բարձրությունը երբեմն երեք մետրից ա-  
վելի է: Այս կոթողները կանգնեցվում էին կա՛մ  
առանձին, ինչպես, օրինակ, էջմիածնում, կա՛մ թե  
շարքով՝ իրար կողքի, ցածր խարսխապատերի  
վրա, թվով մինչև հինգը, ինչպիսիք կային Ալթին-  
թեփեում:

Անդրադառնալով Ալթին-թեփեի հինգ կոթող-  
ներին, կարող ենք նշել, որ նման խմբավորու-  
թյամբ այլ կոթողներ ստեղծում են իրենց տա-  
րածական յուրահատուկ բնկալումը և ստեղծում  
փոքր ձևերի մի յուրահատուկ համալիր (լուսանկ-  
ազ. 20):

Որպես կանոն կոթողներն իրենց վրա արձա-  
նագրություններ չեն կրում: Սակայն, առանձին  
դեպքերում նրանք կրում են ուղեբժներ աստված-  
ներին, որոնցում թագավորների համար աղերս-  
վում են՝ կյանք, երջանկություն, հաջողություն և  
այլն:

Թոփուխ-կալեում գտնված մի կնիք պատկե-  
րում է երեք նման կոթողներ և նրանց առջև կա-  
տարվող արարողության պահեր<sup>29</sup>,

Այսպիսով, այս կոթողները կամ «պուլտսինե-  
րը» կապված են ուրարտական կրոնի հետ այն-  
պես, ինչպես որ օբլիսկները Եգիպտոսում: Բա-  
ցի դրանից ուրարտական այդ կոթողները գրեթե  
հար և նման են եթովպական (Ակսումի) այն կո-  
թողներին, որոնք նույնպես կառուցված են տա-  
ճարների շրջապատում: Սրանք են քարե հարթ,  
ուղղահայաց սալեր են՝ նման կիսակլոր վերջա-  
վորությունը, իրար հետ կապված հորիզոնական  
բառակուսի սալով, որի վրա զոհաբերության տե-  
ղը նշված է օղակաձև ելունով, ճիշտ այնպես,  
ինչպես Ալթին-թեփեում:

Չոհարանների նման ձևերը, անկախ իրենց  
բացարձակ չափերի տարբերություններից, տա-  
րածված էին Հին արևելքում:

Բնորոշ է, որ երբ միջնադարյան Հայաստա-  
նում պետք էր պատկերել քրիստոնեության խոր-  
հորդանիշը՝ խաչն իր մոնումենտալ արտահայ-  
տությամբ, դրա համար քնտրվում էր ուրարտա-  
կան կոթողի ձևը: Հիրավի միջնադարյան Հայաս-  
տանի հայտնի խաչքարերն իրենց արտաքին ձևե-  
րով մետ են ուրարտական այդ կոթողներին:  
Ավելին, գտնվել են մի շարք ուրարտական կո-  
թողներ՝ սեպագիր արձանագրություններով, ո-  
րոնց վրա հետագայում քանդակված էին քրիս-  
տոնեական խաչեր: Եվ, ընդհակառակը, նույնմ-  
բերյանի շրջանից կան հայկական խաչքարեր, ո-  
րոնց զարդաքանդակները պարզորոշ կերպով ի-  
շխցնում են ուրարտական արվեստին պատկանող  
դրվագներ՝ սրբազան ծառեր՝ աստիճանաձև պատ-  
վանդանների վրա, կլոր զարդեր:

Այսպիսով, կարելի է հաստատել, որ կոթողի  
այս ձևը հավասարապես բավարարել է տարբեր  
դարաշրջանների պաշտամունքային կարիքներին,  
ինչպես նաև նրանց կերտող արվեստագետներին,  
սրունք այդ կոթողի հարթության վրա, որպես մի  
կիսակետում, ի՛ մի են բերել իրենց հորինվածք-  
ները: Հետևապես, իրավամբ, կարող ենք հաս-  
տատել, որ հայկական խաչքարերի ձևերի սկզբուն-  
քային լուծումներն իրենց ծագումով կապված են  
ուրարտական պուլտսինների հետ, թեև նրանց ձևե-  
րի համընդհանուր մեկնակետը, չափանաբար, մե-  
զալիթյան մշակույթի մենհիրներն են:

## ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԿ

### ԺԱՅՈՒԱՓՈՐ ՈՒ ՎԻՄԱՓՈՐ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ, ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐ

Ուրարտուն լինելով լեռնային երկիր, իր տարածքի տարրեր վայրերում ստեղծել է բազմաթիվ վիճափոր կառույցներ, որոնք կազմում են նրա շինարարական արվեստի զգալի մասը: Այդ կառույցները նույնիսկ ունեին իրենց աստվածը՝ Աիրախի անունով: Դրանց թվին են պատկանում ժայռափոր սանդուղքները, խորշերը, պաշտամունքային ու դամբարանային կարիքներին նվիրված արհեստական քարայրերը, թունելները և այլն:

Վիճափոր կառույցներում, ժայռերի կարծրության շնորհիվ, գրեթե նախնական տեսքով պահպանվել են վերերկրյա շինքերում վաղուց անհետացած կամարներ, թաղեր ու նույնիսկ գմբեթ հիշեցնող ծավալներ, իսկ որոշ դեպքերում նաև ճարտարապետական փոքր դրվագներ:

Վիճափոր կառույցներում ուրարտացիները հաղթահարելով ապուստ լեռը, մշակել են այն որպես երկրաչափական հստակ ձևերի ճարտարապետական հղորդրակներ:

Մոնումենտալ ճարտարապետական ձևերին մոտեցող վիճափոր կառույցների հիմնական մասը հանդիսացող դամբարաններն առնչվում են հին-արևելյան համապատասխան ավանդական սկզբունքներին: Ինչպես մյուս ժողովուրդները, ուրարտացիք են ունեին հանգրծվալ կյանքի մասին եղած հայտնի հասկացություններ, որոնց հատկատասխան, մարդը հետամահու շարունակում է գոյատևել, հետևապես անհրաժեշտ է մարմնի պատշաճ պահպանություն, իսկ դամբարանները դրա անհրաժեշտ առաջին նախապայմանի ճարտարապետական արտահայտությունն էին:

Եթե նկատել ունենանք, որ ուրարտական ժայ-

ռափոր դամբարանների կառուցման համար, ինչպես, օրինակ, Կայալիդերեն է, պահանջվում էր տարիների ծանր ու երկարատև աշխատանք, պարզ կդառնա, որ դրանք են Եգիպտոսի դամբարանների նման հիմնադրվում էին նախապես: Հավանաբար դրա հետևանքով է, որ մի շարք դամբարաններ մեր օրերն են հասել անավարտ վիճակում, ընդհատված, իրենց բուն նպատակին ծառայելուց առաջ:

Բայի դամբարանային ձևի թաղումներից, Ուրարտուում կատարվում էր նաև դիակիզում, որը կարող էր արտահայտել հասարակարգի սոցիալական, էթնիկական կամ ժամանակագրական տարբերությունները:

Ժայռային կառույցների ամենապարզ ձևերից են սանդուղքները, որոնք փորվում էին լեռնային թեք լանջերի ինչպես վերերկրյա մասերում, այնպես էլ ստորգետնյա ուղիներում՝ իջնելով լեռների խորություն մեջ:

Վերերկրյա սանդուղքների առավել ուշագրավ օրինակներ գտնվում են Տուշպայի, Վերին Անզաֆի, Բոստանկայայի միջնաբերդերում և այլուր: Նրանք այստեղ կապակցում են տարբեր մակարդակի վրա գտնվող վիճափոր կառույցները, երբևէ կառուցվելով մեծ թեթևություն ունեցող լանջերի վրա և նույնիսկ այնտեղ, ուր այդ ժայռերը կազմում են գրեթե ուղղահիգ պատ: Ելնելով տեղանքի նման բնույթից, շատ հաճախ լեռնային սանդուղքների յուրաքանչյուր աստիճանը հասնում է մեկ մետրի: Դա է, որ հնարավորություն է ստեղծում կապակցել լեռնային կառույցները:

Սակայն, ինչպես կարծում էր Հ. Օրբելին, էլնելով ստորձանների արտասովոր թեթևություններ-

րից, նրանք միջնաբերդերի պարիսպների համար ծառայում էին որպես հիմնապատեր: Աշխուս-մենակնիվ, սրը կարծիքը դժգոյս է բնդհանրաց-նել, քանի որ սանդուղքների դասավորութունը, սրբնակ, Վանի միջնաբերդի տարածքում, Տե-ռու է որն է կառուցել համար նախարարվեստ հա-տակագոյային հարկվածք ճանաչվելուց:

Առավել մեծ բարդությունների Տեռ էին կապ-ված ստորգետնյա սանդուղքների կառուցումները, որոնց հայտնի օրինակները գտնվում են Թոփ-բախ կալուսում, Միանդոսում, Կալե-Ազգարում:

Թոփբախ-կալուսում այդ աստիճանները, որոնց քանակը հասնում է 56-ի, մակերևույթ իջնում են 10 մետր խորությամբ, 2 մետր լայնություն ու-նեկող միջանցքով:

Սանդուղքն այստեղ տանում է ղեպի ստոր-գետնյա մի դահլիճ, որը հաստակում ունի բա-ռանկյուն խորացում, որպիսին գոյություն ունի նաև Վանա ժայռի մեծ քարայրում: Հ. Օրբելու կարծիքով, այն նախատեսված է պաշտամունքա-լին նպատակների համար: Սակայն կարելի է ընդունել նաև, որ տվյալ կառույցը դամբարան էր, այդ ղեպարում նախակում կատարված խորացումը պետք է որ սարկոֆագի համար նախատեսված լիներ:

Ուրմիա լճից հարավ-արևելք, Միանդոսի շրջակայքում գտնվող համանման ստորգետնյա սանդուղքները տեսանելի են վերերկրյա մասից 57 աստիճանի խորությամբ միայն, իսկ մնացած-ծր ծածկված է ավերված ժայռի բեկորներով:

Համանման է նաև Կալե-Հոդարի կառուցվածքը, որը, սակայն, նույնպես լրիվ չի բացված (ու-սանկ. աղ. 22 բ) Կատարված փուլզումների հե-տևանքով ծածկվել են ստորին աստիճանները, տեսանելի են միայն 29 ցած իջնող վերին աս-տիճանները:

Հավանաբար, բոլոր այս և նման տիպի կա-ռույցները պաշտամունքային բնույթի կամ, թերևս, դարբարանային հուշարձաններ էին:

Համանման օրինակները շատ են Ճգիպտոսում, որտեղ ղեպի ստորգետնյա դամբարանները իջ-նում էին նույնպես աստիճաններով և որոնցում նույնպես դահլիճներ ու խորացրած տեղեր կա-լին սարկոֆագների համար (Սեթի I-ի, Թոթան-համոնի դամբարանները Ֆիլում և Արրանիերի հովտում, Ամենենհեթ III-ինը՝ Խավարում, Ջո-սերինը՝ Սակարայում և ուրիշներ):

Այլ բնույթի են եղել, մասնավորապես, Միան-

դոսի ու Կալե-Ազգարի կառույցները, որոնք ղե-պի ստորգետնյա ջրերը տանող գաղտնի ուղի-ներ էին: Կառույցների այդպիսի նամակարգեր հայտնի են ղեռու վաղ իրենզի դարաշրջանից, օրինակ՝ Շենգավիթում, իսկ նետագայում՝ Ամ-բերդում:

Ժայռային մյուս պարզ կառույցներն են խոր-շերք, որոնց առավել մշակված ձևերը սովոր-յալ սնեցել են պաշտամունքային նշանակություն և կոչվում են «Աստվածների դռներ», ինչպիսիք են, օրինակ, Աշրուսի դուռը՝ Վանա և Ուրմիա լճերի միջև գտնվող Սալխանե (Աշտուակիրս) գյուղում, ՄՏերի դուռը (Թոփբախ-կալուսում), Բոստանկա-լայի գուռը և մյուսները: Բոստանկալայի խորշի առջև, ժայռի հարթեցված մակերեսի վրա պարզ տեսանելի են բրոնզե գոհարանի ոտքերի հեռ-քերը միայն, որով հաստատվում է այս կառույց-ների պաշտամունքային նշանակությունը:

Կարծում ենք, որ այն արձևատական խորշը, որը շինված էր ՄՏերի դռան մոտ, նույնպիսի կարիքների համար էր: Դա հաստատում է ՄՏերի դռան հարթության վրա պահպանված և ուրարտագիտության մեջ լայնորեն հայտնի իշ-պուլինի ընդգծվորի և նրա որդի Մենուայի բա-վական բնագրծակ սեպագրի արձանագրությունը, որը վկայում է օրինականացված կարգը՝ ուրար-տական պանթեոնի յուրաքանչյուր աստծուն մա-տուցվող զոհերի տեսակի ու քանակի մասին:

ՄՏերի դուռը եզերված էր աստիճանաձև շրը-շանակով, որի բարձրությունը 10 կանգուն էր կամ 5,18 մետր (լուսանկ. աղ. 22 ա):

Նման դռներից բացի, հայտնի են նաև խորշեր՝ իրենց սովորական ձևով: Մենք նկատի ունենք 1916 թ. Հ. Օրբելու կողմից Վանա ժայռի հյու-սիսային լանջին հայտնաբերված ու պեղված այն խորշերը, որոնց պատերին պահպանվել է Ար-զիշտիի որդու՝ Սարգուրի թագավորի բավական ընդարձակ արձանագրությունը, որ ուրարտական տարեգրության ամենանշանակալից կոթողն է:

Ժայռի խորության մեջ կերտված այդ երկու խորշերն իրենց կիսակլոր վերագլորությամբ ու-նենին խորանարդաձև հիմքերի վրա կանգնեցված կոթողներ, որոնցից պեղման պահին պահպա-նվել էր միայն մեկում: Խորշերի միջև, արտաքին ճակատային հարթության տակ և նրա լայնքով մեկ տաշված նստարանը միավորում էր դրանք, կազմելով միասնական հորինվածք:

Այս խորշերի շարքին իրենց ճակատային մա-

սում, մեկը՝ 2,52×8,19 մետր և մյուսը՝ 2,74×6,50 մետր, ինչպես կտեսնենք ստորև, հիմնված էին ուրարտական ճարտարապետական 5×8 համաչափությունների վրա: Խորշերը, հավանաբար, ունեին նաև պաշտամունքային նշանակություն, քանի որ Ուրարտուում ծիսական արարողությունները կատարվում էին նաև արձանագրությունների առջև:

Վիմափոր կառույցների առավել նշանակալից մասը գտնվում է Վան քաղաքի միջնաբերդի շրջակայքում<sup>2</sup> (գծագր. աղ. 3 ա, լուսանկ. աղ. 21 ա, բ): Քեն մասնագիտական գրականության մեջ դրանց ֆունկցիոնալ նշանակության մասին շատ է խոսվել, սակայն վերջնական եզրակացությունները մշտ էլ մնացել են վարկածների սահմաններում: Կարծում ենք, որ կառույցներն իրենց նշանակությամբ միատիպ չէին և ունեին ֆունկցիոնալ տարբեր բովանդակություն: Հավաստի պարզություն է մտցվում միայն այն դեպքում, երբ այդ մասին առկա է գրավոր աղբյուրը: Այդպիսի եզակի մի նմուշ է ժայռի հյուսիսային կողմում գտնվող այն քարայրը, որը կրում է Իշպուփի որդի Մենուա թագավորի արձանագրությունը, որում ասված է.

«Մենուան Իշպուփի որդին, այս տեղը շինեց Մենուան ասում է «Ով (զոհաբերվող) ցուլերին այնտեղից տանի, ով որևէ տեղ նրանց տանի, ով անատուններին այնտեղից հափշտակի, ով այս արձանագրությունը ջարդի, ով մյուսին ստիպի կատարել (գործերը) թող իսլողի, Քեն շեբա, Շիփիի աստվածները ոչնչացնեն նրան (այս) արևի տակ»:

Այս արձանագրությունից պարզվում է, որ siršim-ը այն կառույցն էր, որտեղ պահվում էին զոհաբերությունների համար մատուցվող սրբազան կենդանիները: Դատելով կառույցի ձևից, համոզվում ենք, որ այն լիովին համապատասխանում է արձանագրության մեջ նրան վերագրվող նշանակությանը:

Վիմափորը մի մեծ ներքին տարածություն է, որի շափերն են՝ լայնությունը 7,81×8,95 մ, երկարությունը 20,46 մ, բարձրությունը 2,53 մ: Բացի դրանից այդ վիմափորը ունի 8,48 մ բավականին լայն մուտք:

Մենուայի մյուս արձանագրությունը, նույնպես siršim-ի կառուցման մասին, թեև թերի է (պահպանվել է միայն սկզբնական մեկ բեկորը Վանի

միջնաբերդի միջին պարսպում), բայց հաստատում է, որ մայրաքաղաքի շրջակայքում նման կառույցները բավականաչափ տարածված էին:

Արձանագրությունը հաղորդում է.

«Մենուան Իշպուփի որդին այս տեղը շինեց Մենուան ասում է...»:


Եթե այստեղ siršim-ում պահվում էին զոհաբերությունների համար նախապատրաստվող սրբազան կենդանիներ, ապա պարզ է, որ տվյալ տարածքում ծիսակատարությունների համար պետք է լինել նաև համապատասխան համալիր: Այդ առումով ուշադրության է արժանի «Մեծ քարայր» կոչվող կառույցը: Նրա գլխավոր դահլիճին, որի շափերն են 6,17×9,34 մ, իսկ բարձրությունը՝ 5,99 մ է, կից են երեք սենյակ՝ հյուսիսից, արևելքից ու արևմուտքից: Հյուսիսային և արևմտյան սենյակները պատերին կից ունեն հարթակներ, հյուսիսային սենյակի հարթակին կարելի է բարձրանալ երեք աստիճանով:

Այս քարայրը գտնվում է Վանա ժայռի ցցվող տեղում: Նրա բարեկարգումը պահանջել է դրվավորին ու ծավալուն աշխատանք, քանի որ քարայրի առջև բացված է բավականին ընդարձակ հրապարակ, որի համար մշակված էր լեռան ճակատային հարթությունը՝ ավարտված լայն գոտու ձև ունեցող ծավալով:



Քարայրի պատի տակ, ճակատի ողջ երկարությամբ ձգվող քարակերտ նստարանը և այս հարթակից դեպի վեր տանող՝ 2 մետր լայնությամբ և 25 աստիճանոց սանդուղքը լրացնում ու պարփակում են այս ապառաժ լեռան տրապեզական տպավորությունը: Քարակերտ նստարանը հաստատում է, որ այստեղ հավաքվում էր համապատասխան բազմություն և ճենց այստեղ էլ, այս բարձրության տարածքում, կատարում էին ծիսակատարությունները, ճիշտ այնպես, ինչպես էրբեմնի իսլողի տաճարի շքամուտքում, զոհասեղանի շրջապատում, ուր նույնպես տեղադրվել են նստարանները:

Ճարտարապետական այս մոնումենտալ միջավայրից բացվում էր Տուշպա քաղաքի գեղատեսիլ տարածքը:


Այս վիմափորը իր հատակագծային հորինվածքով նմանվում է Միջագետքի պաշտամունքային վերերկրային այն շինքերին, որոնք իրենց կիսարունակական լակի շուրջն ունեն սենյակներ: Հատկապես մեծ նմանություն կարելի է գտնել վիմափորի և Աշշուրի Իշտարի տաճարի միջև:




u



p



q



r

Կարծում ենք, որ պաշտամունքային նպատակի համար էլ նաև մի այլ վիժափոր, որը գտնվում է Բայազետում<sup>3</sup>: Ա. Ա. Իվանովսկու կողմից ուսումնասիրված ու մանրամասնորեն նկարագրված այդ բարայրը իր ձևերով շատ է աարկերվում Վանի ապառքում գտնվող տիպերից: Այդ նկարագրությունների հիման վրա հավաստի կարելի է պատկերացնել կառույցի ներքնամասի նորինվածքը: Վիժափորը երկհարկանի է և այդ առումով էլ եղակի է ուրարտական նման կառույցների մեջ:

Առաջին հարկի կենտրոնական դահլիճը մուտքի դիմացի պատի մեջ ունի կիսակլոր հատակագծով խորշ՝ հասած դլանի ձևով: Վերջինս ուրարտական ճարտարապետության հաղվագիկ օրինակներից է:

Կենտրոնական սենյակից աջ գտնվում է փոքր չափերի մի այլ սենյակ, իսկ ձախ կողմում տեղավորված է երկրորդ հարկը տանող քարակտի սանդղաքը: Դահլիճը թաղակալ է, ինչպես շատ այլ բարայրերում:

Սակայն, այդ կառույցի ուղադրավ հանգամանքը նրա ճակատային հարթության մշակման մեջ է, որտեղ բացի դրան բացվածքից, նրա երկու կողմերում պատկերված են բնական մեծությամբ մանրդակային երկու ֆիգուր: Մարկիանցից մեկը ձեռքին բռնած ունի այծ, որը ուրարտական զոհաբերությունների ավանդական կենդանին էր և հաճախ է պատկերվում հատկապես որմնանկարներում:

Դրան բացվածքի մյուս կողմում գտնվում է մարդու մի այլ հարթաքանդակ՝ զավազանը ձևերին, որն առաջինի նման պատկերված է քայլելիս: Այսպիսով, տվյալ քանդակը արտահայտում է թափորի շարժումը դեպի ծիսակատարության վայրը: Սա առաջին դեպքը չի ուրարտական արվեստում, երբ ծիսակատարությունը պատկերված է շարժման ընթացքում: Սխալված չենք լինի, եթե համարենք, որ տվյալ քանդակի թևատիկ բովանդակությունը պաշտամունքային լինելով՝ բնորոշում է նաև ուղ կառույցի ֆունկցիոնալ նշանակությունը:

Պաշտամունքային է եղել նաև Իրանի Մակու բաղաբից 7 կմ հեռավորության վրա, Սենգեր գյուղի մոտ գտնվող բարայրը: Սա նույնպես բաղկացած է երեք բամբից՝ զահլիճից ու երկու փոքր

սենյակներից: Դահլիճն իր երկայնական առանցքի վրա ունի քառանկյուն հատակագծով որմնախորշ:

Քարայրն ուսումնասիրել են Վ. Մինորսկին և է. Չիրիկովը, այն համարելով կրակի տաճար կամ ուրարտական կառույց<sup>4</sup>:

Այսպիսով, Սենգերի հուշարձանը, համաձայն նրա հետազոտողների, պաշտամունքային կառույց էր, այն էլ կապված կրակի պաշտամունքի հետ: Փամանակին նշյցիքը այն զուգահեռները, որոնք առկա են Սենգերի ու էրբերունի արևմտյան շրջանի կրակի փոքր տաճարի միջև: Մինորսկու այն տեսակետը, բայց որի Սենգերի հուշարձանը Բայազետի վիժափորի նախատիպն է, պայմանավորված է երկու կոթողների ուրարտական ճարտարապետության արգասիք լինելու հանգամանքով:

Անդրադանույով մյուս վիժափոր կոթողներին, տեսնում ենք, որ նրանցում առավել ցայտուն է արտահայտված դամբարանային կառույցներին բնորոշ նրանց ֆունկցիոնալ իմաստը: Դրա առավել ցայտուն օրինակը Վանա ժայռի ապտոսովիտան խորրթյան մեջ կերտած, այսպես կոչված, Փոքր խորխորյան վիժափորն է: Եթե այդ կառույցը համեմատելու լինենք հետագա դարերում ստեղծված արևմտյան Իրանի նաքշ-ի-Ռուստամի հայտնի դամբարանի հատակագծի հետ՝ ընդհանրությունը կդառնա ակնառու: Երկու դեպքում էլ դրանք լայնական դահլիճներ են, որոնք ձգված են վիժափոր կառույցների ճակատային հարթություններին զուգահեռ: Ներքնամասերում, ճակատային պատի դիմաց, այդ պատի խորություն մեջ երկու դեպքում էլ փոխված են իրար կողքի երեք մեծ և մի ավելի փոքր խորշեր:

Այս զուգահեռներն այնքան ակնհայտ են, որ գրեթե կասկած չեն առաջացնում, որ Փոքր խորխորյան վիժափորը նույնպես դամբարան էր և, ամենայն հավանականությամբ, նախատիպն էր Նաքշ-ի-Ռուստամի դամբարանի, ստեղծված լինելով նրանից շուրջ երեք դար առաջ:

Դամբարան է նաև Վանա լեռան վերին հարթակի տակ գտնվող փոքր չափերի բարայրը, որը Փոքր խորխորյան դամբարանից աարկերվում է իր խորշերի դասավորությամբ, որոնք այստեղ տեղավորված են ոչ թե մի շարքով, այլ կենտրոնական փոքր սենյակի շուրջը:

Վան բաղաբի բերդի մոտ գտնվող մի այլ վիժափոր կառույց իր տարածական նորինվածքով

եղակի գործ է ուրարտական սովյալ բնակավայրի համար: Թեև մասնագիտական գրականության մեջ ընդունված է այն համարել դամբարանային կառույց, սակայն թվում է, որ այդ բնորոշումը մնում է վարկածի սահմաններում<sup>5</sup>:

Այս հուշարձանի գլխավոր, առաջին սենյակի մակերևույթը 29 քմ է՝ 2,25 մ բարձրությամբ, ունի ներսի կողմից փակվող դուռ և նրա առջև երկու աստիճան: Բացի դրանից, արտաքին պատին կից սենյակի անկյունային մասերն ունեն անցքեր՝ լույսի և թարմ օդի համար: Մուտքից ձախ, ժայռի խորություն մեջ է գտնվում թաքստոցների շարքը՝ բաղկացած երեք փոքր սենյակներից: Նրանցից առաջինը (1,42×1,76 մ է, բարձրությունը՝ 0,95 մետր) այնքան ցածր է, որ շարժվել կարելի է միայն սողալով: Կից սենյակը ավելի բարձր է ու գմբեթաձև ծածկով, իսկ հաստակը մի ամրոզական սալ քարից է, որն իրենով փակում է նրանից ներքև գտնվող գաղտնարանը: Սրան կից է նույնանման, թվով չորրորդ ու վերջին գաղտնարանը:

Վանի վիմափոր այս կառույցում հայտնաբերված գմբեթի ճարտարապետական ձևը հիմք է տալիս կարծույթ, որ սովյալ կոնստրուկտիվ համակարգը նախապես գոյություն է ունեցել վերերկրյա շենքերում, որտեղից էլ այն կարող էր անցնել վիմափոր կառույցներին:

Հայտնի է, օրինակ, Ասորեստանի հինավուրց այն քանդակը, որի վրա պատկերված է գմբեթավոր շենք՝ նորսաբաղում: Այն գտնվում էր Ուրարտուի սահմաններից ոչ շատ հեռու Բացլի դրանից, գմբեթը որպես այգպիսին, գոյություն է ունեցել դրանից էլ վաղ, Ուր քաղաքում, Աբարզի, Շուրաթ և այլ դամբարաններում, որտեղից գմբեթները աղյուսաշեն էին և, նույնիսկ, արսիդներով: Պա հիմք է տալիս Լ. Վուլբին հանգելու այն մտքին, որ Ուրի բնակիչներին դեռևս մ.թ.ա. III հազարամյակում արդեն հայտնի էին ճարտարապետական բոլոր ձևերը<sup>6</sup>:

Ուլագրավ կառույց է նաև Կալե-Հոդարում գտնվող վիմափորը, որը տեղադրված էր Ուրմիա լճից 30 կմ հյուսիս-արևմուտք, նրա լեռնային մասում: Այն կերտված է ուղղաձիգ ժայռի շուրջ, 10 մ բարձրության վրա, դեպի ուր տանում են խիստ բայթայված աստիճանների հետքերը: Հիմնական դահլիճը, որը 5,30×10,70 մ չափերի է, քառանկյուն հատակագծով և 2,40 մ բարձրությամբ, իր պատերի տակ ունի ցածր նստարան-

ներ՝ բազմության համար (գծագր. աղ. 35 ր):  
Դահլիճի ձախ մասում բացված մուտքը տանում է դեպի փոքր չափի սենյակը, իր ավելի ցածր առաստաղով (տեսակն. աղ. 22): Մյուս սենյակը գաղտնարան է, որը մուտքի դիմացի պատի տակ է և խորանում է ապառածի մեջ մոտ 2,4 մ չափով:

Այս վիմափորը դրսից՝ իր ճակատային մասում, դահլիճի լայնության չափով որոշակի ընդգծված էր բնդարձակ մի խորշով ու կենտրոնական իր մուտքով:

Դրսից բավականին ընդգծված է նաև վերախրամի վիմափոր կառույցը՝ իր 11 աստիճան ունեցող սանդուղքով: Այգպիսին էր արտաքնապես նաև Կալե-Հոդարի անավարա միացած մյուս վիմափորը կամ Կալե Բամայի Աղան, որոնք չէին թողարկվում դրսից: Հետագայում այս սկզբունքն ավելի ակնառու է դառնում աբեմենյան դարաշրջանի Բրանում, խիստ պշնաղարդված տեսք ունեցող նրա նաբշ-ի-Ռուսահիմի վիմափոր դամբարանների ճակատային հորինվածքներում:

Կայալիդեբեի դամբարանը գտնվում է Վանա լճից հյուսիս-արևմուտք, վարդո քաղաքի մոտ, Արածանի գետի աջ ափին վեր խոյացող բլրի հարավային թեք սարավանդի վրա: Այստեղ բլրի գագաթին փռված են ուրարտական միջնաբերդի մնացորդները: Ինչպես հաստատում են բլրի հնագիտական ուսումնասիրությունները, այս դամբարանը միակը չէ: Մյուսները, գտնվելով բլրի թեքության տարբեր բարձրությունների վրա, հիմնականում կիսավեր են, փորված ցածր տեսակարար կշիռ ունեցող հրաբխային կազմի խորություն: մեջ:

Քննարկվող դամբարանը այսօր հայտնի է իր բացված վեց սենյակներով, որոնք, ի դեպ, կազմում են նրա հատակագծային հորինվածքի սիմետրիկ դասավորված սենյակների ձախակողմյան հատվածը միայն (գծագր. աղ. 35 ա): Նույն կերպ դասավորված աջակողմյան սենյակների շնորհիվ, որոնցից երևում են միայն մուտքերը, Կայալիդեբեի վիմափորը ուրարտական դամբարանների շարքում ամենաընդարձակն է:

Կայալիդեբեի վիմափորը ևս ընդգծված է արտաքուստ մուտքի ավանդական աստիճանաձև կտրվածք ունեցող շրջանակով, նման ՄՏերի դռան ձևավորմանը:

Ի տարբերություն մյուս դամբարանների, այստեղ մուտքը շարված էր մեծածավալ քարերով, որով ապահովվում էր դամբարանների անձեռն-

մբխելիությունը: Միջնարկերի այս մասում կառուցված էր ևս մի պատ: Բացի այս բոլորից, մեծածավալ քարերով էին ծածկված նաև դամբարանի ներքնամասի: Բոլոր դռները և, այսպիսով, դամբարանն այգհանված էր կողոպտովելուց:

Սակայն, շնայած այդ միջոցառումներին, դամբարանը դեռ հին ժամանակներում արդեն կողոպտվել էր, ինչպես հինարևելյան դամբարանների մեծ մասը: Կողոպտիչները շրջանցել են պատենշներն ու, վերևից մուտք բացելով, մտել ներս:

Ելևազոր մուտքը դրսից ունի 4 աստիճան, իսկ նրանց աջակողմյան մասում՝ դրենաժային համակարգ, խոշորդոտիլու համար անձրևային ջրերի մուտքը ներքնամաս:

Վիճափոր դամբարանի սենյակների հատակներում բացվել են լավականին մեծ և խոր հորեր, որոնց բերանները ծածկված էին սալ բարեհով: Հավանաբար այս հորերը ծառայել են որպես թաքստարաններ:

Հավանաբար ծիսական նշանակություն ունեին 6-րդ սենյակի հատակում փորված թվով 33 կլոր փոսիկները, ինչպիսիք կան նաև Քեյշեբախիում հայտնաբերված առանձին քարի վրա:

Անդրադառնալով դամբարանի ճարտարապետությանը, նրանում տեսնում ենք վերերկրյա կառույցներում վաղուց անհետացած ձևեր: Այդ վերաբերում է դռների կամարածև վերջավորություններին, ինչպես նաև 2-րդ սենյակի առաստաղային մասում հայտնվող գմբեթի ձևին:

Արին-քեփիի դամբարանները: Այստեղ հայտնաբերված թվով երեք դամբարանների կառուցված են բլրի հարավարևելյան լանջի վրա՞: Դրանք րմածքային կառույցներ են, շարված մեծածավալ որակալտ քարից և որպես այգպիսիք ուրարտական հարտարտություն մեջ առայսօր հայտնաբերված եգպի կոթողներից են (լուսանկ. աղ. 24 ա, ր, 25): Մրանցում հարուստ են շինարարական նախաստեղծ կոնստրուկտիվ ձևերը, որոնցից են նեծաները, թաղերը, կամարներն և նրանց տարրերակները, ինչպես նաև մուտքերը կասետային սալերով փակելու եղանակը (գծագր. աղ. 37 ա):

Այս դամբարանները, մինչև նրանց պատահաար հայտնաբերումը 1938 թ., պարունակել են նազհիտական արվեստի իրեր՝ ոսկուց, արծաթից, փղոսկրից, թանկարժեք քարերից ու փայտից, ինչպես նաև բարձրարվեստ կահույք, ուտնց մեծ մասը, սակայն, այդ ժամանակ էլ աննետացել է:

Առաջին դամբարանը ամենափոքրն է և ունի պարզ հատակազածային լուծում: Այն մի ուղղանկյունի է՝ կողերի տարրեր շափերով, որոնցից մեկը 2,75 մ է, դիմացինը՝ 2,50 մ, երկարությունը՝ 4,0 մ, բարձրությունը՝ 2 մ: Դամբարանը ծածկված է 5 խոշոր սալաքարերով: Պատերի հաստությունը 1, 25 մ է, որոնք դրսից շարված են կոպտատաշ, իսկ ներսից սրբատաշ բեկորներով: Նրանցում բացված են երկու շարք խորշեր:

Դրոմսուը, եթև կարելի է այդպես անվանել 0,90 մ լայնությամբ, 2,50 մ երկարությամբ և 2,25 մ բարձրությամբ մուտք-միջուցքը, դրսից փակված էր մեծ սալաքարով, իսկ միջանցքի մասում՝ կասետային ձևով, 0,25×0,50 մ անցքով իր միջին մասում:

Դամբարանի առաստաղի սալաքարերը ծածկված էին խճաքարի և կավի 1,50 մ ընդհանուր հաստությամբ շերտով, իսկ կառույցի երրագծով բարձրացող քարե պատերը պարփակում էին աշտարակածև ներքնամասը, որը կազմում էր նրա երկրորդ հարկը: Ինչպես կարծում է Քահսին Օղզուլը, այդ հարկը ծառայել է պաշտամունքային ծիսակատարություններին՝ նվիրված հանգուցյալի հիշատակին:


Այս կարևոր հայտնաբերությունը տվյալ կառույցը նմանեցնում է Աղցի դամբարանի հետ, որը նույնպես իր վրա ունի աշտարակածև ծավալ, ինչպես և խորշեր դամբարանի մասում: Կառույցների նման հորինվածքը՝ ստորգետնյա դամբարանը և վերգետնյա աղոթասրահը հետագայում դասական հայ ճարտարապետության մեջ լայնորեն տարածվում և ընդունում է արտաքին ձևերի վերասյաց արտահայտություններ:

Երկրորդ դամբարանը ծավալով ավելի մեծ է և ունի երեք, իրար հավասար ներքնամաս, լուրաքանչյուրը 2,0×3,05 մ շափերի և նախորդ դամբարանի համեմատությամբ ավելի բարձր (2,75 մ) առաստաղով: Պատերը շարված են երկու շարք սրբատաշ քարերով, որոնք սենյակների երկայնական առանցքով կրում են կեղծ կամարների կաղոտղ 3-րդ և 4-րդ շարքերը:


Պատերի մեջ բացված են կիսակլոր վերջավորություն ունեցող խորշեր:

Դամբարանը դրսից, կենտրոնական սենյակի առանցքով ունի 0,80×1,27 մ շափերի մուտք, որը փակված է երկու սալաքարով, որոնցից ներսինը կասետային ձևով է:

Վերջին եղանակով մուտքը փակելու ձևը հայտ-





U



F

0 20 40 60 мм



Աղ. 13. Ջրասար խողովակների ձևեր

նի էր դեռևս նգիպտոսում: Քեոփսի բորգի մի-  
ջանցքը այդպես էր փակված:

Ալթին-Քեփեի այս դամբարանը ևս նախորդի  
նման իր ծածկի մասում ունեցել է կալվի ու  
խճաքարի իրար հաջորդող 1,04 մ ընդհանուր  
հաստությունը: շերտ, որը կազմել է 2-րդ հարկի  
սենյակի հատակը: Սակայն սենյակի պատերը  
ոչ թե բարդ էին, ինչպես առաջին դամբարա-  
նում, այլ հում աղյուսից: Նման հորինվածքը,  
որտեղ երկրորդ հարկը նույնպես նախատեսված  
է ծխակատարությունների համար, հավանա-  
բար, ավանդական էր նմանը գոյություն ունե-  
րակ փյունիկյան Գեբլում (Բիրոս) դեռ II հա-  
շարամյակի սկզբում այնտեղ կառուցված դամ-  
բարաններում:

Ալթին-Քեփեի այս երկու դամբարանները, ո-  
րոնք գտնվում են իրարից ընդամենը 2 մետր  
հեռավորության վրա, ինչպես եղբայրացնում է  
Ք. Օզգյուլը, կազմել են մեկ միասնություն:

Երրորդ դամբարանը գտնվում է առաջինից 16  
մետր հեռավորության վրա, իսկ նրանց միջև ըն-  
կած է կառուցապատման համար անհարմար ու  
մեծ կարծրություն ունեցող սպառած լեռան  
հատված: Այս դամբարանը նախորդներից ավել-  
ի մեծ է և կազմված է 3 ներքնամասից:

Առաջին սենյակը, որն ընդամենը 8 բառա-  
կուսի մետր մակերես ունի, դամբարանի նա-  
խամուտքն է: Դրան կից է ավելի մեծ՝ 2,5×4,0 մ  
շափերի հիմնական սենյակը, որտեղ պատերին  
կից անդամորված են իրար նկատմամբ ուղիղ  
անկյան տակ գտնվող երկու սարկոֆագ: Ք. Օզգ-  
յուլը հանգում է այն եզրակայություն, որ նրանց  
դասավորության մեջ կողմնորոշումը որպես այդ-  
պիսին նկատի չէր առնվում: Այս սենյակի պա-  
տերի մեջ, ինչպես և մյուսներում, արված են  
խորշեր:

Երրորդ սենյակը, որն ամենափոքրն է (2,00×  
2,50 մ), նախորդի հետ կապված է դռան նեղ  
բացվածքի միջոցով (0,75 մ), իսկ դրսի դուռը  
փակվում էր մյուս դամբարանների նման: Այս  
կառույցը իր կառուցողական եղանակով նման է  
նախորդներին: Այստեղ ևս ծածկը 3 մ երկա-  
րություն ունեցող հարթ սալաբարեիրից է կազ-  
մված: Նրանց վրա բարձրանում էր երկրորդ  
հարկը, որի պատերի միայն պահպանված մա-  
սերի բարձրությունը 4 մետր է: Հետևապես, այս  
դամբարանը ևս մյուսների նման իր արտաքին  
ծավալներով աշտարակած կառույց էր:

Սակայն մյուսների համեմատությամբ այն շատ  
ավելի հարուստ էր հնագիտական նյութերով՝  
սեղաններ, աթոռներ, գահերի մասեր, խեցեղեն  
ու բրոնզյա իրեր, թանկարժեք քարեր, արծաթյա  
ու ոսկյա, փղոսկրյա առարկաներ: Այս դամբա-  
րաններում մի շարք իրեր ունեն սեպագիր ար-  
ձանագրություններ, որոնցով հաստատվում է կա-  
ռույցների ժամանակաշրջանը: Այսպես, առաջին  
դամբարանի բրոնզե մի սափոր իր վրա կրում է  
Կիլիկիայի թագավոր Ուրիկիի անունը, որը թա-  
գավորել է մ.թ.ա. 740—732 թթ.:

Երրորդ դամբարանի բրոնզե իրերի վրա հայա-  
նարևրված արձանագրության մեջ կարդում ենք  
Ռուսայի որդի՝ Արդիշաիի անունը, որով էլ ո-  
րոշվում է տվյալ կառույցի ժամանակաշրջանը՝  
մ.թ.ա. 714—685 թթ.:

Այն հանգամանքը, որ 3-րդ դամբարանի եր-  
կու սարկոֆագից մեկում ամփոփված էր տղա-  
մարդու, իսկ մյուսում կնոջ աճյուն, որն, ի դեպ,  
հարուստ զգեստով ու թանկարժեք քարերով էր  
զարդարված, հաստատում է, որ կառույցը բարձ-  
րաստիճան անձանց ընտանեկան դամբարան էր:

Այսօր հայտնաբերված ուրարտական դամբա-  
րանները գտնվում են կա՛մ միջնաբերդի բլուր-  
ների թեք սարալանջերին և կա՛մ մոտակա լեռ-  
ների վիմափոր կառույցներում, կա՛մ նրանց հա-  
մար նախատեսված առանձին տարածքներում,  
ինչպես այդ կարելի է տեսնել նգիպտոսում,  
աքեմենյան Իրանում և այլուր:

Թալամնայի դամբարանային ձևը վերապահված էր  
ավելի վերնախավին: Ազգաբնակչության մյուս  
խավերի համար ընդունված էր դիակիլումը ու  
մոխրի պահպանությունը համապատասխան սա-  
փորներում: Մի շարք այդպիսի միատույզ սա-  
փորներ, ընդ որում մի քանիսը մոխրով լի ու  
իրենց նախնական վիճակում, պահպանվել են  
երրորդ դամբարանի հատակի 10—20 սանտի-  
մետր խորություն մեջ:

Եթե ուրարտական վիմափոր դամբարաններն  
ընկղմված են սպառած լեռների խորություն մեջ,  
սպա վերերկրյա դամբարանները զարգանում էին  
սղղահիզ ուղղությամբ իրենց երկու հարկով, որ-  
տեղ առաջին հարկն ինքը դամբարանն է՝ փոքր  
շափերի պահեստային սենյակով, իսկ երկրորդը  
ծիսական արարողությունների համար էր նախա-  
տեսված:

Ալթին-Քեփեի դամբարանների կառուցողական  
արվեստում առանձնակի շեշտված է բարի ու-  
ցիոնալ օգտագործումը:

## ԳԼՈՒԽ ԼԻՆԳՆԻՐՈՒԳ

### ԾԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

#### Ոռոգման ջրամբցանքի ու ջրատար համակարգեր

Հայտնի է ոռոգման զեբը Հին արևելքում<sup>1</sup>։ Ուրարտուի հողագործության, այգեգործության ու անասնապահության զարգացման հնարավորությունները սերտորեն կապված էին արհեստական ոռոգման հետ, որի շնորհիվ գյուղատրնտեսությունը երկրում դարձավ առաջատար բնադավաններից մեկը։

Հարկ է հիշատակել, որ ջրանցքաշինությունը Ուրարտուում գտնվում էր կենտրոնական իշխանության ձեռքում. այդ տեսակետից հատկապես աչքի ընկնում է Մենուա թագավորի գործունեությունը, որի թողած արձանագրություններից 14-ը վերաբերում են ջրանցքաշինությանը։

Ջրանցքները, որոնք ուրարտերեն կոչվում են յվի, երկրում կազմում էին լայն ցանց, կապված դրանք սնող մեծ գետերը, որոնց ոչ բոլորի անուններն են մեզ հասել<sup>2</sup>։ Հայտնի են միայն Կահնուալ-տինին, որը նույնացվում է Արածանիի հետ, Ալաինին, Բենդի-մախին, Իլդարունին, որը Հրապանն է։ Բացի գետերից, ջրանցքները նաև ջրային ասյն պաշարներն էին, որոնք գոյանում էին լեռնային զարյուրներից, լճակներից, ինչպես նաև լեռների ծալքերում մթնոլորտային տեղումներից կուտակված ջրերից։

Ուրարտական ջրանցքները ճարտարագիտական առումով կառույցների բավական զարգացած հումակարգեր էին և համարյա միշտ ջրաբաշխական ցանցը ուներ նաև տեղական նշանակության նյութավորումներ։

Ջրանցքներն անցնում էին Լրկարանական դովար հաղթահարելի տեղանքներով, ուղղաձիգ ժայռերի ստորոտներով, թունելներով, Լրրեմն էլ

ստորգետնյա արհեստական ուղիներով, դաշտավայրերով կամ ջրանցույցների վրայով։ Հաճախ ջրանցքների համակարգում ջրերի հոսքը կայուն պահելու նպատակով կառուցվում էին կարգավորիչ ջրամբարտակներ։

Մյուս կողմից, ջրանցքների ջրերն առավելագույն արդյունավետությամբ օգտագործելու նպատակով նրանց վրա հիմնվում էին ջրաղացների շարքեր։

Ուրարտական ջրանցքներից պահպանվել են բաղմամբիվ, նույնիսկ առայսօր գործող կառույցներ, որոնցից առավել կարևորներն են՝ Մենուալի կամ Շամիրամի ջրանցքը, որը շարունակում է ոռոգման ու խմելու ջուր մատակարարել Վան լաղաբին, Մարանդի ջրանցքը՝ պատմական Ուլխու քաղաքի մոտ, Խոտանալուի ջրանցքը, Մենուալի սեպագիր արձանագրության մեջ հիշատակված Մենիգաինի քաղաքի ջրանցքը, որը, հավանաբար, կառուցված էր Արածանիի ձախափին, Հոկտեմբերյանի ջրաբաշխական ցանցը, Ումեշինին, որը սկիզբ է առնում Հրապանից և առայսօր գործում է։ Գործող է նաև Նրևան քաղաքի մյուս ուրարտական ջրանցքը Գալմայում և վերջապես Ալավերդիքենդի ջրանցքը երկրի արևելյան մարզում և այլն։

Ջրաբաշխական համալիրների մեջ մտնող առավել նշանակալից ջրամբարներից է Քեշիշ-գյուլ կոչվածը։

Ուրարտական ջրանցքները իրենց կառուցողներից պահանջում էին ֆիզիկական ուժերի գերլարում, հատկապես այն հատվածներում, որ պետք էր հաղթահարել լեռնային ապառառները։

Իրենց աշխատատարուիցամբ դրանք կարող են գազվել Հին արեւելքի նամայատաստիան կատույցները շարքը:

Մենուայի ջրանցքը: Այս ջրանցքը, որը նայուեի է նաև Շամիրամի ջրանցք անունով, իր ամբողջ երկարուիցամբ ունի թվով 14 շինարարական սեպագիր արձանագրութլուն:

«Խալդի աստծու մեծութլամբ, Մենուան Իշուլուիեիի որդին, այս ջրանցքը կառուցեց Մենուայի ջրանցք է անունը (ներս)»:

Հավանաբար ջրանցքը հիմնվել է մ.թ.ա. IX դարի վերջում, VIII դարի սկզբում: Այս ջրանցքի ջրերը սկիւր են անում Հայոց ձորի հարստութլում գտնվող Արտոս լեռնաշղթայի Սարը-բուլաղ սարի շրջակայքում, Խոշար գետից 5 կմ հարավ, Վերին Մծնկերտ գյուղի բազմաթիվ աղբյուրներից: Այդ ակունքներում գտնվում է 20 մ<sup>2</sup> մակերես ունեցող ջրամբարտակ, որի ջրերը գույանում են հատակից ժայթքող աղբյուրներից: Վ. Բելլիի հաշվարկներով՝ ջրամբարտակի բոլոր աղբյուրները միասին մեկ վայրկյանում տալիս են շուրջ 1500 լիտր ջուր:

Մենուայի ջրանցքի երկարութլունը 70 կմ է, սկիզբ աննելով Վերին Մշնկերտից, այն անցնում է գյուղի մոտով և հասնում մինչև Խոշար գետը, որը հողթահարվում է փայտաշեն ջրանցույցի օգնութլամբ: Վերջինս բավական մեծ կառույց է, մոտ 15 մ երկարութլամբ, 3 մ լայնութլամբ և 3 մ բարձրութլամբ: Ջրանցույցից դուրս, ավելի բնագրծակ տարածքներում, ջրանցքի լայնութլունը հասնում է մոտ 4,5 մետրի: Հոսանքի արագութլունը կազմում է 3 մ վայրկյանում:

Ջրատարի կառուցման առաջին դժվարին հատվածները Արտոսեղի լեռնաշին տարածքներն էին, որտեղ նրա շինարարութլան համար պահանջվել էր կատարել մի շարք բարդ ճարտարագիտական կառույցներ: Ջրատարը շրջանցելով անդնդախոր կիրճեր ու բլուրներ, մեծ մոտով բնդնույց մոտենում էր ուղղածիդ ապարտանների կամ բլուրների, անցնում նրանց ստորտաններով, ուտար նրա հակադիր կողմերը ամրացվում էին ճգոր հենապատերով: Սրանց որմածքը իրականացվում էր բաղալտի մեծածավալ բեկորներով, իսկ պատերի բարձրութլունը երբևն հասնում էր շուրջ 20 մետրի, որն իր արտաքին տեսքով նրմանվում էր Հին արեւելքին բնորոշ ճարտարապետական մոնումենտալ կառույցներիհ:

Մենուայի ջրանցքով առատորեն հոսող ջրերը

Վերին Մշնկերտի սամամներում ստեղծել էին բարեկապատ պալմաններ նաև նրանց կրկնակի օդատարման, այն է՝ ջրաղացներ աշխատեցնելու համար: Ինչպես ցույց է տալիս ավանդական «Ջր-աղ» անվանումը, որը բրդերեն նշանակում է «քառասուն ջրաղաց», այստեղ եղել են բառասուն ջրաղացներ, որոնցից մեր դարի սուաշին բառորդում գործել են շուրջ կեսը: Ի դեպ, Վարաղ լեռան մոտ գտնված ջրաղացի բարերից մեկը, որը ներկայումս պահվում է Վրաստանի պատմութլան թանգարանում, Գ. Սերիթելու կարծիքով, ինչ ուբարտական դարաշրջանի է:


Ջրաղացների գոյութլունը Արարտոսում վաղ շրջանի պարզունակ աղորիքների հետ միածամանակ հաստատում են տեսնութլան անցումը տեխնիկական ավելի կատարյալ ձևերին:

Մենուայի հրաշակերտ ջրանցքը, ինչպես այն անվանել էր կինը, ոտողելի ջրերի իր հիմնական մասը մատակարարում է ժամանակակից Վան քաղաքի Շամիրամ թողամասի այգիներին: Հետաքրքիր են Մովսես Խորենացու այն հողորդումները, որոնցում ասված է, թե «գետի մի մասը քաղաքի մեջ բաշխելով (Շամիրամը) անց է կացնում ամեն տեսակ բուսատանների ու ծաղկանոցների ոռոգման համար, իսկ մյուս մասը (անց է կացնում) ծովակի աջ և ձախ ափերով՝ քաղաքի և բոլոր շրջակայքի ոռոգման համար»:

Այդպիսով, Տուշպան ժամանակին եղել է կանաչապատված ու բարեկարգ քաղաք՝ դարերով անընդմեջ ու անխափան գործող Մենուա ջրանցքի շնորհիվ: Ինչպես կարծում է Բ. Բ. Պիտտրովսկին, ջրանցքի պահպանութլունը առաջնում էր Խորոտմ գյուղի մոտ գտնվող միջին շափերի մի բլրը, որն իշխում էր Վանա լճի հարավարևելյան ամբողջ հարթավայրի վրա, որտեղից էլ անցնում է այդ ջրանցքը:

Ոռոգման ջրանցքներին մոտ կառուցված բերդերը, ապահովում էին տվյալ համակարգերի անխափան գործունեութլունը՝ պարերարար վերանորոգումների միջոցով վերացնելու վթարների: Այդ նույն ջրանցքի պահպանութլան համար նրման նշանակութլուն ունեցող բերդերի շարքին է դասվում նաև Հակաբերդը, որը կանգնած էր Թուղաղ լեռան բարձունքին՝ Վանից 25 կմ հարավ:

Սակայն, ինչքան էլ մեծ ու կատարյալ էր Մենուայի ջրանցքը, նրանով չի սամանափակվել Տուշպայի շրջանի տարածքների ոռոգման խնդիրը



Աղ. 41. Ամբողջների պատերի ձևեր

ների լուծումը: Այն ունեցել է շատ ավելի ընդարձակ և զարգացած ջրաշինական բաղմամբային կառույցների մեծ համալիր:

Մենուպի ջրանցիի համակարգին միացած արհեստական Քևշիշ-գյուղ կառված լինք, որը գտնվում է Տուշպոլից 40 կմ արևելք, Տոնի գյուղի շրջակայքում, կառուցվել է հետագայում մուսա Ա-ի կողմից և նրա անունով էլ կոչվել: Այդ լճը, սնվելով շրջակա լեռներից հետո ձյան ու անձրևաջրերի հաշվին, տվյալ համակարգի ուսպող ջրերի կարգավորիչ կառույցն է: Ինչպես նախորդում է մուսաի սեպագիր արձանագրությանը, լճից դուրս բերված ջրանցքները ուղղված էին դեպի: Բուսալիխիին (Թոփրախ-կալե):

Ուլխալի ջրանցիը գտնվում էր պատմական համանուն քաղաքում, Ուրմիա լճից 40 կմ հյուսիս-արևելք, ժամանակակից Մարանդ քաղաքի սահմաններում: Այդ կառույցի մասին մանրամասն անդեղություններ է հաղորդում Սարգոն Բ-ն: Վերևում նշված արձանագրության մեջ, որը ուրարտագիտության մեջ հայտնի էր «Լուվրյան սպիտակ» անունով, միակ աղբյուրն է այդ կառույցի մասին, մասնավոր, որ տեղում հնագիտական աշխատանքներ չեն կատարվել և որն է հետո չի երևում:

Ինչպես հաղորդում է Սարգոն Բ-ն, Ուլխուն գտնվում էր բլրի ստորոտում: Ջրանցքը, հավանաբար, անցնում էր քաղաքի միջով և անց հատվածում, ուր մուսա Ա-ն կառուցում էր իր պալատը, ջրանցքն այնքան լայն էր, որ Սարգոն Բ-ն անց համեմատում է նիբատի հետ:

Ջրանցքի համար անհրաժեշտ լայնության ստեղծումն այստեղ հնարավոր էր, քանի որ Մարանդի այլ տարածքն առավելապես հարթավայրային է: Սարգոն Բ-ի հաղորդումից պարզվում է, որ հիմնական ջրանցքից հյուսիսորում էին «բազմաթիվ առուներ», որոնցով ստեղծված էր լայն «յանց» մեծ տարածքների ուսպման համար: Տեղանքի պայմանները հնարավորություն էին տալիս ստեղծել այս ջրանցքի ավելի պարզ հարադասարարական կառույցներ, քան Մենուպիի Տուշպոլում: Ջրանցքն ուներ գլխամասի կառույց, ինչպես նաև ստորգետնյա խողովակներ, որոնք հիմնովին ավերվել էին ասորեստանցիների կողմից: Գլխամասը Սարգոն Բ-ն փակում է, որի հետևանքով ջրերը ծածկելով դաշտերը, առաջացնում են ճահճներ, իսկ ստորգետնյա

խողովակաշարի մասին նա տալիս է. «Են յույց սվեցի արևին»՝ այսինքն՝ ավերելի:

Ումեշինի ջրանցիը անցնում է Կարմիր բլուրի հյուսիսային սահմաններով: Այն կառուցվել է մուսա Բ թագավորը, որը թողել է բավական ընդարձակ սեպագիր արձանագրություն: Սեպագիրը հայտնաբերված է Զվարթնոցի ստանարի սեպագրանիի ընթացքում: Այդ արձանագրության մեջ նշվում է, որ ջրանցքը սկիզբ է առնում Կղարունի գետից, որը Հրազդանն է, և ուսպում է Կուարլիխի հովտի (այժմ՝ Էջմիածնի շրջան)՝ հողերը, որոնք առաջ ամայի էին: մուսա Բ-ն հատկապես նշում է պաղատու և, մասնավորապես, խաղողի այգիների մասին, որ նա այստեղ ունեցրել է, որոնք հետագա դարերում մեծ տարածում ու համբավ ստացան:

Ումեշինի ջրանցքի ընդհանուր երկարությունը, ժամանակակից վերականգնումներով, կազմում է մոտ 2,7 կմ: Կարմիր բլուրի տարածքում այն անցնում է Հրազդանի սոբաֆնյա ժուլի ուղղաձիգ պատի տակով: Այս հատվածում է գտնվում ջրանցքի ճարտարագիտական կարևոր կառույցը՝ նրա թունելը (լուսանկ. աղ. 23 ա, բ): Վերջինիս երկարությունը 220 մ է, որը փորված է անդեղիտաբազալտե սպառն լեռան խորություն մեջ: Ուրարտացիների օրոք ջրանցքի կարողությունը մեկ վայրկյանում  $1\frac{1}{2}$  մ<sup>3</sup> էր, որով ուսպվում էին Կուարլիխի շուրջ 1000 հեկտար հողատարածությունները:

Արարատյան դաշտավայրի տվյալ հատվածի այն հողերը, որոնք գտնվում են Ումեշինի ջրանցքի նիշից բարձր ու հետևապես չէին կարող ուսպվել նրա ջրերով, ուսպվում էին մի այլ՝ Կալմայի ստորգետնյա ջրանցքով:

Այդ ջրանցքի ժամանակակից անվանումը պարսկերեն «ղոմիկ» բառից է, որը նշանակում է ստորերկրյա սնուցիչ ելք, իբրև, ջրանցքի երկարությունը մոտ 7 կմ է, որն անցնում է երևանի տարածքի մակերևույթից 6 մ ցած և որի 51 և 450 մ հատվածներն անցնում են թունելների միջով, որոնք իսկապես ավելի շատ անցքի են նման, քան թունելի:

Կարծում ենք, որ ուրարտական այս «ղոմիկ» տիպի ստորգետնյա ջրանցքները հայտնի բյահրիկների նախատիպերն էին, որոնք ժամանակին լայնորեն տարածվելիս Իրանում, Իրաքում, Աֆղանստանում և այլուր<sup>11</sup>:

Արգիշտիխիլիի ջրանցքի մնացորդները գտ-

ներվում են բաղաբի շրջակայքում: Զրանցքը ոտագում էր լայնատարած հողամասեր և Ուրարտուի ոռոգման համակարգի կարևոր կառույցներից էր Արարատյան դաշտավայրում: Այդ կառույցի մասին հաղորդում է Արգիշտի Ա-ն՝ Սարգարապատի արձանագրության և իր հայտնի խորխորյան սարեգրությունում: Նա Սարգարապատի արձանագրության մեջ ասում է, որ Արաքսից 4 ջրանցք է անցկացրել, իսկ խորխորյան տարեգրություններում հատկապես նշում է, որ ջրանցքը կառուցված է Ազա երկրի համար:

Մայր ջրանցքի գլխամասն իր սկիզբն առնելով Արաքս գետից՝ Ղարաղալայի մոտ, ձգվում է հյուսիս-արևելք, իր երկու ճյուղերով Արգիշտի-խինիլին ամփոփելով իր մեջ հյուսիսից ու հարավից:

Համաձայն 2. Մարտիրոսյանի հետազոտությունների<sup>12</sup>, Ազա երկրի տվյալ տարածքի բոլոր ջրանցքների երկարությունը, իրենց առուններով հանդերձ, կազմում էր շուրջ 40—50 կմ, ոռոգման ցանցի մի մեծ ու զարգացած համալիր: Եթե նկատի ունենանք, որ ժամանակին ջրանցքի ունն ուներ 10 մ լայնություն և 1,5 մ խորություն, ապա այն իրոք մի գետի պետք է նմանվեր, ինչպես Սարգսը բնութագրում է Ուլխուի ջրանցքը:

Այլ ջրանցքի ողջ համակարգը ոռոգում էր Արգիշտիխինիլին պատկանող մի ընդարձակ գյուղատնտեսական շրջան, որի մակերեսը կարող էր հասնել մոտ 10000 հեկտարի:

Առ այսօր, թեև մասնակի, գործող մի այլ ջրանցք անցնում է Ուրարտուի արևելյան մարզի գյուղական բնակավայրերի կենտրոն հանդիսացող Ալավերդիբեկ դաղաբի շրջակայքում, որը գրտներվում է Բաստամից 20 կմ արևելք: Զրանցքը ոռոգում է գյուղական մեծ ու, բոտ երևույթին, բավական բարեկարգված տարածքներ: Այստեղ պահպանված գյուղատնտեսական մշակելի հողամասերի առանձին տնտեսությունների համար նախատեսված հատվածների սահմանադատություններ, իրենց տեսակի մեջ պահպանված եզակի օրինակ են: Հարկ է նշել, որ սահմանադատումը կատարված է երկրաչափական այնպիսի ճշտությամբ, որը յուրահատուկ էր Ուրարտուի հաշվարկային գործին:

Ի մի բերելով ոռոգման գործի հետ կապված շինարարական բոլոր կարգի աշխատանքների մասին նկած տվյալները՝ Ուրարտուի լեռնային

տեղանքի բարդ պայմաններում, գալիս ենք այն համոզման, որ այդ աշխատանքները կատարվել են անընդմեջ իրագործվող էմպիրիկ փորձի հիման վրա, որը ի վերջո ձևակերպվեց որպես կառուցողական արվեստի անխախտ օրենք: Խոսքը վերաբերում է տեսականորեն իմաստավորված ընդհանրացումներին, որպիսի մտքին է մեզ հանգեցրած եզրագծային սահմանափակ Ա. փարավունի մոտ Արգիշտիի Իրտիսեն քանակագործի ինքնակենսագրական մի տարեգրություն, որի մեջ էա, թվելով իր գիտելիքները ստեղծագործական տարբեր բնագավառներում, ի թիվս այլոց, ասում է՝ «Նս գետին ոռոգման բանաձևերը»<sup>13</sup>, Իր դամբարանում թողած ինքնակենսագրության մեջ բարձրաստիճան նեխեբուն հաղորդում է, որ թագավորի հրամանով ջրանցքներ է բացել Եգիպտոսի հյուսիսային ու հարավային մասերում՝ նախապես մշակված նախագծերով<sup>14</sup>: Ինչպիսիք էլ լինեին այդ բանաձևերը, պետք է առնչվեին տվյալ առարկայի տեսական կողմին և, հավանաբար, տարածված էին նաև ուրարտական շինարարների մոտ:

Ջրամատակարարման համակարգը: Ուրարտական բաղաբներում խմելու ջրի մատակարարման գործը բարվոք վիճակում էր: Այդ են հաստատում տարբեր տեղերում, հնագիտական հետազոտությունների ու պեղումների ընթացքում ջրատար խողովակների (գծագր. աղ. 13), ինչպես նաև տարբեր շափերի ջրամբարների մնացորդների հայտնաբերումները: Դրանից է Ձի-վիստանի ջրամբարտակը, որը կերտված է միջնաբերդի ժայռի խորովայն մեջ՝ հարավարևելյան կողմից: Ջուրն այստեղ կուտակվում էր փորված ջրատար առվակի միջոցով: Նման ջրամբարտակ կառուցված էր Բուստանկաջյի միջնաբերդի արևելյան, նույնպես ժայռոտ հատվածում, Անգալուրում, Ավաշին-կախում, ինչպես նաև մի մեծ ամբարտակ Արգիշտիխինիլի արևմտյան միջնաբերդի թեր սարայանքի վրա: Այս ջրամբարտակը առանձնահատուկ կառույց էր: Խմելու ջուրը Լրբում բերվում էր տասնյակ կիլոմետր հեռավորության վրա գտնվող լեռնային սառնորակ աղբյուրներից: Զրատար նման համակարգերն ունեին ժամանակին համապատասխան ուղի տեխնիկական բարձր մակարդակ: Բացի փքե-նահոս ջրատար համակարգերից, Լրբեմն օգտվում էին նաև ղետերից վերցրած ջրերից: Տեսային պայմաններում ջուրը նախապես մարվում էր

թորման եղանակով՝ բարակովի ավազանի միջոցով, որպիսին, օրինակ, գտնվել է Էրեբունիի տարածքում:

Էրեբունիի միջնաբերդում է հայտնաբերվում ուրարտական ջրատար համակարգի լավադուչն օրինակը, որը պատկանում է VIII դ. մ.թ.ա.: Զրամատակարարումն այստեղ իրացվում էր ինքնահոս ջրատարով, հետևապես ջուրը միջնաբերդ էր հասնում նրա նիշից շատ ավելի բարձր դիրքում գտնվող աղբյուրներից: Փանի որ նման աղբյուրները, Լենկով տեղանշի աշխարհագրական դիրքից, կարող էին գտնվել հեռավոր լեռների բարձունքներին, ուրեմն ջրատարի երկարությունը պետք է լիներ շուրջ 10 կմ: Զուրը քաղար էր բերվում տուֆե խողովակներով, ստորգետնյա ճանապարհներով: Այդ տարածքում չկային ինչպես Տուշարումում կամ Ուլխոյում, ճարտարադիտական բարդ կառուցվածք՝ թունելներ, ջրանցքներ, ջրամբարտակներ և այլն:

Միջնաբերդի պաշարման պահերին ջրատարի անխափան գործունեությունը նպատակով այն կառուցված էր ստորգետնյա համակարգի ձևով: Այդ պատճառով էլ միջնաբերդում չկար ջրի պաշարների կուտակման համար սովորական ամբարտակ, որպիսիք կային այլ միջնաբերդերում:

Էրեբունիի ջրմուղացանցում օգտագործված բարե խողովակները պատրաստված են մեծ վարպետությամբ: Նրանց միջին երկարությունը մեկ մետր էր: Արտաքննապես նրանք զլանածե են՝ 0,40 մ դրսի և 0,10 մ ներսի տրամագծով: Խողովակի մի ծայրից դուրս է գալիս նրա միջուկը 0,20 մետր շափով, մյուս ծայրը ունի օրան համապատասխան խորություն՝ կողքի խողովակի ելուտային մասն ազդեցելու համար: Ընդ որում, նրանց միացման տեղում ստեղծված կարերը հուսալիորեն սվաղվում էին:

Խողովակաշարի առանձին հատվածներում կային այնպիսիները, որոնք իրենց վերևի մասում ունեին լայն բացվածք՝ ջրատարի ստուգման ու մաքրման համար:

Պետք է ենթադրել, որ դարերի ընթացքում ջրատարն իրեն լրիվ արգարացրել է, քանի որ այն շարունակել է գոյատևել հազարամյակներ շարունակ: Նման ձևի խողովակներով ջրմուղի մի այլ համակարգ, նույնպես տուֆաշեն, հնագիտական պեղումներով հայտնաբերված է Երեվանի կենտրոնական մասում:

Սակայն, ուրարտական քաղաքներում ջրատար ցանցը, բացի քան խողովակներից, ունիցել է նաև կավի խողովակներ: Նման խողովակներ կան Կայադիղերի միջնաբերդում, որոնց երկարությունը 52,5 մ է, այսինքն՝ մեկ կանգուն, իսկ տրամագիծը՝ դրսից 17,5 սմ, ներսից՝ 12 սմ: Այս խողովակներն էլ իրենց նեղ մասով մտնում էին մյուսի լայն բացվածքի մեջ, ճիշտ այնպես, ինչպես իրար էին միանում ուրարտական բարե խողովակները: Նման կավի խողովակների բեկորներ՝ 6 սմ տրամագծով, գտնվել են նաև Թեյշերախիի տարածքում:

Էծղանա-բուլաղի աղբյուրը մի ժայռափոր կառուցվածք է, որը գտնվում է Ուրմիա լճից հարավ-արևմուտք, ժամանակակից Ուշնավիեից 18 կմ հյուսիս (Իրան): Աղբյուրը մի խորջ է՝ 1,5×2,5 չափերի կիսակող վերջավորությամբ է 0,8 մ խորությունով: Այստեղ հայտնաբերված են շորս՝ նույն բովանդակությամբ սեպագիր արձանագրություններ, որոնց մեջ ասվում է.

«Նալդի աստծու հզորությամբ, Մենուան, Իշպուխի որդին, թագավոր է հզոր, թագավոր է մեծ, թագավոր է Բիախիլի երկրի, տերը Տուշպա քաղաքի: Մենուան այս աղբյուրը շինեց»:

Ինչպես կարծում է հուշարձանը ուսումնասիրող և արձանագրությունը վերծանող Մ. Սալվինին, աղբյուրի ջուրը խորշից դուրս էր գալիս համապատասխան խողովակով և կուտակվում էր այստեղ կառուցված, իսկ այժմ անհետացած ամբարտակում<sup>16</sup>:

Մ. Սալվինին գտնում է, որ Էծղահա-բուլաղի աղբյուրը կամ ջրճորը, պատրաստված էր ուրարտական այն զորամասերի ու քարավանների սպասարկման համար, որոնք անցնում էին այդ հին ճանապարհով՝ Ուրմիայի հարթավայրի և Ուշնավիեի միջև: Եթե ճիշտ է նրա այս վարկածը, այդ դեպքում Էծղահա-բուլաղը հիշեցնում է եգիպտական Ալիվադի այն ջրճորները, որոնք նույնպես կառուցված էին համանման երթուղիների վրա: Հայտնի է, որ Ռամզես I-ը սահմանամերձ Զարու բերդից, անապատի միջով, դեպի Ասիա դիացող ռազմական ճանապարհի ողջ երկայնքով կառուցել էր խմելու ջրի ջրճորներ, ինչպես նաև այդ տարածքի ողջ երկայնքով բերդեր՝ նրանց պաշտպանության նպատակով:

## ԿԼՈՒՆ ՎԵՑԵՐՈՒՄ

### ՇՆՆԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ

Ապրելու նարմարավետ տարածական միջավայրի ստեղծման համար շինարարական շինարարները շինանյութերի նախնական տեսակներից ունենին պարզ ու ավանդական քարը, կավը, փայտը ու երկաթը, որոնք կրում էին կառույցների կոնստրուկտիվ ու ճարտարապետական ձևերի կազմավորման ֆունկցիան:

Այդ շինանյութերի օգտագործմամբ ուրարտական շինարարական տեխնիկան և ընդհանրապես ճարտարապետությունը բնորոշող քաղաքաշինական սկզբունքները՝ մոնումենտալ կառույցները, ջրատար համակարգերը, նրբադեղ կատարված որմնանկարները, ճարտարապետական նամաչափությունները և այլն, շինարարական մշակույթի դարգացման բարձր մակարդակ ստեղծեցին երկրում: Հինավուրց վարպետների շինարարական սկզբունքները, որոնք ստեղծվել են փորձի անընդմեջ էվոլյուցիան ու դարգացման հիման վրա, ի վերջո պրակտիկալում դարձան այնպիսի հաստատուն կանոններ, որոնց վրա խորսխվում էին Ուրարտուի տարբեր դարաշրջանների շինարարական ավանդույթները:

Իրա նա մեկուկ դրեթև անհայտ են մնում շինարարական գործի կազմակերպման ձևերը երկրում, բացի նրանից, որ այդ րնագավատում լայնորեն օգտագործվում էր ստրուկների աշխատանքը:

Շինարարական բարձրորակ աշխատանքների կատարման համար սն շրմեշա էին համապատասխան մակարդակի վարպետներ: Այդպիսիներն էին նկարիչները, որոնք պալատների ու տաճարների պատերը ծածկում էին գունեղ սրմնանկարներով: Բարձր վարպետություն էր պա-


հանջվում նաև մոնումենտալ քանդակով դրազվող վարպետներից: Խնչպես նաև բարգործ վարպետներից, հաղաչափերից, ջրմուղների ու բլուրների գագաթներին և նրանց թևք լանջերի վրա միջնաբերդի մոնումենտալ շենքերի կառուցողներից: Հավանաբար, վարպետների այդ մասը եղել են վարձու արհեստավորներ: Ի դեպ, շինարարական տեխնիկայի զարգացումը երկրում դաշխորեն պայմանավորված էր մետաղագործության դարգացմամբ, որը երկրում ուներ իր նշանակալից ավանդույթները՝ սկսած Մեծամորի արտադրական շրջանից: Մետաղագործության նշանակությունը հատկապես մեծ էր աշխատանքային գործիքների ու զենքերի պատրաստման գործում:

Չնայած ուրարտական կառույցներից շատ քչերն են պահպանվել ու մեղ հասել քիչ թե շատ ամբողջական վիճակով, և հնագիտությունն էլ իր հերթին դեռ չի ասել իր վերջնական խոսքը նրանց մասին, այնուհանդերձ, թեկուզ մասնակիորեն, պարզվել են կիրառվող շինարարական նյութերի ու կոնստրուկցիաների տեսակները, ինչպես նաև դժային շափերի ու ճարտարապետական համաչափությունների առանձնահատկությունները:

### Ա. Ծիճարարական Այուրեր

Հնագիտական տվյալները հաստատում են Ուրարտուի պատմական տարածքի հարստությունը՝ շինարարական նյութերով:

Ուրարտական կառույցների հիմնական շինանյութերը բացի քարից ու փայտից, նաև կավն էր, մետաղն ու եղևգնը: Քարը որպես արժեքավոր



Աղ. 45. Ջարդանկարներ. Հրեթունի

շինանյութ նույնիսկ արտահանվում էր Հյուսիս-սայլին Միջագետք:

Քարը: Ուրարտուի պատմական տարածքի երկրաբանական հիմքը բնորոշվում է Տրաբխային ծագում ունեցող բարի բազալայան տեսակներով, որոնցից անցյալում օգտագործվել են տարբեր տուֆատեսակներն ու բազալտը: Ուրարտական կառույցների որմամբում բազալտը և սուֆր օգտագործվում էին միաժամանակ, խառը ձևով: Սակայն սուֆր հիմնականում օգտագործվում էր հիմքերի, ինչպես նաև պատերի ներքին շարքերի, գետնախարիսիների ու աստիճանների համար: Տուֆը օգտագործվում էր նաև խարխուլների, բազալտրների, ջրատար խողովակների ու նման զրվագների պատրաստման համար:

Բազալտը օգտագործվում էր սալաքարերի, խարխուլների, կոթողային հուշարձանների, դամբարանների և մոնումենտալ քանդակների, սեպագիր արձանագրությունների, տնային ամենատարբեր իրերի պատրաստման համար (յուսանկ. աղ. 32):

Կավը ամենատարածված շինանյութն էր, որից պատրաստված հում աղյուսներից շարվում էին բնակելի տները, աշխարհիկ ու պաշտամունքային մոնումենտալ շինքերի պատերի վերին շարքերը, նույն կառույցների հատակները: Կավով ծեփում էին պատերը և ծածկերը: Կավը խառնրվում էր մանրացրած դարձանի հետ, որը նրան հաղորդում էր անհրաժեշտ ամրություն:

Աղյուսները պատրաստվում էին փայտյա հատուկ կաղապարների մեջ և օգտագործվում ինչպես հում, այնպես էլ թրծած վիճակում:

Կավի շաղախը օգտագործվում էր որպես կապակցող նյութ, որը որմածքը դարձնում էր մեկ ընդհանուր կավե մոնոլիտ դանդաղ:

Աղյուսի շափերը տարբեր ուղարձաններում

Հուշարձանի անվանումը	Ուղղանկյուն աղյուսի շափերը սմ-ով	Քառակուսի աղյուսի շափերը սմ-ով
1. Էրեբու Նիում	32,3 47,4 12,5	47,4 47,4 12,5
2. Թեյշեբախնիում	35,8 51,8 14,9	51,8 51,8 14,9
3. Արագածում	35,8 51,8 14,9	51,8 51,8 14,9
4. Թոփրախ-կայանում	35,0 53,0 14,0	53,0 53,0 14,0
5. Կեֆ-կալսիում	35,0 53,0 14,0	53,0 53,0 14,0
6. Այթին-թեփում	35,0 52,0 15,0	--
7. Աղջնավոր-թեփում		60,0 60,0 10,0

Որպես կանոն, աղյուսները երկու տիպի էին՝ բառակուսի և ուղղանկյուն, ընդ որում, նրանց երկարությունը հավասար էր մեկ կանգունի:

Ուրարտում, ուր ավանդական շինանյութը բարն էր, կավի օգտագործումը մոնումենտալ կառույցներում Միջագետքից ներմուծված շինարարական սկզբունք էր: Միջագետքում կավը նաև պաշտամունքային հատուկ նյութ էր, քանի որ, ըստ բարելոնյան բանագրության, մարդը ստեղծվել էր կավից և այդ տեղի է ունեցել այն ժամանակ, երբ երկրի գերագույն աստված Մարդուկը իմաստուն էաի խորհրդով կավը հունցել էր արյան հետ:

Շինարարական փայտ: Ուրարտական կառույցներում օգտագործվում էին սոճին, կաղնին, հաճարենին ու կաղամախին:

Պեղումները պարզեցին, որ փայտը որպես շինանյութ արտակարգ դիմացկունություն ունի, թեև այդպիսիք չէին փայտի, որպես շինանյութի մասին նախկինում գոյություն ունեցող կարծիքները: Այդ հաստատվեց էրեբունիի պեղումների ընթացքում, երբ այնտեղ խաղիի տաճարի պեղումների ժամանակ հայտնաբերվեցին թվով 8 հեծաններ, որոնք ավելի քան 27 դար անըդմեջ կրում էին տաճարի հոծ պատերի մի հատվածը՝ մեկ մետրանոց թռիչք ունեցող առվակի վրա (յուսանկ. աղ. 29 բ): Հաստատվեց նաև, որ այդ հեծաններն իրենց արդի տեխնիկական վիճակով օգտագործելի և դիմացկունության տեսակետից էլ միանգամայն հուսալի շինանյութ են: Փայտի բոլոր զրվագները, ինչպես ընդգծում են հետազոտողները, պահպանվել են առանց քայքայվելու: Հետազոտությունները պարզել են, թե որքան ամուր ու երկարակյաց կարող է լինել փայտը որպես շինանյութ, եթե այն համապատասխանաբար սպահովված է կենսաբանական քայքայումներից:

Այն մասին, թե ինչ արժեք ունի ուրարտական շինարարական փայտը Ատորեստանի համար, կարելի է դատել մ.թ.ա. 714 թ. Սարգոն II-ի հայտնի արշավանքների նկարագրություններից, երբ Ատորեստան էին տարվում ուրարտական Ուլխու քաղաքի գերված պալատի նույնիսկ ծածկի հեծանները: Սակայն, ոչ միայն Ատորեստանում էր արժեքավորված ուրարտական շինանյութը: Ինչպես երևում է եգիպտական Ամենոփի հրկորքը փարավոնի արձանագրությունից (1485 թ. մ.թ.ա.), Հայաստանից եգիպտոս էր տեղափոխ-

վում նստով ամբողջուն ունեցող այն փայտը, որից նրանք պատրաստում էին իրենց մարտակարգերը: Հավանական է, որ այդ տեսակը աճում էր Արարատ լեռան շրջակայքում:

## Բ. Շինարարական գործիքներ

Նկատի ունենալով ուրարտական շինարարական տեխնիկայի կատարողական արվեստի բարձր որակը, կասկածից զուրս է, որ նրանց կառուցողներն այն ժամանակ ունեցել են շինարարական հայտնի բոլոր գործիքները: Թեև նրանց հետքերը պարզ տեսանելի են պահպանված կոնստրուկցիաների (մշակված քարի, փայտի, մետաղի) վրա, սակայն առայժմ հայտնաբերված օրինակները լրիվ չեն:

Կացին է հայտնաբերվել Թոփրախ-կալեում, որն այժմ պահվում է Բեռլինի թանգարանում<sup>2</sup>: Ուրարտուի արևելյան մարզերում (ժամանակակից Իրանում) Վ. Կլայսը հայտնաբերել է քարի մշակման համար լավ պահպանված երկաթե մուրճ՝ 19,5 սմ երկարությամբ, որի բարակ ու սուր ծայրը քարի տաշման համար է, իսկ բութ ծայրը՝ քարը հարթեցնելու: Մուրճը կամ դարաշր ունի համապատասխան անցք փայտե կոթ հազցրնելու համար: Սա արդեն ուրարտական շինարարի այն իսկական գործիքն է (ի դեպ՝ մոտ մեր ժամանակվա համապատասխան մուրճի ձևովին), որով նա մշակել էր քարը<sup>3</sup>:

Հավանաբար, եղել են նաև սրածայր այնպիսի գործիքներ, որոնցով բազալտ քարի վրա փորագրվում էին կամ փորվում սեպագիր արձանագրությունների մանր ու հավասարատաշ սեպերը:

Փայտ, ոսկոր, եղջյուր մշակելուն էր ծառայում մետաղյա սղոցը՝ գտնված Կարմիր բլուրում<sup>4</sup>:

Գտնված իրերի շարքում են նաև ասորեստանյան սիպի «զիգուրտ»-ները՝ խոշոր շափերի բրոնզյա մեխեր, որոնք, հավանաբար, օգտագործել են շինարարության ընթացքում, մասնավորապես փայտյա մասերը միացնելու կամ բրոնզյա թիթեղները փայտյա մակերեսներին ամրացնելու համար:

Նկարիչների գործիքներից էին կարկիներ, որ օգտագործվում էր որմնանկարների շրջանաձև հորինվածքներում գարդաբանդակներ գծագրելու համար:

## Գ. Շինարարական կոնստրուկցիաներ

Դատելով ուրարտական քարե ու փայտյա կոնստրուկցիաների ճարտարապետական ձևերից, կարելի է ասել, որ յուրաքանչյուր ձևը զարգանում էր տվյալ շինանյութի հատկություններին համապատասխան:

Այդպիսով, անխլելի կապի մեջ գտնվող կոնստրուկցիաների կոնստրուկցիան ու ճարտարապետական ձևն իրենց կազմավորման ֆունկցիան կրող շինանյութի հետ մեկտեղ կազմում են ներդաշնակ միասնություն:

Քարե կոնստրուկցիաներ: Քարը օգտագործվում էր պատերի հիմքերի համար, ընդ որում, հաճախ նրանց համար ստեղծվում էր ավելի լայն հիմնատակ (լուսանկ. աղ. 29 ա): Կոնստրուկտիվ այս կատարելագործումը իրացվեց Թեյշեբաինի շինարարների կողմից, որոնք նկատի ունենալով տեղանքի նույնիսկ ամենաչլին թեթևությունը, համապատասխանաբար, իջնող մասի կողմում ստեղծում էին աստիճանաձև հիմք՝ իր հիմնատակով: Հիմքերի առավելագույն խորությունը գրեթե ամենուրեք հազիվ մեկ մետր է: Քարե պատերը սովորաբար կազմում են հիմքերի շարունակությունը՝ վերերկրյա մասում պահպանելով նույն հաստությունը:

Սովորաբար, շուրջ 3—4 մետր բարձրություն ունեցող այդ պատերը շարվում էին կոպտատաշ քարերով, կավե շաղախով: Երբեմն գետնախարիսխներ կազմող որմածքներն ամուր տուֆատեսակներից են, շարված խորանարդաձև բեկորներից: Դրան հակառակ, էրբուրնիի ՏՄՏԻ տաճարի գլխավոր ճակատի որմածքն ամուր տուֆատեսակից է, հղկման աստիճանի մշակված: Ընդ որում, տաճարի հիմքերն ու գետնախարիսխները ոչ միայն իրարից տարբերվում են, այլ նաև կոնստրուկցիա են տարբեր եղանակով:

Պատերի շարվածքում ավելի մեծ շափերի քարերի ենք հանդիպում՝ Հայկաբերդում (լուսանկ. աղ. 30 ա), էրբուրնիում, իսկ Սարգուրի Ա-ի օրոք Տուշպայի միջնաբերդի պատերի կառուցման համար օգտագործվել են խոշոր շափերի կրաքարեր, որոնք Տուշպա են բերվել առայժմ անհայտ Ալեխանի քաղաքից:

Սակայն մշակված ու կանոնավոր երկրաչափական ձևերով քարե (բազալտ) կոնստրուկցիաները, արտահայտելով կառուցվածքի ծավալա-

տարածական լուծման հաստատությունն ու պարզությունը, ցայտուն կերպով գրևորվում են Այլ-միջին-Քեֆեի դամբարաններում, որոնք այդ առումով ուրարտական շինարարական արվեստի ամենակատարյալ օրինակներն են: Այդ են հաստատում քարե հեծանների վրա պահվող լայն ծածկասակները կամ կեղծ կամարի սկզբունքով առանձին բեկորներից հավաքված թաղակապ ծածկերը: Ի դեպ, դրանցից առաջինը հիշեցնում է Եգիպտոսի սֆինքսի տաճարի, իսկ երկրորդը Արիդոսի ու Իկյու-էլ-Բախրի կառույցների ծածկերը:

Քարաշեն էին նաև մուտքերի աստիճանները, որոնք հայտնաբերվել են էրբուրնիում, Արգիշտիխիխիում և այլուր (լուսանկ. աղ. 11, 12, 33):

Քարի մշակման ամենատարածված ձևը Ուրարտում արհեստական քարայրերի ստեղծումն էր: Եթե նկատի ունենանք, որ քարայրերն ամուր բաղալտի մեջ խորասուղիված մեծ տարածքներ են, ապա պարզ կդառնա նրանցում ներդրված գերծանր աշխատանքների ողջ պատկերը:

Այս աշխատանքները սկսվում էին մուտքից, ապա, ընդլայնվելով, տարածվում խորություն մեջ: Համալայնարար, այդ ընթացքում էլ աշխատանքների կատարումը ենթարկվում էր համապատասխան հաշվարկների, ինչպես կարծում է Չարլզ Բրեննը՝ Կայալիդերի քարայրի պատերին հնում փորագրված գծիկների միջոցով կատարված նշումների հիման վրա<sup>5</sup>:

Անդրադառնալով ուրարտական բերդապարիսպներին, պետք է ասել, որ նրանք ունենին հորինվածքների տարբեր ձևեր՝ աշտարակների ու որմնահեցերի համապատասխան դասավորություն, որոնցում նկատելի է նրանց ստեղծողների ձգտումները՝ բերդապարիսպներին հաղորդել կոնստրուկտիվ հաստատուն կայունություն ու նորություն, հետևապես՝ պաշտպանական ունակություն<sup>6</sup>:

Կավակերտ կոնստրուկցիաներ: Սրանցում ամենատարածվածը հում աղյուսի որմածքն է (գծագր. աղ. 39): Ստեղծված երկու տիպի՝ քառակուսի և ուղղանկյուն աղյուսների օգտագործումով ապահովվում էր որմածքների շարքերի կապը (լուսանկ. աղ. 30 ք): Այդ կապի իրականացվում էր նաև պատերի լայնական և երկայնական ուղղություններում, որոնցում որմածքի վերևի շերտի աղյուսի շարքը մի քանի սանտիմետրով տեղաշարժվում էր երկայնական առանցքի ուղղությամբ:

Որմածքի աղյուսները շարվում էին ճակատային մասից, որից հետո շարվում էին միջին աղյուսները և այլ ընթացքում առաջացած անճշտությունները մարվում էին ի հաշիվ ներքի շարքերի: Ուրարտական կառույցներում հում աղյուսի պատերն ունենին 2,12 մ մինչև 3,77 մ լայնություն: Չափերի հիմքում ընկած էր ուրարտական կանգունը, որով և շահում են պատերը (չորս, հինգ և յոթկանգունային պատեր):

Հատակը: Հատակի կառուցվածքին նախորդում էր սենյակի ներքնամասի հարթեցումը նրա ողջ տարածքով, որից հետո այն շարվում էր մի շերտ աղյուսով, ապա ծածկվում կավով: Հարթեցված մակերեսի վրա շարվում էր աղյուսի նոր շերտը, որը ծածկվում էր 5—7 սմ կավաշերտով և նորից հարթեցվում կավի 2 սմ սվաղված շերտերով:





Մի շարք այլ սենյակներում հատակների կառուցումն այլ էր: Փայլը նախապես հարթեցվում էր և ապա ծածկվում խճի ու կավի շերտերով, ապա սվաղվում կավով (գծագր. աղ. 41):

Մածկերը: Կամարը ուրարտական ճարտարապետության մեջ հայտնի է վիժափոր կառույցներում, կառույցներ պատկերող հարթաքանդակների վրա (լուսանկ. աղ. 21 ք): Հայտնի են նաև աղյուսներից շարված կամարներ (լուսանկ. աղ. 31):

Կամարները շարվում են Եգիպտոսում և Ասորեստանում ընդունված համակարգի ձևով, այսինքն՝ ճակատային մասից շերտ առ շերտ, իրար վրա:

Փայտե կոնստրուկցիաներ: Փայտը հիմնականում օգտագործվում էր սյունահեծանային համակարգերի, միջհարկային և այլ տիպի ծածկերի, կտուրների, ինչպես նաև հակասեյսմիկ գոտիների ու բարավորների համար: Սյան համար օգտագործված կլոր գեղանների առավել մեծ տրամագիծը հավասար է 43 սմ-ի:

Կառույցների ներքին տարածքների ձևերից երևում է, որ հաճախ, էլնելով նրանց մակերեսների ընդլայնման անհրաժեշտությունից, փայտյա հեծանների թռիչքների սահմանափակ հնարավորության պատճառով կիրառվում էին փայտյա սյուների ու մուլյեթերի լրացուցիչ հենակներ: Նրման հենակների քանակը մեկ միավորից աստիճանաբար աճում էր, իսկ երբեմն էլ նրանք դասավորվում էին երեք շարքով, ինչպես այդ պատկերված է մեր աղյուսակում՝ կազմված համապատասխան օրինակների հիման վրա:



Ազ. 46. Չարդանկարներ և օրմանակարներ. Էրզրոնի

Երբունիի միջնարկրդի հում աղյուսի պատերի շարվածքը ամրացված էր փայտյա կապերով, որոնք ունեին հակասեյսմիկ նշանակություն: Համանաբար, շինարարական այդ միջոցառումը խելական կառուցողական ավանդույթների արգասիք է, մասնավորապես մենք նկատի ունենք Զին-հիշիկի համանման շինարարական կոնստրուկցիաները:

Փայտյա միջնակային ճածկ: Թելչերախիի միջնակային ճածկը համարված միջհարկային ծածկի առանձին մասերի վերականգնված կոնստրուկցիան հետևյալն է. այն ուներ բառակուսի կտրվածքով հեծաններ (30×32 սմ)՝ դասավորված 50 սմ հեռավորությամբ, որոնց վրա փռված տախտակները (լայնությունը 35 սմ, հաստությունը 16 սմ) կազմում էին երկրորդ հարկի հատակը: Պատերի խորություն մեջ ընկղմված այդ հեծանների ծայրերը նստում էին հում աղյուսի նախանյա փռված ավազների վրա:

Ուրարտական կառույցների հարթ ծածկերից հայտնի է 2 տիպ:

Առաջին տիպի ծածկի կրող հեծանները, որոնք տեղադրվում էին ներքին տարածքի լայնակ ուղղությամբ, 30—40 սմ հաստությամբ և կողքերից տաշված կիսագերաններ են, դասավորված իրարից 60 սմ հեռավորության վրա, որոնք իրենց հերթին կրում էին բառանկյուն կտրվածք ունեցող (22×16 սմ) հեծաններ՝ դասավորված սենյակների երկայնակին ուղղությամբ: Հեծանների ծածկվում էին ծառի ճյուղերի 5 սմ շերտով, որոնց վրա փռված էր եղեգնի շերտը, որից հետո նույն կարգը կրկնվում է և այդ բոլոր հարթեցվում 15 սմ հողի շերտով:

Երկրորդ տիպի ծածկն ունի համանման շերտեր, այն տարբերությամբ, որ նրանում հեծանները կողքերից տաշված էին և այնպես դասավորված, որ հպվեն իրար, այդ պատճառով էլ առատադր ներկայացնում էր մի ամբողջ տախտակամած:

Երկրի տանիքներ: Մուսասիրի տաճարը Երկթեր տանիքով շինք էր: Ամենայն հավանականությամբ, ծածկի այդ ձևը Հայաստանում ուրարտական շինարարական ավանդույթների արգասիք է:

Բարավոր: Թելչերախիի միջնաբերդում հայտնաբերված փայտյա բարավորի լայնությունը 1,59 մ է, իսկ իր բացվածքում այն հավասար է շուրջ 1,10 մ: Բարավորն իր ծայրերով նստում էր

պատի, իսկ կից հատվածով՝ փայտյա ուղղաձիգ հենարանների վրա, որոնք բարավորի հետ մեկտեղ կազմում էին պատուհանի բացվածքը սամանող շրջակայք: Ուղղաձիգ հենասյունը միանում էր բարավորի վրա հարթության հետ, որը և դրա օգնությամբ ամուր էր պահում նրան:

Թելչերախիի բաղաբային շենքերում պահպանված են նաև սուհյ քարից գրեթե միաձև երկու բարավորներ: Դրանցից մեկը նակատային մասում ունի ատամնաշար: Նրա ձևը ցույց է տալիս, որ պատուհանների բացվածքը լայնանում էր դեպի ներքնամաս:

Դռներ: Մեր կողմից հրատարակված մի գծագրի վրա պատկերված է Թելչերախիի միջնաբերդում պահպանված մի դռան մնացորդների վերականգնված ձևը, իրեն փակող հարմարանքով, որն իրացրել էր փայտյա երկու պահուսակների անցքերով շարմվող սողնակի միջոցով (գծագր. աղ. № 40):

Նույն կերպ էր փակվում նաև Թելչերախիի քաղաքի բնակելի մի տան պահեստի լայն դուռը: Պատի մեջ խրված պահեստակի փոխարեն այստեղ կանգնեցված էր ուղղաձիգ սալաբար, որի վերևի մասի համապատասխան էլրո անցքով, սողնակի նման անցնում էր դռան լայնությամբ հավասար մի գերան, որը խափանում էր դռան բացումը:

Յուրօրինակ է Արգիշտիխիի միակտոր քարե դուռը, որը շարժվում է առանցք կաշմող իր ելունների միջոցով, ասուցված քարե փոսիկների մեջ: Հար և նման բազալտե երկու դուռ գտնվում են Թավրիզից հարավ-արևմուտք՝ Սարգարի այգիների կավակերտ պարիսպների մեջ. Դրանք, հավանաբար, վերցված են ուրարտական հինապուրջ շենքերից:

Քիվեր: Ուրարտական քիվեր տարբեր ձևերի են (գծագր. աղ. 42 բ): Այն քիվերը, որոնց տեղը պահպանվել է պատկերված որմնանկարների ու հարթաքանդակների վրա, գրեթե հար և նման են Միջագետքի քիվերին: Ուրարտական այդ քիվերն ատամնավոր են, որոնցից ներքև գարդարանդակների շարքն է և այդ բոլորը հազիվ նըմարելի դուրս են գալիս ճակատային պատի հարթությունից: Հավանաբար նման քիվեր շարվում էին քարերից, քանի որ կավակերտ ձևերը դիմացկուն լինելի չէին կարող:

Թելչերախիի միջնաբերդի քիվը, որը քարից է, կազմված է հարթ սալաբարի վրա շարված սրբ-

բատաշ վեմերից (լուսանկ. աղ. 32)։ Սրանք ճակատային ընդհանուր հարթությունից զուրս եկող ծավալներ են, որոնք արտահայտվում են նրանց միջև եղած տարածության նկատմամբ 5×8 հարաբերությամբ։ Այդ ծավալների միջին մասը նետ է մտնում, իսկ դրանից ավելի հետ է ծավալների միջև եղած հարթությունը։ Այդպիսով, ամբողջ քիվը ունենալով 3 հարթություն՝ իր ստվերները միջոցով ստեղծում էր նրա ծավալների արտահայտիչ դրսևորում։

Այս քիվը, հավանաբար, ուրարտական ճարտարապետության տարածված ու հնագույն ձևերից էր, քանի որ այն տեսնում ենք դեռ Մուսասիրի տաճարը պատկերող հարթաքանդակի մյուս շենքերի վրա։

Մյուս քիվը կամ համանման ձևը, որը գտնվում է Վանա ժայռի նաֆթ-կույու կողմող վիմափորում, ներկայացնում է պատի հարթությունից զուրս եկող գոտի՝ իր երկշաբբ կիսակլոր պարզաքանդակների վերջավորությամբ։

#### ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԵՐԿԱՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ ՄԻԱՎՈՐԸ՝ ԿԱՆԳՈՒՆԸ ԵՎ ԾԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սկսած XIX դարից, երբ Ցայզինգը՝ ճարտարապետության (ինչպես բնության) համաշխարհայինների հիմքում մատնանշեց «ոսկե հատման» առկայությունը<sup>9</sup>, նրա այդ տեսությունը արագորեն տարածվեց ճարտարագիտության մեջ, ինչպես և իր որոշակի կիրառումը գտավ գործնական աշխատանքներում։ Այդ ժամանակից ի վեր «ոսկե հատումը» դարձավ այն ղեկավար սկզբունքը, որով փորձում էին բացատրել տարբեր դարաշրջանների ու տարբեր ոճական ուղղությունների պատմական հուշարձանների ճարտարապետական համաշխարհայինները, ընդ որում, երբեմն այն հաջողվում էր կատարել բավականաչափ համոզիչ կերպով։ Այս հանգամանքը պայթիորեն շփոթեցրեց Ցայզինգի տեսության հետագա զարգացմանն ու տարածմանը, երբ այդ կապակցությամբ առաջացան համաշխարհային նաև նոր համակարգեր, որոնք իրենցով դուրս մղեցին վաղուց գոյություն ունեցող մոդուլային համակարգը, որ ժամանակին մտերմասունքոտ մշակված էր Վիտրուվիոսի<sup>10</sup> ու Վինչուաչի<sup>11</sup> աշխատություններում։

«Ոսկե հատման» վրա հիմնված մի շարք համակարգերից առավել մեծ տարածում գտան Ժոլտովսկու<sup>12</sup>, Համբիշի<sup>13</sup> ու Մեսսելի<sup>14</sup> տեսությունները։ Դ. Համբիշը ի վերջո եկավ այն եղանակացության, որ «պարակտիկ աշխատանքներում արվեստագետին հազիվ թե վիճակվում էր չափազանց շատ զբաղվել հաշվարկներով»։

Իրոք, հին հուշարձանների ճարտարապետական համաշխարհայինների պրոբլեմն առաջօր մնում էր անավարտ մի տեսություն, քանի որ նրա բազմաթիվ հետազոտությունները դեռ ի մի չեն բերված կոնկրետ համակարգում։ Ավելին, Հին աշխարհի ճարտարապետության այնպիսի հետազոտողներ, ինչպիսիք են Հալիկաոնասցին կամ Վիտրուվիոսը, ամենևին էլ չեն հիշատակում «ոսկե հատման» գոյություն մասին՝ ճարտարապետության համաշխարհային մեջ, այլ դրան հակառակ՝ նշում են միայն մոդուլային համակարգը։

Հենվելով մեր հետազոտությունների վրա, հակված ենք ուրարտական ճարտարապետության մեջ տեսնել ոչ թե «ոսկե հատման» համաշխարհայիններ, այլ մոդուլային համակարգ, որը կապված է երկրի գծային չափի միավորի՝ կանգունի հետ (գծագր. աղ. 37 ա)։ Թևրևս ուրարտական կանգունն արտահայտված էր սովորական «չափողական փայտի» տեսքով, եթե միայն նրա մասին դատելու լինեք եզրիտականի օրինակով։ Մենք գիտենք, որ ճարտարապետ Նեխեբան լինելով իր եղբոր օգնականը, հետագայում հուշակավոր ճարտարապետ Պեպի I-ին փարավոնի բուրգի կառուցողը, ի թիվս այլ պարտականությունների, կրում էր եղբոր «չափողական փայտը»։

1943 թ. Ա. Վ. Սիվկովը, ուսումնասիրելով Թեյշեբախի միջնաբերդի կառույցները, նրանցում հայտնաբերեց 51,8 սմ չափի կանգուն, որը հավասար է Նիպուրային կանգունի չափին<sup>15</sup>։ Հետագայում մեր ուսումնասիրությունները Թեյշեբախի հաստատեցին այդ կանգունի գոյությունը։ Միաժամանակ մենք ևս հայտնաբերեցինք մի այլ կանգուն, որը հավասար է 52,5 սմ-ի։ Ընդ որում, պարզվեց, որ սովորականը բաժանվում էր 3 հավասար մասի, յուրաքանչյուրը 17,5 սմ, որը հաստատվեց մի շարք չափումներով։ Կանգունի այս 52,5 սմ չափով մեծությունը հայտնի դարձավ նաև Կալալիդերի հուշարձանախմբի չափումներով և, ինչպես պարզեցինք, այստեղի չափումների մեջ և՛ առկա է

ներա՛յն շափի՛ 17,5 սմ մեծությունը: Այսպես՝ գրենաժալին խողովակներն այստեղ 52,5 շափի են, իսկ նրանց տրամագիծը 17,5 սմ (1/3):

Էրկրունիի միջնարկը ում կանգունի համարը՝ հիմնված էր 47,7 սմ շափը:

Ուրարտուում ամենուրեք կանգունին համապատասխանում էր մոնումենտալ կառույցների աղյուսի երկարությունը: Ընդ որում, հայտնի է, թե այստեղ ևս, ինչպես և Բարսիլունում, որի մասին հաղորդում է Հերոդոտոսը, սովորական կանգունների կողքին գործում էր նաև «թագավորական կանգուն», 3 մատով մեծ մյուսներից, թե՛ պարզապես գործ ունենք տարբեր շափերի գծային միավորների հետ:

Հայտնաբերված գծային միավորները զրալիտրեն օժանդակեցին Ուրարտուի ճարտարապետական համաշափությունների հետազոտություններին, ընդ որում, ինչպես գծային հատվածներին, այնպես էլ բառանկյուն մակերևույթների:

Մեր հետազոտությունները պարզեցին, որ ուրարտական համաշափությունները խարսխված են  $5 \times 8$  հարաբերության վրա, որի յուրաքանչյուր միավորը ծառայում էր որպես մոդուլ և պայմանավորված էր կանգունով, այսինքն՝ գծային կոնկրետ մեծությամբ:

$5 \times 8$  համաշափությունների առկայությունը բացահայտենք առանձին օրինակով.

Վանա և Ուրմիա լճերի միջև գտնվող Սալխանե գյուղի արվարձանում գտնվող «Աշրուտի դուռ» ժայռակերտ խորշի բառանկյան բացվածքը՝  $2,61 \times 4,10$  մետր  $2,61 : 5 = 0,52, 2,4, 10 : 8 = 0,51, 2$  (1 սմ):

Համաշափությունների սկզբունքը կիրառվում էր նաև որմնակարներում: Որմնակարների օրինակներին պահանջատ էր, որ ինչպես ուրարտական արվեստում, այնպես էլ նրա ճարտարապետության մեջ համաշափությունները պահպանվում

էին բոլոր մանրամասներով: Այսպիսով պարզ է դառնում, որ ուրարտական արվեստում ստեղծված գեղարվեստական ձևերի ներդաշնակությունը հիմնվում էր պարզ թվային հարաբերությունների խտտորեն սահմանված համակարգի վրա, որի հիմքում ընկած է գծաշափի իրական միավորը՝ կանգունը:

Որմնակարները համաշափական կանոնների հիման վրա իրանակացնելը Հին արևելքի համար օրինականացված սկզբունք էր: Եգիպտոսում նույնիսկ գոյություն ունեին համապատասխան ձեռնարկներ<sup>16</sup>: Դրանցից մեկը, որը կոչվում էր «Որմնակարների կատարման և համաշափական կանոնների շարադրանք», պահվում էր էդիֆուտաճարի գրադարանում մինչև պտղոմեոսյան ժամանակները: Եգիպտոսում կային նաև գրքեր մոնումենտալ քանդակների համաշափությունների վերաբերյալ, որի մասին վկայում է Դենդեղերա տաճարի պահպանված արձանագրությունը<sup>17</sup>:

Մեր հետազոտությունները հաստատեցին, որ պարզ թվային հարաբերությունների վրա հիմնված համաշափություններն, իրենց հիմքում ունենալով գծաշափի իրական միավորը՝ այն է կանգունը, տարածված էին նաև Հին արևելքի այլ երկրներում: Սակայն այստեղ հիմքում ընկած էր ոչ թե  $5 \times 8$ , այլ  $7 \times 11$  հարաբերությունը:

Մեր ուսումնասիրությունները պարզել են, որ  $7 \times 11$  համաշափությունը բավական տարածված է եղել նաև միջնադարյան հայ ճարտարապետության հուշարձաններում<sup>18</sup>:

Հարկ է նշել, որ ինչպես  $5 \times 8$ , այնպես էլ  $7 \times 11$  համաշափությունները մոտ են «սոսկ հատման» համաշափություններին, այն տարբերությամբ, որ վերջինս պայմանավորված է երկու հատվածների հարաբերությամբ, շառնջվելով, սակայն, կանգունի հետ, որի հիման վրա էլ հենց կառուցվում է թվային հարաբերությունների համակարգը:

Հնագիտական պեղումները, որոնք վերջին 40 տարվա ընթացքում անընդմեջ ու մեծ ծավալով կատարվում են Ուրարտուի պատմական տարածքում, բացահայտել են նրա սոցիալ-տնտեսական կյանքը, քաղաքաշինությունը, ճարտարապետությունը, շինարարական արվեստը, ինչպես նաև մոնումենտալ որմնանկարչությունը:

Ուրարտական ճարտարապետությունը, կազմավորվելով դարերի ընթացքում՝ առնչված Առաջավոր Ասիայի, ինչպես նաև տեղական ցեղախմբերի մշակույթների հետ, ի վերջո հասավ տեխնիկական այնպիսի մակարդակի, որին հավասարապես մոտ էին ինչպես լեռնալիս, այնպես էլ հարթավայրային ճարտարապետական սկզբունքները թե՛ իրենց ձևերի և թե՛ կոնստրուկտիվ հնարավորությունների իմաստով: Այդ ճարտարապետության բնորոշ հատկանիշն է նաև այն, որ նրանում ինչպես քարե, այնպես էլ փայտյա կոնստրուկտիվ յուրահատուկ տեկտոնիկ ձևերի արտահայտությունները զրսևորվում են ինչպես ինքնուրույն, այնպես էլ միահյուսված ձևով:

Ուրարտական ճարտարապետությունն իր հատկություններով առնչվում, որոշ դեպքերում նաև մերվում է մի կողմից՝ խեթական աշխարհի լեռնային ճարտարապետության քարե ու փայտյա ձևերին, մյուս կողմից՝ Միջագետքի հարթավայրային ճարտարապետական սկզբունքներին, ընդհուպ մինչև հում աղյուսի օգտագործումը:

Ուրարտական ճարտարապետական ձևերի հետագա զարգացման սաղմերը պարզ տեսանելի են առավելագույն պատմական Հայաստանի դասական ճարտարապետության մեջ: Վերջինիս կազմ-

մավորման ու զարգացման ընթացքը սկստորեն առնչվեց ուրարտական շինարարական մշակույթի հետ:

Սակայն, ուրարտական մշակույթի ազդեցությունները չէին տարածվում միայն հայերի կամ կովկասյան մյուս ժողովուրդների մշակույթների վրա: Այդ ազդեցությունները տարածվել էին նաև Փոքր Ասիա, Իրան ու Միջագետք, ուր ամենուրեք գոյություն ունեցող մշակութային այդ կապերի համար ստեղծվել էր պատմական բարենպաստ, միջավայր: Իսկ եթե նկատի ունենանք աքեմենյան Իրանի դասական ճարտարապետությունը, կարող ենք համոզվել, որ նրանում տվյալ միջավայրն առավելապես բարենպաստ էր: Այդ առումով էլ այստեղ տեղի է ունեցել ոչ թե էվոլյուցիոն զարգացմանը բնորոշ սովորական ընթացք, այլ կատարվել են թռիչքաձև պոթկումներ Պասարգադքի, Պերսեպոլիսի, Սուզայի և այլ ճարտարապետական համալիրների կատարյալ հորինվածքների ստեղծման գործում, որոնց հիմքում զբված էր այդ ճարտարապետությունների փոխներթափանցումը:

Հարկ է նշել, այնուամենայնիվ, որ ուրարտական ճարտարապետության վերաբերյալ այստեղ բերված նյութը լիովին չի արտահայտում շինարարական այդ մշակույթի ամբողջական ու հարուստ պատկերը, որի հուշարձանների մի մասը հաղարամյակների ծանրության ներքո վերացվել է, իսկ մյուսը առայսօր ծածկված է գրիների հողի հաստ շերտով, որի տակ էլ թերևս զրտնըվում են այդ մշակույթի ամենուցայտուն ու բնորոշ կոթողները:



## ՆՆԱ ԵՐՐՈՐԿ

ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ  
ՀԱՍՍՐԱԿԱՐԳԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

(VI Դ. Մ.Թ.Ա.—III Դ. Մ.Թ.)

Ուրարտական պետության անկումից հետո Հայկական լեռնաշխարհում ավարտվում է հայ մոդուլրդի կազմավորումը և նախնադարյան համայնական հասարակության քայքայման հետեւյանքով առաջացող ստրկատիրական հարաբերությունների հիման վրա, դեռևս VI դարում (մ.թ.ա.), ստեղծվում է հայկական պետությունը:

Հայկական նորաստեղծ պետությունը սկզբում դաշնակցային փոխհարաբերության մեջ էր մարական պետության հետ, սակայն որոշ ժամանակ անց որկվում է անկախությունից և ընկնում Մարաստանի, ապա ավելի քան երկու դար՝ Արեմենյան գերիշխանության տակ:

331-ին (մ.թ.ա.) Ասորեստանի Գավգասելյայի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո Ալեքսանդր Մակեդոնացին նվաճեց Իրանը: Արեմենյան կայսրության կործանումից հետո, Հայաստանը վերականգնում է իր անկախությունը, ստեղծվում են պետական նոր կազմավորումներ, որոնք կարճ ժամանակահատվածներով լինելով սելևենկյանների իշխանության ներքո, փաստորեն պահպանում են իրենց ինքնուրույնությունը:

Դեռևս մ.թ.ա. IV դարի վերջերից Հայաստանն ընդգրկվում է Տելլենիստական աշխարհի տնտեսական ու մշակութային զարգացման ոլորտը:

Արտաշեսյան հարստության ժամանակաշրջանում, հատկապես Տիգրան II-ի օրոք (95—56 թթ., մ.թ.ա.), Տելլենիստական աշխարհի հետ ունեցած մշակութային ու տնտեսական կապերն ավելի են ընդարձակվում: Տիգրան Երկրորդը Կապադովկիայի, Կիլիկիայի, հովանարար և Ասորիքի, Կորդուքի, Ադյարենի Տելլենիստական 12 քաղաքների բնակչությանը բռնի տեղափոխում է Հայաստան և մեծ մասամբ բնակեցնում Տիգրանոպոլսում:

Այդ քաղաքների թվում էին Կապադովկիայի մայրաքաղաք Մամուրը, Կիլիկիայի Սուրը, ըստ նրևույթին, Կորդուքի (Կորդուպոյս երկրի) քաղաքները: Նվաճված բաղաձայնների ճարտարապետ-

ներին և շինարարներին օգտագործում էին երկրի շինարարական աշխատանքներում:

Հայկական տաճարներում տեղադրում էին հունական աստվածների արձանները<sup>3</sup>, Հայ արքաների դրամների վրա մակագրությունները կատարվում էին հունարեն:

Տելլենիստական ժամանակաշրջանին բնորոշ ամենացայտուն երևույթներից մեկը միապետների նախաձեռնությամբ ու նրանց անունը կրող քաղաքների ընդարձակ ցանցի ստեղծումն էր:

Տելլենիստական աշխարհի քաղաքաշինական այդ պրոցեսում է ընդգրկվում նաև Հայաստանը<sup>4</sup>: Ստեղծված շուրջ երկու տասնյակ քաղաքների թվում գոյություն ունեին Երվանդ թագավորի անունը կրող՝ քաղաքներ ու բնակավայրեր (Երվանդաշատ, Երվանդակերտ, Երվանդավան), Արտաշես թագավորի անվամբ՝ Արտաշատ մայրաքաղաքը:

Տելլենիստական քաղաքների ազգարնակչության՝ հայկական քաղաքներում բռնի բնակեցումը նպատակ ուներ Հայաստանում արմատավորել Տելլենիստական քաղաքային կենցաղը և խթանել երկրի տնտեսական ու մշակութային վերելքին: Արտաքին աշխարհի հետ մշակութային կապերի զարգացմանը մեծապես նպաստում էին նաև Հայաստանի միջով անցող համաշխարհային առևտրական մայրուղիները:

I—III դարերում Հայաստանը որոշակի շփման մեջ էր Հռոմի հետ, սակայն, նշվում է, որ մշակույթի և արվեստի բնագավառում «...արևելքում, այդ թվում նաև Հայաստանում, հռոմեական ազդեցությունը բավական թույլ էր արտահայտվում»<sup>5</sup>:

Ստրկատիրական հարաբերությունների և բաղաձայնի զարգացող կյանքի հիմքերի վրա բարձրացող երկրի մշակութային-տնտեսական աճին գույակացվում է հարտարարական-կառուցողական արվեստի զարգացումը:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### ՎԱՂ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

585 թ. (մ.թ.ա.) կործանվեց Հին արևելքի պետություններից մեկը՝ Ուրարտուն և նրա երբևեմի պատմական տարածքում ձևավորվեց Հայաստանը: Այդ այն դարաշրջանում էր, երբ Հին արևելքի տվյալ հատվածը ապրեց իր շրջադարձային ժամանակաշրջանը: Պատմության գիրկն անցան ոչ միայն Ուրարտուն, այլ նաև հզոր Ասորեստանը, Բաբելոնը:

Հայաստանի պատմական կյանքի սկիզբը զուգահեռաբար է նաև Մարաստանի, ապա Աքեմենյանների՝ այդ հզոր երկրի մեծապետական ձրգտումներին: Հայաստանն այդ հզոր հարձակմանը կարողացավ հակադրվել իր ողջ ուժով ու ենթարկվեց նրան հինգ արշավանահեղ ու ծանր ճակատամարտերից հետո:

Հայաստանում կազմավորվեցին Աքեմենյան Իրանի 13-րդ և 18-րդ սատրապությունները: Հայաստանը անկախություն ձևեք բերեց Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների հետևանքով:

Անցնելով պատմության գիրկը, Ուրարտուն, սակայն, իր թուլած մշակութային ժառանգությամբ ներթափանցեց հաջորդ դարաշրջաններում կազմավորվող հայ դասական ճարտարապետության մեջ: Միաժամանակ այն մեծապես նպաստեց քեմենյան ճարտարապետական արվեստի ձևերի զարգացմանը: Այդ ամենը հնարավոր էր, քանի որ դեռ երկար ժամանակ կենդանի էին ուրարտական շինարարական ավանդները, դեռևս չէր անհետացել նրանց կառուցողական հմտությունը, իսկ նոր ժամանակներն էլ չէին գերազանցել այդ հնամենի մշակույթը:

Վաղ հայկական ժամանակաշրջանի շինարարական գործունեության ցայտուն օրինակները


պարզորոշ արտահայտված են էրբեունիի միջնաբերդի տարածքում: Դրանք հիմնականում արտահայտվել են ուրարտական շինությունների հետագա կառուցասպասման կամ նրանց վերակառուցման մեջ, որով ստեղծվել էր ճարտարապետական ձևերի իսկական մի համակերտություն:

Նախ ասենք, որ կատարված վերակառուցումների հետևանքով մեծապես վերափոխվեց էրբունի միջնաբերդի կենտրոնական միջուկը, նրա հրապարակի հատակագծի հորինվածքը: Վերացվեց միջնաբերդի հրապարակը և նրա տեղը զբաղեց քեմենյան Իրանի ճարտարապետության նամար բնորոշ սյունազարդ դահլիճը՝ ապագանան, որը այդ ճարտարապետության առաջատար ու գերիշխող ձևն է: Այն ծառայում էր քեմենյան թագավորներին համար որպես ընդունարան-դահլիճ՝ իր շքեղագարդ ձևերով արտահայտելով նրանց հզորությունն ու մեծությունը:

Ապագանան հիմնական ճարտարապետական տարածական ձև էր արևմենյան Իրանի՝ Պասարգադքի, Պերսեպոլիսի ու Շուշի (Մուգալի) խոշոր համալիրներում:

Այդ առումով էրբունիի ապագանան տեղական կառավարիչների նամար ծառայել է պաշտոնական ընդունելությունների նպատակին:


էրբունիի ապագանան: դրացել է իսլաղի աստծո տաճարի 12 սյունանոց նախամուտքին 18 սյունանոց մի շինություն կցելու եղանակով, որով ստեղծվել են մեկ ընդհանուր ներքին տարածություն 29×33 մետր չափերի (գծագր. աղ. 47)՝ Այս դահլիճի հիմնական էնոստրուկտիվ տարրը փայտյա սյուներն են, սրունց նամաչափ վերիտականությունը թև՝ ձակտուով և թև՝ խորությունը՝ ներքին տարածքի ճարտարապետական ու կոնստ-



Պլան 47. Երևանի պետական գրադարանի հարավային խցի



Աղ. 48. Սյունադարը դահլիճի վերակազմութիւն



Աղ. 49. 2րդ մեծ տաճարի հատակագիծը

րուկտիվ ձևերին հաղորդվել են միասնական տեսք: Այս վերջինս բնորոշվում է իր լայնածավալ ձևերի հանդիսավորությամբ ու ճոխությանը մի և բարձր սյունների վերաբերյալ շարժուն և ստեղծված ներքին ճարտարապետական ձևերի պինտիկ արտահայտությամբ (գծագր. աղ. 48):

Ապագանայի՝ հում աղյուսով շարված նորակառույց արտաքին պատերի, որոնք գետնախարհի սահմանը մի շարք սրբատաշ բազալտի քարերից էին, օժտված էին որմնահեղեղով ամբողջ շարվածքի ամրություն համար:

Ապագանայի հարավային պատին կից կա վաշին նստարանի վրա շինված է ևուստիճան զոհասեղան՝ 86 մմ բարձրությամբ: Նրա վրա պահպանված էին մոխիր ու ածուխ, իսկ պատի վրա՝ մուր: Այդ նշանակում է, որ ապագանան ոչ միայն հանդիսավոր ընդունելությունների, այլև այդ կապակցությամբ իրագործվող կրոնական ծիսակատարությունների համար էր նախատեսված: Գուցե այդ առումով է, որ Պույը, ինչպես նաև էրզումանը, Պերսեպոլիսը համարում էին նախ և առաջ պաշտամունքի վայր:

Անդրադառնալով ապագանայի ճարտարապետական ձևերի ծագմանը, այժմ արդեն, հատկապես Բողազքյոյի և Ալթին-թեփեի պատմական տարածքներում նման կառույցների հայտնագործություններից հետո, ավելի որոշակիորեն կարելի է ասել, որ դրանք ծնունդ են առել աշխարհիկ կառուցվածքներից, իսկ պատմաաշխարհագրական առումով առաջացել են խճթակն հողի վրա: Խոսքը վերաբերում է Բողազքյոյի հնամենի խաթրայի միջնաբերդի պեղումներից հայտնաբերված խոշոր, բառակուսի հատակագծով 25 սենյականոց (5×5) դահլիճին<sup>2</sup>: Տվյալ կառույցի ճարտարապետական ձևերն սկներևաբար հաստատում են, որ խճթրն են եղել ճարտարապետական այդ հորինվածքի սկզբնավորողները, որը հետագայում նշանավոր ապագանաների տեսքով հայտնվում է արեմենյան Իրանի դասական ճարտարապետության մեջ:

Նույնանման մի այլ դահլիճի հայտնաբերումը ուրարտական Ալթին-թեփեի միջնաբերդում, հուշում է, որ Ուրարտուն այն միջանկյալ օղակն էր, որի միջոցով այդ ձևերը կարող էին թափանցել Իլանս Բանն աշ. է, որ իրանական ապագանաների երևան գալու և զարգացման ժամանակաշրջանում խնթական այդ կառույցները վաղուց արդեն զարգարել էին գործող լինելուց, մինչպես

ուրարտական ավանդույթները կենդանի էին իրենց կանգուն շինքերի ճարտարապետական ձևերի ամբողջական արտահայտություններով: Միանգամայն բնական է, որ արեմենյաններն իրենց ապագանաների ստեղծման ընթացքում լայնորեն օգտագործած պետք է լինեն շինարարական այդ ավանդույթները:

Արեմենյան Իրանի ճարտարապետության այս դասական կոթողները, ժամանակի ընթացքում դուրս գալով Իրանի սահմաններից, տարածվեցին նրան ենթակա Երկրները, ընդհուպ մինչև Սոդիստոս: Միաժամանակ ապագանան տարածվում է նաև Իրանի ոչ ենթակա Երկրներում: Այն կարելի է տեսնել Հնդկաստանում, որտեղ Պատալիպուտրայի Աշոկա թագավորի պուլատում (III դ. մ.թ.ա.) կառուցված էր համանման բազմասյուն մեծ դահլիճ:



Ժխտելի են, այսպիսով, բոլոր այն դրույթները, բոտ որոնք ապագանան առաջացել է եզրպտական տաճարների հիպոստիլ դահլիճներից և կամ Բլտ-Հիլանիի ձևերից: Այս վերջինից ապագանան բխեցնում էին Կոլոկվելը, Հեդֆելդը, Գլուկը և ուրիշներ: Սակայն միանգամայն իրավասցիորեն այն հերքում էր Ֆրանկֆորտը, իսկ այժմ նաև՝ Ֆրանկովիլը:

Անդրադառնալով էրեբունիի ապագանային, կարող ենք ասել, որ նրա կառուցողները տեղական վարպետներն էին, քանի որ շենքի բոլոր հանգույցներում նկատելի են ուրարտական շինարարության մեջ լայնորեն օգտագործված ավանդները:

Հրո տաճարներ: Անդրադառնալով էրեբունիի միջնաբերդի մյուս վերակազմություններին, կարող ենք նկատել, որ նրանցում, ինչպես և տաճարի շենքում, արեմենյանների օրոք արմատապես փոխվել են պալատի կառուցվածքի հատակագծային հորինվածքը և ծավալատարածական ձևերը: Նրանք, այսպիսով, ոչ թե հարմարվում էին գույություն ունեցող կառուցվածքներին, այլ, դրանք հիմնովին վերակառուցելով, ստեղծում էին թեմատիկ նոր մտահղացմամբ ճարտարապետական շինություններ:

Արեմենյանները պալատում ստեղծել են հրո տաճար, իսկ մյուս նման կառույցը բարձրացել է բակի ազատ տարածքի վրա և գրեթե կապված չէ ուրարտական կառույցների գոյություն ունեցող ձևերի հետ:

Առաջին տաճարը վերափոխել է պալատի պե-



րիստիլ բակը և հրահ կից սենյակները: Բակի սյուները վերացնելու նախապարտով պայտաֆի միջին մասում աղվել է 19 Վ. 19 մ ներքին ընդարձակ տարածություն՝ երեք կողմերից երափսփված սենյակներով, իսկ արևմտյան կողմից պալատական Սուսի տաճարի: զիլափոր ճակատով Տվլալ տարածքի հյուսիսային մասում բակը հաստի է որմնահեղեղ ունեցող պատը, որով տաճարի տարածությունը մեկուսացված է մնացած մասից: Տաճարի այդ հաստվածում ստեղծվել է բակ՝ ծիսակատարությունների համար և նրա շարունակությունը կազմող, նույն այդ առանցքի վրա գտնվող Սուսի տաճարի շենքը՝ (գծագր. զր. 49):

Բակն այստեղ պաշտամունքային արարողությունների վայր է, նրա միջին մասում պահպանվել է մոխիրը վրան զոհասեղանը, ինչպես նաև նրան կից պատի տակ գտնվող նստարանը:

Պերիստիլ բակի և Սուսի տաճարի հիման վրա, այստեղ ստեղծված նոր ծավալատարածական հորինվածքը իր անպարտքով գրեթե նման է Եռլի (Սուլայի) հայտնի տաճարի հորինվածքին:

Սուսի տաճարը, որը դարձել էր մշտական կրակի պահպանման տեղը, պարփակված էր բակը հատող պատի շարունակությամբ՝ սուսն կարգի հնարավոր սրբապղծություններից այն մեկուսացնելու համար: Ինչպես և Շոշում, տաճարը արևի ճառագայթներից մեկուսացնելու համար, նրա դռան առջև կառուցվել է մի մեծ մույթ, որը հուսալիորեն խոչընդոտ էր արևի ճառագայթների ներթափանցմանը, ինչը զրադաշտական կրոնի հիմնական, սկզբունքային պահանջն էր:

Ուրարտական տաճարը և նրան հարող աշխարհիկ կառույցը՝ պերիստիլ բակը, այսպիսով, ճարտարապետական վերամարմնավորման ենթարկվելով, դառնում են արեմենյան կառույց՝ հոր տաճար: Այնտեղ առաջ պաշտվում էր ուրարտական Յուարառա տաճարը, հիմա արդեն պաշտվում է արեմենյանների մեծ աստված Ահուրամազդը:

Հրո մյուս տաճարը, որ բացվել է 1957—58 թթ. պեղումների ժամանակ, պարտիկ հակոտին կից, նրա զիլափոր մուտքից 20 մետր դեպի արևելք, իր ծավալատարածական հորինվածքով նորովի մի ձև էր (գծագր. աղ. 50)՝ նրա հատակադիմն իր արտաքին 8×12 մ չափերով կազմված էր երեք մասից, մեծ դահլիճի՝ երեք որմնախորշերով և նրանցում կավաշեն նստարաններով,

փոքր սենյակից, որտեղ պահվել է անշեջ հուրը և կողքի երրորդ սենյակից, որտեղ պահվում էր զոհասեղանից հավաքված մոխիրը: Պարզ է, որ ծիսակատարությունները կատարվում էին դահլիճում, ուր կաշին ոչ միայն նստարաններ համապատասխան քանակով այցելուների համար, այլ նաև ամբողջ հատակ ծածկված էր 15 մ մետրի շերտով, որը կուտակվել էր զոհասեղանից:

Շենքի որմնախորշերը, ինչպես և նրա բոլոր դռները, վերջավորվում են կամարներով, որոնք այդ հորինվածքի նախնական օրինակներն են Հայաստանի վերերկրյա հինավուրց շենքերում, թեև հորինվածքի նման ձևը լայնորեն հայտնի էր նույնպես թե՛ վիժափոր կառույցներում և թե՛ հարթաքանդակներում: Այդ կամարները երկկենտրոն են՝ շարված արևի տակ չորացած աղյուսով և կավաշաղախով:

Ինչ վերաբերում է շենքի ծածկին, այն հարթ էր, փայտյա, որը վկայում են պեղումներից հայտնաբերված գերանները, եղեգն ու հեծուների ածխացած մնացորդները, այսինքն՝ ուրարտական ծածկերի ավանդական տարրերը:

Կոնստրուկտիվ նման օրինակների ձևերը կիրառվում էին նաև Հյուսիսային Միջագետքի Հատարում, Արևելյան Սիրիայի Խաուրանում, Միջին Ասիայում և այլն:

Նորից անդրապահանջով էրբերունիի հրո փոքր տաճարի հատակագծին, հարկ է նշել, որ այն որևէ զուգահեռ չունի արեմենյան տաճարաշինության մեջ:

Սակայն նման զուգահեռ մենք տեսնում ենք Մակուից 7 կմ հեռավորության վրա, Բայազետի պեղումներից, Սենգեր գյուղի լեռնային մասում. մի վիժափոր տաճար, գրեթե հարևան նման էրբերունիի հրո տաճարի հատակագծին՝:

Հուշարձանի ուսումնասիրողը՝ Վ. Մինորսկին գրում է, որ նման կառույցները, որոնք առաջ համարվում էին հրո տաճարներ, այժմ դասվում են խալդյան (ուրարտական—Վ. Հ.) մշակութային ոլորտի: Հատկանշական է, սակայն, տաճարի մուտքը մտա, վիժափոր դրսի ծածկի մասում, զեպի ուր տեսնում են սասիճանները, ժամանակին տվյալ հուշարձանի մի այլ ուսումնասիրող՝ է. Զիրիկովը, գտել է կրակի զոհարանների հետքեր:

Իրանում արեմենյան հրո տաճարների ծագումն արդյունք էր երկրում տեղի ունեցող կրոնական մեծ պայքարի, որ մղվում էր արեմենյանների կրոնում Իրանի հին ցեղերի աստվածների պաշ-

տամուների փոխարեն երկնքի մեծ աստծո՝ Ահուրամազդայի պաշտամունքը հաստատելու համար: Այդ պայքարը, որ ի վերջո հասցրեց կրոնական բարենորոգութեան, պետութեան կենտրոնաձիգ ուժերի ամրապնդման իմաստ ունէր:

Այդ պայքարը սկսեց Գարեհ I-ը, այն ամարտեց նրա որդին՝ Քսերքսեսը: Այդ մասին և պատմում պերսեպոլիսյան հայտնի արձանագրութեանը, որը հայտնաբերել ու յրապարակել է է. Հերցֆելդը 1937 թ.:

էրբունին Հայաստանում այն միակ վայրն է, որտեղ պահպանվել են արեմենյան ճարտարապետական կառուցցների մնացորդները: Սակայն, հավանաբար, Հայաստանում աքեմենյան շինութեաներ են եղել նաև Տուշպայում, ինչպես հիշատակում է Քսերքսեսն իր եղբղվյան արձանագրութեան մեջ՝ փորագրված Վանի ձալոյի վրա:

Արեմենյանների շինարարական գործունեութեանը Տուշպայում թերևս բացատրում է այն նմանութեանը, որ առկա է Վանի խորխորյան փոքր այրի և նսկչ-ի-Ռուստեմի վրամփոր դամբարանների հատակագծային լուծումներում, որոնց ընդհանրութեանը լրացուցիչ պարզարանումներ չի պահանջում:

Այսպիսով, էրբունիում մենք գտնում ենք արեմենյան ժամանակաշրջանի կառուցցներ, որոնք թե՛ իրենց ձևերով և թե՛ թեմատիկ մտահղացմամբ համապատասխանում են աքեմենյան ճարտարապետութեան ուղղութեանը: Նույնը, սակայն,

չի կարելի ասել այդ կառուցցների շինարարական տեխնիկայի մասին, որը անառարկելիորեն պաշխ է տեղական ավանդութեանը:

Հայաստանում այդ ժամանակ ուրարտական կառուցողական ավանդութեանը գեա կենդանի էին և, անկասկած, դեռևս կային փորձառու շինարարներ: Հենց նրանց ձեռքով էլ պետք է կառուցված լինեին էրբունիի արեմենյան բոլոր շինքերը:

Երկու ե կես հարյուրամյակ անց Հայաստանում, ինչպես և Առաջավոր Ասիայի մյուս երկրներում վերջ տրվեց Իրանի Աքեմենյանների տիրապետութեանը: Աքեմենյանների, սակայն, իրենց տիրապետութեան ընթացքում, չփոխեցին Հայաստանում ճարտարապետութեան պարզացման ընդհանուր ուղղութեանը, քանի որ տեղական շինարարական ավանդութեանն ավելի էտյուն ուզուս կեանս:

Այս նույն ժամանակաշրջանի ժողովրդական աների վերարբըյալ ուղադրալ տեղեկութեաններ է հաղորդում հույն պատմիչ Քսենոֆոնը (Վ դ. մ.թ.ա.) նա 401—400 թթ. (մ.թ.ա.) Հայաստանի հարավային մասում հանդիպում է «ղզյակ ամբոցների»՝ շրջապատված բնակավայրերով, որտեղ աներն ունեին աշտարակներ, իսկ կենտրոնական մասում նա տեսել է դետնափոր երգիկավոր տներ, ուր սպրել են նաև բնտանի կենդանիները<sup>6</sup>:

## ԳԼՈՒՆ ԵՐԿՐՈՐԿ

### ԱՆՏԻԿ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾԿՆԵՐ

Հայ ժողովուրդն իր մեջ կրելով տեղական էթնիկական խմբերի շինարարական մշակույթի ավանդները և ժառանգելով Հայկական լեռնաշխարհում ստեղծված Հայաստանի և ուրարտական ժամանակաշրջանի կառուցողական արվեստը, հայկական պետականության սկզբնական շրջանից ձեռնամուխ եղավ շինարարական ընդարձակ գործունեության: Հին քաղաքներում շարունակվող կառուցողական աշխատանքներին զուգընթաց ծավալվում է բազմաթիվ մեծ ու փոքր նոր քաղաքների շինարարությունը: Միջազգային տարանցիկ առևտրի ճանապարհների հանգույցներում ստեղծված առանձին քաղաքներ վեր են ծածկում ժամանակի առևտրաշահագործական խոշոր կենտրոնների: Ինքնին հասկանալի է, որ այդ ամենը, հատկապես նորաստեղծ քաղաքների ծավալումն շինարարությունները, պետք է ազդակ հանդիսանային ճարտարապետական արվեստի զարգացման գործին:

Այդ քաղաքներից առաջիմ հայտնի են՝

Անի: Անի (Կամախ) քաղաքը գտնվում է Դարանաղի գավառում՝ արևմտյան Եփրատի վրա: Հեռավոր անցյալում Կամախ (հին՝ Կումմախա) քաղաքը հանդիսացել է Հայաստանի հյուսիսարևմտյան հատվածում երբեմնի գոյություն ունեցած Հայաստ կամ Հայասա-Աղզի երկրի՝ «թագավորության» (XV—XIII դդ. մ.թ.ա.) մայրաքաղաքը:

IV դարի վերջում (մ.թ.ա.) Անի-Կամախը դառնում է նախկին Հայաստանի տարածքի վրա ստեղծված Փոքր Հայքի հայկական ինքնուրույն թագավորության կենտրոնը:

Անին հիշատակվում է նաև իբրև հայկական պանթեոնի գերագույն աստված Արամազդի պաշտամունքի գլխավոր կենտրոն<sup>1</sup>:

Այստեղ էին կառուցվում մեր թվականության I—IV դդ. հայ Արշակունիների «պինդ ու ճարտար շինվածք» ունեցող դամբարանները<sup>2</sup>: Ըստ երևույթի, այդ դամբարանների օրինակով է IV դարում կառուցվել Աղջի թաղակապ քանդակազարդ դամբարանը<sup>3</sup>:

Բնական է, որ հազարամյակների ընդերքից եկող քաղաքի կառուցվածքները պետք է վճռական նշանակություն ունենային նույն վայրում տեղի ունեցող կառուցողական արվեստի կազմավորման գործում:

Վաև: Վաևը (Տուշպա) դեռևս IX դարում (մ.թ.ա.), իբրև Ուրարտուի հզոր պետության կենտրոն, ունեցել է զարգացման բարձր աստիճանի վրա գտնվող ճարտարապետություն: Թե ի՞նչ կարգի կառուցվածքներ կարող էին գոյություն ունեցած լինել Վաևում՝ ուրարտական և նրան անմիջապես հաջորդող հայկական ժամանակաշրջանում, որոշակի գաղափար են տալիս ճարտարապետական այն բազմաթիվ հուշարձանների մնացորդները, որոնք պահպանվել են քաղաքում ու նրա շրջապատում: Այս տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև Մովսես Խորենացու մոտ հիշատակված Վաևի կառուցման հայտնի նկարագրությունը:

Խորենացու մոտ այնքան ճշմարտացի է տրված Վաևի ու նրա շուրջը գտնվող տեղանքի նկարագրությունը, որ իրավացիորեն ենթադրվում է, թե պատմիչն անձամբ տեսել է այն<sup>4</sup>: Հետևապես

բացատրված չէ, որ նկարագրվող կառուցվածքների մի մասը գոյություն ունեցած լինի պատմիչի ապրած ժամանակաշրջանում (V դ.) և նա տեսած լինի դրանք, իսկ որոշ մասի վերաբերյալ տեղեկությունները բաղած լինի տեղացիների մոտ պահպանված՝ նախնիներից եկող ճիշդություններից:

Հետաքրքրական է, որ եթե բաղադրի մի մասի կառուցվածքների վերաբերյալ պատմիչը տալիս է մանրամասն նկարագիր (շենքերի տեսակները, չարկանյութներ, շինանյութեր, գույները, անգամ տանածին շենքերի լուսամուտների դասավորությունը), ապա որոշ մասի նկատմամբ, շնայած խոսում է մեծ անածանցով, սակայն բավարարվում է միայն թվարկումով, նշելով, որ նրանց շինություն մասին ստույգ ոչ ոքից չի լսել և չարար չի գտնում իր պատմության մեջ հյուսել:

Նշանակում է, մանրամասն նկարագրվող կառուցվածքները կամ նա իրոր տեսել է, կամ նրանց վերաբերյալ ունեցել առավել ստույգ տրվյալներ:

Արարտական պետության անկումից հետո Տուշպան (Վանը), իբրև ժամանակի հայտնի բաղադրներից մեկը, շարունակում է գոյություն ունենալ նաև հայ ժողովրդի կազմավորման ժամանակաշրջանում: Վանի ժայռի վրա պահպանվել է Քսերքես Արեմենյանի եռալեզու արձանագրությունը:

Ութ հարյուր տարի անց Շապուհ II-ի՝ Հայաստանում կատարած ավերածությունների նկարագրությունների մեջ, երկրի առավել նշանավոր բաղադրների թվում նշվում է նաև Վանը: «Առան նաև Վան ամրոց բաղադր Տոզը գտնվառում, կրակ տվին, այրեցին, հիմքերը բանդիցին, այնտեղից էլ դուրս բերին հինգ հազար տուն հայ և տասնուութ հազար տուն հրեա»<sup>5</sup>:

Նշանակում է, մինչև Հայաստանում քրիստոնեական կրոնի ճանաչումը, Վանը իբրև բաղադր ունեցել է ավելի քան հազարամյա շինարարական կյանքի փորձ: Կասկածից վեր է, որ ուրարտական կառուցվածքները պետք է որոշակի դեր խաղային տվյալ միջավայրում բարձրացվող հայկական շրջանի նորակառույցների ստեղծման գործում, իսկ այդ ամենն իրենց հերթին, մեծագույն նշանակություն ունենային քրիստոնեական կրոնի ընդունումից հետո նույն վայրում կերտվող ճարտարապետության համար:

Արմավիր\* — Արմավիր բաղադրի և նրա ճարտարապետության մասին նախնական տվյալներ մեզ հաղորդում են գրավոր աղբյուրները, պատմամասայր Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», նույն աշխարհագիր Պտղոմեոսը, անուղղակիորեն նաև՝ Արմավիրի հունարեն արձանագրությունները<sup>6</sup>: Այս աղբյուրներից երևում է, որ բաղադրը միջնաբերդով հանդերձ գտնվում էր Արարատյան դաշտում, Արաքսի ափին, Այրարատ նահանգի Արագածոտն գավառում: Մովսես Խորենացին հիշատակում է Արևի ու Լուսնի (Ապրոնի և Արամիդի) և թագավորական դինաստիայի նախնիների տաճարը, պատգամախոսաբանը՝ սոսինների պուրակը, որակց կատարվում էին գուշակություններ:

Արմավիրի հիմնադրումը որպես Հայաստանի մայրաքաղաք տեղի է ունեցել IV դ. (մ.թ.ա.) երկրորդ կեսում, հավանաբար 330-ական թվականներին: Գավառմելայի ճակատամարտից հետո, երբ Ալեքսանդր Մակեդոնացին փայլուն հաղթանակ տարավ պարսիկների դեմ, Հայաստանի կառավարիչ Երվանդ-Օրոնտաբը իրեն Արեմենյան Իրանից անկախ հայտարարեց և մայրաքաղաքը Վանից տեղափոխեց Արմավիր: Այստեղ, դեռևս Արեմենյանների օրոք, տեղի էր ունեցել Արմավիր բլրի շրջապատում գտնվող բնակավայրերի համախմբման պրոցեսը՝ Արմավիրի տաճարային համայնքի շուրջը<sup>8</sup>: Այդ մասին են ակնարկում Մովսես Խորենացու «Հայոց պատմության» առաջին գլխի համապատասխան հատվածների, Արմավիրի հունարեն արձանագրությունների տվյալները:

Երվանդունիները որպես մայրաքաղաք պատմամար չէին ընտրել Արմավիրը: Այն ուներ բաղադրաշինական բացառիկ առանձնատեղություններ՝ ստրատեգիական մեծ առավելություններով օժտված բլուր-միջնաբերդ, որի շուրջը փոխված էր բաղադրը: Քաղաքի և միջնաբերդի հարավային ծայրերը ողողված էին Արաքսի ջրերով, որոնք օգտագործվում էին ոռոգման ու խմելու նպատակով: Քաղաքը գտնվում էր Արարատյան բարերկր դաշտում, այն պետության տնտեսական կենտրոնն էր, իր դարպացած երկրագործությունը, որը հաջողությամբ մրցում էր նրան նախալեռնային և լեռնային շրջաններում ծագող անասնապահության հետ: Այս դաշտում էին

\* Տեքստը՝ Գ. Ա. Տիրացյանի:

խաշանվում դեռևս հետո հայտնի առևտրական ուղիները:

Արաքս գետի հեռանալու կապակցությամբ Երվանդունի թագավորը մայրաքաղաքը տեղափոխում է Երվանդաշատ, Արաքսի ու Ախուրյանի միախառնման տեղում: Սակայն հնագիտորեն ապացուցվեց, որ մայրաքաղաքը մ.թ.ա. III դարի վերջին Երվանդաշատ տեղափոխվելուց հետո Արմավիրը շարունակեց պահպանել իր գոյությունն ու նշանակությունը նրա հաջորդ դարերում, մի հանգամանք, որն իր արտացոլումն է գտել նաև հույն աշխարհագիր Պտղոմեոսի վկայություն մեջ:

Մյուս պատճառը, որ Երվանդունիները Արմավիրը ընտրեցին որպես մայրաքաղաք՝ այստեղ գոյություն ունեցող ուրարտական քաղաքի ճարտարապետական մնացորդներն էին: Առայսօր կարելի է վստահությամբ պնդել, որ Երվանդունիները օգտագործել են ուրարտական ամրաշինական կառույցները, պալատական և տաճարային շենքերը, պահեստները և այլն: Արմավիրի բլրում, նրա ստորոտում և հարևան գոյություն ունեցող անցյալ դարում գտնված ուրարտական սև-պագիր արձանագրությունները վկայում են, որ հին Արմավիրի տեղում գտնվելիս է եղել Արգիշտիխինիլի ուրարտական քաղաքը:

Հնագիտական պեղումները բացահայտեցին Արգիշտիխինիլի քաղաքաշինական առանձնահատկությունը: Նրա քաղաքային թաղամասերը տարածվում էին երկու՝ Արմավիրի և ս. Դավիթ բլուրների միջև ընկած տարածությունում և վերջինից էլ այն կողմ: Բլուրների վրա տեղավորված էին քաղաքի երկու՝ արևելյան ու արևմտյան միջնաբերդերը՝ ըստ սկզբային արձանագրությունների տվյալների, որոնք հաստատվում են հնագիտական պեղումների արդյունքներով, բաղաբր բարգավաճել է հատկապես VIII դարում, հիմնադիր Արգիշտիի ու նրա որդի Սարգուրիի օրոք: Այն որոշ լճացում ապրելուց հետո վերակենդանացել է VII դարի վերջին, իր անկման նախօրյակին: Անկումը եղել է լուրի, թշնամու ձևերով. քաղաքը հրդեհվել է ու ավերվել: Քաղաքի արևմտյան հատվածները վեր են ածվել դամբարանադաշտի: Արևելյան մասում կյանքը շարունակվել է և աշխուժացել մ.թ.ա. IV դարից սկսած, Արմավիրը մայրաքաղաք դառնալուց հետո:


Հետախուզական պեղումները պարզեցին, որ

Արմավիրի քաղաքային թաղամասերը ձգվում էին բլրից դեպի արևմուտք<sup>10</sup>, դեպի ս. Դավիթ բարձունքը ձգվող ժայռոտ բլրաշարքի սկզբնական մասը, որտեղ տեղադրված էր մի հետաքրքիր համալիր՝ հելլենիստական ժամանակաշրջանի ագարակը: Մոտ 100 հեկտար տարածություն զբաղեցնող քաղաքի սահմաններն էին Արաքսի հին հունը՝ հարավից, նոր Արմավիր գյուղի բլրաշարքը՝ արևմուտքից, այժմյան Բամրակաշատ գյուղի հողային տարածությունները՝ չլուսիսից, Արմավիր բլուրը՝ արևելքից<sup>11</sup>:


Արմավիրի միջնաբերդի ճարտարապետական կոթողների մասին խոսելու պետք է օգտագործված ուրարտական կառույցները տարբերել մ.թ.ա. III—I դարերում կառուցվածներից: Օգտագործվող կառույցներից սկսած է նշել պարիսպը, որը բլրի գագաթը շրջափակում էր շրջա կողմից և որի մուտքը գտնվում էր ամբողջ հյուսիսարևմուտքյան մասում: Պարիսպը մեծ ուշադրությունով ամրացված էր արևմտյան մասում և փոքր կոնտրեֆորսներով մյուս հատվածներում: Պարիսպը կառուցված էր շքրված աղյուսներից՝ քարի ներքնամասի վրա: Պարիսպի բարերը մշակվածությամբ տարբեր ձևի ու աստիճանի էին: Հանդիպում են կիկլոպյան շարվածք հիշեցնող կոպուս մշակված բարեր, եզրերը հասած (ռուստովկո տրված) և երեսները լրիվ հարթեցված բարեր:

Այնտեղ, ուր պարիսպը հանդիպում էր բնական ժայռին, այն ուրարտական սովորույթյան համաձայն մշակվում էր և ստանում աստիճանավոր տեսք: Աստիճանների վրա բարձրանում էին պարիսպի քարե շարքերը<sup>12</sup>, Երվանդունիների օրոք, ամբողջ նրա հյուսիսարևմտյան կողմից ալեկի ապահով դարձնելու նպատակով, լանջն ի վայր կառուցվում է մի կիսակլորավուն աշտարակ: Նրա թվագրման համար նշանակություն ունեցող տարրերիչ առանձնահատկություններն են իրար միացող վեմերի ծայրերին փորված ծիծեռնակի պոչ հիշեցնող փոսերը<sup>13</sup> (լուսանկ. աղ. 37): Նրանց մեջ դրվում էին քարեր իրար միացնող մետաղե կամ փայտե կապերը, որոնք Հայաստանում հանդիպում են գալիս IV—III դարերի սահմանագլխին և հարատևում են ամբողջ հելլենիստական ժամանակաշրջանում:


Հնագիտական տվյալները հաստատում են, որ Երվանդունիները օրոք օգտագործվել են ամբողջ արևելյան մասում տեղադրված, նեղ միջանցքով բաժանված երկու մեծ, հինգ և երեք սենյակա-



ա



բ



Պլանները պատկերում են հին Երևանի քաղաքի հարավարևելյան մասի տեսակետից: Գծերը կազմված են հիմնականում ընդհանուր հարկային և հատման տվյալների հիմամբ: Գծերը կազմված են հիմնականում ընդհանուր հարկային և հատման տվյալների հիմամբ:

նոց շնեքերը՝ Ուրարտական այս շնեքերում նկատվող ավելի ուշ ժամանակի<sup>14</sup>, առաջին Տերթիս Տելլենիստական ժամանակաշրջանի բնակության Տնտրեր կարող են վկայել այն մասին, որ նրանք ծառայել են նույն նպատակին որպես բնակելի պալատական շնեքեր Երվանդունիների համար:

Ուրարտական մյուս կուսույցը, որն օգտագործվել է հին հայկական ժամանակաշրջանում, տեղագրված է բլրի գագաթին: Նրա շինարարական վերլուծությունը ցույց է տալիս, որ այն ենթարկվել է վերափոխությունների, վերջինը՝ միջին դարերում, երբ այն վեր է ածվել փոքրիկ ամրություն: Ուրարտական ժամանակաշրջանում ունեցել է քարե հարթակ, որի վրա բարձրացել է տաճարի շնեքը: Որ այն այդպիսի բնույթի շնեք է եղել, երևում է ոչ միայն նրա ամրոցի տարածքի նկատմամբ զերիշիտող դիրքից ու ուրարտական տաճարների բնորոշ հարթակի առկայությունից (Քոփրախ-կալե), այլ նաև նրա շարվածքում օգտագործված խոշոր, հոյակապ մշակված քարերից:

Որ ուրարտական այս շնեքը օգտագործվել է Տելլենիստական ժամանակաշրջանում, երևում է նրա հարավարևելյան մասում կատարված վերակառուցման աշխատանքներից: Այստեղի քարերի վրա երևում են այդ ժամանակաշրջանին բնորոշ ծիծեռնակապող ձև ունեցող՝ կապերի համար արված բները (լուսանկ. աղ. 35): Նման կապեր հաստատված չեն ուրարտական ճարտարապետության մեջ. նրանք Հայաստանում հանդես են գալիս ավելի ուշ: Այդ մասին են վկայում Հասան-ղալայի վաղ Տելլենիստական ժամանակաշրջանով թվագրվող դամբարանաբլրի թաղման սենյակի պատերի բարերը, ինչպես նաև Տուրքուրոնում, Յուպիլերում, Չերնակի-Քեփեում, Անիում, Երվանդակերում հանդիպող և, սնկատկած, մ.թ.ա. III—I դդ. թվագրվող բարերը<sup>15</sup>: Շինարարական տեխնիկայի այս բնորոշ առանձնահատկությունը, հավանաբար, Հայաստան է մուտք գործել արևմուտքից, հանրալիզիսական աշխարհից, որտեղ այն հանդիպում է զեռուս մ.թ.ա VI դարում: Ինչպես երևում է Գառնիի ամրոցի պարսպի ու տաճարի օրինակից՝ ծիծեռնակապող ձև ունեցող կապերը փոխարինվում են փակագծածնանկյունաձև կապերով, որոնց ծայրերը մտցվում էին իրար միացող վիմերի հատուկ փոսիկների մեջ և լցվում արձնեով: Արամլիքի Տելլենիստական

գարաշրջանի Արևի ու Լուսնի և թագավորական նախնիների տաճարի հատակագծային ու ծավալային առանձնահատկությունները մեզ անհայտ են: Այն, ինչպես և ուրարտական տաճարային շնեքը բարձրացել է քարե հարթակի վրա՝ Հավանաբար նա ունեցել է նույն ձևը, ինչ որ իրեն նախորդող ուրարտական տաճարը: Ուրարտական պաշտամունքային շնեքի օգտագործումը Տելլենիստական ժամանակաշրջանում, թեև կարող էր լինել փոխփոխություններից հետո, հաստատում է հին հայկական ճարտարապետության վրա ուրարտական ճարտարապետության թողած ազդեցության մասին վաղուց արտահայտված տեսակետը:

Արամլիքում ուրարտական ճարտարապետական կառույցների օգտագործման նաև այլ փաստեր են հայտնի, ինչպես դա երևում է, այսպես կոչված, մերձտաճարային շնեքի օրինակից<sup>16</sup>: Ուրարտական աղյուսաշեն սենյակների վերին շերտերում հանդիպող Տելլենիստական շրջանի հնագիտական բնորոշ նյութը, խեցեղենը, այդ թվում և գունազարդ քարե սպասքի բեկորները, մետաղե իրերն ակնհայտորեն վկայում են այդ սենյակների վերին հարկությունների բնակեցման մասին մ.թ.ա. III—I դարերում:

Տելլենիստական դարաշրջանում ամրոցի արևմուտյան մասում ծնունդ է առնում մի փոքր թաղամաս, որը, դատելով նրա մի շարք առանձնահատկություններից, կառուցվել է ամրոցի շարքային բնակչության համար: Այն բաղկացած է քառանկյունի հատակագիծ ունեցող բավականին դարձ սենյակներից (զծագր. աղ. 51 ա):

Միջին դարերում կատարված ավերածությունները մի կողմից և այդ կացարանների համեմատաբար համեստ բնույթը մյուս կողմից, առայժմ հնարավորություն չեն ընձևտում վերականգնելու անտիկ շրջանի այս թաղամասի ճարտարապետական մնացորդների քիչ թե շատ ամրոցչական պատկերը<sup>17</sup>:

Ուրարտական շենքերի փլատակների վրա առաջանում են Տելլենիստական ժամանակաշրջանի կայարաններ, որոնց հատակագծման տառանձնահատկություններից մեկն այն է, որ նրանց մեծ մասը կոթնած է անմիջականորեն ուրարտական հին պարսպին: Այստեղ հնարավոր եղավ պարզել շինարարական երեք հորիզոնների գոյության փաստը: Սենյակների պատերը, ի տարբերություն ուրարտական սենյակների պատերի, ավելի նեղ են (0,80—1 մ) և կառուցված են միջին ու փոքր

չափերի բարեբոց: Պատերից մեկում օգտագործված էր ուրարտական ժամանակաշրջանի խարխուլ:

Երկու իրար դուգահեռ, բայց տարբեր աստիճանի վրա կանգնած պատեր, որոնք իրենց մի շարք հատկանիշներով արմատապես տարբերվում են ուրարտականներից (մեկի լայնքը 0,50, մյուսինը՝ 1 մ, իսկ ուրարտական պատի լայնքը 2,80 մ), շարված են ուրարտական պատի քարե հիմքերից վերև: Հնարավոր եղավ որվագծել մի սենյակի բառանկյունի (6,60×4) հատակագիծ: Պատերի պահպանված վերջին շարքերը կազմված են անմշակ քարերից՝ հարթ երեսները դեպի դուրս: Պատերի լայնությունը 0,70—0,80 մ է:

Սենյակի շերտագրական առանձնահատկությունը այն է, որ նրա հարավային նեղ պատը տեղադրված է ուրարտական պատի քարե լայն ներքեմանակի վրա, որից բաժանված է մոտ 0,30 մ հաստությամբ հողի շերտով:

Նոր Արմավիրի բլրաշարքի արևելյան մասում բացվող համալիրի մնացորդները վերաբերում են հելլենիստական դարաշրջանի ագարակին: Այն բաղկացած է բնակելի ու տնտեսական բաժանմունքներից՝ խմբված ներքին բակի շուրջը (գծագր. աղ. 51 բ): Բնակելի սենյակները ջեռուցվում էին բուխարիների օգնությամբ, որոնք իրենց դուգահեռներն ունեն հելլենիստական քաղաքներում: Տնտեսական մասն աչքի է ընկնում իր հնձաններով: Նրանցից մեկն ունի խաղողի տրորման սվաղապատ հրապարակ՝ համեմատաբար մեծ բանակով հումք մշակելու համար: Մյուս հնձանը բաղկացած է խաղողը ճղմելու քարե սալից և խաղողի հյութի կուտակող քարե զուտից: Ագարակում հստակ երևում են շինարարական երկու հորիզոններ, սակայն ագարակում գտնված հնադրական նյութը և առաջին հերթին խեցեղենն ունի իր անմիջական դուգահեռները միջնաբերդի նյութերում, որով ագարակը թվագրվում է մ.թ.ա. III—I դարերով<sup>18</sup>:

Արմավիրի հելլենիստական դարաշրջանի բնակելի ճարտարապետության օրինակները, միջնաբերդի արևմտյան փոքր թաղամասում և ագարակում, որոշակի նշանակություն ունեն Հայաստանի հելլենիստական բնակավայրերի, ինչպես նաև բնակելի համալիրների հատակագծման ու շինարարական տեխնիկայի առանձնահատկությունները հասկանալու համար: Մինևույն ժամանակ Արմավիրը Հայկական լեռնաշխարհի առ-

աջմ այն հաղվազուտ հուշարձաններից է, որտեղ ակնառու է հին հայկական (հելլենիստական) և ուրարտական շերտերի փոխհարաբերությունը և որտեղ հին հայկական ճարտարապետությունը ակնհայտորեն զարգացել է ուրարտական միջավայրում:

Արշամաշատ: Արշամաշատը հիմնադրվել է III դարի կեսերին (մ.թ.ա.) և հանդիսացել Մոփքի Արշամ թագավորի աթոռանիստ քաղաքը: Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան մասը, ուր գտնվում էր Մոփքը, տնտեսական և մշակութային առումով առավել զարգացած էր: Այդտեղով էր անցնում Դարեհի՝ արևելքն արևմուտքին միացնող, այսպես կոչված, «արթայական ճանապարհը»: Հ. Մանանդյանն այդ նպաստավոր պայմաններով է բացատրում այն հանգամանքը, որ հին Հայաստանի անդրանիկ քաղաքները հիմնադրվեցին Մոփքում<sup>19</sup>:

Արշամաշատը ստեղծվել էր իբրև հելլենիստական տիպի քաղաք և, որպես այդպիսին, Հայաստանի առաջին քաղաքներից մեկն էր:

Արկաթիոկերտ: Արկաթիոկերտ կամ Կարկաթիոկերտ քաղաքը եղել է Մոփքի աթոռանիստ մյուս քաղաքը: Ենթադրվում է, որ այն հիմնադրել է Մոփքի Զարիադրես թագավորի որդի Արկաթիասը<sup>20</sup>:

Արկաթիոկերտի ճշգրիտ տեղը հայտնի չէ<sup>21</sup>: Պլինիոսը հիշատակում է միայն, որ Արկաթիոկերտը գտնվել է Տիգրիսի մոտերքում:

Արշամաշատի նման, այս քաղաքը նույնպես հին Հայաստանի հելլենիստական բնույթի անդրանիկ քաղաքներից է:

Երվանդաշատ: Երվանդաշատը հիմնադրել է Արտաշես Առաջինի նախորդ Օրոնտես-երվանդը (մ.թ.ա. III դարի վերջերին)<sup>22</sup>: Խորենացին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում ոչ միայն երվանդաշատի տեղի, այլև նրա կառուցման վերաբերյալ. «Յաուրս սորա փոխին արբունիքն Արմալիրն անուանեալ ըլլոյց. քանզի էր հեռացալ գետն Երասխ, և ի յերկարել ձմերախնոյն, և ի դառնահոտ փշմանէ հիւսիսոյ պարոցեալ ձուլեալ վտակն՝ ոչ ոստեք արբուցումն բաւական թագաւորականին գտանէր տեղոյ: Ընդ որ նեղեալ Երուանդայ, նա և ամրագունի ևս տեղոյն էլեալ ի խնդիր՝ փոխեք զարքունիսն յարմատս կոյս, ի քարակտուր մի բլուր, զորով պատ առեալ Երասխայ՝ ընդդեմ Ախուրեանն հոսի գետ: Պարսպէ դրուրն, և ի ներքսագոյն քան զպարիսպն ընդ

բառու: տեղիս կտրեալ զբարինսն մինչև ի չտասակս ըրոյն հաւասար զետոյն, մինչև զինկ շուրջ գիտոյն ի փորութեն, ըրմպլեկաց պատրաստութիւն: Չմիջնարևերն ամբագրցանէր բարձր պարսպով և զրոնս պղծնիս կանգնէր ի միջոցի պարսպին. և էլանելիս երկաթիս ի ներքուստ ի վեր մինչև դռանն, և ի նմա որողայլիս իմն ծածուկս ընդ մեջ աստիճանացն, որպէս զի ըմբռնեցի՝ իթէ որ գաղտ էանելով դամկ կամիցի վարքայն: Եւ էր, ասեն, երկզիմի, որպէս զի մինն լիցի պատամորաց արքունի և ամենայն էլեմտից հասնպար: Խորնբնեանիք, իսկ մեծն գիշերային և մարդոգաւայն»<sup>25</sup> (ընդգծումը մերն է—Ա. Ս.):

Երվանդաշատը, այսպիսով, կառուցվել է Արարիի ափին, նրա՝ Ախուրյան գետի հետ միացման տեղում և հանդիսացել է Հայաստանի նոր մայրաքաղաքը:

Նորաստեղծ մայրաքաղաքից ոչ հեռու կառուցվում է մի փոքր քաղաք՝ Բագարանը, ուր Արմավիրից տեղափոխվում են պաշտամունքի բոլոր կուրքերը. «բայց Երուանդայ շինեալ զքաղաքն իւր և փոխեալ անդր զամենայն ինչ յկրմաւրայ ուրոյն ի կոտցն, զոր ոչ օգտու իւր համարեալ յիւրն փոխել ի քաղաքն... այլ հետադոյն ի նմա նէ... նման իւրոյ Բաղափն շինեաց Բաղափ ուր ի վերայ գետոյն Ախուրեանայ, և անուանեաց Բագարան, այս ինքն թէ ի նմա զբազնաց յօրինեալ է զկառնութիւն. և փոխեաց անդր զամենայն գիտունն որ յկրմաւր»<sup>24</sup> (ընդգծումը մերն է—Ա. Ս.):

Թե ինչպիսին էր Երվանդաշատը կամ ինչ կառուցվածքներ են եղել նրանում, անհնարին է աստեց մանրամասն պեղումների որևէ ստույգ բուն ասել: Սակայն պահպանված վերերկրյա ավերակների մնացորդներն անկամ ճարտարապետական-կառուցողական արվեստի սեռականտից մեծ հետաքրքրություն են ներկայացնում:

Քորամանյանը, որ անձամբ եղել է ավերակների վալրում, գրում է. «Որք անցա Ախուրյանի ձախ ափը... ամեն քայլափոխին կնկատվեին մեծամոլծ շինութիւնաց հետքեր՝ ցրված մինչև Հաջիբալայում գյուղի ստորին սահմանները»<sup>25</sup> Դյուզը (Հաջիբալայում), կարելի է բնել, ամբողջովին շրջապատված է պարտեզներով ու բանջարանոցներով, որոնց բոլորտիքը իբրև շրջանակ շարված են ինն շինությունների Բաղված մեծազանգված Բաբե, որոնց վրա պահված են տակափին

երկաթե կապերու տեղեր»<sup>25</sup> (ընդգծումը մերն է—Ա. Ս.):

Մեկ այլ տեղ, անդրապոնալով Երվանդաշատի շինարարության մեջ Երկաթի դորածություն մասին հորենացու վկայությունը, Քորամանյանը գրում է.

«...նա ինքս տեսել եմ Երվանդաշատի բերդի մեջ պարիսպներից թափված քարերի վրա երկաթի կապի նշանները: Երվանդաշատի բերդը շինված էր հնագույն պարիսպների նման, մեծազանգված որձամառի անտաշ Բաբեով, որոնք միմյանց մոտ լավ ամրացնելու համար կպցված էին երկաթե կապերով, թեև երկաթները հանված են, սակայն կապի տեղերը փորված մնում են քարերի վրա»<sup>26</sup> (ընդգծումը մերն է—Ա. Ս.):

Հետևաբար Երվանդաշատը իբրև մայրաքաղաք ոչ միայն ունեցել է ճարտարապետական բազմապիսի կառուցվածքներ ու բարձր պարիսպներով շրջապատված անսովիկ միջնաբերդ, այլև շինարարական այնպիսի ավանդույթներ, երբ պարիսպների դռները կառուցվում են պղնձից, ուստի՝ հանները՝ երկաթից, իսկ պատերի կառուցվածքներում, իբրև շաղկապով միջոց, օգտագործում մետաղյա գամեր:

Բնականաբար շինարարական նման ավանդույթներով ստեղծված կառուցվածքները պետք է որ լինեին մայրաքաղաքին արժանի՝ ճարտարապետական բարձրարժեք հուշարձաններ:

Երվանդակերտ դաստակերտը: Երվանդակերտի կառուցումը նորենացին վերագրում է Երվանդաշատի հիմնադիր Երվանդին (III—II դդ. մ.թ.ա.)՝ «Քաղցր է ինձ ասել յաղագս զեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի, զոր յօրինեաց նույն ինչն Երուանդ զեղեցիկ և շքեղ յօրինածովը»<sup>27</sup> Այնուհետև, հովվերգելով «պայծառ շինածովը լուսուկան» կառուցվածքները, գրում է. «Եւ այսպիսի զեղեցիկութեան զիր՝ անթթթելի իմն զոգցես ի բարձրաւանդակ թագաւորանիսան զհայնցուածան ունի. և արդարև բերրի և թագաւորական դասակերտն»<sup>27</sup>:

Երվանդակերտում կիրառվել է շինարարական այն տեխնիկան, ինչ Երվանդաշատում:

Քորամանյանը, խոսելով հնագույն մի կառուցվածքի մասին, գրում է. «Երվանդակերտի մեջ կա մի տարբերություն կա, այն ալ Բաբեուն երկաթ կապերով իրար կապված չիճեղ է, շատ մը Բաբեուն վրա անեղծ մնացած են կապերու տեղերը»<sup>28</sup> (ընդգծումը մերն է—Ա. Ս.):

Արտաշատ\*։ Հին Հայաստանի Արտաշատ մայրաքաղաքը հիմնադրվել է մ.թ.ա. II դ. 180—170-ական թթ.։ Դա տեղի է ունեցել մի դարաշրջանում, երբ Մերձավոր արևելքի ժողովուրդների, նաև հայ ժողովրդի կյանքում կատարվում էին պատմական խոշոր, կարելի է ասել, շրջադարձային նշանակություն ունեցող անցքեր։

Արտաշես Ա-ն (189—160) պետական խոշոր գործիչ ու զորավար էր և լավ էր հասկանում, որ երկրի ղեկավարությունը նվաճված անկախությունը պահպանելու համար պետք էր միավորել հայկական հողերը, զորեղացիները հայկական թագավորությունը, որին միացվեցին հայ բնակչություն ունեցող մի քանի ժայռամասային նահանգներ և գավառներ։ Նրա օրոք մեծ հոգատարություն ցուցաբերվեց երկրի տնտեսության հիմքը հանդիսացող հրկրագործության զարգացման նկատմամբ<sup>29</sup>։ Դա ամենը չէր, պետք էր ստեղծել երկիրը քաղաքականապես միավորող կենտրոն-մայրաքաղաք և հիմնադրել քաղաքներ՝ արհեստագործությունը, առևտուրը զարգացնելու և քաղաքները թագավորության տնտեսական և քաղաքական հենարանը դարձնելու համար։ Արտաշեսը հիմնադրեց իր և իր հոր՝ Զարեհի անունը կրող մի քանի քաղաք և բաղաբառուպ ավաններ։ Վերջապես Արտաշեսի մեծագործությունների պսակը կազմեց Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրումը։

Արտաշատը հիմնադրվեց Արարատյան դաշտի առավել բերրի և ջրաուտ մասում, առևտրական ճանապարհների հանգույցում, Արարատ լեռան դիմաց, Արաքս և հնում Արարսին յայտնող միացող՝ Մեծամոր գետերի միջև ընկած լուռնկյունու վրա։ Տեղանքն այստեղ հարմար էր. Արաքսի ափին դնվում էր մի ընդարձակ բլրախումբ՝ նրա առջև փոփոց արգավանդ դաշտերով, պաշտպանված ջրային հզոր պատնշներով։ Քաղաքը շրջափակվեց ընդարձակ պարիսպներով՝ ջրով լցվող փոսով։

Հույն, հռոմեացի և հայ հեղինակները մեծ գովառանքով են խոսում Արտաշատի մասին։ Ստրաբոնը Արտաշատի մասին գրում է. «Այս վերջինը գեղեցիկ է շինված և երկրի թագավորանիստ քաղաքն է։ Նա գտնվում է գետաժողովում, որը նման է թերակղզու, և նրա շուրջը, բացի պարանոցի մասից՝ գետի առջև ձգվում է պարիս-

պր, իսկ պարանոցը փակված է խրամով ու պատվարով»<sup>30</sup>։ Պլուտարքոսը խոսելով Արտաշատի հիմնադրման մասին, երկրակցույունը՝ «այսպիսով կատարյալ է մեծ և իրիստ գեղեցիկ բաղաք, որն անվանվեց թագավորի անունով և յուշակվեց Արմինիայի մայրաքաղաք»<sup>31</sup>։

Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրումը խոշոր նշանակություն ունեցող իրողություն էր, ուստի նրա արձագանքները շուրջ յոթ դար անց հասել են Մովսես Խորենացուն, որը բերում է նաև ավանդաբար պահպանված որոշ տեղեկություններ. «Երթեալ Արտաշեսի ի տեղին, ուր խոսնին Արաքս և Մեծամոր, և հաճեալ ընդ բլուրն շինէ քաղաք յիւր անուն անուանեալ Արտաշատ։ Չեննսու լինի նմա և Երասխի փայտիւր մայրեաց. վասն որոյ տնայխատ և երազ շինեալ՝ կանգնէ ի նմա մեհեան, և փոխի ի նա ի Բազարանէ զպատեհին Մեծամորեաց և զամենայն կուրքս հայրենիս. բայց զկապողոնի պատեհին արտաքոյ քաղաքին կանգնէ հուպ՝ ի ճանապարհն։ Եւ յարուցանէ ի քաղաքէն երուանդայ զգեղութիւն Հրէիցն, որ փոխեալ էին անդր յԱրմաւրայ, և նստուցանէ զնոսա յԱրտաշատ։ Նա և զամենայն վայելչութիւն քաղաքին երուանդայ, զոր տարեալ էր յԱրմաւրայ և զոր տեղին արտրեալ նորա՝ փոխէ յԱրտաշատ, և առաւել ես լինեցնէ յորինէ իրրեւ զքաղաք արքայանիստ»<sup>32</sup>։

Արտաշատը արտա ճանապարհով Մերձավոր արևելքի առևտրական-տնտեսական և մշակութային խոշոր կենտրոններից մեկը։ Մեծ էր Արտաշատի նաև վարչաքաղաքական զեքն ու նշանակությունը։ Նա դարձել էր Հայոց աշխարհի սիրտը և մայրաքաղաքի անտեսական-քաղաքական ու մշակութային կենտրոնի նշանակալից զեքնը կատարեց շուրջ 500 տարի։

Արտաշես արքան իր բազմակողմանի և ծավալուն գործունեությամբ հանդիսացավ հայկական հողերի միավորողը, հայկական միասնական և հաստատուն պետության հիմնադիրը։

Գտնվելով Հայաստանի հին պատմության կիզակետում, Արտաշատը, բնականաբար, բաժանել է հայ ժողովրդի ճակատագիրը՝ հաճախ է դարձել ռազմական ընդհարումների թատերաբեմ, աղբյուր է, նորից վերականգնվել։

Մ. թ. 58 թ. աշնանը հռոմեական զորքերը՝ Կուրյունի գլխավորությամբ գրավեցին Արտաշատը և 59 թ. դարնանը, ստիպված լինելով լեռանով,

\* Տեքստը՝ Բ. Ն. Առաքելյանի

Հիմնահատակ ավերեցին և հրկիզեցին քաղաքը: Բայց շուտով այն վերականգնվեց:

II դարում, երբ Վաղարշապատը Բագավորա- նիստ դարձավ, Արտաշատը Հյորդրեց մայրաքաղաքի իր դերն ու նշանակությունը: Բայց 360-ական թթ. Սասանյան Շապուհ՝ արքայի զորքերը կործանեցին քաղաքը և Երա հազարավոր ընկալիչներին գերի տարան: Ավերված, խիստ թուլացած Արտաշատը V դարում մայրաքաղաքի դերը դիջեց Դվին քաղաքին և, կորցնելով հերձմնի խոշոր քաղաքի նշանակությունը, բայց տվեց իր խզճուկ գյուղությունը մինչև VII—VIII դդ., ապա անհետացավ պատմության թատերաբեմից:

Մինչև 1920-ական թթ. Արտաշատի տեղն իսկ հայտնի չէր, իսկ երբ այն որոշվեց, քաղաքի հետքերը չէին երևում, ուստի տարակուսանքը շարունակվեց և հաղթահարվեց միայն ձեռնարկված պեղումների շնորհիվ:

1967 թ. Հին Արտաշատի տեղանքին կից գտնվող Փոքր Վեդի գյուղում ջրմուղի գծի անցկացնելիս հայտնաբերվեցին լատիններեն արձանագրություններ, որոնցից մեկը փորագրված էր հինգ սալ բարեքի վրա՝ 8,5 մ ընդհանուր երկարությամբ և 80 սմ լայնությամբ<sup>33</sup> (ղծադր. աղ. 54 գ):

Արտաշատի պեղումները ձեռնարկելու լավ առիթ էր առաջացել և որոշ նախապատրաստական աշխատանքներից հետո Հնայկական իՊՀ գիտությունների ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հնագիտական արշավախումբը 1970 թ. սկսեց անցյալի այդ նշանավոր քաղաքի հնագիտական ուսումնասիրությունը:

Առաջին հարցը, որը փորձեց պարզել Արտաշատի հնագիտական արշավախումբը, վերաբերում էր քաղաքի տեղանքին և գրաված տարածքին: Մակայն քաղաքի սահմաններն ստույգ որոշելը մեծ դժվարություն էր ներկայացնում այն պատճառով, որ այստեղ դաշտերը զարբեր շարունակ մշակվել են, դյուղերն են հիմնադրվել և քաղաքի հարթավայրային մասում փոփոխված թաղամասերի հետքերն անհետացել են: Այնուհանդերձ կարելի է ասել, որ Հին Արտաշատը գրավել է շուրջ 450—500 հեկտար տարածություն, այսինքն շատ ավելի մեծ քաղաք է եղել, քան կարելի էր ենթադրել պեղումներից առաջ:

Քաղաքի տեղագրություն հետ սերտորեն կապ-

ված է նաև նրա պաշտպանական համակարգի հարցը: Վերևում նշվեց, որ Մովսես Խորենացու վկայությամբ քաղաքը պաշտպանված է եղել Արաքս և Մեծամոր գետերի ջրային հզոր պատնեշով, իսկ Ստորաոնը վկայում է քաղաքի պարիսպների և ամբարտակների մասին: Տեղանքի զննումն այժմ ներկայացնում է հետևյալ պատկերը. քաղաքի միջնաբերդը և կենտրոնական ողջ խաղամասը տեղագրված են եղել Խորվիրապի մեծ բլրախումբ կազմող ինը ժայռոտ բլուրների վրա, որոնք բռնում են շուրջ 100 հեկտար տարածություն, իսկ նրանց առջև հարթավայրում՝ դեպի հյուսիս-արևելք և հարավ փռված են եղել քաղաքի թաղամասերը: Այդ բլրախմբից 350—400 մ դեպի հարավ-արևելք գտնվում են ևս երկու բլուր, որոնց վրա պարիսպների հետքերը նույնպես պահպանվել են:

Պարսպով շրջափակված են եղել Խորվիրապի բոլոր բլուրները, բայց պարիսպները կառուցվել են ոչ թե իրարից անջատ, այլ կազմել են մի միասնական, ընդարձակ և պաշտպանական հզոր համակարգ: Կողք կողքի գտնվող կամ կից բլուրներն օղակող պարիսպների իրար կապացած են նրանց միջև գտնվող ցածրադիր մասում կառուցված զուգուկ պատնուրով կազմված միջանցքներով: Պարսպի հետքերը նկատելի են բոլոր բլուրների շուրջ, բայց տեղ-տեղ նրանք բլուրովին շեն պահպանվել, քայքայվել են անգամ նրանց հիմքերի տակի ժայռերը: Պարսպը կառուցված է եղել տեղական կարմրավուն, կարծր, բայց ճեղքեր տվող և քայքայվող քարից, օգտագործվել է նաև տեղական մոխրավուն մարմարը՝ ոչ սրբատաշ, կոպիտ մշակվամբ (լուսանկ. աղ. 38 ա): Վեմերով շարված են եղել, հավանաբար, պարսպի հիմքեր, իսկ վերևում թիրեա եղել է հում աղյուսի շարվածքը, որի հետքերը երևան եկան հյուսիսային (1-ին) բլրի պարսպի որոշ հատվածներում:

Պարսպը վարպետորեն հարմարեցված է տեղանքին, մեկ դուրս, մեկ ներս թիքվելով: Եսկյուններ կազմելով Հնարավորություն է ընձուղել թշնամուն հարվածելու և՛ ճակատից, և՛ թևերից, իսկ բլուրների անկյուններում կանգնեցված են եղել կիսաշրջանաձև կամ  $\frac{2}{3}$  շրջան կազմող աշտարակներ:

Ամենամեծ և բարձրադիր բլրի հյուսիսարևելյան լանջին պեղումներով բացվեց պարսպի երկու գիծ: Արտաքին պարսպից, որն ավելի հինը,



Ք. 53. Առաջադ. ա) 1-ին բլրի վրա բացված ամրացի նախակապի՝ բ) 1-ին բլրի վրա բացված զարկոցի (զնադարի արևաամայի) նախակապի՝ գ) 1-րդ բլրի նախակապի՝ դ) սեղաններից ճեղք

նախնականն է, սյուսյունվել են լավ մշակված բարեխից շարված հիմքերը՝ կանտնավոր հենարաններով (կանտրոֆորաներով) և անկյունային շջ շրջան կազմող աշտարակով: Ներքին պարիսպը կառուցված է ավելի ուշ, առաջինին զուգահեռ և երկուսի միջև թողնված է 30—70 սմ ներքին միջանցք: Ներքին պատը, որ բացված է 2—3 մ բարձրությամբ, ամբողջովին շարված է ճեղքված բարձրով: Այս պատի մեջ աղ-տեղ հանդիպում են ավելի հին, հավանաբար, արդեն շենքերից վերցված լավ մշակված սրբատաշ քարեր, որմնասյան բեկորներ՝ կրաքարից:

Արտաշատի հիմնադրման ժամանակ հիմնական պարիսպը կառուցված է ամբողջահիմքային պահանջների հմուտ կիրառմամբ և աչքի է ընկնում իր ընդարձակությամբ: Ուշագրավ է, որ հռոմեական պատմիչ Կոննելիոս Տակիտոսը 59 թ. Արտաշատի ավերումը և հրկիզումը հռոմեացիների կողմից փորձում է արդարացի և բազմաթիվ պարիսպների ընդարձակությամբ: Նա գրում է, «Քաղաքը հրի ճարակ դառնալով հիմնահատակ կործանվեց, որովհետև պարիսպների ընդարձակությունը պատճառով չէր կարելի պահել այն առանց պահպանների ճեղք դնել և մենք բավական զորք չունեինք՝ և՛ քաղաքը պահելու, և՛ պատերազմելու համար, իսկ եթե այն կանգուն և անպահպան թողնվեք՝ կկորչին քաղաքի առման և՛ փառքը, և՛ օգուտը»<sup>34</sup>: Տակիտոսը արդո՞ք այն պարիսպների ընդարձակությունն է նկատի ունեցել, որոնց հետքերը երևում են բլուրների վրա, թե՛ եղել են պարիսպներ նաև հարթավայրում փոխված թաղամասերի շուրջը, սուսյում պարզ չէ, թեև Մարբանի հիշատակությամբ քաղաքի շուրջը և զետի տողն ձգված է եղել պարիսպ: Տակիտոսը ուղեպետ վկայում է, որ Արարսի ջրերը թրջում են քաղաքի պարիսպները<sup>35</sup>:

Պարսպի հաստությունը տարբեր մասերում տարբեր է՝ 2,80 մետրից մինչև 4,80 մետր: Պարսպի, ինչպես և շենքերի հիմնապատերի հետքեր կարելի է նկատել Խորվիրապի բոլոր բլուրների վրա: Շենքերի հետքեր տեղ-տեղ երևացին նաև հարթավայրում՝ բլուրներից նարավ և արևելք:


Միայն պեղումները կարող են պարզել շենքերի ընդլայնը և շինարարական սկզբունքներն ու առանձնահատկությունները, փաստական նյութ տալ լուսարանելու հիմնավորը քաղաքի կյանքին, կենցաղին և մշակույթին վերաբերող շատ հարցեր: Այդ նպատակով էլ Արտաշատի հնագիտական

արշավախումբը ձեռնարկեց քաղաքի պեղումները, աշխատանքը կենտրոնացնելով առաջին հերթին բլուրների հյուսիսային ծայրի (1-ին) բլրի վրա և 1973 թ. ավարտեց նրա համառոտած պեղումները: Բլուրը շրջափակված է ոչ շատ կանոնավոր եռանկյունու տեսք ունեցող պարսպով: Արևմտյան անկյունում գտնվող մուտքին կից, արևելյան անկյունում և հյուսիսային պատի կենտրոնական մասում տեղադրված են աշտարակներ: Նրեք կողմերից պարսպին հարում են բնակելի սենյակներ և դարբնոց-գինազործական արհեստանոցներ: Հյուսիսարևմտյան և հյուսիսարևելյան կողմերում այս կացարանների և արհեստանոցների շարքը ոչ լայն միջանցքով անջատված է ավելի ներս ընկած շենքերից: Այդ հանգամանքը դուրացնում էր զինվորների շարժումը պարսպի մի հատվածից մյուսը, իսկ միջանցք-փողոցից տեղ-տեղ անցում է թողնված դեպի պարսպի աշտարակները և անկյուն կազմող մասերը: Բլրի հարավարևելյան կողմից կացարանների և արհեստանոցների շարքն անմիջապես հենվել է պարսպին և դեպի ներս նրանց մուտքերը բացվել են բակի վրա: Միանգամայն ակնհայտ է, որ բլուրը կառուցապատվել է միասնական նախագծով: Բլրի վրա պարզ նկատվում է շինարարական երկու շրջան: Առաջին շրջանի շենքերը բարդվելուց կամ ավերվելուց հետո բլուրը կրկին կառուցապատվել է նախկինը հիշեցնող նախագծով, միայն թե միջանցք-փողոցները փոքր-ինչ նեղացել և ավելի են մտտեցվել պարսպին (գծագր. աղ. 52 ա):


Բլուր շենքերը կառուցապատված են տեղական ձեղրված և կուպիտ մշակված, ոչ սրբատաշ քարերով և, հավանաբար, ունեցել են կավե սվաղ: Դուրբին պիտուրքով արհեստանոցներից երկուսը կառուցված են միևնույն նախագծով և ունեն երեք բաժանմունք՝ քուրայի, ընդհանուր սենյակ և քուրայի սենյակին կից միջանցք, հավանաբար վառելիքի համար. միայն բաժանմունքների շափերն են տարբեր (գծագր. աղ. 52 բ):

Ավելի լավ են պահպանվել հյուսիսարևելյան հատվածի կացարան-սենյակները, որոնց պատերը տեղ-տեղ կանգուն են մնում 2—2,60 մ բարձրությամբ: Սենյակներից մեկում գրված է կրաքարից փոքր շափերի երկու խորիսկ՝ հավանաբար փայտյա սյուների համար:

Պարսպին հարող բնակելի սենյակները հասակազուգուց և կառուցվածքով մեծ մասամբ նման են



ս



դ

Ճ. 1 2 3 4  
 Ա. 1 2 3 4

Աղ. 53. Արտաշատ. ա) 8-րդ բլրի սկզբամեկրոզ բացված համվածի հատակապլանը, բ) 8-րդ բլրի վրա բացված խեցեգործական արվեստանոցի հատակապլանը (Բրժման ճեղքով), գ) 8-րդ բլրի վրա բացված բազմերթ հիպոկաուստով անբլակի հատակապլանը

իրար: Հավանարար գրանք եղև են զինվորական կացարաններ:

Միջանցք-փողոցներից ներս ընկնող սենյակներն ավելի ընդարձակ են: Իրանցից մեկի մեջ տեղադրված են կարասներ, որոնք մեջ նավթ (մազութ) է լցված եղև: Ինչպես երևում է, այս բլուրը բնակեցված է եղև զինվորականներով և նրանց ընտանիքներով: Բլուրն ամբողջությամբ ունեցել է սպառնալուսկան նշանակություն:

Այս բլրի վրայի կառուցվածքները երկիցս ավելով են և երկու անգամ չրկիցվել: Հրկհի հետքերը նկատելի են ամենուրեք: Շենքերի մի մասն ունեցել է յարթ ծածկ, գերանների վրա փոխված է եղև եղևի, որի հետքերը վառված վիճակում պաշտ նկատելի են ծածկերի փլվածքների տակ: Պետք է ենթադրել, որ բլրի կառուցվածքներն առաջին անգամ թշնամին ավելել է մ.թ. 59 թ. գարնանը, երբ Կորսուլոնի գլխավորած հռոմեական իգվեններն ամբողջապես ավերեցին և ճրկի-զեյյին հայոց մայրաքաղաքը:

Բլրախմբի հարավարևմտյան կամ Արարսի փին մոտեցող, ծայրի 8-րդ բլրի վրա ևս բացվեցին պարսպի առանձին հատվածների հետքեր և բազմաթիվ շենքերի հիմնապատեր, որոնք դասավորված են պարսպին զուգահեռ ընթացող փողոցների երկու կողմերում, արտաքին շարքով հարեղով պարսպին: Այստեղ նկատելի են շինարարական տարբեր, նույնիսկ երեք-չորս շրջանների հետքեր: 8-րդ բլրի վրա ևս կյանքը սկսվել է մ.թ.ա. II դ. քաղաքի հիմնադրումն օրին, և ի տարբերություն 1-ին բլրի, հարասել է մինչև IV դարը: Այլ խոսքով, այս բլրի վրա հայտնաբերված թև՝ ճարտարապետական կառուցվածքները և թև՝ նաղդտական նյութերը կերպարում են Արտաշատ քաղաքի գոյության համարյա ամբողջ ժամանակշրջանին և դրանով իսկ մեծ նշառքեր բերում են ներկայացնում:

8-րդ բլրի վրա ևս շինարարությունը կատարված է միասնական նախագծով և նույն սկզբունքով, ինչ 1-ին բլրի վրա: Բացված փողոցների երկայնքով երկու կողմերից ձգվում են շենքերի արտաքին պատեր, որոնք մի ամբողջական գիծ են կազմում, իսկ ներսում բացվում են սենյակների բաժանմունքները (գծագր. աղ. 53 ա. լուսանկ. աղ. 37 յ): Շինարարական երկրորդ և երրորդ շրջանում փողոցների ու շենքերի նախնական գծագրի որոշ խախտումներ են նկատվում: Առաջին փողոցի վրա կառուցված է եղև նաև

մի բաղնիք (գծագր. աղ. 53 գ): Բաղնիքից ոչ հեռու բացվեցին իրար կից շրավազաններ՝ մեկը մեծ, երկուսը փոքր: Իրանց պատերը կառուցված են կրաշաղախով, որի մեջ ազուցված եղևզնի ցողունների տեղերում պահպանվել են ուղղահայաց անցքեր: Ավազանների հատակներին շարված են եղև թրծած աղյուսներ: Ինչպես երևում է, ավազանը բաղնիքի հետ կապված չէ: Առաջին փողոցի վրա բացվել է նաև խնցքործական արհեստանոց՝ խնցքեղեն թրծելու հնցող (գծագր. աղ. 53 ը):

Շենքերի հետքեր բացվել են նաև հարևան 7-րդ բլրի վրա, որտեղ նույնպես շինարարական տարբեր շերտերի առկայությունն ակնհայտ է:

Արշավախմբի համարակալմամբ 2-րդ բլրի վրա, որն ամենամեծն է ու բարձրագիբը, նկատելի են անտիկ դարաշրջանի բազմաթիվ շենքերի հետքեր, որոնց պատերը շարված են տեղական կարմրավուն ճեղքված քարերով: Սակայն այս բլրի վրա ընդարձակ տարածությամբ թափված են կրաքարի մանր ու մեծ տաշվածքներ, ուստի պետք է ենթադրել, որ այստեղ եղև են սրբատաշ կրաքարից կառուցված, գուցե և սյունազարդ, նշանավոր շենքեր: Այդ գտնը հաստատող նշաններ էլ կան: Այստեղ բանվել է կրաքարից պատրաստված սյան խարսխ և քիվի բեկոր՝ լավ մշակված և անտիկ շրջանին բնորոշ գեղեցիկ անցումներով: Բլրի գագաթին ևս, հավանաբար, եղև ևս աչքի ընկնող շենքեր, սակայն այժմ ևս այստեղ պահպանված են վաղ միջնադարյան փոքրիկ ամրոցի բազանին հաստ պատերը՝ կրաշաղախ միջուկով և երեսպատման քարերով:

Սրբատաշ կրաքարից կառուցված և սյունազարդ շենքերը, ինչպես երևում է, շատ են եղև Արտաշատում, քանի որ քաղաքի տարածքի տարբեր մասերում, հին և նոր գերեզմանոցներում՝ անդիպում են ավերված շենքերի քարեր, միացման երկաթև գամերի համար արված փոսիկներով, ինչպես և սյունների խարսխներ (լուսանկ. աղ. 38 ը): Վերջիններիս շափերի տարբերությունները վկայում են, որ նրանք պատկանել են տարբեր շենքերի: Գտնվել են նաև սյունների լավ մշակված գլաններ: Իրանցից մի քանիսը Արտաշատի հին շենքերի ավերակներից XIX դ. տարվել են Արարատ գոյզը՝ օգտագործելու այստեղ կառուցվող եկեղեցու համար, և այժմ ընկած են այդ եկեղեցու շուրջը, իսկ առանձին մասեր դրված են

եկեղեցու մուտքի առջև և ներսում: Գրանց՝ անտիկ Արտաշատին պատկանելը կասկածից զուրկ է, մասնավանդ, որ նրանց վրա պահպանվել են գլանների տարբեր մասերն իրար միացնելու երկաթե գամերի համար արված փոսիկները: Անտիկ դարաշրջանի ավելի փոքր շափերի սյուների երկու գլան և խարսխանների բեկորները գտնվել են Արտաշատի շրջանի Ազատավան գյուղում:

Այժմյան Արարատ քաղաքի մոտերքի հանքերից բերված մանրահատիկ կրաքարը լավ մշակված, հղկված վիճակում իր տեսքով հիշեցնում է մարմարը: Այդպիսի սպիտակ քարից կառուցված շենքերը շքեղությամբ են հագորդում քաղաքին (շենքերն ունեցել են ճարտարապետական հարդարանք-որմանակարներ): Նրանց բանալակներից առաջվա գտնվել է մի փոքրիկ բեկոր: Շենքերի սենյակները ներսից ունեցել են կրաշաղախից պատրաստված ձևավոր քիվեր, որոնց տարբեր շափերի նմուշները գտնվել են բլուրներից բավականաչափ հեռու՝ հարթավայրում, վարած արտի մեջ: Մի հին շենքի տեղից հավաքված սվաղի բեկորները, 7—8 գույնի ներկված, վկայում են, որ շենքերը հարգարվել են նաև որմնասկանրերով: Գույններից, մասնավոր կարմիրն իր տարբեր երանգավորումներով, նարնջագույնը, դեղինները, սևը, սպիտակը աչքի են բնկնում իրենց հստակ երանգներով: Պետք է հուսալ, որ հետագայում կբացվեն որմնանկարների, ինչպես և խճանկարների հետքեր և նմուշներ:

Շենքերը մասամբ ծածկված են եղել թրծած կավե կղմինդրներով, որոնց շատ օրինակներ գտնվել են քաղաքի տարբեր մասերում: Կղմինդրներն ունեն անտիկ դարաշրջանին բնորոշ ձևավորում, իսկ շատերի արտաքին մակերեսը ծածկված է կարմիր ներկով: Փռվածքի կղմինդրների (ստլենների) իրար կից բարձրադիր կրիքով ծածկվել են երկնիստ, եռանիստ և կիսախողովակաձև կղմինդրներով (կալիպտերներով):

Արդ, քաղաքահանական ի՞նչ սկզբունքներով է կառուցվել Արտաշատը և ի՞նչ ճարտարապետություն է ունեցել. Ստրաբոնի ասելով՝ «քարաշեն», իսկ Պլուտարքոսի վկայությամբ՝ «մեծ ու խիստ գեղեցիկ» այս քաղաքը: Առաջին բլրի պեղումներից երևում է, որ այստեղ կառուցումները կատարվել են միասնական նախագծով, որը հարմարեցված է անկանոն եռանկյունաձև բլրի տեղանքին: Շենքերը հարել են պարիսպներին, ապա

եկզ փողոց-միջանցքներով անջատվել բլրի վերին մասից, որտեղ կառուցվել են մի քանի շենքեր՝ կենտրոնական մեծ հրապարակի երկու կողմերում: Անբերորդ բլրի վրա բացվել է հինգ զուպահու փողոց, բլրի թևք լանջին, որի տարածքը մեծ չէ և հատող փողոցներ չկան: Այստեղ ևս կառուցումները կատարվել են միասնական նախագծմամբ, որը ոչ մեծ խախտումներով պահպանվել է նաև քաղաքի ավերումներից և վերականգնումներից հետո՝ դարեր շարունակ: Շենքերը փողոցների վրա կաղմել են իրար կպած համաստրած շարքեր:

Չորրորդ և ամենափոքր բլրի պեղումները վկայում են, որ այն հանդիսացել է քաղաքի բլուրների վրա գտնվող միջնաբերդի և պարսպափակ թաղամասերի ներքին սաղմակոմունիկացիոն հանգույցը: Այն ամրացված է պարիսպներով և աշտարակներով, որոնց միջև թողնված է 1,60 մ լայնությամբ անցում, որով միայն կարելի էր 1-ին, 2-րդ և 3-րդ բլուրներից անցնել ղեպի մյուս բլուրները, ինչպես և հակառակ ուղղությամբ (գծագր. աղ. 52 գ):

Քաղաքաշինության հետ սերտորեն կապված էր նաև բնակչության համար կոմունալ-կենցաղային հարմարություններ ստեղծելու հարցը: Խոսքը վերաբերում է, առաջին հերթին, քաղաքի ջրամատակարարմանը: Քաղաքի տարածքում գտնված խոշոր և փոքր շափերի, ինչպես և ծնկաձև կավե խողովակները (նաև տեղի բնակիչների դաշտային աշխատանքների ժամանակ երևան եկած ջրմուղի գծի հատվածը) տարակույս չեն թողնում, որ քաղաքի ջրամատակարարման հարցը լուծվել է հաջողությամբ (լուսանկ. աղ. 39 ր): Խմելու ջուրը կարող էր բերվել Գաննիից տասնյակ կիլոմետր հեռավորությունից, բայց Արաքս գետից էլ է կավե խողովակներով ջուր վերցվել: Մյուս կարևոր միջոցառումը բաղնիքների կառուցումն էր: 8-րդ բլրի պեղումներով, առաջին և շորրորդ փողոցների վրա կավագործ արհեստավորների մի թաղամասում հայտնաբերվել են երկու բաղնիքի՝ Նետքերը, որոնք գտնվում են մեկը մյուսից բնդամենը 26—30 մետր հեռավորության վրա:

Քաղաքի տարածքում կատարվող դիտումների, երկրագործական և մեխորատիվ աշխատանքների ժամանակ հայտնաբերվել են նաև մի քանի այլ բաղնիքների հետքեր: Ուշագրավ է, որ բոլոր բաղնիքներն ունեցել են կրկնակի հատակ և

ստորնատակյա ջեռուցման համակարգ-հիպոկատստ, որը բնորոշ է հունա-հռոմեական թերմերին: Բաղնիքների վերին հատակները հիմնվել են կլոր կամ բառանխտ կալվ խողովակների, բոլորակ կամ բառակտուր պլյուններից կազմված միակտուր բարե մեծակների վրա: Նշված հինգ տիպի հենակների օբիեկտներն էլ հայտնաբերվել են Արատաշատում: Վերին հատակը կազմվում էր հենակների վրա գրվող մեկ կամ երկու շերտ խոշոր աղյուսների փոփածրից, որի վրա լցվում էր անջրասփափանց շագախի շերտը, սովորաբար 5—7 սմ հաստությամբ: Հռոմեական նշանավոր ճարտարապետ Վիտրուվիոսն (մ.թ.ա. I դ. երկրորդ կես) առաջարկում է, որ անջրաթափանց շագախը պատվում էր ծեծած աղյուսից և կրից՝ 2:1 հարաբերությամբ: Մեղրաները վկայում են քաղաքային բնակչության կոպտուր-կենցաղային բավականաչափ բարձր մակարդակի մասին:

Բյուրեղերի առջև փութած հարթավայրի թաղամասերը տանջվին շեն պեղված, ուստի դժվար է որոշակի խոսել այս քաղաքի նախագծման մասին, բայց գտնելով բյուրեղերի վրա կատարված պեղումներից, կարելի է ենթադրել, որ գուպուրդ-վիտում են եղել քաղաքաշինության տեղական և հեյլենիստական սկզբունքները՝ աստվանների գերակշռությամբ:

Քաղաքի ճարտարապետության վերաբերյալ փաստացի նյութերը համեմատաբար բազմազան են և պատկերն աճելի որոշ էլ Շենքերի մեծ մասը կառուցվել է տեղական կարմիրավուր, ճեղքումով պատրաստված անտաշ քարերով և ծածկվել է գերանների վրա փովող եղզնի վրա լցվող հողի հարթ ծածկով, մի ավանդույթ, որը սկիզբ տանելով Հին արևելքում, իսկ Հայաստանում սովորական լինելով ուրարտական ժամանակներից, հարստանել է մինչև XX դարը: Դրա կողքին քաղաքի շատ շերտեր, մանամանկ աստարակական խոշոր շենքեր, կառուցվել են բաց գույնի մանրաճախիկ կրաքարից, գերազանց մշակումով: Հայտնաբերված մի քանի տասնյակ սյան կրաքարի խորտիտները, սլոնների գլանները և դեղնեղիկ անջրաններով ու ատամնավոր քիվերի բեկորները ցույց են տալիս, որ քաղաքում եղել են զգալի թվով սլոնապարզ շքեղ շենքեր, որոնք, դատելով հայտնաբերված մեծ քանակությամբ ծածկի կղմինդրներից, ունեցել են կղմինդրի երկվել: Ծածկ (լուսանկ. աղ. 39 ա): Նման ծածկերը

Հայաստանում առաջինում և սովորական են դասում հելլենիստական դարաշրջանում:

Ուշագրավ է նաև շենքերի ներսի հարդարանքը: Ինչպես նշվեց, պատերը զարդարվել են գույնզգույն սվաղով և որմնանկարներով: Հայտնաբերված երկրաշափական զարդեր կրող բեկորների հարուստ երանգները, խորը գծերով երկրաշափական պատկերների (Ֆիգուրների) բաժանված լինելը մեղմեցնում են նրանց պոմպեյան որմնանկարչության առաջին ոճին: Սովորական քանակի շատ շենքերում օգտագործվել է պարզ գունավոր սվաղը:

Հին ժամանակներից ի վեր հայ ժողովուրդն աչքի է ընկել իր շինարարական գործունեությամբ, որն իր զրսևորումը, բնականաբար, գտել է նաև Արատաշատ մայրաքաղաքում: Քաղաքի պարիսպները կառուցվել են քարի ճեղքված, կիսամշակ, մասամբ և մշակված խոշոր բլոկներից: Քարի երկիր Հայաստանում շինարարությունն իրականացվել է առավելապես քարով, տեղ-տեղ երևում են աղյուսաշար պատեր ու շինություններ՝ հում աղյուսից, և միայն մի փաստ է մեզ հայտնի, երբ շինությունը կառուցվել է թրծած աղյուսով: Սակայն թրծած աղյուսն օգտագործվել է քաղաքի բաղնիքներում, որոնք ունեն կրկնաբար հաստակ և աղյուսներով կազմվող վերին հատակը հենվել է մասամբ քարից պատրաստված, բայց առավելապես կավե աղյուսներով շարված կամ խողովակաձև հենակների վրա:

Ճեղքված քարերով կառուցված շենքերի պատերը սվաղված են կրաշաղախով, իսկ կիրը ստացվել է կրաքարը այրելու եղանակով: Կրաշաղախից են պատրաստվել նաև շենքերի ներսի հարդարանքի համար օգտագործված ձևավոր քիվերը: Շենքերի ծածկի համար, ինչպես վերևում նշվեց, լայնորեն օգտագործվել է կղմինդր՝ ծեծած աղյուսից և կրից կազմված անջրաթափանց շաղախը: Այսպիսով կարելի է հավաստել, որ շինարարության հետ կապված են եղել մի քանի արհեստներ՝ բարտաշուկայունը, քարի որմնադրությունը, աղյուսագործությունը, կիր պատրաստման արհեստը և կրով սվաղ անելը, կղմինդրների արտադրությունը արհեստը:

Ճարտարապետության հետ սերտորեն կապված էր նաև ատաղձագործությունը՝ շենքերի փայտյա մասերի պատրաստման արհեստը: Ուշագրավ է, որ Արատաշատում դեպի փողոց դուրս եկող մի

Հիմնական պատի մեջ հայտնաբերվել են շարվածքի ամբողջ երկարությամբ ազդեցված փայտյա զլաններ՝ պատին կայունություն հաղորդելու նպատակով:

Կարևոր նշանակություն է տրվել քաղաքի պաշտպանության հարցին:

Արտաշատը գտնվելով Արարսի և Մեծամորի միացման տեղում, երկու դեղատրի միջև ընկած տարածքում, պաշտպանված է եղել ջրային հզոր պատանշներով: Արարսի վրա նետված Տափերական կոշվող կամուրջը կառուցված էր անմիջապես քաղաքի առջև և, հավանաբար, քաղաքի պարսպից դուրսսը բացվում էր նրա վրա և այստեղից մայր ճանապարհը տանում էր հարավարևմուտք՝ դեպի Տիգրանակերտ: Մեծամորի վրա նետված կամուրջից սկիզբ առնող ճանապարհը հյուսիսարևմտյան ուղղությամբ տանում էր դեպի Վաղարշապատ, իսկ հարավարևելյան ուղղությամբ՝ դեպի Իրան:

Կետերով պաշտպանված լինելով հանդերձ, ինչպես նշվեց, քաղաքն ուներ պաշտպանության արհեստական հզոր համակարգ, բաղկացած ընդարձակ պարիսպներից, ջրով լցված փռից և ամբարտանակներից:

Հայտնաբերված են մեծ քանակությամբ և տարբեր շափի կլոր քարեր, որոնց մի մասը, հավանաբար, օգտագործվել է քարնետ մեքենայով, ձևերով և պարստիկով թշնամու վրա նետելու համար<sup>37</sup>:

Քաղաքի պարսպին մոտեցող թշնամու զինվորների պաշարողական մեքենաների վրա նետվել են նավթի (մաղուխի) մեջ թաթախված բոցավառվող լաթեր: Այդ առթիվ վկայություն է պահպանել հռոմեական պատմիչ Դիոն Կասիոսը (մոտ 155—235 թթ.), որը ճիշտ է ոչ թե Արտաշատի, այլ Տիգրանակերտի վերաբերյալ: Նա պատմում է, որ երբ Լուկուլոսը պաշարեց Տիգրանակերտը, քաղաքի պաշտպանները մեծապես վնասեցին նրան նետաձուլքյամբ և պաշարողական մեքենաների վրա նավթ թափելով, որը բոցավառվում էր այնպես, որ հրկիզում էր այն ամենը, ինչի կաշում էր և հանգցնելը հեշտ շէր<sup>38</sup>:

Ուշաքաղվ է, որ 1-ին բլրի վրա պեղումների ժամանակ պարսպի տակ ներսից մի քանի տեղում գտնվելիս նավթի (մաղուխի) շորացած զանգվածները, իսկ սենյակներից մեկում զետեղված կարասների մեջ լցված է եղել նավթ:

Քաղաք թափանցած թշնամու հեծելազորի զեն

գործածվել են նաև երկաթի «փշեր», որոնք նետապարի ծայրերի պես սուր ծայրերով, Լուսնյուզ և բառաճյուզ «փշեր» էին, որոնք թափվում էին փողոցներում և ինչպես էլ ընկնեին՝ ծայրը ցցված էր մուտմ, և թշնամու հեծելազորը անցնելիս, «փշերը» մտնում էին ձիերի սոբերը և շարքից հանում նրանց:

Դատելով քաղաքի տարածքի ընդարձակ չափերից կարելի է ենթադրել, որ այն ունեցել է մինչև հարյուր հազարի հասնող բնակչություն, որը նյութական ապահովության համար անհրաժեշտ էր քաղաքային բաժանման ընդարձակ և զարգացած տնտեսություն: Ինչպես անտիկ դարաշրջանի քաղաքներին, Արտաշատին ևս բնորոշ է եղել քաղաքային տնտեսության կրթ հիմնական ճյուղերի՝ երկրագործության, արհեստային արտադրության և ստեղծի բաժանման շուկայի բարձր մակարդակը: Քաղաքների բնակիչները հելլենիստական և ուղ անտիկ դարաշրջանում կազմում էին ինքնավար համայնք, որն ուներ իր հողերը՝ քաղաքի շուրջը և քաղաքին պատկանող բնակավայրերում: Հին Հայաստանում քաղաքներին, տաճարներին, թագավորին ու այլ մեծամեծներին պատկանող մասնատիրական բնակավայրերը կոչվում էին ազարակներ<sup>39</sup>, որոնց բնակիչները ստրուկ կամ կիսաստրուկ (կոլոն) երկրագործներ էին:

Տնտեսության նման կարգը, անշուշտ, նկատելիորեն ազդում էր քաղաքաշինության վրա: Քաղաքը խիտ էր կառուցապատված, քանի որ քաղաքի ներսում չկային այգիներ, երկրագործության և անասնապահության հետ կապված տարածք, շինություններ և այլ հարմարանքներ:

Հույն հռոմեացի և հայ հեղինակները Արտաշատի մասին խոսում են մեծ զրվատանքով, իսկ պեղումները առարկայորեն և ցայտուն կերպով են բացահայտում հայոց այդ հինավուրց մայրաքաղաքի փառահեղ պատկերն իր բազում կողմերով: Թևև պեղված է քաղաքի մի փոքր մասը, բայց արդեն կարելի է ասել, որ Արտաշատը հանդիսացել է Հին Հայաստանի ոչ միայն վարչաքաղաքական, այլև առևտրատնտեսական և մշակութային խոշորագույն կենտրոնը և այդ դերը խաղացել է շուրջ հինգ դար շարունակ: Արտաշատն, ավելի քան Հին Հայաստանի մյուս բազմաները, այն հնոցն է, որտեղ համաձուլվել են հայկական հին հայրենիք ամառական ու նորամուտ հելլենիստական մշակույթները և ձևավորվել է հայ

կական հեղինակական մշակույթը: Դրա շնորհիվ հին հայկական մշակույթը ևս հարստացել և նշանակալիորեն առաջադիմել է, իսկ երկիրն իր արմատավայել տեղն է գրավել Հելլենիստական արևելքի երկրների շարքում:

Չարիչառ: Այս քաղաքը կառուցվել է Վանա լճի հյուսիսարևելյան ափին, Աղիովիտի դաշտում:

Եսրենացին նկարագրելով IV դարում պալատական զավաղությունյան զո՛ւ գնացած Գնելի թագուհու, գրում է. «Բակ Արշակայ ճանդերձ նախարարոք իջուցևալ ի դաշտ Աղիովտի զղին Գնելայ՝ թագուհայ յարժուևական քաղաքին Չարիչառի»<sup>12</sup> (ընդամենը մեկն է—Ա. Ս.): Նշանակում է Հարիչառը եղն է արքունի քաղաք: Երբ է հիմնադրվել այս քաղաքը՝ ստույգ հայտնի չէ: Ըստ Մանանդյանի, այն հավանաբար, հիմնադրվել է III—II դարերում (մ.թ.ա.)<sup>13</sup>: IV դարի նշանավոր քաղաքների շարքում հիշատակվում է նաև Չարիչառը և այն նամարվում «մեծ քաղաք»: Նույն ժամանակընթացում, Հայաստանի մի շարք քաղաքների ավերածությունների ժամանակ, Չարիչառայց գերվում են 10000 հայ և 14000 հրեա բնաբնիկ<sup>14</sup>:

Կասկածից վեր է, որ կես հազարամյակից ավելի կյանք ունեցող այդ քաղաքը, որը IV դարում դասվում էր ժամանակի խոշոր քաղաքների շարքը և հայտնի էր իբրև «արքունական քաղաք», պետք է ունենար իր դիրքին համապատասխան բարձրարժեք կառուցվածքներ:

Չարենավան: Զարեհավանը գտնվում էր Երվանդաշատի հարավային կողմում, Բագրևանդի շրջակայքում: Ընթացրվում է, որ այն հիմնվել է Արտաշես Ա-ի որդի Չարեի կողմից (II դ. մ.թ.ա.)<sup>15</sup>: Դեռ IV դարում այն Հայաստանի նշանավոր քաղաքներից էր: Նույն դարում, հայկական մի շարք քաղաքների վերջ հիշատակված ավերածությունների ժամանակ, Զարենավանից գերվում են 5000 հայ և 8000 հրեա բնաբնիկներ<sup>16</sup>: Այնուհետև, բոտ երևույթին, այն կորցնում է իր նշանակությունը և V դարում հիշատակվում իբրև մի աննշան գյուղ<sup>17</sup>:

Նախնավան: Նախնավանի հիմնադրման ժամանակը հայտնի չէ, դեռևս II դարում այն հիշատակվում է Պողոտեոսի մոտ: Այս հնագույն քաղաքը, գտնվելով համաշխարհային առևտրի կարևորագույն ճանապարհներից մեկի՝ հյուսիսային մայրուղու վրա, իբրև ժամանակի առևտրի

ճանաչված կենտրոններից մեկը դարձրեց շարունակ նշանակալից դեր է խաղացել միջուգային առևտրում:

IV դարի երկրորդ բառորդում պարսկական ռորթերի կողմից մեծ ավերածությունների ենթարկված Հայաստանի նշանավոր մի շարք քաղաքների թվում նշվում է նաև Նախնավանը<sup>18</sup>:

Տիգրանակես: Տիգրանակեսը կառուցվել է Մեծ Հայքի Աղձնիք դավառում, այժմյան՝ Փարկին քաղաքի տեղում<sup>19</sup>: Տիգրան Բ-ն (95—56/55), հիմնադրելով այն, դարձրել է իր լայնարձակ պետության մայրաքաղաքը<sup>20</sup>: Մայրաքաղաքի ներսում կառուցվել էր ամրակուռ միջնաբերդը: Արքունի ապարանքը գտնվում էր պարիսպներից դուրս: Ապարանքային համալիրը շրջապատում ստեղծվել էին «պարսեպներ», պրոսարաններ, սրահակեր ու «ձկնավազաններ»<sup>21</sup>:


Քաղաքը շրջապատված է եղել բարձր և չափազանց լայն պարիսպներով: Պարիսպների բարձրությունը հասել է մինչև 50 կանգունի (մատավորապես 25—26 մետրի), իսկ լայնությունն այնքան մեծ է եղել, որ պատերի մեջ կառուցվել են պահակադորի դինամոցներ ու զանազան տեսակական այլ շինքեր<sup>22</sup>:

Տիգրանակեսը ստեղծվել էր որպես ոչ միայն ժամանակի խոշոր պետություններից մեկի մայրաքաղաք, այլև երկրի տնտեսական ու մշակութային կյանքում մեծագույն դեր խաղացող կարևորագույն կենտրոն: Հետևապես նրա նշանակությունը դուրս էր սովորական մայրաքաղաքի լինելու սահմաններից: «Տիգրան Բ-ն,—գրում է Մանանդյանը,—հասկացել էր, ըստ երևույթին, որ նահապետական հայ կենցաղի, տնտեսական ու կուլտուրական առաջդիմության կարող էր մեծապես նպաստել նկղիլիստական տիպի քաղաքը, որը կենտրոնն էր արևմտների, արդյունաբերության և առևտրի զարգացման»<sup>23</sup> (ընդգծումը մեկն է—Ա. Ս.):

Տիգրան երկրորդն իր արշավանքների ընթացքում Կապադովկիայի, Կիլիկիայի, հավանաբար և Ատորիքի, Կորդոբի Ադիարների հեղինակական 12 քաղաքների բնակչությունը բռնի կերպով տեղափոխում է Հայաստան և մեծ մասամբ բնակեցնում Տիգրանակեսում:

Նշանավոր հույն հետադր Ամֆիկրատեսը, արտրվելով Աթենքից, մեկնում է Սելևկյանների հրավերը և ապաստան գտնում Տիգրան Երկրորդի արքունիքում: Այդտեղ էր ժամանակն ճանաչված

IMP. CAESAR DIVI IERUSALEM  
 OPTIMO SAECULO RM. DACIAE  
 TRIB. POT. P. XXIII COS. SVI



Ար. 54. Տիրանակիրտ, ա) հունարեն արձանագրություն, բ) բաղարի ավերակները, գ) թուրք. հիպո, զ) Արտաշատի բաղարի լամպների արձանագրությունը

գրող և փիլիսոփա Սևորոզորոս Ավեսպիացին, որը գրել է Տիգրան Երկրորդի պատմությունը:

Նեղլեհիստական քաղաքների բնակչության հետ մեկտեղ բռնի կերպով մայրաքաղաք են գաղթեցնում նաև հայ իշխանավորներին ու ազնվականներին:

Քաղաքի ազգաբնակչությունն ինքն էլ իր կողմից էր նպաստում շինարարության և քաղաքը ընդարձակման աշխատանքներին:

Որքան էլ այդ տեղեկությունների մեջ շարժազանցություններ լինեն, ականջատ է, որ Տիգրանակերտի կառուցումը յանդիսացել է ժամանակի ճարտարապետական-կառուցողական արվեստի զարգացմանը մեծապես նպաստող՝ պետական նախաձեռնությունը ու հսկողությունը կատարված շինարարական հսկայածավալ գործ:

Թև ինչ տիպի ու շարժի կարող էր եղած լինել քաղաքը, ստույգ դժվար է ասել: Ֆրանկանների մի մասն այն համեմատում է Նիկոնի և Բարելոնի հետ, իսկ ոմանք՝ հեղեթիստական տիպի քաղաքների հետ, որը համոզիչ է:

Տիգրանակերտը բազմամարդ ու գեղեցիկ քաղաք լինելու հետ մեկտեղ, նաև անառիկ բերդ էր: Նա, բացի արհեստական մեծ ամրություններ ունենալուց, կառուցված է եղել «...պաշտպանված ու դժվարամատչելի լեռնային տեղում»<sup>52</sup>: 69 թվականի (մ.թ.ա.) զարնանը, երբ Լուկուլոսի զորքերը պաշարում են Տիգրանակերտը, «հոռունակների բոլոր շանքերը՝ գրավելու քաղաքը գրոհով և պատերազմական մեղքերանների օգնությամբ՝ մնացին ասպարդյուն...»: «Ամիսնուր շարունակ Տիգրանակերտը մնաց կանգուն և անպարտելի»<sup>53</sup> (ընդգծումը մերն է—Ա. Ս.): Քաղաքը գրավվեց միայն 69 թվականի աշնանը, հուրի վարձկան զորքի դավաճանությունն պատճառով:

Տիգրանակերտը հետագայում նույնպես մնում է իրրև անառիկ բերդաքաղաք և «բազմամարդ մեծ կենտրոն»: Ուղիղ մեկ դար հետո Տիգրանակերտը պաշարվում է պարթևների կողմից, սակայն քաղաքը դրավելու նրանց բոլոր ճիգերն անցնում են ասպարդյուն:

Տիգրանակերտի «բարձր ու անմատչելի պարիսպները» հիշատակվում են նաև մեր թվականության I—II դարերում: Ավելի ուշ Տիգրանակերտի ամրությունների մասին ուշաքրավ տեղեկություններ ենք ստանում Շապուհ II-ի (309—379) մի հարձակման արժիվ:

«Ըն Յունացն մատուցեալ մեծաւ բռնությամբ յնցոցին ի պարիսպն դիոշեցեալ էշսն: Եւ է այս գործի մերևալոյց անուաւոր, յերկից երկից արանց մղելով տարեալ, և ի ներքուստ կացնովք և սակարօք երկրբնանովք և կացաւոր մընովք՝ փորել՝ գ:իմունսն: Եւ զնախաւար աւառեալ զայն, ու ի հայկազեոյն Տիգրանայ հոծեալ և յարմարեալ որմունքն, քակեալ ընկեցին»<sup>54</sup> (ընդգծումը մերն է—Ա. Ս.):

Դժբախտաբար, Տիգրանակերտի ճարտարապետական ու ճի շուշարձանի վերաբերյալ նույնպես կոնկրետ տվյալներ չունենք: Ճիշտ է, գոյություն ունեն Տիգրանակերտ-Ֆարկին քաղաքի առանձին տեսարաններ պատկերող մի քանի նկարներ (քաղաքի ավերակների ընդհանուր տեսքը, արևելյան և հյուսիսային պարիսպների առանձին հանգույցները և այլն), իսկ պարիսպներից մեկի վրա IV դարում փորագրված է հունարեն արձանագրություն, սակայն դրանք հագիվ թև կարողանան հիմք հանդիսանալ Տիգրանակերտի սկզբնական կառուցվածքի մասին թեկուզ հեռավոր գաղափար կազմելու համար (գծագր. աղ. 54 ա, բ):

Այնուամենայնիվ, կասկածից վեր է, որ ժամանակի խոշորագույն պետություններից մեկի այդ նորաստեղծ մայրաքաղաքը, ուր տեղական ազգաբնակչության հոծ մասաների հետ մեկտեղ բռնի կերպով բնակեցվել էին հեղեթիստական բազմաթիվ քաղաքների բնակիչներ և որը բնակելի, արհեստագործական, առևտրական, հասարակական, մշակութային (թատրոնի) նորակառույց շենքերի, իշխանական դպանների և արքունի պալատական խոշոր համալիրի հետ մեկտեղ ուներ պաշտպանական մի հզոր սիստեմ և «Առաջավոր Ասիայի ամենամեծ հեղեթիստական քաղաքների, Ասիկիայի և Անտիոքի մրցակիցն էր լինելու»<sup>55</sup>, պետք է որ այդ ամենին արժանի իր կառուցվածքներով մեծապես նպաստած լիներ Երկրի ճարտարապետական մտքի ու կառուցողական արվեստի զարգացման գործին:

Մծուրն: Ենթադրվում է, որ Մծուրնը կառուցվել է Արածանիի և Նրա ձախ վտակ Կարասովի միջև:

Փավստոս Բուզանդը, խոսելով Աշտիշատ այցելած մի իշխանի մասին, գրում է. «Սրանից հետո... իբրևլ Եփրատ գետի ափը... երկու գետերի խառնուրդի մոտ, որտեղ հնուց ի վեր մի քաղաք է շինված եղել Սաքառուկի բազմալորից

Մծարֆ կոչված տեղում»<sup>56</sup> (ընդգծումը մերն է— Ա. Ս.): Մծուրնի կառուցումը Սանատրուկի կողմից կարող է տեղի ունեցած լինել I դարի վերջին ժամոտրում կամ II դարի սկզբին: Քաղաքն ունեցել է ստրատեգիական և առևտրական տեսակետից նպաստավոր պայմաններ: Այն իշխում էր ճանապարհների մի խոշոր հանգույցի վրա, որտեղից անցնում էին դեպի Մելիտենե, Կարին, Տիգրանակերտ, Արտաշատ, Բագավան և մի շարք այլ վայրեր տանող կարևոր ուղիներ: Սեբեոսը, հիշատակելով Մարաբա փրիտոփայի մասին, գրում է. «Անդ հայելով ի մատնան Մարաբայ փրիլսոփայի Մծուրեացոյ զոր էգիտ դրոշմեալ ի վերայ արձանի ի Մծբին քաղաքի՝ յապարանն Սանատրուկ արֆայի հանդեպ դրան արժունական տաճարին, ծածկեալ յաւերածի արժունական կայնեցն»:

Քանզի զսինս տաճարին այնորիկ խնդրեալ ի դուռն արքային Պարսից և բացեալ զաւերածն վասն սևանցն ըստ դիպան արձանագրին դրոշմեալ ի վերայ վիմի զամս և զաւուրս հինգ թաշատրայն հայոց և պարթևաց»<sup>57</sup> (ընդգծումը մերն է— Ա. Ս.):

Այդ տեղեկությունների հիման վրա եզրակացվում է, որ Մծուրնը նույնպես եղել է Հայաստանի աթոռանիստ քաղաքներից:

Ինչպես երևում է, սպարանքն ունեցել է ճարտարապետական ուշադրով համալիր:

Փայտակարան: Փայտակարանը հայ մատենադրության մեջ հիշատակվում է իբրև IV դարի սուրբին կենտրին Հայաստանի նշանավոր քաղաքներից մեկը<sup>58</sup>:

Վաղարշապատ\*: Վաղարշապատ քաղաքը հիմադրվել է II դարի առաջին կեսում, Վաղարշ (117—140) թագավորի կողմից դեռևս երանդունիների ժամանակ հիշատակված Վարդգեսավան րնակավայրի տեղում: Հայաստանի ուշ անիկ քաղաքներից մեկի տուայայմանը նպաստեցին Տրոյանոս կուսեր Արևելք կատարած րշավանքից հետո երկրի տնտեսական զարացման համար ստեղծված բարենպաստ պայմանները: 163 թ. հռոմեացիների կողմից Արտաստ քաղաքի նվաճման և հայերի ապստամբության ճնշումից հետո Վաղարշապատը, որը վերնվանվեց Նոր քաղաք (Կայնեպոլիս), հռչակեց Հայաստանի մայրաքաղաք և այդպիսին

մնաց մինչև երկրի անկախության կորուստը<sup>59</sup>:

Գրավոր աղբյուրների օգնությամբ և հնագիտական ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա հնարավոր է որոշ պատկերացում կալանել հին Վաղարշապատի քաղաքաշինական կառուցվածքի և հատակադժման, տեղագրության ու ճարտարապետության մասին<sup>60</sup>: Ըստ այդ տվյալների, քաղաքը բաղկացած է միջնաբերդից, բուն քաղաքից և արտաքաղաքային տարածքից:

Միջնաբերդ: Ավելի քան հավանական է, որ միջնաբերդը մոտավորապես գրավում էր այժմյան էջմիածին վանքի տարածքը<sup>61</sup>: Այն շրջափակված էր պարսպով և ուներ ուղղանկյուն ձև: Պարսպի գոյության մասին են ակնարկում Ագաթանգեղոսի Հայոց պատմության հարդրած սուլվյալներն ու էջմիածնում հայտնաբերված 175 և 185 թթ. լատինական արձանագրությունները (լուսանկ. աղ. 36 ա)<sup>62</sup>: Ըստ Ագաթանգեղոսի, Միջնաբերդում էր գտնվում Մայր Եկեղեցին ու թագավորական պալատը: Վերջինիս ստույգ տեղը պարզ չէ, բայց այն տեղադրված կարող է լինել Մայր Եկեղեցուց արևմուտք և հարավարևմուտք<sup>63</sup>: Այն, որ միջնաբերդում կային փողոցներ («փողոց ի ներքազույնս») անհարկում է այստեղից այլ շենքերի գոյության մասին ևս:

Այժմ բոլոր հիմքերը կան պնդելու, որ Մայր Եկեղեցու տեղում անտիկ դարաշրջանում կանգնած էր հեթանոսական տաճար: Մայր տաճարի վերականգնման աշխատանքների ժամանակ զբնորվել են նախաքրիստոնեական կառույցների մնացորդներ՝ ուրարտական ժամանակաշրջանի բազալտե կոթող, քարե վեժմ՝ երկաթի կապերի համար բնորով, ինչպես նաև օջախ-կրակարան: Մայր Եկեղեցու հարավային մասում հատակի տակ երևացել են արևելք-արևմուտք կողմնորոշում ունեցող շենքի հիմքերի մնացորդներ<sup>64</sup>: Անտիկ տաճարը Հայաստանի մյուս տաճարների նման ոչնչացվել է քրիստոնեության ընդունման օրերին: Այն մեծ նշանակությունը, որ ունեցել է էջմիածնի Մայր Եկեղեցին, ակնհարում է նրա տեղում անտիկ դարաշրջանում կանգնած հեթանոսական տաճարի կարևորության մասին: Հավանական է, որ հեթանոսական տաճարը նվիրված է եղել Անահիտ-Արտեմիդի պաշտամունքին<sup>65</sup>: Այդ մասին է վկայում Մովսես Խորենացու մոտ պահպանված Վաղարշապատի Արտեմիդ մյուս անունը: Նրա մեջ տեսնելով հունական Արտեմիդի դիցուհու անունը, որն արևելքում (այդ թվում և

\* Տեքստը՝ Գ. Ա. Տիրացյանի:

Հայաստանում) նույնպիսիում էր Անահիտի .ևտ. կարելի է գալ այն եղբակացություն, որ բազարը հայտնի է եղել նրանի որ զլիսավոր սրբավայր՝ Արտեմիդի-Անահիտ զիցուհու անունով: Պատասխանը շենչից ու սաճարից բացի կարելի է խոսել միջնաբերդում գոյություն ունեցող երրորդ շենքի՝ բաղնիքի մասին<sup>65</sup>: Նրա մնացորդները բացվել են Մարտ սաճարից զեպի արևելքը բնկած տարածքում: Քանի զեռ կատույցը մինչև վերջ ուսումնասիրված չէ, կարելի է խոսել երկու բաժանմունքների մասին, որոնք հազարակիցվել են բաժանմունքների հավասար ջեռուցմանը նպաստող ընդհատակյա անցքերով: Շենքի պատերը, այն չափով, որ պահպանված են, շարված են շաղախով միացած ուղղանկյուն կամ բառահուշի աղյուսներից: Հատակը կազմված էր տափանջված հողից ու շաղախից: Նրա վրա շարված էին կազի խողովակներ, որոնք ծառայում էին որպես ճենակներ վերին հատակի համար: Նրանց ավելի մեծ կայունություն հաղորդելու նպատակով ճենակ-խողովակները լցված էին շաղախով:

Վերին հատակի կառուցվածքը պարզ չէ, բայց երևի նրա ստորին շերտը կազմված է եղել կավե մեծ սալերից, որոնց շուրջ անկյունները ճենվել են շիշատակված խողովակաձև ճենակների վրա: Վաղարշապատի միջնաբերդի բաղնիքը պատկանում է ամբողջախի տիպի բաղնիքների, որոնցից Հայաստանում հայտնի են Գանդիում և Արտաշատում և որոնք նախատեսված էին այցելուների ոչ շատ մեծ թվի համար<sup>66</sup>:

Քաղաքը: Այն կարծիքը, բոս որի Վաղարշապատ քաղաքը պետք է որ զբաղեցրած լիներ այժմյան Էջմիածին քաղաքից զեպի արևելքը բնկած տարածքը, Զվարթնոցի մոտակայքում, ներքևից<sup>68</sup>: Այժմ ապացուցված կարելի է համարել, որ անտիկ քաղաքը գտնվել է միջնաբերդի շուրջը, առիճին՝ ժամանակակից Էջմիածնի տեղում:

Քաղաքի մեծությունը, նրա սահմանները որոշվում են մոտավորապես: Քաղաքն ունեցել է միլիոնի դարպասներ, որոնցից երկուսը՝ արևելյանն ու հարավայինը, հայտնի են գրավոր աղբյուրներից (Աղարսեղիկոս, Հայոց պատմություն): Նրանց տեղեկությունները օգնում են որոշելու քաղաքի մոտավոր տարածքը: Այսպես՝ քաղաքի արևելյան սահմանը գտնվում էր միջնաբերդից զեպի ու Հռիփսիմե տանող կեն ճանապարհին, իսկ քաղաքի հարավային սահմանը գտնվում էր ս. Գայանե լիանքի շրջակայքում:

Այս նախնական տվյալներից երևում է, որ քաղաքի մակերևույթն այնքան էլ մեծ չէր, մասնավորապես, եթե հայտնի չափերը որոշաբար պայմանավորված չեն: Բայց քաղաքամերձ տարածքը, որը, ինչպես կտեսնենք, բազմաթիվ թելերով կապված էր բուն քաղաքի հետ:

Վաղարշապատը որպես հարթավայրային քաղաք ուներ իր առանձնահատկություններ, որոնցից ամենակարևորը նրա պաշտպանական աննպաստ դիրքն էր<sup>69</sup>: Այն զբաղված էր ջրային, բնական պատնեշներից ու բարձունքից. որի վրա կարող էր տեղադրված լինել միջնաբերդը: Այդ պատճառով նա ամբողջապես պետք է հույս դնել իր պաշտպանական կառույցների վրա: Գրավոր աղբյուրներից հայտնի է, որ վերջիններքը բարեկացած էին իրար դուգահեռ ընթացող բարե պարսիցի ու հողե պատնեշից, որոնց միջև գտնվում էր ջրով լցված խրամը<sup>70</sup>:

Պարթևական և Սասանյան դարաշրջանի Միջագետքի, Իրանի ու Միջին Ասիայի հաջիավայրային պայմաններում ստաչացած կլոր կամ կլորավուն հատակագիծ ունեցող քաղաքների ու քաղաքային կենտրոնների նմանությամբ<sup>71</sup> կարելի է ենթադրել, որ Վաղարշապատը ես իր պաշտպանական հնարավորությունները բարձրացնելու նպատակով ուներ պարիսպներ, որոնք շրջանակ էին կազմում, թեպետ այդ մասին կոնկրետ փաստեր չունենք<sup>72</sup>: Այս կապակցությամբ մեծ հետաքրքրություն է ներկայացնում այն հանդամանքը, որ VII դարի 40-ական թվականներին առաջացած Զվարթնոցի քաղաքատիպ բնակավայրը, ինչպես երևում է նազիտական դիտողություններից, ուներ կլոր հատակագիծ, որը կարող էր ստաչացած լինել հարևան Վաղարշապատի պղնձությամբ<sup>73</sup>:

Արտաբաղախային տարածքը: Գրավոր աղբյուրների տվյալները և հնագիտական պեղումների արդյունքները հնարավորություն են տալիս խոսելու քաղաքամերձ տաճարի, դամբարանադաշտի և արտադրական կենտրոնների մասին: Վերջիններս տեղադրված էին քաղաքից դուրս, հյուսիսային կողմում: Այստեղ տարածվում էին քաղաքամերձ երկրագործական գոտու մեջ մտնող խաղողի այգիները, որտեղ գոյություն ունեին հատուկ շենքեր՝ խաղող մշակելու հնձաններով, պինին պահելու տարողություններով և ապակե-գործական արհեստանոցով<sup>74</sup>:

Բացառված չէ, որ Զվարթնոցից մեկ հասած

վազիրէնազարցաւ՝ մոռնովնեալ ճնձանների կառուցողական առանձնաշտովթյունների հիմքում ընկած լինեն զրափոր զարդարներից հայտնի անտիկ Վազարշապատի ճնձանները:

Քաղաքից արևելք, գլխավոր ճանապարհի կողքին, բարձունքի վրա, այնտեղ, ուր այժմ գտնւրդում է ս. Հռիփսիմի վանքը, դեպի վեր էր խոյանում անտիկ տաճարի շէնքը: Այդ մասին են վկայում եկեղեցու սյուտերի տակ բացվող հին կառուցյի լավ մշակված սուֆէ բարերը<sup>75</sup>: Քարերի մշակման ոճը և ձևը, հար և նման է Գառնիի հեթանոսական տաճարի մանրամասների մշակման եղանակին: Լիովին համընկնում են պարանայնու, ուլունքաշար և այլ զարդանախշ գուտիները<sup>76</sup> (լուսանկ. աղ. 36 բ):

Միւսեզամայն հնաբալոր է, որ ս. Հռիփսիմե և կեղեցու տեղում կամ նրա մերձակայքում անտիկ դարաշրջանում կանգնած էր հեթանոսական տաճար՝ նման Գառնիի տաճարին: Շատ կարևոր է այն հանդամանքը, որ մի կողմից անտիկ ժամանակաշրջանի շէնքերի բեկորները, որոնք գտնվել են էջմիածնի Մայր եկեղեցու և ս. Հռիփսիմի տաճարի հիմքերի տակ, Գառնիի ճարտարապետական կառուցյների օրինակով թվագրվում են մ.թ. առաջին դարերում և որ մյուս կողմից՝ այս թվաշրջանը համընկնում է զրափոր ազդրների տրվանների հետ, որոնք Վաղարշապատի հիմնաքումը տանում են մ.թ. II դար: Բացառված չէ, աե, որ Վաղարշապատի բաղարամերձ տաճարը ունչպես ձևոված էր աշևի ստոնուն՝ Միւր-Ապուրանին: Այն հանգամանքը, որ տաճարը գտնվում ր բաղաբի պարիսպներից դուրս, զլխավոր ճանապարհի մոտ, հաստատում է նման եթադրուելուն:


Արտաշատում Արեղ-Ապուլունի տաճարը նույնըն տեղադրված էր բաղաբից դուրս, ճանապարհի վրա (Մովսես Խոսեւնացի, Հայոց պատմություն, դիրք 2-րդ, գլ. 19): Այս գոգահնոր ավելի ստորջ կիվա, եթև հաշվի առնենք, որ, ինչպես արտաշատում, աշպես էլ Վաղարշապատում անցնած էր Անուհա-Արտեմիդեի տաճարը: Աստաճությունների նույն դույզին՝ ձոնված տաճարների գոյության փաստը Վաղարշապատում և արտաշատում պատահական չպետք է համարել: Կտք է եթադրել, որ նոր հիմնված, շտոտվալարաբաղաբ դարձած Վաղարշապատում կրկինեցին կամ փոխառնվեցին այն երևությները, լունք բնորոշ են Արտաշատին: Հին մալրաբա-

ղաբի՝ Արտաշատի օրինակով հայ Արշակունիները Վաղարշապատում մ.թ. II—III դարերում կանգնեցրին Արևի (Ապուլունի) տաճարները, ընդ որում ընդօրինակումը արտահայտվում է անգամ այն նույնամանքի մեջ, որ մի տաճարը կանգնած էր բաղաբում, իսկ մյուսը՝ բաղաբից դուրս, ճանապարհի վրա: Արևի ու լուսնի տաճարների աուկայությունը Վաղարշապատում արդարացված է նաև Հին Հայաստանի դինաստիական աստաճությունների պաշտամունքի դարգրաման տեսակետից: Կարելի է որոշակիորեն պնդել, որ Հին Հայաստանում իշխած թագավորական երեք դինաստիաներն էլ իրենց հովանավոր աստվածներն էին համարում Արևն ու Լուսինը, նրանց էին պաշտում Ծրվանդունիներ Արմավիրում և Բագարանում, իսկ Արտաշեսյաններն ու Արշակունիները՝ Արտաշատում: Վաղարշապատի՝ Արշակունիների նոր մալրաբաղաբ հուշակվելու կապակցությամբ, այստեղ հաստատվեց երկու նույն աստվածությունների պաշտամունքը, որոնց երկրպագում էին նախորդ դինաստիաների ներկայացուցիչները նախկին մալրաբաղաբներում:

Հնագիտական պեղումների ընթացքում հաստատվել է, որ հին Վաղարշապատի դամբարանադաշտը գտնվում էր բաղաբի պարիսպներից դուրս, արևելքում: Նա մոտավորապես սկսվում էր ս. Հռիփսիմե վանքի շրջապատից, ձգվում արևելյան ուղղությամբ և ավարատվում ս. Հռիփսիմեից Զվարթնոց տանող ճանապարհի կես հեռավորության վրա<sup>77</sup>: Այստեղ բացվել են բարարիցներ, հիմնահողային ու կարասային թուղումներ, կավե դաղապեղներ: Դամբարանադաշտը սկիզբ է առել մ.թ. I—II դարերում և գոյատևել մինչև IV—V դարերը:

Հին Վաղարշապատի բաղաբաշինական կառուցվածքը վկայում է Հին Հայաստանի բաղաբաշինական մտքի հասունության մասին: Ուշագրության արժանի է տարածության կաղամակերպման ընդհանուր մտահղացումը, որն իր արտահայտությունն է գտել բաղաբը բաղաբացուցիչ մասերի բաժանելու սկզբունքի մեջ, մասեր, որոնցից ամեն մեկն իր դերն ուներ (միջնաբերդում պալատատաճարային կենտրոնական համալիրի առանձնացումը, դամբարանադաշտի սահմանադատումը բուն բաղաբից և այլն):

Հին Վաղարշապատի հելլենիստական Հայաստանի այն սակավաթիվ բաղաբներից է, որի մա-



Աղ. 55. Շիհակավան. բնդանոցը նստակազիծ

սին մենր տեղագրական բաժանան հասակ պատկեր ունենր: Հայասնի է ոչ միայն նրա բազմա-ցուցիչ մասերի տեղադրումը, այլ նաև տուածին բազմաբուցիական ու պաշտամունքային նշանակութեան կառուցելների, պրտադրական օրչեկա-ների և բազմաբաշինական կառուցվածքի այլ տարրերի տեղերը:

Երկրա ավան: Երկրան (այժմյան Երզնկան) պատմական Հայաստանի ննսուղն բնակավայրերից է: Այն ստեղծվել է հայ ժողովրդի կողմավորումից շատ դարեր առաջ, հանդիսանալով հայաստ-Ազգի երկրի կարևորագույն կենտրոններից մեկը:

Հայաստանում բրիտոտնեական կրոնի ընդուն-անը նախորդող կենսազարմայ ժամանակա-շրջանի մեջ հասած տեղեկություններից երևում է, որ Երկրան միաթամանակ հանդիսացել է հե-թանոսական կրոնի հանրաճանաչ կենտրոն: Այդ-տեղ էր կառուցված Անահիտի պաշտամունքին նվիրված խոշորագույն տաճարներից մեկը, որի հուշակը տարածվում էր ոչ միայն ամբողջ Հա-յաստանում, այլև երկրի սահմաններից շատ հե-ռու:

Այսպիսով, թեև անհնարին է խոսել Հին Հա-յաստանի քաղաքների հատակագծային ընդհա-նուր կառուցվածքի, քաղաքի հորինվածքի հիմ-քում ընկած քաղաքաշինական սկզբունքների մա-սին, այնուհանդերձ, թեկուզ ամենաբնից հանուր ձևով դրսևորվում է այդ քաղաքների հիմնական ուղվագիծը:

Հիշատակված բոլոր քաղաքներում անխտիր քաղաքի հիմնական օրգանիզմի կոմպոզիցիոն կենտրոնը կազմում է միջուրերրը, որը, ստեղծ-վելով պաշտպանական տեսակետից բնական ա-ռավել նպատավոր տեղանրում, իշխում է բա-զմաբն ոչ միայն մնացած նստվածքի, այլև նրա շրջապատի ամբողջ տարածքի վրա:

Միջնաբերդի բնական պաշտպանական հնա-րավորությունները լրացնելով արհեստական կա-ռուցումներով (պարիսպ, աշտարակներ), այն միակցվում է քաղաքի ընդհանուր տարածքի հետ և այդ ամենը առնվում պաշտպանական մի ընդ-հանուր համակարգի մեջ (պարիսպ, ուղղանկյուն աշտարակներ, պարսպին զուգընթաց կամ ար-հեստական հունով ընթացող հորդառատ ջուր, արհեստական խրամներ, փոսեր և այլն):

Գծվար լի նկատել, որ բնակավայրի տեղանքի ընտրման ու ամրաշինութեան այդ սկզբունքնե-

րը Հայկական լեռնաշխարհում հիմնականում հայտնի են զեռուս բերդ-շինների, Հայասայի և Ուրարտուի բազմաբնի ու ամրոցների կառուց-վածքները:

Երևակա՞նք: 1977 թ. Ախուրյանի ջրամ-բարի տարածքում հայտնաբերվեց անտիկ դա-րաշրջանի բնակավայր, որը ուսումնասիրում է ՀեՄՀ ԳԱ ննսուղությունն է ազգագրության ինս-տիտուտի ննսուղական արշավախումբը<sup>78</sup>: Բնա-կավայրը տեղադրված է Ախուրյանի ձախ ա-փին, նրա և Կարս գետի միախումման կետից 3 կմ հյուսիս: Այն բազմաբնից է մի բանի բն-դարձակ, առանձնացած բնակելի դանգվածներից, ավելի քան 6 հա ընդհանուր տարածութեամբ և դամբարանադաշտից: Տարածված է արևելքից արևմուտք ձգվող երկար, երկու դարավանդներից կազմված և գետահովտի վրա իշխող հրվան-դանի վրա, որը հյուսիսից ողողվում է Սևակնի, իսկ հարավից և արևմուտքից Ախուրյանի ջրե-րով: Արևելյան և հարավարևելյան կողմով հըր-վանդանը ոչ մեծ բարձունքներով հարում է սա-րահարթին (գծանկ. աղ. 55):

Բնակավայրից հյուսիս, Սևակն առվակից այն կողմ, տարածվում է հելլենիստական ժամանա-կաշրջանի դամբարանադաշտը:

Հնագիտական ուսումնասիրությունների բնթաց-րում հայտնաբերվել են մշակութային շերտեր, ո-րոնցից յուրաքանչյուրն ունի իր շինարարական համալիրը: Հուշարձանի կյանքի տարբեր շրջան-ներն արտացոլող ողջ ննագիտական նյութերի և տվյալների հանրագումարի քննութեան հիման վրա այդ շերտերը կարելի է թվագրել.

1-ին՝ սոորին, ամենավաղ շերտը—մ.թ.ա.

II դ. 1-ին կեսով,

2-րդ շերտ՝ մ.թ.ա. II դ. երկրորդ կեսով,

3-րդ շերտ՝ մ.թ.ա. I դ. սկիզբ և մ.թ. I դ.,

4-րդ շերտ՝ մ.թ. II—III դդ.:

Այնուհետև կյանքը բնակավայրում մարում է, միայն IX դ. շատ կարճ ժամանակով վերակեն-դանանում է, որ հաստատում են այդ ժամանա-կաշրջանի իսկեղծների տակավթիվ բեկորները և երկու դրամները:

Բացառված չէ, որ այս շրջանի կյանքը կենտ-րոնացված էր հուշարձանի արևմտյան մասում:

Առաջին շերտ. առավելագույնս ի հայտ է ե-կել 1-ին և 3-րդ պեղավայրերում: Այս ժամա-

\* Տեքստը՝ Յ. Բ. Տեր-Մարտիրոսովի:

նախաշրջանի կառույցներն ունեն մի շարք բնորոշ գծեր՝ Երկրի կողմերի նկատմամբ խտտություն կողմնորոշում: Ինչպես ցույց տվեցին այս շրջանի ոչ մեծաթիվ կառույցները՝ պեղումները, բնակավայրը կազմված է եղել մի քանի՝ իրարից տեղախառն տների խմբերից: Բոլոր տներն ունեն ուղղանկյուն հատակագիծ: Շինարարական տեխնիկան բնորոշվում է միջին և խոշոր շափերի ճեղքված բարերի օգտագործումով՝ կալված շաղախով միացած, որը կառույցին տալիս է ավելի վաղ ժամանակների՝ կիլիսյան կառույցներին նմանվող տեսք: Շենքերում լայնորեն օգտագործվել են տուֆի և կրաքարի լավ տաշված տորածն դետնախարիսիներ՝ ծածկը պահող փայտե սյուների համար: Այս երևույթը Հայաստանի մշակույթի զարգացման մեջ բացահայտում է ընդհանուր գծեր՝ Նեոլիտական արևելքի մշակույթների հետ, որտեղ տորածն խարիսիներն ունեն խիստ լայն տարածում<sup>79</sup>:

Ուշադրություն արժանի է, հատկապես, լանջերին արհեստականորեն հարթեցված հրապարակների ստեղծումը, որոնց վրա բարձրացվում էին շենքերը, և այս դեպքում լանջի ուղղահայաց կտրվածքները երևսպատվում էին միջին և խոշոր շափերի ճեղքված բարերի միաշարք շաշուվ: Ըստ որում մի շինություն այսպիսի երեսասպասուտը կարող էր հիմք ծառայել լանջի վրա ավելի բարձր դիրքով կանգնած մյուս շինության պատի համար, որը և ողջ շենքին տալիս էր աստիճանավոր տեսք: Նշենք, որ արհեստական դարավանդների օգտագործումը՝ շենքեր կառուցելու համար, հատուկ է Հայաստանի շինարարական գործին դեռևս III հազարամյակից:

Ստորին դարավանդի տներից մեկում բացվել են նաև մուտքով իրար միացած երկու շինություններ: Դրանցից մեկը պահպանել էր կիլիսյան կերպի երեսպատը, որի կողքով ձգվում էր հատակի քարե սալահատակը, որի վրա էլ կանգնեցված էին կոպիտ տաշված տուֆե տորածն խարիսիները: Հաջորդ շինություններն ունեն կավե տուֆանված հատակ, որի կենտրոնում զրբված էին լավ տաշված կրաքարե տորածն խարիսիները: Սենյակում տուֆանված հատակի մեջ հայտնաբերվեցին տնտեսական հորեր: Խարիսիների բառակուսի դասավորությունը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ շենքի ծածկը կեղև է զլխատան ձևով:


Առաջին պեղավայրում բացված են տներ, ո-

րոնցում օգտագործվել են մեծ տրամագծի (0,10 մ) զլանածն տուֆից խարիսիներ: Այս ժամանակաշրջանի մի քանի տներ պեղվել են նաև վերին դարավանդի երրորդ պեղավայրի արևմտյան մասում: Գրանք ևս պահպանել էին սալահատակների ներքեր:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Երրորդ պեղավայրի հարթեցրած մասում, ավելի բարձր դիրքում տեղադրված շենքը՝ նրա պատերի ստորին շարքերն են միայն պահպանվել, որոնք ունեն մանր, հարթ տաշված, կողի վրա դրված բարերի երկշար շարվածք, լցված մանր գետնաբարերով և նողով: Դատելով շարվածքից և վերին մասի հարթ կտրվածքից, կարելի է ենթադրել, որ դրանք ծառայել են որպես հուսողյուն վերնապատերի հիմք: Շենքի մուտքը, ի մ լայնությամբ, շարված է շորս քառակուսի սալերով: Հասակը կավով սվաղված է, որի վրա դրված է լավ ձղկված սև տուֆե տորածն խարիսիներ:

I-ին շերտի բոլոր շինությունները ծածկված էին ածխի և մոխրի շղոր, 0,2—0,4 մ հաստությամբ շերտով: Ողջ բնակավայրը ընդգրկած հերթերը այնքան ուժեղ է եղել, որ թրծել է 3-րդ պեղավայրի շենքի կավածեփ հատակը: Այս շերտում հայտնաբերված նետասլաքները ցույց են տալիս, որ կործանման պատճառով հանդիսացել են ռազմական գործողությունները: Ըստ որում մի շարք շինություններ լրիվ ոչնչացել են, իսկ մյուսների պատերը պահպանվել են մինչև 2 մ բարձրությամբ:

Երկրորդ շերտ. լավ պահպանվել է I-ին և 3-րդ պեղավայրերում: Այն բնորոշվում է հուշարձանում սոց կյանքի, նախ և առաջ ճարտարապետության ժամանակավոր անկումով: Առաջին պեղավայրում նկատվում է I-ին շերտի շինությունների վերակառուցում: Պատերը երեսպատող քարերի մեջ փորվում են անցքեր՝ փայտյա գերանների ամրացման համար, որոնց մյուս ծայրը ազուցվում էր բնակարանի հատակում, կողքով թաղված մեծ քարի մեջ: Այս պայմաններում գերանը անցնում էր տորածն խարիսիներից մեկի վրայով, որը բացառում էր այդ խարիսի վրա սյուն կանգնեցնելու հանգամանքը: Շենքերի վերակառուցումներ նկատվել են և 3-րդ պեղավայրում, բայց որում բնորոշ է նոր շինարարական տեխնիկայի կիրառում՝ կավածեփ պատերի օգտագործում, որոնք ներկայիս



Մեծ Եկեղեցի, Անի, Երևանի թանգարանի հավանական վերականգնված վիճակում

ընտացատված են մանր գետաքարերի հավասար շարքերով: Առավել հետաքրքրական է այսօր հայտնաբերված փոքր սրբարանը, որը 2,5×3 մ շափերի շինություն է՝ վերը նշված տեխնիկայով շարված: Այն ունեցել է անկանոն ու ուղղանկյուն ուրվագիծ և խոստազույն կողմնորոշված է եղել երկրի կողմերի նկատմամբ: Մուտքը, հավանաբար, եղել է հարավային կողմից: Նեխում, արևմտյան պատի մոտ, բարձրացված են եղել երկու կիսակլոր մույթեր, նույնպես կավածեփ՝ երևսպատված մանր գետաքարերի հորիզոնական շարքերով: Հյուսիսարևելյան անկյունում տեղադրված է օջախը՝ անկյուններում շորս ուղղահայաց դրված քարերով և կավով պատերով: Սենյակի կենտրոնում տեղադրված է տուֆե խարիսխը, որը ընդօրինակում է աստիկյան ոճին: Խարիսխի վրա դրված էր կիսամշակված սերդոլիկե կտոր, որը ցույց է տալիս, որ խարիսխը օգտագործվել է որպես զոհասեղան: Խարիսխների օգտագործումը՝ այդ նշանակությամբ լայն տարածում ունեն անտիկ աշխարհում:

Մույթերի տեղադրությունը արևմտյան պատին կից, զոհասեղանին մոտ, որոշում են աղոթողի դիրքը դեպի արևմուտք: Սրբարանի շուրջը հայտնաբերվել է կարանների մեջ կատարված մարդկանց և շների համատեղ բազմաթիվ թաղումներ: Հայտնաբերված նյութերի ամբողջությունը թույլ է տալիս շինությունը համարելու սրբարան: Տվյալ սրբավայրը Հայաստանի հելլենիստական հուշարձաններում առայժմ եզակի է և զուգահեռներ մեզ հայտնի չեն:

3-րդ շեռտ. բնակավայրի կյանքի ծաղկման ժամանակաշրջանն է: Բնակավայրի բոլոր հատվածներում կատարվել են շինարարական մեծ աշխատանքներ:

1-ին պեղավայրում բացվել են 2—5 շինություններից բաղկացած տներ և նրանց կից բակեր (լուսանկ. աղ. 34): Հատակազօծով նրանք նման են I շերտի տներին: Նույնական է և շինարարական տեխնիկան, չնայած խոշոր բարերի օգտագործում չի նկատվում: Գերակշռում է միջին շափերի ճեղքված, կոպիտ տաշված քարերի շարվածքը: Տներում հայտնաբերվում են սալալատ հատուկներ, տուֆից և կրաքարից, դասնաև և քստանկյուն (պրոֆիլով սրված) խարիսխներ:

2-րդ պեղավայրում վերին դարավանդում բացվել է սրբավայր, նրա սուղե տարածված հրա-

պարակով (գծագր. աղ. 56): Պահպանվել է հրապարակի սալահատակված մի հատված (10 մ × 20 մ): Սրբավայրը ղեկի հրապարակ է ուղղված արևելյան ճակատով, որը շարունակվելով, դառնում է կից տների համար պարփակող պատ: Այս պատի հարևանությամբ հայտնաբերված ոսկրաբանական նյութը ցույց է տալիս, որ արտաքուստ պատը հարգարված է եղել եղջերուների, այծյամների, ցուլերի, այծերի, խոյլերի գլուխներով: Պատի մեջ առկա են 1 մ լայնությամբ երեք մուտք, որոնցից երկուսը տանում են ուղղակի շինությունները, իսկ երրորդը՝ դեպի գետաքարերով ծածկված նեղ փողոցը, որը ձգվում է սրբավայրի ներքին տների միջով: Տները բաղկացած են մեկ կամ երկու բնակելի համալիրներից: Առավել լավ պահպանվել են դեպի հրապարակ ուղղված այն շենքերը, որոնք տեղադրված են սրբավայրի հյուսիսարևելյան մասում: Տներից մեկը բաղկացած է երեք, իսկ երկրորդը՝ հինգ սենյակներից, զոմից և նրանց կից բակից: Ամենամեծ սենյակը, որպես կանոն, ունի մի մասով սալարկված ստոփանված հատակ: Սալարկված մասի երկայնքով դրված են տորածև խարիսխներ: Սենյակի մյուս մասում, հատակի մեջ, բացվել են մոխրով լեցուն հորեր:

Հատկապես առանձնանում է սրբավայրի արևելյան մասի կենտրոնում տեղադրված, քարե սալերով շարված երկար հարթակը՝ դեպի արևելք ուղղված ուղղանկյուն զոհասեղանով: Հարթակի երկայնքով դրված են տորածև բապուներ: Յավոք, այս համալիրը խիստ վնասվել է գյուղատնտեսական աշխատանքների ընթացքում:

Պահպանվել է միայն մի մասը՝ զոհասեղանով, իսկ նրան տեղադրված 7 սյուներից՝ միայն հինգը:

Հարկ է նշել, որ սրբավայրի շենքերը հատակազօծով, շինարարական տեխնիկայով չեն տարբերվում ստորին դարավանդի բնակելի շենքերից: Ընդհանուր է և նագիտական նյութը:

Այսպիսով, Շիրակավանի սրբավայրերի համալիրում ի հայտ է գալիս պարտամունքային շինությունների առանձնազման միտումը, բնակավայրի պաշտամունքային կենտրոնի, ղեռև շնակավորված տաճարային ճարտարապետության պայմաններում:

Այստեղ մենք հանդիպում ենք Հայաստանի ալիկի վաղ հուշարձանների ավանդների շարունակությունը: Այսպես, Գլինի հնագույն սրբա-

վայրը միաժամանակ և արհեստագործական արհեստանոց է<sup>80</sup>։ Մյուս բնակելի համալիրների հետ ճարտարապետներն ընդհանուր և նաև Օշականի սրբավայրը<sup>81</sup>։ Սրբավայրերի և նույնիսկ տաճարների կողմից բնակարանի ճարտարապետական հատկագծի պահպանումը նկատվում է և ուշ ասորեստանյան մի բանի՝ հուշարձաններում<sup>82</sup>։

Կարևոր է ենթադրել, որ Շիրակավանի սրբավայրը ձևավորվել է գեոսես հուշարձանի կյանքի առաջին շրջանում։ Դրա հյուսիսային ծայրամասում հայտնաբերվել են մեծ պատի և շինության մնացորդներ, սակայն այնպիսի ավերված վիճակում, որ դժվար է բնորոշել նրանց բնույթը։

Սրբավայրում հայտնաբերված նյութերից դատելով, այստեղ պաշտում էին արևին, լուսնին, կատարում պողոթնության հետ կապված ծեսեր։


Սերուրը պեղավայր։ Այստեղ վերին դարավանդում բացվել է մեծ շենք՝ 1000 քառ. մ տարածությամբ։ Ցավոք, շատ մեծ ավերմունքի հետևանքով, ներքին շինությունների ճշգրիտ հատակագիծը և նրանց ֆունկցիոնալ պատկանելության որոշումը դժվարանում է։

Մեծ տպավորություն է թողնում այստեղ բացված սյունազարդ դահլիճը, որի թռիչքը հյուսիսից հարավ 16,5 մ է, իսկ արևելքից արևմուտք պահպանված մասի երկարությունը 12 մ։ Դահլիճի արևմտյան պատը լրիվ ավելոված է։ Արևելքից դահլիճին ևն հարում մի շարք սենյակներ, որոնք դահլիճի հետ կապվում են 1 մ լայնք ունեցող մուտքերով։ Հարավային և հյուսիսային պատերը խոլ են։ Հյուսիսային պատի երկայնքով ձգվում է բարև սալերից շարված հարթակ, որը տոհմաված և հաստակից բարձր է մոտավորապես 0,4 մ։ Դահլիճի կենտրոնում պահպանվել են 4 մեծ, հրաշալի մշակում ունեցող տուֆե տորաձև խարիսխներ։ Արևելյան սենյակներից մեկում հայտնաբերվել են ևս երեք նույնատիպ խարիսխներ, որոնք թափված էին հողակույտի մեջ։ Այսպիսով, կարելի է ենթադրել, որ դահլիճն ունեցել է պահպանված շրջից ավելի՝ ութ կամ ծայրահեղ դեպքում վեց սյուն։ Պետք է նշել, որ խարիսխները նույնական են 3-րդ պիլավայրի 1-ին շերտի թրծված, կավածեփ հատակով սենյակում հայտնաբերվածների հետ և, կարելի է ենթադրել, որ դրանք սյունազարդ դահլիճում օգտագործվել են երկրորդ անգամ։ Այսպիսով, հնում, երբ ամբողջական էր արևելյան մասը, և՛ 6 սյունների, և՛ նրանց խարիսխների 4,1 մ բայրի առկայության

պայմաններում դահլիճը պետք է ունենար 16,5 մ × 16,5 մ չափեր։

Հատկապես նշենք, որ դահլիճի հարավային պատը այն խարիսխներից հետո է ոչ թե 4 մ, այլ 7,5 մ։ Այստեղ շինարարները պիտակցաբար օգտագործել են 1-ին շերտի շինության մնացորդները, որոնք գտնվում են դահլիճի տակի 2 մ ավելի բարձրությամբ պաշտանված Մ-աձև կանգնած պատերը ծածկվել են հողով այնպես, որ գետնի մակերեսին մնացել է 0,5 մ ոչ բարձր մաս, որի վրա շարվել են նոր պատերը։ Այստեղից էլ հարավային պատը ձևոր է բերել 3,5 մ երկարությամբ մույթեր, որոնց վրա հենվել են սյուններից կոոլ գերանները։ Այս մույթերի շնորհիվ հարավային պատը ունեցել է խոր սրմնախորշեր։ Հաջատանում բազմապատկառ լալագույն դահլիճներ հայտնի են ուրարտական ժամանակաշրջանից (Արգիշտիխիիի, Էրեբունի, Օշական)։ Պետք է հատկապես առանձնացնել Արմավիրի սյունազարդ դահլիճը, որը, սովորաբար, համարվում է ուրարտական ժամանակաշրջանի կառույց<sup>83</sup>, բայց, մեր կարծիքով, վաղ հայկական ժամանակաշրջանի շինություն է<sup>84</sup>։ Այստեղ սյունազարդ դահլիճը կառուցվել է պարսպի պատի երկայնքով, որն ունի կոտստ-կոնտրոֆորսներ։ Ըստ որում որմնահենցներ ծառայել են դահլիճի համար արևելյան պատի վրա որպես մույթեր, իսկ նրանց միջև ընկած տարածությունները՝ որմնախորշեր։ Սակայն որմնահենցերը խարիսխների հետ չեն համապատասխանեցված միասնական թալով, ուստի Արմավիրի սյունասրահը կարող է լինել Շիրակավանի ժամանակագրորեն նախորդող, բայց ոչ տիպարանորեն։ Անկասկած է, որ Շիրակավանի սյունասրահի հատակագծի՝ գուցե պատահական շինարարական այս դյուտը հետագայում ստանում է լայն, հաստատուն կիրառում։ Այն արտացոլվում է Դառնիի ուշ ժամանակաշրջանի ամառային պալատի սյունասրահի<sup>85</sup>, Դվինի սյունազարդ դահլիճի ճարտարակառուցության մեջ։

Շենքի և նրա սյունազարդ դահլիճի մասշտաբները, նրա կողմնորոշումը ոչ թե երկրի կողմերի, այլ ըստ ուղիների, պաշտամունքային բնույթի գյուտերի բացակայությունը թույլ են տալիս այն բնորոշելու որպես աշխարհիկ, ամենայն հավանականությամբ, պալատական-տնտեսական համալիր, ըստ որում այն իր ընդհանուր հատակագծով տարբերվում է Շիրակավանի բնակելի



Աղ. 57. Փանկի անբայի գլխավոր հատակագիծը

զանգվածներից, միայն իր մեծ մասշտաբներով՝ սյունապարտով և տնտեսական շինությունների քանակով, Այս երևույթը բնորոշ է հին աշխարհի, մասնավորապես Ասորեստանի պարտական շինություններին<sup>86</sup>։

Հուշարձանի ծաղկումը ընդհատվում է հանկարծակի Այստեղ հրեհ՛ի հետքեր չեն նկատվում։ Հավանաբար, բնակիչները 1 դ. լրել են բնակավայրը։ Այս ժամանակաշրջանը լի էր ռազմական բուռն ընդհարումներով, իսկ անտիկ Շիրակավանք շուրջը պաշտպանական կառույցներ։ Այդ պատճառով բնակչությունը, առաջին հերթին վերին դարավանդի, հեռացել են ավելի սպասով վայր։

Չորսուրդ շեռա. այս շրջանում բնակավայրում կյանքը շարունակվել է միայն սասորին դարավանդում, իսկ վերջը վեր է անվել դամբարանադաշտի։ Այստեղ ամենավաղ թագուհիների կատարվել են պալատական մասում, աստիճանաբար բնդարձակվելով դեպի տրևելք և հասել են մինչև 2-րդ պեղավայրը։ Բնակիչները քարաբկյաչին դամբարաններ պատրաստելու համար օգտագործել են ավելի վաղ շինությունների քարերը, որը խիստ ազդել է դրանց պահպանվածության վրա։

Ստորին դարավանդում շինարարության մեջ նոր տարրը մի քանի բնակարանների միացումն է, մի միասնական-շինարարական զանգվածի մեջ։ Այստեղ բացվել է անհրի մի այնպիսի շանգված՝ հյուսիս—հարավ կենտրոնական առանցքային գծով, որին երկու կողմից կցված են մի քանի իրար հարող տներ՝ իրենց բակերով։ Սրանց կողքին առկա են և առանձին կանգնած տներ։ Տների կորիզը կազմում է սենյակը՝ քառանկյունի դասավորված խորիսիններով, հավանաբար զլխատան տիպի ծածկի համար։ Դլխատանը կից առկա են սրահատային սենյակներ, զոմ և այլ շինություններ։ Սովորաբար տան համալիրը բաղկացած է 3—5 սենյակից։ Կենտրոնական սենյակի մի մասը նույնպես ունի սալահատակ։ Լրիվ սալահատակված են զոմերը։ Տոնն ունի մեկ կամ երկու օջախ՝ տեղադրված սենյակների անկյուններում։ Օջախները շարված են քարից, Հանդիպում են թոնիներ։ Հայտնաբերվել են տնտեսական մեծ հորեր՝ նեղ, բառակուսի շարված անցքերով, որոնք դեպի ցած լայնանում են (խոր. 2մ)։

Սենյակներից մեկում հայտնաբերվել է երկու խորիսիններից և ուղղանկյուն խորանարդներից կազմված զոհասեղան։ Մյուս տներում գտնվել են

մարդու՝ փոքր չափերի արխտիկ ոճի քարի արձանի գլուխ, խեցեղեն գրեշմ՝ աչծի պատկերով, սրբազան հացը պրոշմելու համար Այսինքն, կարելի է ասել, որ այս շրջանում պահպանվում էր վաղ ժամանակների պաշտամունքը, միայն այն տարրերով թափամբ, որ ծխախոտարությունները արբավայրից տեղափոխել էին բնակարանները։

Այս ժամանակաշրջանից հետո կյանքը բնակավայրում ընդհատվում է ընդմիջում։

Այսպիսով, անտիկ Շիրակավանքի նազիսական նշույթի համատոտ ուսումնասիրությունը թույլ է տալիս այն առանձնացնելու Հայաստանի նույն դարաշրջանի մյուս հուշարձաններից։ Առանձնահատկությունը ճարտարապետության մեջ է՝ շինքերի մասշտաբայնություն, ստրածի, զրանածի և այլ ուրվապիծ ունեցող խորիսինների առատ օգտագործման մեջ, որը չի նկատվում նույնիսկ մեծ քաղաքների՝ Արտաշատի, Արտաշատի ճարտարապետության մեջ։ Այս երևույթը կարելի է բացատրել միայն Շիրակավանքի որպես տաճարային համայնքի բնակավայրի բնույթով։

#### ԱՄՐՈՑՆԵՐ

Ամրաշինությունը գտնվում էր զարգացման նշանակալից աստիճանի վրա. ստեղծվել էր անառիկ ամրոցների ընդարձակ ցանց՝ Արտազերս, Բազաբերդ, Բազաղեշ, Գարոյնք, Գառնի, Հաղամակերս, Հունարակերտ, Սինորա, Շատրերդ, Ուղական և այլն։ Ժամանակի ամրաշինության (ֆորտիֆիկացիոն) պաշտպանական սիստեմի և ուսումնասիրությունը զարգացման աստիճանի ըմբռնման տեսակետից առանձնահատուկ նշանակություն ունի Գառնի ամրոցը։

Գառնի ամրոցը գտնվում է երևանից 28 կիլոմետր դեպի հարավ-արևելք, պատմական Կոտայք գավառի (այժմյան՝ Արովյանի շրջանի) Գառնի գյուղի հարավային եզրի հունկյունաձև տարածքում, ծովի մակերևույթից շուրջ 1400 մետր բարձրության վրա (գծապ. աղ. 57, լուսանկ. աղ. 40 ա)։

Գառնի ամրոցում շինարարական կյանքը սկսվում է դեռևս վաղ բրոնզեդարից. պահպանվել են կլոր կացարանի և կիկլոպյան պարսպապատի մնացորդներ<sup>87</sup>։

Մառնադրությունը Գառնի ամրոցի կառուցումը կապում է հայ ժողովրդի ամենահեռավոր

անցյալի չէտ. Մովսես հորենացու մտ Նիշատակված ավանդության համաձայն, Հայկ նա-նապետի թեռ Ամասիայի որդի Գեղամբ «... սոտաւան Նորին լերինն ի ձորակի միում աճրոյ շինէ ձևուսկերս մի. և կոչէ զանուն նորս Գեղամբ, որ յետոյ ի Գառնակ թոռանէ նորս անուանեցաւ Գառնի»<sup>85</sup>:

Գառնիի վերաբերյալ ամենանազույն ստույգ տեղեկությունները տալիս է Գառնի անտիկ տաճարից ոչ չէտու, 1963 թ. գտնված ուրարտական թագավոր Արգիշտի Ա-ի (781—760) սեպագիրը արձանագրությունը (յուսանկ. ազ. 10 ր):

Արձանագրության մեջ ասված է, որ Արգիշտի Ա-ն «նվաճեց Գիառնիանի երկիրը...»: Նշանակում է, Գառնի—«Գիառնիանի» անունը և այն կրող երկիրը գտնվյուն է ունեցել զեռես նախաուրարտական ժամանակներում<sup>86</sup>:

Արձանագրությունը փորագրված է «Վիշապ» անվանվող բարակերտ կոթողի պահպանված մասի բանդակապատ երեսի վրա:

Գառնիի վերաբերյալ պատմական մյուս ստույգ տեղեկությունը հաղորդում է I դարի հռոմեական պատմագիր 4 որնեկիտ Տակիտուսը:

51 թ. Փարսամանի որդի Հրադամիզը, ցանկանալով հայկական դաճը խլել Հռոմի կողմից նշանակված իր հորեղբայր Միհրդատից, հարձակվում է Հայաստանի վրա: Ըստ Տակիտուսի, Միհրդատը հանկարծակի ներխուժումից աճաբեկված՝ փախել ու պատսպարվել էր Գառնի ամրոցում, որն «այսպիսով էր թե՛ տեղադրության և թե՛ հռոմեական կայսրոսի պաշտպանության հետևվանքով»<sup>87</sup>:

Հրադամիզը ուժով չի կարողանում գրավել ամրոցը, դիմում է խորամանկության: Սաշառելով հռոմեական կայսրոսի հրամանատար պրեֆեկտ Վելլիտու Պոլիտին, նա հաշտության դաշինք կնքելու պատրվակով Միհրդատին հրավիրում է պարեպանիկից դուրս և այսպ, «...իբրև թե հաճատարիմ իր երդման... չըործադրել ոչ թուր Է ոչ էլ թուլի», սպանում է խեղդամաճ աճնելով գորգերի տակ:

Այդ վեպերից իրավացիորեն եզրակացվում է, որ «... Գառնին արդեն իսկ այդ ժամանակ անձատույց բերդ էր՝ շրջապատված անտիկ պարեպաներով»<sup>88</sup>, և իբր այդպիսին, բնականաբար, պետք է ստեղծված լիներ ավելի վաղ:

Կորբուլոնի արշավանքների բնթապքում, հռոմեական զորքերի կողմից 59-ին Արտաշատ մայ-

րաբաղաքի ավերման ժամանակ, մեծ ավերածությունների է ենթարկվում նաև արքունի ամառանոց Գառնի ամրոցը: Այդ մասին է վկայում 1945 թ. նկարիչ Մ. Սարյանի և զյուլուստոսես 3. Գազթյանի կողմից Գառնիում հայտնաբերված լուսարևն արձանագրությունը (յուսանկ. ազ. 45 ր): Ըստ պ. Կ. Տրևերի, արձանագրության թարգմանությունը չէտեղյան է.

«Հելլոստ Տրիդատես Մեծ Հայքի թագավորն էր իշխանը կառուցեց ագարակ թագու՛նու նամար (և) այս անտիկ բերդը իր թագավորության 11-րդ տարում, Մենեևաք, տիրուց ջանկությունը (որպես) մեծ սպարապետի լիտուրգոս (ի նշան) շնորհակալություն Մատև վկայի ներկայությունը վճարեց»<sup>89</sup>:


Նշանակում է, Տրդատ թագավորի գահակալության 11-րդ տարում ամրոցը և նրա մեջ պահվող դաստակերտը ենթարկվել են վերակառուցման: Արձանագրության մեջ հիշատակված Տրդատ թագավորը համարվում է Տրդատ Ա-ն, իսկ նրա գահակալության 11-րդ տարին՝ 76 թ.<sup>90</sup>:

I դարում Գառնիում տեղի ունեցած այդ աշխատանքներին անդրադառնում է նաև Մովսես հորենացին<sup>91</sup>, սակայն նա Տրդատ Ա-ի գործունեությունը վերագրում է քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակած Տրդատ Գ թագավորին (287—330):


II դարի երկրորդ կեսին—III դարի սկզբին, Վաղարշակ թագավորի որդին՝ Մեծ Հայքի թագավորը, Գառնիում թողել է արամեական գրությունը արձանագրություն<sup>92</sup>:

Հասկանալի է, որ Մեծ Հայքի թագավորը, սրբ, ինչպես ենթադրվում է Վաղարշակ թագավորի սրբի հոսարով I էր<sup>96</sup>, ինչ-որ կարևոր առիթով է թողել այդ արձանագրությունը Գառնիում<sup>97</sup>, սակայն ի՞նչ առիթով, անհայտ է<sup>98</sup>:


Ամրոցի պաշտպանական նախապարհի արևելյան հատվածում, որտեղ տեղանքի պատճառով հակառակորդը դժվարությամբ կարող էր մտնենալ պարսպապատին, հետևապես նրա հարձակումը հնարավոր կլիներ ավելի փոքր ուժով ետ մղել, ավելի փոքր թվա շտաբակներ են կառուցված, այսինքն՝ միմյանցից մեծ հեռավորության վրա (յուսանկ. ազ. 41 ր): Ամրոցի հյուսիսային և հյուսիսարևմտյան մասերում, որտեղ թշնամին կարող էր համեմատաբար անարգել մտնենալ պարսպապատերին, հետևապես պետք էր, որ ավելի մեծ ուժեր կենտրոնացվեին նրա դեմ. աշ-




ա



բ



գ



դ

Աղ. 58. Կառնի. ա) Ամրոցի հյուսիսային պարսպի պաշտպանական համակարգից հատված. վերակազմություն. Երկայնական կտրվածք, բ) Ամրոցի հյուսիսային պարսպի հատված. տեսքը հարավից, վերակազմություն, գ) Ամրոցի մուտքը հարավից. վերակազմություն, դ) Ամրոցի հյուսիսային պարսպի պաշտպանական համակարգից հատված. հատակագիծ, վերակազմություն

տարակները կառուցված են մեծ թվով, այսինքն՝ միմյանց ավելի մոտ (լուսանկ. աղ. 41 ա)։ Ընդ որում տեղանքից անկախ, իբրև ռազմապաշտպանական հատուկ միջոցառում, մուսքից զեպի արևմուտք 4-րդ և 5-րդ աշտարակները մյուս աշտարակների համեմատությամբ կառուցված են ավելի ներս՝ ստեղծված է արհեստական սեղ, որի մեջ ներքաշված հակառակորդի ուժերը, ինչպես իրավացիորեն նշում է Բ. Առաքելյանը, բնկնելով աննպաստ պայմանների մեջ, պետք է գտնանային ավելի հեշտ խոցելի (գծագր. աղ. 53 գ)։ Ամբոցի առավել վաղ շրջանի աշտարակները ուղղանկյունի են։ Նման աշտարակներ գոյություն ունեն նաև հելլենիստական ճարտարապետության այլ կենտրոններում։

Հայկական լեռնաշխարհում ուղղանկյուն ձևի աշտարակներ ստեղծվել են շատ ավելի վաղ՝ նախատորարտական և ուրարտական ժամանակներից (Տուշպա<sup>103</sup>, Շամիրամ, Նազրվան, Արպիշ-ախիսիներ<sup>104</sup>, Քեչերբահին<sup>102</sup>)։

Գառնիի աշտարակները կառուցվել են երկու եղանակով։ Պաշտպանական տեսակետից առավել պատասխանատու հանգույցում՝ մուտքի աջ և ձախ կողմերի աշտարակները շարված են որձաքարի համառարած խոշոր զուգվածներով, չոր, առանց շաղախի։ Մնացած մյուս բոլոր աշտարակների արտաքին պարագծով կառուցված են 1,15—1,50 հաստության քարե շրջանակներ և նրանց մեջ շերտ-շերտ լցված է կրից, ավազից, ձեղքված որձաքարից և գետաքարերից կազմված կրաբետոն։

Ամբոցի կառուցումը օգտագործվել են մետաղական միայն հորիզոնական կապեր, իսկ տաճարի շենքում նրանք զուգակցվում են ուղղահայաց ձողերի հետ։ Հայաստանի անտիկ ժամանակաշրջանի նյութական մշակույթի համարձակների նյութերը ցույց են տալիս, որ Գառնի ամրոցում կիրառված մետաղական միացումներով շինարարական տեխնիկան գոյություն է ունեցել Հայաստանի նույն, ավելի վաղ ժամանակաշրջանի նաև այլ վայրերում (Արմավիր<sup>103</sup>, Երվանդաշատ<sup>104</sup>) III—II դդ. մ.թ.ա., Երվանդակերտ<sup>105</sup>, Արտաշատ<sup>106</sup> II դ. մ.թ.ա., Անի III—II դդ. մ.թ.ա.<sup>107</sup>։

Ամբոցի պարսպում ակնառու են շինարարական մի քանի շրջաններ, որոնք որոշակի լույս են սփռում Հայաստանում պատի կառուցողական

արվեստի աստիճանական զարգացման ընթացքի վրա։

Շինարարական առաջին հնագույն շրջանի պարսպի ուղղանկյուն հատակագիծ ունեցող աշտարակների պատերը շարված են մաքուր տաշված որձաքարի խոշոր զանգվածներով, առանց շաղախի, և սրմնաքարերը միացված են իրար հրկաթյա կապերով։ Այս հատվածը պատկանում է ամբոցի մինչև 51 թվականը գոյություն ունեցած պարսպին և, ինչպես նշվում է, ստեղծված պետք է լինի տեղավաղն մ.թ.ա. III—II դարերում։

Աներկրայությունն այս շրջանին է պատկանում պարսպի մոտ բացված սլաքաքարի խճի առաջին շերտը։





Երկրորդ շրջանը նույն շինարարական տեխնիկայով և գրեթե նույն չափերի բարերով կառուցված մասն է, ուր շարվածքի ու բարերի մշակման սրակը սրուշակիորեն դիջում է նախորդ շրջանին։

Այս հատվածն է, անշուշտ, որ վերակառուցվել է Տրդատ I-ի դահակալության 11-րդ տարում, այսինքն 76-ին (մ.թ.ա.)։ Պարսպի մոտ բացված որձաքարի խճի երկրորդ շերտը, ըստ երևույթի, առաջացել է այս վերակառուցման ժամանակ։

Երրորդ շրջանը կապված է մուտքի արևելյան կողմին կցված կիսակլոր աշտարակի կառուցման հետ։ Այստեղ, ի տարբերություն նախորդ շրջանների շինարարական արվեստի, պատերը կառուցված են համեմատաբար փոքր քարերով, առանց երկաթյա կապերի, և որմնաքարերի միացման համար իբրև կապակցող նյութ գործ էածված կրաշաղախը։ Սակայն պատի հիմնական կրող մասը, նախորդ շրջանների նման, դարձյալ քարն է և ոչ շաղախը։

Պատի կառուցման այս եղանակը հանդիսանում է նախորդ շրջանների՝ չոր, առանց շաղախի կառուցվող պատերից կրաշաղախային խոշոր միջուկով պատերին անցման նախնական փուլը<sup>108</sup>։

Հայանի է, որ Մովսես Խորենացին Գառնիի ամրոցի կառուցումը վերագրում է Տրդատ III-ին (287—330)<sup>109</sup>։ Հնարավոր է, որ ռազմապաշտպանական տեսակետից ամրոցի կարևորագույն հանգույցում ստեղծված այդ խոշոր կիսակլոր աշտարակի կառուցողը լիներ Տրդատ III-ը, որին հետագայում (թերևս առավել մեծարժան նպատակով) վերագրվել է ամբողջ ամրոցի կառուցումը։



Աղ. 59. Կառնի, պալատական շենքեր և նրանց շրջապատի կառույցներ, Տառակաղիծ, ա) Ան-  
 տիկ տաճար, բ) Քառասրիչ եկեղեցի, գ) Մառտու (Մաշտոց կաթողիկոսի եկեղեցի),  
 զ) Պալատական դահլիճ, ե) Պալատական շենքի մնացորդներ, զ) Բազիլիկ

Չորրորդ շրջանը խիստ փոքր քարերով Լրկ- սուպատած և կրաշագախի մեծ միջուկով պատի կառուցվածքն է. կառուցողական այս կղանակը Հայաստանում լայն կիրառում ունի՝ հիմնականում X—XIV դարերում<sup>110</sup>:

Ինչպես ցույց են տալիս այդ կղանակով իրականացված, ամրոցի մուտքի արևելյան աշտարակի ու արևմտյան աշտարակից դեպի արևմուտք ձյզվող բավական մեծ բարձրությամբ պահպանված պատի մնացորդները, և պարսպպատի հյուսիսային հատվածի ամրոցը Լրկայնքով թափված համանուն պատի որմնաքարերը՝ միջնադարում սուղի է ունեցել ամրոցի պարսպպատակրի խոշոր վերակառուցում:

Գառնի գյուղի հնագույն խաչարարից մեկի վրա փորագրված Կատրանիղի թագուհու 879 թ. արձանագրությունից երևում է, որ այդ ժամանակներում Գառնին պատկանել է Բագրատունիներին, որոնք և կարող էին իրականացրած լինել այդ վերակառուցումը<sup>111</sup>: Հետևապես նման խոշոր վերակառուցում կարող էր տեղի ունեցած լինել Բագրատունյաց թագավորության շրջանում, թերևս X դարում:

Հինգերորդ շրջանը ամրոցի գլխավոր մուտքի արևելյան աշտարակի ներքի կողմում շինարարական նույն տեխնիկայով ստեղծված տուֆաշին կառուցվածքն է, որն, ամենայն հավանականությամբ, պատկանում է Զաքարյանների ժամանակաշրջանին: Բագրատունիներից հետո Գառնին կղև է Զաքարյանների սեփականությունը. անտիկ տաճարի պարակալի վրա պահպանվել է Գառնիի տեր իտաք իշխանուհու և նրա որդի Ամիր Զարարի՝ 1291 թ. փորագրված արձանագրությունը:

Պալատական շենքեր. Գառնի ամրոցի պարիսպներից ներս պահպանվել են ճարտարապետական-գեղարվեստական մեծ արվեստի ներկայացնող աշխարհիկ և պաշտամունքային կառույցների մնացորդներ:

Պալատական խումբը բաղկացած է կղև մի քանի շենքերից: Պեղումների հետևանքով առայժմ բացվել են ավելի քան 40 մ երկարության և մոտ 15 մ լայնության արբունի ապարանքի մնացորդները՝ Հարավարևելյան կեսում գտնվել է 1:2 համաչափությամբ կամարակապ մի խոշոր դահլիճ, իսկ մյուս կեսում տեղադրված են եղել տարրեր շափերի ու նշանակության բազմաթիվ սենյակներ (գծագր. աղ. 59):

Դահլիճից պահպանված է հյուսիսարևելյան

պատը՝ 2,00—2,20 մ բարձրությամբ, իսկ մյուս պատերը, շնչին բացառությամբ, ունչացված են: Շենքի մնացորդների մի մասը գտնվում է VII դարում կառուցված քրիստոնեական բառարսից Եկեղեցու արևմտյան հիմքերի տակ: Նշանակում է, VII դարում պալատական կառուցվածքը մասամբ կամ ամբողջապես արդեն ավերվել էր:


Պալատական խմբի մյուս մասի, դեպի հրապարակ ուղղված պատն ունի միմյանց հաջորդող մի քանի ուղղանկյուն կոնստրուկցիոն մշակված եզրագլուխ: Անկասկած, դրա վրա բարձրացված ճակատն ունեցել է բավական հարուստ ու արտահայտիչ տեսք: Հյուսիսարևմտյան սենյակներից մեկի ներքի պատերի ձևերի վրա պահպանվել են մուգ վարդագույն ներկի նախեր:

Եթև նկուղային հարկում գոյություն է ունեցել որմնանկարչություն, ապա կարելի է պատկերացնել, թե ինչ շքի տեսք պետք է ունեցած լինեին վերնաթարի պալատական մյուս սենյակներն ու արբունական ընդունելության դահլիճները: Պատերը կառուցված են ճեղքված որձաքարից և գետաքարից, իրեն միացնող նյութ օգտագործված է կրաշագախ: Պալատական խմբի, դեպի բաղնիքի շինքը ուղղված կեսում, քարի որմնաշարքերին ղուգնեթաց, տեղ-տեղ հանդիպում է թրծած աղյուսի շարվածք:

Դահլիճի 9,65×19,92 մ չափի հատակագծային ներքին տարածությունը ութ ուղղանկյունի մուլթերի միջոցով (որոնցից տեղում գտնվել են Լրկարի՝ 1,12—1,68 մ չափի ներքնասայլերը) բաժանված է եղել երկու հավասար մասի՝ նալի<sup>112</sup>: Պահպանվել են դեպի անտիկ տաճարը ուղղված պատի՝ 0,98×0,70 մ կլում ունեցող բուր որմնամուլթերի մնացորդները: Պետք է ենթադրել, որ նույն քանակի և չափերի որմնամուլթեր կային նաև հանդիպակց պատին կից (գծագր. աղ. 60):

Դեպի անտիկ տաճարն ուղղված պատի անկյունից, 1,295 մ հեռավորությամբ պահպանվել է դրան բացվածքը երիզող պատի հատվածը: Իմանալով որմնամուլթերից մինչև մուլթերը եղած հեռավորությունը (4,25 մ), մենք տվյալ պատի շարունակության և համապատասխան մուլթի միացման անկյունում զետեղելով նույն 1,295 մ չափը, ստացանք դրան բացվածքի լայնությունը՝ 4,250—(1,295+1,295)=1,660 մ, որով և ամբողջացավ դահլիճի հատակագծային հորինվածքի հնարավոր վերարտադրումը:

Դրան բացվածքը կարող էր լինել նաև դահլի-



Աղ. 60. Կառնի. ա) Պարստական դահլիճ, Երկաշենական և լայնական կտրվածք. շափազրու-  
 թյուն, բ) Վերակազմություն. 1-ին տարրերակ, գ) 2-րդ տարրերակ, զ) Հատակագիծ,  
 վերակազմություն, ե) Լայնական կտրվածք, վերակազմություն, 1-ին տարրերակ, զ) 3-րդ  
 տարրերակ, լ) Գահլիճ. ամբողջ արևելյան պարսպին կից

ձի՝ ղեկի կիրճը ուղղված պատի վրա (Քերտ նաև մյուս նավի համանման հատվածում):

Դանլիճի հատակը անտիկ տաճարի պատման-գանի ներքին կրի նիշոց գտնվում է 2,52 մ ցած, անստարակույս պալատական կոուսցվածքը եղել է երկհարկանի<sup>15</sup>:

Սրմնամույթների և մույթների զատավորությունից ու շափից նետում է, որ կառույցը ունեցել է թաղակալ ծածկ, որ յուրաքանչյուր նավ ծածկվել է միանման թռիչք ունեցող ինքնուրույն թաղով<sup>16</sup>:

Վերը նշվեց, որ VII դարում քառաբսիդ եկեղեցու արևմտյան մասի հիմքերը գրվել են դանլիճի պատերի վրա: Հիմքերի տակ պահպանված պատի բարձրությունը կազմում է 2,00 մ, իսկ նույն պատի շարունակության վրա այն հասնում է մինչև 2,20 մ, բնական է, ինչ շինքի սկզբնական բարձրությունը կարող էր լինել ավելի մեծ:

Դանլիճի հատակագծի հիմքում բնկած 1:2 նամաշափությունը կիրառվել է նաև կենտրոնական կամարաշարքի կամարների բացվածքի համար (որտիսի հարաբերությամբ կիսաշրջանաձև վերջավորություն ունեցող կամարը հազվադեպ է անտիկ ճարտարապետության մեջ):

Թաղի կոուսցման եղանակի համար նարավոր է երկու տարբերակ:

Մեկը՝ եթե սրմնամույթներից ղեկի կենտրոնական կամարաշարքի համապատասխան մույթերը նետվեն թաղակիր կամարներ և նրանց մեջ ստացված ազատ տարածությունները ծածկվեն թաղի համապատասխան սեկցիայի բարերով:

Երկրորդը՝ եթե սրմնամույթից սրմնամույթ կամարներ նետվեն դանլիճի երկաշխական սղղու-թյամբ և այդ յուրահատուկ կամարաշարքի վրայից սկզբնավորվի ղեկի կենտրոնական կամարաշարքը ընթացող թաղը:

Առաջին ղեկերում ավելի դյուրին կարող է լինել թաղի կառուցումը, սակայն թաղակիր կամարների և թաղի կրունկի բարերի միացման նանկությունները ստացվում են ոչ շատ հստակ:

Երկրորդի ղեկերում, չնայած թաղը ստանում է շարք 20 մ երկարությամբ, սակայն նրա կոնստրուկտիվ իրականացումը համեմատաբար ավելի պարզ է:

Պալատական դանլիճը թե՛ ճարտարապետական մտահղացմամբ (որդակի համաշափությամբ հատակագծաչին նորինվածք, ներքին տարածություն նավերի բաժանում, կամարաշարք) և թե՛

կոուսցման ձևով (պատի շարվածք առանց սղույտի օգտագործման, մույթերի մեծադանգված որձաքարի ներքնաստիկներ, թաղակալ միասնական ծածկ) տարբերվում է պալատական խմբի մյուս կեսի շինություններից<sup>15</sup>:

Կառուցողական եղանակով և օգտագործված շինանյութով այն տարբերվում է նաև անտիկ տաճարից:

Ուշագրավ է պալատական դանլիճի կամարաշարքի կառուցվածքում զրսերովող ակնհայտ սգուշությունը: 1,08×0,98 մ շափեր ունեցող մույթների վրա նետված կամարների թռիչքները կազմում են ընդամենը 1,74 մ: Անշուշտ, կառուցողները ցուցարարել են իրավացի զգուշություն, որովհետև կամարաշարքի վրա իջնում են երկու կողմի նավերի թաղերի համապատասխան պատերը: Սակայն մեղ թվում է, այդքան մեծ գզուշությունն, ըստ էության, նաև փորձի պակասի նետանք է:

Հայտնի է, որ Հրաշամիդդի հանկարծակի ճարտարականից աճարեկված, Միհրդատը մ.թ. 52 թ. փախել և պատապարվել է Գռնի ամրոցի արքունի ապարանքում: 59 թ. հռոմեական զորքերի կողմից կրտաշարտի կործանման ժամանակ ավերածությունների են ենթարկվում նաև Գռնի ամրոցը և նրա ներսում գտնվող պալատական կառույցները:


Հնարավոր է, որ ուսումնասիրվող դանլիճը պատկանի մինչև 59-ի ավերումները գոյություն ունեցած պալատական շինքին:

Գռնիի բաղնիքը: Այն գտնվում է հեթանոսական տաճարից մոտ 50 մ ղեկի հյուսիս-արևմուտք. ներկայումս կիսաքանդ վիճակում է:

Շենքը գլխավոր ճակատով ուղղված է ղեկի հյուսիս-արևելք, որի հետանքով ամրոցը կոուսցր ստացել է հյուսիս-արևելք, հարավ-արևմուտք կողմնորոշում (լուսանկ. աղ. 42 ա):

Հատակադիմն ունի նույն ուղղությամբ միմյանց հաջորդող չորս սեկցիաներից կազմված հստակ հորինվածք: Սեկցիաների ղեկի հարավ-արևելք ուղղված պատերն ունեն արտաքինից կորագիծ, իսկ ներսից, մի մասը՝ պուլսաձև, մյուսը՝ կիսաշրջանաձև տեսք ունեցող խորշեր (արսիդներ) (գծագր. աղ. 61, լուսանկ. աղ. 42 բ):


Հյուսիսարևելյան կողմից հաշված առաջին սեկցիան ունի 2,91×3,14 մ, գրեթե բառակոսի հատակագիծ, որի հարավարևելյան ճակատը




Ա




Բ




Գ



Ե



Դ



Զ



Նդ. 61. Փառնի. բաղնիք, ա) Երկայնական կտրվածք, վերակազմություն, բ) Հափազրու-  
թյուն, գ) Լայնական կտրվածք, վերակազմություն, դ) Հյուսիսային ճակատ, վերակա-  
զմություն, ե) Հատակադիմ. վերակազմություն, զ) Հատակադիմ հիլոթևատատով. Հա-  
փազրություն

պատկվում է 2,39 մ բացվածք ունեցող պայտաձև խորշով:

Առաջին սենյակը մյուսների համեմատությամբ ունեցել է առավել հարուստ ներքին ձևավորում: Ի ստորերկրային մնացած բոլոր սենյակների, այն յուրաքանչյուր պատի վրա ունի 0,89—0,94 մ լայնությամբ դուռ մեկական բացվածք, որոնցից մեկը հաղորդակցվում է դրսի, մյուսը՝ հյուսիսարևմտյան կողմից հետագայում կցված սենյակի, իսկ երրորդը՝ մնացած լողասենյակների հետ:

Սենյակի պայտաձև խորշի առջև կառուցված է  $0,32 \times 0,27$  մ չափի նստարան, որի համար իբրև թիկնակ ծառայել է նստարանի հետևից բարձրացող  $0,45$  մ բարձրություն և  $0,30$  մ հաստություն ունեցող պատը: Նստարանաձև համանման մի կառուցվածք էլ ստեղծված է այդ պատի հետևի ձևկատին կից՝ պայտաձև խորշի մեջ: Երկրորդ նստարանն ունի ավելի մեծ բարձրություն, քան առաջինը, որի հետևանքով պայտաձև խորշի հատակը սենյակի հատակի հորիզոնի համեմատությամբ ստացվել է ավելի ներքև:

Կասկածից վեր է, որ պայտաձև խորշի ներսում ստեղծված է եղել ջրավազան: Թե ինչի՞ն է ծառայել այդ ավազանը, ստույգ զիջար է սակ: Թերևս այն ունեցել է դեկորատիվ նշանակություն, իբրև սենյակի ներքին ձևավորման մասնաամասններից մեկը: Բացառված չէ նաև, որ բաղնիք այցելուներն ընդունում էին սառը լողանք:

Սենյակի հատակը ( $2,91 \times 3,14$ ) ամբողջապես ծածկված է բարձր արվեստով կտտարված խճանկարով (լուսանկ. աղ. 43 ա, բ, 44 ա, բ): Այս սենյակը թև՝ բաղնիքի ողջ հորինվածքում զբաղված դիրքով և թև՝ ներքին յուրահատուկ (առավել հարուստ) մշակմամբ, անշուշտ, հանդիսացել է բաղնիքի նախադաս-հանդերձարանը:

Հնադուրս բաղնիքներից առանձին նախադաս-ներ ունեն ոչ միայն մեծ չափերի, այլև Գառնիի բաղնիքի նման ավելի համեստ չափերի բաղնիքներ:

Այսպես. վրատտանի՝ նույն ժամանակաշրջանի (II—III) Արմադիսիսիի (Մցինթալի) էրիթթավների պալատական բաղնիքի հինգ սենյակներից ձախից առաջինը (Գառնիի նման) հանդիսացել է բաղնիքի ընդհանուր հանդերձարանը<sup>116</sup>:

Նման սրիտակներ, երբ նախադասի համար հատկացված են հատուկ սենյակներ, գյություն ունեն նաև բազմաթիվ այլ վայրերում (Սև ծովի հյուսիսային ափերում՝ Խարակիսի բաղնիքը, Տրի-

բի հոռմեական վիլլաների բաղնիքները և այլն): Գառնիի բաղնիքի՝ հաջորդ սենյակները վնասված են ավելի շատ:

Նախադասին կից սառը ջրով լողասենյակի հատակը ստացել է շինչին շերտություն, որովհետև այն կրակարանից եկող բոցի և ծխի հոսանքից պաշտպանված էր (փոքր անցքեր ունեցող) երկու հաստ պատով և գտնվում էր կրակարանից բավական հեռու:

Ուրևմի, սառը ջրով լողասենյակը երկրորդը վիլլանով, նրան հաջորդող երրորդը՝ հանդիսացել է գոլ բաժանմունքը:

Չորրորդ սենյակն, բաց էլովյան, բաղկացած է երեք մասից: Հյուսիսարևելյան կեսը թև՝ հատակագծի ընդհանուր տեսքով, թև՝ չափերով ( $2,90 \times 3,05$ ) և թև՝ արտիզի բացվածքի անվայնությամբ նման է նախորդ սենյակներին և, անկասկած, տաք ջրով լողանալու սենյակն է: Մյուս կեսի հյուսիսարևմտյան մասը, ամենայն հավանականությամբ, ջրամբարի տեղն է, իսկ հարավարևմտյան հատվածում՝ հատակի ներքևի մասում գտնվել է հնցք, որի միջոցով տաքացվել է ջուրը:

Բոլոր սենյակների պատերը շարված են գետաբարերով և ձևաքված որձաքարի կտորներով: Իբրև միացնող նյութ օգտագործված է կրաշաղկախը:

Հանդերձարանի սենյակի պատերը պահպանվել են  $1,50—2,00$  բարձրությամբ, իսկ հյուսիսարևմտյան պատը՝ մինչև դուռն բարավորը ներառյալ: Երկրորդ, երրորդ և չորրորդ սենյակների պատերի պահպանված հատվածների բարձրությունը հասնում է  $1,40—1,65$  մետրի:

Բոլոր սենյակների և կորագիծ խորշերի անկյունները, ինչպես և հանդերձարանի դռների բացվածքների կիլիկները, շարված են մարմար տաշված  $0,40—0,50$  մ բարձրություն ունեցող սուֆարաքով, երբեմն օդադործվել է նաև ալյուր: Լողասենյակներում զրոյից ոչ մի բացվածքի (լուսամուտի կամ դռան) հետք չկա: Գծվար է անգամ որոշակի ասել, լողասենյակները միմյանց հետ ինչպես են հաղորդակցվել՝ դռների, թև՝ կամարակապ բացվածքների միջոցով:

Հանդերձարանի պատերի վրա պահպանված են ձևփի երկու շերտի մնացորդներ, սուաջինը մոտ երկու օսանտիմետր հաստությամբ՝ սպիտակավուն, իսկ նրա վրա, անհամեմատ շատ բարակ, ընդամենը մի քանի միլիմետր չափի, բաց վարդագույն:

## ՎՂՈՒՆ ԵՐՐՈՐԿ

### ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Իսխաբբիստոնեական Հայաստանում գոյութիւն է ունեցել պաշտամունքի կառուցվածքների ինչպէս առանձին, այնպէս էլ ճարտարապետական խոշոր խմբերի ընդարձակ ցանց:

Մատենագրական կցկտուր տեղեկութիւնների հիման վրա մեհնեական այդ կառուցվածքներից մեկ հայտնի են.

Արմավիրի «Արեգակի և Լուսնի» պաշտամունքին նվիրված տաճարը: Հայկական տաճարային կառուցվածքների այս հնագույն հուշարձանը Հ. Մանանդյանը դիտում է որպէս «հունական տաճար: Քանի որ Արմավիրի «Արեգակի և Լուսնի» պաշտամունքի տաճարը, մեր կարծիքով, խոշոր նշանակութիւն է ունեցել հայկական տաճարաշինութեան համար, մենք անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ այդ հարցին առավել հանգամանորեն:

Մովսէս Խորենացին, խոսելով առաջին հայ Արշակունի թագաւորի գործունէութեան մասին, գրում է.

«Այլ բոլորից հետո Արմավիրում մեհյան շինելով՝ արձաններ է կանգնեցնում արեգակին, լուսնին և իր նախնիքներին»<sup>1</sup>:

Մէկ այլ տեղ, անդրադառնալով Արտաշէս աշխարհակալի Փոքր Ասիա կատարած արշավանքներին, հարցրում է. «Ասիայում գտնելով Արտեմիդի, Հերակլի և Ապոլլոնի պղնձածուլ ոսկեզօծ արձանները, բերել է տալիս մեր երկիրը, որպէսզի կանգնեցնեն Արմավիրում: Քրմապետները, որոնք Վահոնիների ցեղից էին, Ապոլլոնի և Արտեմիդի արձաններն տանելով կանգնեցրին Արմավիրում, իսկ Հերակլոսի արձանը, որ Սկուլոսի և Կրետացի Գիպլոնոսի զորքն էր,

իրենց նախնի Վահագնը համարելով, կանգնեցրին Տարոնում, իրենց սեփական Աշտիշատ գոյւղում՝ Արտաշէսի մահվանից հետո»<sup>2</sup>:

Երվանդաշատ քաղաքի կառուցումը նկարագրելուց հետո, հայտնում է. «Բայց երվանդն իր քաղաքը շինելով՝ Արմավիրից այնտեղ փոխադրեց ամեն ինչ, բացի կուռքերից, որովհետև իր համար օգտակար չհամարեց նրան էլ իր քաղաքը փոխադրել...: Ուստի նրանից հյուսիս... Ախուրջան գետի վրա շինեց մի փոքր քաղաք, նման իր քաղաքին և կոչեց Բագարան, այսինքն թէ բազիլեներն այնտեղ են տեղավորված. և այնտեղ փոխադրեց Արմավիրում եղած բոլոր կուռքերը»<sup>3</sup>:

Ըստ Խորենացու, Արմավիրում գոյութիւն ունէր նաև սոսինների սրբալիան պուրակ, ուր կատարվում էին զանազան գուշակութիւններ<sup>4</sup>:

Կասկածից վեր է, որ Արմավիրում գոյութիւն ունեցած հայկական հեթանոսական կրօնի անդրանիկ կենտրոնը (որը ղեկոս հայ մուսուլմանի կազմավորումից շատ առաջ հանդիսանում էր տվյալ վայրում՝ հայկական պետականութեանը նախորդող ուրարտական պետութեան կրօնական նշանավոր օջախներից մեկը) մեծական նշանակութիւն կարող էր ունենալ հայկական տաճարաշինութեան կազմավորման ու նրա հետագա զարգացման համար: Ավելին, Արմավիրը հանդես է եկել ոչ միայն իրեն հնարավոր ընդհանուր ազդեցութեան արդյւնք, այլ հայկական տաճարաշինութեան վրա ազդել է ուղղակի, անմիջականորեն: Այսպէս, երբ Արմավիրից մայրաքաղաքը տեղափոխվում է Երվանդաշատ, ինչպէս սեսանք, նոր մայրաքաղաքից փոքր հեռու կառուցվում է

կրօնական հասուկ բազաբ Բագարանը և արմավերաճ բոլոր կուտերը տեղափոխվում են վերջին նորակառուց մեհյանները:

Պարզ է, որ կուտերի համար կանգնեցվող նոր տաճարները պետք է կառուցվեն հիմնականում այն ձևով, ոչ զլխավորն է՝ ճարտարապետական արվեստի ընձևած այն ներավորութուններով, որոնք դեռ ուրարտական ժամանակներից ստեղծվել ու կատարելագործվել էին Արմավիրում:

Նույն Երևույթը տեղի է ունենում, երբ մայրաքաղաքը Երվանդաշատից փոխադրվում է նորակառուց Արտաշատ: Այս անգամ էլ Արտաշատում ու նրա շրջապատում են կառուցվում նոր տաճարներ և այնտեղ տեղափոխվում Բագարանի կուտերը<sup>5</sup>:

Հասկանալի է, որ նոր մայրաքաղաքում կառուցվող տաճարները կամ պետք է կրկնեն Երկրի կրօնական կենտրոնի տաճարների հիմնական կերպարը, կամ հանդիսանալին նրանց դարգացման հաջորդ աստիճանը: Հետևապես նաև Արտաշատի նոր տաճարները, ուր տեղափոխվեցին Բագարանում գտնվող արմավիրյան կուտերը, կարող էին կրել Արմավիրի տաճարի նմանություններ կառուցված՝ Բագարանի տաճարների աղյուցությունը<sup>6</sup>:

Արեմե, մասենադրական վկայություններից հայտնի Արմավիրի «Արեզակի և Լուսի» պաշտամունքի տաճարը պետք է խոշոր նշանակություն ունեցած լինի հայկական տաճարների կաղավորման գործում:

Արմավիրում հեթանոսական սրբավայրի գոյության մասին են վկայում նաև Արմավիրի բլրի հարավային լանջի վրա՝ Արմավիրից Շահրիար տանող միջգյուղային ճանապարհի մոտ գտնված նախարեն արձանագրությունները<sup>7</sup>:

Գտնում են, որ արձանագրությունների մեջ հիշատակված «չորս ձիերի ու մարտակառքի» նվիրարներում կապ ունի «Արեի աստծո» Ապոլլոնի պաշտամունքի հետ<sup>8</sup>:

Ենկելով արձանագրությունների բովանդակությունից, դրանք վերծանող բոլոր գիտնականները (Մմիրնով, Բուրուևոյա, Մանանդյան, Տրևեր) գտնում են, որ արձանագրությունների կողմ բարբր տեղադրված են եղել սրբավայրում<sup>9</sup>:

Ակազ. Մանանդյանը հույնիակ հանդում է այն կորակադրության, որ հորենացու մոտ հիշատակված աստղին հայ Արշակունու կառուցած տա-

ճարը հիմնվել է հենց տվյալ հունարեն արձանագրությունների գտնված վայրում, բայց պատմիչը, քանի որ ծանոթ չի եղել Հայաստանում Երվանդյանների-Օրոնտյանների թագավորական դինաստիայի գոյությանը, շփոթել է տաճարի կառուցման ժամանակաշրջանը<sup>10</sup>: «...Այդ ասանքի կառուցումը,—գրում է Մանանդյանը,—պետք է վերագրել ոչ թե Արշակունիների դարաշրջանին, այլ Երվանդյանների, այսինքն՝ III—II դդ. մեր թվականությունից առաջ»<sup>11</sup> (ընդգծումը մերն է—Ա. Ս.):

Չնայած ժամանակի շփոթմանը միանգամայն հավանական է համարվում նաև հեթանոսական աստվածների «պղնձաձուլլ ոսկեզօծ արձանները» Փոքր Ասիայից Արմավիր տեղափոխելու վկայությունը<sup>12</sup>:

Գաւառնդի գավառի Անի (Կամախ) քաղաքի տաճարը<sup>13</sup>: Տաճարի կառուցումը վերագրվում է Տիգրան Երկրորդին, որն այնտեղ կանգնեցրել էր օլիմպիական Դիոսի (Զևսի) արձանը<sup>14</sup>:

Գարանդի տաճարը հանդիսացել է հայկական պանթեոնի զլխավոր աստված Արամազդի պաշտամունքի գլխավոր կենտրոնը, որը, շնորհիվ իր ունեցած մեհենական գրականության և արխիվի՝ ունեցել է մշակութային խոշոր նշանակություն<sup>15</sup>:

Այդ տեղի հետ՝ դանազան ուսումնասիրություններ կատարելու նպատակով կապված են եղել շատ գիտնականներ (ասորի նշանավոր գիտնական Բարդաման Եղևաջին II դ. մ.թ., հետապալում, հավանաբար, Խորենացին և այլն)<sup>16</sup>:

Հեթանոսական պաշտամունքի այս նշանավոր կենտրոնը, որը բայցի տաճարից, տմենայն հավանականությամբ, ունեցել է տաճարին կից ճարտարապետական նաև ժամ կառուցվածքներ, բիրտոնևության մտաբանումնական ավերվում է և դարձվում եկեղեցու կալվածք:

Եկեղյաց գավառի Երիզա ավանի Անահիտի տաճարը<sup>17</sup>: Հայաստանում Անահիտին նվիրված բազմաթիվ տաճարներ են գոյություն ունեցել, սրունցից շրտի վերաբերյալ հիշատակություններ ունենք:

Երիզայում կառուցված Անահիտի տաճարն այն աստիճան է հռչակված եղել, որ հույն որոշ պատմիչներ տաճարի պատվին եկեղյաց ամբողջ դավաոր կուշլ են «Անահիտական»<sup>18</sup>, իսկ ոմանք Երիզի Անահիտի<sup>19</sup>: Տաճարն ունեցել է մեծ

Նարստոսյուն: Եկեղյաց ամբողջ զավտոր եղև և տաճարի սեփանանությունը:

Տաճարում զրվոյ Անահիտի արձանը ավանդաբար պատրաստվում էր սուրուց: Մարկոս Անտոնիոսը (24—33 մ.թ.ա.) Արտավազ Բ-ից վրեժ լուծելու համար, կողոպտելով Անահիտի տաճարը, տարավ նրա ոսկեկնույլ արձանը<sup>20</sup>: Մոտ շորս դար հետո, քրիստոնյաների կողմից տաճարի ավերման ժամանակ, այնտեղ զրված Անահիտի արձանը դարձյալ ոսկուց էր<sup>21</sup>:

Տաճարի համբավն այնքան մեծ էր, որ այնտեղ երկրպագության էին գնում ոչ միայն հայ, այլև հույն թագավորները<sup>22</sup>: Տաճարին կից դոլուսյուն ունեին հերոզոպները<sup>23</sup>:

Հայ հեթանոսական կրոնի այդ հնազույն սրբավայրն իր կազմակերպություններով գոյատևում է մինչև Հայաստանում քրիստոնեության պետական կրոնի հռչակումը:

Անշուշտ պաշտամունքի՝ բազմադարյան կյանք ունեցող այդ խոշորագույն օջախում, պետք է որ լինեին պաշտվելիք կուռքի ոսկեկնույլ արձանին, տաճարին, «բարձրարևձ պարսպակերին»<sup>24</sup> համապատասխանող ճարտարապետական նաև այլ կառուցվածքներ, որոնց զգալի մասը քրիստոնեության մուտքից հետո պարձավ նույն տեղում հիմնված եկեղեցու սեփականություն<sup>25</sup>:

Աշտիշատի Անահիտի տաճարը: Աշտիշատը մտնում էր բրմական դասի տոհմիկ կալվածքի մեջ<sup>26</sup> և նանդիսանում էր հայկական հեթանոսական կրոնի գլխավոր կենտրոնը<sup>27</sup>:

Այն եղև է «...յաշտից տեղիք քազատուրացն հայոց մեծաց... որ և անուանեալ բոտ հաճախաշատ պաշտման տեղացն՝ Յաշտիշատ»<sup>28</sup> (ընդընդունը մերն է.—Ա. Ա.):

Թև ինչպիսիք նշանակալից կառուցվածքներ էին տաճարը և նրան կից շենքերը, թևերն կարելի է էտանել նույն արբանբրի՝ այդ տաճարին ցույց տրվող սրբատակար: վերարևմունքից: Խոսքով թագավորի (III դ.) մեկ բնծայրերման մասին Ագաթանդեղոսը հիշատակում է, թև ինչ-որ հաղթանակի առթիվ նա Անահիտի տաճարին նվիրեց սպիտակ նոխաղներ, սպիտակ ձիեր և սպիտակ ջարիներ՝ զարդարված ոսկով և արծաթով, մետաքս գործվածքներ, ոսկե պսակներ և արծաթե զոհաբաններ ու այլ սրբազան աճոբներ, որոնք զարդարված էին թանկագին բարերով, ոսկեզօծ և արծաթազօծ զոհասաներ ու զարդեր<sup>29</sup> (ընդգծումը մերն է.—Ա. Ա.):

Եթև նկատի ունենանք տաճարում պաշտվող ստոճուս նաև ոսկեկնույլ արձանը, ապա պետք է կտանել, որ եղև է նաև տաճարի ներքին այդ շրեղությունը և նարստոսյանը ներդրանակ ճարտարապետական համապատասխան կառուցվածք:

Քրիստոնեական տաճարների ծագման ու կազմավորման հարցերի լուսաբանման տեսակետից հետաքրքրական է այն փաստը, որ քրիստոնեությունն, օգտվելով Աշտիշատի հեղինակությունից, հենց այդտեղ կառուցեց «Հայոց մեծ և առաջին մայր եկեղեցին»<sup>30</sup>... կաթողիկոսական շրեղ անպարանբոյ<sup>31</sup>:

Արտաշատի Անահիտի տաճարը: Քրիստոնեության մուտքի ժամանակ տաճարի ավերման նկարագրության մեջ հիշվում է, թև «...և ամենայն շինուածք մեհենին ի հիմանց զղրլուալ տապալեցան և լուցեալ յանկարծորեն փայտակերտն հրդեհեցաւ... և ծովին ծառացեալ մինչև յամպս հասաներ»<sup>32</sup>:

Քրիստոնեական վաղ շրջանի պաշտամունքի կառուցվածքների զգալի մասն ունեցել է փայտածածկ տանիք. բոտ երևույթին Արտաշատի տաճարը նույնպես ունեցել է նման կառուցվածք, որի ավերման ժամանակ «փայտակերտն հրդեհեցաւ»:

Վասպուրականի Անձևացյաց եկրի Դարբնաց Բար կոչվող աեղում գտնված Անահիտի տաճարը, որի մասին որևէ այլ ավյայ չունենք<sup>33</sup>:

Աշտիշատի Վահագնի պաշտամունքին նվիրված տաճարը: Անահիտի տաճարի ճարտարապետական կոմպլեքսում ստեղծված այս կառուցվածքի մասին հիշատակվում է, թև՝ «...մեհենն մեծագանձ, իր ոսկով և արծաթով, և բազում նուէրք մեծամեծ իագատուրաց ձօնեալ անգ...»<sup>34</sup>:

Աշտիշատի տաճարների կոմպլեքսում կառուցված Աստղիկի պաշտամունքի տաճարը, որի մասին նույնպես որևէ այլ ավյայ չունենք<sup>35</sup>:

Մեծ Հայքի Կեղան գավառի Բագայառնի գյուղում գտնված Մինրի պաշտամունքի տաճարը: Այստեղ Տիգրան երկրորդը կանգնեցրել է «Յուսեայ Հեփեստոսի արձանը»<sup>36</sup>:

Քրիստոնեության մուտքի ժամանակ ավերվում է նաև Միհրի տաճարը և տեղը կառուցվում եկեղեցի<sup>37</sup>:

Եկեղյաց գավառի Թլլ ավանում կառուցված՝ նաև ևս պաշտամունքի տաճարը: Նաև ևս տաճարում Տիգրան երկրորդը կանգնեցրել է նույնական Աթենասի արձանը<sup>38</sup>: Քրիստոնեության տարած-

ման մասնակ ալիւրվում է տաճարը և ճարտարապետները ճանձնվում նույն տեղում հիմնադրվող եկեղեցուն<sup>30</sup>:

Վաղարշապատի և Արտաշատի միջև գտնված Երագամունջ ավանի՝ Տիրի պաշտամունքի տաճարը, որը ալիւրվում է Տրդատ III թագավորի և Գրիգոր Լուսավորչի ձեռքով<sup>40</sup>:

Դարանավայց գալտաի Թուրան գյուղում կառուցված Թարշամինի տաճարը՝ Տիրքան Երկրորդի հրամանով տաճարում կանգնեցված է Լուկ Բարշամինի: արձանը «...գոր ի փղոսկրոյ և բիրեղէ կաղմալ էր արծաթով...»<sup>41</sup>:

Բրիտոնեական կրոնի ընդունման ժամանակ կործանվում է նաև այս տաճարը և ամբողջ կալվածքը ճանձնվում նույն տեղում կառուցվող եկեղեցուն<sup>42</sup>:

Բագրևաճղի Բագավան կամ Դիցավան ավանի տաճարը՝ Բագավանը դեռ հնագույն ժամանակներից հանդիսացել է խոշոր ուխտատեղի, որ Տիրքան Գ-ն իր եղբոր՝ Մաժան բրմապետի գերեզմանի վրա կառուցում է մե՛ջան<sup>43</sup>:

Տարևում (Աշտիշատից ուշ շատ հեռու) Քարե լեռան վրա կառուցված տաճարները: Բրիտոնեական կրոնի ընդունման ժամանակ այս տաճարների տեղում կառուցվում է ս. Կարապետի Էշանավոր վանքը<sup>44</sup>:

Բագարանում կառուցված հեթանոսական տաճարների համալիրը<sup>45</sup>: Ն. Մ. Տոկարսկին, խոսելով Գառնիի ամրոցի հուշարձանների մասին, գրում է «Այստեղ տեղին է հիշատակել Բագարանի միանգլ Եկեղեցու ալեբրակները մասին, որի Երկայնական պատերից խիստ առաջ եկող որմնասյուները պսակված են կորնթական խոյակներով»<sup>46</sup>:

Նման հուշարձանների գոյությունը Բագարանում միանգամայն հասկանալի է: Չէ որ, դեռևս III—II դդ. (մ.թ.ա.), Երվանդաշատից ուշ հեռու կառուցվեց Բագարանը, որտեղ իբրև երկրի պաշտամունքի գլխավոր կենտրոն դեռևս լիցիին հեթանոսական տաճարների մեծ խումբ: Հիշենք նորենայտ վկայությունը, ըստ որի, Երվանդ թագավորը Երվանդաշատ մայրաքաղաքից ուշ հեռու «...Ախուրյան գետի վրա, շինեց մի փոքր քաղաք նման իր քաղաքին և կոչեց Բագարան, այսինքն թի՛՛ բազիլոնն այնտեղ են տեղավորված. և այնտեղ փոխադրեց Արամավիրում եղած բոլոր կուռքերը: Շինեց նաև մեհյաններ և իր

երվաղ Լղերը քրմապետ նշանակեց» (Գիրք, Բ, գլ. Խ):

Երագավորսի հեթանոսական տաճարը: Ն. Մ. Ար., անդրադառնալով Երագավորսի հեթանոսական շրջանի դամբարանների նյութերին, հիշատակում է, որ Երագավորսում (Բաշ-Շուրագյալ), ըստ Հ. Օրբելու բանավոր հաղորդման, գոյություն ունեն հեթանոսական տաճարի մնացորդներ<sup>47</sup>:

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏՈՒՄ ԱՆՅՈՐ ՏԱՄԱՐԻ ԵՎ Ա. ՀՈՒՓՈՒՄԵ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՔԵՐՈՒՄ ՊԱՀՂԱՆՎԱՏ ԷԹԵՍՆՈՍԱԿԱՆ ՏԱՄԱՐԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Էջմիածնում (նախկին Վաղարշապատ) վերջին տարիներին բացվեցին նախաքրիստոնեական շրջանի կառուցվածքների մի քանի ուչագրավ բեկորներ:

Մայր տաճարի սկզբնական կառուցվածքի (IV դ.) հիմքերի մոտ բացվեց բազալտե մի խոշոր որմնաքար՝ մետաղական կապերի հետքերով, որը հիշեցնում է Գառնիի ամրոցի անտիկ շրջանի պարսպապատերի որմնաքարերը, իսկ ս. Հոնփսիմի տաճարի գմբեթակիր որմնամուկների տակ՝ տուֆակերս: Ինչ-որ շենքի բրվի (1,30×0,80×0,40 մետր չափերի) քանդակագրող երեք բեկոր, որոնց մշակումը հար և նման է նույն ամրոցի հեթանոսական տաճարի մանրամասների մշակումներին:

Այդ բեկորների զգալի չափերից և նրանց զարդաքանդակման ոճից դժվար չէ կռահել, որ նրանք պատկանել են բավական հարուստ մշակում ունեցող ճարտարապետական խոշոր կառույցի:

Արդ հետաքրքրական է, ի՞նչ բնույթի կառուցվածք է Լղել այն:

Ինչպես տեսանք վերը, բրիտոնեական կրոնը Հայաստանում պետական հռչակելու շրջանում, հեթանոսական մշակույթի մյուս հուշարձանների նման ալիւրվում են նաև տաճարները և նրանց տեղում բարձրացվում պաշտամունքի նոր կառուցվածքներ: Ընդ որում, Աշտիշատից ուշ հեռու շինված հեթանոսական տաճարներից մեկի տեղում կառուցված եկեղեցու վերաբերյալ պահպանվել է հիշատակություն այն մասին, որ Եկեղեցու համար բնդունվել է հատակագծային նույն կամպոզիցիան, որպիսին ուներ մեհյանը, «Քան-



դի Տիմն Լկիդեցոյն Էղաւ ի Նոյն տեղիս, նոյն շափովն լայնութիւնն և Երկարութիւնն, բայց միայն զի Նորա յարեմուտս Երկրագաղէին»: Նշանակում է, չեթանոսական տաճարի հատակագիծն ունեցել է ուղղանկյուն-Երկաշնական նորինվածք և ընդունվել է նույն տեղում կառուցված եկեղեցու նստաբ. այն ապրրերությամբ միայն, որ «սեղանք» արեմուտն կողմից տեղափոխվել է արևելյան կողմը:

Հոխոխման տաճարի գմբեթակիր սրմամուտքների շիտերուս պահպանված չեթանոսական շրջանի ճարտարապետական բեկորները նույնպէս պահպանվել են այդ նույն տեղում երբեմնի գոյաւիջուն ունեցած չեթանոսական պաշտամունքային կառուցվածքի (յուսանկ. աղ. 36 բ):

Ենպէս տեսնելով, Հայաստանում քրիստոնէութեան տարածման ժամանակ տիրելի է չեթանոսական տաճարների գրգռի մասը և նույն տեղում կանգնեցվել են քրիստոնէական պաշտամունքի առաջին կառուցվածքները<sup>48</sup>:

Սակայն չեթանոսական տաճարների մի մասը «սրբազարծվելով», ուղղակի փոխարկվել են քրիստոնէական պաշտամունքի առաջին կառուցվածքների:

Փափասու Բուզանդը, նկարագրելով Տարոնում՝ չեթանոսական նախկին սրբազարծում կառուցված «Նայոյ մեծ և առաջին Լկիդեցին» այցելած ինչ-որ ստաիճանավորների, գրում է.

«Որովհետ Տնց այսպէս սովոր էին Նայոյ կայսկողոտապետները՝ թագավորի, մեծամեծների, նախարարների և ժողովրդի խառն բաղմութեան հետ միասին պատվել այն տեղերը, որոնք ստաջ կուռների պատկերների տեղեր էլին և հետո աստծու անունով սրբիցին ու դարձան սղորթի տներ և ուխտատեղիներ բոլորի համար»<sup>49</sup> (ընդգծումը մերն է—Ռ. Ս.):

Հետևապէս, քրիստոնէական պաշտամունքի վաղ շրջանի մի շարք կառուցվածքներ հանդիսանցել են չեթանոսական նախկին մեհյաններ<sup>50</sup>:

Նշանակում է, չեթանոսական տաճարները ոչ միայն հաստակցածային կոմպոզիցիայով, այլև տարածական-ժամայային կառուցվածքով չեթանոսական բաղադրում էին քրիստոնէական պաշտամունքի անդամակի կառուցվածքների պահանջները:

Չեթանոսական պաշտամունքի այդ կառուցվածքների մեծազույն մասը դրուսթյուն է ունեցել մինչև Հայաստանում քրիստոնէական կրոնի

հաստատումը: Բնականաբար, պաշտամունքի բազմադարյա կյանք ունեցող այդ կառուցվածքները պետք է որ հանդիսանային իրենց նշանակութեան և նշակալի նամապատասխան՝ ճարտարապետական-կառուցութեան բարձր արվեստի երկեր:


III դարի վերջերին կամ IV դարի սկզբներին, Երբ Երկրում քրիստոնէական կրոնը նշակվել է պետական, չեթանոսական մշակութի մյուս հուշարձանների հետ կործանվել են նաև գրեթէ այս բոլոր կառուցվածքները: Միայն առանձին տեղերում սրտը մեհյանները հարմարեցվել են նոր կրոնի պահանջներին և վերածվել քրիստոնէական պաշտամունքի տաճարների նրջանիկ բացասութեան, ըստ Երեմյայի, կազմել է Գտոնի ամրոցի արբունի չեթանոսական տաճարը:

Գեոնիի Երանոսական տաճարը: Կառուցված է ամրոցի Լոանկյունածէ տարածքի հարավարևելյան հատվածում, Լոանկյան շուրջ 500 մետր բարձրութեան ունեցող բնական ժայռերից ստեղծված պապաթից ոչ շատ հեռու Ակատ դետի հրաշագեղ կիրճի գրեթէ երկին: Ստեղծված լինելով տեղանքի բնակական բարձր մասի վրա, այն ընկալվում է ամրոցի ոչ միայն ներքի, այլև դուրի գրեթէ բոլոր կետերից (յուսանկ. աղ. 45 ա, 49, 50):

Կառուցման ստույգ ժամանակը հայտնի չէ: Գիտական դրականութեան մեջ նրա կառուցման ժամանակի վերաբերյալ առաջարկվող թվագրութեանը տատանվում է ավելի քան կես հազարամյակի սահմաններում (III—II դդ. մ.թ.ա.—մինչև IV դ. մ.թ.ա.): Սակայն ժամանակի պատմական իրադարձութեանների և հատկապէս տաճարի ճարտարապետական-շինարարական արվեստի վերլուծութեանից պարզվում է, որ նրա կառուցումը, անտարակույս, կապվում է հայոց Տրդատ Ա թագավորի դահախալութեան ժամանակաշրջանի հետ (66 թ. հետո):

Քրիստոնէական կրոնի ընդունումից հետո տաճարի շէնքը ծառայել է աշխարհիկ նպատակներին, հանդիսանալով Տրդատ Գ թագավորի բրոջ խորտոլղութաի նովանսըր: Անշուշտ, այդ է պատճառը, որ միջնադարում Հաճախ այն կապվել է Տրդատ Գ թագավորի անվան հետ և հիշատակվել «սարսույթ Տրդատայ», «թաղթ Տրդատայ» անուններով:

Տաճարը կանգուն վիճակում մնացել է մինչև



Աղ. 63. Գառեր. Անտիկ տաճար, Հյուսիսային ճակատ, վերակազմութիւն ըստ Ն. Բունիաթ-  
յանի

XVII դարը և խորտակվել 1679 թ. Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժի ժամանակ Այնու-Շենո, Թևև ալևրված, բայց իրեն մեծ արժեք ունեցող հաղվազեղ սուշարձաններից մեկը, նա իր վրա բերեց վերջին հարյուրամյակներին հայկական ճարտարապետության հարցերը շոշափող հայրենի և օտար բազմաթիվ մասնագետների ուշադրությունը (Շարդեն, Մորիեր, Կեր-Պորտեր, Գյուրտա, դե Մոնպլան, Տելֆեր, Շանար, Շնապել, Մոտ, Ամիրնոյ, Թորամանյան, Բունիաթյան, Մանանդյան, Տրեկեր և այլն):

Իրեն հիմնական շինանյութ օգտագործված է տեղական կապտավուն որձաքարը, որը մշակված է մեծագույն վարպետությամբ: Բնական է, որ նման կատարելության դյուրությունը կարող էին հասնել այդ շինանյութի վրա աշխատելու մեծ փորձ ունեցող տեղական վարպետները: Շինարարական այդ տեխնիկան, Գուռնիի տաճարի կառուցումից շատ դարեր րտաջ կիրառված է Եգիպտոսի Գուռնիի ամրոցի պարիսպներում և աշտաբաններում, ինչպես նաև Արմավիրում, Երվանդաշատում, Անիի նախարարատնակական կառուցվածքներում և այլուր:

Որձաքարի մշակման և քարե պատի կառուցման բարձր արվեստը Հայկական լեռնաշխարհին հայտնի էր դեռևս ուրարտական շրջանից, որը հելլենիստական մշակույթի ստեղծման րնթացքում պետք է հասած լինելը դարգացման նոր, ավելի բարձր աստիճանի:

Պատերը շարված են շոր, առանց շաղախի, որմնաքարերը ինչպես հորիզոնական, այնպես էլ ուղղահիվ ուղղությամբ միացված են երկաթյա կապերով և երկաթի ու քարի միացման փոսիկները լցված են կապարով: Սյուների բարերի միացման տեղերում օգտագործված են նաև րրոնեղ ուղղահիվ կապեր: Շինարարությունը կատարված է խոշոր բլուրներով: առանձին բարեր (օրինակ՝ նախամուտքերի, առաստաղի սալերը, որոնք ունեն 0,90—1,05 մ լայնություն, 0,44—0,5 մ բարձրություն և ալիլի բան 4,00 մ երկարություն) կշռում են մինչև յինգ տոննա:

Շենքն ունի ոչ մեծ կառուցվածք: Նրա հասակագիծն իրենից ներկայացնում է 5,04×7,98 մ չափի մի սրահ (այսպես կոչվող «նոսոս») հյուսիսային կողմից երկայնական պատերի շարունակությունների միջև ներդրված նախարահով («պրոնոսոս»), որոնք արտաքինից շրջապատված են քսանշորս (կարճ ճակատներում վեցական, եր-

կար ճակատներում՝ ութական) սյուներով (գծագր. աղ. 62): Սյունաշարքի համար րնտրվել է հոնիական ոճի (յուսանկ. աղ. 46 ա, 47 ա), այսպես կոչված, հունահռոմեական օրդերը, այսինքն սյուները դրվել են բարձր պատվանդանի (պոդյումի) վրա և պսակվել են հարուստ մշակված անտաբլեմենտներով (արխիտրով, ֆրիզ, քիլ) (յուսանկ. աղ. 46 ա, բ, 47 բ, 48 ա, բ):


Տաճարը գլխավոր ճակատում ուղղված է դեպի հյուսիս (գծագր. աղ. 63): Գլխավոր ճակատի գրեթե ամբողջ լայնքով րնթանում են մեծ բարձրության ինը աստիճաններ, որոնց երկու կողմերի պատվանդանների ճակատներին պատկերված են երիտասարդների մեկական բարձրարանիզակներ՝ ասլանտներ, Ատլանտներ մեկական ստրելով ծունկի են կեած և ձեռքերը վեր պարզած պահում են ինչ-որ ծանրություններ: Կարծիք կա, ըստ որի պատվանդանի վրա դրված են կղև դոճանիզաներ, որոնք և ստեղծել են ատլանտներ կրելիք ծանրությունների տպավորությունը:

Ենթադրվում է, որ Գուռնիի տաճարը նվիրված է եղել հին հայկական արևի աստված Միհրի պաշտամունքին:

4. Տրեկերը նկատի ունենալով Կասիոս Գիոնի (մոտ 155—235 մ.թ.) այն հիշատակությունը, ըստ որի 65 թ. Հռոմում Տրդատ I-ը շահրպում է ներունին և ասում. «Ես ներկայացա թեզ, իմ աստծուն, երկրպագելու թեզ, իրեն Միթրայի», և Տակիտոսի (I-ին դ. մ.թ.) այն վկայությունը, որ Տրդատ I-ը միաժամանակ կատարում էր թրմական (թրմապետի) ֆունկցիա, գրում է.

«Այսպիսով մի կողմից մենք գործ ունենր Կասիոս Գիոնի հաղորդման հետ, որ Տրդատը իր (գերագույն) աստվածը համարում էր Միթրային-Միհրին, մյուս կողմից, մեր առջև Տակիտոսի խոսքերն են՝ Տրդատի թրմական պարտականությունների մասին: Այդ հանգամանքները հիմք են տալիս ենթադրելու, որ Տրդատը, 66 թ. վերապանալով Հռոմից և ձեռնամուխ լինելով Կորբուլոնի կողմից ավերված Արտաշատի, ինչպես և Գուռնիի ամրոցի վերակառուցմանը, հենց այդ մասնակ էլ կառուցում է տաճար, նվիրելով այն Արևի-Արեգակի աստծո պաշտամունքին, որին դեռևս I-ին դ. (մ.թ.ա.) երկրպագում էր Տիգրան II-ը և որին Արշակունի Տրդատ I-ը անվանեց Միթրա»<sup>51</sup>:

Ընդ որում, Էյնելով այն բանից, որ «մեհյան»-ը



Աղ. 64. Նաոնի. Անտիկ տաճար. լաթնական կտրվածք, վերակազմություն

սերվում է «Միւր-Միւր» աստօծ անունից և հե-  
լանասական սաճար հասկացողութեան նա մեկ-  
տեղ, աստչին լերթին նշանակում է՝ միհրական  
պաշտամունքի տաճար, ուրեմն Գառնիի տաճարը  
եղել է մեհյան այդ բառի հիմնական իմաստով<sup>52</sup>։

Նոր հնաազոտութեանները ցուց են տվել, որ  
պաշտովող կուռքի արձանը կանգնեցված է եղել  
հակ Գառնիի տաճարում։

Մասնագիտական գրականութեան մեջ, համե-  
մատելով հռոմեական և սիրական հեթանոսական  
տաճարների ներքին հորինվածքը, հիշատակվում  
է, որ «Միրիական տաճարների ներքին լուծումը  
յուրահատուկ է։ Ինչպես հռոմեական տաճարնե-  
րում, նրանց միջև ևս պաշտովող (կուռքը) արձա-  
նը կանգնած էր ետևի պատի մոտ։ Սակայն,  
հռոմեական տաճարների արսիդների փոխարեն,  
սիրիական տաճարի աղոթարանը (ցելլան) խոր-  
քում պսակվում է բարձր պատվանդանի վրա  
ստեղծված aditon-ով»<sup>53</sup>։

Սիրիական տաճարներից համանման լուծում-  
ներ ունեն Բաալբեկի մեծ և փոքր տաճարները,  
Պալմիրայի, այսպես կոչված, Բալի տաճարը,  
քննաշայն տաճարները և այլն<sup>54</sup>։ Նույն երևույթը  
բնորոշ է փոքրասիական պաշտամունքի տաճար-  
ների (Պերգամ, Պրիենն և այլն)<sup>55</sup>։

Այդպես է եղել նաև Գառնիում։ Պաշտովող կուռ-  
քի արձանը կանգնեցվել է աղոթարանի հետևի  
պատի մոտ, բարձր պատվանդանի վրա, ներառ-  
ված բավականին մեծ շափեր ունեցող ուղղան-  
կյունի խորշի մեջ (գծագր. աղ. 64)։

Խորշի բացվածքի շափերը ցույց են տալիս, որ  
նրա մեջ դրված արձանը կարող էր ունենալ  
զգալի բարձրություն։

Գառնիում մուտքի բացվածքն աղոթարանի  
ներսի տարածության համեմատությամբ այնքան  
մեծ է, որ այնտեղից ներս թափանցող լույսը իր-  
վին բավարարում էր աղոթարանը անհրաժեշտ  
շափով լուսավորելու համար։

Սակայն, չնայած դրան, Գառնիի աղոթարանը  
լուսավորվել է նաև վերևից՝ նրդիկից։ Նրդիկի  
լույսը, անշուշտ, ունեցել է սիմվոլիկ նշանա-  
կություն. ցանկացել են պաշտովող կուռքի վրա  
լույսի խորձ իջեցնել նաև վերևից։

Այն առումով ուշագրավ են ճարտարապետու-  
թյան պատմության հանրաճանաչ մասնագետ  
Օզյուստ Շուադիի դիտումները. նա գրում է.  
«Անհրաժեշտ է նշել, որ այն տաճարները, որոն-

ցում առավել ստույգ են հաստատված մերկից  
լուսավորելու բացվածքների տեղադրվածքը,  
նպիրված են լույս անձնավորող աստվածություն-  
ների՝ Ջուսի (Նիլոպիա, Մլլինոնտ), Ապոլլոնիս  
(Ֆիգալիա, Միլեթ)»<sup>56</sup>։

Ուրեմն, նույն երևույթն ենք տեսնում նաև  
Գառնիի՝ արևի պաշտամունքի տաճարի կառուց-  
վածքում։

Հեթանոսական պաշտամունքի այս ուշագրավ  
հուշարձանն, ըստ ընդհանուր հորինվածքի, մի-  
տեսնում է հունահռոմեական ճարտարապետության  
համանման կառուցվածքներին (գծագր. աղ. 65,  
66, 67)։


Ինչպես տեսանք, II—I դարերում (մ.թ.ա.) Հա-  
յաստանը Առաջավոր Ասիայի մի շարք երկրների  
նման հելլենիստական մշակույթի ստեղծման  
օջախներից էր և միանգամայն տրամաբանական  
է, որ մեր թվականության նախորդ կամ նույնիսկ  
սկզբի դարերում պաշտամունքի տեղական կա-  
ռուցվածքներին դուզընթաց, հանդես գային նաև  
զրսից վերցրած առանձին հորինվածքներ։ Գառ-  
նիի տաճարը հենց այդ կարգի հուշարձան է։

Տաճարն ըստ ընդհանուր կոմպլեքսիցիայի հու-  
նական պերիպտեր է, ըստ առանձին մանրա-  
մասների կառուցվածքի (բարձր պողոտա, ճակ-  
տոնի մեծ թևքություն, որոշ տեսակի դարդաբան-  
դակներն՝ առկայություն և այլն) մոտենում է  
հռոմեական արվեստին։

Վերոհիշյալներից ելնելով, հետադետողների  
մի մասն այն համարում է «...հռոմեական տի-  
պի տաճար»՝ կառուցված հռոմեական ինչ-որ  
կայսեր պատվին<sup>57</sup>, կամ դիտում որպես «հռո-  
մեական տաճարի բնորոշ տիպ», ուր «...ունահռո-  
մեական ոճը յուրօրինակ ներդաշնակությամբ  
միացվում է ասիական հետ»<sup>58</sup>։ Ուրիշներն այն  
անվանում են «հելլենիստական-հռոմեական կա-  
ռուցվածք», իսկ վերջերս գիտնականների որոշ  
խումբ այն կապում է տեղական, նույնիսկ նա-  
խահայկական (ուրարտական) ճարտարապետու-  
թյան հետ<sup>59</sup> կամ պարզապես համարում Հայաս-  
տանի ամենավաղագույն շրջանի կառուցվածք<sup>60</sup>։

Սակայն Հայկական լեռնաշխարհին օտար չէր  
ուղղանկյունի հատակագծով, սյունաշարքով ու  
ճակտոնով կառուցվածքի կերպարը։

Մուսասիրի ուրարտական տաճարը (IX դ.  
մ.թ.ա.), ինչպես իրավամբ նշում է ակադեմիկոս  
Բ. Պրոտրովսկին, «...ներկայացնելով սյունաշար-



Աղ. 65. Փարթի. Ամուլի սուլթան. Երկաթեղևի կամարներ, Վերակազմություն

րով և ձևակոծում տաճարների հայտնի տիպերից ենազգայնոր, ընկալվ անտիկ ճարտարապետության հիմունքում: (ընդգծում մերն է—Ա.Ս.):

Հասկանալի է, որ Մուսասիրի տիպի տաճարների կարող էին գոյություն ունենալ Հայկական լեռնաշխարհի նաև այլ վայրերում. այդ մասին է վկայում Բշևանից (Ասաղիբլուր) գտնված մ.թ.ա. VI դարի գործ համարվող Երկյանջ տանիքով շէնքի կապիշեն մոդելը:

Մուսասիրի տաճարի առաջավորասիական կերպարը, մոտենալով մասնավորապես «պրոստիլոս», «անտերով տաճար» (թեևս «կեղծ պերիպտերոս» կոչվող) տիպի պաշտամունքի կառուցվածքներին, իր հորինվածքով (բարձր պատմական) վրան վեց (կիր կամ ուղղանկյունի կարվածքով) սյուններից կաղնված սյունաշարքով, ուր կարի սյունների համեմատությամբ մեջտեղի սյունների հեռավորությունը մեծ է, նախամուտքով, բարձր ճակտոնով, ակրոտերիայով, ընդհանրություն ունի նաև Գառնիի տիպի (թեև ուղ պերիպտերիալ կառուցվածք ունեցող) տաճարների հետ: Ծարբերությունն ըստ էության հոնիական օրդերն է, որն իբրև այդպիսին մշակվեց անտիկ ճարտարապետության մեջ:

Հոնիական հիշեցնող խոյակներով սյուննր Առաջավոր Ասիայում հանդիպում են ամենախոր անցյալում (Յազդի-կայաջի հերալդիկ քանդակի վրա պատկերված վոլյուտաներով սյունները՝ XVI—XIII դդ. մ.թ.ա., կրկնապանի դամբարանի մուտքի կառուցվածքում՝ VII դ. վերջ, VI դ. սկիզբ մ.թ.ա., Կուրանգունից ոչ հեռու Գառու, Գուխտարի՝ ժայռափոր դամբարանի ճակատի, «նախահոնիական» կոչվող խոյակներով սյուններ, ուր վերջինները, դեպի վեր նեղացում ունենալով, «կրում են» ատամնաձև պարապետով անտարվանենտ, VII դ. Երկրորդ կես մ.թ.ա.):

Հայտնի է, որ հոնիական օրդերի երկու (ոչ մեծ տարբերություն ունեցող) տարբերակներից առաջինը՝ հիմնականը, համարվում է «փոքրասիական» տարբերակը (կիրառված Սամոս կղզու և Եփեսոսի դիպտերոս տաճարներում 560—550 թթ. մ.թ.ա.), երկրորդը՝ հունաստան, որը «կիրառված» ստիվեց հիմնականից ավելի ուշ»՝ կիրառված Գելիփթում՝ հոնիական գանձատների կառուցվածքներում (մոտավորապես 525 թ. մ.թ.ա.):

Ավելին, փոքրասիական ծագում ունի նաև Գառնիի տաճարի (I դար) հոնիական օրդերի համալսափ համակարգը: Գառնիի տաճարի պիրիպ-

տերիալ հորինվածքը, լինելով հիլենիստական ժամանակաշրջանի ճարտարապետական-կառուցողական ընդհանուր արվեստի արգասիք, իր ընդհանուր կառույցի հիմքում՝ հիմնականում ունի Մուսասիրի ուրարտական տաճարի կերպարը, աղոթարանի հատակագիծն իր համալսափություններով, նույնիսկ բացարձակ չափերով՝ հարևան էր էրեբունիի ուրարտական տաճարի «Սուսիին» հատակագիծին, իսկ հոնիական օրդերի համալսափական համակարգն, ըստ էության, ունի փոքրասիական ծագում:

Տարիներ առաջ, ցույց տալով Հայաստանի նախաքրիստոնեական շրջանի, վաղ միջնադարի և ուրարտական մամանակաշրջանի տաճարների միջև գոյություն ունեցող ժառանգական կապը, Գառնիի և Քոփրախ-կալեի տաճարների (VIII դ. մ.թ.ա.) հատակագծային հորինվածքի մասին նույնիսկ ենք, որ «Քոփրախ-կալեի հատակագիծը հարթակն ունի «առկա հատման» համալսափություն և մոտենում է Գառնիի հեթանոսական տաճարի հատակագծի համալսափություններին»:

Ինչպես վերը տեսանք, նույն մոտիվությունը գոյություն ունի նաև ավելի ուշ՝ Երեբունիի պեղումների ժամանակ բացված «Սուսի» կոչվող ուրարտական տաճարի (VIII դ. մ.թ.ա.) և Գառնիի միջև: Ընդ որում «Սուսիի» և Գառնիի աղոթարանները հարևան են ոչ միայն համալսափություններով, այլև բացարձակ չափերով:

Բնական է, որեմն, որ Գառնիի աղոթարանի համար կարող էին օրինակ լինել ու թե Քոփրախ-կալեն կամ տարածքային տեսակետից այլևի մոտ գտնվող «Սուսին», այլև տվյալ միջավայրում գոյություն ունեցող՝ նույն ժամանակների կամ ավելի ուշ շրջանի համանման ուրիշ կառուցվածքներ:

Գառնիի տաճարի հիմքերի ամրացման ժամանակ, 1969 թ. հայտնաբերվեցին հնագույն սրբաբազմերի գոյությունը հաստատող իրական ապացույցներ՝ տաճարի հարավային պատի տակ հնագույն շենքի պատի մնացորդներ, իսկ արևելյան պատի հիմքերից ցած՝ սրբազան կրակի մոխիրը պահելու հորեք՝ սժուխի, մոխրի, գոհաբերված կենդանիների ոսկորների և հնագույն խեցեղենի մնացորդներով լեցուն:

Հին շենքի պատը շարված է լարով, շինանյութը ճեղքված որձաքարն է, իբրև կապակցող նյութ օգտագործվել է հողը (կավը):

Շարվածքի ձևը և շրջապատում գտնված խն-



Աղ. 66. Գառնի. Անտիկ տաճար. Հարավային ճակատ, վերակազմություն

ցեղներ հնարավորություն են տալիս հին շենքը համարել անվաղն վաղ հայկական (եթև ոչ առավել հին) շրջանի կառուցվածք:

Մեծադիպ կառուցվածքներ: Մովսես Խորենացին հայտնում է, որ երբ մարտում զոհվում է Սրվանդ թագավորը, Արտաշեսը «...հիշելով, թե երվանդը Արշակունյաց ցեղի խառնուրդ էր, հրամայում է թաղել և մահարձան դնել»<sup>62</sup>. Կամ հիշատակում է, որ «...հայոց թագավոր Տիգրան Վերջինը պատվել է իր եղբոր՝ Մաման քրոմապետի գերեզմանը Բագավանում..., գերեզմանի վրա բազին շինելով»<sup>63</sup>:

Հուշարձան է կանգնեցվել նաև Ի նշան հաղթանակի: Իսույն պատմվել հայտնում է, որ Վաղարշակ թագավորի որդին... հյուսիսային ցեղերի դեմ մղած պատերազմի հարթանակի առթիվ, իբրև «...իր տերության նշան մի արձան է կանգնեցնում ռնարեն գրով...»<sup>64</sup>:

Հետաքրքրական են հատկապես դամբարանային կառույցները (հայ Արշակունի թագավորների՝ Անի Կամախի և Անդեղ բերդի դամբարանները, Փարաբարի դամբարանը և այլն):

Փարաբարի դամբարանը գտնվում է էջմիածնի շրջանի համանուն գյուղի արևմտյան բլրի գագաթին: Այն ունի աշտարակաձև հորինվածք, որը վեր բարձրանալով որձաքարից շարված համատարած հարթակի վրայից, արտաքինից ունեցել է ութանիստ, ներսից՝ կորագիծ կառուցվածք:

Թաղումը կատարվել է շենքի կենտրոնում: Պահպանվել է հիմքի շարվածքի հորիզոնի ուղղությամբ անտաշ խոշոր սալերից պատրաստված 1,05—1,55 մետր շափի ձվածիր գերեզմանը, որտեղ հայտնաբերվեց կողքի վրա թեքված ու մի փոքր կուշ եկած վիճակում մարդու կմախք՝ կողմնորոշված հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք:

Գերեզմանի շուրջ ստեղծված կլոր շինություն պատի ներքևի շարքի բոլոր քարերի վրա անխտիր գոյություն ունեին զեպի շինության կենտրոնը կոնսուլաձև կախված երկրորդ քարեր<sup>65</sup>:

Այդ քարերի դասավորության սկզբունքը հիշեցնում է Օշականի Օշմենների, այսպես կոչված, «հակայի տներին», ծածկերի կառուցման սկզբունքը, որպիսին Հայաստանում լայն կիրառում ուներ Կոնս Բանտիոնի (V դ. մ.թ.ա.) ժամանակներից:

Անշուշտ Փարաբարում նույնպիսի գոյություն է ունեցել նույն բնույթի կառուցվածք, որի կենտ

րոնական հատվածը ալիքվել է գանձ որոնողների կողմից գերեզմանի կոռուպտման ժամանակ: Սակայն դժվար է ասել, թե ի՞նչ տեսք է ունեցել այդ կենտրոնական հատվածը, արդյո՞ք այն կազմել է առաջին շարքի արտամարանական շարունակությունը, թե հանդիպելով գերեզմանի վրա ստեղծված ինչ-որ կառույցի՝ ընդհատվել է: Մի բան ակնհայտ է, որ աշտարակաձև կառուցվածքի հատակի տակ կղեղ է թաղման սենյակ հիշեցնող տարածություն:

Դամբարանի շինությունը ներկայումս ամբողջապես ալիքված է, պահպանվել է միայն ներքևի 1—2 շարքը: Շինանյութը սևեղական մոխրագույն սուսքաքարն է (Ֆելզիտ), պատերը շարված են շոր, առանց շաղախի:

Շրջապատում թափված պատի շարքի սովորական քարերի հետ հանդիպում են մուտրի կամ լուսամուտի բացվածքը վերևից երիզող կամարի, մի կողմը անտաշ, երեք կողմը սրբատաշ եռանիստ որմնասյան և քարակերտ ծածկի բեկորներ:


Ուշագրավ են կրկնակի (հորիզոնական և ուղղահանգ ուղղանկյալ) կորուսված ունեցող քարերը, որոնք պատվանդ են կրթ պատեր թաղակապ ծածկի (կամ գմբեթի) անցման շարքերին:

Կան սրբատաշ քարեր, որոնք ունեն ներսի կորությանը հակադիր նաև դրսի կողմից կորուսվում: Ինչպես երևում է, դամբարանի արտաքին բազմանիստ կողերին տրվել է որոշ կորություն:

Կլոր շինության պատի դրսի եզրից մինչև հարթակի դրսի եզրը հավասար է մոտ երեք մետրի, հարթակի վրա, մինչև կլոր շինության պատը գոյություն ունեն միմյանց զուգահեռ երկու բազմանիստ շարքերի հետքեր կամ կլոր շինության արտաքին բազմանիստ պատին զուգահեռ գոյություն է ունեցել նաև երկրորդ պատ և երկու պատերի միջև ստեղծվել օղակաձև սրահ (գալերնյա), և կամ, որ առավել հավանական է, հարթակի վրա ստեղծված է եղել դամբարանը արտաքինից երիզող բազմաստիճան ստիլոբատ (պատվանդային): Վերջինը աշտարակաձև և բազմանիստ ծավալին կարող էր տալ ավելի մեծ վեհություն:

Վերը հիշատակված Լուանիստ որմնասյան բարր, անտաշակալյա, ցետոված է կղեղ դամբարանի ութանիստ ծածկի արտաքին նիստերի հանդիպման անկյուններից մեկում:

Ճիշտ համանման հորինվածք ունի Պոլյանի



Աղ. 67. Գառնի. Անտիկ տաճար. հյուսիսային ճակատ. վերակազմություն

(Դալմացիա, Հարավսլավիա) I դարի կեսերին ստեղծված դամբարանի արտաքին ծավալը:

Ինչպես բազմանիստ ծավալի արտաքին նիստերի հանդիպման անկյուններում, որմնասյուն կամ սյուն գոյություն ունի նաև I—II դարերի դամբարանային այլ կառուցվածքներում:

Փարաքարի դամբարանի կառուցման ժամանակը անհայտ է: Դեռևս 1958 թ. այդ տեղանքում գտնվել էր Արտավազդ 2-րդ թագավորի (55—34 թթ. մ.թ.ա.) մեկ դրամ, իսկ 1961 թ. Գառնիի հնագիտական արշավախմբի ջոկատի կատարած պեղումների ժամանակ, գերեզմանի մոտից դտնվեցին նույն (I-ին դարի մ.թ.ա.) յոթ դրամներ, որոնցից երեքը Տիգրան II թագավորի (95—55 թթ.):

Ինչպես տեսնում ենք, դրամների թողարկման ժամանակաշրջանը գրեթե համընկնում է Փարաքարի դամբարանի ճարտարապետական հորինվածքն ունեցող համանման հուշարձանների կառուցման ժամանակաշրջանի հետ:

Հետևապես հնարավոր է եղրակացնել, որ Փարաքարի դամբարանը կարող էր ստեղծվել մեր թվականությունից առաջ I-ին դարի կեսերից մինչև մեր թվականության I-ին դարի կեսերն ընկած ժամանակահատվածում:

Աշտարակաձև կլոր կառույցներ, իհարկև, Հայաստանում քիչ չկան, սակայն, ինչպես ճիշտ նկատում է Թ. Թորումանյանը, դրանք առավել հնագույն շրջանի հուշարձաններ են:

## ԳԼՈՒՆ ԶՈՐՐՈՐԴ

### ԾԱՌՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Կառույցի գեղարվեստական արտահայտչականությանը հասել են՝ ճարտարապետական ու կոնստրուկտիվ ճշմարտացի ձևերի, հարուստ հարդարանքի (զարդաքանդակ, բարձրաքանդակ), արվեստի սինթեզի (քանդակ, որմնանկար, խճանկար) և հատկապես շինության առանձին մասերի ու մանրամասների ինչպես միմյանց, այնպես էլ ընդհանուր հորինվածքի նկատմամբ ստեղծված համաշարվածությունների և փոխադարձ սլայմանավորվածության միջոցով:

Այս տեսակետից ուշադրով նշույթեր են տալիս Արտաշատ և Արմավիր մայրաքաղաքների պեղումները, մասնավորապես արքունի ամրոց Գառնիի անտիկ հուշարձանները:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Գառնիի տաճարի համաշարփակն համակարգը:

Գառնիի անտիկ տաճարը կառուցված է մոդուլային համակարգի հիման վրա: Ընդ որում, եթե օրդերը (սյան սնտամբլեմենտը) ստեղծվել է Վիտրուվիոսի ներկայացրած յոնիական օրդերի կանոնի համակարգին համապատասխան, ուր մոդուլը հավասար էր սյան ներքևի տրամագծին (0,692 մ), ապա տաճարի համաշարփակն համակարգում մոդուլ է ընտրվել սյան ներքևից հաշված  $\frac{1}{3}$  բարձրության տրամագծի շափր (0,704 մ):

Ակնհայտորեն նման են նաև Վիտրուվիոսի հիշատակած և Գառնիի տաճարում իրականացված թե՛ սյուների տեղադրման, թե՛ օրդերի կարևորագույն մասերի և թե՛ տաճարի առանձին հանգույցների (մուտք, աստիճանների կուրվատուրային երևույթներ և այլն) կառուցողական սկզբունքները:

Անտիկ տաճարների կառուցվածքի վերաբերյալ Վիտրուվիոսի տեսության և Գառնիի տաճարի կառուցվածքի միջև եղած ընդհանրությունների հետ մեկտեղ գոյություն ունեն նաև տարբերություններ:

ա. Վիտրուվիոսը ներկայացնելով անտիկ տաճարների հիմնական տեսակները գրում է. «Նրանց կառուցվածքները բնորոշվում են հետևյալ հատկանիշներով» և ապա Գառնիի տաճարի նման բոլոր կողմերից սյունաշարքերով շրջապատված, այսպես կոչվող, «պերիպտերների» մասին նշում է. «Պերիպտերում ե՛ տոջեի, ե՛ հետևի ճակատներում պետք է լինեն վեյսյան սյուներ, իսկ կողքի ճակատներում, անկյունների հետ մեկտեղ՝ տասնմեկական»<sup>2</sup>:

Գառնիի տաճարը կարճ ճակատներում ունի վեցական, կողքի ճակատներում անկյունայինների հետ մեկտեղ՝ ութական սյուներ:

բ. Տաճարների հատակագծային հորինվածքի համաշարփակությունների մասին Վիտրուվիոսը հայտնում է. «Տաճարների երկարությունը որոշվում է տյնպես, որ նրա լայնությունը երկու անգամ փոքր լինի երկարությունից»<sup>3</sup>, այսինքն տաճարի հատակագծային հորինվածքի լայնությունը երկարությունն անկյունային կատմամբ պետք է ունենա 1 : 2 հարաբերություն:

Գառնիի տաճարի թե՛ ցելլայի՝ աղոթարանի հատակագծային ներքին հորինվածքը, թե՛ պատերի արտաքին ճակատները միմյանց նկատմամբ և թե՛ տաճարի ամբողջ հատակագիծն ունեն 5 : 8 համաշարփակություն:

Չառդախանդակ: Քանդակազարդման արվեստի հիմքում ընկած է միասնական հորինվածքում

բազմազան մոտիվների կիրառման սկզբունքը՝ բազմազանություն միասնություն մեջ:

Եթե հունա-հունեական դասական շրջանի ճարտարապետական միանման մանրամասներն ունեն միևնույն մշակումը, Հայաստանում (Գառնիի տաճար) նրանք երբեք չեն կրկնվում: Անգամ օրդերի, ֆրոնտի, ըստ էության, միայն ափանթի տերևներով մշակված անընդհատ ձգված շարդաբանդակում ճարտարապետը խույս է տվել միօրինակությունից: Մերթ ականթի երկու նրբին շյուղեր, էլեհելով ֆրոնտի մակերեսի ներքևի եզրից, ալիքաձև տարածվում են աչ ու ձախ և պսակվում տարբեր տեսակի ու քանակի թերթիկներ ունեցող գեղաքանդակ ծաղիկներով կամ վարդակնեքով: Մերթ ականթի մի զույգ հյութեղ տերևներ՝ նույն կոտլեթյամբ բարձրանում են վեր և մղվում են խոտբճվելով ցած, ստեղծում միևնույն կենտրոնից տարբեր շառավղիներով սկզբընավորված ճյուղավորությունների հարուստ հորինվածք: Մերթ ականթի փարթամ միայն մեկ ոտտ, նույն ալիքաձև ընթացքով սփռվում է ֆրոնտի մակերեսին, և ալիքների բեկման հանգույցներում մի քանի սահուն պտույտներ կառուցում, ամբողջապես լցնում ֆրոնտի դաշտը: Եվ այսպես շարունակ... Ես այն ականթի տրոփի միջոցով, պահպանելով նույն ալիքաձև հորինվածքը, ստեղծվում են մեկը մյուսին չկրկնող, մեկը մյուսից ուշագրավ դարձաբանդակի բազմերանգ մոտիվներ: Զարդաքանդակներում ականթի ու դափնու տերևների հարուստ տարբերակների ու նրանց հնարամիտ դասավորությունների հետ հանդես են գալիս դանազան ծաղիկներ, կաղնու տերևներ, նույն և յուսական այլ գարդաբանդակների բազմապիսի համակցություններ: Բազմազան ձևով են մշակված ոչ միայն արխիտրամենտի տֆրոնտերը, խոյակների բարձրները, պլաֆոնտեր, այլև պլաֆոնտ քիվի վրա պատկերված առյուծի զուխների քանդակները:

Եթև հունեական կառուցվածքներում դաբաշակարման տեխնիկան կիրառվում է կանոնիկ եղանակներով (կարիկի օգնությամբ կամ երկրաչափական կառուցումներով), Գառնիում կատարված է աշտտ, առավել սահուն պլաստիկ ձևով (խոյակների պարույրների կառուցում, ճարտարապետական պրոֆիլների կառուցումներ և այլն):

Միանման մոտիվատները բազմազան ձևով մշակելու սկզբունքը կիրառվում է հիլենիստական մշակույթի նաև մյուս կենտրոններում՝ Փոքր

Ասիա (Պերգամ, Միլետ, Պրիենն և այլն), Միլիա (Պալմիրա, Բաալբեկ, Անտիոք, Զեռաշա և այլն) և այլուր:

Խնակալ: Գեղարվեստական արտահայտչականության հիմնական միջոցներից մեկը եղել է խճանկարը: Պահպանվել է Գառնիի արքունի բաղնիքի, հանդեռձարանի հատակի վրա պատկերված խճանկարը, որը նախաքրիստոնեական Հայաստանի մոնումենտալ գեղանկարչության առաջին մեզ հայտնի միակ հուշարձանն է:

Պահպանված մասից ակնառու է նրա միֆական-դիցաբանական սյուժեն: Վարդազույն շրջանակի մեջ պատկերված է ծով, ուր նուրբ մշակված գունային (տոնալ) փոխանցումները ստեղծում են ջրի ալիքների շարժման պատրանք, նկարի տարբեր հատվածներում ծովի ջրերի տարբեր վիճակ, ասես ալիքների ծփանքին համապատասխան ծովը մերթ ստանում է բաց կանաչավուն տեսք, մերթ ավելի մուգ գույն, մերթ մեղմանալով, հասնում շինջ պարզության: Զրերի մեջ պատկերված են զանազան դիրքով միֆական աստվածություններ ու առասպելական էակներ (իտտիկենտավրենթ—մարդ՝ ձիու առջևի ոտքերով և ձկան վերջավորությամբ, ներհիդներ: (ծովիխարենթ), մեծ ու փոքր բազմապիսի ձկներ և այլն): Աստվածությունների և ջրահարսների պատկերների մոտ հունարեն գրված են նրանց անունները (Գլավիոս, Թևտիս, Ագրիոս, էրոս, Պոթոս և այլն):

Խճանկարի կենտրոնում՝ հյուսվածապատ շրջանակում պատկերված են տղամարդու և կնոջ վերևի կեսերը: Առաջիկի մոտ գրված է «օվկիանոս» (որը, ըստ դիցաբանության, բոլոր աստվածների հայրն է), իսկ երկրորդի մոտ՝ «ծով» (որը գեղեցկության և սիրո աստվածուհի Աֆորդիտեի մայրն է): Շրջանակի վերևում գրված է. «Ուլինջ շտանալով աշխատեցինք» անեղծվածալին արտահայտությունը:

Խճանկարի առանձին պատկերներ, մասնավորապես ձկների, կատարված են մեծ վարպետությամբ: Սահուն գծանկարը, անատոմիական համողիչ կառուցվածքը, գույների երանգները ցուցադրում են խճանկարային արվեստի բարձր մակարդակը:

Խճանկարը պատրաստված է բնական զուսավոր բարեկից կտրված 0,5—1,0 սմ մակերես ունեցող խորանարդիկներից: Բարդություն օպտապործված են ալիքի մեծ (1—1,5 սմ): Փոքր

խորանարդիկները Գոյություն ունեն 15 երանգներ: Նկարի նուրբ փոխանցումների իրականացումը գյուրացնելու նկատառումով օգտագործված են երկրաչափական տարրեր ձևերի խորանարդիկներ (քառակուսի, ուղղանկյունի, շեղանկյունի, եռանկյունի):

Խճանկարի հիմքը կառուցված է հարթ, ամուր տոփանված գետնի վրա, ապա շարված է գետաքարի և ճեղքված որձաքարի երեք շերտ, յուրաքանչյուրը ամրացված է կրաշաղախի լիցքով: Այդ ամենի վրա դրված է 14—15 սմ հաստության բետոնի շերտ և ապա լցված խճանկարի հատիկների շարման համար՝ 33 սմ բարձրության (կրի, ավալի, մանրացված աղյուսի կամ կղմինդրի խառնուրդից) խմորը:

Խորանարդիկները շարված են միմյանց կպած. որոշ դեպքերում նաև իրարից մի փոքր հեռու. մակերեսները հղկված են:

Ինչպես նկարի կոմպոզիցիոն կենտրոնը, այնպես էլ մնացածի զգալի մասը, հետևապես և հորինվածքը ճամնատարար ավելի ամբողջական ձևով ընկալվում է սենյակի հարավարևելյան պատի կողմից, ավելի ստույգ, կորագիծ խորշի բացվածքի առջևից:

Սենյակի երեք դռներից մեկը գտնվում է հյուսիսարևելյան պատի հարավային անկյունում. այցելուն ներս մտնելով սենյակ՝ մի հայացքով կարող է ընկալել խճանկարի գրեթե ամբողջ հորինվածքն իր մաքրամասնորով:

Խճանկարի հիմնական սյուժեն, կատարման տեխնիկան, ոճային ու գունային առանձնահատկությունները հիմք են տալիս այն ճամարելու III դարի վերջի գործ:

Առձաննեւ: Պաշտվող կուռքի արձան կանգնեցված է եղել նաև Գառնիի տաճարում. այն

դրված է եղել ցելլայի ետևի պատի մոտ, բարձր պատվանդանի վրա՝ ներառված բավական մեծ շափեր ունեցող ուղղանկյուն խորշի մեջ:

Շեթանոսական փորր տաճարների ներքը սովորաբար լուսավորվում է անհամեմատ մեծ շափեր ունեցող մուտքի բացվածքով: Գառնիում մուտքի բացվածքն այնքան մեծ է, որ այնտեղից ներթափանցող լույսը լիովին բավական էր աղոթասրահը անհրաժեշտ շափով լուսավորելու համար: Չնայած դրան, Գառնիի աղոթասրահը լուսավորվել է նաև վերևից՝ երդիկից:

Իրավամբ ենթադրվում է, որ Գառնիի տաճարը նվիրված է եղել հին հայկական աստվածներից մեկին՝ Միհրին: Ուրեմն, կարելի է եզրակացնել, որ Գառնիի երդիկի լույսը նույնպես ունեցել է սիմվոլիկ նշանակություն. ցանկացել են պաշտվող կուռքի վրա իջեցնել արևի ճառագայթները խուրձ:

Միհրը հաճախակի պատկերվել է ցուլի դեմ մենամարտելիս: Տաճարի վերականգնման շինարարության ժամանակ կատարված մասնակի պեղումների ընթացքում, կառուցից մոտ 20 մետր ղեպի հյուսիս, գտնվեց սպիտակ մարմարից մեծ վարպետության մեծ քանդակված ցուլի կնդակ: Անտարակույս այն պատկանել է տաճարի ներսում դրված պաշտվող կուռքին, որը քրիստոնեական կրոնի ընդունումից հետո հանվել է շենքից և ոչնչացվել:

Քանդակի այդ բեկորը ոչ միայն հաստատում է, որ տաճարը իրոք նվիրված է եղել Միհրին՝ այսինքն արևի պաշտամունքին, այլև ցույց է տալիս քանդակի նյութը և հնարավորություն ընձեռում որոշակիորեն պատկերելու քանդակի հնարավոր ընդհանուր կոմպոզիցիան՝ Միհրը ցուլի հետ մենամարտելիս:

## ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՒՄ

### ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ ԵՎ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԸ

Հայաստանի ստրկատիրական հասարակության ժամանակաշրջանի կառուցողական տեխնիկան, ղեկուս հնագույն շրջանում, Հայկական լեռնաշխարհում ստեղծված հարուստ ավանդույթների շարունակությունն ու նրանց զարգացումն է՝

Պատերի համար որպես շինանյութ ծառայել են լավ մշակված որձաքարը և տուֆը. օգտագործվել են նաև գետաքարը, ձեղքված որձաքարը և թրծած տղուսը՝:

Պաշտպանական կառուցվածքներում և մոնումենտալ շէքերի մեծագույն մասում պատերը շարված են շոր, առանց շաղախի և քարերը իրար հետ միասնված են երբեմն մետաղական կապերով: Առանձին (պալատական, կոմունալ) շենքերի պատերի մեջ օգտագործված է նաև կրաշաղախ: Մածկերը եղել են փայտաշեն (հարթ) և բարաշեն (թաղակապ):

Այսպես, Կառնիի տաճարի պատվանդանը իր բարձրությամբ ներկայացնում է կրաբետոնի մեծ ամրություն ունեցող համատարած բանգված, բստ էություն, Լեռնապատված որձաքարի խոշոր զանգվածներով:

Յևլլաչի պատերը շարված են շոր, առանց շաղախի. որսնաշարքը բստ լայնության կալմված է պատի հաստության չափն ունեցող մեկական քարից, որոնք ընդուպ հսկված են միմյանց և ինչպես հորիզոնական, այնպես էլ ուղղաձիգ ուղղությամբ իրար հետ կապված երկաթյա գաճակներով:

Հորիզոնական գամերի ծայրերը թևովել են 90 աստիճան անկյամբ և ազուցվել քարերի  $6 \times 6 \times 6$  սմ չափի խոռոչների մեջ, իսկ քարի և գամի միացման հանդույրը լցվել է կապարով:

Կապարի հալվածքի հոսքը կատարվել է քարերի վրա փորված՝ դեպի ներս աստիճանաբար խորացող եռանկյունաձև նեղ ակոսների միջոցով:

Շինարարական նույն տեխնիկայով են կառուցված նաև տաճարի բոլոր մասերը, սակայն շենքի տարբեր մասերում օգտագործվել են տարբեր նյութի, տարբեր քանակի ու չափի գամեր, նայած տվյալ մասի ամրությունն ապահովելու անհրաժեշտությանը:

Սյան բնի քարերը միմյանց, խարսխին և խոչակին են միանում  $(2 \times 2)$   $(3 \times 3)$  սմ կտրվածք ունեցող երկու կամ երեք բրոնզե, իսկ խարսխը հատակի սալերին՝ նույն չափի և քանակի երկաթե ձողերի միջոցով:

Անտաբլեմենտների մասերից՝ արխիտրավները հորիզոնական ուղղությամբ ամրացվում են երկու զույգ գամերի, իսկ խոչակների հետ կապվում մեկական երկաթյա ուղաձիգ ձողերի միջոցով: Նույնպիսի միացումներ ունեն նաև ֆրիդի և քիվի քարերը, միայն քիվի քարերը, որոնք դրված են ֆրիդի և նրան ընդուպ հսկված առաստաղի սալերի շարունակության վրա, վերջինների հետ միանում են երեքից-չորս, համեմատաբար մեծ կտրվածք ունեցող ուղղաձիգ ձողերի միջոցով:

Ճակտոնների քիվի և նրանց տակ գտնվող տիմայանի քարերի միջև մետաղական կապեր չկան: Ճակտոնի քիվի քարերը ամբողջ խորությամբ ունեն թեք կտրվածք. այդ թեք մակերեսով առաջին շարքի քարը նստում է ճակտոնի ներքին անկյունաքարի շեղանկյուն կտրված համապատասխան մակերեսի վրա և ապա բոլոր քարերը հաջորդաբար՝ մինչև ճակտոնի դազաթի

լքարր ներառյալ, Տննում են միմյանց վրա Սևաստական կապեր սակզմի ևն ճակտանի բի-վի քարերի միայն վերևի ճարթութիւնների վրա: Արտակարգ ուժով են ճակտոններ անկյունաքա-րանի ու գագաթների միացումները ակտուերիա-ների Տնտ. ճակտոնի անկյունաքարերից յուրա-քանչյուրի վրա մետաղական ձողերի քանակը հասնում է տասից տասներկուսի:

Տաճարի բոլոր քարերն իրենց ծանրութեան կենտրոնում ունեն 4—8 սմ խորութեամբ և 5×6 սմ մակերևութի մեկական փորվածք, որոնց վերևի մակերեսը զեպի խոռոչի հատակը ու-տիճանաբար լայնանում է: Ակնհայտ է, որ այդ խոռոչներում պուլցվել է մետաղական սեւաձև հարմարանք, որի միջոցով, հատուկ պարանների օգնութեամբ քարերը բարձրացվել և տեղադրվել են կոտուլցի համապատասխան մասերում: Քարերի վարձարցման առ միջոցը անտիկ շրջանի կա-ռուցողական տեխնիկայում կիրառվող հանրա-հայտ ձևերից է:

Ցելլան ունեցել է թաղակապ քարակերտ թաղ: Տաճարի ավերակների մեջ գտնվել է աղոթա-սրահի պատերի հյուսիսարևմտյան հանգուլցի մեկ ամբողջական անկյունաքար, որը ցույց է տալիս շենքի երեք ուղղութեամբ ընթացող պա-տերի հաստութիւնների ստույգ չափերը: Ընդ որում, ուշագրավն այն է, որ աղոթսրահի հյու-սիսային պատը, որը կրում է նախամուտքի շուրջ շորս մետր երկարութեան և ավելի քան հինգ տոննա կշիռ ունեցող առաստաղի սալերի հսկայական բեռը, ունի ավելի փոքր հաստու-թեան (0,76—0,78 մ), քան արտաքին սյունա-սրահների առաստաղի՝ երկու անգամ ավելի թե-թև սալաքարերի բեռը կրող պատը, որն ունի շատ մեծ հաստութեան: Ընդդէմ է, փայտե կոնստ-րուկցիաների դեպքում այդ մեծ հաստութեան ունեցող պատերի վրա պետք է ավելանար նաև փայտե հեծանների կշիռը, սակայն անիմաստ կլինեք մտածել, որ անհամեմատ չլինի կշիռ ունե-ցող փայտե մի քանի հեծանի համար կարող էր պատերի կառուցվածքում նման տարբերութիւններ ստեղծելու կարիք առաջանալ: Բնական է, որ արևելյան և արևմտյան պատերի մեծ հաստու-թեաններն արվել են ծածկից առաջացող շատ ավելի մեծ բեռի համար, և այդ մեծ բեռը, հաս-կանալի է, կարող էր ունենալ միայն քարակերտ ծածկը:

Աղոթսրահի երկայնական (արևելյան ու արև-

մտայան) պատերի վերջին շարքի քարերը ար-տաքին կազմից իրենց շարժաթեթեամբ, ճար-թութեան մշակումով (պրոֆիրներով), քարերի տաշվածքի փափուկութեամբ և սուրմարմուռ-թեան աստիճանով ճար և նման են նույն պատերի դիմացից լինացող սյունաշարքերի արխիտում-նեքին, իսկ ներքի երևի միերի մասը 9,23/0,27 մ բարձրութեամբ 1 0,33/0,51 մ խորու-թեամբ կտրված ու հանված է: Այդ հատվածի տեղում առաջացած խորշի ներքին մակերեսը հետազոտողները մշտապես պատկերել են որպես հորիզոնական հարթութեան և ենթադրել, որ դրա վրա դրվել է «մատուրատ» կոչված փայտե գերանը:

Պարզ է, որ մատուրատ պետք է դրվեր հո-րիզոնական մակերես ունեցող քարի պատի եր-կայնքով, որպեսզի նրա վրա հնարավոր լինեք շարել շենքի՝ լայնական ուղղութեամբ տեղա-դրվելիք փայտե հիմնական հեծանները: Սա-կայն ուշադիր չափագրութեանը ցույց է տալիս, որ քարերն ունեն ակնհայտ շեղ կտրվածք: Եթե դրանց վրա դնելու լինեին մատուրատները (որ, անտարակույս, պետք է ունենային ուղղանկյու-նի կտրվածք), ապա նրանց վերևի մակերեսը հորիզոնական միճակում պահելու համար ան-հրաժեշտ կլինեք ներքևի մակերեսները քարերի շեղ կտրվածքի վրա տեղադրելու նպատակով նույնպես անել շեղ: Սակայն դա կլինեք միան-գամայն անիմաստ: Եթե քարերի վրա դրվելու էին փայտե գերաններ, ապա ինչու՞ պետք է ուղղանկյունի կտրվածք ունեցող փայտե գերա-նի տակի քարը տաշվեր շեղ և այդ շեղութեանը հարմարվելու նպատակով էլ փայտե գերանի՝ քարի վրա նստող մասը նույնպես շեղ տաշվեր:

Կասկածից վեր է, որ աղոթսրահի երկայնա-կան պատերի վրա տեղադրված այդ քարերի շեղ կտրված մակերեսները արվել են նրանց վրա համապատասխան թեթեւութեան ունեցող ու-րիշ քարեր տեղադրելու նպատակով: Նշանա-կում է՝ աղոթսրահի երկայնական պատերի ամրոց էրկարութեամբ դասավորված շեղ մա-կերեսով այդ քարերը ոչ այլ ինչ են, եթե ոչ աղոթսրահի թաղակապ ծածկի առաջին շարքի, այսպես կոչված, «կրունկի» քարերը: Կրունկի քարերի վրա հաջորդ քարի կոտուցման համար պոլութեան ունեցող տեղի ձևից ու խոշոր չա-փերից ակնհայտ է դառնում նաև հաջորդ շարքի քարակերտ հորինվածքը: Բարբախտարար պահ-

պանվել են ազոթասրահի թե՛ արևմտյան և թե՛ արևելյան պատերի երկայնությամբ այդ պատերից սկզբնավորվող թաղի կրունկի բոլոր քարերը: Այս փաստերից նետում է, որ ազոթասրահի առաստաղը՝ հյուսիսից հարավ ընկած ամբողջ տարածությամբ, ծածկված է եղել մեկ միասնական թաղով, և այն, ինչպես ցույց է տալիս այդ թաղի ներքինից հաշված երկու շարքի (կրունկի և նրա բարերի վրա զետեղված հաջորդ շարքի) կառուցվածքը, եղել է բարակերտ: Կրունկի առանձին բարերի վրա պահպանված էին կրաշագանի մնացորդներ: Ինքնին հասկանալի է, որ կրաշագան կարող էր օգտագործվել աղոթասրահի առաստաղի բարաշեն ծածկի ղեկավարում:

Տաճարի ավերակների մեջ գտնվելիցն ազոթասրահի շաղախակապ բարաշեն ծածկի գրեթե անաղարտ պահպանված մի շարք բեկորներ, որոնք թե՛ բարի տեսակով (որձաքար), թե՛ հողմահարվածովյան աստիճանով, թե՛ բարի մշակման ֆակտորայով, թե՛ մետաղական կապերի համար ունեցած նազույն խոռոչներով, թե՛ տաճարի բոլոր բեկորների ծանրության ուղիղ կենտրոնում գոյություն ունեցող բարերի բարձրացման համար փորված (վերևում նեղ, ներքևում լայն շափի) խոռոչի առկայությամբ, պատկանում են տաճարի սկզբնական կառուցվածքին: Այդ բարերից մեկի վերին մակերեսն ունի մաքուր տաշված կորուսե սեսք, որի կորի շառավիղը նշտովյամբ համապատասխանում է աղոթասրահի լայնության կեսին (2,52 մ) այսինքն՝ լիովին համընկնում է այն կորին, որպիսին կարող էր ունենալ աղոթասրահի զլանաձև (կիսաշրջանաձև) նորինվածք ունեցող թաղակապ ծածկի լայնական կտրվածքը: Բարը զրված է եղել հարավային ճակատը երրափակող պատի վերին շարքի արևմտյան մասում և շնորհիվ իր մեծ շափերի (բարձրությունը հավասար է 0,63 մ, խորությունը՝ 0,61 մ, երկարությունը՝ 1,75 մ) գրավել է շարքի ամբողջ արևմտյան կեսը: Նրա վրա պահպանված մետաղական կապի առուցման փորվածքը ցույց է տալիս, որ այդ բարը մետաղական հորիզոնական գտնով միացված է եղել նույն շարքի արևելյան կեսի նույնանման բարին:

Հայտնաբերված բարերից մյուսը եղել է նույն պատի՝ վերևից հաշված երկրորդ շարքի արևելյան անկյունում, նրա կորուսյան շառավիղը

հավասար է այս պատի ստաշին շարքի վերին հիշատակված բարի կորուսյան շառավիղին, այսինքն՝ երկուսի կորուսած երազձևերը կազմում են միմյանց շարունակությունը: Քարի վրա կարծրեցնական գամի ազուցման համար փորվածք:

Պահպանված է նաև թաղի հարավային ճակատը երրափակող տվյալ պատի բոլոր շարքերի սկզբնական որմնախորշերի նշանակալից մասը:

Երրորդ բարը պատկանում է թաղակապ ծածկի հյուսիսային ճակատը երրափակող պատի վերևից հաշված առաջին շարքին և տեղադրված է եղել այդ շարքի արևմտյան կեսում: Իր ընդհանուր մշակումով, սեսքով, մետաղական կապերի համար արված փորվածքով, վեր բարձրացնելու համար բարի ծանրության կենտրոնում բացած հատուկ խոռոչով, եզրերի կորության շառավիղով այս բարը հար և նման է թաղի հարավային ճակատը երրափակող պատի վերևի շարքի համապատասխան որմնաքարերին:

Նկարագրված բարերը հնարավորություն են ընձևում ոչ միայն վերականգնել աղոթասրահի թաղակապ ծածկի հարավային և հյուսիսային ճակատների իրական պատկերը, այլ նշտորեն որոշել թաղի տեսակը՝ ձևը (կիսաշրջանաձև) և նրա սկզբնական կառուցվածքի ստույգ շափերը:

Կարելի է մտածել, որ Գառնիի տաճարի աղոթասրահի հարավային և հյուսիսային ծայրերի կիսաշրջանաձև վերջավորությամբ այդ պատերը ինչ-որ ձևով կատարել են քրիստոնեական վաղ շրջանի հին հռոմեական կամ սիրիական բազիլիկային կառուցվածքների փայտակերտ տանիքների հորինվածքներում հանդիպող կամարների դերը (Հռոմում՝ ս. Ագնեսի՝ IV դարի տաճարը, Սիրիայում՝ Ռուվևայի բազիլիկան, Կալբ-Լուզեն, V—VII դդ. և այլն): Սակայն դա բոլորովին բացառված է, և թեև նույնիսկ նկատի չունենանք Գառնիի տաճարի թաղակապ ծածկի վերը հիշատակված մնացորդների գոյությունը: Բանն այն է, որ փայտաշեն ծածկ ունեցող նման կառուցվածքներում, օրինակ՝ Ռուվևայի բազիլիկայում, շենքի երկայնական պատերին ուղղահայաց կառուցվել են բարաշեն կամարներ և վերջինների վրա բարձրացվել փայտակերտ տանիքի լանջերին զուգահեռ երկթեք պատեր, որպեսզի այդ երկթեք պատերը, տանիքի ծպեղների հետ մեկտեղ կարողանան կրել կղմինդրն տանիքը: Նույն սկզբումը կիրառված է նաև Հռոմի ս. Ագնեսի տաճարի տանիքի կառուցված-

րում. տաճարի արտիդի կոմիտայի բաղկավորը Լ-րիզող կամարի վրա բարձրացել է երկթեք վերջավորությամբ ուղղաձիգ պատ, որը փայտաշեն տանիքի եզրվաների նա կրում է ընդհանուր տանիքի կապարամածուր նթև Գաննիի տաճարի աղոթարահի ծածկը լինեք փայտաշեն, ապա աղոթարահի կոր վերջավորությամբ այդ պատերի վրա պետք է բարձրացված լինեն նաև երկթեք վերջավորությամբ պատեր: Այս դեպքում միանգամայն անհրաժեշտ կդառնար երկթեք վերջավորություն ունեցող պատերի տակ կոր վերջավորությամբ պատերի գոյությունը: Տաճարի կառուցողները ինչու պետք է հատուկ շարունակ, խնամքով ու որոշակի դժվարությամբ մշակելի կորածև որմնաքարեր, զգուշությամբ տեղադրեն դրանք շարքերի մեջ, մեծ ճշտությամբ ստանան նային պատի վերջավորության կիսաշրջանածև եզրագիծը և անմիջապես այդ ամենը թաքցնելի երկթեք վերջավորություն ունեցող պատի շարքերի տակ: Պարզ է, որ Գաննիի տաճարի կոր վերջավորությամբ պատերի վրա ուրիշ պատեր չեն բարձրացվել, և որ կոր վերջավորություն ունեցող այս պատերը եղել են ոչ այլ ինչ, եթե ոչ աղոթարահի թաղակապ ծածկի հյուսիսային ու հարավային ճակատները եզրափակող պատերը:

Ն. Մառի պեղումների ժամանակ տաճարի նոր հայտնաբերած բեկորների թվում հիշատակվում է թաղի երկու քար կլորացող կողմով: Ցավոք կիսաշրջանածև թաղի այդ քարերը տեղում չեն պահպանվել:

